ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԹԵՐԹ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 1
MERCREDI
1er AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·222 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 77e ANNEE — N° 20.222

Օրուան հարցեր

Իսրայէլ – Պաղեստին պատերազմը անխուսափելի՞ է

Իսրայէլեան ծանօթ օրաթերթ «Հա'արց» անկեղծ վերլուծումը ըրած է ներկայ կացութեան ուր անխուսափելի պատերազմի մը նախաքայլերը կը նշմարէ։ Ինչին մէկ ցեղախմբային հոգեվիճակով պատերազմի կոչեր կ'արձագանգեն· աչքի առնելի տարբերութիւնները ջնջուած են։ Նոյնն է թշնամիին նկատառումի պարագան· ո՛չ Քաթար, ո՛չ Համաս, ոչ ալ ՕԱԿ կը զանազանուի։ Բոլորն ալ, ի վերջոյ, արաբ են, պաղեստինցի, մահմետական եւ մարտիրոս։

Նիհարուած են ռազմաճակատը եւ թիկունքը, զինուորականն ու քաղաքացին, ճակատն ու չափահասը, զոհն ու նախարձակը։ Այնպէս կացութիւն մը ստեղծուած է որ պատերազմը անխուսափելի կը նկատուի։ Կայծ մը կը բաւէ որ հնոցի հրեհատպաղեստինեան Գ· պատերազմը, 1948–էն եւ 1982-էն ետք։ Այդ այծն ալ ահաբեկչական արիւնալի արարք կը կրնայ ըլլալ որ արդարացնէ ընդհանուր յարձակողական մը։ Իսկ Իսրայէլ չգիտէ կ'ընէ նման հեռանկարի արդելք ըլլալու համար։

Աչքի ճակատին բանբերները եւ պաղեստինեան հոդերու վրայ հաստատուած հրեայ պաղեստինեաներու պատասխանատուները կ'ըսեն թէ Շարոն ընտրուած էր որպէսզի կարենայ պաղեստինեան իշխանութիւնը, վերջնապէս թաղելու համար ամէն հեռանկար եւ չարունակելու պաղեստինեան չրջաններու իւրացումը։ Այսուհանդերձ, հիմնուելով 1982–ի փորձառութեան, ներկայ վարչապետը նախ ազգային եւ միջազգային ճնշման վրայ պատերազմին ի նպաստ հանդուրժողութիւն մը ստեղծել կը ջանայ։ Ի վերջոյ, պատերազմը նաեւ իսրայէլեան հոգիին մարդկային կեանքեր պիտի արժէ եւ որուն միջազգային հետեւանքները կրնան աղէտալի ըլլալ։

Ներքին ճակատի վրայ ան արդէն յաղթած է, չնորհիւ է· Պարաքի եւ նախագահ Կլինթընի նեցուկներուն։ Զանազան առաջարկներով երկուքն ալ Գէմփ Տէյվիդի իրենց դիւանագիտական ճախազուռ – ինչը վերագրեցին Պաղեստինցիներուն, պէտք համար թէ Իսրայէլ խաղաղութեան համար գործընկեր չունի։ Անոնց տարակարծիքները հաշտութեան մը համար ինչո՞ւ հիմա կատարուածներուն, ամէնէն նեղ առիթ մը կրնայ ըլլալ։ Հաւատալ որ այսօր այնպէս կը թուի թէ ոչ ոք կրնայ այլեւս դէպի ամբողջական ճակատամարտ մը կասեցնել։

Հաճկական ձակատ

ՎԱԶԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԸ ՀԱԿԱԶԴԷ

Ա.ԺՄ-ի ընդհմադիր խմբակի մը ջանքով Նորհրդարանի խմբակցութեան դեկավարի աթոռը կորսնցնելէ ետք Վ. Մանուկեան հարցազրոյցի մը ընթացքին լսած է թէ իր գլխաւորած կուսակցութեան մէջ «թայֆա» մը կազմուած է որուն նպատակն է դրաւել իշխանութիւնը· այդ ցեղաչրջումը ոչ միայն իրեն, այլ նաեւ չարքայիններուն ուղղուած է։ Ինք վճռած է չհեռանալ կուսակցութենէն ու վերջ տալ չարքերուն մէջ ծագած ըմբռոստութեան։ Անդրադառնալով այն տեսակէտին թէ ներկայի իշխանութիւնը կը հրահրէ ներկուսակցական պառակտումներ, ան ըսած է· «Ես այդպիսի ձեռ չեմ տեսնում· չեմ տեսնում ինչ – որ ուղղորդուող թշ[ա]մական ձեռ որ դրսից դեկավարում է այս ամէնը»։

***

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Յուլիս 30 / 31)

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27–Ի ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Հոկտեմբեր 27–ի դատին Յուլիս 30–ի նիստին պլխաւոր ամբաստանեալ Ն· Յունանեան պատասխանած է մեղադրողին հարցումներուն։ Ըսած է թէ իրեն այնպէս թուած է որ խորհրդարանի դահլիճին փոխադարձ հրաձգութեան մասնակցած է, բայց կը պարզուի որ չէ մասնակցած։ Աւելցուցած է թէ դահլիճէն իր վրայ կրակած են։ Յետոյ մերժած է պատասխանել հարցումներու։ Անդրադառնալով Ա· Ազմենակեանի սպանութեան Ն· Յունանեան ըսած է թէ բանտին մէջ մամուլէն իմացած է այդ մասին։ Իսկ «փաստո՞ւմ էք որ սպաննել է Ռ· Մխրտչեանին» հարցումին, ըսած է· «ինձ համար դա մշուշոտ է, մինչեւ հիմա էլ վստահ չեմ որ ես եմ սպանել։ կարծես պատմած լինեն»։

***

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Յուլիս 29-ին գանատահայ թեմի առաջնորդ Յովհան Աբգ· Տէրտէրեանի կողմէ քահանայ ձեռնադրուած են եօթը սարկաւագներ, ներկայութեան Ամենայն Հայոց Գարեգին Բ· Կաթողիկոսին ու եպրուսաղէմի ու Պոլսոյ պատրիարքներ՝ Թորգոմ Աբգ· Մանուկեանի եւ Մեսրոպ Աբգ· Մութաֆեանի։ Նոր քահանայ ձեռնադրուած սարկաւագներ կոչուած են Ռուբէն Քհնյ·, Խոսրով Քհնյ·, Գարեգին Քհնյ·, Վահրամ Քհնյ· Պարոյր Քհնյ·, Մամբրէ Քհնյ· Գեղարդ Քհնյ·։ Ձեռնադրութենէն ետք, նոյն երեկոյեան Տ· Գարեգինի, Տ· Մամբրէի եւ Տ· Գեղարդի վեղարի տուչութեան կարգը կատարուած է եւ Մայրավանքի միաբանութեան չարքերը երեք կուսակրօն քահանաներով հարստացած են։

***

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄԸ 11 ՏԱՐԻ Կ'ԸԼԼԱՅ

2001 – 2002 ուսումնական տարին Հայաստանի միջնակարգ ուսուցումի համակարգը կը թարմանայ 11 տարուան։ Ազգային ծողովը վերջերս ընդունած է կրթութեան նոր օրէնքը որով կը հաստատուի փոփոխութիւնը։

Զրոյց ընթերցողի մը հետ

– «ՅԱՌԱՋ»Ի 76–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ –

– Ուրեմն, արդէն բոլորեցիք 76 տարիները։

= Այո՛, կը զարմանա՞ք։ Թէեւ, բուն զարմացողը, Շաւարշը ինք պիտի ըլլար։

– Ի՞նչպէս չզարմանամ։ Որքան դիտեմ օտար լեզուով ոչ մէկ օրաթերթ կայ Ֆրանսայի մէջ, այսքան երկարակեաց։

= Ճիշդ է, Հրեաներն իսկ զադրեցուցին իրենց օրաթերթերին հրատարակութիւնը, հակառակ իրենց այլապէս նպաստաւոր պայմաններուն։

– Բաժանորդները չէ՞ն պակսիր։ Հայերէն կարդացող կա՞յ տակաւին։

= Կը պակսին։ Եթէ նոյնիսկ դեռ հայերէն կարդացողներ կան, հայերէն թերթ կարդացողները չատ չկան։

– Թերթի զադրեցնողներ կա՞ն։

= Անշուշտ, ընդհանրապէս, մահուան պարագաներու։ Մայրիկը մեռաւ, այլեւս թերթը մի զրկէ՛ք, մենք հայերէն չենք գիտեր։ Երբեմն, մայրիկին կամ հայրիկին վճռագումէն առաջ ալ, թերթը կը դադրեցնեն։

– Մի՞այն այդ պարագաներո՞ւն կը դադրեցնեն։

= Այո՛։ Թէեւ այս տարի այլ պատճառով ալ դադրեցնող մը եղաւ, բանական ինքնասիրալ պարագան մըն էր։

– Ի՞նչ պարագայ

= Դադրեցնողը հայադիտական ամպլեոնի մը փրոֆէսէօրն էր։ Բուն պատճառը չըսաւ։ Բայց որքան դիտենք, ըզգադրզուած էր որ յարատեւութեամբ եւ յամառութեամբ, մեսրոպեան որդզագըրութիւնը կը պաշտպանենք եւ կ'ուզենք, որ ան ներդաղթէ եւ ոչ թէ խորհրդահայ սխալագրութիւնը սկսի արտադաղթել, ինչպէս կը պատահի նորակազմ զադրութիւններու մէջ։

– Լո՞ւրջ կ'ըսէք։

= Անշուշտ, արդէն այդ ուղղութեամբ ալ արտայայտուեցաւ պաշտօնակիցի մը էջերէն։

– Ուրեմն, այդ սխալագրութեան կողմնակից է եւ հայագիտութեան ամպիո՞ն կը վարէ Սէրպոնի մէջ։

= Այո՛։

– Քանի որ հայերէն կարդացողները կը պակսին, չէ՞ք խորհիր որ Ֆրանսերէն սիւնակներ եթէ ունենաք, երիտասարդները կրնան բաժանորդագրուիլ։

= Շատ չենք հաւատար որ նման քայլ մը օգտակար կ'ըլլայ այդ ուղղութեամբ, բայց, բուն պատճառը այդ չէ։

– Ի՞նչ է։

= 1923–ին, երբ Շաւարշ հիմնած է այս թերթը, անոր նպատակն ու կոչումը եղած են հայերէնի եւ հայ մշակոյթի պահպանումը օտար ափերու վրայ։ Ուրեմն, այդ կոչումին իսկ դատապարտած կ'ըլլանք տեղի տալով։ Այն երիտասարդները որոնք կը հետաքրքրուին հայութեամբ եւ իրենց մշակոյթով, կրնան փոքր ճիգ մը ընել իրենց մայրենին տովելու համար, դժուար բան մը չէ եւ այսօր միջոցները չատ աւելի դիւրին են։

– Բայց, այդ ճիգն ալ չեն ըներ։

= Դժբախտաբար ոչ։ Յետոյ, մենք մեղ չխաբենք, ընդհ· անտարբերութիւն մը կայ, մանաւանդ մշակոյթի հանդէպ։

– Ուրեմն, ի՞նչպէս կը դիմանաք։

= Աւելի ճիշդ կը տոկանք։ Անկախ օրաթերթերի մը պարագան աւելի դժուար է։ «Յառաջ»ի միակ եկամուտը կը կազմեն բաժանորդագրութիւնը, ծանուցումները, որոնք աւելի ազգային քնոյթ ունէին քան առեւտրական, եւ բարգաւաճման փոնտը։ Մուտքը կը նուազի, ելքը կ'աւելնայ։

– Բայց, եւ այնպէս կը չարունակէ՞ք։

= Կը խորհինք որ իրաւունք չունինք նահանջելու, համոզուած ըլլալով որ «Յառաջ» դեռ պահանջ մըն է։ Գիտէք, եթէ ապագանակը համապատասխան ըլլար ընթերցողներու թիւին, այնքան դժուարութիւն չէինք ունենար։ Բայց, թերթը ձեռքէ ձեռք կ'անցնի, ընթերցողները չատ են...։

– Յաւելի երեւոյթ, ի վերջոյ ի՞նչ է տարեկան բաժանորդագրութեան մը գումարը։

= Մեծ բան չէ, բայց, այդ ալ չատ կը դանեն։ Վերջերս, մէկը մօրը մահազդին դինն ալ չափազանցուած գտած էր...։

– Այս պայմաններուն մէջ, հայերէն մամուլը ապագայ ունի՞։

= Գիտէք, ներկան ալ չատ փայլուն չէ։ Ամէն երկրի մէջ, թերթերը տեղական լեզուով լոյս կը տեսնեն, մէկ – երկու էջ պիջլելով հայերէնի։ Այսօր ունինք անգլերէն, ռումաներէն, պուլկարերէն, չեխերէն, հունգարերէն, հոլանտերէն, չուէտերէն, սպաներէն, փորթուկալերէն թերթեր։ Եթէ այս ճեւով չարունակուի հայ մամուլը միայն անունով հայ կ'ըլլայ։

– Ուրեմն, յոռետես էք, բայց եւ այնպէս կը մերժէք անձնատուր ըլլալ։ Ուրախ եմ, յաջողութի՛ւն։

= Շնորհակալութիւն։ Պարզ է որ կը մերժենք անձնատուր ըլլալ, վճռած ենք տոկալ, հակառակ բոլոր խոչընդոտներուն։

«ՅԱՌԱՋ»

Օրուան դէպքերը

ԿԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹՈՒՐՔԻՈՑ ՄԷՋ, ժողովրդավարութեան չգոյութիւնը օրէ օր աւելի կը չեչտուի, կը զրէ Էրիք Պիչկալա («Փիկարօ», Յուլիս 31)։ Կը նկարագրէ վերջին դէպքերը, որոնցմէ զլխաւորն է կ'ըսէ անձեռնմխելիութեան վերացումի դիմումը որ եղած է երեսփոխանուհի Սեմա Փիչքինսիթի դէմ։ Մարդկային իրաւանց յանձնախումբի նախկին նախագահուհին պայքարկղութիւն ստեղծած էր անցեալ տարի ցուցադրելով չարչարանքի այն գործիքները զոր ժողված էր ոստիկանատուներէ։ Քանի մը ամիս եւ վտարուած էր խորհրդարանական յանձնախումբէն։ Այսօր, կը հետապնդուի «մեղսակցութեան» համար, որովհետեւ մերժած

(Շար·ը Դ· էջ)

ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԵՐ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ»

ԳԷՈՐԳ ՏԷՐ – ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

Մի ուրիշ անգամ էլ երջանկութիւն ունեցանք յիշելու՝ հայերէնի համար այս խորհրդից «քարձր բան չկայ» կանխադրոյթը: Պաշտօնապէս ընդունուել էր եւ այսօր իսկ գործում է այբուբենի համակարգչային մի հիմնօրինակ, որի մէջ չկայ մխանիչ կապիչը «եւ»ը եւ հակառակը՝ իր գլխատառ ու փոքր տարբերակներով կայ «և» գիրը: Սրանք, առանձնապէս՝ երկրորդը, շատ էին անհանգստացնում խորհրդին ու նրա նախագահին, մի օր էլ դրամախնդիր մի ծրագրաւորողից լսելով, թէ «Դուք ի՛նչ այբուբեն ընդունէք, այն էլ դառնալու է նոր հիմնօրինակ», ծածուկ քննարկումներով նախապատրաստեցին եւ, խորհրդի «յարմար» անդամների ներկայութիւն ապահովելով, ընդունեցին հայերէնի 40 տառանոց մի այբուբեն, ուր կային նաեւ «ու», «եւ» անմատնիչները՝ մեծատառով ու փոքրատառով: Երբ յաջորդ նիստին քննարկում էին ժամանակի նախագահ Լ. Տէր-Պետրոսեանից ստացուած առարկութիւնը, որով առաջարկուած էր հրաժարուել այդ չաղկապներն իրենց երկտառ տեսքով առանձին դրանչաններ համարելուց, նախ չանթող հայեացքներ նետեցին նախագահին անձնապէս ճանաչողների (նաեւ՝ լիովին յանիրաւի, տողերիս հեղինակի) վրայ, ապա պարզեցին որ նախագահն իրաւունք չունի առարկելու իրենց վճռին, որովհետեւ իրենք հայերէնի հարցերի «բարձրագոյնն» են: Ի վերջոյ՝ յիշածս ծրագրաւորողն աղքատ պետութեան լղճուկ դրամապանակից մի զգալի գումար դրպանեց, սարքեց 40 տառանոց մի նոր «հիմնօրինակ», որ մեր խեղճ ժողովրդի համար զարձաւ մի նոր փորձանք ու խճողանք:

Քննարկումների ընթացքում, առիթով կամ անառիթ եւ շատ թափանցիկ ակնարկներով, տողերիս հեղինակին ուղղակի, ուրիշներին՝ վերացաբար, վերադրում էին չեղած՝ իրենց յատուկ եւ իրենց իսկ մտքի ծնունդ մի բան. «Այն խորհրդակցութեան ժամանակ Լ. Տէր-Պետրոսեան ասաց. «Եթէ ես թագաւոր լինէի...», իսկ հիմա ձեզ թելադրում է, դուք էլ գրում էք»: Մեր «մեղք»ն էլ «մահուչափ» էր ո՛չ այնքան մեր սովորական յօդուածները դասականով գրելու, որչափ՝ իրենց «պետական» վաստարկ – ների կեղծութիւնը բացայայտելու եւ իրենց յերիւրած զրպարտութիւններին պատասխանելու պատճառով: Իրենց գործածներն էլ միշտ աչքի են ընկել կերթ բանավէճի հետ կապ չունեցող կոպտութեամբ, անզսպութեամբ, հայհոյաբանութեամբ, խնդիրն անձնաւորելու, հակառակորդներին զրպարտելու եւ վարկաբեկելու ցայտուն յատկանիշներով: Հայհոյաբան մի յօդուածի պատասխանիս մէջ փորձեցի պարզել, թէ ինչո՞ւ դասականի վերականգնմանը դէմ են յատկապէս համալսարանների լեզուաբան եւ տիպաղոսակիր ուսուցիչները: Մի պատճառ էլ համարեցի հետեւեալը. նրանց հիմնական վաստակն ապահովւում է համալսարաններ դիմող աշակերտներին ուղղագրութիւն եւ կէտադրութիւն սովորեցնելու դիմաց ստացուղ վարձատրութեամբ, որ պաշտօնական աշխատավարձերից անհամեմատ բարձր է, ուստի եթէ այս մարդիկ հարկադրուած լինեն եւ եթէ անգամ կարողանան սերտել իրենց չիմացած ուղղագրութիւնը, ապա դանդ մէկ – երկու տարի նիւթական մեծ կորուստներ են ունենալու: Թէ՛ յօդուածիս եւ թէ՛ այս բացատրութեանս որեւէ զրաւոր պատասխան չեղաւ, իսկ բանաւոր եղաւ անուղղակի եւ կրկին բնորոշ ու յատուկ էր այն յօրինող – արտաբերող մարդու տեսակին: Երեւանի պետական համալսարանում կայացած մի խորհրդակցութեան ժամանակ նոյն համալսարանի տիտղոսաւոր ու պաշտօնաւոր մի դասատու, որեւէ անուն չտալով, բայց ուղիղ աչքերիս մէջ նայելով յայտարարեց, որ դասականի օգտին գրուած մեր յօդուածների դիմաց վարկաբեկելու նպատակ ունեցող այս յերիւրանքը մտքի ծնունդ էր մարդու այն տեսակի, որի որեւէ քայլն անվճար չի կարող լինել:

Ցետոյ, ինչպէս ասացինք, իշխանափոխութիւն եղաւ, երկրի նախագահ զարձաւ մէկը, որ նոյն երկրի լեզուն՝ իր գրեթէ չիմանալուն վերաբերող հարցին պատասխանեց՝ «Ես հայերէն եմ պարապվում», իսկ երբ սփիւռքում լրագրողները հայերէնի եւ նրա ուղղագրութեան մասին իրեն հարց են տալիս, անկեղծօրէն խոստովանում է, թէ դրանցից ինքը բան չի հասկանում (ակամայ յիշենք նոր նախագահացած ժամանակ մխամիտ մի լրագրողի՝ իրեն ուղղուած հարցը՝ «Ո՞վ է Ձեր սիրած դրողը», որին յաջորդեց պատասխանողի նախ չիմոթմունքը, ապա՝ Ժիւլ Վեռն անունը կմկմալը): Այսօր մեծատածողներ կան, թէ հայերէնի իր մարդիչի թելադրանքով էր, որ պաշտօնից ազատեց Վ. Միրզոյեանին, որպէսզի՝ կրկին՝ մեր բարեկամ ու գործակից՝ նոր նշանակուած պետը յարմարուղ ու հնազանդ լինի նոյն մարդիչին եւ նրա կուսակիցներին, ու նրանց նման կրկնի, թէ հիմա գասակաչ ուղղագրութիւնը վերականգնելու ժամանակը չէ, թէ Լեզուի օրէնքի՝ ուղղագրութեան միասնական – նպատակ պահանջն ամենեւին «չի ենթադրում վերադարձ դասական ուղղագրութեանը», որով մեր ժողովուրդը միանգամից անդրադարձ է գառնալու (Լ. Հախվերդեանի ակա՛նջը կանչի), թէ կեանքի անհեռանկարայնութեան ու անյուսութեան պատճառով Հայաստանից հեռացած մարդիկ փոխել են սփիւռքի «ժողովրդագրական պատկերը»: Թէեւ «ժողովրդագրական» նշանակում է ինչ – որ տարածքում ապրող տարբեր ազգերի կամ ժողովուրդների քանակային յարաբերակցութեան ընդհանուր պատկեր, բայց չենք կարծում, թէ մեր բարեկամը հայաստանցի եւ սփիւռքցի Հայերին տարբեր ժողովուրդներ է համարում, ուստի պէտք է հասկանանք, որ ուզում է ասել, թէ այսօրուայ սփիւռքի մեծ մասի իմացածը խորհրդային ուղղագրութիւնն է, ուրեմն՝ միւս, փոքր մասն էլ պէտք է «խելքի գայ», լնդունի այն եւ այլն (տե՛ս «Առաւօտ», 2001 Մարտ 10 թուակիր, այս եւ այլ անհիմն պնդումների իրաւացի քննադատութիւնը՝ «Ցառաջ», 2001 Մայիս 22 – 23):

Շա՛տ էին ուզում, ուրեմն ինչո՞ւ «գուռած» «Բարձրագոյն խորհուրդ»ը ուշացնում եւ Հայաստանում դասականով տպագրելն արգելող վճիռ դեռեւս չի կայացնում (նկատե՛նք՝ այս վտանգը միշտ առկայ է): Կարող ենք միայն ենթադրել, որ իշխանութիւնը դուցէ քաղաքական պատճառներ ունի. «Համահայկական» խաղեր եւ «Հայաստան – Սփիւռք» համաժողովներ է անում, ապա՝ 1700-ամեակ է նշում, եւ բոլորն աշխատում են այս յոբելեանի վերմակից մի ծուէն էլ իրենց վրայ քաշել (Հայաստանի անգամ ամենայարեհան ծայրերի մանրավաճառները Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսների իրենց հաշուարկներում կատուցում են «էջմիածնում մի մոմ վառելու» հրաւիրածների երեւակայական զրպանների հաշուին): Սակայն միւս կողմից Ամենայն Հայոց կաթողիկոսարանի նոյնանուն՝ «էջմիածին» պաշտօնաթերթին անդամ հրաժարուում է դասականով զրուած որեւէ էջզոք՝ զուտ բանասիրական յօդուած տպագրելուց (մինչ սփիւռքի հետ գրադրութեան եւ հայրապետական կոնդակների ուղղագրութիւնը կարծես դեռեւս դասական է): Իսկ մի այլ յիրաւի արժանաւոր եւ արժանի հեղինակութիւն ունեցող օրաթերթ, որի խմբագիրը 3 – 4 տարի առաջ համարձակ ասում էր՝ «Ուղղագրութեան հարցը մեր խնդիրն է», առանց երկմտելու տպագրում էր թէ՛ դասականով գրուած որեւէ բան եւ թէ՛ նոյն խնդրին վերաբերող տարակարծիք քննարկումներ, հիմա այդպիսի նիւթերը շատ քաղաքավարի եւ կիրթ վերցնում է, բայց «այսօր» ու «վաղն» ասելով, ամիսներ եւ կիսամեակներ չարունակ «աւելի կարեւոր նիւթերը» զրանք տպելու տեղ չեն թողնում:

Այս վարմունքի պատճառած անպատեհութիւններից միայն մէկը. ժընեւաբնակ վաստակաչատ լեզուաբան Մարտիրոս Մինասեանի բանասիրական կարեւոր արժէք ունեցող զրքերը տպագրուում են 25 – 50 օրինակով, որից, բնականաբար, Հայաստանի զրադարաններ են զալիս 2-ը կամ 3-ը, տակայն սրանց՝ տպուած եւ Հայաստան հասած լինելը մասնագէտներին ծանուցող մատենախօսութիւններ Երեւանի մամուլում տպագրելն այսօր անհնար է:

Որոշ հեռուստաժրագրեր եւ պարբերականներ ուղղագրութեան խնդիրն արծարծել – չարչրկելով փորձում են «թերթ ծախել» (տե՛ս «Գրական թերթ», 2000 Յունիսի 30): Բայց, կարծես մի կենտրոնից հրահանգուած լինելով, բոլորը զբոյցի ու յօդուածի են հրաւիրում խորհրդանապաշտ «կարմիր պրոֆեսոր – ներին»: Ինչպէս ասել ենք, նախկին ընդդիմութիւն ՀՅԴ-ն որ զարմանալիօրէն նաեւ ներկայ իշխանութեան «պատասխանատուն չէ», բայց այլեւս «ընդդիմութիւն» էլ չէ, առաջ դասականով տպագրում էր ամէն ինչ, իսկ այժմ այս կուսակցութեան «բացայայտ» ու «չբացայայտուած» պաշտօնաթերթերը նոյնպէս հրաժարւում են դասականով որեւէ բան տպագրելուց: Հակառակը՝ հայերէնի վերն ակնարկուած մարզիչի հետ արուած բաւական բազմանչանակ հարցազրոյցով «լուսաւորում» են միամիտներիս թերիմացութիւնը: Սրանցից հասկանում ենք, որ խորհրդահայ ծռագրութեան զօրավարները, դասականի կողմնակիցներին բռնի լռեցնելուց յետոյ, իրենց համարում են յաղթանակած՝ դրութեան տէր, ուստի եւ նոյն մարդիկ, որոնք երէկ ճչում էին, թէ «հայերէն ուղղագրութեան խնդիր չունի», այսօր երկխոսութեան են կոչում արդէն իրենց «յաղթողի» դիրքից: Մեր հին զրականութիւնը «միամտօրէն մոռանալով» եւ չարունակելով ուղղագրութիւնները համարել արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի, մարզիչը եղրափակում է. «կամ պէտք է սկզբունքներ մշակել միասնական ուղղագրութիւն ստեղծելու համար (իմա՝ մի նոր ուղղագրութիւն է ստեղծելու՝ Գ. Տ. – Վ.), կամ դիջում կատարել լեզուի երկու ճիւղերից մէկի ուղղագրութեանը: Դրա համար պէտք է հաշուի առնել, թէ երկու ճիւղերից ո՞րն է աւելի ուժեղ եւ հեռանկարային: Ինձ թուում է, որ այս տեսակէտից արեւելահայերէնն ունի բաւական մեծ հնարաւորութիւններ» («Երկիր», 2001, Մարտ 17՝ «Հարցազրոյց ակադեմիկոս Սերգէյ Աբրահամեանի հետ»): Քաղուածքիս վերջին բառի տեղ առաջ ասում էին՝ «առաւելութիւններ». սակայն աւելի ուշադրաւը խմբագրութեան «Ց. Գ.»-ն է. «Հարցը պէտք է լուծուի երկու կողմերի մասնագէտների համատեղ ջանքերով (քննարկումներով)»: Նմանութիւնն ակնյայտ է, աւելի ճիշդ՝ նոյնն է, ինչ ցեղասպանութեանը վերաբերող թուրքական «տեսակէտ»ը՝ ո՛չ բարեկամ երկու ժողովուրդների մասնագէտների քննարկման խնդիր է:

Աղանդի ու հերձուածողների այն վիճակը, որի մէջ Հայաստանում յայտնուել են հայերէնի բուն ուղղագրութիւնը եւ նրա վերականգնմանը ձգտողները, մտածել է տալիս, որ դուցէ թէ այստեղ յարութիւն է առել խորհրդային չրջանում լայնօրէն կիրառուած եւ սրբագործուած ամբողջատիրական այն եղանակը, որին յատուկ «ներքին»՝ բանաւոր հրահանգի ուժով բոլոր պարբերականները հրաժարւում են դասականի օգտին գրուած որեւէ յօդուած տպագրելուց (կարեւոր թերթերի խմբագիրները խմբովին եւ առանձին յաճախ են հիւրընկալւում երկրի «առաջին» դէմքերի կողմից): Գուցէ բամբասանք է, բայց, քանի որ առանց կրակ ծուխ չի լինում, երեւի նաեւ սխալ չէ, տեղեակ մարդիկ պնդում են, որ վերջին չրջանում «աւանդական» կուսակցութիւնների սփիւռքի շատ պարբերականների ուղղագրութիւնը եւս թելադրւում է Հայաստանից գնացող հրահանգներով ու ըպառնալիքներով: Էլ ո՞ւր մնաց, թէ յաղթանակած եւ ուղղագրութեան խնդիրը լուծուած չհամարեն... յօդուտ խորհրդային:

Ցաղթած լինելու համոզուածութեան հէնքի վրայ իրենց յատուկ, բնական եւ բնորոշ զայրոյթով ընդունեցին մի նոր եւ անսպասելի կողմից դասականի վերականգնման նոր կողմնակցի յայտնուելը. խորագիրն իսկ խօսուն է՝ «Պարոյր Հայրիկեանը թող քիթը չխոթի ուղղագրութեան մէջ» («Առաւօտ», 2001 Մայիս 10 թուականը): Սակայն «Կէսգիշերային ճեպընթաց» հեռուստաժրագրով Յուլիսի 6-ի՝ լոյս 7-ի Հայրիկեանի հեռուստաելոյթ – հարցազրոյցն աւելի է զայրացել «յաղթածներին»: Բայց պայրանն թէ՛ ո՛չ, այսօր Հայրիկեան է, վաղը Պօղոսեան է լինելու, միւս օրը՝ Ասպղոսեան. պրակտն հսկայ ժառանգութեան տէր եւ աշխարհացրիւ վիճակ ունեցող մեր ժողովուրդը չուտ կամ ուշ պէտք է ունենայ միասնական մէկ ուղղագրութիւն, որը կարող է լինել միայն այն, որով գրուած է համաբեա տասնվեցդարեայ դրական մշակոյթի՝ տասնհինգ դարից աւելի տեւողութիւն ունեցածը:

Երեւան
Յուլիսի 25, 2001 թ.

ՄԱՐՄԱՐԱ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ԼԻՋՈՒՈՎ

Քանի մը օր առաջ մեր սիրելի արուեստագէտ թարեկամներէն մէկը պատուակէն դուրս հանեց չատ տարիներ առաջ մեր «Մարմարա»ին մէջ հրատարակուած ծաղրանկար մը: Ծաղրանկարը ցոյց կուտար մեր դպրոցներէն մէկուն մէջ դասարան մը: Աշակերտներուն դիմաց երկու ուսուցիչները կային, մէկը նստած, միւսը ոտքի: Ան որ նստած էր, հայերէնով կը հարցնէր. «Հիմա ո՞վ դասի ելլել կ'ուզէ»: Իսկ միւսը, որ կանգնած էր, թրքերէնով կ'աւելցնէր. «Հօղրէթմէնի-նիզ չիմոի քիմ ատրսէ գալըմաք իսթիչ սիյէ սօրուեօր»:

Առնուազն տասնըհինգ տարի առաջ հրատարակուած ըլլալու էր այդ ծաղրանկարը, որովհետեւ ես քնաւ չէի յիշեր զայն: Երկար երկար նայեցայ այդ ծաղրանկարին ու չատ զարմացայ:

Ուրեմն այդքան կանուխէն արդէն զգացեր ենք մեր դպրոցներէն ներս հայերէն լեզուին արձանագրած նահանջը: Ժամանակը որ կ'անցնի, մեզի չատ բան մոռցնել կու տայ: Այսպէս, եթէ հիմա մեզի հարց տային, թէ արդեօք ե՞րբ, ո՞ր թուականին է որ սկսանք մտահոգուիլ դպրոցներէ ներս մայրենիին արձանագրած նահանջով, կը դժուարանանք յստակ թուական մը յիշելու: Բայց մէկ բան կրնանք պատասխանել: Թուականը կարեւոր չէ: Կարեւորն այն է որ անցնող տարիներու ընթացքին կացութիւնը թաւալգլոր վատթարացաւ: Ամէն տարի նախորդէն քիչ մը աւելի վատթար դարձաւ մեր դպրոցներուն մէջ հայերէնին վիճակը: Եւ այսօրուան վիճակը հարիւր անգամ աւելի վատթար է քան ինչ որ էր այն չրջանին երբ վերոյիշեալ ծաղրանկարը հրատարակուեր է մեր թերթին մէջ: Կրնանք մտածել որ այսօր մեր բազմաթիւ դպրոցներուն մէջ հայերէնով հարցընող այդ առաջին ուսուցիչն ալ չ'մնացած:

Ուսուցչի մը պաշտօնին ամէնէն հաճելի կողմը ո՞րն է: Տեսնել թէ աշակերտները կ'օգտուին, բան կը սորվին իրմէ: Ուսուցչի մը համար ո՛վ գիտէ ինչ մեծ երջանկութիւն է ամէն օր տեսնել իր աշակերտներուն յառաջդիմութիւնը, տեսնել թէ սա կամ նա աշակերտը այսօր գիտէ քիչ մը աւելի չատ բան, քան ինչ որ գիտէր երէկ: Տարեվերջին անդրադառնալ, որ աշակերտի մը մէկ նոր բան կառուցուած է ուսուցչին մէկ տարուան աշխատանքին չնորհիւ:

Ասոր փոխարէն, իր առաքելութեանը գիտակից ու նախանձախնդիր ուսուցիչի մը համար ալ ոչի'նչ աւելի տառապեցուցիչ է քան անդրադառնալ որ ան չի յաջողիր բան սորվեցնել իր աշակերտներուն: Եթէ ուսուցիչը միայն իր պաշտօնը կատարած ըլլալու ու իր ամսաթոշակը գանձելու համար չէ որ ի գործ կը դնէ ուսուցչի ասպարէզը, այդ պարագային ուսուցիչը իսկապէս պիտի տառապի երբ պիտի տեսնէ թէ աշակերտը նոյնքան տգէտ է որքան էր երէկ, կամ որքան տգէտ էր տարուան սկիզբը: Աշակերտը ոչինչ կը սորվի, ոչի'նչ սորվիլ կ'ուզէ եւ կարծես պատ մը կը գառնայ ուսուցչին բարեացակամութեան ու ուքնային աշխատանքին դիմաց: Ասիկա անէծք մըն է ուսուցչին համար եւ անչուշտ որ ուսուցիչը չատ պիտի տառապի իր այս անյաջողութեան համար, որ իրականութեան մէջ իր անյաջողութիւնը չէ, այլ աշակերտին անյաջողութիւնն է:

Անյաջող աշակերտներ պատմութեան բոլոր չրջաններուն ու ամէն դպրոցի ներս գոյութիւն ունեցած են: Ո՛չ մէկ ուսուցիչ կրնայ պարծենալ թէ իր պատմութեան մէջ ոչ մէկ անյաջող աշակերտ ունեցած է: Ասիկա անկարելի է: Ամէն ուսուցիչ ունեցած է անյաջող աշակերտներ: Ամէն ուսուցիչ ունեցած է աշակերտներ որոնք ոչ միայն չեն յառաջդիմած, այլ նոյնիսկ ետ գացած են: Ամէն ուսուցիչ ունեցած է աշակերտներ որոնք ոչ միայն չեն սորվեցուցած, այլ նոյնիսկ սորվեցուցած են իրենց ուսուցիչին

ցիչ կրնայ իր ղիմացը նստող երեսուն, քառասուն աշակերտներուն վրայ արձագանգել նորն յայտնելիքը: Ոմանք բնաւ պիտի չօգտուին ուսուցչին դասախօսութիւններէն: Բայց ասիկա պարզապէս հաստատութեան խնդիր մըն է: Եթէ երեսուն աշակերտներէն աւելի քան քսանը կ'օգտուի, եթէ ղպրոցին եւ ուսուցչին առաջը կ'առնէ, ասիկա արդէն գոհացուցիչ է եւ ուսուցչին համար այդքան ալ մեծ առապանք չէ տեսնել որ իր աշակերտներուն փոքրիկ մէկ մասը անընդունակ է եւ այնքան չօգտուիր որքան կրնային միւսները: Բայց այսօրուան կացութիւնը բոլորովին տարբեր է: Հայերէն լեզուի ուսուցիչ մը այսօր խնդրանք յղացածի երջանիկ պիտի ըլլայ եթէ երեսուն աշակերտներուն միջեւ կարենայ գտնել գոնէ մէկ կամ երկու աշակերտ որ յարաբերական է հայերէն սորվելու եւ որ ատկէ օր. կը կատարելագործէ կը մայրենին:

Ձիշդն ըսելու համար, քանի որ մօտէն կը շահագրգռուինք այս հարցով, պէտք թէ մեր գրեթէ բոլոր վարժարաններուն մէջ այսօր ալ տակաւին կը գործեն խղճամիտ ու մայրենիի սիրահար ուսուցիչներ: Անոնց ալ մայրենիի մակարդակը այնքան բարձր չէ որքան փափաքելի էր, բայց հոգ չէ, իրենց ունեցածը կը բաւէ որպէսզի անոնք իրենց աշակերտներուն մէջ հրահրեն մայրենիի սէր, կամ անոնց բաներ մը սորվեցնեն: Եւ անոնք անպայմանց կը գտնեն մէկ կամ երկու աշակերտ, ընդհանրապէս աղջիկ, որոնք կ'ուզեն արձագանգել իրենց ուսուցչին ձիրքերուն: Շարաղրութիւններ կը գրեն, ներկայացումներու կը մասնակցին, հայերէն արտասանութիւններ կ'ընեն, եւայլն: Բայց դժբախտաբար մակարդակը այս անբաւարար է եւ այն քիչ չափով յուսադրիչ պատկերը որ կը ստեղծուի ղպրոցին մէջ, խարուսիկ է, ղպրոցէն դուրս տոկալու չափ զօրաւոր չէ, ղպրոցն վերջ փրփուրի մը նման պիտի անհետանայ: Փաստը մէջտեղն է. վերջին տասնըհինգ, քսան տարիներու ընթացքին մեր ղպրոցական նստարաններէն անցած հազարաւոր աշակերտներու մէջէն գրեթէ բախտաւոր դուրս չեկաւ մէկ հատ իսկ, մէկ բանաստեղծ իսկ, որ մեր մայրենին պիտի կարենար գործածել այնքան անթերի ու զեղեցիկ կերպով, որքան մեր ղպրոցները կը գործածէին ասկէ քառասուն, յիսուն տարի առաջ: Կը նշանակէ որ մեր պվհացաւը բացառութիւններու հետ չէ, այլ ամբողջ զանգուածին հետ: Աչակերտութեան ամբողջ զանգուածը, երեսունի վրայ երեսուն, կամ քառասունի վրայ քառասուն, անընդունակ գարձած է հայերէն լեզուն սորվելու ու զայն անթերի կերպով գործածելու: Երջանիկ պէտք է ըլլանք եթէ ամանք գոնէ ղպրոցէն այնքան մը կրցած են օգտուիլ որ, եթէ սոխպուին, ճիշդ կամ սխալ, քանի մը վայրկեան բաներ մը կրնան խօսիլ հայերէնով:

Ասիկա ի՞նչ կը նշանակէ: Ասիկա կը նշանակէ որ մեր այս անմիջական շրջանակին մէջ մեր մայրենին մահամերձ է: Ոչ մէկ հրաշքի կրնանք սպասել: Եթէ տակաւին աչքէն ձախէն քիչ մը հայերէն կը լսենք, տակաւին մեզի կու գայ հիներէն, նախորդ սերունդներէն: Այդ նախորդ սերունդներն ալ իրենց հետ պիտի տանին այն ինչ որ ունէին: Մեր մայրենին, չատ խոշոր զանգուածի մը մօտ, մահամերձ ալ չէ, պարզապէս մեռած է: Ամբողջովին մեռած է: Եւ պերեզման խակ չունի:

Եւ երբ մայրենին մահամերձ է կամ մեռած է, բնականաբար անոր կապուած չատ բաներ ալ մահամերձ են կամ արդէն մեռած են: Օրինակ հայատառ ղրականութիւնը: Օրինակ հայատառ մամուլը: Օրինակ հայերէն լեզուով թատրոնը: Օրինակ հայերէն լեզուով նամակագրութիւնը: Օրինակ՝ հայերէն լեզուով քարոզ մը եկեղեցիին մէջ: Ալ խօսքը չենք ըներ աւելի բարձրամակարդակ գործունէութիւններու, ինչպէս օրինակ՝ հայ մշակոյթի հետազօտութիւն հայերէն լեզուով, հայագիտական ուսումնասիրութիւն, նոր բառեր ստեղծելու ակադեմական աշխատանք, ուղղագրական հարցերու քննարկում, եւ այլն:

Վերոյիշեալ պատկերը մեր անմիջական շրջանակին պատկերն է, բայց ամբողջ Սփիւռքահայ տարածքի վրայ ալ կացութիւնը ո՛չ միայն տարբեր չէ, այլ աւելի վատթար է: Իսկ Հայաստանի մէջ ալ պատուղները փտիլ սկսած են, բայց տակաւին չատեր չեն նշմարեր:

Ո՞վ հոգ պիտի ընէ այս անվճռունակ վիճակին նայելով: Անշուշտ ո՛չ թէ Մոսկուայի Դումայի նախագահը, որ Հայաստանցիներուն կը յանձնարարէր որ թափ տրուի Հայաստանի մէջ ռուսերէնի ուսուցման: Ո՛չ ալ ուրիշ որեւէ երկրի ղեկավարը: Այդ օտար ղեկավարներէն ո՛չ մէկուն համար մեր մայրենին այնքան թանկագին է, որքան թանկագին պէտք է ըլլար մեր ժողովուրդին եւ մեր ժողովուրդի ղեկավարներուն համար: Բայց հարցը այն է, որ մեր ժողովուրդին ալ հոգը չէ: Ո՛չ մէկուն հոգն է: Եւ Հայոց լեզուին կը մնայ ողբալ Պետրոս Դուրեանի լեզուով.

Իսկ աննշան եթէ մնայ
երկրի մէկ խորշն հողակոյտն իմ
Եւ յիշատակս ալ թառամի,
Օ, այն ատեն ես կը մեռնիմ:

Ռ. Հ.

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ

ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔԻՆ ՊՈՒՆԻԿՆԵՐԸ

Դարերէ ի վեր Իրանի Մէչհէտ քաղաքը ուխտատուներու նախընտրած վայրերէն է. հոն կայ իմամ Ռըզայի դամբանը որ ամէն տարի չուրջ մէկ միլիոն ուխտաւոր կ'ունենայ: Ան մարզարէին չառաւիղնեէրն է, մեծարուած չիինեերէն: Հոն կը դիմեն հիւանդներ եւ հաշմանդամներ, օրերով, երբեմն չաթմիներով աղօթելու, որպէսզի առողջանան:

Ատոր քով, քաղաքը ծանօթ է նաեւ եբաչխին դէմ տարած պայքարով, Աֆղանիստանէն հասած ապաստանեալներով, Թմրեցուցիչի մեծ գործածութեամբ եւ «Սարդ» մկրտուած անհատի, կամ խմբակի մը, ոճրային արարքներով: Այդ արարքները Թիրախ կ'առնեն յատկապէս կիները որոնք մարմնավաճառութեամբ զբաղած են: Վերջին տարիներուն 20 – 50 տարեկանի միջեւ խեղդամահ եղած կիներու դիակները գտնուած են փողոցներու անկիւնները: Պատրաստուած բազմաթիւ տեղեկագրերու համաձայն այդ ոճիրները կը գործուին ինքնապաշտպանութեան լիկայի մը կողմէ որ կը ջանայ մաքրագործել ընկերութիւնը: Ընդհանուր կարծիքը այն է որ քանի մը տարի առաջ այդ կարգի ոճիրներ լուսթեան մատնուած կը մնային, բայց բարեփոխումի ներկայի պայմաններուն մէջ այլեւս կարելի չէ: Իրանեան մամուլը հասկցած է որ ծանրակչիռ հարց մըն է ատիկա: Կը տրուի ինձ զիրենք ոչ իսլամական արժէքներու դէմ մարտիկներ մը կոչուած խումբի մը անունը:

Ստուգուած է որ սպանուած կիները եկած են քաղաքին աղքատ արուարձաններէն: Անոնց «բեռնակառքի վարորդներու կիներ» անունը կը տրուի: Հանրային կիներու ամէնէն վարձին մակարդակին կը պատկանին: Ընդհանրապէս թմրամոլ են, կը սլքատան ճամբաններու, քառուղիներու վրայ, սպասելով բեռնակառքերուն: Հնչում դրամ կը պահանջեն (40 ֆրանքի չափ), կամ թմրեցուցիչ: Մեծ մասը քրէական անցեալի տէր է: Անոնց սպանութիւնը ոմանց անտարբերութեան առարկայ եղած է, ուրիշներ վաւերացուցած են:

Մամուլին պաշտօնական թիւին համար քաղաքին մէջ հանրակին չկայ: Մինչդեռ ապատական թերթեր կ'ափսոսան պաշտօնական լայնախոհութեան որուն պատճառով մարմնավաճառութիւնը կը ծաղկի Մէչհէտի մէջ, հոն հրաւիրելով մինչեւ իսկ կեդրոնական Ասիայէն կիներ: Անոնք կը մնան քաղաքին ծայրամասերուն իջեւաններուն մէջ որոնք ռուսերէն նշանակներ ունին: Անոնք գործուած ոճիրներուն մասին կը նախընտրեն հաւատալ թէ խեղթի մը, կամ ծայրայեղական տիպարներու արարք են:

Երկրին մէջ տեսային ապօրինի յարաբերութիւնները, թմրամոլութիւնը եւ թմրեցուցիչի մաքսանենգութիւնը կիներու արգելափակման պատճառներն են: Ատոր մէջ թշուառութիւնը անուրանալի տեղը ունի: Հանրային առողջապահութեան պատասխանատուները կը տեղեկացնեն թէ յաւելում արձանագրած է սիտայէ վարակուածներու թիւը:

ՔԱՂՀԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱՂԱՐԱՆ

ԿՈՐՃՆԹՈՍԻ (Ցունաստան) ծովեզերեայ կեդրոնական հրապարակին վրայ, ամէն տարի կազմակերպուող ելոյթներու կարգին, երկրորդ տարին ըլլալով հրաւիրուած է Համազգայինի «Նայիրի» պարախումբը: Ձեռնարկին բացումը կատարած է քաղաքապետական խորհուրդի մշակութային ճիւղի պատասխանատուն: Համազգայինի պարախումբէն առաջ, ելոյթ ունեցած է Կորընթոսի քաղաքապետարանին պարախումբը: Ապա, Համազգային պարախումբին կողմէ, խօսք առած է Արշալոյս Սափրիչեան եւ պարզած հայկական պարարուեստի յատկանիշները, անդրադարձած է նաեւ Համազգայինի պատմութեան ու նաեւ անոր գործունէութեան Ցունաստանի մէջ իր հինգ մասնաճիւղերով: Նայիրի պարախումբը ներկայացուցած է վեց խմբային եւ մենախառարային պարեր: Պարերու աւարտին, խօսք առած է քաղաքապետ՝ Թոմաս Թոմայիտիս, որ ծանրացած է հայ եւ յոյն ժողովուրդներու պատմական ողբերգական երթին վրայ: Ան յայտնած է նաեւ որ Սեպտեմբեր ամսուն, Կորընթոսի մէջ տեղի պիտի ունենայ Հայաստանի վանաձոր քաղաքի հետ զուգորդութեան համաձայնագրի ստորագրութիւնը: Վերջաւորութեան տեղի ունեցած է նուէրներու փոխանակութիւն, որու աւարտին, պարախումբը և քաղաքապետական խորհուրդը ճաշի հիւրերը եղած են քաղաքապետին:

ԹԻ ԻՆ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Է·

ՀԵՏՔ ՄԸ

- Մեր մէջը գրականութիւն ընել չէ, այլ պարզապէս Թուրքերուն հասկցնել իրենց վիճած լեզուովը, ինչ որ կը խորհիք իրենց մասին:

- Անշուշտ, անշուշտ, բայց վերջապէս կարելի է աւելի խնամով ընել այդ թարգմանութիւնները... օրինակի համար, վատահ եմ, որ այսօրուան խմբագրականը թուրքերէնի պիտի թարգմանէք ձեր քերթին մէջ... մեղք պիտի ըլլար, եթէ այս քերթերէնով մը չթարգմանուէր:

- Ոչ, այդ խմբագրականը պիտի թարգմանուի, – նկատեց Զարդարեան:

- ինչո՞ւ համար:

- Այդ մասին մենք մեր մասնաւոր պատճառները ունինք:

- Այդ տարբեր բան... ինչ որ է, իմ տեսածս պարզ դիտողութիւն մըն էր, բարեկամական դիտողութիւն մը... որովհետեւ անկեղծօրէն կ'ըսեմ, ես չատ հաճակեր եմ ձեր թերթին ուղղութեան:

- Շնորհակալ ենք, – պատասխանեց Զարդարեան:

- Ձեր ըրածը բո՛ւն ժուռնալիզմ է... առանց որեւէ նկատողութեան, առանց կշռադատութեան որեւէ հաշիւի:

- Ի հարկէ, մեր թերթը կուսակցական թերթ մըն է եւ որոշ ուղղութիւն մը ունի:

- Քիչ մը թերեւս լուրերու բաժինը տըկար է, - դիտել տուաւ Աստիկ, – այսինքն բըբօրթաժի ճիւղը... բայց կարելի է այդ մասին ալ զարման մը խորհիլ:

- Մենք լուրերու չատ կարեւորութիւն չենք տար, մենք լուր չենք վաճառեր, այլ զաղափար կը տարածենք, – ըսաւ Զարդարեան:

- Շատ ճիշդ կը խօսիք, բայց վերջապէս թերթը ծախելու համար լուրերու ալ ուժ տալու է, այս մասին թերեւս ես կրնամ ձեզի օգտակար ըլլալ:

- Ինչպէ՞ս կերպով:

- Դիտէք, որ Թուրք թերթերու հետ սերտ յարաբերութիւն ունիմ, ասկէ զատ թէ՛ Թուրք պաշտօնական շրջանակներու հետ եւ թէ՛ օտար դիւանագիտական աշխարհի հետ ծանօթութիւններ ունիմ... մէկ խօսքով, կրնամ ձեզի, ատեն – ատեն, կարեւոր տեղեկութիւններ հաղորդել:

- Այդ մասին կրնանք մտածել, – պատասխանեց Զարդարեան խուսափողական ձեւով մը:

- Ես այս առաջարկութիւնը կ'ընեմ իբրեւ ձեր թերթին համակիր մը, առանց ուրիշ որեւէ նկատումի...

- Շատ չնորհակալ ենք:

- Այսինքն նիւթական փոխարինութիւն մը չեմ սպասեր ատոր համար:

- Մեր սկզբունքն է միշտ վճարել մեր աշխատակիցները, – պատասխանեց Զարդարեան, – բայց նախ պէտք է որոշենք, թէ պէտք ունի՞նք նոր լրատուի մը:

- Ես կ'ուզեմ ձրիաբար աշխատակցիլ:

- Այդ խնդիր չէ... միայն թէ ես առանձին որոշում մը չեմ կրնար տալ, պէտք է նախ խորհրդակցիմ ընկերներուս հետ:

- Ասկէ զատ, սա եւս ըսեմ, որ ես միայն լուրեր չէ, որ կ'ուզեմ հաղորդել, այլ յօդուածի ձեւով տեղեկութիւններ տալ... այսինքն միեւնոյն ատեն խորհրդատուութիւններ ընել:

- Ատոնք յետոյ կարելի է որոշել...

- Օրինակի համար Հայկական բարեկործութիւններու մասին բաւական տեղեկութիւններ ունիմ... դիտեմ, թէ Թուրք կառավարութեան բռնած ընթացքը ի՞նչ է եւ միւս կողմէ դեսպանատուններու մէջ անցած – դարձածը, բոլոր ասոնք կրնան յօդուածներու չարքի մը նիւթ ըլլալ:

- Անշուշտ...

- Եւ չատ չահեկան՝ ընթերցողներուս համար: Գիտէ՞ք, որ այս անգամ եւրոպական պետութիւնները չատ լրջօրէն ձեռք առած են խնդիրը:

- Այո՛, այնպէս կ'երեւայ:

- Պատրիարքարանը սակայն պէտք եղած աշխատութիւնը չըներ կոր:

- Պատրիարքարանը ոեւէ կերպով վրճռական ազդեցութիւն մը չի կրնար ունենալ խնդրին վրայ, – դիտել տուաւ Զարդարեան:

- Ընդհակառակն, չատ բան կրնայ ընել, – պատասխանեց Աստիկ, – ես մօտէն դիտեմ, որ Պատրիարքարանի կողմէ դեսպաններուն տրուած յիշատակագիրներուն մեծ կարեւորութիւն կը տրուին:

Եւ Աստիկ Շահրիկեանի դառնալով՝ ըսաւ.

- կարծեմ այսօր ալ նոր յիշատակագիր մը տրուեցաւ Պատրիարքարանի կողմէ դեսպաններուն:

- Տեղեկութիւն չունիմ, – պատասխանեց Շահրիկեան չոր ձայնով:

- Բայց դուք Հարստահարելոց յանձնաժողովին անդամ չէ՞ք:

- Այո՛, անդամ եմ:

- Ուրեմն ինչպէ՞ս կ'ըլլայ, որ տեղեկութիւն չէք ունենար... վահան էֆէնտի Փափազեանը անչուշտ գիտնալու է:

- Ես ալ լուր չունիմ, – ըսաւ Փափազեան: – Դուք ուրկէ՞ լսեցիք այդ լուրը:

- Բայց նոյնիսկ Ցանձնաժողովին անդամներէն մէկը ըսեր է:

- Սխալած ըլլալու է, թերեւս հին յիշատակագրին ակնարկած է:

- Չէ՛, խնդիրը այսօր իսկ դեսպաններուն յանձնուած յիշատակագրի մը մասին է, – պնդեց Աստիկ:

- Մենք լուր չունինք բնաւ, – ըսաւ Փափազեան:

- Տարօրինակ բան, – գոչեց Աստիկ:

- Անպատճառ սխալմունք մը կայ գործին մէջ, – դիտել տուաւ Զարդարեան: - Ինչ գրուած է եղեր այդ յիշատակագրին մէջ:

- Պարունակութիւնը չեմ գիտեր.... իմ յօդուածաշարքիս համար կ'ուզէի գաղափար մը ունենալ եւ ճիշդ ատոր համար մտածեցի, որ թերեւս դուք կրնայիք զիս լուսաբանել:

- Նոյնիսկ եթէ այդպիսի յիշատակագիր մը տրուած ըլլար եւ մենք պարունակութիւնը գիտնայինք՝ պիտի չկրնայինք հաղորդել ձեզի, քանի որ գաղտնի մնալու սահմանուած է...

- Ես յիշատակագիրը արտատպելու միտք չունիմ, պարզապէս կ'ուզէի լուսաբանուիլ...

- Դժբախտաբար պիտի չկրնանք ձեզ զոհացնել:

Աստիկ վարանոտ չարժում մը ըրաւ.

- Ինչ ընենք, քանի որ պարունակութիւնը չէք գիտեր...

- Նոյնիսկ յիշատակագրին տրուած ըլլալն ալ լուր չունինք:

- Այդ մասին ապահով եմ:

- Մենք ոչինչ գիտենք, – պնդեց Շահրիկեան:

- Ներեցէք, որ ձեզի անհանգիստ ըրի, – ըսաւ Աստիկ, – արդէն իմ հոս գալուս պատճառը այդ չէ, այլ պարզապէս այսօրուան խմբագրականը չնորհաւորել ... մնաք բարով, էֆէնտիներ, մնաք բարով:

(Շար. 31)

(Շար. Ա. էջէն)

է արդարութեան յայտնել անունները այն բանտարկեալներուն դուրս հարցապնդած էր իր քննութեան ընթացքին: Յօդուածագիրը լաւատես չէ իր եզրակացութեան մէջ: Կ'ըսէ թէ վարչակարգը կը բաղմապատկէ ժողովրդավարացման խոստումները, բայց, ձեռք առնուած միջոցները բնաւ համապատասխան չեն:

ՇԱՐՈՆ սկսած է մտահոգուիլ այն դատավարութենէն, որ տեղի կրնայ ունենալ Պելժիա, ուր Սապրա եւ Շաթիլայի ջարդէն վերապրողները (1982, Լիբանան) դատի դիմած են իրենց դէմ: 23 վերապրողներ կան որոնք կ'ամբաստանեն Շարոնը (այն ատեն Պաշտպանութեան նախարար) պատերազմական ոճիրի համար: Իսրայէլ իր վարչապետին պաշտպանութիւնը յանձնած է Տիկին Միչէլ Հիրշին, որ պաշտպանեց 4 Ռուանտացիները: Ըստ փաստաբանին՝ իր յաճախորդը չի կրնար հետապնդուիլ, որովհետեւ այդ դէպքերը արդէն դատուած են Իսրայէլի մէջ քահան յանձնախումբին կողմէ, որ որոշած էր դատարանի չդիմել: Լիբանանեան իշխանութիւններն ալ նեղը մնացած են, որովհետեւ Սապրա եւ Շաթիլայի ջարդերուն մէջ, քրիստոնեայ Էլի Հոպէյքան ալ դեր խաղացած է եւ դժուար թէ կրնայ խուսափիլ իր անցեալէն: Ներկայիս, Ռուանտացիներու դատավարութենէն ետք, Պելժիա ահռելիան զարճած է «ընդհանրական ճեռնհասութեան» մը, այս ճիւղին մէջ:

ԿՈՒԱՍԻ (Մոմային Ալպեաններ) բանաին մէջ, Յուլիս 30-ին, ապստամբական չարժում մը ծագած է, իբրեւ հետեւանք 17-ամեայ արգելափակուածի մը անճնաապանութեան: Շարժումը ծայր առած է նախորդ դիչերը, երբ բանտարկեալները հետաեսիլէն լսած են անոր մահը: Պատանին զնտան դրուած էր յարձակողական իր ընթացքին պատճառաւ: Հոն կրակի տուած է իր անկողինը եւ մեռած չնչահեղձութենէ: Կեանքը փրկելու բոլոր միջոցները ի դերեւ ելած են եւ պատանին մեռած է հիւանդանոցը: Ապստամբական չարժումին հետեւանքով 11 բանտարկեալ եւ 2 բանտապահներ վիրաւորուած են:

ՖՐԱՆՍԱՑԻ տօթը կը չարունակուի ունաեւ մթնոլորտին ապականութիւնը, որ հետեւանքներ ունի առողջութեան վրայ: Գլխաւոր հետեւանքները կը վերաբերին չնչարգելութեան, քերուըտուքի, աչքի բորբոքումի եւ այլն: Հետեւանքները կըրնան անմիջական ալ չըլլալ եւ երեւան ելլել աւելի ուշ:

ՖՐԱՆՍԱՑԻ մեծ ոաբունին՝ Սիթրիւք դէմ է Մօրիս Փափոնի ազատ արձակումին: Կ'ըսէ թէ ժոսփէն ա իրեն պէս կը մտածէ, բայց, հարցը Շիրաքէն կախում ունի:

ՅԱՌԱՋԻ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

«ՀԱՌԱՋ»Ի 76-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ


ԳԱՒԱՌԻՆ հին համակիր մը՝ 6000 ֆրանք:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Շրջ. Վարչութիւնը չընորհակալութեամբ ստացած է 1000 ֆր. Մարսէյլի Համազգային դպրոցէն Տիկին Ազատուհի Սամուէլեանի մահուան առթիւ:



le domaine de chamerolles



45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 héctares avec étang,
hébergement en châlets tout confort
pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends
et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F
(selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.

Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
Home Arménien

MERCREDI 15 AOUT
FETE CHAMPETRE

10h: Messe solennelle Chapelle Saint-Jean
Célébrée par Monseigneur DARON GEREJIAN
A partir de 12h30: Bar & Buffet
Animation : **MARTEN YORGANTZ ● Danses traditionnelles**

107, Avenue Maréchal Lyautey
83700 Saint-Raphaël

Réservations et renseignements :
au 04.94.19.51.50

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris

du jeudi 4 au lundi 8 octobre

à l'occasion de la Béatification de

Mgr. IGNACE MALOYAN

Archevêque de Mardine, martyr en 1915.

le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

De passage en France, au cours d'un grand tour d'Europe organisé dans le cadre des festivités du 1700ème anniversaire de la christianisation de l'Arménie nous accueilerons pour un **SPECTACLE UNIQUE**

L'ENSEMBLE FOLKLORIQUE
DATEV
(danseurs âgés de 10 à 14 ans)
en l'ESPACE GARBIS MANOUKIAN
40, rue d'Arménie, 69003 LYON
VENDREDI 17 AOUT à 20 heures 30
Venez nombreux les applaudir également...
—— P.A.F. 50 F ——
Renseignements:
☎ M.C.A.V. **04.78.26.28.71**
(les après-midi)
Maison de la Culture Arménienne de Villeurbanne
Croix Bleue des Arméniens de France
Section de Lyon-Villeurbanne

Date à retenir

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une SOIREE DANSANTE
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'Orchestre «Gaîdzag's»

«ՀԱՌԱՋ»Ի ընթացիկ ազդերու սակագինը

Մահազդ	800	(956,80)
Հոգեհանգիստ	700	(837,20)
Շնորհակալիք	700	(837,20)
Հարսնիք-Նշանտուք	700	(837,20)
Ծնունդ	700	(837,20)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհ. գումարը):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, Մինչեւ Մէկ ՔԱՌՈՐԴ Սիւնակ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8-րդ (12-13 տող) մնացեալին:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 2
JEUDI
2 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻԻՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·223
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
77e ANNEE — N° 20.223

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Յուլիս 31 / Օգոստոս 1)

ՀԱՅԵՒԹՈՒՐՔ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՄԱՍԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի կարգ մը քաղաքական ուժեր՝ ԱԺՄ–ը, Հնչակեան, Համայնավար կուսակցութիւնները, Հ·Յ·Դ·ն, Օրինաց երկիրը, ժողովրդավարական պատգամաւոր եւ Ակրօարդիւնաբերական ժողովրդավարական միաւորում Յուլիս 31-ին հանդէս եկած են միասնական յայտարարութեամբ մը, Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբին կազմութեան առնչութեամբ։ Հոն կ'ըսուի որ այդ նախաձեռնութիւնը հայեւթուրք յարաբերութիւնները օրակարգի հարց դարձնելու առաջին ընթացք կ'ուրուագծէ, ինչ որ կրնայ վտանգել իրական կարգաւորումի հեռանկարները։

Ընդունելով ղրացի երկու պետութիւններու եւ ժողովուրդներու միջեւ բնականոն յարաբերութիւն հաստատելու անհրաժեշտութիւնը, ստորագրող կուսակցութիւնները հարկաւոր կը նկատեն արձանագրել որ Թուրքիա չարունակելով ժխտել 1915–ի Ցեղասպանութիւնը, չարունակելով Հայաստանի շրջափակումը, նաեւ ակնյայտ կերպով կողմնակալ կեցուածք յոյց տալով Ղարաբաղի հարցին նկատմամբ, իրականութեան մէջ կը մերժէ երկու երկիրներու միջեւ միջազգային կարգերով ընդունուած յարաբերութիւններու կայացումը։

Այս տուեալներով յիշեալ կուսակցութիւնները կը չեշտեն թէ բնականոն յարաբերութիւններու հաստատումին օգնական չեն կրնար ըլլալ պատնական ճգմարտութիւնները քօղարկելու, հաւնեցման արուեստական փորձերը որոնք անուղղակի նպատակը կը հետապնդեն ցեղասպանութեան նիւթը օրակարգէ դուրս բերելու, արցախեան հանակգութիւններուն մէջ Թուրքիոյ դործօն դեր ապահովելու։

Ստորագրողները անընդունելի կը նկատեն ցեղասպանութեան ճանաչումին քաղաքական աշխատանքը նսեմացնելու, այդ պայքարին հայկական միասնական ճակատը պառակտելու եւ միջազգային ատեաններու մէջ յանդուգն ճամբուն վրայ պնդակտելու եւ միջազգային ատեաններու մէջ յանդուգն ճամբուն վրայ դնդուող ընթացքը կասեցնելու ամէն ջանք։ Քաղաքական յիշեալ ուժերը կը յայտարարեն որ հայեւթուրք յարաբերութիւնները կրնան կարգաւորել միայն երկու կողմերուն ամբողջական լիազօրութեան տէր օրինական ներկայացուցիչներ։ Յայտարարութիւնը չեն ստորագրած Ազգային միաբանութիւն եւ ժողովուրդի կուսակցութիւնները։

*
**

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԵԻ ԵՐԿՈՒ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ ԳԻՒՄՐիի ՄԷՋ

Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքներուն՝ Թորգոմ Արք· Մանուկեանի եւ Մեսրոպ Արք· Մուրատեանի ընկերակցութեամբ այցելած է Գիւմրի։ Երեւակի մարզպետ Ֆ· Փիրումեանի ուղեկցութեամբ անոնք այցելած են քաղաքին նոր կառուցուած Աչի Թաղամասի Ս· Ցակոր եկեղեցիի շինութիւնը, ապա կաթողիկէ եկեղեցիին հիմնած Աչոցքի Տիրամայր հիւանդանոցը։ Երեկոյեան Գարեգին Բ. եւ երկու պատրիարքները վերադարձած են Իւրեւան, չարունակելու իրենց խորհրդակցութիւնները 1700–ամեակի նշումներուն եւ Հայ Եկեղեցիին ընթացիկ կեանքին հարցերուն վերաբերեալ։

*
**

Ռ· ՔՈՉԱՐԵԱՆԻ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՍՈՉիի ՄէՋ

Նախագահ Ռ· Քոչարեան Օգոստ· 1–ին մեկնած է Սոչի, մասնակցելու ՀԱՊ–ի երկիրներու ղեկավարներու ոչ պաշտօնական վեհաժողովին։ Կը նախատեսուի որ Ռ· Քոչարեան հոն հանդիպումներ ունենայ Ռուսաստանի, Ուկրանիոյ, Ադրբեջանի նախագահներուն հետ։

*
**

ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻՆ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Հոկտեմբեր 27–ի խորհրդարանական յանձնաժողովի Յուլիս 31–ի նիստին մասնակցած են փորձագէտներ ալ որոնք ամբաստանեալ Նորայր Եղիազարեանի մահուան պատճառները քննած են։ Ան մահացած էր բանտին մէջ։ Փորձագէտները եզրակացուցած են որ մահը արտի կաթուածի հետեւանք է, թէեւ կայ եւ լեկտրահարուածի պարագան ալ։ Չի բացառուիր որ երկուքը միասին մահուան պատճառ եղած ըլլան։

*
**

ԻՐԱՆԱԿԱՆ ՕԴԱՆԱՒԸ ԱԴՐԲԵՋԱՆի ԵՐԿՆքին Մէջ

Իրանի օդուժի հետախուզական օդանաւ մը Յուլիս 29–ին մտած է Ադրբեջանի օդային տարածքը եւ մօտ չորս ժամ թռած կատպից ծովուն ադրբեջանական չրջանին վրայ։ Անկէ ետք դիմած է դէպի Բաքու։ Մայրաքաղաքէն 160 քիլոմեթր հեռաւորութեան վրայ օդանաւը ետ դարձած է։ Կը կարծուի որ օդանաւէն նկարներ առնուած են։ Բաքուի պաշտօնական աղբիւրները խուսափած են մեկնաբանութիւն տալէ։

ԹԷՆԻՍ

Ա.ՂԱՍԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ ԼՈՍ–ԱՆՃԼԼԸՍԻ ՄէՋ

Կիրակի, Յուլիս 29–ին, Լոս–Անճըլըսի մէջ, Անտրէ Ագասի 6 – 4, 6 – 2 յաղթելով իր դլխաւոր մրցակիցներէն Փիթ Սամփրասի, չահած է «Մերսեդէս Պէնց» մրցաշարքի բաժակը։ Հայածին երկու այլ մարզիկներ ալ հասած են մինչեւ կէս աւարտականներ թէնիսի Լեհաստանի բաց մրցաշարքին։ Անոնցմէ հայաստանցի Սարգիս Սարգսեան (որ թէեւ ԱՄՆ կ'ապրի ու հոն կը մարզուի) Շաբաթ օր պարտուելով սպանացի Ա· Փորթասէ դուրս մնացած է մրցաշարքէն։ Նոյն օրը, նոյն հանդրուանին, նոյն ճակատագրին ենթարկուած է արժանթինահայ Դաւիթ Նալպանտեան պարտութիւն կրելով նոյնպէս Սպանացիէ մը՝ Ռոպրետոյէն, որ յաջորդ օրը չահած է մրցաշարքի բաժակը։ Այս արդիւնքներէն ետք, համաշխարհային դասաւորման մէջ Սարգսեան 80–րդէն բարձրացաւ 75–րդ դիրքի, իսկ Նալպանտեան 105–րդէն 82րդի։ Եւրոպայի մէջ ալ 18 տարեկանէն վար պատանիներու մրցաշարքին առաջին հանդիսացած է զուիցերացի Մարի – Գայեանէ Միքայէլեան որ կը մրցի Հայաստանի դրօշին տակ, դարձած է Եւրոպայի ախոյեան։ Իր յաջողականին չնորհիւ պարզուած է Հայաստանի դրօշը եւ հնչած Հայաստանի ազգային փառերդը։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԻՍՐԱՅԷԼԻ ԾԱՆՐ ՀԱՐՈՒԱԾԸ

10 ՄԵՌԵԱԼ, ՈՐՈՆՑ ՄէՋ ԵՐԿՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Նապլուսի մէջ է, որ Յուլիս 31–ին, Իսրայէլ չատ ծանր եւ բիրտ յարձակում մը դործեց, ըստ իրեն «ընտրովի թիրախ»ի վրայ, այլ խօսքով՝ պաղեստինցի դործօն տարրերու։

Հրթիռային ռմբակոծութեամբ մը Համասի գրասենեակներու վրայ, Իսրայէլացիք սպաննած են ութ Պաղեստինցիներ եւ երկու մանուկներ 6 եւ 11 տարեկան, որոնք գրասենեակներուն առջեւէն կ'անցնէին։ Իսրայէլ ցաւ յայտնեց այս երկու մանուկներուն համար, մինչ Համասի պարագլուխը՝ չէյխ Ահմեթ Եասին խոստացած է որ վրէժ պիտի լուծուի եւ Իսրայէլացիք պէտք է գիտնան որ սուղ պիտի վճարեն։ «Զազրելի ոճիրը զոր գործեց Իսրայէլ, կ'արդարացնէ որեւէ յարձակում սիոնական թիրախներու դէմ Պաղեստինի ամբողջ տարածքին վրայ»։

Իսրայէլեան արարքը դատապարտեցին նաեւ Ուաշինկթըն որ զայն «չատ զգռիչ» որակեց, Փարիզ որ «ողբերգական բերութեան մը սաստկացումը» դատապարտեց խստօրէն։

Իսրայէլի «ընտրովի» սպաննած Համասի անդամներուն մէջ է իսլամական չարժումին չրջանի «դլուխը» Ճամալ Մանսուր, 41 տարեկան։ Զորս ուրիշներ ալ իր անմիջական չրջանակին կը պատկանին։

Համասի փոխ – վրէժի սպառնալիքը լուրջ մտահոգութիւն կը պատճառէ։ Զինեալ այս թեւը վարժ է անճնասպանական արարքներու եւ կասկած չկայ որ քամիքազներ պատրաստ են ամէն արարքի։ Շարոն սառնձնելով սպանութիւններուն ամբողջական պատասխանատուութիւնը, կ'արդարացնէ զանոնք ըսելով. – «Բանակը հարուածեց Համասի պատասխանատուները որոնք բարձրաստիճան ժողով մը դումարած էին։ Անոնք, անչեալին, ահաբեկչական արարքներ դործած էին եւ պատրաստուէին նորեր դործելու»։

*
**

Արաբական երկիրներ – արաբական լիկայի 22 երկիրներէն 14–ը – Դամասկոսի մէջ, կոչ մը ըրին պօյքոթի ենթարկելու Իսրայէլը, այդ պօյքոթը տարիներու երկայնքին տկարացած էր։ Այս նոր որոշումը տրուած է Դամասկոս, բայց, նիստին չեն մասնակցած Եգիպտոս եւ Յորդանան, որոնք կապուած են Իսրայէլի հաշտութեան դաշինքներով։ Չէին ներկայացուած Քաթար, Օման, Մարոք եւ Մաւրիտանիա որոնք տնտեսական եւ դիւանագիտական յարաբերութիւններ ունին Իսրայէլի հետ։ Ներկայ չեն եղած նաեւ Ճիպութի եւ Կոմորները։

Պօյքոթի կեդրոնական դրասենեակը, ծնունդ՝ Արաբական Լիկայի որու կեդրոնը Գահիրէ է, ստեղծուած է 1951–ին կղզիացնելու համար Իսրայէլը տնտեսական դետնի վրայ։

ԿԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՌՈՒՍԱՍՏԱՆի հարաւը՝ Մինեըալնիէ Վոդիի մէջ, ռուսական ուժերու դունդ մը յաջողած է ազատել հանրակառքի մը 41 ճամբորդները, որոնք պատանդներն էին Չէչէններու։ Անոնք կը պահանջէին որ ազատ արձակուին հինգ չէչէն տարեկաններ, դատապարտուած 12–էն 15 տարուան արգելափակման։ Պատանդներէն ոմանք թեթեւօրէն վիրաւորուած են գործողութեան ընթացքին, առեւանդողներէն մէկն ալ մեռած է, ուրիշ մըն ալ վիրաւորուած։

ՖՐԱՆՍԱՅի ՄէՋ, գործազրկութիւնը նոր յաւելում մը կրած է Յունիսին, աւելով 8500 համեմատաբար Մայիսի։ Մայիսին յաւելումը 5500 եղած էր, այս նոր յաւելումը 2·077·100–ի կը բարձրացնէ գործազուրկերու ընդհանուր թիւը, այսինքն գործող բնակչութեան 8,8%–ը։ Աշխատանքի նախարարութիւնը կը բացատրէ այս յաւելումը «միջազգային տնտեսական մարզի եղաչրջումով, հետեւանք ամերիկեան աճի անկումին»։

ՍԹՐԱՋՊՈՒՐԿի Մարզկային իրաւանց եւրոպական Ատեանը իր հաւանութիւնը տուաւ Անգարայի իշխանութեանց, որոնք արգիլած էին իսլամապաշտ Ռեֆահը

(Շար·ը Դ· էջ)

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

«ՄՈՒՐԱՑԿԱՆ ՏՂՈՑՄՈՎ ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

«Միլլիյէթ»ի մէջ Սերվիլ Եըլմազ վերի խորագիրով կ'անդրադառնայ Վանի չըրջանը կատարած այցին։ Կ'երթան Վանի բերդը, Թանգարանը, Ախթամարի եկեղեցին։ Ամէն բան իր վիճակին լքուած, քանդումի ընթացքին մէջ է։ Թալանուած են Ուրարտական թագաւորութեան մնացորդները, հազարաւոր տարիներու քաղաքակրթութիւններու հետքերը կրող պարիսպները, անցքերը, ամանեղէնը, ուլունքները, պատերազմական իրեր, հազուստներ, ոսկի, արծաթ, ամէն բան։ Լատատեղեակները կ'ըսեն թէ վերջին տասը տարուան ընթացքին թալանը մեծամասնի չափերու հասած է։ «Արդարեւ, կը դրէ լրագրողուհին, տասը տարի առաջ ո՞վ կրնար երեւակայել որ Աճատունքի մէջ չորս տարեկան տղեկ մը անգամ պատմական վայրերու այցելուներուն շուրջը պիտի դառնար, դրամ մուրալով»։

Իրենց հոն եղած միջոցին ԱՄՆ–ու հայկական լոպիին թեկնածութեամբ հոն գտնուող երեք «Ամերիկացի»ներու կը հանդիպին. անոնք «երկիր եւ մշակոյթ» կազմակերպութենէն են, զացած են Պոլսոյ Առեւտրական սենեակին եւ Արտաքին դործերու նախարարութեան հետ չփում հաստատելու, քանի որ անոնք Ախթամարի եկեղեցիին նորոգութեան համար մէկ միլիոն տոլարի հիմնադրամի մը կազմութիւն կը տրամադրեն։ Լրագրողուհին հարց կու տայ թէ մինչ Անատոլուի մէջ քանդուած այնքան պատմական չէնք կայ, ինչու Ախթամարի զօրավիդ կը կանդնին։ Առեւտրական սենեակին նախագահը կը պատասխանէ թէ եթէ կարելի ըլլար այդ եկեղեցին նորոգել, օրակարգի չէր դար հայկական հարցը որ Եւրոպայի մէջ միշտ Թուրքիոյ դէմ կը հանուի։ 1980–էն առաջ տարեկան 170 հազար դրօսաչրջիկ Վան կ'այցելէր, ներկայիս այդ թիւը 10 հազարի իջած է։ Եթէ հոն դրօսաչրջութիւնը աչխուժանայ, արտադրութիւնն ալ կ'աւելնայ։ Նախագահը կ'աւելցնէ թէ Ախթամարի համար Հայաստանէն պատմաբանի մը, Պոլսոյ Համալսարանէն երեք դասախօսի մասնակցութեամբ կազմուած խմբակը ծրագիր մը պատրաստած է եւ յաչորձանները յանձնաժողովէն արտօնութիւն կը սպասեն։

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 2001

1700-ամեակի ու այդ առիթով սպասած թարգմանիճան հիւրերու (Յովհ. Պօղոս Բ., Նախագահ Պուտին եւ ուրիշներ), անկախութեան տասնամեակի նշումն մեծաչուք նշելիներու նախօրեակին հոսկեր քիչ մը մկկդի ձգած է մարզահամարի նիւթը: Սակայն, ատոր պատրաստութիւնները ալ առաջ կը տարուին, ըստ երեւոյթին բաւական լրջութեամբ: Եթէ նիւթը միայն ցանցառ երեւում կ'ունենայ մամուլին մէջ, թերեւս տօնակատարութեան մթնոլորտէն ցայտնող իրականութեան անդրադարձը խնայելու համար է:

Յառաջիկայ Հոկտեմբերին Հայաստան պիտի նմանի այն տանտիկնոջ որ ոչ սովորական հիւրեր ընդունելէ, մեծարելէ եւ ճամբու դնելէ ետք, կը զառնայ կարգի բերելու առնն ու տեղը: Մարզահամարը այդ կարգի բերելու, մեկնածն ու մնացածը նժարի մէջ դնելու արարքն է որ անկեղծօրէն կատարելու պարագային վերջ պիտի տայ ամէն տեսակի անորոշութեան, չահարկումի, ինքզինքը կամ խօսակիցը խաբելու գործունէութեան: Ինչ որ ալ ըլլայ անոր արդիւնքը, երկրին յետագայ հեռանկարներուն համար ըստ այդ հիմ պիտի ըլլայ ան, գերազասելի՝ ամէն տեսակի չահադիտութենէ: Երբ ներկայի լայն անորոշութենէն ծագող մօտաւոր ենթադրութիւնները, խուսափումներն վերածուին ատոյգ թիւերու, հաւնօրէն իշխանութիւնները այլեւս պէտք պիտի չունենան ենթադրութիւններ հերքելու եւ լրջօրէն մտածեն արտագաղթը կասեցնելու մասին: Այս պարագան անշրջանցելի կը թուի, որովհետեւ դրեթէ բնաւ հաւանական չէ որ Հայաստանէն մեկնումները եւ աշխարհի չորս ծագերուն մէջ յայտնուած հայկական նոր իմաստրումները այնքան տեղ գրաւելէ ետք գոնէ լրատուական հորիզոններու մէջ, մարզահամարը ատարտի երկրին մէջ 3 – 4 միլիոններոց բնակչութիւն ուեւտելով: Ատկէ մեկնած, հետաքրքրականն ալ տրուելիք թիւը չէ այնքան, որքան պատասխանատուներու հակազդեցութիւնը: Անշուշտ, կայ քուէատուփ, հարցաթերթիկի տուփ լեցնելու երկկուան ու այսօրուան «ատենադուներ» յարգելու տարբերակն ալ որ կրնայ ի գերեւ հանել լուրջ սպասումներ: Սակայն, ըստ երեւոյթին, այս անգամ այդ յարգանքը մատուցանելու չատ առիթ պիտի չըլլայ, քանի որ մարզահամարը օտարներուն հետաքրքրութեան արժանացած է: Ինչպէս կը գրէ Մարիէտա Մկրտչեան, («Հայաստանի Հանրապետութիւն, Յուլիս 20), 2001-ի 955 միլիոն դրամի պիւտճէին 200 միլիոնը պետական պիւտճէէն տրամադրուած է, մնացեալը միջազգային աղբիւրներէ: Իսկ ընդհանուր պիւտճէն որ չորս տարուան վրայ տարածուած է, մօտ 2 միլիոն դոլար է (1 միլիոն, 990 հազար):

Կարեւոր կը նկատուի բնակչութիւնը լաւատեղեակ ընել ձեռնարկին, որպէսզի 20 – 22 տարեկան տուեալներու փոխարէն կարելի ըլլայ ճշդրիտ, թարմ թիւեր ունենալ: Կատարուած հրապարակումներով կը չեշտուի որ հարցաթերթերուն վրայ տեղ գտնելիք անհատական տուեալները գաղտնի կը մնան, հրապարակման ենթակայ չեն:

Տրուած կարեւորութեան մէկ փաստն է աղէտի գօտիին մէջ անցեալ Սեպտեմբերին կատարուած փորձը որպէս նախապատրաստութիւն: Ներկայիս ատոր եզրափակիչ չրջանն է, մարզերուն մէջ հրահանգումներ կ'ըլլան եւ կազմակերպչական աշխատանք կը տարուի:

Մարզահամարին չահեկան մէկ կողմը, թէեւ ժամանակաւոր, գործի կարելիութիւն ստեղծելու պարագան է: Կ'ըսուի թէ մօտ 15 հազար հոգի պիտի ընդգրկուի. նախապատրաստութիւնը պիտի տրուի ուսուցիչներու, յարգուած մարդոց, դիւղական մտաւորականութեան. յատուկ խնամք պիտի տարուի չներգրաւելու տուրք եւ զանազան վճարումներ հաւաքող մարդիկ, որոնց առջեւ գուռները յաճախ փակ կը մնան, տեղացիներու դրամ չուենալուն պատճառով: Զառագան փուլերու աշխատողները ցուցակագրողներ, հրահանգիչներ, չրջաններու պատասխանատուներ, տեղակալներ, հաշուարարներ պիտի ըլլան, որոնց ամսական 30 – 40 հազար դրամ պիտի վճարուի: Պիտի ընտրուին Ազգային վիճակագրական ծառայութեան կողմէ:

Հարցաթերթիկները կը պարունակեն 47 հարցում: Անոնցմէ 32-ը ընդհանուր բնոյթի են (սեռ, տարիք, ուսումի մակարդակ, աշխատանք, եկամուտներ, եւայլն), 15-ը բնակարանային պայմաններու: Արդիւնքներուն համադրումը թոյլ պիտի տայ պիտուալու թէ ի՞նչպէս կ'ապրի Հայաստանի բնակչութիւնը, որքա՞ն է պաղթականներու թիւը, որքա՞ն մարդ արտագաղթած է, որ մէկ խումբը ինչ թիւ եւ համեմատութիւն կը ներկայացնէ, ձայն չարտասանել, նոյնիսկ այդ անունը Ապաիի կամ Ատանայի վերածել...»: Ո՛չ, յարգելի Պր. Ռոպէր, հարցն այն է, որ մենք խառնութեան ենք եւ մենք Հայու նման չէ ոք կը խորհինք, այլ կը խորհինք «էնտոֆ»ի նման: Մեր նախապատրաստութիւնները տարբեր են այլեւս: Համայնքին վարչամեքենան ալ մեր խառնութեանները նման կը քանեցնենք: Խառնութեան մերձեցումներով կը պաշտպանենք համայնքին խնդիրներն ու իրաւունքները, որպէսզի ամէն փափաքող ինքզինքին համար պաշտպանութեան թաքստոց մը ունենայ: Աւելցնեմ որ բացառութիւնները չարելի են:

Գալով քան տարեկանէ վոքը Ցակոր չունենալու պարագային, այո՛, ճիշդ է, չունինք պատանի Ցակորներ: Ինչպէս որ չունինք ութսուն, հինսուն տարեկան Ժանկիթ, Ժիլտա, Ժէրմէն, Ժագլին եւ Ժիւլիէթ, չունինք նաեւ քառասուն տարեկան մեծ Նաթալի, Նատին, Ժանին, Թանիա, Թամար, Դալար, Թալին, Արի, Այդ եւ Արեգ: Առաջին Սայաթը հազիւ երեսուն տարեկան է եւ իրեն հետ միասին բոլոր Սարվէն, Սեւան, Լեռնա, Սարօ, Սէրլի եւ Արտաները:

Եղան չրջաններ, երբ մեր «մօտա»յիկ անուններուը ընդօրինակեցինք Ֆրանսական վէպերէ: Իսկ այսօրուան մեր նորաձեւութիւններն են թրքաչունչ անուններուը, ինչպէս Պուրակ, Սէրտար, Արտա, Էրօլ, եւայլն: Այս անուններուը իրենց հակազդեցութիւնը բերին հայաչունչ այն անուններուն, որոնք մեր մշակոյթին մէջ չեն գործածուած ցարդ իբրեւ անձնանուն, այլ գործածուած են որպէս զանազան վայրերու կամ իրերու անուններ: Օրինակի համար Նարօտ, Զուլալ, Մասուն, Մասիս, Շիրակ, Տարօն, Տաթեւ, Արմաշ (ափսո՛ս Քէլպէճէրը տեղ չգտաւ այս ցանկին մէջ), Նայիատ, Սայաթ, Մարալ, Առէն, Այգուն եւ ուրիշներ: Վերջապէս սերունդ առ սերունդ անուններու այս փոփոխութիւնը կրնայ ընկերաբանական ուսումնասիրութեան մը նիւթ հանդիսանալ: Սակայն այս փոփոխութիւններու մէջ ի՞նչ է բաժինը «Ցակոր»ի նկատմամբ ցուցաբերուած վերապահութեան: Կ'երեւի չատ աւելի մեծ չէ, քանի որ բովանդակ Հայ Սփիւռքի մէջ նոր-մանօրինակ Աստուածաշնչային անունները անհետացան, իրենց տեղը զիջելով վերոյիշեալներուն եւ ուրիշ հորիզոններ ալ բանալով Քէվիններու, Քրիսներու, Ռոյերու:

«Մարմարա»

Ա՛Լ ԱՆՈՒՆԸ ՑԱԿՈԲ ՉԷ

Գրեց՝ ԲԱԳԱՐԱՏ ԷՍԹՈՒՔԵԱՆ

– Անցեալները յաճախորդ մը եկաւ մեր խանութը եւ ապրանք մը հարցուց: Ունէինք իր ուզածը, գինը տուինք, համաձայնեցաւ եւ դրամը վճարելէ ետք պատմեց որ նոյն ապրանքը փորձեր էր առնել մեր հարեւան խանութէն, սակայն վերջին պահուն, անդրադառնալով թէ Հայու մը մը խանութ էր ատիկա, հրաժարեր էր եւ եկեր էր մազմէ առնելու, առանց պիտնալու որ մենք ալ Հայ ենք:

Քանի՛ քանի անգամներ լսած եմ այս ծիծաղելի պատմութիւնը: Ամէն անգամ, երբ պատմողը խնդացած է այդ խաբուած յաճախորդին վրայ, ես ալ իմ կարգին ցաւած եմ որ պատմողը կ'ուրանար իր ազգը եւ այսքան զուարթօրէն կը պատմէր պատահարին մասին: Ճիշդ է որ այդ գնորդը խաբուած է Հայու մը խանութէն ելլելով ու երկրորդ Հայու մը հանդիպելով: Սակայն աւելի քան ամօթալի է ուրախանալ որ կրցած ես թաքցնել քու ազգային պատկանելիութիւնդ: Սարկուածեան ի՛նչպիսի իւրացուած հոգեբանութիւն է որ չես համարձակիր ըսելու. «Սխալեր ես պարոն, ա՛յս ալ Հայու խանութ է, մենք ալ Հայ ենք, խնդրեմ դուք ուրիշ տեղ մը դիմեցէք»: Ա՛հա՛ այս էր որ ուրախալի պիտի ըլլար, ուրախալի եւ յաղթական: Այն ատեն այդ գնորդը ո՛վ պիտի ի՞նչ թշուառ վիճակի պիտի մատնուէր: Ներողութիւն պիտի խնդրէր, ըսխալ հասկցուեցայ, եւ այլն, պիտի ըսէր, ամէն ազգի մէջ չարեր ու բարիներ կան պիտի ըսէր, պիտի ձարտարէր, նոյնիսկ պիտի խօսէր իրեն ծանօթ ու բարեկամ Հայերու մասին, եւ պոչը ոտքերուն տեղ-մած, դուրս պիտի փախչէր ամօթով: Թրքահայերուս համար սովորական պատկերներ կրնան ըլլալ վերոյիշեալ երկու դէպքերն ալ: Բայց աւելի քան ցաւալի է այն որ մենք յաճախ կը հանդիպինք ասոյինին եւ ո՛չ թէ երկրորդին: Պատճառը պարզ է. մենք խանութպան (էնտոֆ) ժողովուրդ ենք եւ մեզի համար կարեւոր է առեւտուրէն չահ ապահովել: Մենք իբրեւ գործի մարդ մեր չահուն համար դիւրութեամբ կրնանք զոհել մեր ինքնութիւնը:

Եթէ Յուլիս 16-ի «Մարմարա»ի մէջ կարդացած չըլլայի Ռ. Հատտէճեանի յօդուածը «Անունը Ցակոբ է», պիտի չգրէի այս մասին: Համակարծիք չեի յարգելի Խմբագրապետին հետ, երբ ան կ'ըսէր. «Հարցն այն է որ քանի՛ ու քանի Ցակոբներ այս երկրին հաւատարիմ հայրենակիցները ըլլալով հանդերձ, ստիպուեցան իրենց անուան միայն սկզբնատառը գործածել կամ այդ անունը բնաւ թարգմանութեան կենդրոնին մէջ, Յուլիս 3-ին բացումը կատարուած է Պարաճանովի թանգարանի ցուցահանդէսին: Ներկայ եղած են թեմին առաջնորդ՝ Սահակ Արք.ի կողքին, կազմակերպութեանց եւ մամուլի ներկայացուցիչներ: Պաշտօնական բացումը կատարած է մշակութային կազմակերպութեան նախագահ եւ փոխ – քաղաքապետ՝ Էլի Էվանկիլիտու: Ասոք առած են նաեւ Հայաստանի դեսպան Արմէն Պետրոսեան, ԻՒՆԷՍԿՕ-ի Աթէնքի մասնաճիւղի նախագահ՝ Տիկին Օլգա Պոպոլա, Հայաստանի Պարաճանով թանգարանի տնօրէն Զաւէն Սարգսեան: Ցուցահանդէսը կազմակերպած էին Հայաստանի դեսպանատունը, Աթէնքի քաղաքապետարանի մշակութային կազմակերպութիւնը համագործակցաբար ԻՒՆԷՍԿՕ-ին ակումբներու յունական բաժանմունքին: Ցուցադրուած են արուեստագործին չուրջ 70 գործերը (գծագրութիւն, գոլաժ, տիկնիկ եւ այլ նմոյշներ):

ՆԵՖԵՐԹԻԹԻ ԳԵՂՑԻԿ ԹԱԳՈՒՀԻՆ ԵԻ ՓԱՐԱՒՈՆԸ

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՆԵՖԵՐԹԻԹԻՆ

Մեզի անծանօթ են անոր ծնունդի եւ մահուան թուականները: Սակայն վստահ ենք մէկ բանի. Նեֆերթիթի կինն էր Ախնաթոն փարաւոնին, որ իշխած էր Ք. Ա. 14-րդ դարուն, մօտաւորապէս 3500 տարի առաջ: Կարգ մը պատմաբաններ կ'ենթադրեն, թէ ան եկած էր ապ նուական ընտանիքէ մը: Իսկ ուրիշներ կը հաստատեն, թէ ան աղքատ ազնիկ մը էր, եւ փարաւոնը անոր գեղեցկութենէն հմայուած՝ ամուսնացած է անոր հետ, բան մը, որ այդ ժամանակաշրջանին ընդունուած չէր:

ԹԷ՛ ԹԱԳՈՒՀԻ,
ԹԷ՛ ՁԱՍՏՈՒԱԾՈՒՀԻ

Եգիպտացիները կը հաւատային նաեւ, թէ Նեֆերթիթի թագուհին չաստուածուհի մըն է: Ան իր սէրը կու տար փարաւոնին, որպէսզի ան արեւուն նման ճառագայթէր: Այդ ժամանակաշրջանի գիր բապէտներ անոր մասին կ'արտայայտուէին՝ ըսելով. «Երջանկութեան իշխանուհի, մեծ սիրոյ եւ չնորհքի թագուհի»... Հին ժամանակաշրջանի Եգիպտացիներուն համար կիները այլ մարդոց հաւասար էին: Նեֆերթիթի ունէր իր ամուսնոյն հաւասար ուժ եւ իրաւասութիւններ եւ կը տնօրինէր կրօնական մեծ հանդիսութիւնները:

ՓԱՐԱՒՈՆԻՆ
ԹԱՌԱՆԳՈՐԴԸ

Ախնաթոն եւ Նեֆերթիթի ունեցած են վեց աղջիկ, սակայն՝ ոչ մէկ մանչ զաւակ: Անոնք չատ հպարտ էին իրենց ընտանիքով: Նոյնիսկ կարգ մը պատկերներ կը ներկայացնեն Նեֆերթիթին իր զաւակներուն կաթ տալու պահուն: Բայց ատոնք մեծ դժբախտութիւն մը կ'ապրին, իրենց երկրորդ աղջկան՝ Մեքէթ – Աթոնի մահը:

ՀԷՐԵԱԹԱՑԻՆ
ՊԱՏՄՈՒԻԹԻՆ ՄԸ

Կարծէք հազար ու մէկ գիշերներու հէքեաթներուն մէջ կը գտնուինք: Ախնաթոն եւ Նեֆերթիթի նստած են ոսկիէ մեծ գահերու վրայ եւ իրարու ձեռք բռնած են: Անոնց ոտքերուն մօտ իրենց աղջնակները կը խաղան ընտելացուած եղնիկներու հետ: Այդ օրը թագաւորական գոյքը կ'ընդունի դրացի երկիրներէն դեսպաններ: Բազմաթիւ անծանօթ դէմքեր կան: Այս բոլոր օտարները իրենց հետ կը բերեն հարուստ նուէրներ՝ ջայլամի փետուրներ, զարդարուած զրահներ, արծաթէ եւ ոսկիէ անօթներ, տարուկներ եւ նոյնիսկ՝ առիւծներ:

ԳԻՏԷ՞Ք, ԹԷ...

Եգիպտացիները իրենց աչքերուն չուրջ սեւ կը ներկէին ո՛չ թէ չպարուելու, այլ իրենց աչքերը պաշտպանելու համար: Ցատուկ սերով եւ սեւ փոշիով պատրաստուած օծանելիքը կը քսուէր աչքերուն չուրջ զանոնք աւազէն, փոշիէն եւ վարակիչ հիւանդութիւններէ պաշտպանելու համար:

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

Հաւանօրէն ատոյգ պիտի գիտնան հայատանի բնակչութեան ճիշդ թիւը ու տարի վրայ հաչուեն տրամադրելիք օժանդակութիւնը, կամ վարկերը, եւ այլն:

Կ'ըսուի թէ Վիճակագրական ծառայութիւնը մարզահամարին վերջնական եւ ճշգրիտ ամփոփումը պատրաստ կ'ունենայ միայն տարի մը ետք: Այլ խօսքով նախապատրաստական չրջանէն մինչեւ վերջնական արդիւնքի փուլը, դրեթէ երկու տարուան ժամանակի վրայ տարածուած պիտի ըլլայ մարզահամարը:

ԱՐՓԻ ԹՈՒԹՈՒԵԱՆ

ՋԷՆՔԵՐՆ ԱԼ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԸ ԿՈՉՈՒԻ՞Ն

Ուկրանական զինական ճարտարարուեստը միաք կը բերէ հրասայլերը, օդային պաշտպանութեան քանի մը համակարգ, նաեր, օդանաւեր: Զարգացած թէքնոլոժիի այս արտադրութիւնները, անշուշտ, չեն նուազեցներ աւելի պարզ զէնքերու – տորճանակներ, հրացաններ, գնդացիրներ – կարեւորութիւնը: Այս վերջիններուն մեծ ծաւալով ունին եւ պէտք է մոռնալ որ վերջին չորուն տարուան ընթացքին ամէն տեսակի պատերազմներու պատճառած զոհերուն 80%-ը այդ տեսակի զէնքերու գործածութեան հետեւանք են: Եւ նաեւ այս կարգի զէնքերու ճարտարարուեստին զարկ տալ որոշած է Ուկրանիան: Ճշդուած նպատակը գերազանցել է Ռուսաստանը, թէ՛ հրասայլերու, թէ՛ գնդացիրներու մարզին մէջ:

Հակասութիւնը որ կայ, այն է որ մինչ ուկրանական զինական արտադրութեան դասեհականները ամբողջովին նոր եւ հանալի արդիւնք տուող զէնքերու ներքայացումը կ'ընեն, ուկրանական բանակը կը պահէ 60-ական թուականներու ատենական կալաշնիկովներու, այլ հրացաններու գործածութեան աւանդութիւնը: Պատճառը այն է որ մինչեւ այսօր նոր զինատեսակները արտադրողները չեն յաղող իրենց գործունէութիւնը բանակին եւ ոստիկանութեան գնորդներուն հետ համաձայնեցնել: Այս վերջիններուն համոզումը ունին որ ուկրանական բանակը այդ ատիճան արդիական զէնքերու պէտք չունի: Զինուորականներն ալ կը հետեւին թէ տեղական հակամարտութիւններու իրենց փորձառութենէն որած են որ փոքր բաներ շատ աւելի կարեւոր են զինեալ խումբի մը համար, ինչպէս՝ զէնքին գործածութեան, տեղափոխումի դիւրութիւնը:

Այդ պատճառներով, զինամթերքի ուկրանական ճարտարարուեստին համար նպատակ կը դառնայ գրաւել միջազգային շուկաները: Սակայն, ամէնէն ծախուածները սովետական պահեստներէն ձեռք ձգուած զէնքերն են: Ուկրանականները չեն յաջողիր մրցիլ ՕԹԱՆ-ի կամ Ռուսաստանի փորձուած զէնքերուն հետ, նոյնիսկ աւելի աժան գիներով եւ աւելի բարձր որակով:

Հետաքրքրական է որ օտար գնորդները երբ շահագրգռուին ուկրանական զինա –

ՋՄԻՒՌՆԻՈՑ ՆՇԱՆԱԻՈՐ ՀԱՑ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

Ջմիւռնիոյ եւ անոր շրջակայ աւաններուն մէջ մեծ, երեւելի ու հեղինակաւոր գերդաստաններ կազմաւորուած են, որոնք տարբեր գաղթօճախներու մէջ տարածուած, համահայկական եւ պետական չափանիշով գերակատարութիւն ունեցած են. նշենք գլխաւորները.

Նուպարեաններուը ծագումով սիւնեցիներ են. անոնց նախահայրերէն Թորոս Զավընտուր գաւառին տէրը եղած է, կռուած Թշնամիներուն դէմ եւ մահացած 1724-ին. անոր ազգականը՝ Նուպար, կռիւներու մէջ յաղթական, Ջմիւռնիա հաստատուեցաւ եւ բազմանդամ գերդաստան կազմեց. անոր սերունդէն ամէնէն աւելի նշանաւոր դարձաւ Մեսրոպ Նուպարեան (1842 – 1929)՝ թարգմանիչ, բառարանագիր եւ հրապարակագիր. Նուպար փաշա (1825 – 1899) Եգիպտոսի պետական գէմքերէն եւ վարչապետ դարձաւ, զաւակը՝ Պօղոս փաշա Նուպար ազգային ու քաղաքական երեւելի գործիչ եւ բարերգործական միութեան հիմնադիրը եղաւ:

Ապրոյեաններուը ծագումով Անիէն եւ Բագրատունեաց տոհմէն են. անոնց նահապետ Ալփիար Ապրօ 1521-էն կարինէն վտխադրուեցաւ եւ Պելկրատ հաստատուեցաւ, ուր բազմանդամ գերդաստան կազմեց. անոր սերունդէն Մատթէոս Ապրօ 1687-ին Ջմիւռնիա հաստատուեցաւ: Ապրոյեաններուը մեծ առեւտրականներ դարձան եւ գործառնութիւններ հաստատեցին Օսմանեան կայսրութենէն Պարսկաստան, Հնդկաստան եւ եւրոպական երկիրներ. անոնք օսմանեան սուլթանները խաթթը շերիֆ ստացան՝ ազատօրէն եւ առանց մաքսի առեւտուր ընելու իրաւունքով եւ չելէպիութեան տիտղոսին արժանացան, Ֆրանսայի Լուի ԺԴ. թագաւորէն պաշտպանութեան եւ արտօնագրութեան հրովարտակներ ստացան, իսկ Ռուսիոյ Մեծն Պետրոս ցարէն՝ բացառիկ առանձնաշնորհումներով հրովարտակ մը: Ապրոյեաններուն Եգիպտոսի ճիւղը հեղինակաւոր դարձաւ քաղաքական կեանքէն ներս, իսկ Տիգրան փաշա ն'Ապրօ (1846 – 1904) պետական բարձր պաշտօններ վարեց եւ Եգիպտոսի Արտաքին գործոց նախարար եղաւ:

Էսլիտպեաններուը 1785-ին Տիգրանակերտէն գաղթելով Ջմիւռնիոյ մօտակայ Քրքաղաճ աւանը հաստատուեցան եւ ազգային, հասարակական ու քաղաքական գործիչներ տուին:

Լաթիֆեաններուը, Ջմիւռնիոյ, Այտընի եւ Սէօքէի մէջ կեդրոնացած՝ ազնուականի կոչում ստացան, եւ երեւելի ամիրաներ տուին, իսկ Միհրան Լաթիֆ (1856 – 1929) Պրազիլի ազգային դէմքերէն եւ գործադման ռահվիրաներէն դարձաւ:

Նշենք նաեւ Եուսուֆեաններուը, որոնցմէ Պօղոս բէկ (1768 – 1844) Եգիպտոսի փոխարքայ դարձաւ:

«Ազդակ»

ԱՕԿԷ ԱՆԿԷ

ԱՆԿԵՂԾ ԴԻՒԱՆԱԳԻՏԸ

Իսրայէլի Դանիոյ նոր գեսպանը գաղտնի գործակալութեան նախկին ղեկավար մըն է: Մարդկային իրաւունքներու իսրայէլեան բազմաթիւ կազմակերպութիւններու համաձայն, ան պատասխանատուն է 1994 – 1996 800 Պարեստինցիի կիրարկուած չարչարանքին: Այդ նշանակումը դանիական քաղաքական շրջանակներուն մէջ աչքոյժ վէճերու պատճառ եղած է, յատկապէս Արտաքին գործերու նախարարին ստորագրած մէկ գրութենէն ետք. Դանիոյ Արտաքին գործերու նախարարը հոն գրած է թէ չարչարանքի բոլոր պարագաները պէտք է դատական հետապնդումի արժանանան: Դեսպանը՝ Գ. Կիյոն հարցազրոյցի մը ընթացքին յայտնած է թէ «Ֆիզիքական չափաւոր ճնշումը» շատ աղեցիկ է ու ատոր չնորհիւ կրցած են ահաբեկչական բազմաթիւ յարձակում-

---

տեսակով մը, հարց կու տան թէ երկրին բանակը պատ կը գործածէ՞: Եթէ ժխտական ըլլայ պատասխանը, ամէն չահագրգռութիւն կը դադրի: Երբ կը նկատուի որ երկիրը իր արտադրածը չի գործածեր իր բանակին համար, այդ զէնքը վաստահութիւն չի վայելեր:

Ուստի, Ուկրանիա կա՛մ պէտք է հանդուրժէ կոչէ իր գործածած կալաշնիկովները, գնդացիրները, հրացանները եւ արդիական զէնքերը նախընտրէ, կա՛մ հրաժարի զինական իր ճարտարարուեստին միջազգային չուկայի յաղողութիւն ակնկալելէ:

ՔԱՂՀԱՆ

ՀՈԳԱԾՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ

Մոսկուայի քաղաքապետը Ե. Լուժկով ըսած է թէ պէտք է չափաւոր խմել սորվեցնել մարդոց, որպէսզի անառնային վիճակներու չմատնուին: Այդ արտայայտութեան պատճառ են աւելի քան 280 մահերը որոնք հետեւանքը եղած են Յուլիսի սկիզբէն ի վեր տիրող տարապայման տաքերուն ու Մոսկուացիներուն ալքոլամոլութեան: Մահացողները անոնք են որոնք ծայրայեղ դինովութեան վիճակի մէջ նեռուած են Մոսկուայի աւազաններուն մէջ: Մրցանիշը կը պատկանի Յուլիս 21-ին երբ մէկ օրուան մէջ 18 հոգի խեղդուած է:

ՀԱՄԵՍՏ ՆԱԽԱԳԱՀԸ

«Կ. Մարքս եւ Լենին, Մարք Թուէյն, Ճորճ Պուշ կրտսեր. ամբողջական շարք մը» կոչած է ԱՄՆ-ու նախագահը Բլըրիտանական թանգարանին մատենադարանին հանրածանօթ այցելուներուն յանկը տեսնելով վերջերս երբ Լոնտոն գըտնուած է: Արտայայտութիւնը արձագանգ դտած է ամերիկեան մամուլին մէջ:

ԹԻՒ 17 ԹԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Է·

ՀԵ՞ՏՔ ՄԸ

Եւ մէկ քանի թէմէննահներ չոայլելէ նաքը դուրս ելաւ սենեակէն:

– Ի՞նչ էք մտածում այս այցելութեան մասին, – հարցուց Շահրիկեան, երբ բախտախնդիրը անհետացած եղաւ:

– կարծեմ այսօրուան խմբագրականէն աւելի յիշատակագիրն է գինքը շահագրգռողը, – պատասխանեց Զարդարեան:

– Իմ վրայ էլ ճիշդ այդ տպաւորութիւնը թողնեց, – լսաւ Ակնունի:

– Այդ մարդը քիչ մը տարօրինակ կեանք մը կը վարէ, – դիտել տուաւ Զարդարեան, – եւ կարծեմ կարող է դրամի համար ամէն բան ընել:

– Պէտք է զգուշութեամբ վերաբերուիլ իրեն հետ:

– Արդէն առաջին անգամն է, որ ոտքը այս խմբագրատունը դրաւ:

– Լաւ է, որ վերջինը լինի:

Շահրիկեանի այս խօսքին վրայ փակուեցաւ Ատիկի մասին սկսուած խօսակցութիւնը, եւ ամէնքը միասին դուրս եկան ճաշելու:

ԳԼՈՒԽ Ը·

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Այդ Ուրբաթ օրը, 1913, Մարտ 29, Ազգային ժողովը կրկին գումարուած էր Ղալաթիոյ Պորտրդարանը:

Իր օրակարգին մէջ կը տեսնուէր հետեւեալը·

«Տեղեկատուութիւն Ազգային Վարչութեան ի մասին թիւ 17 լրտեսի»:

Թերթերը օր առաջ ծանուցած էին օրակարգի խնդիրները եւ այս պատճառաւ, ժողովէն առաջ, ունկնդիրներու բազմութիւն մը լեցուած էր Ս. Լուսաւորիչ եկեղեցիին բակը: Ընդհանրապէս երիտասարդներ եւ պատանիներ էին, որոնք երեք – չորս հոգինոց խումբեր կազմած կը վիճաբանէին՝ սպասելով ժողովի բացումին: Այդ բազմութեան մէջ կ'երեւար Գրիգոր Անդուքի՝ ձեռքը օսփայի մօտեցող հասա գաւազան մը բռնած, առանց վխւսկիւլի ֆէս մը գլուխը, խահուէի գոյն թաւիշէ ժաքէթ մը հագած, վիզը լայն, սեւ փողկապով մը, իր կապոյտ աչքերուն մերթ ժպտուն, մերթ սպառնական սուր նայուածքը ուղղելով աջ ու ձախ:

Հրոսախմբի պետ մըն էր կարծես, որ չիլ յարձակումի մը պատրաստութիւնները կը տեսնար ծածկաբար:

Ատեն – ատեն հրահանգներ կ'ուղղէր այս կամ այն խումբին:

– Տղա՛ք, եթէ նիստը դռնփակ ընել ուզեն, բողոքեցէ՛ք, թող մի՛ տաք:

կամ՝

– Մինչեւ որ ես նշան չընեմ, դուրս չելլաք սրահէն... հերիք, որչափ տեղի տուինք:

Ցետոյ կը մօտենար ներս մտնող երեսփոխաններուն եւ անոնց ականջին սպառնալիքներ կամ պահանջմունքներ կը փսփսար·

– Ժողովուրդը կը պահանջէ, որ նիստը դռնբաց ըլլայ...

– Ժողովուրդը զրկուած է, գիտցած ըլլաք, եթէ դէպք մը պատահի՝ պատասխանատուն դուք էք:

– Դռնփակ ուզող երեսփոխաններուն օձիքէն պիտի բռնենք, դուրս նետենք:

– Որոշած ենք եկեղեցիին դուռը գոցել եւ ամէնքդ ալ հոս բանտարկել...

Երեսփոխանները մէյ մը Գրիգոր Անդուքի աչքերուն, մէյ մը ձեռքի գաւազանին եւ մէյ մըն ալ բակը հաւաքուած բազմութեան կը նայէին եւ՝

«Ժողովուրդը իրաւունք ունի... ի հարկէ..., օրինաւոր պահանջ...» եւ այլն մրմռալով՝ կը փութային դէպի ժողովասրահ:

Թերթերու լրաբերներն ալ, որոնք եկեղեցիին բակը հաւաքուած էին, ուժ կուտային Գրիգոր Անդուքի, կը քաջալերէին զայն իր պահանջումներուն մէջ եւ խորհուրդ կու տային ծայրայեղութեան դիմելու:

– Ա՛ս մարդոցը ծեծ պէտք է, ծեծ, – կ'ըսէր կիկո, – խօսքով չեն հասկնար:

– Նախ մենք խօսքով, անուշութեամբ կը խօսինք հետերնին, – կը պատասխանէր Անդուքի, – եւ եթէ չհասկնան՝ այն ատեն պէտք եղած դասը կու տանք:

– Բան մըն ալ չէք կրնար ընել, – մի-ջամտեց վահան Թօշիկեան, – նիստը ոչնչուած է, որ դռնփակ ըլլայ:

– Թո՛ղ փորձեն, – գոչեց Անդուքի բարկութեամբ, – պիտի տեսնաս, որ մեր տղաքը ժողովասրահէն դուրս պիտի չելլեն, նոյնիսկ եթէ ոստիկանութիւն բերելու վատութիւնը գործեն:

– Ժողովասրահէն դուրս ելլելու պէտք պիտի չմնայ արդէն, – դիտել տուաւ Վահան Թօշիկեան:

– Ինչո՞ւ համար:

– Որովհետեւ արդէն ներս մտնելու թոյլ պիտի չտան:

– Ինչպէ՞ս, ինչպէ՞ս, – գոչեց Անդուքի դաւազանը ճօճելով, – թոյլ պիտի չի տա՞ն...

– Այո՛, ունկնդիրներու սրահին դուռը կղպուած պիտի մնայ:

– Կը կոտրենք, ներս կը մտնանք:

– Ատիկա պարզապէս ճնշում բանեցնել կը նշանակէ:

– Քանի որ անոնք ժողովուրդին իրաւունքը ոտնակոխ կ'ընեն, մենք ալ անշուշտ ծայրայեղ միջոցներու կը դիմենք:

– Որոնք որեւէ օգուտ չեն կրնար ունենալ, – դիտել տուաւ Թօշիկեան:

– Ինչո՞ւ...

– Որովհետեւ եթէ դուռը խորտակելով բռնի ժողովասրահ մտնաք՝ այն ատեն ալ ժողովը կը փակէ:

– Թո՛ղ փակէ...

– Եւ դուք ի՞նչ կը շահիք:

– Մեր իրաւունքը պաշտպանած կ'ըլլանք:

Ուրիշներ, դուրսէն, մասնակցեցան վիճաբանութեան:

– Գրիգոր Անդուքի իրաւունք ունի, պէտք է դուռը խորտակել, եթէ բանալ չուզեն...

– Սպասելու չէ, որ բանան կամ չբանան, հիմա երթալու խորտակելու է:

– Ոտքի հարուած մը եթէ տամ՝ արդէն դուռը կը բացուի:

– Եկէ՛ք, տա՛ք, երթանք բանանք...

– կեցէ՛ք, տա՛ք, – գոչեց Գրիգոր Անդուքի հրամայական չեշտով մը՝ ձեռքը օդին մէջ երկարելով, – կեցէ՛ք, յաւուն դործ չեռնանք, որպէսզի մեր իրաւունքը չկորսնցնենք... կարգապահութեամբ չարժինք: Ես մէկ քանի երեսփոխաններու հետ տեսնուեցայ, ամէնքն ալ լաւ տուին, որ ժողովը դռնբաց պիտի ըլլայ:

– Անոնք քեզ խաբեր են:

– Քիթիդ խնդացեր են:

– Ձեռքդ ազատելու համար անանկ բաներ են:

(Շար· 32)

(Շար. Ա. էջէն)

(Բարօրութեան կուսակցութիւն), յանուն Պետութեան աշխարհական բնոյթին: Սթրազպուրկի դատաւորները կոտած են որ Ռեֆահի քարոզած սկզբունքները, ինչպէս Շարիայի հաստատում, եւ ճիհատ (Ս. պատերազմ) խոտոր կը համեմատին մարդկային իրաւանց եւրոպական պայմանագրութեան հետ: Ռեֆահը հիմնուած էր 1983-ին եւ գոյն կը վարէր Ն. Էրպաքան: Ատեանը իր վճիռին մէջ կը չեշտէ. – «Սիրով կ'ընդունինք կառավարութեան դրդապատճառը, ինչ կը վերաբերի թրքական ընկերութեան մէջ աշխարհականութեան կենսական կարեւորութիւնը, միակ Պետութիւնը, որ զվարտրաբար մահմետական բնակչութեամբ ազատական ժողովրդավարութեան մը անդամակցող է»: Այս վճիռը տրուած է 3-ի դէմ չորս ձայնով: Թեր քուէարկած են Ֆրանսացին, Նորվեկիացին, Ալպանացին եւ Թուրքը: Դէմ քուէարկած են Աւստրիացին, Կիպրացին եւ Բրիտանացին:

ՁԻՆԱՑԻՆԵՐԸ չրջաբերական մը հանած են, ուր կը հրաւիրեն իրենց քաղաքացիները, որ որքան կրնան կրճատեն կամ յետաձգեն իրենց այցելութիւնները Ֆրանսա, Շուլիսին եւ Օգոստոսին: Պատճառը կը տրուի ոճիրներու եւ յանցագործութեան ծաւալումը Ֆրանսայի մէջ, մանաւանդ Փարիզ, ուր թիրախ են դիւանագիտական ներկայացուցիչները: Ֆրանսայի Արտաքին նախարարութիւնը «զարմանալի եւ չափազանցուած» կը գտնէ Չինացիներու դիրքը:

ՓԱՍՏԱԲԱՆ ՄԸ ԵՒ ԲԺԻՇԿ ՄԸ՝ ժապ վերժէս եւ Պերնար Տըպրէ նամակով մը հանրապետութեան Փարիզի դատախաղին՝ Ժան – Փիէր Տէնթիյաքի կ'ուզեն որ նախնական քննութիւն մը բացուի կառավարական դաղտնի հիմնադրամին գործածութեան մասին: Նախարարները կը յայտարարե՞ն այդ դումարները Փինօչէին: Այս հարցը կրնայ նեղը գնել դատախաղը, որ այս մեղադրանքը կ'ընկէր Շիրաքի, որովհետեւ 1990-էն 1991, դատախաղը դրաւեհեակի պետն էր Արդարութեան նախարար՝ Հ. Նալչի եւ ինք ալ ստացած է նման դումարներ: Ինչպէս «Գանար Անշէնէ» ալ դիտել կու տար (Օգոստոս 1) ուշադիր պէտք է ըլլալ, երբ մարդ անցեալ ունի ու կը յիշատակէ արաբական առած մը՝ արեւին պէտք չէ դուրս ելլել, երբ կարագ ունիս դլխուդ վրայ:

Unité chrétienne

«CHRETIENS D'ARMENIE»

Sommaire

— L'organisation et la vie de l'Eglise apostolique arménienne
par **Sahag Sukiasyan**

— Le pèlerinage de Saint-Thadée
par **Kéram Kévonian**

— L'Eglise arménienne au 20e siècle: de la «catastrophe» à la renaissance
par **Sahag Sukiasyan**

— Vérité et sens d'une négation
par **Mihran Amtablian**

— La restitution des femmes et des enfants arméniens déportés: l'œuvre de la Société des Nations et de Karen Jeppe par **Dzovinar Kévonian**

— La christologie de l'Eglise apostolique arménienne
par **Gohar Haroutiounian-Thomas**

— Une Eglise orthodoxe une
par **Jean-François Colosime**

— L'Eglise évangélique arménienne
par **René Léonian**

— Charles Renoux, un témoin fidèle
par **Saténig Gostanian**

— L'art des manuscrits enluminés
par **Lilith Zakarian**

Unité Chrétienne
(Février - Mai 2001)
2, rue Jean-Carriès — 69005 LYON
(80 F)

Նամակագիրները կ'աւելցնեն թէ ամէն մարդ դիտէ այսօր, որ տարեկան 24 միլիոն Ֆրանք կը բաժնուի նախարարութիւններուն եւ թէ 52 միլիոն Ֆրանք կը յանձնուի նախարարներուն որպէս «գըրպանի դրամ» եւ ոչ մէկ տեղ կը յայտարարուի:

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ մերժած է Միջին – Արեւելքի մէջ միջորդութեան դեր ստանձնելու Անգարայի առաջարկը: Գահիրէ կատարած այցին այդ առաջարկը կը ըրած է Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարը Ի. Ճէմ, Արաբական Միութեան ընդհանուր քարտուղարին հետ հանդիպումին ընթացքին: Այս վերջինը ըսած է որ Թուրքիա Միջին – Արեւելքի հաշտութեան մէջ նախաձեռնարկի դեր չունի:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

***

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section d'Asnières
Au profit de la Colonie de Bellefontaine
Réservez votre soirée
du Samedi 20 octobre
GALA ARTISTIQUE ARMENIEN
avec l'**Ensemble folklorique arménien**
N A V A S A R T
Danseurs, musiciens,
chanteurs **traditionnels**
au Grand Théâtre d'Asnières.

***

La Section «TER-DAVTIAN»
de Chaville
de la Croix Bleue des Arméniens de France
organise
le Samedi 27 octobre
UNE SOIREE DANSANTE
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

De passage en France, au cours d'un grand tour d'Europe organisé dans le cadre des festivités du 1700ème anniversaire de la christianisation de l'Arménie nous accueilerons pour un **SPECTACLE UNIQUE**
L'ENSEMBLE FOLKLORIQUE
DATEV
(danseurs âgés de 10 à 14 ans)
en l'ESPACE GARBIS MANOUKIAN
40, rue d'Arménie, 69003 LYON
VENDREDI 17 AOUT à 20 heures 30
Venez nombreux les applaudir également...
—— P.A.F. 50 F ——
Renseignements:
☎ M.C.A.V. **04.78.26.28.71**
(les après-midi)
Maison de la Culture Arménienne de Villeurbanne
Croix Bleue des Arméniens de France
Section de Lyon-Villeurbanne

«ԲԱՌԱՋ»ի ընթացիկ ազդարու սակագինը

Մահուզդ	800	(956,80)
Հոզեհսկգիստ	700	(837,20)
Շեորհակալիք	700	(837,20)
Հարսնիք-Նշանուած	700	(837,20)
Ծնունդ	700	(837,20)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թ.Վ.Ա. (տե՛ս վակասդի մէջ ընդհ. գումարը):

Այս դիները կը վերաբերին մէկ անդամ հրատարակելի ազդերու, մինչեւ մէկ քսանորդ սիւնակ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8-րդ (12–13 տող) մնացեալին:

Ամեւարական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան:

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ԲԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 ՖՐ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 ՖՐ.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 ՖՐ.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 ՖՐ.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՍՓԻԽՈՒՔԻ ՄԷՋ 75 ՖՐ.

ԵՒ

«ԲԱՌԱՋ - 50»
(Տաղկախող 50-ամեայ հատորածոյէն) 120 ՖՐ.

Դիմել «ԲԱՌԱՋ»ի

Թղթատարի ծախք՝ 30 Ֆր., հատոր գլուխ:

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris
du jeudi 4 au lundi 8 octobre
à l'occasion de la Béatification de
Mgr. IGNACE MALOYAN
Archevêque de Mardine, martyr en 1915.
le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
Home Arménien

MERCREDI 15 AOUT
FETE CHAMPETRE
10h: Messe solennelle Chapelle Saint-Jean
Célebrée par Monseigneur DARON GEREJIAN
A partir de 12h30: Bar & Buffet
Animation : **MARTEN YORGANTZ • Danses traditionnelles**
107, Avenue Maréchal Lyautey
83700 Saint-Raphaël
Réservations et renseignements : au 04.94.19.51.50

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 3
VENDREDI
3 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթաթերթ առաքում) — Հասր : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·224 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.224

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԹԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱԴՐԲԵՋԱՆ, Օգոստոս 1–ին, հրաժարեցաւ կիւրեղեան այրուբենէն, որ կը նար խորհրդային վարչակարգէն 1939էն վեր եւ ընտրեց լատինական այրուբենը:

ՆՈՎԼՈՒՍԻ ՄԷՋ, հարիւր հազար պատսխանդուները «վրէժ» աղաղակելով թափին իրենց մեռելները, Օգոստոս 1–ին: Համասի վեց անդամներու հետ, թաղուած կատարուեցաւ նաեւ երկու մանուկ ներուն: Մինչ ամէն կողմէ, նոյնիսկ Ռուսիայէն, խորհրդային այս գրգռիչ յարձակումը դատապարտուեցաւ, հպայէլ կը յայտարարէ որ վճռած է չեռնակել իր «օրինաւոր» պայքարը «ահաբեկչութեան» դէմ: Ճետագային, «ընտրովի» յարձակումները միայն գործօն ապրերուն դէմ պիտի չըլլան, այլ նաեւ քաղաքական դէմքերու: Պաղեստինեան խնամութեան տեղեկատուութեան նախարարը ժխտելով իսրայէլեան պատճառանութիւնները, ըսաւ թէ Շարոն դիտակցաբար պատերազմի ճամբան ընտրած է:

ՅԱՆՁԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ զգալի կերպով յաւելում կրած է Ֆրանսայի մանաւանդ մեծ քաղաքներու մէջ: 2001–ի առաջին վեցամսեայ յաւելման համեմատութիւնը 9,58%–ի հասած էր: Պատճառներէն մէկը կը նկատուի դիպուած մը նարու (կառտ ա վիւ) ժամանակին կըրճատումը: Ներքին նախարարն ալ կը խոստովանի թէ յաւելումը մտահոգիչ է: Նոր օրէնքը անմեղութեան ենթադրութեան նպաստ դեր ունի այս կացութեան մէջ: Միայն Փարիզի մէջ 2208 հոլտ–ըիներ տեղի ունեցած են: Գաշանի պէս արուարձանի մը մէջ, այս առաջին վեցամսեային պինքի սպառնալիքով դոզութիւնները 35% յաւելում կրած են:

ՖՐԱՆՍԱՑԻ կառավարութիւնը իր վերջին նիստը գումարեց Ծուլիս 31–ին: Բազմաթիւ նախարարներ արձակուրդի մեկնեցան: Վարչապետ Ժոսփէն, որ տուն մը գնած է Ռէ կղզին, մեկնեաւ հոն: Նախագահը Պրէկանսոն գնաց կնոջը հետ: Նախարարաց Խորհուրդի յաջորդ նիստը գումարուի Օգոստոսի վերջ:

ՖՐԱՆՍԱՑԻ ԵՒ ԱՆՏՈՌԱՑԻ (Հարաւային Ֆրանսա) միջեւ սահմանային հարցը ծագած է, որ սկսած է մեծ համեմատութիւններու հասնիլ: Ֆրանսա որոշած էր իր հողամասէն չերտ մը տալ իշխանապետութեան, դիւրացնելու համար նամբաներու երկու ցանցերու միացումը: Տրուելիք չերտը կը գտնուի Փորթա, Ֆրանսական հողի վրայ, ուր 150 բնակիչ կայ: Անոնք կը պատրաստուին պատնէշներ բարձրացնելու Անտորայի դուռներուն: Վճռած են հարցը դատարան փոխադրել: Ցայց, բաւական բարդ է կացութիւնը, որովհետեւ Ֆրանսայի եւ Անտորայի միջեւ սահմանը, պաշտօնապէս երբեք չէ նշուած:

ՄԱԿԵԴՈՆԱՑԻ ԵՒ ԱԼԲԱՆԱՑԻ կուսակցութեանց թանակցութիւնները համաձայնութեան յանգեցան ալպաներէնի ուսուցման համար Մակեդոնիոյ մէջ: Համաձայնագիրը կը նախատեսէ որ ալպաներէնը պաշտօնական լեզու կը դառնայ հոն ուր բնակչութեան առնուազն 20%–ը ալպանացի է: Այս համաձայնութեան պաշտօնականացումը կախում ունի մարզկական համաձայնագրէ մը որ վերջ դնէ վեցամսեայ բախտումներու ալպանացի երկիրներու զեկավարները ոչ պաշտօնական վեհաժողովի մը համար, հանդիպումին առաջին օրը Օգոստ· 1–ին ընդունած է որոշ զեկավարներ, այդ շարքին նոյն օրը Սոչի հասած Հայաստանի նախագահը: Քննարկուած են Պուտինի յաջորդ ամիս Հայաստան կատարելիք այցին, ինչպէս նաեւ Ղարաբաղի խնդրին կարգաւորման եւ տնտեսական կապերու առընչուած հարցեր:

*
**

ՀԱՅԱՍՏԱՆԱՎԱՐՆԵՐՆ ԱԼ ԿԸ ՊԱՌԱԿՏԻՆ

Հայաստանի Համայնավար կուսակցութիւնն ալ հետեւելով միւսներուն պատկերին, պառակտումի յայտնի նշաններ սկսած է ցոյց տալ: Օգոստոս 1–ին վարուած է երեսփոխան Եուրի Մանուկեան: Ան կուսակցութեան կեդրոնական Կոմիտէն «պարկեշտ ու օրինաւոր» մարդոց տեղը չնկատելով ըսած է թէ պինքը վտարելէ առաջ մտիկ չեն ըրած եւ անցեալի ոճը կը կրկնուի: Ինք երկրին ներկայի ծանր կացութեան մէջ դէմ եղած է քաղաքական մարզին ապակայունացման, ինչ որ պատճառ դարձած է իշխանամէտ նկատուելուն: Կուսակցութենէն նշուած է թէ անոր վտարումը յստակօրէն հակահամամայնավար դիրք ունենալուն հետեւանք է:

*
**

ՆԿԱՐԻԶ ԺԱՆՆԷՄ ՊԱՏՈՒԱԿԱԼ ՏՈՔԹՈՐ

Ֆրանսահայ ծանօթ նկարիչ Ժանէմ (Ժովհաննէս Սէմէրճեան) Հայաստանի Գիտութիւններու ակադեմիային կողմէ պատուակալ տոքթորի տրակումին արժանացած է. անոր թեկնածուութիւնը դրած էր Ազգային պատկերասրահի տնօրէն Շահէն Խաչատրեան: Ժանէմ որ աւելի քան վեց հազար պատուոի հեղինակ է, անխափէն պատուէրներու արժանացած է Ֆրանսայի կողմէն ալ: Իր գործերէն չուրջ հարիւր հատ նուիրած է Հայաստանի Ազգային պատկերասրահին. անոնց մէկ մասը մշտական ցուցադրութեան դրուած է:

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 1 / 2)

Ռ· ՔՈՉԱՐԵԱՆ – Վ· ՊՈՒՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ռուսաստանի նախագահը որ Սոչի արձակուրդի է եւ ուր հրաւիրած է ՀԱՊ–ի

ՀԱՑԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ՔՈՉԱՐԵԱՆ – ԱԼԻԵԻ ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԻՆ ԱՐԴԻԻՆՔՈՎ

Սոչիի մէջ, ուր կը գտնուին ՀԱՊ–ի զեկավարներու անպաչտօն հանդիպումին մասնակցելու Ռ· Քոչարեան եւ Հ· Ալիեւ ղլուխ գլխի տեսակցութենէ մը ետք յայտնած են թէ Ղարաբաղի հարցին մէջ ոչ մէկ յառաջխաղացք արձանագրուած է: «Սխալ կը լիներ ասել թէ մենք եկել ենք ընդհանուր յայտարարի» ըսած է Հայաստանի նախագահը:

Նախքան հանդիպումը, «Թուրան» մամլոյ գործակալութեան համաձայն, Ալիեւ ըսած է, թէ պիտի բարձրացնէ Հայաստանի կողմէ գրաւուած ադրբեջանական տարածքներու հարցը, կրկին մեղադրելով հայկական կողմը, թէ այդ տարածքները կ'օգտագործէ թմրեցուցիչի մաքսանենգութեան համար: Այս մեղադրանքները բազմիցս մերժուած են Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանութիւններուն կողմէ՝ իրրեւ Բաքուի կողմէ օգտագործուող քարոզչական հնարք:

*
**

ՀԱՄԱՑՆԱՎԱՐՆԵՐՆ ԱԼ ԿԸ ՊԱՌԱԿՏԻՆ

Հայաստանի Համայնավար կուսակցութիւնն ալ հետեւելով միւսներուն պատկերին, պառակտումի յայտնի նշաններ սկսած է ցոյց տալ: Օգոստոս 1–ին վարուած է երեսփոխան Եուրի Մանուկեան: Ան կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն «պարկեշտ ու օրինաւոր» մարդոց տեղը չնկատելով ըսած է թէ պինքը վտարելէ առաջ մտիկ չեն ըրած եւ անցեալի ոճը կը կրկնուի: Ինք երկրին ներկայի ծանր կացութեան մէջ դէմ եղած է քաղաքական մարզին ապակայունացման, ինչ որ պատճառ դարձած է իշխանամէտ նկատուելուն: Կուսակցութենէն նշուած է թէ անոր վտարումը յստակօրէն հակահամամայնավար դիրք ունենալուն հետեւանք է:

*
**

ՆԿԱՐԻԶ ԺԱՆՆԷՄ ՊԱՏՈՒԱԿԱԼ ՏՈՔԹՈՐ

Ֆրանսահայ ծանօթ նկարիչ Ժանէմ (Ժովհաննէս Սէմէրճեան) Հայաստանի Գիտութիւններու ակադեմիային կողմէ պատուակալ տոքթորի տրակումին արժանացած է. անոր թեկնածուութիւնը դրած էր Ազգային պատկերասրահի տնօրէն Շահէն Խաչատրեան: Ժանէմ որ աւելի քան վեց հազար պատուոի հեղինակ է, անխափէն պատուէրներու արժանացած է Ֆրանսայի կողմէն ալ: Իր գործերէն չուրջ հարիւր հատ նուիրած է Հայաստանի Ազգային պատկերասրահին. անոնց մէկ մասը մշտական ցուցադրութեան դրուած է:

ՓՈԽԱՆ ՏԱՄՍԻ

ԵՐԲ ՊԱՐՈՆԱՑՔ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԸ ԿԸ ԺՊՏԻՆ...

Այս պարագային արտօնելի է տալ աւելի պատկերաւոր վերնագիրը մը· – Հայաստանի Երեսփոխանա – դատաւարական կրկէսը, եթէ երբեք նախընտրելի չի նըկատուիր ուրիշ խորագիր մը՝ Ազգային Մեծադոյն Ժողովի 1999 Հոկտեմբեր 27–ի նախճիրին հետեւող դէպքերուն:

Բայց ո՞ր կարգի մասին է խօսքը: Այդ արդէ՞ն երկու տարուան հնութիւն ունեցող պատահարը ճամբու պարզ արկածի մը բնոյթը ստացած է, չնորհիւ Հայաստանի անտարակելի դատական դրոյթին, եւ մանաւանդ «Հինգ Նոզկալիներ»ու հերոս Նայիրի Ճունանեանին, որ իր պարբերական նոր «ելոյթ»ներու եւ «բացայայտում»ներով այսօր փնտռուած մին մըն է Հայաստանեան տխուր առօրեային մէջ: Միմոս մը՝ որ կը վայելէ բացառիկ թոյլտուութիւնը, եթէ ոչ խըրախուսանքը – ուրիշներ կրնան ըսել՝ մեղսակցութիւնը – պինք դատելու կոչուած մարմիններուն, վարկն վեր մինչեւ զազաթ: Ճիշդ կամ սխալ, այդ է գերճնշող տպաւորութիւնը:

Ուրեմն ըստ բեմադրուած խեղկատակութեան վերջին տեսարաններուն, Ճունանեան լինք չէ ուզած կրակել, այլ դէն ու զրահով թափանցած է Ազգային Ժողովի միասին սպառնալու համար «հայութեան արիւնը ծծող» զեկավարներուն, սանկ թեթեւ դող մը պատճառելու համար որ անոնք քիչ մը զգաստանան իրենց անսանձ գործունէութեան մէջ: Սակայն, դժբախտաբար, արագահարուածին բըլթակը լինքնաբերաբար, մատին չղային ակամայ պրկումովը չարժման դրած է վամփուշտներուն տեղատարափը:

Ո՛չ: Ասիկա անցեալ չարաթուան տարերքին էր: Այսօրուանը այն է թէ լինք չէ կրակած: Ընդհանուր դաւ մը գործադրուած է· Ազգային Ժողով իր անմեղ ներկայութեան պահուն, քանի առաջին հարուածները մեկնած են ամպիոնէն դէպի իր կամ Ժողովասրահին ուղղութեամբ, եւ լինք լինքնապաշտպանութեան առողջ բնազդէ մը մղուած սպանած է վարչապետը, Ժողովի նախագահը եւ միւսները, անոնք՝ որոնցմէ թէեւ իրեն չեն ուղղուած կրակոցները: Միայն թէ վստահ ըլլալու համար թէ իր զոհերը վերջնականօրէն անչնչացած են, մի քանի փամփուշտ աւելի պարպած է անոնց դիակին վրայ: Ան ալ իր իրաւունքն է, քանի ինչպէս լինքնիր մասին կը վկայէ՝ «Ես պարզ մահկանացու մը չեմ», իսկ մնացեալ չորս գործակիցներու մասին ալ՝ «անոնք մառածող էակներ են»: Տէքարթը վկայ:

Նայիրի Ճունանեան իր մտքի ամբողջ պզտորութեան մէջ կը յիշէ նաեւ թէ երբ Խորհրդարանին մէջ ապտյին փրկարարի պաշտօնը աւարտած էր, սրահին մէջ «կարգ մը երեսփոխաններ կը ժպտէին», իսկ ուրիշներ ալ «կը խնդային»:

Հարցը հոս չի կայանար այս առաջնակարգ դերասանին, – որ իր հետ թուրքիայէն բերեր է նաեւ Ֆրանսական բուռումնաւէտութիւն – դեպ սորված բնադիրներուն ճշդութեան կամ անոնց իրաւութեան չափին մէջ: Ինդիրը այլ տեղ է:

Ազգային Ժողովի ամպիոնին արեան բաղնիքի վերածուած տեսարանին դիմաց Երեսփոխանները խնդացած ըլլան թէ՝ փափուկ մորթերնին փրկելու համար դեռնամած փուռած, Ճունանեան իրմբակը առանձի՞ն գործադրած ըլլայ Ոճիրը թէ նեբքին կամ արտաքին դաւադրութեան մը մէկ մարզուած բաղուկը եղած, ողբերգութիւնէն ոչինչ կը նուազի: Ընդհանուր դորչ պատկերը նաեւ կը մնայ նոյնը:

Հայաստանի զեկավարութեան գլխատումէն ի վեր տեղադահար ամբողջ հարուածիւնն է որ չզաճգօրէն կը քրքջայ ամէն օր, ի տես Երեւանեան դատական խեղկատակութեան:

ԴՐԻԳՈՐ ՔԼՕՍԼԵԱՆ
Պոսթըն

ՄԻԻՈՒՈՆԸ ԵՓԵԼՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԾ

Օգոստոս 2–ին Գարեգին Բ·ի նախագահութեամբ ու մասնակցութեամբ՝ Երուսաղէմի ու Պոլսոյ պատրիարքներուն՝ Թորգոմ Աբք· եւ Մեսրոպ Աբք·ի, թեմակալ առաջնորդներու, Էջմիածնի հին վեհարանին մէջ ազօթքներու երգեցողութեամբ սկսած է միւռոնը եփելու արարողութիւնը: Միւռոնօրհնէքը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 22–ին:

*
**

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Օգոստոս 1–ին Էջմիածնի մկրտարանին մէջ մկրտուած են աւելի քան երկու տասնեակ թափառական մանուկներ: Մկրտութեան արարողութիւնը կատարած է Ճովհան Աբք· Տէրտէրեան, մասնակցած են նորօծ եօթը քահանայ հայրերը: Արարողութենէն ետք երախաներուն բաժնուած են փոքր խաչեր ու աստուածաշունչեան պատմութիւններու գրքոյկներ:

ՈՐՊԷՍԶԻ ԶՄԵԿՆԻՆ

Հայաստան կը պատրաստուի Հոկտեմբերին տեղի ունենալիք մարզահամարին: Այդ մասին տրուած լուրերը կը խօսին նիւթական աղբիւրներէ, թէքնիք մանրամասնութիւններէ, սակայն, յայտնի է որ թէ՛ լուրը տուողներու, թէ՛ առացողներու մտքին մէջ այդ բոլորը անմիջապէս կը կապուին վախցնող հարցականի մը. Հայաստանի բնակչութեան համար ի՞նչ թիւի պիտի յանգի այդ համրանքը: Արտագաղթը, դժբախտաբար, անկախութեան առաջին տասնամեակին ամէնէն հաւատարիմ ուղեկիցը եղաւ երիտասարդ հանրապետութեան. ան եթէ սկսաւ զանգուածային խանդավառութեան, պոռթկումի, յոյսերու յաջորդած ցուրտ ու մութ ձմրան, տնտեսական բազմազան դժուարութիւններու աղդեցութեամբ, չարունակուեցաւ իշխանութեան հասած-ներու, նաեւ ճգտողներու անտարբերութեամբ, ընկերային ծայրագոյն դիրքերու մէջեւ ամէն օր լայնցող անդունդով: Այս վերջին աղդակները յամառօրէն կը ըծելով հատցուցին բազմութիւններու լաւատեսութիւնը, համբերութիւնը, տոկալու ուժն ու յոյսերը: Եւ նոյնիսկ եթէ ոչ այդ բոլորը վերադտնելու, գոնէ վերապրելու, ապրեցնելու ճիգը մարդիկը մղեց դիմելու աշխարհի որեւէ անկիւնը ուր իրենց ու իրենցիններուն համար պատառ մը հաց ճարելու կարելիութիւնը կար: Ասոնք երբ Հայաստանի նման ընդամէնը միայն 4 միլիոնին մօտեցող թիւով բնակիչ ունեցող երկրի մը մասին է, բնական է որ կ'արտագրանան բոլոր մտահոգութիւնները, մարզահամարէն թելադրուած վախերը: Տակաւին, կարելի է մտածել նաեւ որ խորհրդային օրերու տուեալ այդ 4 միլիոնի մօտեցող թիւն ալ կրնայ ճշգրիտ չըլլալ, նկատի առած՝ այդ շրջանի «իրականութիւն»ներուն վերջին ծայր պարագայական բնոյթը, նաեւ ընտրութիւն, մարզահամար, եւ այլն կատարելու «լրջութիւն»ը:

Ինչ կը վերաբերի յետխորհրդային տասնամեակին, հակնալի է որ մարզահամար կատարել պերճանք նկատուէր հազարամեակի անհրաժեշտութեան մէջ. Թէեւ, այսօր երբ կը տեղեկացնեն թէ հարկաւոր դումարին մեծ մասը օտար աղբիւրներէ տրամադրուած է, այդ մօտեցումն ալ կ'անզօրանայ: Ինչ որ բուն խնդիրն է, արտագաղթի երեւոյթին զըլացուած ուշադրութիւնն է պատճառ իշխանութիւններու կողմէ: Տասը տարուան ընթացքին ոչ մէկ պաշտօնական թիւ հաղորդուեցաւ այս մասին. երեւոյթը որպէս լուրջ մտահոգութիւն, ոչ իսկ տեղ դտաւ պատասխանատուներու արտայայտութիւններուն մէջ: Այդ վիճակով, անշուշտ աւելորդ լաւատեսութիւն էր ակընկալել որ գործնական քայլեր առնուէին, ընկերային կեանքի մեծ անհաւասարութիւնը գոնէ մեղմելու ջանքեր ըլլար, եւ այլն: Այլ խօսքով՝ այդ բաները չմնային ճառերու, ելոյթներու զարդ, կամ Սփիւռքի հայութեան նիւթական աջակցութիւնը կարթելու միջոց:

Ինչ որ արտագաղթի երեւոյթը միշտ ներկայ պահեց հայաստանեան ամէնէ կանութեաց մէջ, եղաւ տեղական մամուլը. մատնանշեց, ահազանգեց, դատապարտեց կամ բացատրեց, ամէն ձեւով ձգտելով կտրել վերիններու անտարբերութիւնը: ԱՄՆ-ու Երեւանի դեսպանատան առջեւ մուտքի արտօնագիր առնելու համար օրեան կանուխ ժամերէն գոյացած հերթերը, այդ արտօնութեան սիրոյն կրուած նուաստացումները քանի՛ – քանի անգամ տեղ գտան մամուլի էջերուն մէջ, վերածուելով հայաստանեան համայնապատկերին մնայուն մէկ պատառին: Բայց այդ էջերուն ամէն մէկուն ընթերցումը ամրացուց համոզումը թէ պատասխանատուները իւրացուցած են անատոլուցի աշուղին սկզբունքը որ կ'ըսէ. «մեռնողը կը մեռնի, ողջ մնացողը մերն է». ի վերջոյ, տատ մը միայն կը տարբերէ. ««մեռնող»ն ու «մեկնող»ը:

«Ազդ»ի Ցուլիս 27-ի թիւին մէջ Անոյշ Դովլաթեանի էջը անգամ մը եւս թարմացուց նիւթին առթած զարմանքը, ափսոսանքը, զայրոյթը: Ան կը մատնանշէ տուեալ մեկնումներու տարբեր ուղղութիւն մը որ Ռուսաստանն է: Այս ուղղութիւնը նոր չէ ԱՄՆ-ու նման. նաեւ աւելի դժուար հակակշռելի, եթէ հակակշռելու տրամադրութիւն ըլլայ: Պատճառը այն է որ Հայաստանէն Ռուսաստան մեկնելու համար յատուկ արտօնագիր անհրաժեշտ չէ, կը բաւէ օդանաւի կամ հանրակառքի տոմս մը ունենալ: Նաեւ, Ռուսաստանը խորհրդային չրջանին ալ բաւական հզօր մագնիս էր հայաստանցիներու համար:

Ներկայի մեկնումները, ինչպէս կը գրէ Ա. Դովլաթեան, մեծ մասով ցամաքի ճամբով կ'ըլլան. հանրակառքերը կը մեկնին «Հայաստանի բոլոր fաղաքներից, բոլոր ուղղութիւններով»: Միայն պէտք է տոմսերը կանուխէն գնել, որովհետեւ բոլոր վոխադրամիջոցները լեցուն կ'ըլլան ու կարելի չէ վերջին պահուն, վերջին օրը տեղ գտնել: Հայաստանի որեւէ քաղաքի մէջ ուշադրութիւն կը գրաւեն ցուցատախտակները որոնք կը կրեն Հայեր հիւրընկալելու պատրաստ ռուսական քաղաքներու անունները: Հոն, միայն Կրասնոդարի երկրամասին մէջ, օրինակ, 140 հազար Հայ կ'ապրի. կան հայկական եկեղեցիներ, դպրոց. նոյնիսկ հայաստանեան հիւպատոսարանի մը անհրաժեշտութիւնը կը զգացուի: Աչխատող ուժի, մանաւանդ որակեալ մասնագէտներու պահանջ կայ եւ ինչպէս գրեթէ բոլոր մեծ երկիրներուն մէջ, այդ բացը օտար աշխատողներով լրացնել շատ բնական է:

Ուղղութիւն մը ուր կարելի է դիմել 44 – 45 տոլարի տոմսով մը (հանրակառքի պարագային) բնական է որ հազարաւոր Հայեր գրաւէ: Ա. Դովլաթեան ըսելով հանդերձ թէ անցագրային արգելք չըլլալով, կարելի չէ մեկնողներու մասին ստոյգ տուեալ ունենալ (քանի՞ հոգի, ո՞րկէ, ե՞րբ). կը գրէ թէ մնայուն եւ ժամանակաւոր գացողներու թիւը մտահոգիչ ըլլալու աստիճան մեծ է: Նշուածին հիմ կը ծառայէ երեւանեան տոմսավաճառներուն ուղղուած հարցումներուն մէօրինակ պատասխանը թէ պահանջը մեծ է: Նկատի առած որ Ռուսաստանի հանրակառքերը ճամբայ կ'ելլեն չաբաթը երկու օր, լեռի լեցուն, Երեւանէն ու այլ վայրերէ, թիւ մը տալու մասին մտածելն իսկ սարսափ կը պատճառէ:

Ստուգելու համար Հայաստանէն Ռուսաստան մեկնումներու ամէն հակողութեան զերծ բնոյթը, յօդուածագիրը հեռաձայնած է Ռուսաստանի դեսպանատուն եւ Հայաստանի կառավարութեան կից գաղթի եւ գաղթականներու վարչութեան պետին: Երկու տեղէն ալ ըսած են որ թիւի մասին որեւէ տեղեկութիւն չունին: Ցիշեալ վարչութեան պետը Գ. Եգանեան աւելցուցած է թէ մեկնումներու թիւով կարելի չէ արտագաղթի մեկնաբանութիւն տալ, քանի որ կարեւոր մէկ մասը տընտեսական պատճառներով յաճախ կ'երթայ ժամանակաւոր աշխատանք գտնելու:

Ա. Դովլաթեան կ'ըսէ որ Հայաստանէն մեկնողներու 80%-ը կ'ուղղուի ՀԱՊ-ի երկիրները, իսկ այդ տոկոսին երեք չորրորդը կը նախընտրէ Ռուսաստանը: Անշուշտ, առոր մէջ մեծ է դերը լեզուի դիւրութեան, եօթը տասնամեակի միասնութեան, գործակցութեան, եւ այլն: Այդ ազդակները զարկ տուած են բազմաթիւ գրօսաշրջային գործակալութիւններու որ մասնագիտանան Հայերու խումբեր Վրաստանի ճամբով Ռուսաստան փոխադրելու մէջ:

Որքան ալ մտածուի որ գացողներուն որոշ մէկ տոկոսը աւժամեայ աչխատանքի նպատակով է, միջոց մը եւս կը վերապահենայ, եւ այլն, գիտնալ թէ ներգաղթող մը հինգ տարի հոն բնակելէ եւս կրնայ Ռուսաստանի քաղաքացի ըլլալ, աւելի հաւանական կը դարձնէ Մոսկուա-յի, Ս. Պետերբուրգի, Ռոստովի, Սամարայի, Կրասնոդարի եւ ուրիչ քաղաքներու հայ համայնքներուն մեծնալը:

Ա. Դովլաթեան չէշտած է հակողութեան ազդակը որպէս արտագաղթի կասեցման միջոց. առիկա իր դերը ունենալով հանդերձ, բուն սպասուելիքը հայաստանեան պայմաններուն բարելաւումն է որպէսզի մարդիկը մեկնումը առաջին դարմանն չդիտեն: Բարելաւում որ պիտի սկսի երեւոյթին լուրջ նկատառումով, ասոր ներկայի ու վաղուան հետեւանքներուն մտահոգութեամբ. մնայածը կը հետեւի աւելի դիւրութեամբ:

ԱՐՓԻ ԹՈՓՈՑԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԻՑ ՍԿՍԻՈՒՄ Է ՄՈՒՏՔԸ ԴԷՊԻ... «ԲԱԶԱՐԱՑԻՆ ԵՐԿԻՐ»

ՊՏՈՑՏ ՄԸ

«ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՒԱԿԱՅԱՆԻ ՄԷՋ

Քանի որ չատ է չահարկուել 1700-ամեակի կապակցութեամբ 150 հազար տուրիստների թիւը, մոռնանք այդ թիւը՝ մէկընդմիշտ ընդունելով, որ եթէ այս տարի վաթսուն – եօթանասուն հազար մարդ մուտք գործի Հայաստան, դա կը լինի լաւագոյն ցուցանիշը: Ամէն դէպքում անուրանալի է, որ այս տարի «Զուարթնոց» օդանաւակայանն աւելի կենդանի ու մարդաչատ է, քան անցեալ տարուայ այս ժամանակահատուածում: Օդանաւակայանը համարւում է երկրի դարպասը, որով սկսւում են երկիր ժամանողի առաջին տպաւորութիւնները, իսկ առաջին տպաւորութիւնները միշտ էլ չատ են յիչւում: Իսկ ինչպիսի՞ն է ներկայումս «Զուարթնոց» օդանաւակայանն ու նրանով Հայաստանը՝ մեր երկիր առաջին անգամ ժամանած հիւրերի աչքերին: «Սովետական ու արեւմտեան ոճերի հնարաւորինս անճաչակ համադրութիւն», սա է մի քանի արտասահմանցի զրուցակիցներիս կարծիքը «Զուարթնոց» միջազգային օդանաւակայանի ներքին յարդարանքի ու դիզայնի վերաբերեալ (եթէ կայ), փոխարէնը, նրանց կարծիքով, չէնքի արտաքինը՝ ճարտարապետական լուծումներով, չատ գրաւիչ է: Օդանաւակայանի ներսում ամէն ինչ ցաքուցրիւ է ու աններդաչնակ, իրար կողքի կարելի է հանդիպել այս ու այն ափաքնկերութիւնների ներկայացուցչութիւնների, տարբեր տեղեկատու ծառայութիւններին, փոքրիկ խանութների, կրպակների, մի խօսքով՝ «Մալաթիա» չուկայի մի փոքրիկ հատուածը «Զուարթնոց»ում, որն, ի հարկէ, կիսատ կը լինէր առանց դրամի փոխանակման կէտերի, թերթերի (աւելի չուտ՝ «Ազբառների») ու ամսագրերի վաճառասեղանների, ու այդ բոլորի արանքում ամէնուր, որտեղ որ հնարաւոր է պատկերացնել, սրճարաններ՝ ուղղակի սրահի մէջտեղում անկապ չարուած սեղան-աթոռներով: Եթէ այդ ամէնին աւելացնենք ներսի չոգը, կեղտոտ ապակիներն ու աստիճանները, զուգարաններից փչող հոտը, կարծում ենք, պատկերն ամբողջական կը լինի: Ըստ ո-րում, օդանաւակայանի ներքին կոլորիտը պակաս տպաւորիչ կը լինէր, եթէ չըներկայացնէինք մի քանի պատկերներ հայաստանեան սպասարկման ոլորտի յաւերժ պրոբլեմատիկ թեմա դարձած հասարակական զուգարաններից, որոնցից օգտուելը «Զուարթնոց»ում արժէ 50 դրամ (մի կին նստած դրան առաջ փողերն է հաւաքում ու թուղթ բաժանում), զուգարանի ներսի պատերը սպիտակեցած են ու ամենակարեւորը, տեղադրըւած են ջրի բաքեր, բայց որոնք երեւի տեղադրման օրից յաւերժ դատարկ են: Զուգարանների ծորակներն էլ տեղ-տեղ են ծորում, ի հարկէ՝ սառը ջրով: Տաք ջուր էլ կայ, բայց... «Ջերմուկ»ի չչերի մէջ լուացարանակոնքերին դրուած, որոնք «յաջողութեամբ» փոխարինում են չծորացող ծորակներին: Ի դէպ, կեղտոտ լուացարանների կողքին օճառ էլ կայ, բայց այնքան կեղտոտ, որ թերեւս քչերը կը համարձակուէին ձեռք տալ, ինչ վերաբերում է ձեռքերը չորացնելուն, ապա խորհուրդ կը տայինք յոյսեր դնել սեփական թաչկինակի վրայ, քանի որ պատից կախուած էլեկտրական չորացուցիչը ոչ թէ օգտագործման, այլ քաղաքակիրթ զուգարանի տպաւորութիւնն ամբողջացնելու համար է (երեւի տեղադրըման օրից չի աչխատում): Միջավայրն աւելի է ամբողջանում, երբ զուգարանից դուրս գալիս, բառացիօրէն երկու մեթր հեռաւորութեամբ ուղիղ զուգարանի դըրան առջեւ քացւում է արտակարգ «տըպաւորիչ» դիզայնով բարը, որի պարապ «չիկահեր» մատուցողուհին երեւի արդէն վաղուց սովորել է ազոթի հոտի «բոյրի» ներքոյ աչխատելուն:

Որեւէ երկրի օդանաւակայանում թեւս պարտադիր է այդ երկրին բնորոչ արտադրատեսակների, յուչանուէրների խանութների գոյութիւնը, որից գնումներ կատարելը տուրիստի համար պարտադիր արարողակարգ է: «Զուարթնոց»ի կրպակ-խանութների չարքում յատկապէս աչք է ծակում օդանաւակայանի ճարտարապետութեան հետ լիովին աններդաչնակ, կանաչ մարմարով, առաջին հայեացքից չքեղութեամբ «փայլող» «Հայկական կոնեակ» մակագրութեամբ խանութ-սրահը, որը երեւի կառուցել ու փուչմանել են, քանի որ խանութը դատարկ է ու հետեւաբար՝ փակ: Վերը նկարագրուած հատատութիւնների ըմպասարկման որակի մասին խօսելը, կարծում ենք, աւելորդ է: Բաւարարուենք միայն մէկ փաստով՝ «Տեղեկատուի» պատուհանի վրայ եթէ կարդաք ռուսերէն «պերեւիվ» մակագրութիւնը, ուրմն, խորհուրդ կը տայինք առնուազն մէկ ժամ այլեւս պատուհանին չմօտենալ, որովհետեւ աչխատակցուհու համար «պերեւիվ»ի ու տուրճի համար առնուազն մէկ ժամ կը պահանջուի:

Բաւարարուենք այս մի քանի դրուագներով ու չէնքից դուրս դանք, որտեղ, ի դէպ, նոյնպէս աչխուժութիւն է: Դրսի մասում եւս կարելի է հանդիպել չէնքի ու օդանաւակայանի ճարտարապետութեան հետ կապ չունեցող ինչ-որ կառոյցների՝ սրճարաններ, կրպակներ եւ այլն: Սակայն խորհուրդ կը տայինք ուչադրութիւն չդարձնել ինչպէս դրանց, այնպէս էլ օդանաւակայանի օդակմեայ աւտոկանգառներում եղած աղբին, քանդուած սիւներին ու ասֆալտին, օդանաւակայանի անխնամ, տխուր չրջապատին եւս, փոխարէնը, առաջին իսկ պատահած մեքենայով ուղեւորուել Երեւան, քանի որ Թայիրով – Արգաւանդ ճանապարհի երկու կողմերում ձեզ սպասում են ոչ պակաս «տպաւորիչ» պատկերներ: Ի հարկէ, եթէ մինչ այդ ձեզ չի կանդնեցրել աւտոտեսուչը, ուրեմն թախտերը բերել է եւ կարող ես հանդիստ չարունակել ճանապարհդ՝ զմայլուելով ճամբեզրեայ «տեսարժան վայրերով»: Ճանապարհի երկու կողմում ձգուած չուկային (աւելի ճիշդ՝ բազարին) խորհուրդ կը տայինք ներողամտօրէն նայել՝ հաչուի առնելով, որ մեր երկրում դեռեւս չուկայական յարաբերութիւնները ձեւաւորման փուլում են: Նչենք ճանապարհի կիսով եզրին վաճառուող հիմնական ապրանքատեսակները, որոնք վաճառւում են կողք-կողքի՝ անուադող, ալիւր, չաքար, լուացքի տաչտ ու ծաղիկ, փողոցի փոչու ու աւտոմեքենաների արտանետումների մէջ կախուած ապխտած ձկներ ու ամենատարբեր մթերքներ, մի խօսքով՝ «Մալաթիա»յի չուկայի ծանօթ պատկերները՝ այս անգամ Զուարթնոց-Երեւան ճանապարհին: Ընդ որում՝ ճանապարհային «բազար»ը Արգաւանդի խաչմերուկում աւելի է ամբողջանում՝ մօտ 500 մեթր երկարութեամբ ճանապարհի երկու կողմերում փռուած կոհոյքի չուկայով: Կահոյքի մեծ մասը՝ երկտեղանի մահճակալները, լրագրասեղանները ու օրօրոցները, Արգաւանդի խաչմերուկին յարող գորշ, փոչեպատ տարածքում ուղղակի չարուած են՝ աբեւի ու փոչու մէջ Երեւան մուտք գործող աւտոմեքենաներին ի տես: Արգաւանդի խաչմերուկի կահոյքի չուկայով էլ բացւում են երկրիս մայրաքաղաքի դարպասները: Այսպիսին է Հայաստանը ժամանողների առաջին տպաւորութիւները: Սրանք սոսկ պատկերներ էին, մեկնաբանութիւնները թողնում ենք քաղաքական գործիչներին ու նաեւ՝ օդանաւակայանի ղեկավարութեանն ու տեղական կառավարման մարմիններին:

ԳԱԳԵԱՆԷ ՄՈՒՔՈՑԵԱՆ

«Ազգ», Ցուլիս 26

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԵՐԸ

● ԼԻԻԱՆ ՊԵԹԱՆՔՈՒՐ

«Վ'Օրէալ» կայսրութեան միակ ժառանգող 72 տարեկան Լիլիան Պեթանքուր աշխարհի ամէնէն հարուստ կինն է: Այս ֆրանսուհիին հարստութիւնը կը հասնի 15,2 միլիառ տոլարի...

*
**

● ԷԼԻԶԱՊԷԹ Բ. ԹԱԳՈՒՀԻՆ

Իր եկամուտները աւելցնելու համար Անգլիոյ Թագուհին վերջերս որոշեց ծախել իր ընդարձակ կալուածներուն մէջ հաւնող խնձորները...

Թագուհին նաեւ ամառնան յաւելում պրպեց Պաքինկհէմ պալատի 700 պաշտօնեաներուն: Այսպէս, խոհարարներն ու սպասուհիները տարեկան 13 – 14 հազար տոլար կը ջահին, իսկ արքայական ընտանիքին ճաշ մատուցողները 22·500 տոլար...

Էլիզապէթ Թագուհիին եկամուտը կը հասնի չուրջ 450 միլիոն տոլար:

*
**

● ՊՐԻԹՆԻ ՍՓԻՐՁ

Նշանաւոր երիշուհին իր չրջապտոյտներէն եւ ելոյթներէն ջահած է 40,5 միլիոն տոլար, իսկ երկրորդ ձայնասկաւառակէն ծախած է 8,1 միլիոն օրինակ...:

*
**

● ՃՈՒԼԻԱ ՌՈՊԸՐԹՑ

Անուանի դերասանուհին միակ կինն դերասանուհին է, որ 20 միլիոն տոլար գանձած է մէկ ժապաւէնի մէջ իր ըստանձնած դերին համար:

Ռոպըրթցի եկամուտը կը հասնի չուրջ 18,9 միլիոն տոլարի:

*
**

● ՃԵՆԻՖԸՐ ԱՆԻՍԹՐՆ

Պատկերասփիւռի «Փրէնտց» յայտագրի դերասանուհին իւրաքանչիւր էփիզոտի համար կը գանձէ 750 հազար տոլար, իսկ

ՓՈՔՐԱԹՎ ՓՈՔՐԱԹՔ

ՄՈՆՐԷԱԼԻ Գերմանիոյ ընդհանուր հիւպատոս՝ Տօքթոր Հ. Կէօքըլի առանձնատան մէջ, Յունիս 28–ին, յատուկ ընդունելութեան մը ընթացքին գերմանական փիւութեան փրոֆէսէօր՝ Տորա Սաքայեանի յանձնուած է գերմանական դաշնակցային Հանրապետութեան արժանիքի խաչը (պունտըսփեր տիենսթ-իրէօց): Այս պարգեւը կը չնորհուի անոնց որոնք քաղաքական, անտեսական եւ գիտական մարզերու մէջ արտակարգ ծառայութիւններ մատուցած են Գերմանիոյ: Նեռածականն իր խօսքին մէջ, հիւպատոսը ընդգծած է Տիկին Սաքայեանի 50–ամեայ վաստակը գերմանագիտութիւնը զարգացնելու եւ մշակոյթը տարածելու ուղղութեամբ: Ան նախ համբաւ չհանած էր նախկին Խորհրդային Միութեան՝ Ռուսաստանի եւ Հայաստանի համալսարաններուն մէջ, վերջին 25 տարիներուն ալ Մորխալի համալսարանին:

*
**

ԹՈՐՈՆԹՈՑԻ Վիքթորիա Փարքի երկրորդական վարժարանի ճամբարի յատկացուած բաժնին մէջ, Յուլիս 11–ին, պաշտօնական բացումը կատարուած է Հ.Օ.Մ.–ի ամառնային ճամբարին, որ սկսած էր Յուլիս 3–ին: Խօսք առած է ճամբարի երկարամեայ տնօրէնուհի Սիլվա Փայլեան: Ճամբարը կը տեւէ եօթը չարաթ: Խօսք առած են նաեւ Հ.Օ.Մ.–ի Ռուբինա մասնաճիւղին կողմէ Լորա Մավլեան եւ Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան:

*
**

● ՃԵՆԻՖԸՐ ԼՈՓԷՋ

Երիշուհի դերասանուհի ճէնիֆըը Լոփէզ քմահաճ արուեստագիտուհի մըն է: Ան իր ճամբորդութիւններուն ընթացքին կը տեղափոխուի 30 հոգիէ բաղկացած անձնակազմով մը: Անոր սենեակները պէտք է զարդարուած ըլլան հազուագիւտ ծաղիկներով եւ բուրումնաւէտ մոմերով:

Ան օրին մէկը սպառնացած է ընկճել իր մէկ համերգը, որովհետեւ հաւնած չէ իր լոժիին վարդագոյն պատերը:

Ճ. Լոփէզի եկամուտը կը հասնի 14,4 միլիոն տոլարի:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԼՈՍ-ԱՆՃԸԼԷՍԻ ՄԷՋ

«ԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶ»Ի ԵՐԵԿՈՅԹԸ

Կլէնտէյլի Հանրային Գրադարանի սրահին մէջ, Յուլիս 5–ին, տեղի ունեցած է «Գրական Աշպարէզ»ի հերթական երեկոյթը, նուիրուած բանաստեղծուհի Յասմիկ Մխիթարեանին: Ցայտագիրը վարած է Գէորգ Քրիստոնեան: Բանաստեղծուհիին գործերէն կարդացած է Ալիս Գափլանճեան: Հեղինակին գործերը վերլուծած է Գարուշ Հարեանց: Գնահատանքի խօսքերով հանդէս եկած են փրոֆ. Վահագն Մկրտչեան, Գէորգ Քրիստոնեան, տօքթոր Յարութիւն Սաղրեան, Վարագսուր Դոդոռեան, Վահրամ Չաճեան եւ Պետրոս Սարգսեան:

*
**

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ

Փասատինայի Հ. Բ. Ը. Մ. «Ալեք Մանուկեան» սրահին մէջ, Յունիս 24–ին, տեղի ունեցած է Մխիթարեան վարժարանի նախակրթարանի եւ միջնակարգ բաժնի ամավերջին հանդէսը: Բացման խօսքը արտասանած է փոխ – տնօրէն Ներսէս Վրդ. Սաքայեան: Վարժարանին ուսումնասիրը՝ Հրաչ Տօքթորեան, իր խօսքին մէջ չեչտած է թէ կեանքի պահպանութեան իմաստը ուրիշի բան մը տալու մէջ է, մաղթելով որ օր մը աշակերտներն ալ կարենան տալ իրենց ազգին եւ չրջապատին, ինչ որ առին իրենց ծնողքէն եւ ուսուցիչներէն: Գնահատանքի խօսք արտասանած է Հ. Դաւիթ Վրդ. Ղազարեան: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը եւ կատարուած՝ մրցանակաբաշխութիւն: «Հուսկ Բանք»ը արտասանած է տնօրէն Հ. Օգոստինոս Վրդ. Սեքուլեան: Միջնակարգ բաժինը տուած է 25 չրջանաւարտ:

*
**

ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ

Փասատինայի «Աղաճանեան» սրահին մէջ, Յունիս 22–ին, տեղի ունեցած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Ալֆրէտ եւ Մարկրիթ Յովսէփեան վարժարանի ամավերջի հանդէսը: Խօսք առած են Ռիչըրտ Մուշկեան, բարեբարուհի Մարկրիթ Յովսէփեան եւ վարդէն Քհնյ. Մովսէսեան: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը եւ կատարուած՝ մրցանակաբաշխութիւն: Յատուկ մեծարանքի արժանացած է ծնողք – ուսուցչական մարմնի առենապետուհի Տիկին Ալիս Սերոբեան, տասը տարիներու իր ծառայութեան համար: «Հուսկ Բանք»ը արտասանած է տնօրէն Յովսէփ Ինճէճիքեան: Շնորհաւորական խօսքով հանդէս եկած է առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեան: Այս տարի նախակրթարանը տուած է 23 չրջանաւարտ, իսկ միջնակարգ բաժինը՝ 12:

*
**

«ՀԱՅՐԵՆԻՔ – ԿՈՎԿԱՍ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ՖՐԷԶՆՈՑԻ ՄԷՋ

Ֆրէզնոյի վեթերանց Մէմորըլ սրահին մէջ, Յունիս 24–ին, տեղի ունեցած է Լոս – Անճըլըսի «Հայրենիք – Կովկաս» պարախումբին երեկոյթը, հովանաւորութեամբ Տէր եւ Տիկին Գէորգ եւ Իսկուհի Կորոյեանի: Բացումը կատարած է Համազգայինի վարչութեան ատենապետ Պօղոս Չանտեան: 65 հոգինոց պարախումբը ներկայացուցած է հայկական ժողովրդական, ազատագրական եւ օտար պարերու փունջ մը: Խումբին դեկավարներն են Սերժ Պոտոյեան եւ Էլէանորա Չիլեան:

ԼՐԱՏՈՒ

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԵՄԱԴԻՐ ԱԼԷՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ ՆՈՐ ԺԱՊԱՒԷՆ ՄԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

Ֆրանսայի եւ աշխարհի չարժանկարի արուեստի չրջանակներուն քաջածանօթ անուն մըն է բեմադիր Ալէն Պէրպէրեան: Սկզբնական չրջանին էրբեւ նկարահանող, իսկ յետոյ կարճ ժապաւէններու բեմադիր Պէրպէրեան իր առաջին ժապաւէնը՝ «La cité de la peur» բեմադրած է 1993–ին: Աւելի վերջ յաջորդաբար 1997–ին եւ 1999-ին բեմադրած է «Paparazzi» եւ «Sixpack» ժապաւէնները:

Պէրպէրեան Ապրիլին սկսաւ նկարահանել իր չորրորդ ժապաւէնը, որ երգիծաչարժ պատմութիւնն է բանտարկեալի եւ բանտապահի մը: Անոնք չահելով վիճակահանութեան տոմսակ մը, կը բռնեն դէպի Մարոք փախուստի ճամբան:

Ժապաւէնի բեմադրութեան աշխատանքները պիտի աւարտին Օգոստոսին, ժապաւէնը յուցադրութեան պիտի ներկայացուի 2002–ին:

յայտագիր մը եւ կատարուած՝ մրցանակաբաշխութիւն: Յատուկ մեծարանքի արժանացած է ծնողք – ուսուցչական մարմնի առենապետուհի Տիկին Ալիս Սերոբեան, տասը տարիներու իր ծառայութեան համար: «Հուսկ Բանք»ը արտասանած է տնօրէն Յովսէփ Ինճէճիքեան: Շնորհաւորական խօսքով հանդէս եկած է առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեան: Այս տարի նախակրթարանը տուած է 23 չրջանաւարտ, իսկ միջնակարգ բաժինը՝ 12:

*
**

«ՀԱՅՐԵՆԻՔ – ԿՈՎԿԱՍ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ՖՐԷԶՆՈՑԻ ՄԷՋ

Ֆրէզնոյի վեթերանց Մէմորըլ սրահին մէջ, Յունիս 24–ին, տեղի ունեցած է Լոս – Անճըլըսի «Հայրենիք – Կովկաս» պարախումբին երեկոյթը, հովանաւորութեամբ Տէր եւ Տիկին Գէորգ եւ Իսկուհի Կորոյեանի: Բացումը կատարած է Համազգայինի վարչութեան ատենապետ Պօղոս Չանտեան: 65 հոգինոց պարախումբը ներկայացուցած է հայկական ժողովրդական, ազատագրական եւ օտար պարերու փունջ մը: Խումբին դեկավարներն են Սերժ Պոտոյեան եւ Էլէանորա Չիլեան:

ԼՐԱՏՈՒ

ԹԻՒ 17 ԽԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ը.

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

– Եղա՛յր, ես անոնց ապառնալիք չէրի, պարզապէս խորհուրդ տուի:

– Անոնք պիտեն, թէ այդ խորհուրդին ծայրը ուր կ'երթայ:

– Դուն ինչէ՞ն գիտես, թէ նիստը դռնփակ պիտի ըլլայ, – հարցուց Անդուէթ վհան Թօշիկեանի դառնալով, – հրաւիրատոմսերուն մէջ առանկ բան մը գրուած չէր:

– Յօճասարեան էֆէնտին տեսայ, ան ըսաւ:

– Դիւանը ի՞նչ տուեր է այդ որոշումը:

– Վարչութենէն անդամները այնպէս խորհուրդ տուեր են:

– Վարչութիւնը ի՞նչ իրաւունք ունի Ազգային Ժողովին խառնուելու, – գոչեց Անդուէթ, – աս ի՞նչ խաղքութիւն, ի՛նչ խայտառակութիւն է ... այս մարդիկը ո՛չ իրենց պարտքին, ո՛չ իրենց իրաւունքին գիտակցութիւնը ունին:

– Իմ գիտցածս այն է, թէ որոշուած է, որ այսօրուան նիստը դռնփակ պիտի ըլլայ, եւ եթէ իմ խրատս կ'ուզէք մտիկ ընել, լաւ կ'ընէք, եթէ տեղերնիդ երթաք, քան թէ պարապ տեղը այստեղ սպասէք:

– Սրկէ հունա չենք երթար եւ կը տեսնուինք անոնց հետ... ալ համը կը փախցընեն կոր...

– Ինչ որ կ'ուզէք՝ ան ըրէք, – պատասխանեց Թօշիկեան հեռանալով:

Վերը, ժողովասրահին մէջ, երեսփոխանները կը խորհրդակցէին:

– Ժողովը դռնբա՞ց է, թէ՞ դռնփակ, – հարցուց երեսփոխան մը Աբիկ Մուպահեաճեանին:

– Դռնփակ, – պատասխանեց այս վերջինը:

– Ինչո՞ւ համար:

– Մայր դիւանը այնպէս որոշեց:

– Սակայն դռնփակ ընելու պատճառ մը չկայ:

– Վարչութիւնը այնպէս փափաք յայտնած է:

– Ճանըմ, պարապ տեղը խնդիր չհանենք... տեսէ՛ք, ժողովուրդը բակը լեցուած է, մէջերնին աճապոյտ մարդիկ ալ կան... կ'ելլան, կուիւ մը կը հանեն:

– Եթէ կ'ուզէք, անգամ մը Հայկ էֆէնտի Յօճասարեանի խօսեցէք, – պատասխանեց Աբիկ:

Երեսփոխանը ուրիշ վեհերոտ երեսփոխան մըն ալ հետը առնելով՝ մօտեցաւ Հայկ Յօճասարեանին:

– Ճանըմ, ինչո՞ւ դռնփակ կ'ընէք կոր նիստը, – հարցուց:

– Վարչութեան ատենապետը անանկ փափաք յայտներ է... թէեւ ես սկզբունքով հակառակ եմ դռնփակի:

– Լաւագոյն է, որ ժողովը հրապարակային ըլլայ...

– Համակարծիք եմ ձեզի:

– Ուրեմն դռնբաց ըրէ՛ք:

– Թո՛ղ ժողովականները հաւաքուին, եւ որոշում մը կու տանք:

Ուրիշ երեսփոխաններ ալ պնդեցին, որ դռնբաց ըլլայ, եւ ի վերջոյ Հայկ Յօճասարեան տեղի տուաւ:

– Գոնէ ատենական գործողութիւնները դռնբաց կ'ընենք եւ յետոյ, երբ կարդը գայ թիւ 17 խաֆիէին, այն ատեն ունկնդիրները դուրս կը հանենք, – ըսաւ:

– Այսիկա պատճառ պիտի ըլլայ, որ վէճ ծագի, – դիտել տուաւ երեսփոխան մը:

– Հոգ մի՛ ընէք, անուշութեամբ խընդիրը կը կարգադրենք:

Նոյն միջոցին մաս մը ունկնդիրներ սկսան դուռը հարուածել:

– Բացէ՛ք դուռը, եթէ ո՛չ՝ պիտի կոտրենք, – կը պոռային դուրսէն:

Յօճասարեան բարապանի մը հրամայեց որ դուռը բանայ:

Հրամանը անմիջապէս գործադրուեցաւ, եւ Գրիգոր Անդուէթ երեւցաւ իր սպայակոյտովը եւ խսկոյն եկաւ դրաւել առաջին կարգի նստարանները:

– Տղա՛ք, ամուր նստեցէք ձեր տեղերը, – հրամայեց չուրջիններուն:

Երեսփոխաններուն թիւը վաթսունի մօտեցած էր, եւ ուրիշներ հետզհետէ կը հասնէին:

– Ատենապե՛տ էֆէնտի, առեանը բացէ՛ք, – պոռացին քանի մը երեսփոխաններ:

Հայկ Յօճասարեան ժամացոյցը նայեցաւ եւ նազելաճեմ դնացքով մը դէպի դիւանը ուղղուեցաւ:

Ատենական գործողութիւնները բաւական երկար տեւեցին:

Վերջապէս կարգը եկաւ օրակարգի առաջին խնդրին, որն էր թիւ 17 լրտեսի մասին Վարչութեան տեղեկատուութիւն:

– Օրակարգի անցնելէ առաջ, – ըսաւ Հայկ Յօճասարեան, – կ'ուզեմ իմանալ, թէ ժողովը դռնփա՞կ, թէ՞ դռնբաց նիստ դումարել կը փափաքի:

– Դռնփա՛կ, դռնփա՛կ, – գոչեցին չատ մը ձայներ աջակողմէն:

– Ո՛չ, դռնբա՛ց, – պոռացին ուրիշներ ալ ձախակողմէն:

– Յօճաս կ'ուզեմ, - ըսին մէկ քանիները:

Եւ վիճաբանութիւն մը բացուեցաւ դռնընթացի, թէ դռնփակի մասին:

Խնդիրը բաւական ծեծուելէետքը «քուէ՛, քուէ՛» պոռացին երեսփոխանները, եւ ատենապետը քուէի դնելով խնդիրը՝ 16–ի դէմ 32 քուէով որոշուեցաւ ժողովը դռնփակի վերածել:

– Կը խնդրեմ ունկնդիրներէն, որ բարեհաճին դուրս ելլել, – ըսաւ ատենապետը:

– Ո՛չ, չենք ելլեր, - պոռացին քանի մը ձայներ:

– Թո՛ղ առաջուց ծանուցանէիք, թէ նիստը դռնփակ պիտի ըլլայ, եւ պարապ տեղը մինչեւ հոս չգայինք, – առարկեցին ուրիշներ:

– Կը խնդրեմ, որ ժողովին պատկառանքը չխանգարէք, – ըսաւ ատենապետը:

– Ճնշումի տակ նիստ չենք կրնար դուրս մարել, – պոռաց երեսփոխան մըն ալ:

– Ժողովուրդը դուրս պիտի չելլէ, – պոռաց Գրիգոր Անդուէթ:

– Յարգեցէ՛ք ժողովին որոշումը, – ըսաւ ատենապետը:

– Դուք ալ ժողովուրդին իրաւունքը յարգեցէք, – պատասխանեց Անդուէթ:

Եւ ահա աղմուկը հետզհետէ սաստկացաւ:

Զախակողմէն մէկ քանի երեսփոխաններ փութացին Անդուէթի եւ իր ընկերներուն քով եւ բանակցութեան մը սկսան:

Ի վերջոյ Անդուէթ խորհրդաւոր նշան մը ըրաւ, եւ ունկնդիրները կամաց – կամաց դուրս եկան:

(Շար. 33)

(Շար. Ա. էջէն)

կան ՈՒԶԷՒԱյի կեդրոնային եւ մակեդոնական կառավարական ուժերու միջեւ։

Ժ. ՇԻՐԱՔ, 1978-ին Գլօա-Փոնթիտու հիմնարկին կողմէ, որու գանձապահն էր այն ատեն, 5 հեկտարնոց հող մը գնել տուած է, Գորէզի մէջ Պիթի ղէեակին կից, որու սեփականատէրն է, ըստ «Գանար - Անչէնէի» (Օգոստոս 1)։ Այդ հողը գնուած է 500 հազար ֆրանքի (այսօր՝ 1,4 միլիոն ֆրանք) եւ Շիրաք գնել տուեր է միայն որպէսզի գիւղացիները իր կալածին առջեւէն չանցնին։ Գլօա - Փոնթիտու հիմնարկը հաստատած է լուրը եւ զայն արդարացուցած, ըսելով թէ ծրագիր մը կայ արձակուրդի կեդրոն մը կառուցանելու տարեցներու համար, որմէ յետաղային, հրաժարած են։

ԳԵՐՄԱՆԻԱ դէպի Ֆրանսա եւ Անգլիա ղրկած է չոզագործօն թափօններու մեծագոյն կառախումբը, ինչ որ հակահիւլէական ցոյցերու առիթ տուած է երկու երկիրներուն մէջ։

ՄԵԾՆ - ԲՐԻՏԱՆԻՈՑ մայր թագուհին, 101 տարեկան հիւանդանոց վոխադրուած է, արեան սրսկում մը ունենալ համար, քանի կը տառապի անարիւնութենէն։

CDCA

Communiqué

Le Comité de Défense de la Cause Arménienne apprend avec une profonde tristesse la mort de Guy Hermier. Député communiste des Bouches-du-Rhône, homme de cœur et de conviction, il a été un ardent défenseur de la cause arménienne. Personne n'oubliera l'inlassable activité qu'il a déployée en faveur de la reconnaissance du Génocide des Arméniens de 1915.

Le Bureau National du CDCA France
Paris, le mercredi 1er août 2001

— ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ —

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻՋ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն վերափոխման Ս. Աստուածածնի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8·45ին։
Պատարագ ժամը 10·30-ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԱՇԵԱՆ
կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի Առաջնորդ Հայոց Փարիզի
Պատարագի աւարտին՝ խաղող կ'օրհնուի։
ԾԱՆՕԹ.- Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13, Բ. օր
Վերափոխման։ Յիշատակ Մեռելոց։
Ժամը 10-ին պատարագ կը մատուցուի։
Կը պատարագէ՝
ՏԻՐԱՑՐ ՔՀՆՑ. ԳԼՂԼՃԵԱՆ
Պատարագի աւարտին՝ Հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

Ս. ՃԱԿՈԲ — ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն է Ս. Աստուածածնի
Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի։
Օրուան պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՋԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայից
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը։
Հաւատացեալները որոնք օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կը-նան, ուղարկել Եկեղեցւոյս Դիւանատունը։

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

De passage en France, au cours d'un grand tour d'Europe organisé dans le cadre des festivités du 1700ème anniversaire de la christianisation de l'Arménie nous accueilerons pour un **SPECTACLE UNIQUE**

L'ENSEMBLE FOLKLORIQUE

DATEV

(danseurs âgés de 10 à 14 ans)
en l'ESPACE GARBIS MANOUKIAN
40, rue d'Arménie, 69003 LYON
VENDREDI 17 AOUT à 20 heures 30
Venez nombreux les applaudir également...
—— P.A.F. 50 F ——
Renseignements:
☎ M.C.A.V. **04.78.26.28.71** (les après-midi)

Maison de la Culture Arménienne de Villeurbanne
Croix Bleue des Arméniens de France
Section de Lyon-Villeurbanne

«Ց Ա Ռ Ա Ջ» ի ընթացիկ ազդերու սակագինը

Մահազդ	800	(956,80)
Հոգեհանգիստ	700	(837,20)
Շնորհակալիք	700	(837,20)
Հարսնիք-Նշանտուք	700	(837,20)
Ծնունդ	700	(837,20)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թ.Վ.Ա. *(տե՛ս. փակագիծի մէջ ընդհ. գումարը)։*

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՕՐԴ ՄԻՆԱԿ (25 *տող*) *մահազդներու պարագային եւ* 1/8-*րդ* (12-13 *տող*) *մնացեալին։*

Առեւտրական եւ այլ յանուցումներու համար, դիմել Թերթին վարչութեան։

50ème Anniversaire du Pèlerinage à SAINT-GREGOIRE de TALLARD

ԹԱԼԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Sous l'égide de

l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France

et avec le concours de

l'Association Cultuelle des Arméniens de GAP et des Hautes Alpes

Dimanche 9 septembre

à 10h30 — La Sainte Messe sera célébrée par

Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens de Rhône-Alpes

l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens du Sud de la France

Avec la participation de la Chorale SAHAK - MESROP sous la direction de Khatchig YILMAZIAN

à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre

Renseignements & Réservations :

— **Cathédrale Arménienne de Marseille, tél. : 04 91 77 84 70**
— **Association Cultuelle des Arméniens de GAP, tél.: 04 92 51 71 80 / 04 92 51 00 87**

—— Participation aux frais ——
Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
Home Arménien

MERCREDI 15 AOUT

FETE CHAMPETRE

10h: Messe solennelle Chapelle Saint-Jean
Célébrée par Monseigneur DARON GEREJIAN
A partir de 12h30: Bar & Buffet
Animation : **MARTEN YORGANTZ • Danses traditionnelles**
107, Avenue Maréchal Lyautey
83700 Saint-Raphaël
Réservations et renseignements : au 04.94.19.51.50

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris

du jeudi 4 au lundi 8 octobre

à l'occasion de la Béatification de

Mgr. IGNACE MALOYAN

Archevêque de Mardine, martyr en 1915.

le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«Ց Ա Ռ Ա Ջ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 ՖՐ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 ՖՐ.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 ՖՐ.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 ՖՐ.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՍՓԻԽՈՒՔԻ ՄԷՋ 75 ՖՐ.

ԵՒ

«Ց Ա Ռ Ա Ջ - 50»

(Տաղկախտ 50-ամեայ հաւատամքով) 120 ՖՐ.

Դիմել «Ց Ա Ռ Ա Ջ»ին։

Թղթատարի ծախք՝ 30 Ֆր., հատոր գլուխ։

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 4-5
SAMEDI - DIMANCHE
4-5 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՀԱՐԵ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·225

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

77e ANNEE — N° 20.225

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ՀԱՅԵՒԹՈՒՐՔ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՀԱՅ ԿԱԶՄԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Մինչ հայկական հանրային կարծիքը դիմաւորարար մամուլին միջոցով ու քիչ յաջառութեամբ անընդունելի կը գտնէ հայեւթուրք հաշտութեան յանձնախումբին կազմութիւնը, անոր հայ անդամները Յոգոստոս 1-ին յայտարարութեամբ մը կ'ըսէ թէ Հայերու մեծ մասին աջակցութիւնը կը վայելեն: Անոնք չնորհակալութիւն կը յայտնեն այդ աջակցութեան համար:

Այսուհանդերձ, խոստովանելով որ կան քննադատող որոշ կէտակէտութիւններ, կը յուսան որ անոնք ժամանակով կը վերանան իրենց ընթացքը· ապա հարց կուտան թէ անոնք ի՛նչ ըրած են եւ ինչ ընելու մտադիր են մեր ժողովուրդին ապահան աւելի ապահով դարձնելու համար:

Ըսելէ ետք թէ իրենցը պատմական յանձնախումբ չէ, կը չեշտեն թէ ցեղասպանութեան վաւերականութիւնը արդէն միջարկումի առարկայ չէ, միջազգայնօրէն ընդունուած փաստ ըլլալով: Սակայն, ազդ մը անդին «միջազգային ճանաչումը ինքնին կարեւոր» կը գտնեն, աւելցնելով որ հաշտութեան ջանքերը ատոր խոչընդոտ չեն: Համաձայն ըլլալով իրական հաշտութեան համար ցեղասպանութեան ծուրքերու կողմէ ճանաչումին, հարց կուտան թէ ո՛րն է այդ արդիւնքին հասնելու լաւագոյն ճամբան: Իրենց յանձնախումբը հաշտութեան գործընթացին մէջ գործունէութեան հիմնական սկզբունքներով կարեւոր դեր ստանձնած է: Այսուհանդերձ, կ'ընդունին որ այդ մարմնի գործունէութիւնը չի կրնար փոխարինել հայեւթրքական պետական ուղղակի յարկերը:

Իրենք մտադիր են խոր ուսումնասիրութիւններով ճշդելու տարբերութիւնները, ընդհանուր եզրեր գտնելու. յարգանքով կը վերաբերին յանձնախումբի իրենց գործընկերներուն, գտնելով վստահութեան արժանի գտնելով: Զորս առանձին անհատ կը գործեն որպէս միամտական խրմբակ, առանց «ողջ հայութիւնը կամ Հայաստանի կառավարութիւնը ներկայացնելու» յաւակնութեան: Ցայտարարութիւնը կ'աւարտի նախաձեռնութեան աւելի շատ մարդ ներգրաւելու հարկը չեշտելով:

Ստորագրուած է Ա. Արզումանեանի, Ն. Յովհաննիսեանի, Վ. Գրիգորեանի, Ա. Միհրանեանի կողմէ:

ՔՐՄԷՆՓՐԷՍ,

(Օգոստոս 2 / 3)

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՍԻՒՆԻՔ ՄԵԿՆԱԾ Է

Վարչապետ Ա. Մարգարեանի գլխաւորած պատուիրակութիւնը Օգոստոս 3 - 5 Սիւնիք եւ Ղարաբաղ կ'այցելէ: Խումբը նախ Սիւնիքի մարզպետարանին մէջ կը քննարկէ Մեղրիի զարգացման ծրագրին կիրարկումը, ընթացքը, յետոյ Մեղրի կը մեկնի, տեղացիներուն հետ հանդիպում ունենալու եւ Մեղրիի գօրամասը Գ. Նժդեհ մկրտելու արարողութեան ներկայ գտնուելու. անկէ պատուիրակութիւնը կ'անցնի Ստեփանակերտ:

*
**

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԲԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ՄԱՍԻՆ

Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբին առընչութեամբ վերջերս Ազգային Ժողովի խմբակցութիւններուն եւ կուսակցութիւններուն կողմէ կատարուած յայտարարութեան մասին «Արմէնփրէս» հարցում ուղղած է Արտաքին գործերու նախարարութեան բանբեր Զինիկ Ազաջանեանին: Ան յոյս յայտնած է որ թէ՛ նշեալ յայտարարութեան կարծիքները եւ թէ մինչեւ այսօր արտայայտուած տեսակէտները նկատի կ'առնուին յանձնախումբին կողմէ: Ան աւելցուցած է թէ նման երկխօսութիւն կամ քննարկումներ չեն կրնար Հայաստանի իշխանութիւնները չեզել արտաքին քաղաքականութեան օրակարգին մէջ ցեղասպանութեան նիւթին ընդգրկումէն, անոր հետեւողական հետապնդումէն: Շեշտած ալ է թէ որեւէ փորձ կամ երկխօսութիւն չի կրնար փոխարինել պետական մակարդակի քննարկումը եւ Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ ներկայի հարցերը կրնան լուծուիլ միայն միջպետական երկխօսութեամբ:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԱՖԱԹ Հոմ գնաց Օգոստոս 2-ին եւ կոչ ըրաւ որ բոլոր բրտութիւնները վերջ գտնեն: Պահանջեց նաեւ միջազգային դէսերու ներկայութիւն չրջանին մէջ: Տեսակցութիւններ ունեցաւ խաղաղական բարձրագոյն իշխանութիւններու եւ Պապին հետ: Մինչ Արաֆաթ խաղաղութեան մասին կը խօսէր, Իսրայէլ կը շարունակէր արգելացնել իր «ընտրովի» սպանութիւնները: Շարունի խորհրդականը միջազգային հարցերու համար՝ Ալան Յայտարարած է.- «Կը ցաւինք տեսնելով որ համայն աշխարհ մեզ կը քննադատէ, բայց քանի որ պէտք է ընտրենք քննադատութեան կրակին միջեւ, ընտրութիւնը բացայայտ է»: Ու խօսքէն գործի անցնելով, Նապլուսի մօտ, Իսրայէլցի վայրագները «սխալմամբ» առեւանգած են 22 տարեկան Պաղեստինցի մը, ահաբեկիչ կարծելով, ապա ետ տարած են, հոն ուրկէ առեւանգած էին: Բայց, ուրիշ Պաղեստինցի մը սպանուած է, Նապլուսի մօտ: Պաղեստինեան դատարան մըն ալ մահուան դատապարտած է յիսնամեայ Պաղեստինցի մը գործակցութեան ամբաստանութեամբ: Իսլամական ճիհատին պետն ալ «արիւն եւ պատերազմ» կը խոստանայ Իսրայէլի, ի պատասխան սպանուած ութ Պաղեստինցիներուն:

ԼԱ ՀԷՅի Միջազգային Պատժական Դատարանը առաջին վճիռ մը արձակեց Օգոստոս 2-ին, 46 տարի բանտարկութեան դատապարտելով սերպ զօրավարը՝ Քրստիչ, 53 տարեկան, Սրեպրենիքայի ջարդին համար (1995, Յուլիս): Ամբաստանուած է ցեղասպանութեամբ:

ՄԱՐՏԱՆԱՒԵՐՈՒ (Ֆրեկաթ) նոր պատմութիւն մը երեւան եկած է, որու լայն տեղ կու տար «Լիպերասիոն» (Օգոստոս 3): Յարդ Ֆրեկաթներու մէկ հարց ծանօթ էր, էլֆի հարցը, ուր խնդրոյ առարկայ էին Ռոլան Տիւմա եւ իր հոմանուհին: Այս նոր հարցը, նոյնքան, եթէ ոչ աւելի, լայնածաւալ է եւ միջնորդէքերն ալ աւելի բարձր: Ան պատահած է 1994-ին, Պալատիւրի վարչապետութեան օրով: Անունն է «Սաւարի 2», կը վերաբերի երկու մարտանաւերու, երբորդ մըն ալ ընտրուած, որոնք կը ծախուին Ֆրանսական պետութեան կողմէ իր զրահեղեակին «Արդիական կառմածներու արտածումի Ֆրանսական ընկերութիւն» միջոցաւ Սաուտի Արաբիոյ: Շուկայ մըն է 20 միլիառ ֆրանքի (3-րդով՝ 28 միլիառ) եւ 5 միլիառ կայ միջնորդներուն համար: Էլիզէ անմիջապէս կը տեղեկանայ եւ երբ 1995-ին Շիրաք նախագահ կ'ընտրուի, քննութիւն բանալ կուտայ: Պայմանագիրը կը ջնջուի, Շիրաքի Սաուտի Արաբիա կատարած ճամբորդութենէն ետք: Միջնորդը՝ Սալի Պէն Մուսալամ կը սպառնայ դատի դիմել (իր միջնորդէքն էր՝ 2,2 միլիառ), բայց, Սաուտցիներ կը համոզեն որ հրաժարի այդ գաղափարէն: Հարց մը առկախ կը մնայ սակայն: Մարտանաւերու գինին մէջ էր 5 միլիառ միջնորդէքը, լռինչ ընել: Կ'որոշուի այդ գումարը վերածել կանխավճարի երրորդ մարտանաւին համար: Այս վերջինը կը ծախուի 1997-ին, Ժոսփէն կը տեղեկանայ հաշտին եւ ամէն ինչ կը կարգադրուի, գոնէ երեւութապէս: Արդարեւ, Թերթը կ'ըսէ թէ մինչեւ պայմանադրութեան ջնջումը միջնորդներու երրորդութիւնը կրցած է գանձել միջնորդէքին մէկ մասը: Հարցականներ կը մնան:

ՇԻՐԱՔի կատարած վճարումները հլնչուն դրամով իր եւ չրջապատին համար, շատ աւելի մեծ գումարի մը կը հասնին, քան ինչ որ ըսուեցաւ սկիզբը - 2 միլիոն 400·000 Ֆր· եւ զոր չափազանցուած պըտաւ Յուլիս 14-ին: Նոր քննութեան մը համաձայն, այդ գումարը կը հասնի 3,1 միլիոն Ֆրանքի: Դատաւորներու քննած յանկերէն, յայտնաբերուած է որ կան «արհեստի ճամբորդութիւններ» ու նաեւ ճամբորդութիւններ զոր ոչ ինք, ոչ իր հարազատները կատարած են:

ԼՈՆՏՈՆի արեւմտեան չրջանը թաւարդ կառք մը պայթած է Օգոստոս 2-էն 3-ի

ՕՐԸ ՕՐԻՆ

ՊԱՊԸ ՀԱՅԵՐԷՆ Է «ՊԱՐԱՊԻԼԻՄ»...

Կատակի շեշտով հնչեց լուրը թէ որպէս պատրաստութիւն Սեպտեմբեր 25-ի Հայաստան իր այցին, պապը հայերէն կը սորվի, ըստ սովորութեան հարազատ լեզուով բանի մը խօսք ուղղելու համար տեղացիներուն: Յետոյ, յայտնի եղաւ որ ստոյգ էր լուրը եւ Յովհ. Պողոս Բ· մը տադրած էր հայերէն բանի մը խօսքի բաւարար բառապաշարի տիրանալ: Նոյնիսկ, ճարպիկ անձեղ մը յաջողած էր վատիկանի պարտէզէն ներս թռիչք մը առնել ու թոցնել պապական «հայաստաներէն» ուղերձին մէկ պատճէնը, որ ըսուեցաւ թէ տակաւին որոշ հպումներու կրնայ ենթարկուիլ: Սակայն, բանի որ բուն հետաքրքրականը կարճ ժամանակի մէջ հայերէն սորվելու երեւոյթն է, յետագայ հպումները շատ քիչ պիտի չփոխեն տրուածին ապացոյցի արժէքը:

Ահա թէ ի՛նչ կը պատրաստուի ըսել հայրապետը Քրիստոնեայ առաջին պետութեան 1700-ամեակ նշող հաղորդագրութեան մէջ, անոնց հարազատ լեզուով:

«Ողջունում եմ 1700-ամեակի ձեր ռեկորդը որ սերտիֆիկացում է առաջին քրիստոնեայ պետութիւն Հայաստանին: Ատեքուաթ ինֆորմացիան ունեցել ենք վաղուց ու իմանում ենք թէ ապրեսիանեբի, օկուպանտների ակտիւ էքսպանսիան ի՛նչ կոմպրոմիսներ, կոնվենցիոնալ կամ ոչ կոնվենցիոնալ լուծումներ, կոալիցիաներ է պարտադրել ձեզ: Բարիկատների եռին միչտ էլ մնացել էք ինտեգրացման օպչեկտ, բայց վախչէ տեղի չէք տուել:

«Ողջունում եմ, այսօր, դրսի դիպլոմատացիային, կալիտալիստական ակտիւացումին ու ներսի կոռուպցիային, կոնֆորմիստների բլէֆներին դէմ ռեզերվային ձեր էնէրգիան: Միչտ ազօթող եմ որ գայն ապամոնտաժելու տեխնոլոգիաները ճախողին ու Հայաստան յաւերժ պահի հումանիտար կոնցեպցիաների ռեկորդակիրի տիպլոմը:

Բարի՛ պրեմիէրա, սա՛ղ կացէք»:

Թ. ԱՐՓԻ

դերուն համար (1995, Յուլիս): Ամբաստանուած է ցեղասպանութեամբ:

ՄԱՐՏԱՆԱՒԵՐՈՒ (Ֆրեկաթ) նոր պատմութիւն մը երեւան եկած է, որու լայն տեղ կու տար «Լիպերասիոն» (Օգոստոս 3): Յարդ Ֆրեկաթներու մէկ հարց ծանօթ էր, էլֆի հարցը, ուր խնդրոյ առարկայ էին Ռոլան Տիւմա եւ իր հոմանուհին: Այս նոր հարցը, նոյնքան, եթէ ոչ աւելի, լայնածաւալ է եւ միջնորդէքերն ալ աւելի բարձր: Ան պատահած է 1994-ին, Պալատիւրի վարչապետութեան օրով: Անունն է «Սաւարի 2», կը վերաբերի երկու մարտանաւերու, երբորդ մըն ալ ընտրուած, որոնք կը ծախուին Ֆրանսական պետութեան կողմէ իր զրահեղեակին «Արդիական կառմածներու արտածումի Ֆրանսական ընկերութիւն» միջոցաւ Սաուտի Արաբիոյ: Շուկայ մըն է 20 միլիառ ֆրանքի (3-րդով՝ 28 միլիառ) եւ 5 միլիառ կայ միջնորդներուն համար: Էլիզէ անմիջապէս կը տեղեկանայ եւ երբ 1995-ին Շիրաք նախագահ կ'ընտրուի, քննութիւն բանալ կուտայ: Պայմանագիրը կը ջնջուի, Շիրաքի Սաուտի Արաբիա կատարած ճամբորդութենէն ետք: Միջնորդը՝ Սալի Պէն Մուսալամ կը սպառնայ դատի դիմել (իր միջնորդէքն էր՝ 2,2 միլիառ), բայց, Սաուտցիներ կը համոզեն որ հրաժարի այդ գաղափարէն: Հարց մը առկախ կը մնայ սակայն: Մարտանաւերու գինին մէջ էր 5 միլիառ միջնորդէքը, լռինչ ընել: Կ'որոշուի այդ գումարը վերածել կանխավճարի երրորդ մարտանաւին համար: Այս վերջինը կը ծախուի 1997-ին, Ժոսփէն կը տեղեկանայ հաշտին եւ ամէն ինչ կը կարգադրուի, գոնէ երեւութապէս: Արդարեւ, Թերթը կ'ըսէ թէ մինչեւ պայմանադրութեան ջնջումը միջնորդներու երրորդութիւնը կրցած է գանձել միջնորդէքին մէկ մասը: Հարցականներ կը մնան:

ՇԻՐԱՔի կատարած վճարումները հլնչուն դրամով իր եւ չրջապատին համար, շատ աւելի մեծ գումարի մը կը հասնին, քան ինչ որ ըսուեցաւ սկիզբը - 2 միլիոն 400·000 Ֆր· եւ զոր չափազանցուած պըտաւ Յուլիս 14-ին: Նոր քննութեան մը համաձայն, այդ գումարը կը հասնի 3,1 միլիոն Ֆրանքի: Դատաւորներու քննած յանկերէն, յայտնաբերուած է որ կան «արհեստի ճամբորդութիւններ» ու նաեւ ճամբորդութիւններ զոր ոչ ինք, ոչ իր հարազատները կատարած են:

ԼՈՆՏՈՆի արեւմտեան չրջանը թաւարդ կառք մը պայթած է Օգոստոս 2-էն 3-ի լուսնալիք դիչերը: Վեց հոգի վիրաւորուած է, արարքը կը վերագրուի ԻՐԱ-ի: Այնուամենայնիւ Անգլիա եւ Իրլանտա կը չարան փրկել 1998-ի համաձայնագիրը:

ՅՅԵՆՈՎԱՅԻ ոստիկանութեան երեք բարձրաստիճան պատասխանատուներ հեռացուած են քաղաքէն եւ այլ վայր պաշտօնի կոչուած, իբրեւ հետեւանք Ժէ· 8-ի Ժողովին առեն պատահած դէպքերուն:

ԻՆՍԷ-ի (Վիճակագրութեան Հիմնարկ) համաձայն, վեցերորդ ամիսն ըլլալով Ֆրանսացիներու տրամադրութիւնը լաւ չէ: Հարցապնդուած են 2000 ընտանիքներ, Յուլիսի երեք առաջին չաբաթները եւ պարզուած է որ անոնք մտահոգ են, դլխաւորարար գործազրկութեան մտավախութեամբ: Ըստ իրենց ան յաւելում պիտի կրէ:

2100-ԷՆ ՍԿՍԵԱԼ աշխարհի քնակչութեան ամբ պիտի դադրի: Այս եզրակացութեան չանգած են ազգագրութեան երեք մասնագէտներ, որոնք աշխատած են աւստրիական, ամերիկեան եւ հոլանտական համալսարաններու մէկ, կը հաստատեն որ աշխարհի քնակչութեան ամբ դադրեցումը 85% հաւանականութեամբ անխուսափելի է մինչեւ դարուս վերջ: Իրենց ուսումնասիրութեան մէկ, նկատի առած են սիտայի համամարդակը Ամերիկէի մէկ, որ վճռական դեր պիտի ունենայ երկրագունդին ազգագրական ապագային համար:

ՓԱՐԻԶի քաղաքապետը դէմ է, որ նոյնիսկ միայն երկու չաբթուան համար, փոխուի Սէնի գետափին ճամբուն Ժորժ Փոմպիտուի անունը, ինչպէս վճռած են ընել կանաչները: Պ· Տըլանոյ կը չեշտէ որ ոչ մէկ արարք պէտք է գործուի որ ինդրոյ առարկայ ընէ նախկին նախագահին յիչատակը: Կանաչները չեն յայտնած նոր անունը, բայց, քանի մը անուններ կը յիչուին, ինչպէս «նախկին խճողումներու ճամբայ», «սիրահարներու ճամբայ», «երգող ձուկերու ճամբայ» եւայլն:

ՖՐԱՆՍԱՑԻ տարածքին, Օգոստ· 2 - 3-ի փոթորիկներն ու անձրեւները զգալապէս նպաստեցին մթնոլորտի ապականութեան նուազումին: Տօթն ալ նահանջեց, գոնէ Փարիզ, ուր Օգոստոս 3-ին չերմաստիճանը 22 էր նախորդ օրերու 32 - 33-էն ետք:

ԼՈՒՍԱՆՑՔԱՑԻՆՆԵՐԷՆ

1996-ի աշնան «Առանց սահմանի բժիշկներ»ու Պելժիոյ մասնաճիւղը գուներու լուսանկարներով չորս էջնոց հրատարակութիւն մը ցրուած էր, հետաքրքրութիւն չարժելու համար «Վարդենիի մահարանը» անուանուած հոգեբուժարան – պատսպարանին նկատմամբ: Հաստատութեան մասին տարօրինակ նկարագրական մը կ'ըլլար հոն, քանի մը տողով կ'ըսուէր թէ ընդհանուր անտարբերութեան մէջ հոն «ապրող» մտային հիւանդները իրենց վիճակին լքուած էին ու մօտալուտ ձմրան ցուրտը պիտի առնէր տանէր անոնցմէ մէկ քանին: Ցետագային հաստատութիւնը այլ մտահոգութիւններու ալ առարկայ եղաւ, ապա օրերու այժմէականութիւնը մոռցուց զայն:

«Առաւօտ»ի Ցուլիս 21-ի թիւին մէջ պատկերազարդ էջով մը կրկին ուշադրութեան կը յանձնուի նոյն հաստատութիւնը. Սաթիկ Սէյրանեան «Հողատարած՞ք, թէ երկիր» խորագրուած իր գրութեամբ նոր նկարագրութիւն մը կուտայ հոն ընթացող կեանքէն: Շէյտուածքը, կրկին, հոն պատսպարուած ծերերուն, հաշմանդամներուն, երախաներուն վերագրուած մարդկային իրաւունքներու յարգանքն ու պաշտպանութիւնն է. աղղակներ, որոնք ըստ յօդուածագրին, հոզատարածքի մը երկրի յատկանիշը կուտան:

Հոգեբուժարան – պատսպարանին մէջ այսօր մօտ 230 բնակիչ կայ. ծերեր ու հոգեկան հիւանդներ են: Նախապէս այդ երկու տարբեր տարրերը խմբուած էին անջատ հաստատութիւններու մէջ, տակաւ 2000 թուականին կառավարութիւնը որոշեց միացնել զանոնք: Հաստատութեան տնօրէնը տեղին կը գտնէ որոշումը որ գումարներ տնտեսելու առիթ կու տայ, ծախքերը կրճատելով: Կու տայ թուային փաստ մըն ալ. միացումէն առաջ ծերանոցը եւ հոգեբուժարանը միասին մօտ 140 միլիոն դրամ պարտք ունէին, վրէջին 7 – 8 ամսուան ընթացքին աւտր 82 միլիոնը վճարուած է: Տնօրէնը մտադիր է ամբողջ պարտքը հատուցանել եւթ 20% բարձրացնել աշխատողներու թոշակները: Հոն մէկին աշխատավարձքը մօտ 14 հազար դրամ է. հիւանդապահուհի մը 13 հազար դրամ կը ստանայ, բժիշկ մը՝ 50 հազար:

Պետական պիւտճէն 2000 – 2001-ի համար մօտ 240 միլիոն դրամ յատկացուցած է անուննդի, հագուստի, դեղի, աշխատավարձքերու, էլեկտրականութեան, եւայլնի համար: Այդ գումարէն, բաւական զարմանալի է կարդալ որ պետական եկամուտներու նախարարութիւնը հարկ կը պահանջէ: Այս մասին տնօրէնը կ'ըսէ որ պատսպարանին եղած նուիրատուութիւնները կ'արձանագրուին որպէս չուկայական արժէք ու անոնց գումարէն չհատուրք կը վճարուի: Եթէ բարեսիրական կազմակերպութիւն մը, օրինակ, 10 միլիոն դրամի արժէքով անուններ, կամ այլ տեսակի օգնութիւն ընէ, աւտր փոխարէնն 50 հազար չհատուրք վճարելը մեծ բան չէ: Բայց խնայուած գումարէն, կամ պիւտճէին չտուածներէն հարկ տալ անընդունելի կ'ըլլայ:

Հոգեբուժարան – ծերանոց միացումը եթէ ճիշդ արդիւնք տուած է խնայողութեան առումով, համակեցութեան համար նոյնը կարելի չէ ըսել: Նախ, այն պատճառով որ ծերանոցի բնակիչները հիւանդ չեն, իսկ հոգեբուժարանը պատսպարուածներու խանգարուած առողջութեան տէր մարդիկ են: Հոն կը փոխադրուին նաեւ Մարբերդի հոգեբուժարանին հիւանդները երբ 18 տարեկանը լրացնեն: Տնօրէնութիւնը տարբեր այս խումբերուն համակեցութիւնը դիւրացնելու համար ծերերը, երիտասարդները, հիւանդները ըստ սեռերու անջատ բաժիններու մէջ տեղաւորած է. անշուշտ, առիկա ըսել չէ որ խումբերուն միջեւ չփոթը հիմնովին անկարելի է:

Շփոթի գաղափարը անմիջապէս միտքը կը բերէ սեռայինը, անոր բոլոր հետեւանքներով. Ս. Սէյրանեան կ'ըսէ թէ երկու տարի առաջ պելժական նոյն կազմակերպութիւնը հակաբեղմնաւորիչ պարոյրներ ապահոված է եւ աւտր չնորհիւ վերջին մէկ – երկու տարուան ընթացքին յղութեան միայն մէկ դէպք արձանագրուած է: Այդ մէկն ալ հաստատութեան բժիշկին միջամտութեամբ կանխարգիլուած է: Կայ թէեւ «յաջողած՝ պարագայ ալ: Երեք – չորս տարի առաջ հոգեկան ծանր վիճակի տէր երկու հիւանդներու կենակցութենէն առողջ երախայ մը ծնած է: Բժիշկները եւ տնօրէնը ձեւեր կը փնտռեն երախան իր ծնողքէն հեռացնելու, մինչ այս վերջիններս յարձակողական դիմադրութիւն ցոյց կու տան: Սակայն, ամէն գնով պէտք է այդ միջավայրերէն փրկել առողջ երախան ու մանկատուն յանձնել:

Հետաքրքրական է կարդալ թէ պատըսպարեալները իրենց աշխատանքով կ'օգնեն հաստատութեան պիւտճէին: Կը խնամեն մեղուները, կովերը, ոչխարները: «Հովուութիւն աւող հիւանդը ամենայն պատասխանատուութեամբ է հետեւում կով-ոչխարներին, սակայն մեզ գանգատւում էր, թէ "ե՞րբ խորոված արին, որ ուտենք"»: Այս մէկուն հետ երախայի ծնունդի նշումը ապացոյցն է որ մարդկային հիմնական երկու պահանջները որքա՛ն ամուր տեղ ունին հիւանդին ալ պարագային ամէն առիթի յայտնուելու համար:

Նման հաստատութեան բնակիչներուն համար հիւանդ որակումը, հասկնալի է որ տարբերակումներով հարուստ է: Ինչպէս կը գրէ յօդուածագիրը, հոն հետաքրքրական տիպարներ ալ կան. ստեղծագործողներ: Կը կարեն, կը գրեն, կը նկարեն: Մէկը թելերով ու դերձանով տիկնիկներ կը չինէ, ուրիշ մը կը գրէ միայն միատող տետրակներու մէջ: Տիկին Տոլորէսը մասնագիտութեամբ բանասէր – թարգմանիչ է. չատ լաւ գիտէ Ֆրանսերէնն, ռուսերէնն եւ ի հարկէ հայերէնն: Երկար ժամանակ ապրած է Ֆրանսա. «Ներա ներքին կրթուածութիւնն անմիջապէս աչքի է զարնում եւ չնայած իր գերբերեալ կայական խօսքին, ստիպում է իր հետ լուրջ շփուել»: Ան ալ իրեն հետ ապրող հիւանդներուն Աստուածաշունչ կը կարդայ, «Հայր Մեր» կը սորվեցնէ: Կայ Պելլան որուն թուղթ ու գրիչ չի տրուիր. հոգեբուժարանին «ճիշդը ասող»ն է: Բոլորին ալ ականջը վարժուած է «դիժ» խօսքին: Գէորգը ամուրի մնալը կը պատճառաբանէ այդ որակումով. «Սաղ գիժ են, ո՞ւմ հետ ամուսնանամ»:

Ցայտնի է որ հակառակ իրենց հիւանդութեան, պատսպարեալները այժմէականութենէն խզուած չեն: Հոկտեմբեր 27-ի ոճրագործութիւնը, օրինակ, անոնց խօսակցութեան նիւթերէն մէկն է: Պելլան դժգոհ է որ չուրջիններուն հեռատեսիլէն ռուսական ալիքը կը դիտեն, ան ալ առանց հասկնալու, միայն նկարներուն հետեւելով եւ չեն ձգեր որ ինք լուրերը մտիկ ընէ: Սակայն, մտիկ ըրած չափով ալ ունի ըսելիքը. «Էդ խի՞ ես մեսակ Նայիրի Ցուսիսեանի աւուրը տալիս, բա խի՞ միւս հինգինը չես ասում, հը՛...»: Ցետոյ իր մէջ կը խօսի ստեղծագործողը. «քանաստեղծութիւններս էս բուժիոյրերը գողանում, իրենց անունով են տպում»:

Հիւանդ, ինքնատիպ, չատախօս, ստեղծագործ այդ մարդիկը որոնք ընկերու սեռեան լուսանցքին վրայ կ'ապրին, ինչպէս պարադոքս է նաեւ Հայաստանէն չատ աւելի բարօր, զարգացած երկիրներու, «բուրջ հագած, ցնցոտիաւոր, մեծ մասը գրեթէ անկօշիկ, շփմաև կարօտ» են: Անոնց գոյութիւնը արժէք մը կը ստանայ միայն, ինչպէս կը գրէ Ս. Սէյրանեան, «մարդահամարների ժամանակ երբ հարկ կը լինի Հայաստանի բնակչութեան թիւը մի բանի հարիւրով աւելացնել»:

ԱՐՓԻ ԹՈՓՈՑԵԱՆ

ԱԿՆԱՐԿ

ԱՍՏ ՀԱՆԳՋԻ՝ ՁՕՐԱՎԱՐ ԱՆԳՐԱՆԻԿ

– Շնորհաւոր ըլլայ անդրանիկ մանչ զաւակդ. յուսամ անունը հայկական է:

– Հօրս անունով անուանակոչեցինք զայն:

– Ուրեմն՝ Անդրանիկ. դէթ կը յիշենք պօրտաւոր Անդրանիկը:

– Ո՛չ, Անթոնի:

***

– Շնորհաւոր ըլլայ անդրանիկ մանչ զաւակդ. մաղթեմ մեծ հօր անունով է:

– Այո, հօրս յիշատակը ուզեցի յարգել:

– Ուրեմն՝ Գրիգոր:

– Ո՛չ, Կրէկուար. պիտի կանչենք՝ Կրէկ:

***

Օտարասիրութեան եւ ժամանակակից երեւալու ախտը արդէն սկսած է ապատնալ նաեւ մեր տոհմիկ ու աւանդական անուններուն: Կը մոռնանք չաճախ, որ իւրաքանչիւր անուն ունի իր պատմութիւնը, յիշատակը, դրուագը: Անճէ մը դաստիարակութիւնն ու նկարագիրը կը սկսի անունէն. ծնողներ, չաճախ գլուխ չեն մօտենար իրենց զաւակները անուանակոչելու ժամանակ եւ հետեւաբար՝ անունէն կը սկսին հայութենէն խորթացնել իրենց զաւակները՝ անոնց անունները ձեւախեղելով: Ինչու, հայկական անունը պիտի նեսմացնէ՞ զաւակին ինքնութիւնը. ինչու, օտարներ ծնօտի անհանգստութի՞ւն պիտի զգան հնչելով Անդրանիկ կամ Գրիգոր. ինչու, ամօ՞թ է կրել հայոց պատմութիւնն ու հայաս – տանը վերակենդանացնող որեէ անուն:

Վերջերս, Թուռնդ հայկական վարժարանէ մը մանկապարտէզէն ընթացաւարտներուն անունները կը կարդայի եւ քիչ մնաց կարծէի, որ կը գտնուիմ ոչ հայկական դպրոցի մը մէջ, անոնք էին՝ Սերժ, Անթոնի, Ռոզարիօ, Սինթիա, Լարա, Սթիվ, Վիքթորիա, Վերժինի եւայլ հնչտահնչիւն թուացող, բայց սիրտիդ ոչ մէկ բան լարող անուններ:

Այժմ, ի տարբերութիւն աչխարհի ժողովուրդներու մեծամասնութեան, եւ ի զարմանս մեր պատմութեան եւ հանդուցեալ թաղաւորներուն, ունինք երկու հայկական հանրապետութիւններ. անոնցմէ երէցը, աչխարհին կը ներկայանայ Ռոպէր անունով, մինչ կրտսերը՝ Արկադի անունով: Ի՞նչ «օրինակելի» երեւոյթ...: Անոնցմէ մին, օրինակ, եթէ ըլլար Արարատ եւ միւսը՝ Արցախ, աւելի դիպուկ պիտի չըլլա՞ր արդեօք:

Վերջերս, բարեկամ մը բախտաւորութեան դուստրով մը. եւ երանի՛ անունը չմոռնայի. ըստ բացատրութեան՝ արտասահման գտնուող Րաֆֆի եղբայրը յիչելու համար, նորածինը կոչուած է՝ Րաֆայելլա...: Երազս է Հոկտեմբեր 27-ին ունենալ զոյգ տղաներ, զանունք կոչելու համար Վազգէն եւ Կարէն. 2000 Հոկտեմբեր 29-ին, «Ազգակ» օրաթերթին մէջ ուրախութենամբ կարդացի, որ Հոկտեմբեր 27-ին հայ ծնողք մը դերբախտաւորուած է զոյգ մանչերով... թայց զարմանալ օտար անուններով. թարի նախանձս չանթահարուեցաւ պահ մը:

Ուխտաւորներու խումբով մը հասած էինք Արեւմտեան Հայաստան եւ ուխտադնացութիւնը իր գագաթնակէտին պիտի հասնէր Ախուրեան գետի ափին գտնուող Հայաստանի պատմական մայրաքաղաք Անիի աւերակներու այցելութեամբ: Հոն պաչտօնավարող Թուրք ուղեցոյց Ժալիլին «սրբազան» պարտականութիւնն էր, մեզի՝ «Թուրիսա»ներուս մեկնաբանել Անիի պատմութիւնը՝ չըլլանցելով անչուչտ անոր հայկական ինքնութիւնը. ան՝ կարծելով որ «Թուրիսա»ները անտեղեակ են պատմութենէն, պիտի փորձէր խեղաթիւրել Անիի պատմութիւնը. թայց, երբ տեսաւ «Թուրիսա»ներուս անճնագիրները, որոնց մէջ նաեւ՝ Անին, ապա՝ ինչպէ՞ս կրնար ուրանալ պատմութիւնը, երբ հայուհի Անին չատ աւելի տէրն է Անիին, քան Ատաթիւրք, Թանսուն, Ժալիլը, Մուսթաֆա Քեմալը, թէ հայ ուխտաւորներուս մէջ գտնուող ոչ հայկական անուններու տէրերը՝ Վիքթորիան, Ռեհիկան կամ Մարիժանը: Եթէ, մեր՝ ուխտաւորներուս անունները ըլլային Վանա, Կարս, Կարին, Արարատ, Բերկրի, Ախթամար աւելի տիրող զգացումով պիտի չամբողջացնէի՞նք այդ ուխտագնացութիւնը եւ պահ մը այժմու բռնագրաւիչ ներուժ աւելի ազդու ճայնով պիտի չուչէի՞նք, թէ՝ այդ հողերուն երբեմնի եւ իսկական տէրերը այդ հողերէն հեռու կը գտնուին, տարագրուած են պարտադիր կերպով: Անի մայրաքաղաք ուխտի օրը, առաւել գոյացի, որ մեր անունները պատմութիւն ունին եւ եթէ կը պատակինք, որ մենք տէրն ենք մեր պատմութեան, ապա նաեւ՝ տէրը պէտք է ըլլանք մեր անուններուն: Մեր ծնողները ինչո՞ւ պիտի ամչնան նոր սերունդը օժտելու հայկական անուններով, որպէսզի երբ արտասանենք, անմիջապէս մեր միտքերը սաւառնին մինչեւ Արցախ, Մասիս, Դուին, Մեղրի, Սասուն, Սեւան ու Վան. մինչեւ մեր պատմութեան հին ու նոր էջերը՝ Հայկ, Վարդան, Վահան, Արշաւիր, Անդրանիկ, Վահագն, Ժիրայր, Հրայր, Նայիրի, Տիգրան ու Տիրան, Վազգէն, Կարէն ու Արամ:

Վերջերս կարդացի յօդուած մը, որ կ'առաջարկէր Լեռնային Ղարաբաղի այն քաղաքներուն, աւաններուն եւ գիւղերուն անունները, որոնք թրքահունչ են, թրքերէնէ փոխել հայադրչմ անուններու, իսկ յօդուածագիրը կը կոչուէր եւրիդեղին չէ՞ր ըսել՝ նախ դուն քու անունդ փոխէ՛, հայացո՛ւր եւ ապա մտածէ ուրիչներու մասին:

Վերջերս, կը դիտէի խումբ մը մանուկներու, որոնք իրարու հետ կը խաղային եւ եթէ մէկը չճանչնար զանոնք եւ իրենց խօսակցութեան լեզուն եւ հարցնէր անուններնը, պիտի չփոթէր թէ ո՞ր ազգին կը պատկանէին հէգ երեխաները, ինչպէս՝ Լուչիանա, Վալանթին, Մայք, Ճո, Սինթիա, Նէնսի, Մալիսա, Թալիա, Սիտրա, Սերժ, Սթիվ, Անտրէ, Ժոզ, Փօլ. լաւ, ի՞նչ կ'ըլլար եթէ անոնք կրկին հայաչունչ քաղցրիկ ու համոզիչ անուններ՝ իրենց հերթին դեղեցկացնելու մեր նորադրոյ պատմութեան էջերը:

Կը բարձրանայինք լեռ՝ Մշոյ Առաքելոց վանքի կիսափուլ աւերակները տեսնելու. քիւրտ ճանապարհացոյցները ըսկսան պատմել, թէ այստեղ մարմնացած է զօրավար Անդրանիկ՝ իր զինուորներով: Քիւրտեր դեռ կը յիչեն Անդրանիկը, մենք՝ կ'երգենք Անդրանիկի մասին, քանի անմահ է սէրտնքը անոր. իսկ անոնք որոնք Անդրանիկի փոխան պիտի կոչուին Անթոնի կամ Անթոնինի, վա՛յ Անդրանիկի յիշատակին:

Իւրաքանչիւր օտար անունի ի տես կարելի է ըսել՝ ԱՄՍ ՀԱՆԳՋԻ ՁՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ:

ԱԻԵՏԻՍ ՌԱՋՄԻԿ

«Կանչ»

ԳԱՂՈՒԹՔ ԳԱՂՈՒԹ

ՊԷՅՐՈՒԹԻ ԼՕՒ–ի «Ա. Պուլղուրճեան» կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ ԼՕՒ–ի (Լիբանանի Օգնութեան Մաչ) Շրջ. Վարչութեան առողջապահական յանձնախումբին եւ Ա. Պուլղուրճեան ընկերարժչկական նախընդունչական թաժանմունքին, Ցուլիս 12-ին, դասախօսութիւն մը տեղի ունեցաւ, նիւթ ունենալով՝ «Մոլութիւններ՝ խըմիչք, ծխախոտ»: Օրուան դասախօսները էին թժիշկ Ռազմիկ Ոսկերիչեան եւ հիւանդապահուհի Սեդա Մխիթարեան: Բացման խօսքը կատարած է Ցասմիկ Մկրտչեան, որ անդրադարձած է մարմնին եւ առողջութեան վրայ ոդելից ըմպելիներու եւ ծխախոտի ազդեցութեան: Ապա, խօսք առած է Սեդա Մխիթարեան, որ ներկայացուցած է ծխախոտի գործածութեան պատճառած վնասները: Իրեն յաջորդած է տոքթոր Ռազմիկ Ոսկերիչեան, որ ծանրացած է ալքոլի գործածութեան վրայ, նչելով թէ չափաւոր գործածութեան պարագային, կարդ մը ոգելից ըմպելիներ, ինչպէս՝ գինին, օգտակար են:

որոնց մէջ նաեւ՝ Անին, ապա՝ ինչպէ՞ս կրնար ուրանալ պատմութիւնը, երբ հայուհի Անին չատ աւելի տէրն է Անիին, քան Ատաթիւրք, Թանսուն, Ժալիլը, Մուսթաֆա Քեմալը, թէ հայ ուխտաւորներուս մէջ գտնուող ոչ հայկական անուններու տէրերը՝ Վիքթորիան, Ռեհիկան կամ Մարիժանը: Եթէ, մեր՝ ուխտաւորներուս անունները ըլլային Վանա, Կարս, Կարին, Արարատ, Բերկրի, Ախթամար աւելի տիրող զգացումով պիտի չամբողջացնէի՞նք այդ ուխտագնացութիւնը եւ պահ մը այժմու բռնագրաւիչ ներուժ աւելի ազդու ճայնով պիտի չուչէի՞նք, թէ՝ այդ հողերուն երբեմնի եւ իսկական տէրերը այդ հողերէն հեռու կը գտնուին, տարագրուած են պարտադիր կերպով: Անի մայրաքաղաք ուխտի օրը, առաւել գոյացի, որ մեր անունները պատմութիւն ունին եւ եթէ կը պատակինք, որ մենք տէրն ենք մեր պատմութեան, ապա նաեւ՝ տէրը պէտք է ըլլանք մեր անուններուն: Մեր ծնողները ինչո՞ւ պիտի ամչնան նոր սերունդը օժտելու հայկական անուններով, որպէսզի երբ արտասանենք, անմիջապէս մեր միտքերը սաւառնին մինչեւ Արցախ, Մասիս, Դուին, Մեղրի, Սասուն, Սեւան ու Վան. մինչեւ մեր պատմութեան հին ու նոր էջերը՝ Հայկ, Վարդան, Վահան, Արշաւիր, Անդրանիկ, Վահագն, Ժիրայր, Հրայր, Նայիրի, Տիգրան ու Տիրան, Վազգէն, Կարէն ու Արամ:

Վերջերս կարդացի յօդուած մը, որ կ'առաջարկէր Լեռնային Ղարաբաղի այն քաղաքներուն, աւաններուն եւ գիւղերուն անունները, որոնք թրքահունչ են, թրքերէնէ փոխել հայադրչմ անուններու, իսկ յօդուածագիրը կը կոչուէր եւրիդեղին չէ՞ր ըսել՝ նախ դուն քու անունդ փոխէ՛, հայացո՛ւր եւ ապա մտածէ ուրիչներու մասին:

Վերջերս, կը դիտէի խումբ մը մանուկներու, որոնք իրարու հետ կը խաղային եւ եթէ մէկը չճանչնար զանոնք եւ իրենց խօսակցութեան լեզուն եւ հարցնէր անուններնը, պիտի չփոթէր թէ ո՞ր ազգին կը պատկանէին հէգ երեխաները, ինչպէս՝ Լուչիանա, Վալանթին, Մայք, Ճո, Սինթիա, Նէնսի, Մալիսա, Թալիա, Սիտրա, Սերժ, Սթիվ, Անտրէ, Ժոզ, Փօլ. լաւ, ի՞նչ կ'ըլլար եթէ անոնք կրկին հայաչունչ քաղցրիկ ու համոզիչ անուններ՝ իրենց հերթին դեղեցկացնելու մեր նորադրոյ պատմութեան էջերը:

Կը բարձրանայինք լեռ՝ Մշոյ Առաքելոց վանքի կիսափուլ աւերակները տեսնելու. քիւրտ ճանապարհացոյցները ըսկսան պատմել, թէ այստեղ մարմնացած է զօրավար Անդրանիկ՝ իր զինուորներով: Քիւրտեր դեռ կը յիչեն Անդրանիկը, մենք՝ կ'երգենք Անդրանիկի մասին, քանի անմահ է սէրտնքը անոր. իսկ անոնք որոնք Անդրանիկի փոխան պիտի կոչուին Անթոնի կամ Անթոնինի, վա՛յ Անդրանիկի յիշատակին:

Իւրաքանչիւր օտար անունի ի տես կարելի է ըսել՝ ԱՄՍ ՀԱՆԳՋԻ ՁՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ:

ԱԻԵՏԻՍ ՌԱՋՄԻԿ

«Կանչ»

ԱՐԵՒԱԴԱՐՁԱԾԻՆ ՊՏՈՒՂ ՄԸ՝ ԱԻՕՔԱՆ

Աւտոն արեւադարձային պտուղ մըն է, որ կենսաճիւքերով հարուստ է: Ան իրմէ ճամբայ կը կտրէ մինչեւ պնակդ հասնիլը:

Անհիւրընկալ լեռներուն մէջ գոյութիւն ունի պզտիկ դրախտ մը: Մեքսիքա-յի հիւսիս – արեւմուտքը, Միսսաքան նահանգին բարձրաւանդակներուն վրայ գոյութիւն ունին աւոքայի ամէնէն մեծ պարտէզները՝ 800 քառակուսի քիլոմեթր: Ընդարձակ դաշտեր կ'արտադրեն արժէքաւոր պտուղը: Զով բարձունքներուն վրայ հաստատուած, արեւադարձային կլիմայով օժտուած Մեքսիքայի այս չքնաղ աւոքայի աշխարհի արտադրութեան մէկ ութերորդը կը հայթայթէ:

ՀՆԱՐՔ ՄԸ

1960-ական թուականներուն ոչ մէկը կ'ուզէր սպառել աւոքայի հասուն տեսակը, որ անկանոն ծայրեր ունէր: Այս պտուղը վնասուած դարձնելու համար հնարք մը գործադրուեցաւ: Նախապէս այս հնարքին փարմանթիէ դիմած էր պնդանախճարին պարագային: Աւոքայի դաշտերուն չուրջը պահակներ դրուեցան այն ապաւորութիւնը ստեղծելու համար, թէ այս պտուղը մեծ արժէք ունի: Հետաքրքրուած՝ մշակները կրցան պտուղէն գողնալ: Այս ձեւով անոնք անդրադարձան, թէ ան շատ համեղ էր:

ՄԷԿ ՄԷԿ ՔԱՂՈՒԱԾ

Քաղուելէ ետք, աւոքաները մէկ մէկ կը ստուգուին զգուշութեամբ: Անոնք, որոնք գեղեցիկ, մեծ եւ կարծր են, կ'արտածուին աշխարհի չորս ծագերը: Անոնք կը ճամբորդեն» երկար ժամանակ, չորսհինգ շաբաթ, մինչեւ որ հասնին Եւրոպայի կամ Ասիոյ չուվաները: Պզտիկ պտուղները, որոնք աւելի հասուն եւ մեծ են, կը վաճառուին տեղական շուկային մէջ: Մեքսիքայի մէջ անոնք կը գործածուին տարբեր տեսակի թարմ ուտելիքներու մէջ, ինչպէս նաեւ աւանդական չոր բժշկութեան մէջ:

ԾԱՌ ՄԸ ՏԱՆ ՄԷՋ

Կրնաս տան մէջ աւոքայի ծառ մը ցանել: Պէտք ունիս աւոքայի կորիզի մը:

– Զայն լաւ մը մաքրէ:

– Երեք ատամնակրկիտներ անցուր անոր վրայ:

– Զայն գաւաթի մը ջուրի վրայ դիր:

– Կորիզին վարի բաժինը ջուրին մէջ պահէ:

– Քանի մը շաբաթէն կորիզը պիտի ծլի, եւ դուն պիտի կարենաս զայն թաղարի մը մէջ դնել:

ՕԳՏԱԿԱՐ ԴԵՂԱՀԱՏ ՄԸ ԱՍՓԻՐԻՆԸ

Մեծ պզտիկ դեղահատ մը կ'առնեք եւ մեր գլխուն ցաւը կամ տաքութիւնը կանցնի: Ասփիրինը հրաշիներ կը գործէ երկար ժամանակէ ի վեր...

ՁԵՐՄԱԿ ԴԵՂԱՀԱՏ ՄԸ

Եթէ դուն քանի մը դար առաջ ծնած ըլլայիր, մայրդ քեզի հաւանաբար ճերմակ ուռենիի կեղեւ մը տար դլխու ափդ դէմ: Այս ծառը կ'աճի ոտքերը ջուրին մէջ, առանց դժուարութեան: Հետեւաբար հին ժամանակներուն մարդիկ եղրակացուցած են, թէ ան բժշկական յատկութիւններ պէտք է ունենայ: Գիտութիւնը անոնց իրաւունք տուած է: 1899 թուականին գերմանացի գիտնական մը կրցած է օգտագործել ուռենիին մէջ գտնուող մոլեխիւլ մը՝ ասփիրինի առաջին դեղահատները պատրաստելու համար:

Ասիա ասէբիլսալիսիլիքը, որ կը գտնուի ուռենիին մէջ, կը պտուտի նաեւ «սպիրէէ» կոչուած ուրիշ բոյսի մը մէջ: Հոսկէ յառաջացած է ասփիրին անունը: Այս վայրի բոյսը կ'աճի խոնաւ վայրերու մէջ:

ԻՆՉՊԷՍԿԱԶԴԷ ԱՆ

Երբ դուն դլխու ցաւ ունենաս, քու մարմինդ կ'արտադրէ նիւթեր, որոնք կը դրդեն ջղային բջիջներդ: Անոնք ուղեղին նշան մը կը ղրկեն, եւ այս ձեւով կը յառաջանայ ցաւը: Ասփիրինը կը դադրեցնէ այս նիւթերուն արտադրութիւնը, եւ ուղեղին չի հասնիր ցաւին «լուրը»: արդիւնք՝ դուն չես ցաւիր: Գիտնականները տակաւին չեն գիտեր, թէ ասփիրինը ի՛նչպէս կ'ազդէ այս նիւթերուն վրայ: Սակայն ան կը յաջողի:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐ

Ասփիրինը դեղ մըն է: Պէտք չէ անհաւնիւ առել: Ան ասիտ մըն է (ասիտ ամէթիսալիսիլիք): Ան կրնայ դերզգայնութիւններ եւ ստամոքսի այրուածքներ յառաջացնել:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԼՈՍ-ԱՆՃԼԷԼԷՍԻ ՄԷՋ

«ԳՈՒՈՉԵԱՆ – ՋԱՔԱՐԵԱՆ – ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ

Սան Ֆրանսիսքոյի Հայ կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ, Յունիս 16-ին, տեղի ունեցած է «Գոտւզեան – Զաքարեան – Վասպուրականը» ազգային վարժարանի ամավերջի հանդէսը: Բացումը կատարած է ուսուցչուհի Կրէյս Անտոնեան: Շրջանաւարտներուն ուղղուած չնորհաւորանքի խօսք արտասանած է հոգաբարձութեանատենապետ Ռուստոմ Ազնթապըճեան: Օրուան խօսքը փոխանցած է տոքթոր Վահէ Մանուկեան: Կատարուած է մրցանակաբաշխութիւն եւ 14 շրջանաւարտներու վկայականներու յանձնում: «Հուսկ Բանք»ը արտասանած է տնօրէնուհի Երան Կարապետեան: Փակման խօսքով հանդէս եկած է Բարգէն Վրդ. Զարեան:

Այցելութիւն Դաւիթ Վարուժանի զաւկին. – Այս տարի, վարժարանին 8-րդ կարգի աշակերտները, իրենց դասատիրակին ընկերակցութեամբ, այցելած են Ծրէգնօ՝ Սողոմոն Թէհլիրեանի դամբարանը, Սասունցի Դաւթի յուշարձանը, Ուիլեըմ Սարոյեանի նուիրուած թանգարանը եւ Դանիէլ Վարուժանի զաւկին՝ Հայկ Վարուժանին: Աշակերտները ընդունելով Հայկ Վարուժան, զանոնք առաջնորդած է իր հիւրասենեակը, որուն պատերուն վրայ կախուած նկարները ցոյց տալով ըսած է. «Ասոնք բոլորն ալ իմ դործերս են: Այդ նկարը տղուս՝ Վարուժան Բ.ի նկարն է, իսկ միւսը՝ Թոռնիկս է, Վարուժան Գ.ը»: Հայկ Վարուժան իր մասին խօսելով ըսած է. «Ես հայրս չեմ ճանչնար, մայրս կ'ըսէր թէ ծնած եմ հօրս նահատակութեան օրը: Մակուխիւնս անցուցի որբանոցներու մէջ, 40-ական թուականներուն Ամերիկա եկայ, ամուսնացայ, զաւակներ եւ թոռներ ունեցայ, որոնք ներկայիս կ'ապրին Ամերիկայի տարբեր նահանգներու մէջ: Երկու տարի առաջ կինս մահացաւ եւ հիմա ես մինակս կ'ապրիմ այս տան մէջ»:

*
**

1700-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Էնսինոյի Ֆերահեան վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ, Յուլիս 20-ին, տեղի ունեցած է 1700-ամեակի նուիրուած տօնախմբութիւն եւ արուեստի ցուցահանդէս: Ներկայ եղած են 500 հանդիսականներ: Պաշտօնական յայտադրէն առաջ ներկաները առիթ ունեցած են դիտելու սրահին պատերն ու թեմը զարդարող արուեստագէտներ Սարգիս Պալտանուկեանի, Բիւզանդ Մէյմարեանի, Զեփիւռ Գարամանուկեանի եւ Անդրանիկ Աղաջանեանի Հայկական եկեղեցիներու, տաճարներու, ճարտարապետական բացառիկ արժէք ներկայացնող վանքերու նկարներն ու մանրակերտները, Հայ եկեղեցական եւ հանրային դէմքերու քանդակները: Հաղիսութիւնը վարած է Ափտտուհի Ղազարեան: Բանախօսած է Ռուբինա Փիրումեան, չեշտելով եկեղեցւոյ դերը մեր ազգային կեանքին մէջ: Գործադրուած է դեղարուեստական յայտագիր մը: Փակման խօսքը արտասանած է առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոս Մարտիրոսեան:

ԼՐԱՏՈՒ

ԹԻ ՒՆ 17 ԽԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ը.

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Երբ հանդարտութիւնը տիրեց, Հայկ Յօճասարեան ոտքի ելաւ եւ ըսաւ.

– Տե՛րք երեսփոխանք, ինչպէս պիտէք, օրակարգի խնդիրն է թիւ 17 լրտեսի մասին վարչութեան տեղեկատուութիւնը, ոստի կը հրաւիրեմ վարչութիւնը, որ իր տեղեկատուութիւնը ընէ:

Այս հրաւէրին վրայ Վարչութեան կողմէ տոքթոր Թէրզեան ոտքի ելաւ եւ հետեւեալ բացատրութիւնները տուաւ.

– Շերինեան էֆէնտի թիւ 17 խաֆիէի մասին իր հարցումը ընելէն անմիջապէս ետքը Վարչութիւնս քննութեան ձեռնարկած է եւ նախ եւ առաջ կանչած է զինքը, իր բացատրութիւնները լսելու համար: Շերինեան էֆէնտիէն խնդրեցինք որ իր յայտարարութիւնները գրաւոր կերպով եւս ընէ եւ ստորագրութիւնն ալ դնէ: Ապժեց եւ միայն քերանացի բացատրութիւններ տալով՝ յայտարարեց՝ թէ իր յաձախ համեմատ ներքին գործերու նախորդ նախարար Րէչէտ պէյի տօսիէին մէջ ժուռնալ մը գտնուած է «թիւ 17 պարիարքարանի խաֆիէ» ստորագրութեամբ, թէ ինքը ասկէ զատ բան մը չգիտէր, սակայն անճամբ քննութիւն մը պիտի կատարէ եւ արդիւնքը տեղեկագրէ մեզի: Չըսաւ նոյնպէս, թէ ինչ տեսակ թուղթեր են, որ Րէչէտ պէյի ձեռքը անցեր են: Քիչ մը ատեն անցնելէ ետքը Շերինեան էֆէնտի պէտք եղած բացատրութիւնները դարձեալ չկրցաւ տալ եւ ասկէ զատ ցոյց չտուաւ այն աղբիւրը, ուրկէ լսած էր այս խնդիրը: Թէեւ շատ խնդրեցինք, բայց յայտարարեց, թէ իր դասածներէն զատ ո՛չ մէկ նոր բացատրութիւն չունի:

Մենք նկատեցինք, որ շատ ծանր խնդրի մը առջեւ կը գտնուինք, ուստի ընդարձակեցինք քննութիւնը եւ հարցընելինք Պատրիարքարանի պաշտօնեաները եւ եկանք սա համոզման, թէ դրամագլուխ մը չկայ որեւէ դրութիւն պետութեան յանձնուած ըլլալու մասին: Աւելի ալ չդատական ընթացք, ամէն օր Պատրիարքարանի հետ յարաբերութեան մէջ եղողներ, խմբագիրներ ալ լսեցինք, բայց ճշդրիտ, համոզիչ փաստեր չկային:

Անուղղակի միջոցներ ձեռք առինք, պատուհաս մը, դուռ մը (??) գտնելու նպատակով ու վերջապէս այլեւս կատարելապէս համոզուեցանք, թէ այդպիսի մէկը գոյութիւն չունի Պատրիարքարանի չորեքանկիւնիին մէջ:

Ապահովութեան յանձնաժողովին տեսչին պրպտեցինք, պահպան թուղթ չգըտաք: Միայն պատճէնի խնդիր մը կայ, անճնական նամակի պարագայ մը: Պատրիարքը կը հրամայէ Պատրիարքարանի պաշտօնեաներէն մէկուն նամակ մը խմբագրել եւ բերել իրեն: Նամակը կը ղրկուի իր հասցէին, տակայն պատճէնը կը մոռցուի քարտուղարին քով ու անոր բաղմազբաղութեան պահուն մէկը կը վերցնէ այդ պատճէնը:

Հետեւաբար կու գանք մեր քննութեան արդիւնքը հոս պարզելով յայտնելու, թէ թիւ 17 խաֆիէի մը գոյութիւնը չէ հաստատուած:

Վարչութեան անդամ տոքթոր Թէրզեան այս յայտարարութիւնը ընելէ ետքը բացատրեց իր թիւնաթոռին մէջ: Ամէնուն նայուածքը ուղղուեցաւ Եդուարդ Շերինեանի վրայ, որ ամբաստանողի դիրքէն յանարդ զրպարտիչի աստիճանին կ'իջնէր, թէեւ ամէնքն ալ գիտէին, թէ յարգելի երեսփոխանին ամբաստանութիւնը հիմնաւոր էր եւ թէ Վարչութիւնն էր, որ կը սխալէր՝ ուրանալով թիւ 17 խաֆիէին գոյութիւնը:

– Խօսք կ'ուզեմ, – դոչեց Շերինեան:

– Խօսքը Շերինեան էֆէնտիինն է, – յայտարարեց աւետնապետը:

Շերինեան իր նիհար մարմինը ցցելով, տենդային չարժումով մը ոտքի ելաւ եւ գնաց դէպի բեմ, ուրկէ գրաւոր ճառ մը արտասանեց ու յայտարարեց, թէ Վարչութեան անդամներէն Եղիշէ Դուրեան Սրբազան, Պալաքեան վարդապետ, ինչպէս նաեւ Վահան Փափազեան եւ Տիրան Երկանեան տեղեկութիւն ունէին թիւ 17 խաֆիէին մասին, եւ անոնք ալ լսած էին, թէ ազգային պաշտօնաթուղթեր յանձնուած են Րէչիտ պէյի, տակաւին ինք իր հարցումը Ազգային Ժողովին չբերած, թէ ինք խնդիրը Ազգային Ժողովին հանեց այն պատճառով, որ Վարչութիւնը հապճեպով, առանց որեւէ քննութեան, հերքումի ձեւ հրատարակութիւն մը ըրած էր: Նոյնիսկ Տիրան Երկանեան մտերմաբար ըսած էր իրեն, թէ Րէչիտ պէյի թուղթերը Շէրիֆ փաշայի Իթթիհատի կեդրոնատեղին փոխադրուած ըլլալով՝ ինքը կրնայ ստուգել, թէ որեւէ ազգային պաշտօնապէր գոյութիւն ունի՞ անոնց մէջ:

Շերինեան իջաւ բեմէն եւ գնաց գրաւելու իր թիւնաթոռը: Շատ մը երեսփոխաններ, որոնք կարեւոր յայտնութիւններու կը սպասէին, յուսախար եղան:

Տոքթոր Թէրզեան ոտքի ելաւ եւ ըսաւ.

– Յանուն Վարչութեան կը հաստատեմ, թէ մենք, հաւաքաբար, իրապէս տեղեկութիւն չունէինք այդպիսի բանէ մը. մեր ընկերը՝ Վահան Փափազեան, կրնայ լսած ըլլալ, որ Պատրիարքարանի գործառնութիւնները կը տեղեկագրուին Բ. Դրան: Թերթերը արդէն ամէն բան գրած են: Մենք զաղտնիք չունինք. եթէ փաստացի բան մը գոյութիւն ունենայ, նոր քննութիւն մը կը բանանք:

Այս միջոցին տեղի ունեցաւ դէպք մը, որ տակնուվրայ դարձուց ժողովը եւ ռազմադաշտի մը վերածեց զայն:

Աւետնապետը կարդաց դրութիւն մը, զոր ստորագրած էին Ռ. Զարդարեան, Յ. Շահրիկեան, Բ. Զօրեան եւ որով հրատարակային բացատրութիւն կը պահանջէին Հմայեակ Արամեանցէն իր մէկ յայտարարութեան համար, թէ թիւ 17 խաֆիէն «Ազատամարտ»ի խմբագրութենէն կամ անոնց մօտիկ մէկէն է:

Հմայեակ Արամեանց, որ նախապէս իր պատասխանը գրաւոր կերպով պատրաստած էր, յանձնեց զայն դիւանին, որպէսզի կարդացուի:

Այդ պատասխանագիրը սակայն ուրիշ բան չէր, այլ բուռն ու նախատալի յարձակողական մը Դաշնակցութեան հասցէին ուղղուած, անոր անցեալ ու ներկայ գործելակերպը զատապարտող:

Զարդարեան եւ տոքթոր Փաշայեան բողոքեցին, որ փոխանակ ուղղակի պատասխան տալու՝ Արամեանց կարգ մը հայհոյութիւններ կ'ընէ իրենց կուսակցութեան: Ուրիշ դաշակցական երեսփոխաններ եւս ձայնակցեցան, եւ Արամեանցի գրին ընթերցումը աղմկալից ժխորի մը մէջ ընդհատուեցաւ:

Ընդհանուր աղմուկին մէջ կը լսուէր Զարդարեանի ձայնը, որ յուզուած ու բարկացած կը պոռար.

– Սրիկա՛յ, փոխանակ կատմակերպութեան դէմ հայհոյելու, ուղղակի պատասխանէ, թէ ո՞վ է խաֆիէն. մենք հոս իրրեւ Դաշնակցութեան անդամներ չէ, որ կը ներկայանանք, այլ իրրեւ «Ազատամարտ»ի խմբագիրներ եւ ազգային ներեսփոխան: Բերանդ կը պատռեմ, եթէ իծնի խաֆիէ ըսես. կա՛մ կը հաստատես ամբաստանութիւնդ, կա՛մ կ'ընդունիս, թէ ստոր զրպարտիչ մըն ես:

Իսկ Արամեանց իր սինիք պաղարիւնութեամբ եւ անտարբերութեամբ կը պատասխանէր.

– Հանդարտութեամբ խօսեցէ՛ք, սուրյով, սպառնալիքով գործ չի լմնար:

(Շար. 34)

ՓՈԽԱՆ ՅԱՂԿԵՊՍԱԿԻ

Տէր եւ Տիկին Արմէն եւ Իզապէլ Յովհաննէսեան եւ իրենց երեք զաւակները՝ Մարթին, Իվըլին եւ Մելիք եւ Անի 2500 ֆրանք կը նուիրեն «Յառաջ»ին իրենց քեռայրին՝

Զաւէն Գէորգեանի

մահուան առթիւ (Յուլիս 27)։



CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE

organisée par la

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

AU PROFIT DE L'ARMENIE

Vendredi 7 décembre

*
**

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Section d'Asnières

Au profit de la Colonie de Bellefontaine

Réservez votre soirée

du Samedi 20 octobre

GALA ARTISTIQUE ARMENIEN

avec l'**Ensemble folklorique arménien**

NAVASART

Danseurs, musiciens, chanteurs traditionnels

au Grand Théâtre d'Asnières.

*
**

La Section «TER-DAVTIAN» de Chaville de la Croix Bleue des Arméniens de France

organise

le Samedi 27 octobre

UNE SOIREE DANSANTE

A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

—ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ—

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ—ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն վերափոխման Ս. Աստուածածնի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8·45ին։
Պատարագ ժամը 10·30–ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԱՇԵԱՆ
կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի Առաջնորդ Հայոց Փարիզի
Պատարագի աւարտին՝ խաղող կ'օրհնուի։
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13, Բ. օր
վերափոխման։ Յիշատակ Մեռելոց։
Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի։
Կը պատարագէ՝
ՏԻՐԱՑՐ ՔՀՆՅ. ԳՐԼՐՃԵԱՆ
Պատարագի աւարտին՝ Հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Է Ս. Աստուածածնի
Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի։
Օրուան պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՉԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայից
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը։
Հաւատացեալներ որոնք օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կը–նայ ուղարկել Եկեղեցւոյս Դիւանատունը։

De passage en France, au cours d'un grand tour d'Europe organisé dans le cadre des festivités du 1700ème anniversaire de la christianisation de l'Arménie nous accueilerons pour un **SPECTACLE UNIQUE**

L'ENSEMBLE FOLKLORIQUE

DATEV

(danseurs âgés de 10 à 14 ans)

en l'ESPACE GARBIS MANOUKIAN
40, rue d'Arménie, 69003 LYON


VENDREDI 17 AOUT à 20 heures 30

Venez nombreux les applaudir également...

—— P.A.F. 50 F ——

Renseignements:
☎ M.C.A.V. **04.78.26.28.71**
(les après-midi)

Maison de la Culture Arménienne de Villeurbanne
Croix Bleue des Arméniens de France
Section de Lyon-Villeurbanne



le domaine de chamerolles

45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 hectares avec étang, hébergement en châlets tout confort pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F (selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.

Tél. : 02 38 32 99 75 — **Fax : 02 38 32 99 76**
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE

Home Arménien

MERCREDI 15 AOUT

FETE CHAMPETRE

10h: Messe solennelle Chapelle Saint-Jean
Célébrée par Monseigneur DARON GEREJIAN

A partir de 12h30: Bar & Buffet

Animation : **MARTEN YORGANTZ ● Danses traditionnelles**

107, Avenue Maréchal Lyautey
83700 Saint-Raphaël

Réservations et renseignements : au 04.94.19.51.50

les Coupons d'Alsace

21, av. d'Helvétie
25203 MONTBÉLIARD
Tél. 03 81 94 38 10

Z.I. Les Arbletiers
25400 AUDINCOURT
Tél. 03 81 35 51 93

65, avenue Jean Jaures
90000 BELFORT
Tél. 03 84 21 62 66



ՇՆՆԴԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԵՐԿԼԵԶՈՒ
ՁԵՐ ՀՐԱՒԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
ԴԻՄԵԾԷ'Ք «ՅԱՌԱՋ»Ի ՏՊԱՐԱՆԸ

ԽՆԱՄՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ,
ԱՐԱԳ ՅԱՆՁՆՈՒՄ

Տեղւոյն վրայ ճոխ խաթապոկ

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 7
MARDI
7 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·226 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.226

ԱԴՐԲԵՋԱՆ

ԱՅՐՈՒԲԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ, ԱԼԻԵԻ ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՂԱՐԱԲԱՂ

Վը Մոնտ» (Օգոստոս 5 / 6) Նաթալի Նուկայրէսի ստորագրութեան տակ, եր-կու դրութիւններ հրատարակած է, ո-րոնք կը վերաբերին կասպից ծովու հա-րստութեանց ազդեցութեան պայքարնե-րուն, Մոսկուայի ճնշումներուն Վրաս-տանի վրայ եւ վերջապէս Ադրբեջանի այրուբենին, Ալիեւի յաջորդութեան եւ այդ առնչութեամբ՝ Ղարաբաղի :

Այս վերջին գրութեան մէջ, կը հաղոր-դուի որ Օգոստոս 1-էն, ինչպէս գրած էինք մեր նախորդ թիւով, Ադրբեջան կը տօնարի 1939-ին Ստալինի կողմէ պար-տադրուած կիւրեղեան այրուբենէն եւ Լատինական այրուբենի : Ալիեւի ստորագրած հրովարտակը կը ճշդէ որ նպատակն է «ամրապնդել Ադրբեջանի անկախութիւնը, պաշտպանել իր պատ-մութիւնը և մշակութային արժէքները» : Յօդուածագիրը կը նշէ որ այս որոշումը նպատակ մըն է խորհրդային ժառանգու-թեան հետ : Կը յիշուի որ Ալիեւ գործա-դրութեան կը դնէ իր նախորդին՝ Ա. Էլ-չիպէյի փտրիայած երազը : «Մեծ դէպք մըն է, զոր կը տօնենք, կ'ըսէ Ալիեւ : 20-րդ դարուն, պարտաւորուեցանք քանի մը անգամ փոխել այբուբենը : Այս մէկը նպատակ՝ մերն է» :

Յօդուածագիրը կ'անդրադառնայ նաեւ Ադրբեջանի եւ Իրանի լարուած յարաբե-րութեանց եւ Ռուսաստանի որ կը ջանայ վերահաստատել իր ազդեցութիւնը երկ-րին վրայ :

Ինչ կը վերաբերի Ալիեւի յաջորդու-թեան 2003-ին, ինք որ 78 տարեկան է եւ վատառողջ, պիտի ուզէր իր աթոռը յանձնել տղուն, բայց, հոս ալ հատա-ծական պայքարներ կան : Նաթալի Նուկայրէս կը դրէ թէ Ղարաբաղի հար-ցին լուծումը ձախողութիւն մըն է Հ. Ալիեւի համար, որու արտաքին քաղաքա-կանութիւնը չատ արդիւնաւոր չէ եղած : ՆԱՏՕ-Սի-Ը-ի ջանքերը եւ անկէ ծնունդ առած Մինսկի խումբին համանախագահ-ներուն ճիգերը տեղ մը չյանգեցան :

Բայց, ինչ որ անընդունելի է այն յան-կերգն է զոր արեւմտեան լրագրողները կը կրկնեն օրն ի բուն, երբ այս հարցին մասին կ'արտայայտուին : Ակներեւ է որ իրենց միակ աղբիւրը ադրբեջանական է եւ կը դրուի Ալիեւի յաջորդութեան առ-թիւ. - «Բայց, Բաքուի մէջ, խմբակներու պայքարները սկսած են, հիմ ունենալով ազգայնական ճառեր Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱ-ՍԻՆ, ԿՈՐՍՈՒՄԱ ՇՐՋԱՆ 1994-ԻՆ Ի ՆՊԱՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ԸՆ ՀԱԿԱՀԵՌԵՑԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՈՀԱՄԱ-ՍԻՆ ՄԷԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԸ : ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ԸՍՏ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐՈՒ, ՀԱՅԱՐ ՄԵԾԱՒԱԼ ՊԱՏՃԱՌՈՒԱԾ Է ԵՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՁԱՄԲԱՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ ՆՇԱՆԱԾ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ, ՈՐՈՆՑՄԷ ՈՄԱՆՔ ՅԱՅՏՈՐ ԿՄՊՐԻՆ ՁԱՄԲՈՒՆ ՄԷՋՏԵՂԸ ԿՈՏՐԱԾ ԹԱՓԱԾ ՎԱԿՈՆՆԵՐՈՒ ՄԷՋ» :

Ոչ առաջին ոչ ալ, հաւանաբար, վեր-ջին անգամն է որ Ղարաբաղի հարցը այս ձեւով կը ներկայացուի : Հայաստանի դէսպանատուները, որոնք, որքան գի-տենք, մամուլի սպասարկութիւններ ալ ունին, պէտք եղած աշխատանքը չեն տա-նիր, որպէսզի տեւականօրէն ճշմարտու-թիւնները հետեւողաբար չխեղաթիւրուին :

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 4 / 6)

«ՄԵՂՐԻՆ ՅԱՆՁՆԵԼՈՒ ԹԵՄԱՆ ԳՈՑՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ» Կ'ԸՍԷ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Վարչապետ Ա. Մարգարեանի Սիւնիք այցին մարզպետ Ե. Բարսեղեան ըսած է թէ չնորհիւ Ազարակի պղինձ – մոլիպ-տէնի արտադրութեան, Մեղրիի խառն արտադրութիւնը այս տարի մօտ քառա-պատիկ աւելցած է : Սահմանային չուկա-յին բացումն ալ նպաստած է չրջանին կացութեան : Մեղրիի մէջ 10% հզօրու-թեամբ կ'աշխատի պահածոյի գործա-տունն ալ, բայց ունի բազմաթիւ հար-ցեր : Ինչ առնելով վարչապետ Ա. Մար-գարեան չեշտած է թէ չարժեր Մեղրին յանձնելու նիւթը չհարկել, որ արդէն գոյութիւն չունի եւ որուն վկայութիւնը կառավարութեան եւ մարզպետարանի աշխատանքն է : Ան աւելցուցած է թէ տարեվերջին կը սկսի Իրան – Հայաստան գազամուղին կառուցումը, իսկ մինչ այդ կը հաստատուի Սիւնիքի մարզին գար-գացման ծրագիրը :

Վարչապետը ըսած է տակաւին թէ Ղա-րաբաղը յանձնելու խօսք անգամ չի կըր-նար ըլլալ, իսկ Հոկտեմբեր 27-ի գաղա-վարութեամբ իշխանութեան բոլոր օղակ-ները չհազրզրուած են, որպէսզի բա-ցայայտուին կազմակերպիչները :

Պատուիրակութիւնը մեկնած է Լիճք ուր վարչապետը հողի սեփականաթուղ-թեր բաժնած է գիւղացիներու, ապա չըր-ջանին քանակի դունդերէն մէկը յատուկ արարողութեամբ կոչուած է Գ. Նժդեհի անունով :

*
**

ՕՏԱՐ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՀԱՅ ԱՒՈՑԵԱՆՆԵՐ

Եւրոպայի առաջնութեան մրցումնե-րուն որոնք տեղի ունեցած են Զաղրէպի մէջ, Ուկրանիոյ խումբէն նշանառու Ար-թիւր Այվազեան եւ Ռուսաստանէն Երջա-նիկ Աւետիսեան ոսկի եւ ազնաձի մետա-լի արժանացած են. իսկ Ռուսաստանի խումբէն Արտեմ Խաչիւեկով երրորդ հանդիսացած է :

*
**

ԱՐՑԱԽԻ ԵՒ ՍԻՒՆԻՔԻ ՄԵԼԻՔՆԵՐՈՒ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԸ

Գիտութեան ակադեմիային Արուեստի հիմնարկը վերջերս հրատարակած է Ար-տակ Ղուլեանի «Արցախ եւ Սիւնիքի մե-լիքական ապարանքները» գիրքը : Հոն փաստագրական նիւթերով ներկայաց-ուած են երկու նահանգներուն ժե. – ԺԸ. դարերէն պահպանուած պալատ – ամրոց-ները, միջնադարեան պալատական ճար-տարապետութեան յուշարձաններ : Նաեւ՝ Ականաբերդի, Գիւլիստանի, Խնձորեսկի, Ջրաբերդի եւ այլ ապարանքներու ճար-տարապետութիւնն ու չինարարական ար-ուեստը :

ՕՐ ՕՐԻՆ

ԱԴՐԲԵՋԱՆ 1-ՀԱՅԱՍՏԱՆ 0

Մարզական մրցումի մը արդիւնքը չէ խորագիրը· ան կու գայ գիրի, մշակոյ-թի մարզէն ուր մեր աւանդական ախոյե-նութեան ծուռ նայողին մուխը մարելու պատրաստ ենք մեծով ու պզտիկով : Օ-գոստոս 1-ին «Արմէնփրէս»ի կողմէ տըր-ւած լուր մը, սակայն, կը զօրէ հաստակեզ դիծ մը քաչելու մեր գերակայութեան հաւատքին վրայ : Նաեւ ամօթով նկատե-լու պարզուած տարբերութիւնը...:

Այդ լուրը հասած է ընթացիկ պատա-հարի մը սովորական ծաւալով· կ'ըսէ թէ Ադրբեջանի նախագահին հրամանագրով երկիրը Օգս· 1-էն անցած է լատինատառ այրուբենի գործածութեան, չքելով կիւ-րեղեանը : Անցքը, յայտնի է որ գիւրա-սահ չէ· հակառակորդներ, ընդդիմադիր-ներ կան, ինչպէս՝ փոփոխութիւնը ճշդե-նաժամու սկիզբը նկատողներ : Սակայն, նախագահ Ալիեւ «շատ ճիշդ» գտած է անցքը եւ լատինատառ այրուբենը «եա-րազատ»՝ ադրբեջաներէնին :

Լուրը չարադրողը առանց անդրադառ-նալու դանակը մեր վէրքին մէջ զարճը-նելու իր արարքին, աւելցուցած է տա-կաւին թէ Ադրբեջան Ի. դարուն երեք անգամ դիր փոխած է, արաբականէն անցնելով լատինականին, անկէ ալ կիւ-րեղեանին : Զլացուած է սակայն ամենա-կարեւոր տեղեկութիւնը· չէ ըսուած թէ այդ անցքերէն ամէն մէկուն ի՛նչպէս եր-կիրը փրկուած է «դանդուածային անգը-րագիտութեան» պէսէն զոր մեր ակա-դեմական – լեզուաբան – բանասէրներու մառախուղը ամէն առիթով կը ճօճէ որ-պէս դերադոյն սպառնալիք, դասական ուղղագրութեան անցքին :

Իսկ եթէ ադրբեջանական գիրի աչխար-հին մեծամեծերը նման սպառնալիք չեն տեսներ այբուբենի փոփոխութեան մէջ, որուն եռակի փորձառութիւնն ալ ունին, կը մնայ հետեւցնել մէկ բան· իրենք տէր են այդ անցքը առանց անդրագիտութեան անդունդը խմալու կատարելու մակար-դակին, ի տարբերութիւն Հայաստանի իրենց պաշտօնակիցներուն : Մեր հազա-րամեայ մշակութասիրութեան համբաւին մեր տգիտութեան ու պատեհապաշտու-թեան ձեռքով սրուած այս ապտակէն եաք, վ'արժէ անդրադառնալ երկրորդ կէ-տի մը· Ադրբեջանցիներուն քայլը՝ ուղ-ղագրութեան մը որ ապշդային ալ չէ, բուն խաթարումը սրբագրելու գործին չի վերաբերիր· քանի մը տառի գործա-ծութեան կանոնը փոխել չէ անոնց պար-տադրուածը : Այլ՝ ամբողջական այբու-բենի մը ուրիշով մը փոխարինումն է հարցը : Ծրագիր որ ազգային մտահոդու-թեան, արժէքներու դիտակցութեան, քաղաքացիական արիւթեան նման ազ-դակներու կողքին, հակայական աչխա-տանք ու նիւթական միջոցներ կը պա-հանջէ· մանաւանդ նկատի առած դիրի աչխարհի մը Իւ· զարու սահմանները :

Եւ ըսել որ Հայաստանի առաջին նա-խագահը իրրեւ թէ այդ ազգակներուն արժէքին դիտակից դէմք էր· մէկը որ իր բուն մասնագիտութեամբ առաջին անհանդուրժողը պէտք է ըլլար 70 տար-ւան ա՛յս բռնադատումին ալ : Այնոր յա-ջորդը, գոնէ այս գետնին վրայ, աւելի դժուար մեղադրելի է, քանի որ բաւա-կան անկեղծութեամբ կը խոստովանի հայերէնի խնդիրներու կլուածէն իր հեռաւորութիւնը :

Որքա՞ն պէտք է սպասել արդեօք որ-պէսզի Բաքուէն անուղղակի, այլ չատ տե-ղին կերպով տրուած ամօթանքը սրբուի ու այս մարզին հաչիւը գոնէ յապաղած հաւասարութեան մը յանգի : Դատելով՝ ջահուկարեդիրական յաղթապանծ յեռ-քայլէն, դժուար է վստահ ըլլալ որ տա-կաւին երկար տեղ մեր միաքն ու սիր-տը պիտի չկոչէ «Արմէնփրէս»ին Օգոս-տոս 1-ի նուէրը թէ «Ադրբեջանը հրա-ժեշտ է տալիս կիրիլիցային»...:

Թ. ԱՐՓԻ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՈՐՍԻՔԱՅԻ ԱՆԿԱԽԱՊԱՇՏՆԵՐԸ իրենց աւանդական «միջազգային օրերը» կազմակերպած էին Օգոստոս 4 - 5-ի չա-բաթավերջին, կղզիին պատմական մայ-րաքաղաքին՝ Գորթէյի մէջ : Ցետ դարձ մը ըրին Մաթիւեոնի համաճայնագրերուն վրայ եւ նախապատման դրին «քաղաքական բանտարկեալներու» ազատ արձակումը, խնդրոյ առարկայ չընելու համար այդ համաճայնագրերը : Քանի մը օր առաջ, Ներքին նախարարը՝ Տանիէլ Վայան կրկնած էր որ ներման հարցը օրակարգի նիւթ չէ : Գորսիքա Նացիոնալի պարագլուխը՝ Ժան - Կի Թարամոնի յայ-տարարած է. - «Ընդունած էինք յետա-ձգել ներման հարցի աւելի ուշ թուակա-նի, բայց, հիմնական պահանջ մըն է, որ երբեք չէ դադրած այդ ըլլալէ եւ այսօր գորսիքացի բանտարկեալներու ազատ ար-ձակումն է որ օրակարգի հարց է» : Շըր-վէնմանի (որ այս հարցին տրընչու-թեամբ հրաժարած էր Ներքին նախարա-րի իր պաշտօնէն) կուսակցութեան նա-խագահը՝ Ժ. Սաո ազգայնական Գորսի-քացիներու սպառնալիքը գատապարտեց, չէչտելով գորսիքերէնին պարտադրումէն եւ օրինաւոր իշխանութեան մը գիջու-մէն առ, այսօր ներման պահանջն է ա-հաբեկիչներու համար, ներառեալ նա-հանդապետ Էրինեաքի մարդասպաններուն եւ վաղն ալ, սահմանադրական հանրա-քուէի մը միջոցաւ, իրողութիւն դարձած անկախութեան մը չնորհումը պիտի ըլ-լայ :

ԻՍՐԱԷԼԱՑԻՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆ-ՑԻՆԵՐՈՒ միջեւ ակն ընդ ականի պայ-քար մըն է որ կը տարուի : Շաբաթավեր-ջին իրարու չնորհեցին փոխադարձ չար-ճախումները : Օգոստոս 4-ին, Պաղեստին-ցի մըն է որ չարճախում գործած է Իս-րայէլեան Պաչտպանութեան նախարարու-թեան մօտ իսրայէլացի զինուորներու վրայ, չուրջ տասը զինուոր վիրաւորե-լով, որոնցմէ մէկը ծանրօրէն : Իր տեսա-կին մէջ այս չարճախումը աննախընթաց էր : Փոխ վրէժը չուչացաւ անչուչա եւ Իսրայէլ հակայարճակման անցաւ, ար-դէն Շարոն ալ չայտարարած է որ իր ե-կիրը ոչ մէկ կարեւորութիւն կու տայ միջազգային հաւաքականութեան դատա-պարտումներուն :

ՌՈՒՍԱՍՏԱՆ տեղի տուաւ Հիւսիսային Գորէայի նախագահին բոլոր պահանջնե-րուն, անոր այցելութեան տոթիւ : Քիմ Եունկ – Իլ ինք օր առաջ, Յուլիս 26-ին ճամբայ ելաւ զրահապատ կառախումբով մը, զոր կ'առաջնորդէին երկու վայրա-չարժեր : Իրեն կ'ընկերանան 150 հոգի – խոհարար, բժիչկ, ծառայ եւ զինեալ պահակներ : Ամէն կայքի, մենաւէրը կը տուրգէր որ ներկայ են պահակազօրք եւ ռահիկանական չուներ : Գորէացի Մոս-կուա հասաւ Ուրբաթ, Օգոստոս 3-ին : Երկար ժամեր, ռուսական բոլոր կառա-խումբերը կեցած են, որպէսզի անցնի

(Շար·ը Գ. էջ)

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՅԻՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻՆ ՀԵՏ»

(Հեղինակ՝ ՅԱԿՈԲ ՁՈՂԱՔԵԱՆ)

ՀԱԼԷՊ – 2001

ԼԵՒՈՆ ՇԱՐՈՑԵԱՆ

Տանիմարքայի անդուզական հայասէր եւ բարեբարուհի Օր. Քարէն Եփփէի (1876–1935) նուիրուած հայերէն հրատարակութեան մը բացակայութիւնը ցայսօր՝ խնդրոյ առարկայ սկսեր էր ըլլալ միայն վերջերս: 1997–ի ամրան, երբ Հալէպի մէջ կը նշուէր բարեբարուհիին անունը կրող Ազգային Ճեմարանին 50–ամեակը, այդ առթիւ հրապարակ հանուած պատկերազարդ մեծածաւալ յուշամատեանին մէջ կ'ըսուէր արդէն, թէ Քարէն Եփփէի «կեանքն ու գործունէութիւնը համապարփակ կերպով ներկայացնող հայերէն մենագրութիւն մը չկայ տակաւին» (տե՛ս «Ճիւնամեակ Ք. Ե. Ազգային Ճեմարանի», էջ 29): Այս բացթողումը յաճախ չէր վրիպեր Հալէպ այցելող հիւր մտաւորականներու ուշադրութենէն ալ, որոնցմէ մին՝ պոլսահայ գրագէտ ու արձակագիր Ռ. Համաէճեան, իր խմբագրած «Մարմարա»ին մէջ արձանագրելու առթիւ հալէպեան իր տպաւորութիւնները, տեղ մը կը գրէր·

«Կանդ առի Օր. Քարէն Եփփէի դամբարանին առջեւ: Ան եւս, Յակոբ Օշականի նման, թաղուած էր Հալէպի Հայոց Ազգային գերեզմանատան մէջ: Եւ ափսկա փաստն է անոր հայացած ըլլալուն: Յարգանքով խոնարհեցայ դանիացի այս մեծ մարդասէրին յիշատակին առջեւ, չանալով պատկերացնել՝ թէ սա հողին տակ պառկած ազնիւ կինը ի՛նչպիսի փոթորիկներու մէջէն անցած էր, ի՛նչպէս իր կնոջական տաքուկ ձեռքը տուած էր այդ փոթորիկներէն տուժած դժբախտ մարդոց, մինչեւ որ վերջապէս հոս եկած էր ննջելու հողի մը տակ՝ որուն վերեւ հիմա արեւ կը չողար այլեւս եւ որու չուրջ մարդիկ երջանիկ կեանք մը կ'ապրէին:

... Բայց ես կը զարմանամ որ մինչեւ այսօր ոեւէ հայ պրող այս արտակարգօրէն բարի կնոջ կեանքին վէպը չէ գրած դեռ» (տես «Մարմարա», 2000, Մայիս 15):

Ցապաղած ու անհրաժեշտօրէն բաղձալի այդ գործն է ահաւասիկ, զոր յանդուգնօրէն իրականացուց Հալէպահայ վաստակաւոր կրթական մշակ եւ բանիբուն բանասէր Յակոբ Ձողաքեան, հրատարակութեան տալով «Քարէն Եփփէ հայ գողգոթային եւ վերածնունդին հետ» խորագրեալ ուշադրաւ եւ հետաքրքրական երկասիրութիւն մը: 168 էջերէ բաղկացած պատկերազարդ նորատիպ այս հատորը լոյս ընծայուեցաւ բոլորովին վերջերս, Հալէպի «Արեւելք» տպարանին, ու Յունիս 22-ին կայացած յատուկ ընդարձակ դէմի մը ընթացքին ալ դրուեցաւ ընթերցողներու տրամադրութեան տակ:

Քարէն Եփփէի նուիրուած հայերէն անդրանիկ այս մենագրութիւնը, որ լոյսին կու գայ անոր մահէն 66 տարիներ ետք, բարեդէպ զուգադիպութեամբ մը կը համընկնի հայասէր օրիորդին ծնունդեան 125-ամեակին: Այս դիտանկիւնէն ալ, խորհրդանշականօրէն, գործը վերածուած կ'ըլլայ տեսակ մը երախտադիտական արարքի՝ բոլոր այն օտար մարդասէրներուն նկատմամբ, որոնք Մեծ Եղեռնի տարափի օրերուն, կամ անկէ ետք, ձեռք երկարեցին տարագիր հայութեան ու ջանացին փրկել անոր «մնացորդաց»ը:

Անկասկած, Քարէն Եփփէ առաջնակարգ տեղ մը կը գրաւէ հայասէր օտարականներու փաղանգին մէջ: Ուրֆային Հալէպ՝ 3 տասնամեակներու վրայ երկարող անոր հայանուէր աշխատանքը չէ սահմանափակուած լոկ որբանոցամ գործունէութեամբ, այլ ունեցած է արտասովոր տարածքներ ալ: Նորատիպ հատորը, արխիւային վաւերաթուղթերու հիման վրայ ու թարմաթիւ վկայութիւններու մէկտեղումով, արտակարգօրէն բեղմնաւոր ու քիչ - ծանօթ այդ գործունէութիւնն է որ կ'առնէ լուսարձակի տակ ու տանիմարքացի մեծ հայասէրին կեանքին զանազան հանգրուաններուն ընդմէջէն՝ վեր կը հանէ անոր առաքելատիպ դիմագիծութիւնը:

Գիրքը առաջնորդող կարճ «Մուտք»ի մը մէջ, հեղինակը դիտել կու տայ որ Քարէն Եփփէի մասին օտար լեզուներով չա՛տ աւելի հրատարակութիւններ եղած են, քան հայերէնով: Այս առընչութեամբ ան կը յիշատակէ չորս գործեր, որոնցմէ երեքը կենսագրական ընոյթի վէպեր են, իսկ մէկը՝ մենագրութիւն մը: Վերջինը, դանիերէն լեզուէ հայերէնի թարգմանուած է Յասմիկ Կուրղինեանի կողմէ ու հրատարակուած Երեւան, 2000 թուականին, դառնալով Հայաստանի մէջ Քարէն Եփփէի նուիրուած առաջինակ գործը: Ի դէպ, տխուր է հաստատել, որ Հայաստանի մէջ Քարէն Եփփէն տասնամեակներ չարունակ անտեսուած ու մոռացութեան մատնուած է՝ գիտակցաբար թէ թիւրիմացաբար: Ամէնէն պերճախօս օրինակը Հայկական Սովետական Հանրապետարանն է, որուն 12 հատորներուն մէջ տող մ'իսկ կարելի չէ գտնել իր մասին...: Այս վրդովեցնող պարագան թերեւս պէտք է մեկնաբանել Օր. Եփփէի հետ անմիջականօրէն գործակցող հայկական չրջանակին (դաշնակցականներ) նկատմամբ Խորհրդային Հայաստանի սընուցած վերապահութեամբ: Միւս կողմէ, Սփիւռքի մէջ Քարէն Եփփէի մասին հրատարակուած նիւթերն ալ, առհասարակ, ունեցած են սահմանափակ ծիր մը ու չեն կրցած խուսափիլ զիրար կրկնելէ:

Ներկայ հատորին պատրաստութեան համար՝ Յակոբ Ձողաքեան ամէն բանէ առաջ նկատի առեր է տպագրեալ այն բոլոր գրութիւնները, որոնք կ'աղերսուին իր հերոսուհիին: Ասոնց վրայ, իբրեւ հում ատաղձ եւ սկզբնաղբիւր, ան աւելցուցեր է Հալէպի Ազգային Առաջնորդարանի դիւանատան պահպանող արխիւային այն թղթածրարը, ուր մէկտեղուած են Քարէն Եփփէի վարած «Կանանց եւ անչափահասներու պաշտպան հաստատութեան» կողմէ Բերիոյ Թեմի Առաջնորդարանին յղուած 123 նամակներ: Ան լայնօրէն օգտագործած է դանիացի օրիորդին որդեդիրներէն Միսաք Մելքոնեանի եւ Յարութիւն Սարգիսեանի անտիպ յուշերու տետրակներն ալ, ինչպէս նաեւ թաղում անստգիտ լուսանկարներ՝ հալէպահայ հանդուգնեալ հնահատաք Խորէն Փիրաւեանի անձնական արխիւէն:

***

Քարէն Եփփէ իր հայանուէր գործունէութիւնը ծաւալած ու հայութեան հետ կողք - կողքի, այլեւ սիրտ - սրտի ապրած է երկու քաղաքներու մէջ՝ Ուրֆա եւ Հալէպ:

20 տարեկան փափկասուն ուսուցչուհի մըն էր ան Դանիոյ մէջ, երբ մամուլի միջոցաւ արձագանգներ կը հասնէին իրեն՝ համիտեան կոտորածներու տարափներէն (1895 - 1896): Ու ինչպէս կը գրէ Ձորաքեան՝ «Քարէն Եփփէի համար անծանօթ ժողովուրդին այս ողբերգութիւնը օրըստօրէ անհատական ցաւի, մտայկումի եւ տառապանքի պատճառ կը դառնար: Իր օրաւուր մտահոգութեան ու մտասեւեռումին առարկան էր քրիստոնեայ այս ժողովուրդին ապրած գողգոթան: Նոր բաստիրտ օրիորդը հոգեկան ծանր կացութեան մէջ կ'իյնայ» (էջ 7):

Քարէն Եփփէ հայութեան օժանդակելու չերմ վախճաքէն մղուած, նախ կը դիմէ Պերլին՝ Եոհաննէս Լեփսիուսին, որ դինք աշխատանքի կը հրաւիրէ իր հիմնած ռազմի պահու մը մէջ. մեծդի, լեռնային անտառ, ելեկտրախառն զանգուածի բեկորի մը նման, լայն ուսերու վրայ խոչոր գլուխով մը, լերկ գանկով, լայն ու ամուր ճակատով, պեխով, սրածայր մօրուքով կզակին վրայ. հայու աչքեր՝ ակնոցներու տակ ծածկուած. կարճատես, այլ խաղաղասէր, լի հոգ խորհուրդով: Հազիւ յիսունը անց, թէեւ կերպարանքով աւելի տարէց՝ գաւառացիի, գիւղացիի երեւոյթով. դանդաղաշարժ, պիտի ըսէիք՝ ակամայ փոխուէիժ ու սըրբագրութիւն իր հոգեկան չարժունեթեան, անսպառ կենսունակութեան, կորովին, աչխուժին: Ինազաղ՝ առաջին տպաւորութեամբ. յոյլ գրեթէ, պահ մը եաք խանդարուելու եւ խանգաւառուելու սահմանուած: Աւելցուցէք՝ իր թեւերուն լայն չարժումները. աւելցուցէք՝ բարձրաձայն, առողջ, կարկաչուն ծիծաղը եւ խորունկէն եկած թնդուն իր ձայնը այս բոլորին վրայ. պետեղեցէք բաղմատարր այս զանգուածը բարեսիեան մը, անհուն դուրգուրանքի հոսանուտի մը մէջ, հայրական հոգածութեան մը գեղումին մէջ, եւ դուք կ'ունենաք Կիւրճեանը:

Չեմ գիտեր ինչո՛ւ կ'երեւակայեմ գինք արձանախմբի մը կեդրոնը մէկէն հոգի առած, գանգուածային իր կերտուածքով, որուն, թեւերէն, ուսերէն, զգեստի բոլոր մասերէն կախուած ըլլային դուրգուրանքի մանուկներ, տղայ ու աղջիկ ա-չակերտներ, ընդհանուր ծիծաղի ու խանդիխուն հայրգումներու մէջ, որոնց կ'իչխէ ան իր հատանութեան տաք խօսքովը կամ ծիծաղի լայն ալիքովը·

– Տղա՛ք, տղա՛ք...

Կիւրճեան աղմուկ էր, իր մուտքը դէպղդապին թմբկահարութիւն՝ խմբագրատունէ մը ներս, գուարթութիւն ու չարժում՝ գաւառասրահներէ ներս եւ ընտանի ու հաճելի ներկայութիւն՝ ամէն չրջանակի համար, մտաւորական թէ ժողովրդական:

Վերջին հանդիպումս. քառասնամեակ մը առաջ, Սկիւտար, դիչերային դասախոսական հաւաքոյթի մը, պատերազմի առաջին ահասարսուռ ամիսներուն, երբ հայ բժիչկներ, հիւանդապահուհիներ կը պատրաստէին Պոլսոյ թաղերուն մէջ, Բերա եւ Սկիւտար յատկապէս, Օսմանեան հայրենիքին համար:

Ի՛նչ հայրենիք· արիւնի մէջ խրած ու արիւն լակող հայրենիք...

Մեծ է բազմութիւնը, յոգնախառն գո-

Գերման Արեւելեան Միսիոնարութեան մէջ: Այս Միսիոնարութիւնը 1897-ին Ուրֆայի մէջ որբանոց մը հիմնած էր, 250 հայ որբերով: Ք. Եփփէ դրամական առաքումներ կ'ընէ այդ որբանոցին, սաներ կ'որդեգրէ այնտեղ ու վերջապէս 1903-ին, ի հեճուկս իր ծնողքին ընդդիմութեան, Ուրֆա կը հաստատուի, որպէս ուսուցիչ եւ խնամատար յիչեալ որբանոցին: «Ան արդէն 27-ամեայ չափահաս ու զարգացած օրիորդ մըն էր, իր դործին հանդէպ ունեցած հաւատքով կը վարակէր իր ունկնդիրները, արտակարգ խելացի էր, ունէր կառավարելու չնորհք ու խօսքէն գործի անցնելու մեծ կարողութիւն» (էջ 13):

«Միս (օրիորդ) Եփփէ չուտով հայերէն կը սորվի, կը դրէ Ձորաքեան: Ուրֆայի բարբառին ու դրական արեւմտահայերէնին խառնուրդ մըն էր իրը, որ այնքան հաճելի կը հնչէր տանիմարքացի օրիորդին չրթներէն»: Միաժամանակ, պաշտօնապէս «Միս Եփփէ» կոչուող օրիորդին անուան չուրջ հայկական չրջանակներէ ներս կը հիւսուի փաղաքչական բառախաղ մըն ալ, որ գինք կը դարձնէ... «Միս եփող մայրիկ»: Ժողովրդական սոսկ պարզունութիւնը այդ դրոյցը կը հիւսէր՝ հաստատապէս համոզուած ըլլալով որ դանիացի թարերարուհին չարունակ սէր եւ հոգատարութիւն կը ցուցաբերէր հայ աղէտեալ մանկանց հանդէպ ու «միս կ'եփէր» անոնց...:

Քարէն Եփփէ մչտապէս Ուրֆա կը մընայ Ա. Աչխարհամարտի օրերը: Ականատես ու մասնակից կ'ըլլայ քաղաքի հայ բնակչութեան հերոսամարտին (1915 Հոկտեմբեր), իր տան մէջ գաղտնօրէն կը պահէ եւ ստոյգ ձերբակալութենէն կը փրկէ 50 հայորդիներ, մինչդեռ կ'որոնէին օգտակար ըլլալու Ուրֆա հանդող անօթի - ծարաւ հայ տարագիրներուն: Չորչեան կը նչէ որ «ան կ'ուղէ պրծի մղձաքաղաքը գտնուող օտար հիւպատոսները որպէսզի իրենց պաչտպանութեան տակ առնել Հայերը, բայց ոչ ոք ոչինչ ըսել կը կարողանայ», մինչ «Հալէպի ամերիկեան եւ գերմանական հիւպատոսներուն յղուած իր բողոքագիրներն ալ անպատասխան իր մնան» (էջ 25 - 26): Ցետոյ կը սկսի Հայոց վիճակին մասին մանրամասն տեղեկագիրներ ուղարկել Հալէպ, Անգլիոյ հիւպատոսին: Ու երբ 1917-ին Տանիմարքա կը վերադառնայ, հո՛ն ալ «գիրքը ձեռք կ'առնէ եւ յօդուածներով ու դասախոսութիւններով իր վկայութիւնները կը փոխանցէ արեւմտեան աչխարհին: Իր հանդիպումներուն, ելոյթներուն ու տեսակցութիւններուն մէջ կը չեչտէ վայրկեան առաջ Հայերուն օգնութեան ձեռք երկարելու անհրաժեչտութիւնը, կ'աչխատի օր առաջ Հալէպ հասնիլ հայ խլեակներուն օգտակար ըլլալու համար: Ձորաքեան, նկատել կու տայ որ՝ «իր բարքերով, սովորութիւններով ու կենսաձեւով հայութեան կապուած ու բարեյաղող հայութեան կերպով ինքզինք հայ համարող այս օրիորդը պարզապէս ինքզինք իր տան հայրենիքին մէջ աքսորուած ու բանտարկուած կը զգար» (էջ 35):

(Մնացեալը յաջորդով)

Երեքշաբթի, Օգոստոս 7, 2001, Թիվ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՎԱՔՈՒՄ Է

ՊԱՏՄԱԿԱՆ ՕՏԱՐԸ

Ֆիլմ 17

Ֆիլմ 17-ով մենք ուզում ենք ներկայացնել մի քանի հետաքրքիր դեպքեր, որոնք պատահել են մեր ժողովրդի կյանքում: Նկատի ունենք ոչ թե մեծ իրադարձությունները, այլ մարդկանց կյանքի այն դրվագները, որոնք ոչ միայն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդել են մեր ազգի ճակատագրի վրա, այլև ունեն ինքնուրույն գեղարվեստական արժեք:

Ֆիլմ 17-ի հերոսները ոչ միայն մեր ժամանակակիցներն են, այլև մեր ընկերները, որոնց հետ մենք ամեն օր հանդիպում ենք մեր կյանքի ընթացքում: Նրանք ապրում են մեզ հետ միևնույն քաղաքում, միևնույն փողոցում, միևնույն շենքում, նրանք մեր հարևաններն են, նրանք մեր ծանոթներն են, նրանք մեր ընկերներն են

(Շար. Ա. Էջէն)

Գործադիրն կառաչարը: Դիմաւորուած է մեծ չուքով եւ կարմիր մեխակներով: Մասլինեան վերջին երկրին նախագահը չաս դուրս չելլեր եւ այն գոր Փիոնկեան–կի քարոզչութիւնը «21-րդ դարու արեւը» կ'որակէ, այս անգամ մինչեւ Մոսկուա գնաց դինամթերք ապահովելու համար: Պուտինի հետ հանդիպումէ մը ետք, նոյն ձեւով պիտի վերադառնայ: Մինչ այդ, ծաղկեպսակ մը դրած է Լենինի դամբարանին, ինչ որ Ժորժրդային Միութեան քայքայումէն ի վեր ոչ մէկ պետական դեկավար ըրած էր:

ՌՈՒՍԵՐը, մեծամասնութեամբ նպաստաւոր են ռուսական գործերու քաչուելուն Ձէյէնկայէն, ըստ էքօ տը Մոսքու ճայնասփիւռի կայանի մէկ հարցախոյզին: Հարցաքննուած անձերուն 69%-ը կողմնակից են հակահարեկչական արշաւին դադրեցման: 77%-ան ալ կ'ուզեն որ Ձէյէնկա այլեւս մաս չկազմէ Ռուսաստանի դաշնակցութեան:

ՎԻԼԻՓէՆԹի ցուցահանդէսներու վարձին մէջ Օգոստոս 4-ին եւ 5-ին, Եհովայի 100 հազար վկաներ իրենց համագումարը կազմակերպած էին, երկու ուրիշներ ալ տեղի պիտի ունենան Լիոն եւ Պորտօ: Առնք կ'ուզեն համոզել որ ապդանդ չեն: Շարժումը հիմնուած է 1831ին Ամերիկա, գալստեանական վարդապետութենէ մը որ Քրիստոսի վերադարձին կը սպասէ: Կը կարծուի որ 6 միլիոն են աչխարհի վրայ, քանիցս աչխարհի վախճանը հռչակած են եւ կը պնդեն որ միայն Եհովայի կամքը յարգողները դրախտի պիտի արժանանան: Ձեն ծխեր, որեւէ վկայ սեռային յարաբերութիւն չի կրնար ունենալ ամուսնութենէն առաջ, արիւնափոխութիւնը կը մերժեն եւ այլն, եւ այլն: Ֆրանսայի մէջ ազանդ կը նկատուին, բայց, ոչ՝ ԱՄՆ:

ՏՐՈՒԱԹԻՈՑ կաթողիկէ նուիրապետութիւնը քննադատած է կառավարութիւնը Լա Հէյի Պատժական Միջազգային դատարանին հետ իր գործակցութեան համար: 1995-ին, Սերպերուն դէմ տարած իրենց յաղթանակին ոգեկոչման առթիւ, Օգս. 5-ի, այդ դատապարտումը կ'ընեն կառավարութեան ուղղուած նամակի մը մէջ, ուր կը չեչտեն թէ նուաստացած կը զգան եւ անպատուուած Լա Հէյի մեղադրանքներէն:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Գեղամ եւ Սօնա Թորոսեան 1000 Ֆր. կը նուիրեն «Յառաջ»ի թարգաւառման իրենց եղբօր զաւկին՝

Հարոլտ Գաբրիէլեանի

կանխաւալի մահուան տարելիցին ի յիշատակ:

De passage en France, au cours
d'un grand tour d'Europe
organisé dans le cadre des festivités
du 1700ème anniversaire
de la christianisation de l'Arménie
nous accueilerons
pour un **SPECTACLE UNIQUE**

L'ENSEMBLE FOLKLORIQUE

DATEV

(danseurs âgés de 10 à 14 ans)
en l'ESPACE GARBIS MANOUKIAN
40, rue d'Arménie, 69003 LYON
VENDREDI 17 AOUT à 20 heures 30
Venez nombreux les applaudir
également...
—— P.A.F. 50 F ——
Renseignements:
☎ M.C.A.V. **04.78.26.28.71**
(les après-midi)
Maison de la Culture Arménienne
de Villeurbanne
Croix Bleue des Arméniens de France
Section de Lyon-Villeurbanne

Date à retenir

La Section «HELEN PUZANT»
d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS
DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une **SOIREE DANSANTE**
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre «Gaïdzag's»**

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

—ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ—

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8·45ին:
Պատարագ ժամը 10·30–ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԱՇԵԱՆ
կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի
Առաջնորդ Հայոց Փարիզի
Պատարագի աւարտին՝ խաղող կ'օրհնուի:
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր:
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13, Բ. օր
Վերափոխման: Ցիշատակ Մեռելոց:
Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի:
Կը պատարագէ՝
ՏԻՐԱՑՐ ՔՀՆՑ. ԳՐԼՐՃԵԱՆ
Պատարագի աւարտին՝ Հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»:

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԽՍԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Վերափոխումն Ս. Աստուածածնի:
Ժամերգութիւն ժամը 9·30–ին:
Պատարագ ժամը 10·30–ին:
Ցաւարտ պատարագի Խաղողօրհնէքի աւանդական արարողութիւն:
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր:
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13
Ցիշատակ Մեռելոց:
Ժամը 10–ին պատարագ ապա հոգեհանգստեան պաշտօն «Վասն համօրէն ննջեցելոց»:

ՎԱՐԱԳԱՑ Ս. ԽԱՉ ԱՐՆՈՒՎԻԼ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի:
Ժամերգութիւն ժամը 9·45–ին:
Պատարագ ժամը 10·45–ին:
Կը պատարագէ հոգեւոր հովիւ՝
ՄԵՍՐՈՊ Ա. ՔՀՆՑ. ԺԱՄԿՈՉԵԱՆ
Ցաւարտ պատարագի կը կատարուի խաղողի աւանդական օրհնութիւն:

Ս. ՑԱԿՈԲ — ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն է Ս. Աստուածածնի
Այս առթիւ Լիոնի Ս. Ցակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի:
Օրուան պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՉԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայից
Ցաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը:
ԾԱՆՕԹ.– Առնք որոնք կը փափաքին այս առիթով խաղող նուիրել, թող հաճին տեղեակ պահել Մայր Եկեղեցւոյ Գիւանատունը:
Հեռաձայն.–
04 91 77 84 70

ՄԱՐՍԷՑԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Ժամերգութիւն ժամը 8·30–ին:
Հանդիսաւոր պատարագ ժամը 9·45ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԼՐՃԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն խաղողոյ» աւանդական արարողութիւնը:
ԾԱՆՕԹ.– Առնք որոնք կը փափաքին այս առիթով խաղող նուիրել, թող հաճին տեղեակ պահել Մայր Եկեղեցւոյ Գիւանատունը:
Հեռաձայն.–
04 91 77 84 70

ՍԷՆ–ԼՈՒ — Ս. ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Պատարագ ժամը 10–ին:
Խաղողօրհնէք ժամը 11·45–ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՑ. ՏԻՏԻԵԱՆ
ԾԱՆՕԹ.– Խաղողի կամ փոխան խաղողի, նուէրները կը ստացուին Թաղականութեան մօտ:

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris

du jeudi 4 au lundi 8 octobre

à l'occasion de la Béatification de

Mgr. IGNACE MALOYAN

Archevêque de Mardine, martyr en 1915.

le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ASSOCIATION ARMENIENNE
D'AIDE SOCIALE
Home Arménien

MERCREDI 15 AOUT

FETE CHAMPETRE

10h: Messe solennelle Chapelle Saint-Jean
Célébrée par Monseigneur DARON GEREJIAN
A partir de 12h30: Bar & Buffet
Animation : **MARTEN YORGANTZ • Danses traditionnelles**
107, Avenue Maréchal Lyautey
83700 Saint-Raphaël
Réservations et renseignements :
au 04.94.19.51.50

ԱՐՁԱԿՈՒՐԳԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ	100 ՖՐ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ	80 ՖՐ.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ	75 ՖՐ.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ	75 ՖՐ.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՍՓԻԹՈՒՔԻ ՄԷՋ	75 ՖՐ.
ԵՒ	
«ՅԱՌԱՋ - 50» (Տպագրուած 50-ամեայ հանդիսածուէն)	120 ՖՐ.

Գիրքերը «ՅԱՌԱՋ»ի

Թղթատարի ծախքը՝ 30 Ֆր., հատոր պէտք:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

ՉՈՐԵՔՇԱԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 8
MERCREDI
8 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS

TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70

E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթաթերթի առաքում) — Հատը : 6,00 Ֆ·

C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·227

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

77e ANNEE — N° 20.227

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒՆ ԱՅՑԻՆ ՄԱՍԻՆ

ՀՁՊ ՏԵՂԵԱԿ ԷՐ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Օգոստոս 6 / 7)

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԻՋ ՀԱՅԵՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

Բաքուէն հաղորդուած տեղեկութեան համաձայն, Օգոստոս 4-ին Ադրբեջանի հեռուստական ընդհանուր ալիքով հայ պինուորականներ ձերբակալուած են։ Կ'ենթադրուի թէ անոնք իրենց զօրամասէն առանց արտօնութեան հեռացած եւ պատահաբար հոն յայտնուած են։ Բաքուի ազրիւրին համաձայն հայ պինուորը եւ ապան փորձած են ինքնաչարժ գողնալ, բայց տեղի բնակիչներուն միջամտութեամբ չեն յաջողած։

***

ՎԱՅՑԻ ՄԷՋ ԱՆՏԱՌԻ ՀՐԴԵՀ

Օգոստոս 3, Ուրբաթ կէսօրէ ետք վայրի մէջ անտառի հրդեհ ծագած է եւ տեղւոյն վրայ հրշէջ ուժերու բացակայութեան պատճառով օդնութեան եկած են չրջակայ զօրամասերու ուժերը։ Հրդեհը տարածուած է աւելի քան երկու հեկտար տարածութեան վրայ։

***

ԵՐԵՒԱՆ – ԳԱՀԻՐԷ ՆՈՐ ԹՌԻՉՔՆԵՐԸ ՍԿՍԱԾ

Հայկական օդային գիծերու Տուրոլեւ 134 օդանաւով մը Օգոստոս 4-ին սկսած են երեւան – Գահիրէ նոր թռիչքները։ Առաջին թռիչքով մեկնած են 18 ճամբորդներ եւ մամուլի ներկայացուցիչներ։ Վերադարձին օդանաւը բերած է հինգ հոգի։ Թռիչքը տեղի կ'ունենայ չաբաթը երկու անգամ։

***

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԻ ՀԱՄԱԼԻՐԸ ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ

Օգոստոս 5-ին Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ օծուած ու պաշտօնանքի վերաբացուած է Արագածոտնի մարզին մէջ Սաղմոսավանքի վանական համալիրը, որուն նորոգութեան համար հինգ տարիէ ի վեր աշխատանքներ կը կատարուին։ Նորոգութեան գործը կատարած է «Երկիր եւ Ջահկոյք» կազմակերպութիւնը։ Արարողութեան ներկայ եղած են Թեմի առաջնորդարանէն Վարդապետ Վրդ· Մինասեան, որ յիշած է նոյն վանքին մէջ ապրած կրօնաւորները որոնցմէ եկեղեցին վերջին նորոգողը եղած է Խրիմեան Հայրիկը։ «Երկիր եւ Ջահկոյք»ի կողմէ արտայայտուած է Մեսրոպ Արք· Աշճեան եւ հուսկ՝ Գարեգին Բ.։ Բացումին յաջորդած է Տաթեւ Արք· Սարգսեանի մատուցած պատարագը։

Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՄՐԱՊՆԴԱԾ Է ԴԻՐՔԸ

Ազգային Ժողովրդական Միութեան (ԱԺՄ) նախագահը Վազգէն Մանուկեան որ վերջերս թիւրախ եղած էր իր ղեկավարած կուսակցութեան ընդդիմադիրներուն, Օգոստոս 4-ին ապահոված է քաղաքական խորհուրդին լայն աջակցութիւնը։ Կուսակցութեան ղեկավար այդ մարմինին 46 անդամներէն 32-ը թեր քուէարկած է գործադիր խորհուրդին դուրս նետելու առաջարկին, այդպիսով անզօրացնելով նախագահին դէմ յարձարուած ճակատը։

Իսրայէլի Պաշտպանութեան նախարարութիւնը հրապարակած է եօթը «պղեսթինցի ահաբեկիչներու» անունը, որ փոխանցած է պաղեստինեան իշխանութեան, որպէսզի ձեռնարկէ անոնց ձերբակալութեան։ Իսրայէլ կ'ըսէ թէ մասնակի ցանկ մըն է միայն, պատրաստուած համաձայն Սէ–Ի–Ա–ի անօրէն՝ ճորճ Թէնէթի կարզադրութեանց։ Միւս կողմէ, Իսրայէլեան բանակը ամրապնդած է այն շրջափակումը, զոր հաստատած էր Ա–ստրյորդանանի հինգ վլխաւոր քաղաքներու չուրջ։ Ոմբակոծութիւններն ալ կը չարունակուին։

Իրան քաղաքական տադնապի մէջ է եւ այդ տադնապը պատճառ եղաւ, որ յետաձգուի նախագահ Խաթամիի իշխանութեան գլուխ անցնելու արարողութիւնը, նախատեսուած Օգոստոս 5-ի համար։ Տադնապին պատճառը եղան Խորհրդարանի բարեփոխիչները, որոնք մերժեցին ընդունիլ Օգոստոս 4-ին, Սահմանադրութեան Պահապաններու Խորհուրդի նոր կազմը։ Երդման արարողութիւնը պէտք է տեղի ունենայ Պահապաններու Խորհուրդի 12 անդամներու ներկայութեան։ Առնց կէսը (իրաւագէտներ) կը նչանակուի Խորհրդարանին կողմէ իրաւական իշխանութեան պետին առաջարկով։ Այս պետը ներկայիս Այաթոլա Մահմուտ Հաչեմի Շահրուտին է։ Միւս կէսը կը նչանակուի Հանրապետութեան առաջնորդին կողմէ, այսինքն՝ Այաթոլա Ալի Խամենէի։ Շաբաթ, աննախընթաց դէպք մը պատահեցաւ, երբ երեսփոխանները մերժեցին Այաթոլա Շահրուտիի նչանակած իրաւագէտներէն երեքը, պահանջելով որ Այաթոլան վերաքննէ իր նչանակումները։

Ռուսական զօրքերը չրջափակման ենթարկած են Չէչնիոյան այն մասամասնութեամբ, որ անկախապաշտները զինուորական գործողութիւններու կը ճեռնարկեն 1994 – 1996-ի պատերազմին ատեն իրենց տարած յաղթանակին 5-րդ տարեդարձին առթիւ։ Լուսարձել ալ հաստատուած է Գրոզնի, քաղաքապետարանի երեւելին ալ արգիլուած։

Ամերիկեան Այպենհաուէրի կայնամի փապուղիին մէջ ծագած հրդեհի մը զոհ դացած են հինգ հոգի, երկու կառքերու բախումին հետեւանքով։

Պոլիվիոյ նախագահը՝ Հիւգօ Պանզէր իր հրաժարականը տուաւ Օգոստոս 6-ին։ 75 տարեկան, նախկին մենատէրը իշխանութիւնը յանձնեց իր փոխ – նախագահին, առողջական պատճառներով (թոքի խլիրդը տարածուած է լեարդին)։ Պոլիվիա լատին Ամերիկայի ամէնէն ազքատ երկիրն է։ Պանզէր իշխանութեան գլուխ եկած էր 1971-ին, պետական հարուածով մը եւ նոյն ձեւով ճամբու դրուած 1978-ին։ Կրկին իշխանութեան գլուխ անցած էր 1997-ին ընտրութիւններու ճամբով։

Պէրլինի Մէջ կառուցուելիք ողջակիզման նուիրուած յուչարձանին չուրջ մեծ գայթակղութիւն մը ծագած է, որովհետեւ հանգանակութեան սահմանուած հանրապղերուն վրայ հսկայ տառերով գրուած է· – «Տէն հոլոքոսթ հաթ էզ նիչ կէկէպն», այսինքն՝ ողջակիզումը էզ նիչ կէկէպն» ունեցած։ Աւելի փոքր երեք տեղի չէ ունեցած։ Աւելի փոքր տառերով, աւելցուած է հանրապղին վրայ· – «Դեռ կան մարդիկ որոնք այդպէս կ'ըսեն։ Քանի տարիէն, կրնան բամասնալ։ Ուրեմն նուիրատուութիւն մը ըրէք

Երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքները, Յուլիս 27 – Օգոստոս 3 էջմիածնի մէջ հանդիպումներ ունենալէ ետք Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու միաբանակից կրօնաւորներու հետ, վերադարձան Պոլիս։ Գարեգին Բ. անոնց այցին մասին հարցումներու պատասխանելով ըսած է թէ միասին քննարկած են 1700-ամեակի առընչուած հարցեր, նաեւ «որոշ չհասկացողութիւններ որոնք տեղ էին գտել վերջին ժամանակներում»։ Ուրախութիւն յայտնած է որ բոլոր սխալ ընկալումները, հասկացողութիւնները հարթուած են եւ վերահաստատուած՝ Աթոռներու միջեւ եղբայրական, գործակցական ոգին· «միասիրտ, միասիրտ, միախորհուրդ պիտի շարունակենք մեր ծառայութիւնը մեր եկեղեցւոյ եւ մեր հաւատացեալ ժողովրդին» ըսած է Գարեգին Բ.։

Ակնարկուած տարակարծութիւններէն, անհամաձայնութիւններէն է եկեղեցական կանոնադրութեան վերաբերողը· այդ մասին Կաթողիկոսը ըսած է թէ այդ կանոնադրութեան համար յանձնախումբ մը նչանակուած է որ նախագիծ մը պատրաստած է· այդ նախագիծը ներկայացուած է թեմերու առաջնորդներուն, եպիսկոպոսներուն, որպէսզի քննարկեն եւ իրենց տեսակէտները ներկայացնեն Գերագոյն հոգեւոր խորհուրդին։ Ներկայիս աշխատանքները այդ փուլին մէջ են· եթէ առաջարկները, տեսակէտները ներկայացուին, անոնք քննութեան կ'ատենուին Գերագոյն հոգեւոր խորհուրդին կողմէ որ ապագային – եկեղեցական ժողովի թուական կ'որոշէ եւ այդ ժողովը պատշաճը կը տնօրինէ։

Ինչ կը վերաբերի Սեպտեմբեր 25-ին Յովհ. Պօղոս Բ-ի Հայաստան այցին, արդեօք ան, ինչպէս ուրիչ տեղեր ըրած է, ներողութիւն կը խնդրէ՞ լեհահայութեան բռնի դաւանափոխութեան, կաթոլիկէ դարձնելուն համար։ Գարեգին Բ. պատասխանած է թէ այդ այցին չրջանակներուն մէջ եղբայրական սիրոյ ոգին տրական պիտի ըլլայ, ուստի, կարելի չէ նախապէս ըսել թէ պապին ուղերձը, պատգամը ինչ բնոյթ կ'ունենան։

Զրոյցին վերջին կէսը կը մատնանչէ 1700-ամեակի տնօրինութիւններուն ժողովուրդին ոչ այնքան ոգեւոր մասնակցութիւնը։ Կաթողիկոսը այդ հանգրուանը վերանորոգումի, վերակառուցման, վերարժեւորման սկիզբը կը նկատէ հայրենիքի ու Սփիւռքի մէջ, աւելցնելով· «Մենք արդէն իսկ զգում ենք այն աշխուժութիւնը որ 1700-ամեակը ստեղծել է ինչպէս մեր ժողովրդի կեանքից հեռս, այնպէս էլ օտար էքիստոնեայ էոյր եկեղեցիների շրջանակներում»։

Հայութիւնը հաշտութեան յանձնախումբին կազմութիւնը բաւական լարուած հակազդեցութիւններու պատճառ եղաւ, նիւթ դարձած է վէճի մը այն առընչուած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան։ Յանձնախումբին հայ անդամներէն երկուքը, Վ. Գրիգորեան եւ Ա. Մխրանեան ըսած են թէ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ մը տեղեակ էր յանձնախումբին կազմութեան, այդ նպատակով Վիէննայի մէջ տարուող դաշտնի բանակցութիւններուն։ Նոյնիսկ համաձայնութիւն գոյացած է որ նախաձեռնարկները եւ այդ անդամը հանդիպում ունենան նիւթին մասին խօսելու համար, բայց նախքան այդ, նոյն կուսակցութեան Բիւրոն յայտարարութիւն մը հրապարակելով դատապարտած է յանձնախումբին կազմութիւնը։

Հ. Յ. Դ.-ի Երեւանի բանբերը Գ. Մանուկեան հերքած է այս պնդումները, ըսելով որ կուսակցութիւնը նախօրօք տեղեակ պահուած չէ գործի բանակցութիւններուն եւ թէ անկարելի է որ Բիւրոյի անդամ մը տեղեակ պահով հանդերձ, կուսակցութիւնը մութի մէջ ձգէ այդ մասին։ Ան աւելցուցած է թէ յանձնախումբին հայ անդամները պարզապէս կը փորձեն արուեստական կերպով ընդլայնել չրջանակը այն անձերուն որոնք կը վաւերացնեն նախաձեռնութիւնը· մինչդեռ, Հայաստանի մեծ կուսակցութիւններէն չատեր դէմ են անոր։

Ներհայկական աւելորդ այս հակազրութիւնը առանց աւելի ծաւալելու վերջ կը պտնէ վստահաբար, եթէ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ մը տեղեակ պահած ըլլալու պնդումին տէրերը հրապարակեն անոր ինքնութիւնն ալ· պնդումներն ու հերքումները այն աստեն միայն կրնան յստակ իմաստ առնալ։

ՏԻՐՈՒՆԻ

ԱՐԹՕ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ցաւով իմացանք որ Կիրակի, Օգոստոս 5-ին, իր մահկանացուն կնքած է Արթօ Գուլումճեան, մկրը այն նուիրեալ անձերէն, որոնք իրենց երիտասարդական օրերէն սկսեալ գործօն դեր խաղացած են դաշնակութիւս կեանքին մէջ։

Կանուխէն մտած Հ. Յ. Դ. չարքերը, Նոր սերունդէն, Դաշնակցութեան վարիչեան չարքերէն մինչեւ Ալֆորվիլ, իր մասնակցութիւնը բերած է հանրային թէ կուսակցական աշխատանքին։ Հիմնադիրներէն էր Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տան։

Արթօ Գուլումճեան համեստ ու ապնիւ նկարագրի տէր, լուռ աշխատող մը եղած է, հեռու ցուցամոլութենէ։

Մեր ցաւակցութիւնները իր այրիին՝ Տիկին Մակի Գուլումճեանի, զաւակներուն եւ եղբօր՝ Ալեքս Գուլումճեանի։

Ցուղարկաւորութեան մանրամասնութիւնները տես՝ Դ. էջ։

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԻՋ

«ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՀԱՅ ԳՈՂԳՈՒԹԱՅԻՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻՆ ՀԵՏ»

(Հեղինակ՝ ՅԱԿՈԲ ՋՈՂԱՓԵԱՆ)

ՀԱԼԷՊ – 2001

ԼԵՒՈՆ ՇԱՒՈՑԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

Քարէն Եփփէ Հալէպ կը հաստատուի 1920-ին: Բազմաթիւ թղթակցութիւններով նախ կը փորձէ կապ հաստատել եւրոպական եւ միջազգային կազմակերպութիւններու հետ՝ ապահովելու համար անոնց նիւթական, բարոյական ու քաղաքական աջակցութիւնը հայ գաղթականներուն: Այս թղթակցութեանց որպէս արդիւնք՝ կեանքի կը կոչուի «Հայերու Դանիացի Բարեկամներ» ընկերութիւնը, պիւտճէ կը գոյացնէ եւ նիւթապէս կը սկսի սատարել իրեն: Բայց մեծագոյն իրագործութիւնը այն կ'ըլլայ, որ 1921-ին Ազգերու Լիկան Ժընեւի մէջ որոշում կու տայ եւ Մերձաւոր – Արեւելքի հայ որբահաւաքման ու գաղթականութեան տեղաւորման գործին «Լիազօր Կոմիսէր» կը նշանակէ Օր. Քարէն Եփփէն ու այդ մասին կը հեռագրէ Հալէպ՝ անճամբ իրեն ու պատկան իշխանութեանց: Իր այս կարեւոր ու պաշտօնական հանգամանքով, Քարէն Եփփէ այնուհետեւ կը սկսի վայելել գործելու ազատութիւն, կ'ունենայ նիւթական լայն հնարաւորութիւններ ու ձեռք կը բերէ քաղաքական ուժ կ'ըլլայ: Բացառիկ տուեալներ, զոր ամբողջովին պիտի օգտագործէր ան՝ ի նպաստ Սուրիա հաստնող հայութեան տարագիր զանգուածներուն:

Քարէն Եփփէի հալէպեան գործունէութիւնը եղած է բազմաճիւղ եւ բազմարդիւն: Իր աշխատանքներուն ամէնէն հանրայայտը՝ աւերնագործութեան աշխատանոցն է, ուր գործի հրաւիրած է աչ բազում որբեւայրիներ, եւմոուտի աղբիւր հայթայթելով անոնց: Այնտեղ աշխատցուներ են Ուրֆայի, Այնթապի եւ Մարաշի ժանեակները, զոր Քարէն Եփփէ կը յաջողէր վաճառքի հանել Եւրոպայի ու Ամերիկայի մէջ: Կը վկայուի, որ 200 օսմանեան ոսկիով սկիզբ առած այս գործը յետագային կ'ունենայ 2000 օսմանեան ոսկիի պտոյտառելի դրամագլուխ մը եւ նոյն համեմատութեամբ ալ սպառում: Աշխատանոցը կը բանի 20-ական թուականներէն մինչեւ 1947:

Երկրորդ հիմնական ու նշանակալից առաքելութիւնը, որուն գլուխը կը կանգնի Քարէն Եփփէ, «կանանց եւ մանուկներու պաշտպանութեան գործ»ն է, այլ անուանումով՝ «Ազատարար Միսիոն»ը:

Ծանօթ է որ Եղեռնի օրերուն հազարաւոր հայ որբեր որդեգրուեցան սուրիական անապատի պետեւի ցեղախումբերուն կողմէ ու մնացին անոնց մօտ իբրեւ ծառայ, գերի, հովիւ, կին կամ աղախին: 20-ական թուականներուն Հալէպի մէջ չատ աշխոյժ չարժում մը սկսեր էր փընտռելու այդ որբերը, «մէկ հայ՝ մէկ կարմիր ոսկիի փոխարէն» նշանարանով: Զիաւոր ու գինեալ հայ հրոսախումբեր իսկ կազմուեր էին այդ օրերուն, եւ որոնք թափանցելով անապատին խորերը կ'ազատագրէին հայ որբերը ու զանոնք կը վերադարձնէին իրենց հարազատ ցեղին ծոցը...: Այս դժուարին ու վտանգաւոր գործն է որ կը կոչուի «Ազատարար Միսիոն», եւ որուն գլխաւոր կազմակերպիչներէն մին եղած է Քարէն Եփփէ, իր որդեկիր Միսաք Մելքոնեանի ձեռնտուութեամբ: Այս պարագան գրեթէ անծանօթ մնացած է հայ պատմագրութեան ու կը խորհինք որ նորատիպ հատորին հայթայթած հետաքրքրական տեղեկութիւնները այդ մասին՝ նոր լոյս կրնան սփռել ժամանակաշրջանի պատմական անցքերուն վրայ: Զոլաքեան դիտել կու տայ որ «Ազատարար Միսիոնը իր ներկայացուցիչներն ու գործակալները կ'ունենայ հիւսիսային Սուրիոյ տարբեր բնակավայրերուն ու քաղաքներուն մէջ: Ասոնք օրը օրին տեղեկութիւններ կը հաւաքեն հոս ու հոն յայտնաբերուած Հայերու մասին: Ազատագրման գործին մէջ Միսաք Մելքոնեանի հետ կը գործեն Յակիմ Յակոբեանը (յետոյ՝ Խաչատուր Ա. Քհնյ. Կիրակոսեան), Ռուբէն Հերեանը, խումբ մը սասունցի զինեալներ եւ ուրիշներ» (էջ 53): Յետոյ կը մէջբերէ Օր. Եփփէի անմիջական գործակիցներէն՝ ազգային ծանօթ գործիչ եւ մտաւորական Միհրան Հերարդեանի մէկ վկայութիւնն ալ, ուր կ'ըսուի թէ «Օր. Ֆ. Եփփէ ձեռնհասօրէն կազմակերպեց այս գործը՝ կայաններ եւ գործակալներ նշանակեց Սուրիոյ զանազան եւ ի մասնաւորի սահմանային շրջաններուն մէջ եւ մինչեւ 1928 թուականը ազատագրեց չուրջ 2000 հայ կիներ եւ երկսեռ պատանիներ»:

Ազատագրուածներու ստուար մեծամասնութիւնը Հալէպ կը բերուի ու կը տեղաւորուի Քարէն Եփփէի հիմնած վերանաքաղաք - կայանին մէջ: «Բոլոր եկեւորներուն կը տրուէր պէտք եղած նպնդեղէնը, բժշկական խնամքը, հագուստ - կապուստ, կը ստուգուէր անոնց ինքնութիւնը ու անոնց անուանացանկը կը ղրկուէր թերթերուն, եկեղեցիներուն եւ հայկական միութիւններուն, որպէսզի հարազատները գտնեն իրենց կորուսեալը» (էջ 55): Այդ օրերու Հալէպի Առաջնորդը՝ Արտաւազդ Արք. Սիւրմէեան ակնատեսի իր վկայութիւնները փոխանցելով երեւոյթին մասին, կը գրէ որ «գրեթէ առանց բացառութեան, ազատագրուածներու դէմքերն ու ձեռքերը կտաւած էին: Մանչերուն քիթին ծայրը եւ ալ ձեռքերուն վրայ անպայման կար կապոյտ նշանը: Թշուառութեան բոլոր վիճակները տեսնող այս պետեւիացած Հայերով ու մանաւանդ Հայուհիներով լեցուեցաւ Հալէպը, ու այդ զարհուրելի «կապոյտ»ը այլեւս դատակնիք մը մնաց անջնջելի՝ իրենց ցեղին վիճակուած եղեռնին» (էջ 50):

Քարէն Եփփէ նիւթապէս օժանդակած է ո՛չ միայն անապատէն ազատագրեալներուն կամ իր հիմնած որբանոցին անչափահաս տղոց, այլեւ առհասարակ բոլոր հայ կարիքաւոր երախաներու կրթութեան ու դաստիարակութեան գործին: Նորատիպ հատորը կը նշէ որ «1926ին ըղձրոցական կարիքներու համար իրեն դիմող աներու թիւը 1000-ի կը հասնի: Իւրաքանչիւր աշակերտի համար Քարէն Եփփէ, միայն իբրեւ կրթաթոշակ, մէկ օսմանեան ոսկի կը վճարէր, բացի կօշիկէն ու հագուստէն, գրենական պիտոյքներէն ու դասագիրքերէն, բժշկական խնամքէն ու դեղերէն» (էջ 91):

Դանիացի օրիորդը, որ ի տարբերութիւն այլ միսիոնարներու, զերծ էր կրօնական ու զաւանական նախապաշարումներէ, ազատագիրներու դաստիարակութեան մէջ կարեւոր դեր վերապահած էր Հայ Եկեղեցւոյ: Իր մօտ նկատուող կրօնական լայնախոհութեան, այլեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ նկատմամբ իր դրսեւորած անօրինակ փարումին հետազբրքրական մէկ ապացոյցն ալ այն նամակն է, զոր յղած է ան 1922 Դեկտեմբերին՝ Հալէպի օրուան առաջնորդական փոխանորդ Ցարութիւն Քհնյ. Եսայեանին: Նամակէն ի յայտ կու գայ, որ Քարէն Եփփէի ու Ազգային Առաջնորդարանին միջեւ համաձայնութիւն գոյացեր էր՝ որպէսզի հայ քահանաներ, հերթաբար, կրօնաբարոյական դասեր աւանդեն հաւաքման կեդրոններուն մէջ: Մերիններըը թերացեր էին իրենց պարտականութեան մէջ եւ խուսափեր...: Հո՛ս է որ Քարէն Եփփէ իր վերդովումը կը յայտնէր նամակով մը, կը սպառնար դիմել մինչեւ իսկ Սահակ Կաթողիկոսին ու ի միջի այլոց կ'ըսէր. «Վերջին անգամ ըլլալով պիտի խնդրէի, որ հաճիք անհրաժեշտ հրահանգը տալ, որպէսզի ամէն Շաբաթ երեկոյ քահանայ մը այցելէր մեր որբանոցը եւ կրօնի դասը տար (Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ չինութեան (1927 - 1933):

Քարէն Եփփէի ուշագրաւ ծառայութիւններէն մէկը կ'ըլլայ նաեւ հայկական դիւզակներու հաստատումը Հիւսիսային Սուրիոյ մէջ, Եփրատ գետի ափունքին: Արդարեւ, կիլիկիոյ վերջնական պարպումէն ետք (1923) հայ գաղթականներու մեծաթիւ զանգուածներ հասեր էին Հալէպ ու ֆրանսական հոգատար իշխանութիւններուն համար լուրջ հարց էր տնոնց տեղաւորման անհրաժեշտութիւնը: Քարէն Եփփէն է դարձեալ որ պիտի գլխաւորէր այս հրատապ հարցով, Հայոց համար դիւղեր հաստատելով Եփրատի հովիտին մահմանամերձ շրջաններուն մէջ, Ռագգայի չուրջբոլորը: Թէլ Սիմէն, Խրպէթ էլ Ռըզ, Շարպ Պետրոս ու Թինա կոչուած դիւղերը, այսպիսով պիտի դառնային վերապրող հայութեան նոր կայքերը, ու ատոնց շրջակայ հողային խոպան հսկայ տարածութիւնները, հայ մշակներու բահ ու բրիչով՝ կարճ ժամանակուան մէջ պիտի վերածուէին կանոնաւոր նախագիծով ծանծկուած բերրի դաշտերու...:

Ի դէպ, հայ գիւղակներու հաստատման մասին խօսելու առթիւ, Ց. Զոլաքեան նկատել կու տայ որ վերոնշեալ Խրպէթ էլ Ռըզ գիւղին մէջ «կը թացուի որբանոց մըն ալ, որ կը դրուի Օր. Ենի Ենաչնի (Ֆ. Եփփէի օգնականը - Լ. Շ.) խնամքին ու հոգատարութեան տակ: Որբանոցը շրջան մը կը պատսպարէ 60 - 70 որբեր» (էջ 120): Մեր տրամադրութեան տակ եղող վաստահելի այլ աղբիւր մը կը կատարէ սակայն տարբեր հաստատում մը. - «1927-էն մինչեւ 1931, Յակիմ Յակոբեան վարիչ - տնօրէնն էր Միս Քարէն Եփփէի անունով հիմնուած որբանոց - ապարակին, որ կը գտնուէր հայասէր բարերարուհիին հիմնել տուած Խրպէթըլս գիւղին մէջ: Միս Եփփէի որբանոց - ապարակին մէջ, իր կողքին ունենալով 18-25 տարեկան շուրջ 60 չափահաս որբեր, Յակիմ Յակոբեան, բա՛ցի վարուցանէ, պարտիզամշակութենէ եւ ապարակային գանազան արտադրութիւններու պատասխանատուութենէն, ամէն իրիկուն հայերէնի եւ Հայոց պատմութեան դաս կու տար եւ գրել - կարդալ կը սորվեցնէր չափահաս որբերու խումբին, եղբայրական զուարդուրանք եւ համբերատար ոգի ցուցաբերելով անոնց հանդէպ» (տե՛ս Վարդէս Տօնապետեանի «Մարուքթաչունչ»ը, Մ. Նահանգներ, 2000, էջ 351):

Ց. Զոլաքեան տակաւին կը պատմէ որ Քարէն Եփփէ կը սիրէր հայրենակից որդիներուն մէջ հաւաքական հարսանիքներ կազմակերպել: Այդպիսի յուզիչ պահ մը կատարուեր է 1928 Նոյեմբերին Խրպէթ էլ Ռըզ գիւղին մէջ, հանդիսապետութեամբ Հալէպի Առաջնորդ Արտաւազդ Ծ. Վրդ. Սիւրմէեանի, որ օրհնած է ամուսնութիւնը 8 հայ զոյգերու, բոլորն ալ անապատէն ազատագրեալներ: Այս հաւաքական պսակին միա՛կ կնքահայրն ալ եղած է Յակիմ Յակոբեան...: Գրագէտ Սիմոն Սիմոնեան այդ հարսանիքին պատմական լուսանկարէն ներշնչուած՝ պիտի գրէր հետեւեալը. – «Զորեցած ոսկորները չի՛զ, մի՛ս, մո՛րթ համան, կենդանի չո՛ւնչ ստացան, հո՛գի առին, վերադարձան կեանքին ու հարսանիք ըրին անապատին մէջ, իրակա՛ն հարսանիք՝ իրակա՛ն անապատին մէջ, ուր մորթուեր էին իրենց հայրերն ու մայրե՛ր...: Մե՛ծ հարսանիք մը եղաւ առիկա, աւելի՛ փառաւոր, քան Աբրահէս արքային եւ Սաթենիկ իշխանուհիին հարսանիքը, երբ ոսկի ու մարգրիտ տեղացին երկնքէն» (էջ 133):

Քարէն Եփփէ գրեթէ ամբողջ կեանք մը ապրելէ ետք հայութեան հետ, դառնալէ ետք վկան անոր «գողգոթային եւ վերածնունդին», իր աչքերը կը փակէր Հալէպ, 1935 Յուլիս 7-ին: Իր փափաքին ու կտակին համաձայն, յուղարկաւորութիւնն ու թաղումը կը կատարուէին հայկական ծէսով եւ մարմինը հողին կը յանձնուէր Հալէպի Հայոց Ազգային պանթէոնին մէջ: «Զիս թաղեցէք մեր գերեզմանատան մէջ, մեռելս Տաճիմաքա չդրկէք...», ըսեր էր չուրջիններուն, հոգեվարքէն քիչ առաջ:

Աւելի քան տասնամեակ մը յետոյ (1947–ին), Օր. Եփփէի հիմնած այրիանոցին տարածքը մասնաւոր կարգադրութեամբ «Հայերու Դանիացի Բարեկամներ» ընկերութեան կողմէ կը փոխանցուէր Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանին, որ իր կարգին ձեռնամուխ կ'ըլլար այդ կալուածք յատկացնելու նպատակաւոր դպրոցի մը, որ պիտի կոչուէր «Քարէն Եփփէ Ազգային Ճեմարան»: Եւ այդպիսով, ինչպէս կ'եզրափակուի նորատիպ հատորը, «Նուիրականացաւ իր անունն ալ իր սիրած ազգին սերունդներուն մէջ»:

Հալէպ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՐԱԽՈՒՆԲԻ ՀԱՐՑԵՐ

ՓՈԹՈՐԻԿ՝ ՎԻՓԹՈՐ ՀԻՒԿՈՅԻ ՈԳԻԻՆ ՇՈՒՐՋ

«ԼԷ ՄԻԶԵՐԱՊԼ» ՎԷՊԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՁՐՈՑԹ ԿԸ ՊԱՏՃԱՌԻ ՎԻՓԹՈՐ ՀԻՒԿՈՅԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐՈՒՆ

Վիքթոր Հիւկոյի գլուխ գործոցը՝ «Լէ Միզերապլ» (Թշուառները) տարիներու ընթացքին բազմաթիւ առիթներով վերարտադրուած է իբրեւ երաժշտահան թատերախաղ, թատերախաղ, ժապաւէն, հեռատեսիլի յայտագիրներու շարք եւ նոյնիսկ՝ գծանկարներով պատմութեան գիրք: Անոնցմէ ոչ մէկը ընդվզում պատճառած է 19-րդ դարու գրագէտին ժառանգորդներուն: Սակայն ներկայիս Հիւկոյի վէպին Ֆրանսերէն չարունակութիւնը զայրոյթ կը պատճառէ Հիւկոյի ծոռներուն, այն աստիճան, որ անոնք նոյնիսկ կը պահանջեն արգիլել նոր վէպին տարածումը:

Բազմաթիւ երկիրներու մէջ, ներառեալ՝ Միացեալ – Նահանգներ, անոնք պիտի չկարենային իրենց պատը պաշտպանել, որովհետեւ «Լէ Միզերապլ» հեղինակի իրաւունքը սպառած է հէս դար առաջ: Սակայն ֆրանսական օրէնքը յատիտեան կը պաշտպանէ արուեստագէտնե-




(Բ. եւ վերջին մաս)

եանը (յետոյ՝ Խաչատուր Ա. Քհնյ. Կիրակոսեան), Ռուբէն Հերեանը, խումբ մը սասունցի զինեալներ եւ ուրիշներ» (էջ 53): Յետոյ կը մէջբերէ Օր. Եփփէի անմիջական գործակիցներէն՝ ազգային ծանօթ գործիչ եւ մտաւորական Միհրան Հերարդեանի մէկ վկայութիւնն ալ, ուր կ'ըսուի թէ «Օր. Ֆ. Եփփէ ձեռնհասօրէն կազմակերպեց այս գործը՝ կայաններ եւ գործակալներ նշանակեց Սուրիոյ զանազան եւ ի մասնաւորի սահմանային շրջաններուն մէջ եւ մինչեւ 1928 թուականը ազատագրեց չուրջ 2000 հայ կիներ եւ երկսեռ պատանիներ»:

Ազատագրուածներու ստուար մեծամասնութիւնը Հալէպ կը բերուի ու կը տեղաւորուի Քարէն Եփփէի հիմնած վերանաքաղաք - կայանին մէջ: «Բոլոր եկեւորներուն կը տրուէր պէտք եղած նպնդեղէնը, բժշկական խնամքը, հագուստ - կապուստ, կը ստուգուէր անոնց ինքնութիւնը ու անոնց անուանացանկը կը ղրկուէր թերթերուն, եկեղեցիներուն եւ հայկական միութիւններուն, որպէսզի հարազատները գտնեն իրենց կորուսեալը» (էջ 55): Այդ օրերու Հալէպի Առաջնորդը՝ Արտաւազդ Արք. Սիւրմէեան ակնատեսի իր վկայութիւնները փոխանցելով երեւոյթին մասին, կը գրէ որ «գրեթէ առանց բացառութեան, ազատագրուածներու դէմքերն ու ձեռքերը կտաւած էին: Մանչերուն քիթին ծայրը եւ ալ ձեռքերուն վրայ անպայման կար կապոյտ նշանը: Թշուառութեան բոլոր վիճակները տեսնող այս պետեւիացած Հայերով ու մանաւանդ Հայուհիներով լեցուեցաւ Հալէպը, ու այդ զարհուրելի «կապոյտ»ը այլեւս դատակնիք մը մնաց անջնջելի՝ իրենց ցեղին վիճակուած եղեռնին» (էջ 50):

Քարէն Եփփէ նիւթապէս օժանդակած է ո՛չ միայն անապատէն ազատագրեալներուն կամ իր հիմնած որբանոցին անչափահաս տղոց, այլեւ առհասարակ բոլոր հայ կարիքաւոր երախաներու կրթութեան ու դաստիարակութեան գործին: Նորատիպ հատորը կը նշէ որ «1926ին ըղձրոցական կարիքներու համար իրեն դիմող աներու թիւը 1000-ի կը հասնի: Իւրաքանչիւր աշակերտի համար Քարէն Եփփէ, միայն իբրեւ կրթաթոշակ, մէկ օսմանեան ոսկի կը վճարէր, բացի կօշիկէն ու հագուստէն, գրենական պիտոյքներէն ու դասագիրքերէն, բժշկական խնամքէն ու դեղերէն» (էջ 91):

Դանիացի օրիորդը, որ ի տարբերութիւն այլ միսիոնարներու, զերծ էր կրօնական ու զաւանական նախապաշարումներէ, ազատագիրներու դաստիարակութեան մէջ կարեւոր դեր վերապահած էր Հայ Եկեղեցւոյ: Իր մօտ նկատուող կրօնական լայնախոհութեան, այլեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ նկատմամբ իր դրսեւորած անօրինակ փարումին հետազբրքրական մէկ ապացոյցն ալ այն նամակն է, զոր յղած է ան 1922 Դեկտեմբերին՝ Հալէպի օրուան առաջնորդական փոխանորդ Ցարութիւն Քհնյ. Եսայեանին: Նամակէն ի յայտ կու գայ, որ Քարէն Եփփէի ու Ազգային Առաջնորդարանին միջեւ համաձայնութիւն գոյացեր էր՝ որպէսզի հայ քահանաներ, հերթաբար, կրօնաբարոյական դասեր աւանդեն հաւաքման կեդրոններուն մէջ: Մերիններըը թերացեր էին իրենց պարտականութեան մէջ եւ խուսափեր...: Հո՛ս է որ Քարէն Եփփէ իր վերդովումը կը յայտնէր նամակով մը, կը սպառնար դիմել մինչեւ իսկ Սահակ Կաթողիկոսին ու ի միջի այլոց կ'ըսէր. «Վերջին անգամ ըլլալով պիտի խնդրէի, որ հաճիք անհրաժեշտ հրահանգը տալ, որպէսզի ամէն Շաբաթ երեկոյ քահանայ մը այցելէր մեր որբանոցը եւ կրօնի դասը



չարունակէր: Հակառակ պարագային, յանուն քրիստոնէական դաստիարակութեան, որոշած եմ դիմել Կաթողիկէ կամ Բողոքական չարանուանութեանց, որոնք վստահ եմ որ մեծ գոհունակութեամբ եւ մանաւանդ մասնաւոր հրճուանքով պիտի փութան բաւարարութիւն տալ մեր դիմումին, մեր ուզածէն ալ աւելին ընելով» (էջ 89):

Կրթա - դաստիարակչական օժանդակութիւններէ զատ, Քարէն Եփփէ ձեռք կ'երկարէր նաեւ հայկական հիւանդանոցներու (քէմփ) Թշուառ բնակչութեան: Անոնց համար իսկական օրհնութիւն մըն էր դանիացի մարդասէրին գոյութիւնը, երբ հարիւրաւոր անձերու ամէնօրեայ տաք կերակուր կը բաժնուէր, դեղի ու բժիշկի կարօտներուն՝ ձրի խնամք ու դարմանում կ'ապահովուէր: Ու այս բոլորին կողքին, Ֆ. Եփփէ հիմը կը դնէր Նոր Գիւղի (ազգանուանումով՝ Մէյտան, Հալէպի հայահոծ գլխաւոր թաղամասը) հայապատկան առաջին կառոյցներուն, լիարուռն օժանդակելով տեղւոյն Սահակեան վարժարանի ու անոր կից Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ չինութեան (1927 - 1933):

Քարէն Եփփէի ուշագրաւ ծառայութիւններէն մէկը կ'ըլլայ նաեւ հայկական դիւզակներու հաստատումը Հիւսիսային Սուրիոյ մէջ, Եփրատ գետի ափունքին: Արդարեւ, կիլիկիոյ վերջնական պարպումէն ետք (1923) հայ գաղթականներու մեծաթիւ զանգուածներ հասեր էին Հալէպ ու ֆրանսական հոգատար իշխանութիւններուն համար լուրջ հարց էր տնոնց տեղաւորման անհրաժեշտութիւնը: Քարէն Եփփէն է դարձեալ որ պիտի գլխաւորէր այս հրատապ հարցով, Հայոց համար դիւղեր հաստատելով Եփրատի հովիտին մահմանամերձ շրջաններուն մէջ, Ռագգայի չուրջբոլորը: Թէլ Սիմէն, Խրպէթ էլ Ռըզ, Շարպ Պետրոս ու Թինա կոչուած դիւղերը, այսպիսով պիտի դառնային վերապրող հայութեան նոր կայքերը, ու ատոնց շրջակայ հողային խոպան հսկայ տարածութիւնները, հայ մշակներու բահ ու բրիչով՝ կարճ ժամանակուան մէջ պիտի վերածուէին կանոնաւոր նախագիծով ծանծկուած բերրի դաշտերու...:

Ի դէպ, հայ գիւղակներու հաստատման մասին խօսելու առթիւ, Ց. Զոլաքեան նկատել կու տայ որ վերոնշեալ Խրպէթ էլ Ռըզ գիւղին մէջ «կը թացուի որբանոց մըն ալ, որ կը դրուի Օր. Ենի Ենաչնի (Ֆ. Եփփէի օգնականը - Լ. Շ.) խնամքին ու հոգատարութեան տակ: Որբանոցը շրջան մը կը պատսպարէ 60 - 70 որբեր» (էջ 120): Մեր տրամադրութեան տակ եղող վաստահելի այլ աղբիւր մը կը կատարէ սակայն տարբեր հաստատում մը. - «1927-էն մինչեւ 1931, Յակիմ Յակոբեան վարիչ - տնօրէնն էր Միս Քարէն Եփփէի անունով հիմնուած որբանոց - ապարակին, որ կը գտնուէր հայասէր բարերարուհիին հիմնել տուած Խրպէթըլս գիւղին մէջ: Միս Եփփէի որբանոց - ապարակին մէջ, իր կողքին ունենալով 18-25 տարեկան շուրջ 60 չափահաս որբեր, Յակիմ Յակոբեան, բա՛ցի վարուցանէ, պարտիզամշակութենէ եւ ապարակային գանազան արտադրութիւններու պատասխանատուութենէն, ամէն իրիկուն հայերէնի եւ Հայոց պատմութեան դաս կու տար եւ գրել - կարդալ կը սորվեցնէր չափահաս որբերու խումբին, եղբայրական զուարդուրանք եւ համբերատար ոգի ցուցաբերելով անոնց հանդէպ» (տե՛ս Վարդէս Տօնապետեանի «Մարուքթաչունչ»ը, Մ. Նահանգներ, 2000, էջ 351):

Ց. Զոլաքեան տակաւին կը պատմէ որ Քարէն Եփփէ կը սիրէր հայրենակից որդիներուն մէջ հաւաքական հարսանիքներ կազմակերպել: Այդպիսի յուզիչ պահ մը կատարուեր է 1928 Նոյեմբերին Խրպէթ էլ Ռըզ գիւղին մէջ, հանդիսապետութեամբ Հալէպի Առաջնորդ Արտաւազդ Ծ. Վրդ. Սիւրմէեանի, որ օրհնած է ամուսնութիւնը 8 հայ զոյգերու, բոլորն ալ անապատէն ազատագրեալներ: Այս հաւաքական պսակին միա՛կ կնքահայրն ալ եղած է Յակիմ Յակոբեան...: Գրագէտ Սիմոն Սիմոնեան այդ հարսանիքին պատմական լուսանկարէն ներշնչուած՝ պիտի գրէր հետեւեալը. – «Զորեցած ոսկորները չի՛զ, մի՛ս, մո՛րթ համան, կենդանի չո՛ւնչ ստացան, հո՛գի առին, վերադարձան կեանքին ու հարսանիք ըրին անապատին մէջ, իրակա՛ն հարսանիք՝ իրակա՛ն անապատին մէջ, ուր մորթուեր էին իրենց հայրերն ու մայրե՛ր...: Մե՛ծ հարսանիք մը եղաւ առիկա, աւելի՛ փառաւոր, քան Աբրահէս արքային եւ Սաթենիկ իշխանուհիին հարսանիքը, երբ ոսկի ու մարգրիտ տեղացին երկնքէն» (էջ 133):

Քարէն Եփփէ գրեթէ ամբողջ կեանք մը ապրելէ ետք հայութեան հետ, դառնալէ ետք վկան անոր «գողգոթային եւ վերածնունդին», իր աչքերը կը փակէր Հալէպ, 1935 Յուլիս 7-ին: Իր փափաքին ու կտակին համաձայն, յուղարկաւորութիւնն ու թաղումը կը կատարուէին հայկական ծէսով եւ մարմինը հողին կը յանձնուէր Հալէպի Հայոց Ազգային պանթէոնին մէջ: «Զիս թաղեցէք մեր գերեզմանատան մէջ, մեռելս Տաճիմաքա չդրկէք...», ըսեր էր չուրջիններուն, հոգեվարքէն քիչ առաջ:

Աւելի քան տասնամեակ մը յետոյ (1947–ին), Օր. Եփփէի հիմնած այրիանոցին տարածքը մասնաւոր կարգադրութեամբ «Հայերու Դանիացի Բարեկամներ» ընկերութեան կողմէ կը փոխանցուէր Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանին, որ իր կարգին ձեռնամուխ կ'ըլլար այդ կալուածք յատկացնելու նպատակաւոր դպրոցի մը, որ պիտի կոչուէր «Քարէն Եփփէ Ազգային Ճեմարան»: Եւ այդպիսով, ինչպէս կ'եզրափակուի նորատիպ հատորը, «Նուիրականացաւ իր անունն ալ իր սիրած ազգին սերունդներուն մէջ»:

Հալէպ

որ «Լէ միզերապլ»ի վերջին էջերուն մէջ յայտնապէս անձնասպան կ'ըլլայ նետելով զետին մէջ, կը վերադառնայ իբրեւ առաքինի մարդ մը, որ կը վերադտնէ Աստուծոյ հաւատքը, իսկ Թենարտիէ՝ փոքրիկ Կոզէթի վրնժխնդիր հալածիչը, Միացեալ – Նահանգներէն կը վերադառնայ զարճեալ զայն նեղացնելու համար: Միւս կողմէ, Կոզէթի ամուսինը՝ Մարիոս «Լէ միզերապլ»ի հերոսին՝ ժան վալժանի նման անիրաւ կերպով կը բանտարկուի պատրաստելով ենթահողը «Մարիոս կամ փախստականը» վերնագիրով երկրորդ վէպի մը, որ լոյս պիտի տեսնէ Սեպտեմբերին:

Սերեզա քաղաքին պատմական վէպերու հեղինակ լրագրող մըն է: Ան կը յայտարարէ, թէ իր արարքը ոչ մէկ ձեւով սխալ է: «Ոչինչ ընդօրինակած եմ», կ'ըսէ ան: «Զիս կարելի է ամբաստանել մեղանչելու յանցանքով, սակայն այս աշխատանքը Հիւկոյի նկատմամբ յարգանքի արտայայտութիւն մըն է: Տիպարները կը պահեն Հիւկոյի ոգին, սակայն անոնք փոխհրութիւններ կը կրեն: Ամբողջութեամբ նոր պատմութիւն մը ստեղծած եմ»:

Սակայն «Կոզէթ» վէպը, որ հրատարակուած է Վիքթոր Հիւկոյի ծննդեան 200-րդ տարեդարձէն քանի մը ամիս առաջ, Հիւկոյի ժառանգորդներուն կարծիքով, առեւտրական կոպիտ չարաշահութեան կ'ենթարկէ «անժխտելիօրէն մշակութային համաշխարհային ժառանգութեան մաս կազմող գանձ մը»: «Լիպէրասիոն» թերթին մէջ լոյս տեսած յայտարարութեան մը մէջ Փիէռ Հիւկոյի հինգ զարմիկները եւ անոնց մայրը կ'ըսեն, թէ «Կոզէթ»ի նման դիրքեր պէտք է արգիլուին յանուն Ֆրանսական մշակոյթի պաշտպանութեան: Անոնք նաեւ կոչ կ'ուղղեն Ֆրանսայի պետութեան, որ «քարոյական դիտակցութեամբ եւ խորհրդանշական կերպով» դատապարտէ «Լէ միզերապլ»ի չարաշնակութիւնը:

Վիճելով, թէ իրենք ոչ մէկ ձեւով կ'ուզեն օգտուիլ նման վէպի մը վաճառքին «աղտոտ» չահէն, անոնք ցարդ չեն միացած Փիէր Հիւկոյի ձեռնարկած դատական հետապնդումին: Փոխարէնը՝ Փիէռ Հիւկօ կը վայելէ ակակցութիւնը Գրողներու միութեան, որ ժամանակին մակարդակաւոր ընկերակցութիւն մըն էր. անոր հիմնադիրն էր Վիքթոր Հիւկօ, իսկ զայն կը գլխաւորէր Պալզաք: Սակայն ներկայիս Գրողներու Միութիւնը գրեթէ անծանօթ է: «Բարոյական իրաւունքի սկզբունքը պէտք է վերահաստատուի», կ'ըսէ անոր նախագահը՝ Ժորժ – Օլիվիէ Շաթօրենօ:

Փիէռ Հիւկօ կը ծրագրէ աւելի առաջ երթալ: Անոր փաստաբանը՝ Էմանուէլ Փիէռա կ'ըսէ, թէ պիտի պահանջէ «Կոզէթ»ի օրինակներուն հաւաքումը (առայժմ հրատարակութիւնը լոյս տեսած է 65 հազար տպաքանակով), ինչպէս նաեւ անոր չարաշնակութեան՝ «Մարիոս»ի հրատարակութեան արգիլումը: Ան նաեւ նպատակ ունի 600 հազար տոլարի վնասուց հատուցում պահանջելու եւ կը յայտարարէ, թէ գումարը պիտի յատկացուի մանուկներու նպաստակատուղուած բարեսիրական ծրագիրներու: Ի վերջոյ ան կ'ըսէ, որ եթէ դատական ատեանը Վիքթոր Հիւկոյի «բարոյական իրաւունքը» բարձր պահող յայտարարութիւն մը կատարէ առանց «Կոզէթ»ի օրինակները հաւաքելու որոշում կայացնելու, ապա ինք պիտի պահանջէ, որ ատեանին վճիռը հրատարակուի Ֆրանսական թերթերու մէջ եւ «Կոզէթ»ի կողքին վրայ:

Փիէռայի համաձայն, Ֆրանսական օրէնքը աներկրմիմի է արուեստագէտներու բարոյական իրաւունքը պաշտպանելու մէջ: «Այս պարագային Վիքթոր Հիւկօ ինք ըսած է, թէ չուզեր, որ իր վէպին չարաշնակութիւնը գրուի կամ իր տիպարները փոխհրութեան ենթարկուին», կը բացատրէ իրաւագէտը: «Բարոյական իրաւունքի օրէնքը կը պաշտպանէ արուեստի գործի մը ոգին, ինչպէս նաեւ՝ անոր ամբողջութիւնը: Օրինակ, Ժնեվի–քա Հիւսթըն յաջողած է հաստատել իր հօր՝ Ճան Հիւսթընի բարոյական իրաւունքը, արգիլելով, որ ոմնոր մեր ու ճերմակ ժապաւէններուն գունաւոր տարբերակները ցուցադրուին Ֆրանսայի մէջ»:

Թէեւ Փիէռ Հիւկոյի պահանջած դատական հետապնդումին իրաւական նախընթացները դոյութիւն ունին, սակայն գրականութեան պատմութեան մէջ կան նաեւ բազմաթիւ այլ օրինակներ, որոնք կը հաստատեն, թէ գրագէտներ օգտագործած են դասական պատմութիւններ եւ վերակերտած են համաշխարհային տիպարներ, ինչպէս՝ Անթիգոնէ, Ողիսեւս, Տոն Ժուան եւ Ֆաուսթ: «Կարելի չէ երեւակայել, որ Օվիդիոսի ընտանիքը դատական հետապնդումի ենթարկած ըլլայ Եզովքոսի ընտանիքը, որ իր հերթին դայրոյթով պիտի չհակազդէր Լա Ֆոնթէնի», կ'ըսէ վիպագիր Անթուան Օտար, որուն վերջերս լոյս տեսած գիրքը՝ «Ատիէ, մոն լիւնիք» (մնաս բարով, մէկ հատիկս), ինքնին կը վերապատմէ Սպիլարի եւ Էլօիզի պատմութիւնը: «Գոդութիւնը գեղեցիկ արուեստներու կիրարկումի միջոցներէն մէկն է», կ'ըսէ ան:

Այսուհանդերձ գովասանքի վտանգաւոր ձեւ մըն է ասիկա, մանաւանդ՝ երբ կը մրցի հեղինակի իրաւունքի օրէնքին դէմ, որ Ֆրանսայի եւ Միացեալ – Նահանգներու մէջ ի զօրու կը մնայ գրապէտի մը մահէն ետք մինչեւ 70 տարի: Անցեալ Մայիսին ամերիկեան դատական ատեան մը արգիլեց Մարկրէթ Միչըլի «Կոն ուիզ ոը ուինտ» վիպերգութեան վրայ հիմնուած՝ էլիս Ռանտալի «Ոը ուինտ տան կոն» վէպին հրատարակութիւնը, զայն «ոչ փոքր գողութիւն» մը նկատելով: Թէեւ վճիռը վերատեսութեան ենթարկելու դիմումները ի վերջոյ յաջողեցան վերացնել արգելքը, սակայն Միչըլի ժառանգորդները այժմ կը ծրագրեն դատական հետապնդումի նոր դիմումներ ներկայացնել:

Ֆրանսան «Ֆրանսա» ըլլալով՝ «Կոզէթ»ի առընչուող հրապարակային վէճը գրականութենէ աւելին կ'ընդգրկէ: Կարգ մը գրագէտներու եւ մտաւորականներու համար «Լէ միզերապլ»ի չարաշնակութիւնը մտահոգիչ նշան մըն է, թէ Ֆրանսա աստիճանաբար անձնատուր կ'ըլլայ համաչխարհայնացած տնտեսութեան, ուր դիրքեր կը ծանուցուին եւ կը վաճառուին սպառողական արտադրութիւններու պէս: Կարգ մը քննադատներ ցցնցուած են լսելով, թէ Փլոն հրատարակչատունը 200 հազար տոլար պիտի յատկացնէ դիրքը ծանուցելու համար: «Այսքան գումար «Լէ միզերապլ»ի չարաշնակութեան համար ծախսելու փոխարէն՝ զայն պէտք էր յատկացնել Հիւկոյի վէպին վերահրատարակութեան», կ'ըսէ գրագէտ Մաքս Կալլօ, որ ժամանակին Ֆրանսայի կառավարութեան մէկ բանբերն էր եւ մօտ օրէն պիտի աւարտէ Հիւկոյի կենսագրութիւնը ներկայացնող իր գործը:

Հետեւաբար, միայն Ֆրանսական չարժապահերի եւ թատրոնի մէջ չէ, որ մտաւորականներ կաշկանդուած կը զգան ժամանակի ժողովրդային պահանջներով եւ դանդուածի չուկայով: Կը թուի, թէ Ֆրանսայի հրատարակչական մարզը եւս հետզհետէ կը տարուբերի դրական եւ առեւտրական արտադրութիւններ հրապարակելու միջեւ: Եւ բնականաբար սուր նետերու նման հարցումներ կը շրջին օդին մէջ. «Ի՞նչ պիտի ըլլայ խմբագիրներու յաջորդ դիւտը», հարց կու տայ Ֆրանսայի անուանի գրագէտ Փիէռ Ասուլին: «Փրուսթի «Ա լա ռըչերչ տիւ թան փերտիւ»ի կամ Սելինէի «Վուայաժ օ պուտ լա նիւի»ի չարունակութիւնը՞»:

Թերեւս...: Մանաւանդ՝ եթէ փարիզի դատական ատեանը ձախողի պաշտպանել Հիւկոյի բարոյական իրաւունքը «Լէ միզերապլ»ի առընչութեամբ: Միւս կողմէ, ի՞նչ կարեւորութիւն կը ներկայացնէ նման դատ մը: Հաւանաբար անիկա նշանակութիւն պիտի ունենար, եթէ վէպի մը չարաշնակութիւնը քնագիրին համազօր մեծութիւն արտացոլէր, ինչ որ նուազ հաւանական է «Կոզէթ»ի պարագային: Ահիկա յարդանքի հարց է», կ'ըսէ Փիէռ Հիւկօ: «Մենք չառարկեցինք, երբ «Լէ միզերապլ» եւ «Նոթր Տամ տը Փարին» երաժշտախառն թատերախաղերը կամ համանուն ժապաւէնները հրապարակեցան, որովհետեւ անոնք յարգած են բնագիրը: Նոյնիսկ չընդդիմացայ գծագրերով պատկերազարդուած հրատարակութեան, որովհետեւ անիկա կրնար մանուկներուն մէջ արթնցնել քնագիրը կարդալու հետաքրքրութիւնը: Բայց այս վէպը, որ չարաշնակութիւն մըն է, պարզապէս գայթակղեցուցիչ է»:

Այսուհանդերձ Հիւկոյի ժառանգորդները չեն առարկած, երբ Հարփըր Քոլլինզ հրատարակչատունը 1995-ին Միացեալ–Նահանգներու մէջ հրատարակեց Լորա Գալլիագեանի «Կոզէթ, տը սիքուըլ թուլէ միզերապլ» վէպը: «Անկեղծ ըլլալու համար, այդ մասին տեղեկացայ միայն երեք չաբաթ առաջ: Յայտնապէս վէպին օրինակները անհետացած են», ըսած է Փիէռ Հիւկօ: Եւ անշուշտ նոյն ճակատագիրը կրնար ունենալ «Կոզէթ ու լը թան տէ տ'Իլլիւզիոն» վէպը, եթէ Հիւկոնները այսքան ուշադրութիւն չհրաւիրէին անոր վրայ:

Քաղուած

«Ինթերնէշընըլ Հերըլտ Թրիպիւն»էն

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՆ ԾՊԻՏ

Պետը դիմում է աշխատողին.

– Վերջապէս դուք աշխատանքի եկաք ճիշդ ժամանակին:

– Այո, որովհետեւ թուխթակ եմ գնել:

– Բայց, դրա համար սովորաբար զարթուցիչ են գնում:

– Զարթուցիչն լուռ չէր օղնում: Ես թուխթակ գնեցի, իսկ զարթուցիչը դրեցի նրա վանդակի մէջ: Եւ հիմա, երբ զարթուցիչը գնդում է, թուխթակս այնպիսի բառեր է ասում, որ մեռելներն էլ կը զարթնեն:

***

Մի անգամ սուլթանը մտնում է բանտ ու հարցնում այնտեղ գտնուող քսան բանտարկեալներին, թէ ով ինչի համար է նստած: 19–ը ասում են, որ իրենք անմեղ են եւ միայն 20–րդն է խոստովանում, որ բռնուել է գողութեան պահին:

– Շուտ, դուրս վռնտէք սրան, ասում է սուլթանը – նա կարող է վատ ազդեցութիւն ունենալ այստեղ գտնուող ազնիւ մարդկանց վրայ:

ՍՏԱՑԱՆՔ

□

ԴՐՕՇԱԿ

Պաշտօնաթերթ Հայ
Յեղափոխական Դաշնակցութեան

Թիւ 3, Յունիս 2001
Երեւան 375002, Մոսկովեան 31, բն. 37

ԹԻՒ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ը.

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամէնէն վերջը խօսք առաւ Արամեանց եւ այսեղուկ կերպով մը ըսաւ.

– Ես որպէս սոցիալ – դեմոկրատ, այս թիւ 17 խաֆիէի խնդրով չատ չեմ հետաքրքրուիր: Ես անձի հետ գործ չունիմ, ես սկզբունքային տեսակէտով կը դատեմ գործը: Օր մը, երբ Գում Գաբուէն Սիրեցմի կու գայինք բարեկամի մը հետ, վանքին մէջ, խօսակցութեան մէջոցին, բարեկամս զարմանք յայտնեց, թէ ինչո՞ւ «Պատասխան», որ չատ զբաղեցաւ Թիւ 17 խաֆիէի խնդրով, չանկարծ լեզուն զարնէ: Այսպէս ուրեմն, լաւ ուշադրութիւն ըրէք, զարմանք կամ կասկած յայտնողը ես չեմ, այլ բարեկամս, բայց «Պատասխան» իրաւունք չունէր ինձի դէմ եղած բաց նամակը հրապարակելով մէկտեղ, առանց իմ պատասխանիս սպասելու, «Մտոր ղրպարտութիւն» վերնագիրը դնելու:

Այս ճղճիմ բացատրութիւնը ծաղրական ծիծաղներով ընդունուեցաւ ժողովականներու կողմէ:

Զարդարեան եւ իր ընկերները, այդ տեսակ մը յետս կոչումէն վերջ, մէջադէպը փակուած հռչակեցին:

Այս կերպով Թիւ 17 խաֆիէի մասին բացուած վիճաբանութիւնը վերջ գտաւ:

Երեսփոխանները որոշեցին յաջորդ ժողովին թողուլ այս խնդրի մասին ներկայացուելիք բանաձեւերուն քուէարկութիւնը:

Ասոր վրայ ատենապետը Ատեանը փակուած յայտարարեց, եւ երեսփոխանները սկսան ցրուիլ:

Որպէսզի մեր ընթերցողները կրկին անդամ Ազգային ժողովի բերելու հարկ չմնայ, կը բաւէ անմիջապէս ըսել, թէ յաջորդ նիստին, որ տեղի ունեցաւ Մայիս 24-ին, ատենապետը յայտարարեց.

– Օրակարգի երրորդ խնդիրն է Թիւ 17 խաֆիէի մասին բանաձեւի քուէարկութիւնը:

Ց. Շահրիկեան առարկեց, որ եթէ բանաձեւի քուէարկութիւն է, պէտք չէ այլեւս կարծիք յայտնել ի նպաստ կամ անդէմ:

– Հոս դռնփակ նիստի մը մէջ վիճաբանուեցաւ այդ խնդրի մասին, – ըսաւ,– եւ դուրսը ամէն բան գիտցուեցաւ, միայն մի բան չկրցաւ հաստատել հարցումը ընողը, թէ Ո՞վ է Թիւ 17 ԽԱՖԻԷՆ...

Արամեանց ըսաւ, թէ հարցումը ընողը պէտք է պաշտօնապէս ետ առնէ իր հարցումը:

Ցետոյ կարդացուեցաւ Ժագ Սայապալեանի հետեւեալ բանաձեւը.

«Ժողովը Պատրիարքարանի մէջ Թիւ 17 խաֆիէի մը գոյութեան մասին եղած հարցումին վարչութեան կողմէ տրուած բացատրութիւնները եւ հելքումը գոհացուցիչ նկատելով՝ կը ցաւի, որ այսպիսի տարաձայնութիւն մը միտքերը յուզելու ձեւով մը բերուած է Ազգային Ժողովին»:

Իսկ Դաւիթ Տէր - Մովսէսեան եւ Հայկ Յօճասարեան ներկայացուցին հետեւեալ բանաձեւը.

«Ժողովը նկատի առնելով Թիւ 17 խաֆիէի մասին Վարչութեան բացատրութիւնները, անբաւական կը նկատէ զանոնք եւ կ'անցնի օրակարգին»:

Ատենապետ տոքթոր Տաղաւարեան քուէի կը դնէ երկու բանաձեւերը, եւ երկուքն ալ հաւասարապէս 11 քուէ կը ստանան:

– Ատենապետը պէտք է քուէ տայ, – կ'ըսէ ձայն մը:

– Ատենապետը չըլլար, նախագահը պէտք է տայ, – կը գոչեն ուրիշ ձայներ:

– Չէ՞ որ ատենապետն ալ քուէի իրաւունք ունի:

– Թո՛ղ առաջ տարբ, – կը պոռան մէկ քանի երեսփոխաններ:

– Այո՛, – կ'ըսէ Հայկ Յօճասարեան, – ատենապետը քուէի իրաւունք ունի, բայց եթէ բուն քուէարկութեան ատեն չտուաւ, եւ քուէարկութիւնը փակուեցաւ, ուրեմն ատենապետը ձեռնպահ մնացած կը նկատուի, այս պարագային նախագահին քուէն է, որ կ'ընդունուի:

– Ես իմ քուէս Սայապալեան էֆէնտիի բանաձեւին կու տամ, – յայտարարեց Նախագահ Աբշարունի Սրբազան:

Եւ այսպէս Ազգային Ժողովը չեղեալ յայտարարեց Թիւ 17 խաֆիէին գոյութիւնը, իր նախագահին քուէովը, եւ խնդիրը միանգամ ընդմիշտ թաղեց:

Եւ սակայն Թիւ 17 խաֆիէն կը գործէր մութին մէջ...

ԳԼՈՒԽ Թ.

ՆՈՐ ՑԱՑՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովէն ետքը Սարգիս Սուքն, ջղագրգիռ, յուզուած կերպարանքով մը դուրս ելաւ սրահէն՝ իր ակնոցը չտկելով:

– Սերգիս, – պոռաց ետեւէն Ներսէս Օհանեան, – կեցի՛ր, միասին երթանք:

Եւ իր հիւանդ ոտքը քաշելով՝ գնաց միանալ Սուքնի:

– Հաւնեցա՞ր այս խաղքութեան, – ըսաւ այս վերջինը արտնեղած կերպարանքով մը:

– Ես ասոր այսպէս ըլլալը առաջուց դուշակեր էի, – պատասխանեց Օհանեան, – բոլոր յանցանքը Շիրինեանինն է, որ թեթեւօրէն խնդիրը մէջտեղ նետեց եւ առանց սպասելու, որ յարմար ժամանակը գար:

Նոյն միջոցին Աղասի Աղասեան ալ իր խոշոր մօրուքը պարզած, փորը տնկած, թաւ ձօնքերովն ու դաժան նայուածքովը մօտեցաւ երկու խօսակիցներուն.

– Եկէք, երթանք մէյմէկ դաշեջուր խմենք, – առաջարկեց:

– Շողենաւին առեն ունի՞նք, – հարցուց Օհանեան:

– Յամուկէս առեն ունինք:

– Դուն այս իրիկուն ո՞ւր պիտի երթաս, – հարցուց Օհանեան Սուքնին:

– Պալաթ երթալու միտք ունիմ, քանի օր է չեմ գացած:

– Երթանք ուրեմն քիչ մը նստինք ձէնիօն, – որոշեց Օհանեան:

(Շար. 36)

Տիկին Մակի Գուլումճեան,
Քրիսթոֆ և Վերոնիք, Ալեքսանդը
Սարա – Լի եւ Ժերեմի,
Պր. Ալեքսանդը Գուլումճեան,
Արթիւր եւ Վարդան Իշխանեան եւ իրենց ընտանիքները
եւ ընտանեկան բոլոր պարագաները
խոր ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ - հօր, եղբօր, աներձագին եւ ազգականին՝

ԱՐԹՕ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, Օգոստոս 5-ին, 72 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Շաբաթ, Օգոստոս 8, ժամը 15-ին Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցին
4, rue Komitas, 94140 Alfortville
ուրկէ մարմինը կը փոխադրուի Մորան – սիւր Օրժի գերեզմանատունը ամփոփելու համար ընտանեկան դամբարանը։

Ոչ ծաղիկ, ոչ ծաղկեպսակ։

Փոխան ծաղիկի նուէրները կապոյտ Խաչի Ալֆորվիլի մանուճիւղը եւ Հ. Յ. Դ. Ալֆորվիլի Կոմիտէին։

Որեւէ մահագդ ղրկուած չըլլալով կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

ՅԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը եւ բոլոր անդամները իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն Տիկին Մակի Գուլումճեանի, Պր. Ալեքս Գուլումճեանի եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, իրենց ամուսնոյն եւ եղբօր Արթօ Գուլումճեանի մահուան առիթով։

Սպակիը է նաեւ Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տունը, որովհետեւ Արթոյի մահով կը կորսնցնէ հաստատութեան հիմնադիրներէն եւ գործօն անդամներէն մէկը։

***

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Ալֆորվիլի մանուճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ ընկերուհի Մակի Գուլումճեանի եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, իր ամուսնոյն՝ Արթօ Գուլումճեանի մահուան առիթով։

Ժան – Լիւք եւ Ժան – Ֆիլիփ Մելքոն
եւ բազմաթիւ բարեկամները
խոր ցաւով կը ծանուցանեն՝

ԷՎԼԻՒՆ ՇԱՀՄՈՒՐԱՏԵԱՆԻ

(Աղջիկը՝ Արմենակ Շահմուրատեանի)
մահը, որ պատահեցաւ Օգոստոս 4–ին Փարիզի Օթէլ – Տիէօ հիւանդանոցը, 87 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Եկեղեցին
15, rue Jean-Goujon, 75008 PARIS
Հինգշաբթի, Օգոստոս 9, ժամը 10·30-ին։

Որեւէ մահագդ ղրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

Ի ՅԻՇԱՏԱԿ

Զաւէն Գէորգեանի մահուան առթիւ, «Յառաջ»ի կը նուիրեն. –
Իր հարազատները 800 Ֆր.։

***

Տէր եւ Տիկին Արտաշէս Ոսկանեան 300 Ֆրանք։

***

Տէր եւ Տիկին Դաւիթ Երիցեան 200 Ֆրանք։

Date à retenir

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une **SOIREE DANSANTE**
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre «Gaïdzag's»**

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

— ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ —

Ա. ՅՈՎՀԱՆՆԷՍ – ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8·45ին։
Պատարագ ժամը 10·30–ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԱՇԵԱՆ
կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի Առաջնորդ Հայոց Փարիզի
Պատարագի աւարտին՝ խաղող կ'օրհնուի։
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13, Բ. օր
Վերափոխման։ Յիշատակ Մեռելոց։
Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի։
Կը պատարագէ՝
ՏԻՐԱՑՐ ՔՀՆՑ. ԳԼԼԷՃԵԱՆ
Պատարագի աւարտին՝ Հոգեհանգիստ «վասն հանգուցելոց»։

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Վերափոխումն Ս. Աստուածածնի։
Ժամերգութիւն ժամը 9·30–ին։
Պատարագ ժամը 10·30–ին։
Յաւարտ պատարագի Խաղողօրհնէքի աւանդական արարողութիւն։
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13
Յիշատակ Մեռելոց։
Ժամը 10–ին պատարագ ապա հոգեհանգստեան պաշտօն «Վասն հանգուցելոց»։

De passage en France, au cours d'un grand tour d'Europe organisé dans le cadre des festivités du 1700ème anniversaire de la christianisation de l'Arménie nous accueilerons pour un **SPECTACLE UNIQUE**
L'ENSEMBLE FOLKLORIQUE
DATEV
(danseurs âgés de 10 à 14 ans)
en l'ESPACE GARBIS MANOUKIAN
40, rue d'Arménie, 69003 LYON
VENDREDI 17 AOUT à 20 heures 30
Venez nombreux les applaudir également...
—— P.A.F. 50 F ——
Renseignements:
☎ M.C.A.V. **04.78.26.28.71**
(les après-midi)
Maison de la Culture Arménienne de Villeurbanne
Croix Bleue des Arméniens de France
Section de Lyon-Villeurbanne

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՐՆՈՒՎԻԼ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի։
Ժամերգութիւն ժամը 9·45–ին։
Պատարագ ժամը 10·45–ին։
Կը պատարագէ հոգեւոր հովիւ՝
ՄԵՍՐՈՊ Ա. ՔՀՆՑ. ԹՈՄԿՈՉԵԱՆ
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողի աւանդական օրհնութիւն։

Ս. ՑԱԿՈԲ – ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Է Ս. Աստուածածնի
Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի։
Օրուան պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՋԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայից
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը։
Հաւատացեալներ որոնք օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կը խնդրուին ուղարկել Եկեղեցւոյ Դիւանատունը։

ՄԱՐՍԷՑԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Ժամերգութիւն ժամը 8·30–ին։
Հանդիսաւոր պատարագ ժամը 9·45ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԷՐԻՃԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Հարաւային Ֆրանսայի Հայոց
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն Խաղողոյ» աւանդական արարողութիւնը։
ԾԱՆՕԹ. – Անոնք որոնք կը փափաքին այս առիթով խաղող նուիրել, թող հաճին տեղեակ պահել Մայր Եկեղեցւոյ Դիւանատունը։
Հեռաձայն. –
04 91 77 84 70

ՍԷՆ–ԼՈՒ — Ս. ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Պատարագ ժամը 10–ին։
Խաղողօրհնէք ժամը 11·45–ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՑ. ՏԷՏԷԵԱՆ
ԾԱՆՕԹ. – Խաղողի կամ փոխան խաղողի նուէրները կը ստացուին Թաղականութեան Մօտ։

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris

du jeudi 4 au lundi 8 octobre

à l'occasion de la Béatification de

Mgr. IGNACE MALOYAN

Archevêque de Mardine, martyr en 1915.


le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.



le domaine de chamerolles

45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 hectares avec étang, hébergement en châlets tout confort pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F
(selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.

Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
Home Arménien

MERCREDI 15 AOUT

FETE CHAMPETRE

10h: Messe solennelle Chapelle Saint-Jean
Célébrée par Monseigneur DARON GEREJIAN
A partir de 12h30: Bar & Buffet
Animation : **MARTEN YORGANTZ ● Danses traditionnelles**
107, Avenue Maréchal Lyautey
83700 Saint-Raphaël
Réservations et renseignements : au 04.94.19.51.50

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 9
JEUDI
9 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսայ : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում) 1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·228 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 77e ANNEE — N° 20.228

ՄԱՄՈՒԼ

«LE FIGARO» (8 août)

Chouchi, écartelée au cœur du conflit du Karabagh

G. Aliev: en Azerbaidjan, «la majorité veut la guerre»

Թերթին թղթակիցը, Գլօա Լորիէօ անունով մը եւս, գացած է Կովկաս, մանաւանդ Բաքու եւ Ղարաբաղ (Շուշի), ինչ որ պատճառ եղած է որ ամբողջ էջ մը յատկացուի չրջանի հարցերուն: Առաջին յօդուած մը կը վերաբերի կասպից ծովու քարիւղին եւ Բաքու – Ճէյհան քարիւղատարին, որ Վրաստանէն պէտք է անցնէր, ինչ որ Թուրքերուն եւ Ամերիկացիներուն ուզածն էր: Այս հարցին նուիրուած զրոյթեան եզրակացութիւնն է.– «Այս ամբողջ չէմային մէկ, մեծ բացակայ մը՝ Հայաստան, հակառակ անոր որ լաւ տեղ կը գրաւէ կասպից ծովուն եւ Միջերկրականի միջեւ: Այս երկիրը պատժուած է իր դիրքին, քարիւղի բացակայութեան եւ... Ադրբեջանի վրայ տարած իր յաղթանակին 1989էն 1994 պատճառաւ: Երկիր մը որ կը գրաւէ իր դրացիին հողամասին մէկ հինգերորդը, կրնայ ռազմագիտներու հիացում առթել, բայց, ոչ անպայման կայունութեան ծարաւի ներդրումներու հաւանութիւնը ունենալ: Հայաստանի Հանրապետութիւնը փախցուց կովկասի քարիւղային առաջին կառոյմը, կը հաստատէ, դժկամակութեամբ, արեւմտեան դիւանագէտ մը»:

Երկրորդ յօդուածը նուիրուած է Շուշիի, որ պէտք է ըլլար խորհրդանիշը կը թուի բանակցութիւններու յաջողութեան: Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Գաւառնա կ'ըսէ.– «Շուշի կամ Շուշա, նայած թէ Հայ ես կամ Ազերի, ձեւով մը նոյնքան դժուար թղթածրար մըն է որքան Երուսաղէմը»:

Պատասխանելով զարաբաղցի Հայու մը որ Շուշին կ'ողջունէ որպէս չրջանի «արաղատ մայրաքաղաքը», Ալիեւ կը հրեցնէ երեք բանագնացներուն (Մինսկի խումբի երեք համանախագահները) թէ որքան Շուշան սիրելի է բոլոր Ադրբեջանցիներու սրտին»: Ապա, Գլօա Լորիէօ կը նկարագրէ քաղաքը, Սուրբ Փրկիչ եկեղեցին եւ կը չեշտէ որ, Ղարաբաղի Հայերը այն վախն ունին որ իրենք պիտի զոհուին երբեան – Բաքու համաձայնութեան մը պարագային: Ոչ մէկ համաձայնութիւն կրնայ գոյանալ, կը գրէ լրագրողը, ցորչափ Հայերն ու Ազերիները չհաշտեցնեն իրենց տեսակէտը Շուշիի մասին: Առաջինները հոն կը տեսնեն եկեղեցիներու, մատուռականներու եւ հեթոսներու քաղաքը: Ազերիները կ'ողբան կորսուած այդ հոդամասը: Երեւփոխան Մամադով կ'ըսէ.– «Պարպուած Հայերէ հարիւր տարի է, լ. Ղարաբաղի ազերի հողուածներուն խորհրդանիշն է»:

Երրորդ գրութիւնը հարցազրոյց մըն է Ալիեւի հետ: «Ֆիկարօ» առաջին հարցումով մը, կ'անդրադառնայ ի դերեւ եղած խաղաղութեան կարելիութիւններուն ու Ալիեւ կ'ըսէ.– «Երկու կարելիութիւնները ճախողութեան մատնուեցան: Քոչարեանի հետ խօսակցութիւններուս ընթացքին Քի Ուէսթ, Ապրիլին խօսեցանք չատ բաներու մասին, բայց, ոչ հիմնական բաներու: Ցաւալի է որ Մինսկի խումբին երեք նախագահները այն սպասուորութիւնն ունենան, որ առիկ մեկնելով կարելի է կարգադրել Ղարաբաղի հարցը: Գիտէի որ, եթէ մեծ յառաջդիմութիւններ չիրագործուին, Քոչարեանի հետ հանդիպում մը չէր պարտուորեր: Ասելցնեմ որ, Հայաստան իր դիրքը փոխեց»: Բայց, Ալիեւ չուզեր ըսել թէ անել կացութիւն է կամ թէ ամէն յոյս կտրած է: Ամէն ինչ, ըստ իրեն, կախում ունի Հայաստանէն, որովհետեւ «յարձակող երկիր է, Ադրբեջանի հողամասին 20%–ը կը գրաւէ, պարտադրած է որ մէկ միլիոն Ազերիներ հեռանան իրենց քաղաքներէն եւ գիւղերէն»:

Ալիեւ կ'ընդունի որ պատերազմէն առաջ, Ղարաբաղի բնակչութեան 75%–ը Հայ էր, բայց, այդ չի նշանակեր որ Ղարաբաղ պէտք է անկախ ըլլայ: Անկէ ի վեր Ազերիները քչուեցան, Հայեր մեկնեցան եւ Ղարաբաղի 160 հազարնոց բնակչութիւնը 40 հազարի իջաւ, բոլորն ալ Հայ: Տնտեսապէս Ղարաբաղ կղզիացած է: Ալիեւ ի՞նչ կրնայ ըսել Հայերուն: Կը խորհի որ եթէ խաղաղութիւն տիրէր, հաղորդակցութիւններ կ'ըլլային, առեւտուրը ազատ կ'ըլլար եւ քանի մը տարիէն Հայաստան զարթցած երկիր մը կ'ըլլար բայց, Հայերը չեն հաւնար: Շատ դժուար կը գտնէ Ազերիները համոզել համաձայնութեան մը, կեանքին գործն է որ խնդրոյ առարկայ է, ապա, եթէ ցանկին իրեն համար.– «Պետական այս մարդը որ ծախեց իր երկրին հողամասը»: Բնակչութեան համբերութիւնը հատած է, կ'ըսէ Ալիեւ, կան որ կ'ըսեն «հողերու ազատագրումը կամ՝ մահ»:

Ինչ կը վերաբերի Ֆրանսայի, Ալիեւ գնահատած է Շիրաքի տեսիլքը, չի խորհիր որ Ֆրանսայի 400·000 Հայերը կրնան ազդել 65 միլիոնոց երկրի մը վրայ, յետոյ, կ'աւելցնէ Ալիեւ՝ «Ֆրանսա ապրող Հայը ի՞նչ պիտի Ղարաբաղի մասին: Ֆրանսա ինքնատիպ քաղաքականութիւն մը ունի ՕԹԱՆ–ի, ՄԱԿ–ի եւ Եւրոպական Միութեան մէջ: Չի նմանիր այն երկիրները, որոնք գլուխ կը ծռեն Ամերիկայի առջեւ: Կրնայ զօրաւոր դիրք մը բռնել»:

ՀԱՑԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՄԱՄԻՏ Է ՀՈԿՏԵՄԲԵՐ 27–Ի ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼՆԵՐՈՒՆ ՄԱՀԱՊԱՏԻԺԻՆ

Վարչապետ Ա. Մարգարեան Սիւնիքի այցին ընթացքին արտայայտուած է Հոկտեմբեր 27–ի ահաբեկչութեան մասին ու ըսած թէ անոր պատասխանատուները պէտք է մահապատիժ կրեն: Անդրադառնալով Եւրոպայի Խորհուրդին մահապատիժը մերժող կեցուածքին ու Հայաստանի անոր անդամակցութեան, ան ըսած է թէ կարելի է միայն յիշեալ պարագային համար Խորհրդարանէն յատուկ օրէնք մը անցընել: Աւելցուցած է թէ չի խորհիր որ այդ խորհուրդին անդամակցութեամբ Հայաստանի յանձնառութիւնները արդելք ըլլան նման կարգաւորումի մը:

«ԱՐՄԱՆՓՐԷՍ»

(Օգոստոս 7 / 8)

ՋԱԼԱԼԱԲԻ ՀԱՅԵՐԸ ՇՎԱՐՆԱՑԻ ԴԻՄԱԾ ԵՆ

Ջալալաբի վեց չրջաններու ներկայացուցիչները Թիֆլիս գացած ու հաւաքած են նախագահին աչխատավարձին առնչեւ, պահանջելով որ չրջանին մէջ անոր ներկայացուցիչը Գ. Բարամիձէն հրաժարի: Պահանջը հիմնուած է այն պնդումներուն վրայ թէ յիշեալ պաշտօնատարը իր ընկերները զանազան պաշտօններու կը նշանակէ, անտեսելով տեղացի արհեստավարժները եւ մարզին իշխանութիւնները չեն ճանչնար համայնքներուն որոշումները եւ տեղացիներու իրաւունքները:

*
**

ԳՈՂ ՀԱՅԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԵՆ ԵՂԵՐ...

Ադրբեջանի ռազմական աղբիւրները Օգոստոս 7–ին հերքած են նախորդ օրը հրապարակուած լուրը թէ երկու Հայեր ձերբակալուած են Բարդայի մէջ, ինքնաչարժի գողութեան ընթացքին: Ենթակաները երկու ադրբեջանցի զինուորներ եղած են, բայց ինչպէս կը նշէ հերքումին աղբիւրը՝ «տեղացիները Հայ կը կոչեն բոլոր այն անձերը որոնք չարագործութիւն կ'ընեն»...:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԿԸ ՓՆՏՈՒԻՆ ՄԿՐՏՈՒԱԾ ԹԱՓՈՒԱԿԱՆՆԵՐԸ

Այսօր այս սիւնակներուն մէջ բացառութեան կարգով կ'արձագանգենք մեր ընթերցողներէն մէկուն նամակին. Օգոստոս 5 թուակիր, Գլամարէն գրկուած այդ նամակը 1700–ամեակի ոգիով տոգորուն խնդրանք մը կը ներկայացնէ, խմբագրութեան միջնորդութեամբ:

Նամակագիրը կ'ըսէ. «Թերթիդ Օգոստոս 3 թուակիր թիւին մէջ ուրախութեամբ կարդացի որ մէկ արքեպիսկոպոսի եւ եօթը քահանաներու կողմէ էջմիածնի մէջ մկրտուած են աւելի քան երկու տասնեակ «Թափառականի» մանուկներ: Հրճուեցայ կարդալով նաեւ թէ այդ «Թափառական» մանուկներուն նուիրուած են վոգը խաչեր եւ կրօնաչուչ գրքոյկներ:

«Պիտի ուզէի գիտնալ թէ այդ մանուկները իրենց վիզերէն կախուած խաչերով, կրօնաչուչ գրքոյկները իրենց թեւերուն տակ սեղմած ու ճակատին Ս. Միւռոնով դրոչմուած երբ եկեղեցիէն ելան, ո՞ւր պացին Քահանայութիւն: Որովհետեւ, չատ կը փափաքիմ ես ալ իմ կոդմէս մէկական հատոր «Դրախտ կորուսեալ» գրկել այդ «Թափառական», բայց մկրտուած երախաներուն:

«Շնորհապարտ կը մնամ եթէ կարենաք օդնական ըլլալ»:

Կը փոխանցենք առ որ անկ է. վստահ ենք թէ պիտի գտնուին մկրտուած Թափառիկները ու 1700–ամեակի մկրտութենէն, փոքր խաչերէն եւ կրօնաչուչ գրքոյկներէն եաք մեր ընթերցողին նուէրով իրենց երանութեան մէջ պակաս բան պիտի չմնայ...:

Թ. ԱՐՓԻ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՐԱՆի բարձրաստիճան գեկավար մը Ադրբեջանը իրանեան տարածք կոչած է, ըսելով որ այդ տարածքը նախապէս պարսկական գաւառներէն մէկն էր: «Ադրբեջանցի իշխանաւորները այնպէս մը պէտք է գեկավարեն այդ երկիրը որ Իրանի ժողովուրդը անոր վերադարձը չպահանջէ» ըսած է ան որ կը կոչուի Մ. Ռըզայի եւ քարտուղարն է ռազմավարական որոշումներու բարձրադոյն մարմնին:

ԴՈՐՍԻՔԱՅի բանտարկեալներու նեղումի հարցը, զոր Գորսիքայի ազգայնական գեկավարը՝ Թալամոնի նախապայման դրաւ Մաթինեանի համաձայնութեան գործադրութեան համար, բանավէճի մը նիւթ եղաւ կանաչներու մօտ: Անոնց մէկ քաղաքական պատասխանատուն համաձայն է ներումի, ներառեալ նահանգապետ Էրմինեաքի մարդասպաններուն համար եւ նախագահական թեկնածու Ալէն Լիփիէզ ալ իր հաւանութիւնը տուաւ: Բայց, Նոէլ Մամէռ անմիջապէս հակազդեց, յայտարարելով որ ներումը երբեք չի կրնար վերաբերիլ արիւնալի ոճիրներու: Ժոսփէնի չրջապատի մաս կազմող անձեր, կ'ըսեն թէ Ժոսփէն յայտնած է իր կարծիքը, որ ներման հարցը այժմէական չէ:

ԻՏԱԼԱՑի կանանց մասնագէտ բժիշկը՝ Սեւերինօ Անթինորի պաչտօնապէս յայտարարեց, Ուաչինկթընի մէջ, որ պիտի դործադրէ մարդկային համասեռումի (գլոճաժ) իր ծրագիրը: Այս ծրագիրը չատ խիստ քննադատութեանց դուռ բացած է պիտական եւ բժչկական չրջանակներու մէջ, բայց, Անթինորի կը յամառի: Բժիշկը բաւական ադմուկ հանած էր արդէն, երբ 1993–ին 62 տարեկան կնոջ մը յղութիւնը հաղորդած էր: Իտալացի բժիշկներու դաշնակցութեան նախագահը, այս առթիւ, կ'ըսէր.– «Զուտ թեզնիք պետնի վրայ Անթինորիի գործողութիւնը յեղափոխական ոչինչ ունէր, բայց, համաչխարհային էր արհեստի բարոյականէն եւ բարոյագիտական օրէնքներէն անդին երթալ»: Անթինորի ծանուցումներ ալ հրատարակած է օրաթերթերու մէջ, ուր կը յայտարարէր.– «Ցոյս կրնամ ներչնչել ոեւէ մէկուն որ չի կրնար զաւակ ունենալ»: Ուաչինկթընի ըրած իր յայտարարութեան մէջ, մանրամասն բացատրած է իր եւ իր խմբակին տարած աչխատանքը: Արդէն իսկ երկու հարիւր զոյգեր թեկնածու են համասեռումի: Առարկողներ կան, որոնք նաեւ դիտել կու տան որ առաջին համասերած մանքին՝ Տոլիէն ի վեր բազմաթիւ համասերած կենդանիներ պէչ հետեւանքներ կրած են եւ վատակազմութիւն կը յայտնարերեն: Անթինորի կը յամառի եւ կ'ըսէ նոյնիսկ, թէ եթէ արդելք ըլլայ, նաեւ մը վրայ, միջազգային ջուրերու մէջ կ'ընէ այդ մարդկային համասեռումը:

Թեհրանի քաղաքական տադնապը լուծուեցաւ, բարենորոգիչներու գիջումին չորհիւ: Խաթամիի կողմնակիցները, իրենցմէ մէկուն ծանրօրէն վիրաւորուելէն եաք, տեղի տուին պահպանողականներուն, որոնք կրցան պարտադրել Սահմանադրութեան Պահապաններու Խորհուրդին իրենց նչանակած անդամները:

ՊՐԱԶԻԼԻԱՅի դրագէտ՝ Յորկէ Ամատօ մեռած է Օգոստոս 6–ին իր ծննդավայրին Սալվատոր տը Պահիայի մէջ, 89 տարեկանին: Հեղինակ էր բազմաթիւ վէպերու, թարգմանուած չուրջ 50 լեզուներու: 1931–ին լոյս տեսած է իր առաջին վէպը՝

(Շար·ը Դ. էջ)

ՃՇԴՈՒՄ

ԷՎԸԼԻՒՆ ՇԱՀՄՈՒՐԱՏԵԱՆԻ

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Հինգշաբթի, Օգոստոս 9, ժամը 14·30–ին (եւ ոչ 10·30–ին ինչպէս յայտարարուած էր սխալմամբ մեր նախորդ թիւով) Փարիզի Ս· Յովհ·– Մկրտիչ Եկեղեցին:

ԻՐԱԽԱԶԿՈՒԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԽԱՂԸ, ԽԱՂՑՆՈՂՆԵՐՆ ՈՒ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ

Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբի մը ամենայն զգաստութեան մէջ պատրաստութիւնն ու հրապարակումը բաւական ալեկոծեց հայկական հանրային կարծիքը: Ամէն կողմէ ձայներ բարձրացան, դվխաւորաբար մամուլին մէջոցով, զրեթէ միանշանակ կերպով դատապարտելու համար այս նոր արարքը: Առաջին պատճառը այն էր որ Թուրքիա ամերիկեան խոհանոցին մէջ պատրաստուած այս ապուրը դառն պատառներ կլլեցնելու մէջոց կը նկատուէր, իսկ երկրորդն ալ մասնակիցներուն ներկայացուցչական հանդամանքին հարցադրումն էր: Հակնալի է որ նշեալ խոհանոցին ու անոր մօտիկ նաւարկողներուն նոյնիսկ երկխօսութեան տրամադրութեան մէջ դառն պատառ կը համարուէր ցեղասպանութիւնը չընդունելու նպատակը: Իսկ նման բան ընդունելի կրնար ըլլալ միայն հարցին էութեան թափանցելու անկարող թերամիտ մը, կամ չհադէտ պատեհապաշտ մը համար: Արդէն առաջին, կամ երկրորդ խումբին ձեռներէցներու ջանքը չէ՞ր որ այժմէական երեւոյթի մը վերածած էր հայեւթուրք երկխօսութիւն կոչուած ճապկումները: Իսկ ներկայի յանձնախումբը անոնց յաջորդ օղակն էր, բաւական ընդհանուր մօտեցումով մը: Միւս կողմէ, հրամցուածին վերապահութեամբ, թերահաւատութեամբ մօտեցողներու, քննադատողներու մէջ ալ տեհապաշտութիւն դանողներ եղան: Այդ արժեւորումը ուղղուեցաւ օրինակ, ՀՑԴ-ի որուն բուռն հակազդեցութեան եւին քաղաքական ծրագրի մը չգոյութիւնը նշմարուեցաւ: Նաեւ գործի վրայ երեւելու մարմաջը:

Ինչ որ ալ ըլլան յանձնախումբը անվերապահօրէն չվաւերացնելու, զգուշութեամբ մօտենալու, քննադատելու, մերժելու մօտեցումին պատճառները, զգրաւական երեւոյթ է ան. կը վկայէ հայ հանրային կարծիքին ողջմտութեան որ դիւրութեամբ չի տարուիր փայլուն զոյներով հրամցուած հեռանկարներէ: Եւ ըսել որ յատկապէս քաղաքական մարզին մէջ այնքա՛ն յաճախ առիթը ունեցած ենք զգուշանալու մեր ոտքերէն պահը հարկաւոր ձեւով արժեւորելու եւ ըստ այնմ չարժելու անկարողութենէն: Դատելով հաշտութեան յանձնախումբին գած հակազդեցութենէն, տակաւին կարելի է սրբագրութեան յոյս ունենալ:

Այդ հակազդեցութեան մէջ դվխաւոր դերը, ապահովաբար, նախ պէտք է վերագրել յանձնախումբին հայկական կողմէն տրուած բացատրութիւններուն անհամոզիչ բնոյթին. բացատրութիւններ որոնք աւելի արդարացումի կը նմանէին եւ այդպէս ալ ընկալուեցան: Ցեսոյ, կայ հակասական տուեալներու պարագան, որ կրնար միայն թերահաւատութիւն արթընցնել: Առանց վրայ պէտք է աւելցնել տրամաբանական հարցում մըն ալ, որ ամէն անգամ միտքերու մէջ կը ծագի երբ նման երեւոյթի դէմ յանդիման կը գտնուինք: Անձերու ընտրութեան առընչուած հարցումն է այդ մէկը: Ինչո՞ւ միշտ քովընտի, դիւրութեամբ պարագայապաշտ նախաձեռնութիւններու մէջ եւ ոչ՝ տեղին մարդիկ: Այս մէկուն պարագային, օրինակ, ինչո՞ւ հայեւթուրք յարաբերութիւններու հիմնական խնդրին ուղղակի առընչուած դէմքերու, հաստատութիւններու մանակցութիւնը միշտ կը չընդունուի, եթէ իսկապէս միջին ճամբայ մը գտնելու նպատակը անկեղծ է: Հայեւթիւնը ունի հաստատութիւններ, հիմնարկներ որոնք ցեղասպանութեան ճամբով աչխատանք կը տանին ու նման յանձնախումբի մը պարագային հայութեան կողմէ շատ աւելի ներկայացուցչական, ընդունելի մասնակցութիւն կ'ունենան, քան՝ ոչ հայկական չափանիշերով յարմար նկատուած քանի մը հոգին:

Այս կարգի հեռաքրքրութիւնները ամբողջովին չզոհացնելով հանդերձ, չհակեան է յանձնախումբին չորս Հայերէն Արտաքին գործերու նախկին նախարար ու Հ.Հ.Շ.ի նախագահ Ա. Արզումանեանի հետ Անոա Իսրայէլեանի կատարած հարցազրոյցը («Ազատօտ» Յուլիս 21 եւ 24): Ան առաջին խօսքերովը կը վարատէ Հայաստանի ղեկավարութեան տեղեակ ըլլալ - չըլլալուն անորոչութիւնը. կ'ըսէ թէ իր ունեցած տեղեկութեան համաձայն հարցը ամիսներով քննարկուած է Ռ. Քոչարեանի եւ Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեանի կողմէ: Այդ քննարկումներէն եւ դոյացած համաձայնութենէն ետք իրեն հրաւէր ուղղուած է մասնակցութեան:

Երբ լրագրողուհին կը յիչեցնէ թէ նախագահին եւ նոյն նախարարութեան բանբերները հերքեցին իչխանութեան մասնակցութիւնը, Ա. Արզումանեան կը չեշտէ թէ երկուքին յայտարարութիւնները արդէն հակասական էին: Առաջինը ըսած էր թէ տեղեակ պահուած են, բայց չեն մասնակցած յանձնախումբին կազմութեան գործին, իսկ երկրորդը, ամբողջութեամբ հերքած էր որեւէ առընչութիւն: Ինք կը կրկնէ թէ այդ հերքումը չի համապատասխաններ իրականութեան: Յուզեղուած «հիստերիկ» մթնոլորտին կը վերագրէ նախագահին ու նախարարին չէզոքութեան ջանքը: Կ'աւելցնէ նաեւ թէ նախարարը ԱՄՆ-ու Հայկական համագումարին հետ մնայուն կապի մէջ է եւ չարաթական քանի մը անգամ հեռաձայնով վրը խօսին, եւ այլն: Կարեւորը եղրակացութիւնն է. «տեղեկատուութեան որեւէ բաց այս գործընթացում Հայաստանի իշխանութեան համար, չէ եղել»:

Ինչ կը վերաբերի վիճայարոյց երկրորդ նիւթին որ ներկայացուցչական հանգամանքին կ'առընչուի, նախկին նախարարը հակասական բացատրութիւններով չի յաջողիր յատակացում մը բերելու. նախ կ'ըսէ. «Իմ "հանգամանքն" այն է որ ես Ա. Արզումանեանն եմ»: Ապա կը պարզաբանէ. «որպէս անհատ եմ հանդէս գալիս այս յանձնախմբում, որպէս նախկին արտգործնախարար, մասնագէտ, փորձագէտ եւ չեմ ներկայացնում իմ կուսակցութիւնը»: Մօտակցութեան մէջ կ'ըսէ նաեւ թէ չեն ուզեր նոյնիսկ «ներկայացուցիչ» բառը գործածել, քանի որ որեւէ մէկը ներկայացնելու յանկութիւնը չունին: Այսուհանդերձ, զրոյցին վերջին մասին մէջ բաւական զարմանք կը պատճառէ իր հետեւեալ արտայայտութիւնը. «Ես չեմ յաւակնում ներկայացնել ողջ հայ ժողովուրդը կամ թէկուզ ճնշող մեծամասնութիւնը: Ես ընդամէնը ներկայացնում եմ Հայաստանի հասարակութեան մէկ մասը»:

Յանձնախումբին կազմութեան մասնակից Հայերու եւ Թուրքերու թիւին տարբերութեան (4 եւ 6) մասին հարցումին պատասխանելով կ'ըսէ թէ ճիշդ է, երկու թափուր տեղ կայ եւ տրամաբանական կ'ըլլար որ այդ տեղերը զբաւուէին «այն կուսակցութիւնների կամ հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներով որոնք շատ աւելի կտրուկ դիրքորոշում ունեն հայեւթրքական յարաբերութիւնների վերաբերեալ» ու կու տայ Հ.Յ.Դ.ի անունը որպէս «շատ օգտակար» մասնակցութիւն:

Ինչ կը վերյաբերի վիճայարոյց այդ կազմաւորման ստանձնած, կամ անոր յանձնուած պարտականութեան, Ա. Արզումանեան որ նաեւ Հայաստանի դեսպանութեան պաչտօն վարած է Ուաչինկթըն, հետեւեալ տեհմանումը կու տայ. իր կարծիքով՝ Հայաստանէն եւ Թուրքիայէն քաղաքացիներ առանց թապուի կրնան տեղանի մը չուրջ նստիլ եւ առանց պետական պաչտօնեայի պատասխանատուութեան բեռի, քննարկել ցաւալի հարցեր եւ երկու կողմէն ընդունելի լուծումներ փնտռել: Կամ դանուածը յետոյ հանրային քննութեան կը տրամադրուի, կամ որեւէ մէջին եզրի յանգիլ անկարելի կ'ըլլայ ու փորձը կը մնայ փորձ:

Հայեւթուրք յարաբերութիւններու նըման փչոտ, ծայր աստիճան մարտավարական ոլորտի մը մասին քիչ մը չատ պարզունակ այս մօտեցումը չի կրնար չըջանցել բուն ծանրութեան կեդրոնը: Երբ Ա. Իսրայէլեան կը հարցնէ թէ կարելի՞ է խօսիլ հայեւթուրք հաշտութեան հեռանկարին մասին, չըջանցելով ցեղասպանութեան նիւթը, խօսակիցը կը պատասխանէ թէ տեղեակ է կողմերուն ատոր նկատմամբ տրամադրօրէն հակադիր մօտեցումներուն. ինք պատմաբան չէ, միտք ալ չունի որեւէ մէկուն հետ ցեղասպանութեան իրականութիւնը քննարկելու: Բայց իրենց նպատակը իրար համոզելը չէ:

Այս բացատրութիւնը կը մատնէ հակասութեան երկրորդ կէտ մը. եթէ յանձնախումբին ընելիքը, ինչպէս կ'ըսէ Ա. Արզումանեան «քննարկել է ցաւալի հարցը» անոնց ընդունելի լուծում փնտռելու նպատակով, ցեղասպանութեան նիւթը սեղան չբերելու մօտեցումը ցաւալի ի՞նչ կը ձգէ արդեօք քննարկելու եւ լուծում փնտռելու: Զրոյցին չարունակութենէն կը տեղեկանանք մանաւանդ թէ փշաքելի եռեւ դրուած է Ղարաբաղի հարցն ալ: Եթէ երկու երկիրներուն, աւելի ճիշդ՝ Թուրքիոյ եւ հայ ժողովուրդին միջեւ ինկած չըլլար 1915-ը, բոլո՛ր հեռուանկներով, ի վերջոյ, սահմանակից որեւէ երկու երկրի համար սովորական խնդիրներէ, կնճիռներէ ուրիչ ի՞նչ բան կրնար արտասովոր կերպով բարդացնել յարաբերութեան հարցը: Եւ այդ պարագային, ինչո՞ւ հարկ ըլլար նման ճապկումներու, յանձնախումբերու երբ դիւրութիւն ունէին երկու պետութիւններ: Լաւ պիտի ըլլար որ յանձնախումբին մասնակիցներէն, կամ աւելի ճիշդ՝ ըզգացողներէն մէկը սահմանէր խնդրոյ առարկայ «հաչտութեան» ոլորտը. ո՞ր կռիւին, կամ գժտութեան «հաչտութիւնն» է այս ամբողջ յարախաղացութեան թիւրախը, եթէ ցեղասպանութեան թղթածրարը փակի տակ է: Զարմանալին այն է որ ըստ երեւոյթին, հայ մասնակիցները (եթէ միւս երեքն ալ ունին Ա. Արզումանեանի մօտեցումը) ոչ իսկ հարկ զգացած են նման սահմանումի, կամ պիւանագիտական ոչ հրապարակելի պատճառներով իրենց կը պահեն այդ մենաչնորհը. սակայն, գոնէ ատիկա փսխելու տրամաբանական բացատրութիւն մը պէտք է ճարէին, պատասխանելու համար հարցումին թէ ի՞նչ ընելու կ'երթան «հայեւթուրք երկխօսութիւն» կոչուած ճամբով:

Երբ այս մասին քիչ մը չեչտակի հարցում կ'ուղղէ Ա. Իսրայէլեան, ըսելով որ արդեօք թրքական կողմին նպատակը չէ՞ ցեղասպանութեան ճանաչումի դորձընթացը այս հնարքներով փոխարինել, Արտաքին գործերու նախկին նախարարն ու դիւանագիտական անցեալի տէր մէկուն համար բաւական պարզամիտ պատասխան մը կու տայ Ա. Արզումանեան. «Գուցէ եւ դա է եղել նպատակը. ես չգիտեմ: Գիտեմ որ մեր յանձնախումբը չունենալով այդ իրաւասութիւնները, չպետք է բննարկի ցեղասպանութեան խնդիրը: Այս պատասխանով յիչեցնել յանձնախումբը աւելի չէ՞ նմանիր գործադիր մարմնի: Այս տեսանկիւնէն, այլեւս զրեթէ նչանակութենէ զուրկ է ենթակային կարծիքը թէ Թուրքերուն նպատակը ցեղասպանութեան նիւթէն ուշադրութիւն շեղելը չէ:

Մէկ բան շատ յստակ է այս մարզին մէջ. ո՛չ երկխօսութեան նախաձեռնութիւնները, ոչ հաչտութեան յանձնախումբերը, ոչ գործարարներու միասնականն միութիւնները ճիշդ հունին մէջ կրնան դնել Թուրքիան եւ Հայաստանը, այնքան ատեն որ կան տի զեռեղուին, այնքան ատեն որ կան դարու մը խարանէն նուազագոյն վնասով, կամ նոյնիսկ չահով փրկուելու թրքական մտասեւեռումը եւ չահարկումի, կամ պատմական առաքելութեան միամտութեամբ անոր ընդառաջելու հայկական պատրաստակամութիւնը:

ԱՐՓԻ ԹՈՓՈՉԵԱՆ

ԳՆՉՈՒՆԵՐԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԴՐՍԵՁԻՆԵՐԸ

Գնչուներու դէմ թշնամութիւնը դոյութիւն ունեցած է այն օրէն, երբ անոնք առաջին անգամ երեւցած են Եւրոպայի մէջ, 14-րդ դարուն: Գնչուներու ծագումը զրաւոր պատմութեան բացակայութեան պատճառով միշտ ալ խորհրդաւոր մնացած է: Անոնց լեզուին՝ ռոմաներէնի տարբեր բարբառները մտածել կու տան, թէ անոնք չուրջ հազար տարի առաջ հիւսիսային Հնդկաստանէն դաղթած են Միջին - Արեւելք, ուր աչխատած են իբրեւ դուսան, վարձկան լրտես կամ դինուոր, մետաղագործ եւ Ցառայ: Եւրոպացիք սկսալ կերպով զանոնք կը կոչէին «իճիփչըն» (եդիպտացի), որ կրճատելով վերածած են «ձիփսի»ի: Անոնց ընկերութիւնը հիմնուած է աւանդական արհեստներու եւ աչխարհագրական բաժանումի վրայ եւ կը դեկավարուի դերդաստանային համակարգով, ինչ որ յոտորակած է զանոնք: Իրօք, գնչուները միացնող հասարակաց միակ եզրը ոչ գնչուներու, կամ իրենց լեզուով, «կաճիներու» թշնամութիւնն է իրենց նկատմամբ: Այսօր բազմաթիւ գնչու պատասխանատուներ «ձիփսի»ի փոխարէն կը նախընտրեն կոչուիլ «ռոմա», որ ռոմաներով կը նչանակէ «մարդ», սակայն գնչուներու մեծամասնութիւնը տակաւին կը գործածէ «ճիփսի» անունը:

Եւրոպայի տարածքին անոնց դէմ հալածանքը սկսած է առաջին օրէն, երբ եկեղեցին հերեկտիկոսութիւն համարած է անոնց բախտագուչակութեան արհեստը, իսկ պետութիւնները հակաընկերային երեւոյթ մը տեսած են անոնց վաչկատուն կեանքի ձեւին մէջ: Դարերու ընթացքին, տարբեր ժամանակներու անոնց արգիլուած է հագնիլ իրենց գունագեղ հագուստները, խօսիլ իրենց սեփական լեզուն, ճամբորդել, ամուսնանալ իրարու հետ կամ կիրարկել աւանդական արհեստները: Կարգ մը երկիրներու մէջ անոնք սպրկացուած են: Աւելի ուչ ժամանակներու անոնք ենթարկուած են նացիական մաքրագործումի արչաւին. չուրջ կէս միլիոն գնչուներ սպանուած են Ողջակիզումի ընթացքին, որ կը կոչեն Փորրայմոս կամ «մեծ լափումը»: Անոնց ձիերը սպանուած են, անիւները քակուած են վառքերէն, անուններ փոխուած են, կիներու ամլացուած են, պաւակները բռնի խլուած են եւ՝ ոչ գնչու ընտանիքներու կողմէ որդեգրուած (արարք մը, որ Զուիցերիոյ մէջ կը կիրարկուէր մինչեւ 1973...):

Սակայն գնչուները միշտ բազմացած են եւ ճախողութեան մատնած՝ զիրենք իրենց ազգային անջատ խմբաւորում անհետացնելու փորձերը: Այսօր 8 միլիոնէն 12 միլիոն գնչուներ կ'ապրին Եւրոպայի տարածքին, ինչ որ զանոնք կը վերածէ եւրոպական ցամաքամասի ամէնէն մեծաթիւ փոքրամասնութեան: Դժուար է դիտնալ անոնց ճչգրիտ թիւը: Պետութիւններ գնչուներու դոյութիւնը նսեմացնելու նպատակով յաճախ նուազ յայտարարած են անոնց թիւը, իսկ գնչուները իրե՛նք նախընտրած են ցոյց չտալ իրենց պատկերը՝ խուսափելու համար դիւանակալական խոչընդոտներէ: Գրչուները ընդհանրապէս չեն փափաքիր

ARCHIVE
http://Archivebeta.Sakhmet.com

ՆԱԽԱՄԱՐԴԸ ԿՈՎԿԱՍԻՈ՞Ւ ԷՐ

Ուաշինկթընի նահանգին հարաւակողմի ֆէուիք քաղաքին մօտ Գոլոմպիա գետին ափին 1996-ին գտնուած մարդկային կմախք մը որ ինչ հազար տարեկան է, կռւանխնձոր գարճած է գիտնականներու, կարմրամորթերու միջեւ. վէճին մասնակից են իրաւաբանները, գինուորականները, քաղաքական մարդիկ ալ: Կմախքը որ շատ լաւ պահպանուած է, այր մարդու մը կը պատկանի: Ամերիկայի տարածքին

երկիր մ՚ունենալ եւ զայն իրենց սեփականութիւնը հռչակել: «Ռոմանիստանը հոն է, ուր երկու ոտքերուս վրայ կը կանգնիմ», կ՚ըսէ պանտուացի – գնչու հեղինակ Ռանջլա Լի:

***

ԳԻՆՂԻԻ ՃԱՄԲԱՆՆԵՐ

11-ՐԴ ԴԱՐ

Ռոմանական բառերու արմատները գնտեւելով ստեղծուած է լառերու «ճամբայ» մը, որ ռոմանները կը տանի մինչեւ հազար տարի առաջ եւ գնոնք կը տեղադրէ Հնդկաստանի մէջ:

11-ՐԴ ԴԱՐԷՆ 15-ՐԴ ԴԱՐ

Վարկածի մը համաձայն, ռոմանները Հնդկաստանէն դուրս եկած են մանակցելու համար իսլամութեան դէմ դիմադրութեան: Անոնք անցած են Պարսկաստանէն եւ զարեր չարունակ ապրած են Բիւզանդական կայսրութեան տարածքին, ապա 1300-ական տարիներուն ուղղուած են դէպի հիւսիս:

16-ՐԴ ԴԱՐ

Փորթուկալ մեծ թիւով ռոմաներ ազատած է դէպի Պրազիլ եւ ափրիկեան գաղթավայրեր:

19-ՐԴ ԴԱՐ

Ռոմաներու երրորդ գլխաւոր գաղթը սկսած է 1800-ական տարիներու վերջերուն՝ Արեւելեան Եւրոպայէն դէպի Միացեալ – Նահանգներ:

դտնուած մարդկային ամէնէն հին մնացորդն է:

Այս առումով մարդաբաններու մեծ հետաքրքրութիւնը չարժած է. անոնք անհամբեր են այդ պատճառին չնորհիւ ուելլ, տորտ տուեալներ ունենալու Ամերիկայի բնիկներուն մասին:

Սակայն, հարցը հոն է որ կմախքը տրամադրելի չէ ուսումնասիրութիւններու, քանի որ 1990-ի օրէնք մը կը նախատեսէ կարմրամորթերուն յանձնել իրենց պատմութեան առընչուած ամէն առարկայ, կամ ոսկերոտիք: Եւ հիմնուելով այդ օրէնքին, 1996-ին ոչ թէ մէկ, այլ հինգ ցեղախումբեր որոնց հողերը կիյ են Գոլոմպիա գետին, պահանջած են Քէնուիքի կմախքը: Այդ կմախքը անկէ ի վեր կը գտնուի ամերիկեան գինուորական Հարաւարեւմտեան բաժնին մօտ:

Անոր պահուած վայրը կնքելէ առաջ դատական բժիշկը մարդաբանի մը յանձնած է ոսկորները գննելու գործը: Այս վերջինը եզրակացուցած է որ կմախքը կը պատկանի 40 – 45 տարեկանին մահացած մէկուն որ Նրբամարմին էր, եւ ինչ որ ամէնէն հետաքրքրականն է, մարմնակազմութեան յատկանիշներով չատ նման է կովկասեան տիպարին. ունի երկարած գանկ մը, նեղ դէմք մը: Այս յատկանիշները չեն առընչուիր Ամերիտեան ցեղախումբին որոնք միշտ պնդած են թէ իրենք են Ամերիկայի առաջին բնիկները:

Կովկասեան տիպարին նմանութիւնը մեծապէս հետաքրքրական ասպարէզ մը կը բանայ մարդաբաններուն առջեւ: 1932-ին Նոր Մեքսիքայի մէջ գտնուած կմախք մը որ ամերիկեան հողամասին վրայ 12 հազար տարուան հնութիւն կը վերագրէ մարդկային գոյութեան, հիմ ծառայած է վարկածի մըն ալ. անոր համաձայն, Ամերիկան նչուած թուականէն քիչ առաջ կռվկասցի գաղութարարներու ենթարկուած է. անոնք Ասիայէն եկած են հոն, օգտուելով Սիպերիոյ եւ Ասիոյ միջեւ կամուրջի դեր կատարած սառցակոյտ մը, կլիմային մեղմացումի մէկ պահուն: Վարկածին հեղինակները կը բացատրեն որ մոնկոլատիպ ասիացիները քալելով անցած են Պերինկի նեղուցը որ վարձ ժամանակ ետք սառցակոյտին անհետացումով անանցանելի դարձած է կրկին, ասիացի արկածախնդիրները իրենց ճակատագրին լքելով ամերիկեան ցամաքամասին վրայ:

Աւելի մանրամասնուած վարկածի մը համաձայն Ամերիկա յաջորդական եկուրներու թիրախ եղած է: Առաջին հատնողները 25 – 30 հազար տարի առաջ անցած են Պերինկի նեղուցէն, նորադիններ՝ 12 – 15 հազար տարի առաջ: Հիմնուելով ԱՄՆ-ու մէջ եւ այլ տեղեր յատնաբերուած որոշ գործիքներու, պնդողներ կան որ նոյն ճամբով Ամերիկա

ՏՐՈՑԿԻ ԵՒ ԺՈՐԺ ՍԻՄԸՆՈՆ

«Ժուռնալ տիւ Տիմանչ» անցեալի հարցազրոյցներ կը վերհրատարակէ, որոնք յաճախ հետաքրքրական բնոյթ ունին, մանաւանդ, երբ հարցազրոյցի ենթարկուած անձերը, անձէ աւելի անճնաւորութիւններ են:

Այսպէս, Յուլիս 29-ին, թերթը անդրադարձած էր այն հարցազրոյցին, զոր Ժորժ Սիմընոն, Մէկրէի հայրը, վրած է Լէոն Տաւիտովիչ Պրոնչթայնի – այսինքն՝ Տրոցկիի՝ հետ 1933-ին, երբ յօդուածներ կը տորագրէր «Փարի - Սուար»ի մէջ, Եւրոպայի մասին:

Տրոցկի, 1929-ին աքսորուած է եւ Թուրքիայէն անցնելէ ետք, հաստատուած Մեքսիքա, ուր կը չարունակէ իր պայքարը: 1938-ին, կը հիմնէ 4-րդ Միջպետականը, յանուն լենինիզմի, տեսական եւ համաշխարհային յեղափոխութեան դէմ գնելու համար ստալինեան տեսակէտին՝ ընկերվարութեան կատարեալ մէկ երկրի մէջ:

Տրոցկի պայման կը գնէ Սիմընոնի՝ հարցում եւ պատասխան պէտք է ըլլան գրաւոր: Պատասխանները գրած է ուրաերէն, քարտուղարը թարգմանած է:

Սիմընոն կը հարցնէ. – կը խորհի՞ք որ ցեղերու հարցն առաջնայինը պիտի ըլլայ ներկայի հոլովոյթին մէջ, թէ ոչ ընկերային, տնտեսականը կամ գինուորականը պիտի գերազանցեն:

Տրոցկի կը պատասխանէ. – Ոչ, չեմ

անցած են Եւրոպացիներ ալ, քանի որ այդ գործիքները չատ նման են Սպանիոյ, կամ Ֆրանսայի մէջ գործածուածներու:

Այս տեսակ վարկածներու ներկայութեան, հասկնալի է որ Քէնուիքի կմախքը անմիջապէս չյանձնուի կարմրամորթերուն: Արդէն, ութ ծանօթ գիտնականներ բողոք ներկայացուցած են դատարան, չտեսու համար որ ցեղախումբերը չեն կրնար ազգայնական կապ մը պնդել այդ պատճառին հետ, մանաւանդ երբ արտօնուած չէ անոր ուսումնասիրութիւնը: Դատը որ բացուած է այդ բողոքով, այնպէս կը թուի որ երկար կը տեւէ, մանաւանդ երբ նախընթացի հանդամանք կ՚ունենայ, ամերիկեան մարդաբաններու յետագայ աշխատանքին համար:

ՔԱՂՀԱՆ

խորհիր որ ցեղը վճռական տարր մը ըլլայ յետագայ ժամանակաշրջանի եւ ջրջման մէջ: Ցեղը, մարդաբանական հոմ – այլասեռ, պիղծ, յղացք մըն է, որմէ պատմական զարգացումը ստեղծած է դրեթէ յօրինուի արտաքրութիւն մը, որ ազգերն են: Դասակարգերը եւ ընկերային համախմբումները, որոնք ծնունդ կ՚առնեն անոնց հիմերուն վրայ, պիտի որոշեն նոր ժամանակաշրջանի ճակատագիրը: Չեմ ժխտեր անշուշտ, ցեղերու առաքինութեանց եւ զատորոշ յատկանիշերու իմաստը, բայց, յեղաշրջման գործընթացին մէջ, աշխատանքի թեքնիքին եւ մտածողութեան թեքնիքին առջեւ, երկրորդական կը դառնան: Ցեղը անփոփոխելի եւ կրաւորական տարր մըն է: Պատմութիւնը ուժական է: Ինչպէ՞ս համեմատաբար անչարժ տարր մը կրնայ ինքն իրմով սահմանել չարժումը եւ զարգացումը: Ցեղերու բոլոր զատորոշ յատկանիշները կ՚անհետանան ներքին չարժակին առջեւ: Երբ Հիթլէր պատրաստուեցաւ պետական վարչակարգ մը հաստատելու համապատասխան պերման – հիւսիսային զարիւն ցեղին, ընդօրինակելիք աւելի լաւ բան չգտաւ, քան Հարաւի լատինական ցեղը: Մուսոլինի իչխանութեան գալու իր պայքարին մէջ, զայն տապալելով հանդերձ, օգտագործեց երմանացիի մը կամ գերմանացի Հրեայի մը՝ Մարքսի ընկերային վարդապետութիւնը, զոր մէկ կամ երկու տարի առաջ «բոլորիս անմահ վարպետը» կոչած էր:

1933-ին, Տրոցկի չի ծածկեր թէ յոռետէս է նացիականութեան վտանգին նկատմամբ: Ան կ՚ըսէ. – «Ֆաչիզմը, մանաւանդ գերմանական ազգային - ընկերվարութիւնը պատերազմական ցնցումներու անվիճելի վտանգ մը կը բերէ Եւրոպայի: Հեռուն ըլլալով, թերեւս կը սխալիմ, բայց, ինծի այնպէս կը թուի որ հարկ եղածին չափ անդրադարձ չի գոներ այդ վտանգին տարողութիւնը: Բացարձակապէս անխուսափելի կը նկատեմ պատերազմական պայթում մը Ֆաչական Գերմանիոյ կողմէ: Ճիշդ այդ հարցն է, որ կրնայ վճռական դառնալ Եւրոպայի համար: Բայց, իմ գնահատումս յոռետես կրնայ թուիլ միայն անոնց որոնք պատմութեան ընթացքը կը դիտեն չատ կարճ մխաւորումով մը: Մօտէն, բոլոր մեծ ժամանակաշրջանները չատ մութ երեւցած են: Պէտք է ընդունիլ, որ չատաղիմութեան գործընթացը չատ անկատար է:

Հակառակ Հիթլէրի կամ հիթլէրներու ներկայացուցած վտանգին, Տրոցկի համոզուած կը մնայ որ «ի վերջոյ, մարդկութիւնը իր ճամբան պիտ գտնէ: Ամբողջ անցեալը տուր երաչիքն է»:

Թ. Ա. Թ.

ԹԻՒ 17 ԹԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Թ.

ՆՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս որոշումը տալէ ետքը Օհանեան վերադարձաւ Թիւ 17 խաֆիէի խնդրին:

– Վարչութիւնը պարզապէս խեղդել ուզեց գործը, – դիտել տուաւ. – Առաջին օրէն այս էր արդէն իր նպատակը:

– Բայց կ՚երեւայ, որ որոշ փաստ ալ կայ մէջտեղ, – յարեց Աղասեան:

– Որոշ փա՞ստ, բայց իրողութիւն կա՛յ մէջտեղ, – գոչեց Սուքին, – թուղթեր պրուած են Ներքին գործերու նախարարին, ասիկա անհերքելի ճշմարտութիւն մըն է:

– Ես խնդրին մանրամասնութիւնները չեմ գիտեր, ժողովին մէջ լսածներէս կը գատեմ խնդիրը, – պատասխանեց Աղասեան, – արդ, ժողովին մէջ ո՛չ ոք կրցաւ կարեւոր յայտնութիւն մը ընել Թիւ 17 խաֆիէին մասին, նոյնիսկ անոր գոյութիւնը կարելի չեղաւ ապացուցանել... Շերինեան քան մը չկրցաւ ըսել...

– Որովհետեւ Շերինեան քան մը չի գիտեր, – դիտել տուաւ Օհանեան, – ան-նիկա Դուրեան Սրբազանէն ու Գալաքեան վարդապետէն խօսք մը խմացեր է ու ատոր վրայ, առանց խնդիրը քննելու, ուզած-չուզած մարդկային անօգուտ իրարանցում մը առաջ բերաւ...

– Որ իւղ քսեց բո՛ւն յանցաւորին կամ աւելի ճիշդ՝ յանցաւորներուն հային, – ընդմիջեց Սուքին՝ իր ակնոցը չտկելով:

– Հիմա ձէնիօնին երթանք նէ՝ քեզի կը պատմեմ գործը, – ըսաւ Օհանեան, – փողոցը խօսիլը աղէկ չէ:

– Ըսել է՝ քանի մը հատ խաֆիէ կայ մեր մէջը, – ըսաւ Աղասեան Սուքինի գառնալով:

– Ես այնպէս կը կասկածիմ, ասիկա մէկ մարդու գործ չէ:

– Բայց Վարչութիւնը յատարարեց թէ պաշտօնաթուղթերուն մէջ պակաս չկայ բնաւ:

– Վարչութիւնը ստիպուած էր այդպէս յայտարարելու:

– Ուրեմն ո՞ւտ էին եղած յայտարարութիւնները:

– Եթէ ոչ բոլորովին սուտ, չատ խեղաթիւրուած:

– Ինչ որ է, քիչ մը ետքը կը խօսինք, հիմա ուրիչ խօսք ըրէ՛ք, – խորհուրդ տուաւ Օհանեան:

Երբ հասան ձէնիօնի սրճարանը, Օհանեան իր երկու ընկերները առաջնորդեց խոր անկիւն մը, ուր բոլորովին առանձին էին:

– Հոս ապատօրէն կրնանք խօսիլ, – ըսաւ աթոռի մը վրայ տեղաւորուելով:

– Գիտես որ, – սկսաւ Սուքին խօսքը Աղասեանի ուղղելով, – Վարչութեան կողմէ ըրած յայտարարութեան մէջ տոքթոր Թէրզեան նամակի մը ակնարկութիւն ըրաւ, որուն պատճէնը, հակառակ Պատրիարքին հրամանին, քարտուղարը իր քովը պահեր, յետոյ կորնցուցեր է...

– Այո՛, անձնական անկարեւոր նամակ մըն է եղեր, – պատասխանեց Աղասեան, – Տոքթոր Թէրզեան այնպէս ըսաւ:

– Վարչութեան անձնական անկարեւոր նամակ մը յայտարարածը, ընդհակառակը, չատ գաղտնի ու կարեւոր նամակ մըն է Պատրիարքին կողմէ Պօղոս Նուպար փաչայի ուղղուած, – ըսաւ Սուքին խորհրդաւոր ձեւով մը:

– Ի՞նչ կ՚ըսես, – գոչեց Աղասեան զարմացած: – Բայց այն ատեն ինչպէ՞ս Վարչութիւնը կ՚ըսէ, թէ անկարեւոր է:

– Քիչ առաջ ըսի քեզի, որ Վարչութիւնն իրողութիւնները կը խեղաթիւրէ:

– Այն ատեն պէտք էր բողոքել, ես եթէ պիտնայի, ատիկա երեւան կը հանէի:

– Ի՞նչ օգուտ, քանի որ նամակը կորսուած է:

– Բայց դոնէ ասկէ ետքը պէտք է, որ ուշադրութիւն ընեն:

– Այդ մասին միջոցներ ձեռք կ՚առնենք, – պատասխանեց Սուքին լուրջ եւ հանդիսական:

– Միայն այդ նամակին վրա՞յ է ամբողջ խնդիրը:

– Դեռ ինչե՛ր, դեռ ինչե՛ր, – գոչեց Օհանեան՝ ձեռքը օդին մէջ ճօճելով:

– Աւելի խրչեախը պատմեմ քեզի – չարունակեց Սուքին: Ըէչիտ պէյի Ներքին գործերու նախարար եղած ատենը, օր մը, Վարչութեան երկու անդամներ այցելութեան կ՚երթան իրեն, եւ խօսակցութեան միջոցին Ըէչիտ պէյ յանկարծ գպրոցը բանալով՝ ծրար մը տակաւին չբացուած նամակներ ցոյց կու տայ եւ կ՚ըսէ՝ «Մի՛ կարծէք, որ մենք չենք գիտեր կամ չենք խմանար ձեր գաղտնի գործունէութիւնները. մենք ամէն միջոց ունինք լուր առնելու համար... տեսէ՛ք այս նամակները, տակաւին նոր առացայ, բայց ժամանակ չունեցայ քննել տալու... ամէնքն ալ Պատրիարքարանին կը վերաբերին»:

– Ինչ կ՚ըսես, – գոչեց Աղասեան ահի ի բերան եղած:

– Բացարձակ իրողութիւնն է, որ կը պատմեմ - հաստատեց Սուքին:

– Եւ ես ալ ճշմարտութեանը կը վկայեմ – աւելցուց Օհանեան:

– Այդ նամակները ինչպէ՞ս վրնան նախարարին ձեռքը անցնիլ:

– Երկու կերպով, կա՛մ այն է, որ թղթատունէն կ՚առնէ եւ կա՛մ այն անձն է, որ պաշտօն ունի նամակը թղթատունը տանելու:

– Այդ նամակները ո՞վ կը տանի թղթատուն:

– Ընդհանրապէս Պատրիարքարանի բարապանները:

– Ո՞ր թղթատունը կը չանձնուին:

– Ֆրանսականին, – պատասխանեց Սուքին, – եւ որովհետեւ հաւատալի չէ, որ Ֆրանսական թղթատունէն այդ նամակները չանձնուին Ներքին գործերու նախարարին, մեր վարկածը կը կեդրոնանայ աւելի բարապաններուն վրայ:

– Հաւատալիք իրողութիւններ, որոնցմէ րնաւ տեղեկութիւն չունէի, – խոստովանեցաւ Աղասեան:

– Քեզի կ՚ըսեմ, որ չատ բաներ կը գտնուին կոր, չես ուզեր հաւատալ, – դիտել տուաւ Օհանեան:

– Եւ այդ մասին րնաւ քննութիւն մը չեղա՞ւ...

– Հարեւանցի կերպով բարապանները հարցափորձեցինք, անոնք ալ բնականաբար ուրացան, ու այս կերպով խնդիրը փակուեցաւ:

– Բայց բարապան մը ինչպէ՞ս կրնայ չարաբերութիւն ունենալ Ներքին գործերու նախարարի մը հետ, – դիտել տուաւ Ադասեան:

– Կը տեսնամ, որ չատ միամիտ մարդ ես, խոթերդ չմնայ ամա, – ըսաւ Օհանեան խնդալով:

(Շար. 37)

Ժան – Լիւք եւ Ժան – Ֆիլիփ Մելքոն եւ բազմաթիւ բարեկամները խոր ցաւով կը ծանուցանեն՝

ԷՎԼԻՒՆ ՇԱՀՄՈՒՐԱՏԵԱՆԻ

(Ազգիկը՝ Արմենակ Շահմուրատեանի)

մահը, որ պատահեցաւ Օգոստոս 4–ին Փարիզի Օթէլ – Տիէօ հիւանդանոցը, 87 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր եկեղեցին

15, rue Jean-Goujon, 75008 Paris

Հինգշաբթի, Օգոստոս 9, ժամը 14·30–ին։

Որեւէ մահագդ ղրկուած չընդլայնով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

(Շար. Ա· էջէն)

«Բարեկենդանի երկիրը»։ Կեանքը նուիրած է ճնշուածներու պաշտպանութեան։ «Լիպերասիոն» արձագանգելով պրա – դլյցի համայնավար գրագէտին մահուան, կը գրէ թէ անոր գործին մէկ մասին շատ լաւ կը պատշաճի Ազնաւուրի երգին սա նախադասութիւնը· – «Թշուառութիւնը նուազ տաժանելի է արեւին» (ի դէպ, թերթը սխալած է նախադասութեան մէջ)։

ՎՈՒԼՔԱՆի (Ռումանիա) ածխահանքին մէջ պատահած արկածին հետեւանքով, 14 բանուորներ մեռած են եւ երկու ուրիշներ ալ ծանրօրէն վիրաւորուած։

ԻՍՐԱՑԼԻի Պաշտպանութեան նախարարը՝ Պենիամին Պէն Էլիէզէր յայտարարած է ճայնասփիւռէն, որ զինուորական լուծում չկայ հակամարտութեան եւ ըստիպողական կը նկատէ քաղաքական համբու ընդդրկումը։ Միւս կողմէ, Աշխատաւորական նախկին նախարարը՝ Եոսի Պէյլին մաս կազմած է «Խաղաղութեան ակումբ»ին, որ տողանգք մը կազմակերպած էր Թել – Ավիվ, Օգոստոս 4–ին, քանի մը տասնեակ հազար հոգի համախմբելով եւ այդ առթիւ յայտարարած էր՝ «Պաղեստինցի ահաբեկիչներու ինքնիշխանութեան կառավարութեան միակ քաղաքականութիւնն է եւ տեղ մը չի տանիր»։ Ամմանի մէջ, իսրայէլացի գործակարի մը դիակը պառնուած է իր ապրանքին առջեւ, ինչ որ առաջին անգամ կը պատահի։ Կասկած կայ որ հաշուեյարդար մըն է, թէեւ Պէյրութէն ապահովութեան տէր եղած է «Յորդանանի ազատագրման կազմակերպութիւնը»։

Date à retenir

La Section «HELEN PUZANT»
d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une **SOIREE DANSANTE**
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec **l'Orchestre «Gaïdzag's»**

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

De passage en France, au cours
d'un grand tour d'Europe
organisé dans le cadre des festivités
du 1700ème anniversaire
de la christianisation de l'Arménie
nous accueilerons
pour un **SPECTACLE UNIQUE**

L'ENSEMBLE
FOLKLORIQUE

DATEV

(danseurs âgés de 10 à 14 ans)

en l'ESPACE GARBIS MANOUKIAN
40, rue d'Arménie, 69003 LYON

VENDREDI 17 AOUT à 20 heures 30

Venez nombreux les applaudir
également...

—— P.A.F. 50 F ——

Renseignements:
☎ M.C.A.V. **04.78.26.28.71**
(les après-midi)

Maison de la Culture Arménienne
de Villeurbanne
Croix Bleue des Arméniens de France
Section de Lyon-Villeurbanne

50ème Anniversaire du Pèlerinage à SAINT-GREGOIRE de TALLARD

ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ՏԱՐԵԿԱՆ
ՈՒԽՏԱԴՆԱՅՈՒԹԻՒՆ

Sous l'égide de
l'Eglise Apostolique Arménienne
du Midi de la France
et avec le concours de
l'Association Cultuelle des Arméniens
de GAP et des Hautes Alpes

Dimanche 9 septembre

à 10h30 — La Sainte Messe sera célebrée par

Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens
de Rhône-Alpes

l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens
du Sud de la France

Avec la participation de la Chorale
SAHAK - MESROP
sous la direction de
Khatchig YILMAZIAN

à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre

Renseignements & Réservations :

— **Cathédrale Arménienne**
de Marseille, tél. : 04 91 77 84 70

— **Association Cultuelle des Arméniens**
de GAP, tél.: 04 92 51 71 80 /
04 92 51 00 87

—— Participation aux frais ——

Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre S P I T A K
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

P r o g r a m m e : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F

Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

—ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ—

Ս. ՅՈՒՂԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս· Աստուածածնի
Սկիզբը ժամերգութեանց՝ ժամը 8·45–ին։
Պատարագ ժամը 10·30–ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԱՇԵԱՆ
կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի Առաջնորդ Հայոց Փարիզի
Պատարագի աւարտին՝ խաղող կ'օրհնուի։
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13, Բ· օր
Վերափոխման։ Ցիշատակ Մեռելոց։
Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի։
Կը պատարագէ՝
ՏԻՐԱՑՐ ԲՀՆԳ. ԳԼՂԼՃԵԱՆ
Պատարագի աւարտին՝ Հոգեհանգիստ «վասն հանգուցելոց»։

Ս· ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Վերափոխումն Ս· Աստուածածնի։
Ժամերգութիւն ժամը 9·30–ին։
Պատարագ ժամը 10·30–ին։
Յաւարտ պատարագի Խաղողօրհնէքի աւանդական արարողութիւն։
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13
Ցիշատակ Մեռելոց։
Ժամը 10–ին պատարագ ապա հոգեհանգստեան պաշտօն «Վասն հանգուցելոց»։

ՎԱՐԱԳԱՑ Ս· ԹԱՋ ԱՐՆՈՒՎԻԼ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս· Աստուածածնի։
Ժամերգութիւն ժամը 9·45–ին։
Պատարագ ժամը 10·45–ին։
Կը պատարագէ հոգեւոր հովիւ՝
ՄԵՍՐՈՊ Ա· ԲՀՆԳ· ԺԱՄԿՈՉԵԱՆ
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողի աւանդական օրհնութիւն։

Ս· ՑԱԿՈԲ – ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Է Ս· Աստուածածնի
Այս առթիւ Լիոնի Ս· Ցակոբ Մայր եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի։
Օրուան պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՋԱՔԱՐԵԱՆ
Հայր· Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայից
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը։
Հաւատացեալները որոնք օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կը-նան ուղարկել Եկեղեցւոյ Դիւանատունը։

ՄԱՐՍԷՑԼԻ ՍՐՔՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Ժամերգութիւն ժամը 8·30–ին։
Հանդիսաւոր պատարագ ժամը 9·45–ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԻՐԻՃԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Հարաւային Ֆրանսայի Հայոց
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն խաղողոյ» աւանդական արարողութիւնը։
ԾԱՆՕԹ. – Անոնք որոնք կը փափաքին այս առթիւ խաղող նուիրել, թող հաճին տեղեակ պահել Մայր Եկեղեցւոյ Դիւանատունը։
Հեռաձայն. –
04 91 77 84 70

ՍԷՆ–ԼՈՒ — Ս· ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Պատարագ ժամը 10–ին։
Խաղողօրհնէք ժամը 11·45–ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա· ԲՀՆԳ. ՏԻՏԻԵԱՆ
ԾԱՆՕԹ. – Խաղողի կամ փոխան խաղողի նուէրները կը ստացուին Թագակնուեցեաց մօտ։

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
Home Arménien

MERCREDI 15 AOUT

FETE CHAMPETRE

10h: Messe solennelle Chapelle Saint-Jean
Célebrée par Monseigneur DARON GEREJIAN
A partir de 12h30: Bar & Buffet
Animation : **MARTEN YORGANTZ • Danses traditionnelles**
107, Avenue Maréchal Lyautey
83700 Saint-Raphaël
Réservations et renseignements :
au 04.94.19.51.50

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris
du jeudi 4 au lundi 8 octobre
à l'occasion de la Béatification de
Mgr. IGNACE MALOYAN
Archevêque de Mardine, martyr en 1915.
le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 10
VENDREDI
10 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՀԱՐԱՁ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925.
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում) 1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·229 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 77' ANNEE — N° 20.229

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ՍԴՀԿ Կ'ՈՂՋՈՒՆԷ ՀԱՅԵՒԹՈՒԲԻՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Հայ Ամերիկեան խորհուրդը հաղորդագրութեամբ մը «քաջալերանքի արժանի» նկատած է հայեւթուրք հաշտութեան յանձնախումբին կազմութիւնը, զայն պնդելով «զղջալ լաւատեսութեամբ»։ Կոմիտակից յայտնելով չինչ երկմտութեան մը զայրացման երկու ժողովուրդներուն միջեւ, յանդելու համար Հայաստանի ու Թուրքիոյ բարի դրացկան յարաբերութիւններուն, կուսակցութիւնը հաշտութեան երկարատեւ ծրագիրին վախճանական կէտը կը նկատէ ցեղասպանութեան ճանաչումը։

(Օգոստոս 8 / 9)

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Վարչապետ Ա. Մարգարեանի նախագահութեամբ կազմակերպիչ յանձնաժողովը Օգոստոս 8–ի նիստին հաստատած է անկախութեան տասնամեակի ոճնակատարութիւններու ծրագիրը։ Ան կազմած է Երեւանի ու մարզերուն մէջ աւելի քան երկու տասնեակ նչումներով։ Օգոստոս 23–ին յուշատախտակ մը կը դնուի, անկախութեան հռչակագիրը ընդունելու տասնամեակը նչելու համար, նախկին Գերագոյն Խորհուրդի նիստերու շէնքին պատին։ Իսկ Սեպտեմբեր – Հոկտեմբեր ամիսներուն համերգներ, պարի փառատօն, ցուցահանդէսներ, Ֆիլմերու ցուցադրութիւններ, մարզական մրցարշաւներ տեղի կ'ունենան։ Հրապարակ կը հանուին դրոշմաթուղթեր, յուշադրամ, ալպոմ, պահարաններ։

*
**

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՊՕՐԻՆԻ ՄԵԿՆՈՒՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Գաղթերու միջազգային կազմակերպութեան Հայաստանի գրասենեակէն հրապարակուած են երկրէն կիներու եւ անչափահասներու ապօրինի փոխադրութիւններուն մասին տեղեկութիւնները։ Գրասենեակին պատասխանատուն ըսած է թէ կիներու եւ չափահասներու համար թիրախ երկիրներ կ'ըլլան Արաբական Էմիրութիւնները, Թուրքիան, իսկ ապօրինի արտագաղթի համար Գերմանիան, Ճնանստանը, Պելժիան։ Այդ գործին մէջ ներգրաւուած են մեծ թիւով մարդիկ, համբորդական կազմակերպութիւններ։ 1997–էն ետք արտասահման մեկնած ու վերադարձած 59 կիներու մօտ կատարուած հետազօտութենէն յայտնի է, որ անոնց 65%–ը մինչեւ 30 տարեկան են, երկուքը անչափահաս, 25%–ը բարձրագոյն կրթութեան տէր. մեծ մասը եղած է Գիւմրիի, Վանաձորի քնակիչ։ Այդ կիներուն չուրջ կէսը գլխաւորաբար Արաբական էմիրութիւններուն մէջ մղուած են մարմնավաճառութեան, մօտ 30%–ը Թուրքիոյ մէջ բարոյական խոչընդոտում կրած, որպէս աժան աշխատող

ՕՐՈՒԱՆ ՀԱՐԹԵՐ

ԻՐԱՔԻ ՔԻՒՐԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԻ ՁԱՄԲՈՒՆ ՎՐԱՑ

Քրտական մրցակից երկու կազմակերպութիւններ են Քիւրտիստանի ժողովրդավար կուսակցութիւնը եւ Քիւրտիստանի Հայրենակցական միութիւնը. անոնք 1998–ին Ուաշինկթընի մէջ հաշտութեան դաշինք մը ստորագրած էին։ Երեք տարի ետք, այդ համաձայնութեան շատ մը կէտերը տակաւին կիրարկութեան չեն ղրկուած երկու կողմերուն միջեւ որոնք իրենց հակակշռին տակ կը պահեն Իրաքի հիւսիսային երկու շրջանները։ Վերջերս, երկու կողմերը որոշ մերձեցում մը ցոյց կու տան, Ուաշինկթընի դաշինքը յարգելու ուրամադրութեամբ։

Աւոր յայտարար մէկ նշանը այն է որ երկուքն ալ զաղրած են լրատուիւններու միջոցով իրար հարուածելէ։ Ապա, կը կանան առաւելագոյն չափով իրենց մէջ լուծել ծագած հարցերը, խուսափելով դիմելէ երրորդ կողմերու՝ ԱՄՆ–ու, Թուրքիոյ կամ Իրանի։ Անոնք ի վերջոյ հասկցած են թէ շրջանին մէջ խաղաղութիւն հաստատելու գործին մէջ առանձին են։

Թէ՛ ժողովրդավարական կուսակցութիւնը, թէ՛ Հայրենասիրական միութիւնը սկսած են Իրաքի Քիւրտերուն առօրեայ հարցերուն նախնտրութիւն տալ։ Արդէն սկսած է 1994 – 1997–ի բախտումներուն մէկ կողմէն խոյս տալով միւսին մօտ ապաստանած ընտանիքներուն վերադարձը դէպի իրենց օճախները։ Վերջած են երկու դօտիներուն միջեւ շրջադայութեան պատուարները եւ մտաւորականներու, արուեստագէտներու երկխօսութիւնը կը քաջալերուի։ Քրտական կուսակցութիւնը որ Իրաքի եւ Թուրքիոյ միջեւ քարիւղի փոխադրութեան միջնորդի հանդամանքով կարեւոր եկամուտ ունի, սկսած է իր մրցակիցին շրջանին մէջ բնակող վարչական պաշտօնեաներուն ալ աշխատավարձ տալ։ Լուրջ խնամք կը տարուի ենթակառոյցներու եւ տրանսպորտի աշխուժացումին։ Վերաշինուած են քանդուած գիւղերը, փոքր շրջանարներ կառուցուած եւ ոռոգումի ծրագրեր պատրաստուած։ Զանքեր կ'ըլլան նաեւ երկու դօտիին համար արտասահմանէն, յատկապէս քրտական սփիւռքէն, ներդրումներ ապահովելու։

Կրթական մարդն ալ առաջնային տեղ կը գրաւէ։ Դպրոցներու ցանց մը հաստատուած է, շրջանին մինչեւ ամէնէն հեռաւոր ծայրամասերը։ Իրաքեան Քիւրտիստանի երեք համալսարանները ալ կապուած են համացանցին։ Մասնաւորական մարզին մէջ ալ խիտ գործունէութիւն կը տարուի. դասախօսութիւններ, դիտահաւաքներ տեղի կ'ունենան լրագրեան Քիւրտիստանի քաղաքներուն մէջ։ Անկախ թերթեր, պարբերականներ լոյս կը տեսնեն, առանց քաղաքական գրաքննութեան ենթարկուելու։

Շրջանի տնտեսութեան բարգաւաճումին մէջ կարեւոր դեր կատարած է ՄԱԿ–ի «Աննդեղէնի փոխարէն քարիւղ» ծրագիրը։ Թէեւ քիւրտ պատասխանատուները կը դանդատին որ ՄԱԿ–ի դործակատարները հակառակ իրենց խոստումին, քրտական տեղական չուկայէն ցորեն ու հողային այլ արտադրութիւններ չեն գներ։

Արեւմուտքի դէտեր կը նկատեն որ Իրաքեան կառավարութեան դէմ երեսնամեայ պայքարին ու եղբայրասպան կռիւներու մէջ թրծուած պատասխանատուները մրնացած են այլեւս թէ կարեւորը հաստատութեան համաձայնագիր մը ստորագրել չէ, այլ՝ անոր կիրարկութեան պայմանները ստեղծել։ Այսուհանդերձ, հիւսիսային Իրաքի քրտական երկու գլխաւոր կազմաւորումներուն տարակարծութիւնները հիմնապէս լուծուած չեն։ Իրաքի, Թուրքիոյ, Իրանի ու Սուրիոյ միջեւ ինկած այդ շրջանը տակաւին կը նայ անակնկալներու բեմ դիտել։ Սակայն, դոնէ ժողովրդավարական կուսակցութեան եւ Հայրենասիրական միութեան խաղաղութեան նուիրուած ջանքերը, կրթական եւ տնտեսական մակարդակը բարձրացնելու քաղաքականութիւնը, որոշ չափով թոյլ կու տայ Իրաքի Քիւրտերուն առիթ տալու որ ազատութեան իրենց երազները իրականութեան ճամբուն վրայ նկատեն։

ՄԱՐԻ – ԳԱՅԵԱՆԻ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԻՆ ՊԱՐՏՈՒԱԾ

Թէնիսի զուիցերահայ խաղացող Մարի – Գայեանէ Միքայէլեան որ վերջին շրջանին փայլուն արդիւնքներ ձեռք ձգած էր միջազգային հանդիպումներու, եղրափակիչ փուլին պարտուած է ամերիկացի իր մրցակիցէն, 140 հազար տոլար մրցանակով զուիցերական մրցաշարքի մը։

Հայաստանի Թէնիսի Դաշնակցութենէն տեղեկացուցած են որ Մ. Գ. Միքայէլեան նախնական համաձայնութիւնը տուած է Հայաստանի հաւաքականի կազմին հանդէս գալու։

Ա. ՇԱՐՈՆ - Գ. ՔՃԷՎԻԹ ԼԱՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Իսրայէլի վարչապետը Օգոստոս 8–ին ապահովութեան ծայրայեղ պայմաններու մէջ միօրեայ այց մը կատարած է Անգարա։ Թուրքիոյ իր պաշտօնակիցին հետ հանդիպումին գլխաւոր նիւթը եղած է Միջին–Արեւելքի խաղաղութիւնը։ Թուրք մամուլին տեղեկատուութեան համաձայն Գ. Քճէվիթ փորձած է մնայուն խաղաղութեան մը սիրոյն որոշ զիջումներ ընդունել տալ Ա. Շարոնի. ըսած է որ բանակցութիւններու վերսկսելու համար հրաժարին բրտութեան արարքներուն պաղեստինի կողմէ ամբողջովին վերջ տալու նախապայմանէն։ Իսրայէլի վարչապետը կորուկ կերպով մերժած է թելադրանքը, աւելցնելով որ եթէ Թուրքիա Իսրայէլի դէմ դիրք ճշդէ, իրենք ալ կը փոխադարձեն։ Ան նաեւ ըսած է թէ Թուրքիա եւս որպէս ահաբեկչութեան հարցը ունեցած երկիր մը, պէտք է դիտնայ թէ կրակոցներու տակ բանակցիլ կարելի չէ։ Ուզած է որ Անգարա Արաֆաթի թեթեւցէ վերջ տալ բրտութեան արարքներու։

Ա. Շարոնի այցը որ բաղդի ցոյցերու ալ տեղի տուած է, Թուրքիոյ եւ Իսրայէլի միջեւ պաղ յարաբերութիւններու շրջանի մը սկիզբը կը նկատուի։ Մանաւանդ, թուրք մամուլը կը նչէ թէ Շարոն ապարդիւ կարդացողի կեցուածք մր ունեցած է, օրուան յայտարարին մէջ տեղ չէ տուած Աթաթիւրքի յուշադամբանին այցի մը, իսկ թրքական կողմը նախարարական մակարդակով չէ դիմաւորած զինքը։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Լիբանանի մէջ, բանակին տեղեկատուութեան սպաներկութիւնները պատգամաւորական ձերբակալութիւններու ձեռնարկած են Օգոստոս 5–էն ի վեր քրիստոնեայ շրջանակներու մէջ։ 150–էն 250 մարդիներ, անդամ՝ 1994–ին լուծուած Լիբանանեան Ուժերու, ձերբակալուած են։ Աւոնք կը նկատուին Սուրիոյ ընդդիմադիրներ եւ արդէն 16–ը դատուած են Պէյրութի զինուորական դատարանի մը կողմէ «պետութեան դեկավարին դէմ անուանարկութեան եւ սուրիական բանակի դէմ վարկաբեկման» ամբաստանութեամբ։ Եօթը տարի է առաջին անգամն է, որ ձերբակալութիւնները կը վերաբերին քրիստոնեայ այդ միաւորներու բարձրաստիճան պատասխանատուներուն։ Ձերբակալութիւնները սկսած են այն պահուն, երբ Օգոստոս 5–ին, վերջ կը դրնէր մարտնի պատրիարք՝ Սֆէյրի պատմական այցելութիւնը Շուֆի մէջ, որ Ճումպլաթի բերդն է, կնքելու համար հաշտութիւնը քրիստոնեաններու եւ մահմետականներու միջեւ։ Երկուքն ալ դէմ են Սուրիոյ դրամանի։ «Իշխանապաշտ» չարժումին մէկ մտաւորականը՝ Սամիր Ֆրանճիէ կ'ըսէ, այս առթիւ.– «Ձերբակալութիւնները պատասխան մրն են այդ հաշտութեան, որ կու գայ հերքել այն դաղափարը ըստ որուն Լիբանան սուրիական հոգատարութեան պէտք ունի չընկդմելու համար յարանուանական խռովութիւններու մէջ։

ԱԼԺԵՐԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Օգոստոս 8–ին, շրջափակեցին մայրաքաղաքը՝ Ալժէ, որպէսզի Գապիլիոյ ցուցա–

(Շար·ը Գ. էջ)

1901-2001
ՄԱՇՈՒԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՀԱՑ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՔԱՆԻ ՄԸ ՀՍԿԱՆԵՐՈՒ ԾԻԾԱՏԱԿԻՆ

Հ. Ղեւոնդ Ալիշան (Քերովբէ Ալիշեան). – Բանաստեղծ, լանասէր, պատմաբան, աշխարհագրագէտ, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ 1838-էն հայ լուսաւորութեան այս հսկան ծնած է Կ. Պոլիս 1820-ին. առեն մը տեղւոյն Զարդխեան վարժարանը յաճախելէ ետք (1830 – 1832), իր կրթութիւնը կը չարունակէ Վենետիկի Մուրատ – Ռափայէլեան վարժարանին մէջ (1832 – 1841):

Ճեռագային աշխատած է նոյն վարժարանին մէջ որպէս ուսուցիչ կամ տեսուչ (1841 – 1848), խմբագիր «Բազմավէպ»ի (1848 – 1851), ուսուցիչ Փարիզի Սամուէլ – Մուրատեան վարժարանին մէջ (1859 – 1861), այնուհետեւ 1872-էն ըսկըսեալ նուիրուած է գիտական գործունէութեան: Ֆրանսական պատուոյ լէգէոնի դափնեկիր, պատուոյ անդամ գերմանական, իտալական, ռուսական կարգ մը գիտական հաստատութիւններու, մահացած է 1901-ին եւ թաղուած Ս. Ղազար:

Ալիշան ասպարէզ իջած է որպէս գրաբարեան բանաստեղծ, ապա աշխարհաբարի չերմ պաշտպան, Միջին դարը յիշեցնող անոյշ անոյշ լեզուով, Նահապետ բառտորդրութեամբ «Նուագներ» ընդհանուր վերնագրին տակ, «Բազմավէպ»ի մէջ հրատարակած է Հայոց աշխարհիկ, Հայ Հայրենիք, Մասիսի սարերն, Հրազդան, Շուշանն Շաւարշանայ, Պլպուլն Աւարայրի, Աչոտ Երկաթ ի Ծովոյն Սեւանայ, Լուսնկային գերեզմանայ Հայոց հայրենակարօտ չափածոյ քերթուածները:

Տեղեակ եւրոպական եւ ասիական չատ մը լեզուներու, թարգմանած է Միլթոնի, Պայրընի, Շիլլէրի կարեւոր գործերէն:

«Տեղեկագիր» ընդհանուր տիտղոսին տակ Ալիշան տեղեկագրած է պատմական Հայաստանի կարգ մը դաւառները, ինչպէս Շիրակ, Սիսուան, Այրարատ գաւառները առանց այցելած ըլլալու այդ վայրերը, տակ ընթերցանութեան եւ բանաստեղծի սուր երեւակայութեան վրայ կռթնած:

Ալիշանի ուրիշ մէկ կարեւոր աշխատութիւնն է Բուսաշխարհ կամ Բուսաբանութիւն հրատարակութիւնը, ուր հեղինակը հաւաքած եւ դասաւորած է հայկական բնաշխարհէն 3400-էն աւելի բոյսերու եւ ծաղկատեսակներու երկար ցանկը, առնոնցմէ չատեր գունաւոր:

Քառասունեւհինգ հատորներու հասնող Ալիշանի ըրական հսկայ ժառանգը մեծապէս նպաստած է հայագիտութեան զարգացման:

***

Ստեփան Ոսկան(եան). – Ծնած եւ մահացած Զմիւռնիա (1825 – 1901). Բանաստեղծ, հրապարակագիր, թարգմանիչ, դաստիարակ, Ս. Ոսկան, որ իր չատաջդիմասէր դաստիարներուն համար երկրորդ Միքայէլ Նալբանտեանի մը համբաւը կը վայելէ, ծննդավայրին Մեսրոպեան վարժարանը աւարտելէ ետք Փարիզ կ'անցնի, ուր Սէնթ – Պարպ լիսէն յաճախելէ ետք Սորպոնի համալսարանի դասընթացքներուն կը հետեւի: 1848-ի Փետրուարեան յեղափոխութեան ընթացքին Ոսկանեան կարգ մը ուսանողներու կարդին, դէն ի ձեռին, փողոցային պատնէշներու քաղաքական ցոյցերուն կը մասնակցի, եւ Լուի – Ֆիլիփի թագաւորի փախուստէն ետք Թիւիլըրիի արքայական պալատին գրաւման կը մասնակցի: Երբ յեղափոխութիւնը կը ճախողի Ս. Ոսկան կը ձերբակալուի իր յեղափոխական դատնկութեան համար, կը բանտարկուի աոեն մը, եւ երբ ազատ կ'արձակուի, բարեբար կը դասէ աոեն մը բացակայիլ: Պոլիս եւ Զմիւռնիա կը ճամբորդէ եւ, ծննդավայրն, Ներքին համոզում եւ հոգեկան պարգեւ հակակշիռ պարապատրիրը կը հրատարակէ:

Վերադառնալով Փարիզ, 1855-ին «Աբեւելք» կիսամսեան կը հրատարակէ. ներկայանալի հրատարակութիւն մը, Վալթէր տպարանէն, ուր Պօնափարթ, ճանիկ Արամեանի տառատեսակներով չարուած:

Տպագրութեան դժուարութեան պատճառաւ, հանդէսը կը փակէ, քիչ աոեն ետք «Արեւմուտք» անունով երեւելու համար. նոր հանդէսը, որ Արճաղանգ Եւրոպայի լուսաւորութեան ենթավերնատիրը կը կրէ, խմբագիրին գաղափարներուն յայտադիրն է:

Լուվրի թանգարանը այցելած, օր մը դէմ առ դէմ կը գտնուի, Վէնիւս տը Միլօի արձանին մօտ, Տրզատ, Հայոց թագաւորին տարազիր անդրիին, իրեն պէս վտարանդի, ինչ որ գինք մեծապէս կը յուզէ:

Ինչպէս յաճախ հաստատած եմ, Հայուն միտք համով կ'երեւի: Պատպիէ տիւ Պոքաժ անունով մէկը, որ Աչխարհագրական ընկերութեան անդամ է, ուսուցիչ, եւ կարեւոր պաշտօններ կը վարէ, նկատի առնելով Հայոց թչուառ վիճակը, եւ նորոգ գրաւեալ Ալժերիոյ գաղութին ֆրանսական պիւտճէին վրայ սուղի նկատիլը, կ'առաջարկէ 250·000 կաթողիկէ Հայերու ներգաղթը: Պատուաւոր եւ աչխատասէր տաղրեր, որոնք չուտով պիտի վերականգնեն ծոյլ եւ տգէտ բնակչութեան մը վերականգնումը:

Ժուռնալ տէ Տէպաթի ծանօթ խմբագիր Սէն Մառք տը Ժիռառտէն, «Բազմավէպ» եւ Ոսկանեան կ'ընդդիմանան այս առաջարկին, առարկելով թէ Հայաստան եւս աչխատասէր ձեռքերու պէտք ունի:

Մինչ յոյս տեսնող լրագրերը մութ դոյներով կը նկարագրեն Հայոց վիճակը, Ստեփան Ոսկան կոչ կ'ընէ միանալու նոր ապագայ մը կերտելու համար:

«Ինչպէս բոլոր Արեւելքի, կ'ըսէ, նմանապէս մեր ազգին վիճակն ալ պիտի փոխուի, հարկաւ պիտի փոխուի, ասոր վրայ վայրկեան մը տարակուսիլը յիմարութիւն է: Ուստի ամէն հայրենասէր սիրտ հիմակուընէ կը հարկադրէ ապագայի մասին խորհիլ եւ գոյն պատրաստել. իսկ խոհեմութիւնն, այն տարտամ եւ կոյր խոհեմութիւնը, որ մեր ազգին այնքան վնաս տուեր է, չարդիլեր որ այս քննութիւնը, եւ հայրենական սէրը հարկ կը դնէ, ընդհակառակն, որ այս ամէն կերպով եւ ամէն դիպ քննուի: Սպասելու չէ որ բանը բանէն անցնի, ինչպէս կ'ըսեն, կամ ուրիշները գան եւ մեզի օգնութիւն ընեն: Այսպիսի ակնկալութիւն մը հիմնովին անհաստատ է, եւ այն յոյսը որով չատեր կը խաբուին քնաւ պատիւ չբերեր մեզ:

1860-ին Ստեփան Ոսկան Իտալիա կը գտնուի, որպէս քարտուղար իտալական ազատագրութեան ռահվիրայ Գաւուրի, ուր եւ ֆրանսերէն լեզուով «Լ'Իթալի» թերթը կը հրատարակէ. Գաւուրի մահէն ետք Ոսկան Ճունաստան, Արտաքին գործոց նախարարին տղոցը դաստիարակ կը կոչուի:

1865-էն ետք, ստամանդական իր կեանքը լքելով հայրենիք կը վերադառնայ որպէս ֆրանսերէնի ուսուցիչ եւ անօրէն Մեսրոպեան եւ Հոիփսիմեան վարժարաններուն:

Աւա՛ղ, տեղական հակամարտութիւնները թոյլ չեն տար որ Ստեփան Ոսկան յարատեւէ, կը հրաժարի հայութենէն եւ «Լա Ռէֆորմ» թերթով կը զբաղի մինչեւ մահը:

***

Մատթէոս Մամուրեան (ծնած եւ մահացած Զմիւռնիա (1831 – 1901). – Հանրային գործիչ, հրապարակախօս, գրող, թարգմանիչ, բանասէր, պատմագէտ, մանկավարժ, Մատթէոս Մամուրեան Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանը աւարտելէ ետք Փարիզ կը գտնուի իբր տան Մուրատեան վարժարանի, 1853-ին ուսուցիչ Պոլիս, Ղրիմի պատերազմին ընթացքին կը ղինուորագրուի իբրեւ թարգման: 1856 – 1857-ին Գէմպրիճի համալսարանի ազատ ունկնդիր: 1869-ին դիւանագէտ Պոլսոյ Պատրիարքարանին: 1865-1901 թուականներուն ընդմիջումներով դաստատ անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն լեզուներու, համաչխարհային պատմութեան, 1871-էն սկսեալ Զմիւռնիոյ մէջ կը հրատարակէ «Արեւելեան մամուլ» ըրական – քաղաքական հանդէսը:

1853-էն սկսեալ հրապարակագրական յօդուածներով եւ թարգմանութիւններով կ'երեւի չատ մը պարբերականներու մէջ, որոնց հաւաքածոն կ'երեւի Հայկական նամականի եւ Անգլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը հատորներուն մէջ, իսկ Սեւ լերան մարդը վէպին մէջ իր քաղաքական տեսակէտները կը հրատարակէ: Կը թարգմանէ բազմաթիւ օտար հեղինակներու գործերէն, ինչպէս նաեւ Հազար ու մի գիշեր արաբական հէքեաթները:

***

Տիկին Սրբուհի Տիւսաբ Փաշա (Վահանեան). – (Ծնած եւ մահացած Կ. Պոլիս 1841 – 1901). – Սկզբնական կրթութիւնը ստացած է Օրթաքէօյի Ֆրանսական վարժարանին մէջ, օգտուելով միանգամայն պետական բարձր պաշտօնեայ եղբօրը դասերէն: 1899-ին Փարիզ կը մեկնի եւ մտերմական կապեր կը հաստատէ ծանօթ երգահաններու հետ: Գրական գործունէութեան կը սկսի գրաբար եւ աչխարհաբար քերթուածներով, որոնք լոյս կը տեսնեն «Բազմավէպ»ի, Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մամուլին մէջ: Ամուսնացած սուլթան Համիտի դաչնակահար Տիւսաբ փաչայի հետ, Իսկուհի Տիւսաբ ծանօթ է որպէս կնոջ դատին նուիրուած առաջին հայ դրող: Կանանց դաստիարակութիւնը, քանի մը խօսք կանանց անգործութեան մասին, կանաց աչխատութեան սկզբունքը, որոնց մէջ կը բողոքէ կնոջ անազատ վիճակի դէմ, կը պահանջէ կնոջ կրթութիւն եւ աչխատութիւն, աչխատութիւն որ կինդ պիտի ազատագրէ:

Մայտա, Սիրանոյշ եւ Արաբսխա կամ Վարժուհին վէպերով իր տեսակէտները պաչտպանած է, ինչ որ յուզած է հանրային միտքը, թեր ու դէմ կարծիքներու արտայայտութեանց ընթացքին մեծ ազմուկ հանելով, թէ ի գովեստ եւ թէ ի պարսաւ:

Իր մասին, Մկրտիչ Պէշիկթաչլեան, Արշակ Ալպօյաճեան, եւ Յակոբ Օշականի թերագրութեամբ 1919-ին Էսթեանի լսարանին ունկնդիրներէն Մառի Տէրտէրեանի եւ Զարուհիի երկար այցելութիւններէն Բերա, Ժուռնալ վղղոց, թիւ 20, այրի Տիւսաբ փաչայի մօտ: Աչխատասիրութիւնը անտիպ:

Սուեփան Էֆէեան. – (Ծնած եւ մահացած Պոլիս 1834 – 1901). – Դերասան, ռէժիսէօր, ուսած է Փարիզի Մուրատեան վարժարանին մէջ, բեմ բարձրացած 1850-էն ի վեր, խաղացած է Թրքերէն եւ Ֆրանսերէն լեզուներով: Աբեւելեան թատրոնի առաջաւոր դերասան:

***

Թովմաս Փաստուլեաճեան. – (Ծնած կ. Պոլիս 1843 – մահացած Ալեքսանդրիա 1901). – Դերասան, թատերական գործիչ – Պոլսոյ Եէնի Մահալլէի եւ Գում – Գափուի վարժարանները յաճախելէ ետք մասնակցած է աչակերտական ներկայացումներու: Բեմական գործունէութիւնը սկսած է Արեւելեան թատրոնին մէջ: Շրջած է գաւառները եւ արուարձանները, մասնաւորապէս Թրքերէն ներկայացումներով, եղած է Թիֆլիս, Երեւան, Թուրքիոյ եւ Կովկասի բազմաթիւ քաղաքներուն մէջ:

***

Յարութիւն Փաշա Տատրեան. – (Ծնած եւ մահացած Կ. Պոլիս 1830 – 1901). – Ակն գաւառի Ապուչեհ գիւղէ սերած նշանաւոր սերունդէն, արքունի վաստակաւոր ընտանիքէն: Բազմակողմանի զարգացած մտաւորական, թղթակցած է եւրոպական կարեւոր թերթերուն (մասնաւորապէս Ռուվիւ տէ տէօ – Մօնտ), եկեղեցական, պետական խորհուրդի անդամ:

***

Ստեփան Փաշա Ասլանեան. – (Ծնած Վան 1822 – մահացած Կ. Պոլիս 1901). – Զինուորական բժիշկ զօրավարի աստիճանով, նախկին ուսուցիչ կայսերական բժշկական համալսարանի, առաջնակարգ պետական էկզարխական վարչութեան քաղաքական ժողովոյ:

***

Է. Գարեգին Զարբհանէլեան. – (Ծնած Կ. Պոլիս 1827 – մահացած Վենետիկ 1901). – Գրականութեան պատմաբան, մատենագէտ, թարգմանիչ: Աչակերտած Պոլսոյ Մխիթարեան վարժարանին, 1848-էն Վենետիկի Մխիթարեանց միաբանութեան անդամ, քարտուղար, ուսուցիչ Բերա, աչխատակից «Բազմավէպ»ի, հեղինակ Պատմութիւն հայերէն դպրութեանց, Պատմութիւն մատենագրութեան միջին եւ նոր դարուց ի յԱրեւմուտս, Հայկական մատենագիտութիւն, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց արժէքաւոր աչխատութիւններուն:

ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ

ԳՐԱԳԷՏԻ ՄԸ ԱԻԱՆԴԸ

ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԾԱՆԱՒՈՐՄԱՆ ՓՐԿԶՆՈՅԻ ՄԷՋ, ՈՒՐ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ: «ՏԸ ՓՐԵԶՆՕ ՊԻ» ԿԸ ԳՐԷ.

Աչխարհի տարբեր կողմերէն մարդիկ սովորութիւն ունին այցելելու 87 տարեկան Ճորճ Պասմաճեանի եւ անոր 78 տարեկան ընկերուհին՝ Ռուպի Գանտարեանի բնակարանը: Օր մը աւելի քան 10 ճամփոյի փորձէաէօրներ փոխադրող պաս մը կանգ առած է անոնց բնակարանին առջեւ: Ուրիչ օր մը Լոս – Անճըլըսէն հայ կին մը 200 հազար տոլարի չէք մը առաջարկած է անոնց տունը գնելու համար:

«Ճաւհոնէն, Գերմանիայէն եւ Բրիտանիայէն մարդիկ կու գան, կ'ուզեն ներս մտնել, բայց թոյլ չեմ տար, որովհետեւ ունիմ որոշ բաներ, որոնք կրնան պոռնկագործ», կ'ըսէ Պասմաճեան: Սակայն երբեմն ան կը դնէ այցելուն եւ եթէ համակրի, զայն կ'առաջնորդէ իր տան մութ նատասենեակը, ուր կրակարանին վրայ չարուած է փորագրուած սպիերու իր հաւքածոն:

Կղմինարով եզերուած եւ երէք ննջարանէ բաղկացած այս բնակարանը, որ կը գտնուի նպարավաճառի մը խանութին եւին, հետաքրքրութեան առարկայ է, որովհետեւ Ուիլիըմ Սարոյեան հոն ապրած է 13-էն 18 տարեկանի միջեւ: Հռչակաւոր գրագէտ Ուիլիըմ Սարոյեան, որուն գործերուն չորքին են «Մայ Նէյմ Իզ Արամ» պատմուածքներու գիրքը եւ «Տը Թայմ ափ Եուր Լայֆ» թատերախաղը, մահացած է 20 տարի առաջ: Անոր լաւագոյն գործերը գրուած են աւելի քան կէս դար առաջ: Այսուհանդերձ մարդիկ այս ուխտագնացութիւնը կը կատարեն դէպի Վենետիկ՝ փողոցին վրայ գտնուող անոր բնակարանը, որուն ընդարձակ պատիճին մէջ հնամաչ չորս նստարաններ չարուած են մէկ պիծի վրայ եւ կը փոյթեն կապ մը պահել Սարոյեանի ապրած տան եւ անոր գրականութեան միջեւ:

Սակայն այցելուներ տարբեր բնոյթի կապ մը կը տեսնեն քաղաքին եւ անոր հռչակաւոր գաւակին միջեւ: Սարոյեանի բնակարանը Ֆրէզնոյի գրական ժառանգութեան մաս չի կազմեր: Ուղեցոյցներ Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանը աւարտելէ ետք Փարիզ կը գտնուի իբր տան Մուրատեան վարժարանի, 1853-ին ուսուցիչ Պոլիս, Ղրիմի պատերազմին ընթացքին կը ղինուորագրուի իբրեւ թարգման: 1856 – 1857-ին Գէմպրիճի համալսարանի ազատ ունկնդիր: 1869-ին դիւանագէտ Պոլսոյ Պատրիարքարանին: 1865-1901 թուականներուն ընդմիջումներով դաստատ անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն լեզուներու, համաչխարհային պատմութեան, 1871-էն սկսեալ Զմիւռնիոյ մէջ կը հրատարակէ «Արեւելեան մամուլ» ըրական – քաղաքական հանդէսը:

1853-էն սկսեալ հրապարակագրական յօդուածներով եւ թարգմանութիւններով կ'երեւի չատ մը պարբերականներու մէջ, որոնց հաւաքածոն կ'երեւի Հայկական նամականի եւ Անգլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը հատորներուն մէջ, իսկ Սեւ լերան մարդը վէպին մէջ իր քաղաքական տեսակէտները կը հրատարակէ: Կը թարգմանէ բազմաթիւ օտար հեղինակներու գործերէն, ինչպէս նաեւ Հազար ու մի գիշեր արաբական հէքեաթները:

***

Տիկին Սրբուհի Տիւսաբ Փաշա (Վահանեան). – (Ծնած եւ մահացած Կ. Պոլիս 1841 – 1901). – Սկզբնական կրթութիւնը ստացած է Օրթաքէօյի Ֆրանսական վարժարանին մէջ, օգտուելով միանգամայն պետական բարձր պաշտօնեայ եղբօրը դասերէն: 1899-ին Փարիզ կը մեկնի եւ մտերմական կապեր կը հաստատէ ծանօթ երգահաններու հետ: Գրական գործունէութեան կը սկսի գրաբար եւ աչխարհաբար քերթուածներով, որոնք լոյս կը տեսնեն «Բազմավէպ»ի, Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մամուլին մէջ: Ամուսնացած սուլթան Համիտի դաչնակահար Տիւսաբ փաչայի հետ, Իսկուհի Տիւսաբ ծանօթ է որպէս կնոջ դատին նուիրուած առաջին հայ դրող: Կանանց դաստիարակութիւնը, քանի մը խօսք կանանց անգործութեան մասին, կանաց աչխատութեան սկզբունքը, որոնց մէջ կը բողոքէ կնոջ անազատ վիճակի դէմ, կը պահանջէ կնոջ կրթութիւն եւ աչխատութիւն, աչխատութիւն որ կինդ պիտի ազատագրէ:

Մայտա, Սիրանոյշ եւ Արաբսխա կամ Վարժուհին վէպերով իր տեսակէտները պաչտպանած է, ինչ որ յուզած է հանրային միտքը, թեր ու դէմ կարծիքներու արտայայտութեանց ընթացքին մեծ ազմուկ հանելով, թէ ի գովեստ եւ թէ ի պարսաւ:

Իր մասին, Մկրտիչ Պէշիկթաչլեան, Արշակ Ալպօյաճեան, եւ Յակոբ Օշականի թերագրութեամբ 1919-ին Էսթեանի լսարանին ունկնդիրներէն Մառի Տէրտէրեանի եւ Զարուհիի երկար այցելութիւններէն Բերա, Ժուռնալ վղղոց, թիւ 20, այրի Տիւսաբ փաչայի մօտ: Աչխատասիրութիւնը անտիպ:

Սուեփան Էֆէեան. – (Ծնած եւ մահացած Պոլիս 1834 – 1901). – Դերասան, ռէժիսէօր, ուսած է Փարիզի Մուրատեան վարժարանին մէջ, բեմ բարձրացած 1850-էն ի վեր, խաղացած է Թրքերէն եւ Ֆրանսերէն լեզուներով: Աբեւելեան թատրոնի առաջաւոր դերասան:

***

Թովմաս Փաստուլեաճեան. – (Ծնած կ. Պոլիս 1843 – մահացած Ալեքսանդրիա 1901). – Դերասան, թատերական գործիչ – Պոլսոյ Եէնի Մահալլէի եւ Գում – Գափուի վարժարանները յաճախելէ ետք մասնակցած է աչակերտական ներկայացումներու: Բեմական գործունէութիւնը սկսած է Արեւելեան թատրոնին մէջ: Շրջած է գաւառները եւ արուարձանները, մասնաւորապէս Թրքերէն ներկայացումներով, եղած է Թիֆլիս, Երեւան, Թուրքիոյ եւ Կովկասի բազմաթիւ քաղաքներուն մէջ:

***

Յարութիւն Փաշա Տատրեան. – (Ծնած եւ մահացած Կ. Պոլիս 1830 – 1901). – Ակն գաւառի Ապուչեհ գիւղէ սերած նշանաւոր սերունդէն, արքունի վաստակաւոր ընտանիքէն: Բազմակողմանի զարգացած մտաւորական, թղթակցած է եւրոպական կարեւոր թերթերուն (մասնաւորապէս Ռուվիւ տէ տէօ – Մօնտ), եկեղեցական, պետական խորհուրդի անդամ:

***

Ստեփան Փաշա Ասլանեան. – (Ծնած Վան 1822 – մահացած Կ. Պոլիս 1901). – Զինուորական բժիշկ զօրավարի աստիճանով, նախկին ուսուցիչ կայսերական բժշկական համալսարանի, առաջնակարգ պետական էկզարխական վարչութեան քաղաքական ժողովոյ:

***

Է. Գարեգին Զարբհանէլեան. – (Ծնած Կ. Պոլիս 1827 – մահացած Վենետիկ 1901). – Գրականութեան պատմաբան, մատենագէտ, թարգմանիչ: Աչակերտած Պոլսոյ Մխիթարեան վարժարանին, 1848-էն Վենետիկի Մխիթարեանց միաբանութեան անդամ, քարտուղար, ուսուցիչ Բերա, աչխատակից «Բազմավէպ»ի, հեղինակ Պատմութիւն հայերէն դպրութեանց, Պատմութիւն մատենագրութեան միջին եւ նոր դարուց ի յԱրեւմուտս, Հայկական մատենագիտութիւն, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց արժէքաւոր աչխատութիւններուն:

ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ

չեն առաջնորդեր անոր բնակարանը ապցելող երկրպագուները. Ճորճ Պատմաճեան ինք կ'որոշէ ընդունիլ կամ մերժել անոնց մուտքը:

Այսուհանդերձ քաղաքի թատերասրահը կը կրէ Սարոյեանի անունը, թէեւ ան ըսած է թէ պիտի չուզէր իր անունով կոչել որեւէ բան: Պեհաւոր հայ դրապէտին արձանը կայ Քորթհաուս Փարքի մէջ, իսկ Ֆրէզնոյի Մեթրոփոլիթըն թանգարանին մէջ սրահ մը կը կրէ անոր անունը: Սակայն Սարոյեանի մահէն ետք (1981-ին) անոր ձեռագիրներուն մեծ մասը փոխադրուեցաւ Սթանֆորտի համալսարանը, Ֆրէզնոյէն 160 մղոն հեռու: Ֆրէզնօ, որ Սարոյեանի ժամանակներուն պարակներէ բաղկացած փիւղատան մըն էր, իսկ այժմ ընդարձակուելով վերածուած է չուրջ 427 հազար բնակչութեամբ քաղաքի մը, այնքան ալ ճիպ չի թափեր իր անցեալը պահպանելու:

Այսուհանդերձ Սարոյեանի հետքերը փնտռողներ ֆիզիքական երեւոյթներէ աւելին կը գտնեն հոն: Անոնք կը յայտնաբերեն քաղաքին այն կողմը, որ Սարոյեանի պատմութիւններուն թատերաբեմն էր: Անոնք կը յայտնաբերեն Պատմաճեանի եւ Գանտարեանի նման մարդիկ, որոնք երբեք Սարոյեան չեն կարդացած, բայց կը թուի, թէ անոր պատմութիւններէն ծնած են, որոնք Հայկական Ցեղասպանութեան յաջորդ սերունդի ներկայացուիչներ են, որոնք ապրած են ջուտաութեան, խտրականութեան եւ Բ. Աչխարհամարտի ժամանակները:

Ֆրէզնոյի Սան Պենիթօ պողոտային վրայ կայ բնակարան մը, ուր Սարոյեան ապրած է իր վերջին տարիները: Հոն եւս մարդիկ կ'այցելեն: Ուշադիր ընթերցող մը կրնայ հասկցնել գտնել գանգատան հրատարակութիւններու մէջ: Սակայն դէպի Պատմաճեանի բնակարանը վազող այցելուները կը բաղմանան Հնորհիւ փոքրաթիւ Ֆրէզնոյիներէ բաղկացած Ուիլիամ Սարոյեան Միութեան, որ հաստատմօրէն վառ կը պահէ Սարոյեանի յիշատակը: Անիկա ամէն Ապրիլին քայլարշաւ մը կը կատարէ, կարճ պատմուածքի մրցանք մը կը կազմակերպէ եւ տարեկան չուրջ 7000 տոլարի հասնող եկամուտ մը կ'ապահովէ Սարոյեանի որմպաղներու վաճառքէն:

Քաղաքին կեդրոնը՝ չրջանին գրադարանին պատմաբանական եւ ծինաբանական բաժինն մէջ յաճախ օտարներն են, որոնք Սարոյեանէն վերաբերող տեղեկութիւններ կը փնտռեն:

«Այլ երկիրներէ եկած օտարներ աւելի ակնածանք կը տածեն անոր գրականութեան նկատմամբ», կ'ըսէ պատմաբան Ռէյ Սիրվիա: «Անոնք հոս կու գան եւ կ'ըսեն թէ Սարոյեան բոլոր ժամանակներու մեծագոյն գրագէտներէն է: Զայն կը դասեն Շէյքսփիրի եւ Ովիտիոսի կողքին»:

Լոս – Անճըլըսէն հայ մը, որ Սարոյեանի վերաբերեալ տեղեկութիւններ փնտռելու եկած է արեան կանչով, կ'ըսէ. «Օր մը մէկը Սարոյեանի հարց տուած է, թէ հա՞յ է թէ ամերիկացի, եւ ան պատասխանած է. 100 առ հարիւր ամերիկացի եմ եւ 100 առ հարիւր՝ հայ»:

Սակայն Սարոյեան կը զգար թէ ինք Ֆրէզնոյի կը պատկանէր: Ան հո՛ն ծնած եւ հո՛ն մեռած էր: Ֆրէզնոյի փողոցներուն մէջ օրաթերթ ծախած էր իր պատանեկութեան, երկրորդական ուսումը կիսատ-պռատ ձգելէն ետք հո՛ն գրած էր իր առաջին պատմուածքները: Հնչակաւոր դատնալէն անմիջապէս ետք գացած էր Նիւ – Եորք եւ Փարիզ, բայց միշտ վերադարձած էր Ֆրէզնօ:

«Չեմ գիտեր, թէ Ֆրէզնոյի մէջ ճիշդ (կամ մօտաւոր) ինչ կայ: Սակայն վստահաբար գիտեմ, թէ ի՛նչ կարելի է գտնել հոն, եւ ի՛նչ կարելի չէ գտնել այլ քաղաքի մը մէջ», գրած է Սարոյեան: «Սակայն նաեւ գիտեմ, որ քաղաքին մաս կը կազմեմ նաեւ ես»:

Ֆրէզնօ հզօր ազդեցութիւն դործած է Սարոյեանի եւ անոր գրականութեան վրայ, սակայն քաղաքը այնքան ալ ուժգին կերպով չէ փարած անոր:

Թէեւ Սարոյեան արժանացած է փուլիցըր մրցանակին եւ անոր դէմքը արձանացուած է դրոշմաթուղթի վրայ, սակայն ամառնային տաք օր մը Քորթհաուս Փարքի մէջ Սարոյեանի կիսանդրիին չուքին հանդիսացող 11 Ֆրէզնոցիներէն միայն 3-ը գայն ճանչցած են իրրեւ գրագէտ, սակայն անոնցմէ ոչ մէկը կարդացած է յիշել անոր գործերուն անունները:

Գալիֆորնիոյ պետական գրադարանապետ՝ Քեւին Սթար կ'ուսումնասիրէ կապ տեղերու եւ անոնց առընչուղղ գրականութեան, ինքնութեան եւ արուեստին միջեւ: Ան երկու հակասական բացատրութիւններ ունի, թէ ինչո՛ւ Սարոյեան, որ գրական հսկայ մըն է արուեստահմանի մէջ, հետաքրքրութիւն չի ըստեղծեր իր ծննդավայրին մէջ: «Թերեւս Ֆրէզնօ իր ստեղծած դիցավէպերէն անդին գացած է, թերեւս քաղաքը գադրած է կարեւորութիւն ընծայելէ իր պատմութիւններուն»:

Կամ թերեւս Սարոյեանի Ֆրէզնօն չէ փոխուած:

«Եթէ այն աչխարհը, որուն մասին գրած է Սարոյեան տակաւին կ'ապրի եւ առողջ է, ապա անիկա չի կրնար իր պատմութիւններուն վերադառնալ: Անիկա լնդոստ ապրումներով կը չարունակէ իր կեանքը, կապուածութիւններ ունի եւ այնքան ալ չի մտածեր ինքն իր մասին: Ֆրէզնօ գարանի մը վրայ գրուած

ԳՂՈՒԽԻ ԳՂՈՒԽԸ

ՊԷՔՐՈՒԹի Համազգայինի «Վասպուրական» սրահին մէջ, Յուլիս 24-ին, կազմակերպութեամբ Համազգայինի Լիբանանի Շրջ. վարչութեան եւ Ճեմարանի Շրջանաւարտից Միութեան, դասախոսական երեկոյթ մը տեղի ունեցած է, որու ընթացքին Գալիֆորնիոյ «Կլենտէյլ քոմիունիթի դոլէճ»ի պատմութեան դասախօս՝ Տոքթոր Լեւոն Մարաչլեան ներկայացուցած է. – «Թրքական հակազդեցութիւնը ցեղասպանութեան բանաձեւերուն դէմ 1975 – 2000» նիւթը: Բացման խօսքը արտասանած է Սեդա Խաչեան, ապա Սոնիա Քիլիճեան ներկայացուցած է օրուան դասախօսը, ծնած Պէյրութ, վկայուած Միացեալ – Նահանգներու «Եու – Սի – Էլ – Էյ» համալսարանէն: Հրատարակած է ցեղասպանութեան եւ Հայ դատի վերաբերեալ չորք մը դիրքեր: Լ. Մարաչլեան ներկայացուցած է ուրացման քաղաքականութիւնը՝ մեկնելով անոր սկզբնական չրջանէն, 1915-էն: Խօսելով Հայ – Թրքական հաչտութեան յանձնախումբին մասին Լ. Մարաչլեան, մէջբերումներով փաստած է թէ յանձնախումբին հայ անդամները հակասական արտայայտութիւններ ունեցած են յանձնախումբի կազմութեան նպատակին եւ հետապնդած քաղաքականութեան մասին: Դասախօսը յայտնած է այն կարծիքը թէ այս յանձնախումբը յառաջացած է Թուրքիոյ եւ Միացեալ – Նահանգներու քանքերով եւ մեղսակցութեամբ ու կը դադրիլի այն ժամանակաչրջանին, երբ հայկական ցեղասպանութեան ճանաչման հարցը հասուն ընթացք ունի:

*
**

ՄՈՆՐԻՕԼԻ «Թէքէեան» կեդրոնին մէջ, Յուլիս 8-ին, միացեալ կազմակերպութեամբ Մոնրէալի Թէքէեան Մշակութային Միութեան եւ ՌԱԿ-ի է. Բարաղեան ակումբին, յիչատակի երեկոյթ մը տեղի ունեցած է նուիրուած Գերսամ Ակարոնեանի մահուան քառամեակին: Բացման խօսքը արտասանած է տոքթոր Հրայր Տէր – Գէորգեան, որ յայտնած է թէ ինչպէս Սփիւռքի այլ գաղութներու, Մոնրէալի մէջ ալ Գ. Ակարոնեանի նախկին աչակերտները, գործակիցները եւ իր գործունէութիւնը գնահատող ժողովուրդը հատաքուած են ոգեկոչելու իր յիչատակը: Ապա, հատուածներ կարդացած է Անդրանիկ Քէչիչեանի (Վալանսէն) դրուեթենէն, ուր ան կ'ոգեկոչէր իր անձնական յիչատակները Գ. Ակարոնեանէն: Յուցադրուած է տեսերիզ մը, որ կը ներկայացնէր Գ. Ակարոնեանի կեանքը պատմական լուսանկարներու ընդմէջէն: Երեկոյթին առաջին բանախօսը եղած է «Ապագայ» չաբաթաթերթի խմբագիրը՝ Արսէն – Նուպար Մամուրեան, որ ծանրացած է հրապարակագիրը Ակարոնեանի վաստակին վրայ: Իրեն յաջորդած է Հ. Բ. Ը. Միութեան գործօն անդամներէն Արմէն Պէաքճեան, որ անդրադարձած է իր մեծ ուսուցչին թողած տպաւորութիւններուն: Երրորդ բանախօսը եղած է ՌԱԿ, ԹՄՄ-ի եւ համալսարանին այլազան ծանօթութիւններով յայտնի տոքթոր Յարութիւն Արզումանեան, որ ներկայացուցած է ազգային դեկավարը: Ինքնաբուխ արտայայտութիւն մը ունեցած է իր աչակերտներէն՝ Արտաչէս Գունտաքճեան (Օթթաուայէն): Վերջին խօսքը արտասանած է տոքթոր Արշաւիր Կէօնճեան: Երեկոյթին փակումը կատարած է Բարթող Ա. Քհնյ. Խրքաճեան:

ԹԻՒ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Թ.

ՆՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

– Ինչո՞ւ համար:

– Նախարարին հետ յարաբերութիւն ունենալու պէտք չկայ, հաւանօրէն մէջերնիդ մը կայ, եւ անոր մէջոցաւ կ'ըլլայ ամէն բան:

– Իրաւունք ունիս, – պատասխանեց Աղասեան, – ամէն պարագայի Վարչութիւնը դատապարտելի է, որ այս տեսակ բաներ կը պատահին, եւ ինք անտարբեր կը մնայ:

– Վարչութեան անդամներուն միակ հետաքրքրութիւնն է քիւլահ մը խափիչ դնել, – գոչեց Օհանեան:

– Ըստ իս պէտք է, որ խիստ ծածուկ կերպով հսկողութիւն մը կատարուի այդ բարեպաշտներուն վրայ, – ըսաւ Աղասեան, – այս կերպով թերեւս ճչմարտութիւնը երեւան ելլէ:

– Անիկա ես առաջարկեցի, – ըսաւ Սուին:

– Լաւ, յետո՞յ...

– Հաւանութիւն յայտնեցին, բայց բան մը ընող չեղաւ:

– Այդէն միշտ առանկ կ'ըլլայ, – ըսաւ Օհանեան, – «հայհոյ ընելու, է, էֆէնտիմ» կ'ըսեն ու բան մըն ալ չեն ըներ:

– Աւելի ծանրակչիռ բաներ կան, – ատելցուց Սուին խորհրդաւոր ձեւով մը ձայնը ցածցնելով, – բայց տակաւին ատենը չէ հրապարակելու:

– Բնական է, որ պէտք չէ հրապարակել, – ըսաւ Օհանեան, – եթէ ոչ՝ ամբողջ գործը կը վտանգուի:

– Դեռ ուրիչ ինչե՞ր կան, – հարցուց Աղասեան հետաքրքիր, – զարճա՞լ մատնութիւններ...

– Մատնութիւն չէ, բայց էնթրիկներ, – բացատրեց Օհանեան... – ամէն մարդ իրեն համար ուղղութիւն մը բռնած վ'ներթայ: Գիտէ՞ք, որ համաճարտութիւն չի կայ Փարիզի պատուիրակութեան եւ Պոլսոյ մէջ:

– Ատ դէշ բան, – գոչեց Աղասեան, – ես կը կարծէի, որ Վարչութիւն եւ Համրըտահարելոց յանձնաժողով Պոլսոյ մէջ կը գործեն Պօղոս վաչային եկած հրահանգներուն համեմատ:

– Սկիզբը այնպէս էր, բայց հիմա վոխուեցաւ, ամէն մարդ իր քաղաքականութիւնը ունի...

– Առանկ խաղքութիւն կ'ըլլա՞յ...

– Դժբախտաբար իրողութիւնը այս է: Պօղոս փաչա կ'ուզէ, որ բանակցութեան կեդրոնը Փարիզ ըլլայ, եւ պատգամաւորութեան ձեռքով կատարուի ամէն բան: Իսկ քանի մը մարդիկ ու նինք, որոնք կը փորձեն խնդիրը Պոլսոյ մէջ կարգադրել, որպէսզի իրենց ձեռքով եւ իրենց ուզածին պէս ըլլայ ամէն բան:

– Ես բոլորատոնք մօտէն տեսնելուս համար ահա քաչուիլ կ'ուզեմ, – յայտարարեց Սուին, – ես չեմ ուզեր, որ ապագային որեւէ պատասխանատուութիւն դայ վրաս:

– Չէ՛, ընդհակառակն, պէտք է, որ դուն մնաս մէջերնին, որպէսզի ամէն բան տեսնաս ու հասկնաս, – դիտել տուաւ Օհանեան:

Աղասեան լսելով բոլոր այս յայտնութիւնները՝ տխրութեամբ գլուխ կը շարժէր:

Սուին ժամացոյցը նայեցաւ եւ ըսաւ.

– Իմ չոգենաւիս առեղը եկաւ, հաղիւ քառորդ ժամ ունիմ:

– Մենք ալ կամաց – կամաց ճամբայ ելլենք, – ըսաւ Օհանեան:

Ու երեքը միասին դուրս ելան սրճարանէն:

ԳԼՈՒԽ Ժ.

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Մեր վերը պատմած դէպքերուն վրայէն մէկ քանի ամիսներ անցած էին, թիւ 17 խաֆիէի խնդիրը մոռցուած էր, եւ ո՛չ ոք կը զբաղէր անով:

Հայկական գաւառներու բարեկարգութիւններու հարցը կը ծեծուէր ու կը ծեծուէր, առանց սակայն վերջնական կարգադրութեան մը յանգելու:

Իրա՛ւ է, որ Եւրոպական պետութիւնները միշտ լրջօրէն բանակցութիւններ կը կատարէին իրենց մէջ այս մասին, եւ ընդհանրապէս այն համոզումը կը տիրէր, թէ արմատական դարման մը պիտի ըլլար այս անդամ:

Եւրոպացի բարձր քոմիսէր մը լիազօր իշխանութեամբ Հայաստան ղրկելու որոշումը տրուած էր արդէն, բայց պետութիւնները տակաւին չէին կրնար համաձայնութիւն մը գոյացնել, թէ ո՛վ պիտի ըլլար այդ բարձր քոմիսէրը, եւ մինչեւ ուր պիտի տարածուէր իր իրաւասութիւնը:

Պօղոս Նուպար տեղապահին գործունէութիւն մը ցոյց կու տար եւ կը չրջէր մեծ մայրաքաղաքները՝ Լոնտոն, Պերլին, Բեթերսպուրկ՝ Հայկական դատը յաջողցնելու համար:

Միւս կողմէ՝ Իթթիհատական թուրք կառավարութիւնը, տակաւին պալքանեան պատերազմի սառանումի ներքեւ, ուժ չէր զգար հակառակելու մեծ պետութիւններու կամքին եւ կը ջանար կողմնակի միջոցներով եւ էնթրիկներով վիժեցնել այս գործը:

Եւ ասոր համար ո՛չ դրամ, ոչ խոստում կը խնայէր:

Ճիշդ այդ միջոցներուն, օր մը, մէկ քանի ծանօթ ազգայիններ հրաւէր կը ստանային Պետրոս Հալաճեանէն իր տունը հաւաքուելու, գիշեր ատեն, «կարեւոր խորհրդակցութեան մը համար»:

Այդ ազգայիններն էին Գրիգոր Զօհրապ, Մեսրոպ Գարագեան, Վարդգէս, Բաստրմաճեան եւ այլք:

Որոշեալ ժամուն դումարումը տեղի ունեցաւ:

Խորհրդակցութեան սկսելէ առաջ ներկաներէն մին հարցուց.

– Արդեօք Շահրիկեան էֆէնտիի հրաւէր չէ՞ ուղղուած:

– Ո՛չ, – պատասխանեց Պետրոս Հալաճեան նեղուած ձեւով:

– Ինչո՞ւ համար:

– Մօն չէր, աւելորդ համարեցի հրաւիրել, քանի որ արդէն բաւական թիւով մարդ եկած է... արդէն ըլլալիքը պարզ խորհրդակցութիւն մըն է ... կարծիքի փոխանակութիւն մը...

– Ինչ որ ալ ըլլայ, քանի որ մեր խորհրդակցութիւնները Հայկական բարեկործութիւններու մասին են, Շահրիկեանի ներկայութիւնը աւելորդ չէր...

Պետրոս Հալաճեան չպատասխանեց եւ ձեռքի անորոչ չարժում մը ըրաւ:

(Շար. 38)

(Շար. Ա. Էջէն)

բարները չկարենան քաղաքը մտնել, ուր տեղի կ'ունենար Երիտասարդութեան համախարհային ԺԵ. փառատօնին բացումը: Մի քանի պեհապազ պատահած են, բայց, ծանր թախտմներու առաջքը առնուած է: Իշխանութիւնները կ'ուզէին բնականոն կեանքի մը պատկերը տալ: Աւժերացի դիւանագէտ մը անհետեւեք կը գտնէ երիտասարդութեան եւ ազատութեան տօն մը կազմակերպել քաղաքի մը մէջ որ ոտիկանական խիստ հսկողութեան տակ է եւ երկրին ամբողջ երիտասարդութիւնն ալ գոհուած է, ապագայ չունի եւ չորս ամիս է վտղոց կ'ինչէ իր ցասումը արտայայտելու համար:

ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆԵՐՆ ու Ալպանացիները համաճայնութիւն մը պիտի ստորագրեն Օգոստոս 13–ին, հակառակ անոր որ չատ ծանր դէպք մը պատահեցաւ Օգոստոս 8–ին, երբ 10 մակեդոնացի պինուորներ սպաննուեցան երկրին հիւսիս արեւմտեան չրջանը:

ՖՐԱՆՍԱՑԻ բեմի եւ չարժանկարի հանրածանօթ դերասանը՝ Ժան – Փօլ Պելմոնտօ ուղեղային կաթուած մը ունեցած է Օգոստոս 8–ին, Գորսիքա, ուր կ'անցընէր իր արձակուրդը: Դերասանը, 68 տարեկան, նախ փոխադրուած է Պասթիայի հիւանդանոցը, ապա, նոյն իրիկունը, յատուկ օդանաւով Փարիզի Սէն-Ժոզէֆ հիւանդանոցը: Ժ. Փօլ Պելմոնտօ 1999–ին ալ սրտի տագնապ մը ունեցած էր Պրէսթ, ներկայացման մը ընթացքին, բայց, ուշած էր միայն յոգնութեան վերագրել անհանգստութիւնը: Օգոստ. 9–ին, Ժ. Փօլ Պելմոնտոյի վիճակը «լուրջ» կը նկատուէր, դիտակից էր, բայց չէր կրնար խօսիլ եւ այ կոզմէն կաթուածահար էր:

ՌՈՒՍԱՍՏԱՆի ծայրագոյն արեւելեան չրջանը մահացու անձրեւներու գոհ եղած է: 9 հոգի մեռած են, 12 ուրիչներ ալ անհետացած են: Իշխանութիւնները համաճարակի վախն ունին, իրրեւ հետեւանք Վլադիվոստոկի գերեզմանատան քանդումին: Երկու ժամուան ընթացքին գերեզմանատունը 1·50 մէթր ջուրի տակ մնացած է:

ԻՐԱՆի արդարադատութիւնը, Օգոստոս 8–ին, հրահանգած է բարենորոգիչ Համպաթեզի (զօրակցութիւն) թերթի դադրեցումը:

ԳՈԼԵՍԹԵՐՈՂի դէմ գեղ մը հրապարակէն քաչուեցաւ, որովհետեւ արդէն 31 հոգիի մահուան պատճառ եղած էր, մեծ մասամբ Միացեալ – Նահանգներու մէջ, բայց, նաեւ Սպանիա: Գերմանական Պայէր դեղագործական հաստատութիւնը անմիջապէս քաչեց դեղը համաչխարհային չուկայէն (քացի Ճափոնէն), ան կը կրէ Սթալթոր անունը (Պայէրի պատրաստութեամբ) եւ Գոլսթա (Ֆիւրնիէի պատրաստութեամբ): 6 միլիոն անձեր կը գործածեն այդ դեղահատը, որոնց 300 հազարը Ֆրանսայի մէջ: Արդէն նկատած էր, որ դեղը մեծ վնասներ կը բերէ մկաններուն (մինչեւ իսկ քնաջնջում) եւ նաեւ երիկամներուն: Բոլոր անոնք որոնք այդ դեղահատը կը գործածեն, պարտին անմիջապէս դադրեցնել գործածութիւնը:

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱԶի ՓԱՐԻԶի ԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՆԱՃԻՒԼի ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալօրէա կը դասաւանդուին. – հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք:

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառսեեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին:

Date à retenir

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une SOIREE DANSANTE
à la Salle des Fêtes.
rue Voltaire, Alfortville
avec l'Orchestre «Gaïdzag's»

—ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ—

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8·45ին:
Պատարագ ժամը 10·30–ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԱՇԵԱՆ
կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի Առաջնորդ Հայոց Փարիզի
Պատարագի աւարտին՝ խաղող կ'օրհնուի:
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր:
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13, Բ. օր
Վերափոխման: Ցիշատակ Մեռելոց:
Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի:
Կը պատարագէ՝
ՏԻՐԱՑՐ ՔՀՆԱ. ԳԼՂԼՃԵԱՆ
Պատարագի աւարտին՝ Հոգեհանգիստ «վասն հանգուցելոց»:

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԽՍԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Վերափոխումն Ս. Աստուածածնի:
Ժամերգութիւն ժամը 9·30–ին:
Պատարագ ժամը 10·30–ին:
Յատուկ պատարագի Խաղողօրհնէքի
աւանդական արարողութիւն:
ԾԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր:
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13
Ցիշատակ Մեռելոց:
Ժամը 10–ին պատարագ ապա հոգեհանգստեան պաչտօն «Վասն հանգուցելոց»:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻՒ

Պատարագ ժամը 10·30–ին:
Պատարագի աւարտին Խաղողօրհնէք:

ՎԱՐԱԳԱՑ Ս. ԽԱՉ ԱՐՆՈՒՎԻԼ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի:
Ժամերգութիւն ժամը 9.45–ին:
Պատարագ ժամը 10·45–ին:
Կը պատարագէ հոգեւոր հովիւ՝
ՄԵՍՐՈՊ Ա. ՔՀՆԱ. ՃԱՄԿՈՉԵԱՆ
Յատուկ պատարագի կը կատարուի Խաղողի աւանդական օրհնութիւն:

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն է Ս. Աստուածածնի
Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի:
Օրուան պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՉԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայից
Յատուկ պատարագի կը կատարուի Խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը:
Հաւատացեալները որոնք օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կը-նան ուղարկել եկեղեցւոյ Դիւանատունը:

ՄԱՐՍԷՑԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Ժամերգութիւն ժամը 8·30–ին:
Հանդիսաւոր պատարագ ժամը 9·45ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԷՐՃԱԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Հարաւային Ֆրանսայի Հայոց
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն Խաղողոյ» աւանդական արարողութիւնը:
ԾԱՆՕԹ.– Անոնք որոնք կը փափաքին այս առթիւ խաղող նուիրել, թող հաճին տեղեակ պահել Մայր Եկեղեցւոյ Գիւանատունը:
Հեռաձայն.–
04 91 77 84 70

ՍԷՆ–ԼՈՒ — Ս. ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Պատարագ ժամը 10–ին:
Խաղողօրհնէք ժամը 11·45–ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆԱ. ՏԷՏԷԵԱՆ
ԾԱՆՕԹ.– Խաղողի կամ փոխան խաղողի նուէրները կը ստացուին Թաղականութեան մօտ:

ԱՐՋԱԿՈՒՐԳԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱՔԵԱՆ
ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 ՖՐ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ
ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑՔԵՐԳԻ 80 ՖՐ.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 ՖՐ.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 ՖՐ.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ,
ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ 75 ՖՐ.

ԵՒ

«ՅԱՌԱՋ - 50»
(Տարկահաս 50-ամեայ հատորածոյէն) 120 ՖՐ.

Դիմել «ԱՐԱՐԱՏ»ի

Թղթատարի ծախք՝ 30 Ֆր., հատոր գլուխ.

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris

du jeudi 4 au lundi 8 octobre

à l'occasion de la Béatification de

Mgr. IGNACE MALOYAN

Archevêque de Mardine, martyr en 1915.

le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE

Home Arménien

MERCREDI 15 AOUT

FETE CHAMPETRE

10h: Messe solennelle Chapelle Saint-Jean
Célébrée par Monseigneur DARON GEREJIAN

A partir de 12h30: Bar & Buffet

Animation : **MARTEN YORGANTZ • Danses traditionnelles**

107, Avenue Maréchal Lyautey
83700 Saint-Raphaël

Réservations et renseignements : au 04.94.19.51.50

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 **Commission paritaire : No 55935**

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 11-12
SAMEDI - DIMANCHE
11-12 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՀԱՅԿԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօդեայ առաքում) 1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·230 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 77e ANNEE — N° 20.230

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՌՈՒՍԱՍՏԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆ – ՎՐԱՍՏԱՆ
ԿՈՎԿԱՍԻ
ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ
ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ

Երէքշաբթի, Օգոստոս 7–ին, Ռուսաստանի Սթաւրոպոլ նահանգի Եաննթուքի քաղաքին մէջ կայացաւ Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի իրաւասու մարմիններու ղեկավարները, որու ընթացքին անոնք քննեցին Կովկասի եւ Հիւսիսային Կովկասի մէջ ահաբեկչութեան եւ զանազան այլ յանցագործութիւններու դէմ պայքարը համակարգելու միջոցները: Այդ հանդիպումին ընթացքին նաեւ քննարկուեցաւ միւնչէնի երկիրներու միջեւ սահմանները պահպանելու հարցը, առաջքը առնելու համար դէնքի եւ թմրեցուցիչի մաքսանենգութեան:

Օրինապահ մարմիններու ղեկավարները նաեւ անհրաժեշտ գտան այս հարցերուն կապակցութեամբ տեղեկութիւններու փոխանակումը:

***

Հ. ՕՍԿԱՆԵԱՆ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵՆԷՆ ԱՐՏԱՔՍՈՒԱԾ

Համայնավար կուսակցութեան չարքերը խաղաղած չեն. Օգոստոս 7–ին ալ կերը. Կոմիտէի նախկին որոշուած է Մոսկուայի Համայնավար Խմբակցութեան ղեկավար Հրանդ Ոսկանեանը կուսակցութենէն եւ խմբակցութեան ղեկավարութենէն հեռացնել: Ան անցեալին եղած է Գերագոյն Խորհուրդի նախագահութեան նախագահ: Երկու չաբաթ առաջ Եուրի Մանուկեանի հեռացումէն ետք, այս մէկը երկրորդն է:

«ԵՐԿՔՆՓՐԷՍ»

(Օգոստոս 9 / 10)

Հ. ԱԼԻԵՒ ԿԸ ԴԺԳՈՀԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԻՆ

Բեյրութեւոյ վարչապետին հետ հանդիպումին ընթացքին Ադրբեջանի նախագահը դժգոհած է որ Հայաստանի ղեկավարութիւնը չինիչ դերը չի բռներ Ղարաբաղի հարցին կարգաւորման մէջ: Ան ըսած է թէ Հայաստան չի ճանչնար ՄԱԿ–ի Ապահովութեան բանաձեւերը որոնք կը պահանջեն անյապաղ քաշուիլ պատերազմական տարածքներէն. չի ճանչնար նաեւ Օ – ԷՍ – ՍԷ – Ը–ի պկրունքները: Հ. Ալիեւ դժգոհ է ՀԱՊ–ի անդամ պետութիւններէն ալ որոնք անտարբեր են այդ խնդրին նկատմամբ:

***

«ՄԱՔՈՒՐ ՅԵՒԱՆ»

Երկրորդ տարին ըլլալով, հայկական կարմիր Խաչի երիտասարդները, Օգոստոս 1 – 10, բնապահական նախարարութեան, կարմիր մահիկի, կարմիր խաչի միջազգային կազմակերպութիւններուն եւ գերձանացի կամաւորներու հետ գործակցած որ մաքրած են լիճին Դրախտիկ, Աղթերք, Շորժա, Զկալովկա գիւղերուն ափերը, ընդհ· 25 – 30 քիլոմեթր երկարութեամբ: Աղբէն մեռտաղային մասերը զատած են, մնացածը աղբանոց փոխադրուած: Մաքրութեան աշխատանքէն ետք, երիտասարդները լճափին վրայ արձակուրդի ելածներուն բացատրած են չրջապատի մաքրութեան անհրաժեշտութիւնը:

***

ՀԱՆՐԱԿԱՌՔԻ ԱՐԿԱԾ

Հինգշաբթի, Օգոստոս 9–ին երեւանէն Սոեփանաւան գացող հանրակառք մը ծանր արկած մը ունեցած է եւ ձորը ինկած է: Ինը մեռեալ կայ եւ 25 վիրաւոր:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ԱՆՋՆԱՍՊԱՆԱԿԱՆ ՈՃԸԱՓՈՐՁ ՄԸ

19 ՄԵՌԵԱԼ, 90 ՎԻՐԱՒՈՐ

ԱՐԱՐՔԻՆ ՏԷՐ ԵՂԱՆ ՀԱՄԱՍ ԵՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՁԻՀԱԴԸ

Հինգշաբթի, Օգոստոս 9, ժամը 14–ի մօտ է, որ 23–ամեայ Պաղեստինցի մը մուտք կը գործէր եօթա փողոցի Սպարօ Փիծծան եւ անմիջապէս կը պայթեցնէր իր կրած ռումբերը եւ ճաչարանը օդը կ'ելլէր: Առաջին հաշուեկշիռներու համաձայն մեռեալներու թիւը 19 էր եւ աւելի քան 90 վիրաւոր կար, որոնց մէջ երեք ֆրանսացի զբօսաշրջիկներ: Մեռեալներուն մէջ ալ կան մանուկներ, ճաչարանը ծայրէնծայր լեցուն էր այդ ժամուն: Ապարքին տէր եղան ՀԷՀ Համասը եւ ԹՀ Իսլամական ձիհատը: Այս վերջին չարժումին քաղաքական մէկ պատասխանատուն արդարացուցած է ռճրափորձը, Գաշայի մէջ յայտարարելով.– «Ի՞նչ կրնայ ապահել Իսրայէլ ժողովուրդէ մը, զոր կը հարուածէ, կը սպաննէ եւ սովի կ'ենթարկէ»: Նոյն իրիկունն է, Օգոստոս 9–ին, որ Համասն ալ տէր եղած է ապարքին Ռօյթըրս գործակալութեան ֆաքս մը ղրկելով:

Իսրայէլ, պարզ է, չի կրնար լուռ մնալ: Հաղորդակցութեան նախարարը՝ Ռիվլին յայտնած է թէ «Իսրայէլ պարտի հակազդել», աւելցնելով.– Պաղեստինցիք պէտք է հասկնան որ սուղ պիտի վճարեն իրենց ղեկավարներուն քաղաքականութիւնը»: Պաղեստինցի իր պաշտօնակիցին Ռասպոյի համար, ընդհակառակն, «բռտութեան եւ ահաբեկչութեան արարքները արդիւնք են Իսրայէլի վարչապետին մարդասպանութեանց քաղաքականութեան եւ պաղեստինեան իշխանութիւնը չի կրնար պատասխանատու նկատուիլ»: Միւս կողմէ, Արաֆաթ դատապարտեց արարքը, չեշտելով՝ «կը դատապարտեմ բոլոր արարքները, որոնք քաղաքացիներու կը վնասեն»: Հրաւէր կարդաց Իսրայէլի, որ միասնարար հրաժարի պատերազմ, բայց, Իսրայէլի կառավարութիւնը մերժեց եւ Ապահովութեան մարմինն ալ իր հաւանութիւնը տուաւ Շարոնի, վինեալ հակազդեցութիւն կատարելու պաղեստինեան թիրախներու վրայ: ԱՄՆ, Ֆրանսա դատապարտեցին ռճրափորձը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Վեննայի դատարանին մէջ, ռումբ մը պայթած է Օգոստոս 8–էն 9 լուսնակի պիչերը: Զոհ չկայ, բայց, վնասները մեծ են: Վարչապետ Սիլվիո Պէրլուսքոնի վեհաժիկ պիտի երթար յաջորդ օրը եւ յայտարարեց որ թէ՛ ինք, թէ՛ Ներքին նախարարը եւ ընդդիմութեան կարգ մը անդամներ սպառնալիքի նամակներ ստացած էին:

Լիբանանեան ուժերը, Օգոստոս 9-ին, չորս քրիստոնեայ եւս ձերբակալած են, որոնք Սուրիոյ դէմ լրտունդներ կ'արձակէին Պէյրութի Արդարութեան Պալատին առջեւ: Ձերբակալուած 150 քրիստոնեա-

(Շար·ը Դ. էջ)

ՄԱՀՈՒԱՆ ՏԱՐԵԶԻՑԻՆ ԱՌԹԻԻ

ԳԱՐԶՈՒ ԱՆՄԱՀԸ

Երբ մեծեր մեզմէ կը բաժնուին, իրենց հետ կը տանին մահկանացուն իրենց մէջ: Բաներ՝ որոնք մնացողներուն մօտ դիւրաւ կը մոռցուին կամ ալ պէ՛տք է մոռցուին, կ'ուզուի՛ն մոռցուիլ, ո՛չ միայն անոնց երկրորդական արժէքին, այլ նաեւ՝ ոմանց պարագային՝ մեծութիւնները նուաստ կողմերուն համար: Այդ մոռացութեան կարօտ յատկանիշերը կրնան սեպուիլ նաև մեծութիւններուն անբաժան երեւոյթներ: Այս ընդհանուր ճշմարտութիւնը չի պատշաճիր Գառզուին:

Բոլոր անոնք որ բարեբախտութիւնը ունեցած են, իրենց կեանքին մէկ կամ միւս չրջանին, զինք ճանչնալու քիչ մը, թէկուզ հպանցիկ կերպով, պիտի պահեն տպաւորութիւնը արուեստագէտ մը, որուն մէջ անհատը կը պարզուի իր հեզ նկարագրով, ընկերային անսեթեւեթ ոճով, պայծառ եւ վճիտ նայուածքով, բաներ՝ որոնք կը ցոլային անոր աչքերէն, ուր կանաչամոյն բնութիւնը եւ երկինքի չինչ կապոյտը կարծես միահատնուած ըլլային: Զինք աւելի մօտէն ճանչցողներուն եւ մտնեւորաբար բարեկամներուն համար, Գառզու համակ քաղցրութիւն մըն էր, բարութիւն չնչող էակ եւ իր չուրջ մարդասիրութիւն թելադրող ներկայութիւն: Երազող մը նաեւ, սակայն որուն եաին կանդնած էր մչտարթուն արուեստագէտը, հարցեր արծածող խղճմտանքը:

Ըմբոստ մը կար Գառզու մարդուն հոգիին խորերը, մեղմօրէն ժպտերես դիմագիծի մը հանդարտ մակերեսին տակ ալեծուփ հոգի մը, որ գիտէր իր յուզումներն ու ընդվզումը պարզօրէն արտայայտել յարմար առիթներով: Այդ պարագաներուն է որ, մտնեւորաբար, կը չեշտուէր եւ կ'արտացոլար իր անհատականութիւնը: Կը փոխանցուէր իր մտածումներուն եւ խորհուրդներուն մէջ դրաւիչ անկեղծութիւն մը, որ զինք յատկանչեց իր բռնադատ կեանքին տեւողութեան: Մնաց ճանչցելի մէկութիւն մը մինչեւ 93 տարիքը:

Ընկերութեան եւ անոր առընչուող հարցերուն իր ազերան էր, որ այնքան մարդկային եւ սրտամօտ կը դարձնէր այս արուեստագէտը: Կարելի չէ ընկերութենէն անջատել այս երազողը, որուն մէկ միւս բնակարանն էր անցեալը, անոր պերճանքը, եւ այն ամէն ինչը որ իր մէջ կր ստեղծէր չքեղութիւն մը, յարդելիութիւն մը, մեծարանքի մը ինքնարեր հրաւէրը: Մարդ յաճախ կը տարուէր մտածելու թէ Գառզու արուեստագէտի ստեղծագործութիւններուն մէկ այլ գեղեցիկ պատկերը չէ՞ր նաեւ ինք՝ որպէս անհատ մարդ: Արուեստագէտը այնքան մխաճուլուած էր իր գործին, որ կու տար պատրանքը թէ մէկը միւսէն կը բխի, մին չարունակութիւնն է միւսին:

Այդ երազուն մարդը ուրբ չէր կտրած իր չրջապատէն: Իր աչխարհը մերինը չէ՞ր նաեւ, մերժելի ժամանակակիցը, որուն իր քաջածանօթութիւնը դառը լոյն բացած էր անկէ փախուստներու, հեռացումի: Այդ իրազութիւնը չէ՞ր որ զինք կը մղէր մաս կազմելու 17 – 18–րդ դարու նկարիչ Վաթոյի նաւային ճամբորդութեան՝ դէպի մոգական կղզին աստուածդուխի Աստղիկին: Նոյնպէս իր չփումը մեր քաղաքակրթութեան հետ պատճառը չէ՞ր որ երկաթուղիները, ելեկտրալարերը, հիւլէական կայաններ եւ հրթիռներ խուժէին իր աչխարհէն ներս: Եւ հակառակ երեւոյթին, իր կշռադատող միտքը միշտ արթուն էր երբ կը պատասխանէր հարցումի մը թէ ո՞ր դարուն պիտի ուզէր ապրիլ· «Ո՛չ մէկ: Իւրաքանչիւրը ունեցաւ իր դաժանութիւնները»:

Արուեստագէտի իր միջազգային հռչակը, իր չահած ժողովրդականութիւնը, նոյնիսկ Ֆրանսական Գեղարուեստի Կաճառ իր մուտքը դոյզն չազդեցին իր խոնարհութեան եւ խոնարհամտութեան վրայ: Ու նաեւ իր պարզութեան եւ մատչելիութեան: Արուեստագէտը, որ տէրն էր իր ստեղծած աչխարհին, անոր չքեղ ստեղծագործողը, ճանչցած էր փառք ու պատիւ, հոգեպէս մնաց տրուագ ծառան արուեստի պատմութեան աւանդներուն եւ հսկաներուն, անոնք կոչուին Վէրմէր, Վեթաքէզ, Ենկր թէ Ռեմպրան կամ այլ անուններ: Ու ինք զէմ ցցուեցաւ այս կեցուածքին հակառակ մտածողութեան. «Արուեստի ներկայ ողբերգութիւնը, արուեստագէտին չափազանցեալ անձնականացումին ընդմէջէն, աստուածներու հաւատարելու ահաւոր յատկնութեան մէջ է: Այո, ասիկա պիտի ըլլայ միակ միջոցը կորնգնելու ամէն յոյս կարենալ մատչելու ստեղծագործութեան մեծ եւ իրաւ խորհուրդին»:

Իր անձի՞ն մասին խօսուի՝ թէ իր գործին, իր մտածումները մէջբերուի՞ն՝ թէ իր ընկերային յարաբերութիւնները յիչատակուին Գառզու պիտի մնայ անմոռաց, որպէս նաեւ մէկը որ անքակտելի մնաց իր արմատներէն, Հայութենէն եւ Հայաստանէն – պիտի ըսէի նոյնիսկ իր չճանչցած Հօրենական Տիգրանակերտէն: Զգայուն Հայ մը, որ իր ժողովուրդին ապագան կը տեսնէր փոքրիկ Հայրենիքին վերապրումին եւ զօրացումին մէջ: Այդ ուղղութեամբ կարելի էր ապաւինիլ իր պատրաստակամութեան՝ ստանալու ակնկալուած աջակցութիւնը:

Վեհանձն անձնաւորութիւն մըն էր Գառզու, մէկը որ գիտէ անսակարկ ինքզինք բաչխել իր չրջապատին: Դէմք մը, որուն անունը չաղկապուեցաւ Հայութեան եւ անոր վարկին հետ աւելի քան կէս դար: Տառնամեակներ՝ որոնց ընթացքին Սփիւռք ինչպէս Հայաստան ինքզինքին մասամբ նոյնացուցին իրմով պայմանաւոր արժէքներուն:

Իսկ իր բարեկամներուն, որոնց թիւը քիչ չէ, այսօր կը խոնարհին իր ընչաւատկին առջեւ տրամաբաշխ երախտապարտութեամբ, որմէ անբաժան կը մնայ իր մարեմութիւնը վայելած ըլլալու հոգեպատրաստ ուրախութիւնը:

Պոսթըն

ԱՐՑԱԽԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

ՄՐՏԻ ՏԱԳՆԱՊ ԱՆՑՈՒՑԱԾ Է

Օգոստոս 9 Թուականը հաղորդագրութեամբ մը, Մայր Աթոռը կը տեղեկացնէր, նոյն առաւօտը, Բիւրականի մէջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ամարանոցը, հանդիպումի մը ընթացքին Արցախի առաջնորդը՝ Պարգեւ Արք. Մարտիրոսեան սրտի տագնապ մը ունեցած է եւ անմիջապէս փոխադրուած Երեւանի մէկ հիւանդանոցը, ուր ենթարկուած է երբեակ կամրջումի մը: Գործողութիւնը յաջող անցած է:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ԱԶՆԻՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ (Օ–ԳՈՍՏՈՍ 15) «ՅԱՌԱՋ», ԱՅՍ ՏԱՐԻ ԲԱՑԱՌԻԿԱՐ ԼՈՑՍ ՉԻ ՏԵՍՆԵՐ ՆԱԵԻ ՕԳՈՍՏՈՍ 13–ԻՆ ԵԻ 14–ԻՆ, ԱՅՑՍԻՆՔՆ ՕԳՈՍՏՈՍ 14–Ի, 15–Ի ԵԻ 16–Ի ԹԻԻԵՐ: ՄԵՐ ՑԱՋՈՐԴ ԹԻԻՐ ՈԻՐԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 17: ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ ՓԱԿ Է Օ–ԳՈՍՏՈՍ 13, 14 ԵԻ 15–ԻՆ:

ՋԱՒԱԽՔԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

Վերջին շրջանին հայկական լրատուական դրեթէ մնայուն հետաքրքրութեան թիրախ է Վրաստանի Հայաստանի սահմանակից ու հայաբնակ շրջանը: Լրագրողներ, թղթակիցներ, նաեւ անհատ այցելուներ յաճախ ուշադրութեան կը յանձնեն Ջաւախքի դժուարութիւնները, որբազրութեան կարօտ կէտերը, տեղացի հայութեան աջակցութեան կարօտ վիճակը: Այս բոլորը մեկնած են մարզասիրականէն զատ նաեւ մարտավարական պարագաներէ: Ջաւախքը ոչ միայն Հայաստանին կից հայաբնակ գօտի է, այլ նաեւ Թուրքիոյ ամրիջական դրացի ու առաւելեան տարիներու հունկէ Մինջին Ասիա աքսորուած մեսխեթցի Թուրքերու ջառուելիքներուն վերադարձի թիրախը:

Շրջանին մասին ցոյց տրուած հետաքրքրութիւնը դրական երեւոյթ է անշուշտ, զոնէ առանձնութեան մէջ լքուած Ջաւախեցիին տպաւորութիւնը ընչելու առումով. սակայն, նոյնքան մտածել տուող է, Հայաստանէն ակնկալութիւններուն տրուելիք արձագանգին ու նաեւ քաղաքական չահարկումի կարելի հետեւանքներուն տեսակէտէն: Բնական է որ Ջաւախքի Հայուն դժգոհութիւններուն ու պահանջներուն մէջ Վրաստանի հետ առաջին հասցէ ըլլայ Հայաստանը:

Սակայն, ծանօթ ու անծանօթ բազմաթիւ հարցերու տէր երկիրը ո՞ր չափով կրնայ հասնիլ, տիրութիւն ընել իսկապէս անտէր տուար համայնքի մը: Եւ թէ՛ րեւս, աւելի կարեւորը՝ կա՞յ իսկապէս այդ տիրութեան անկեղծ ձգտումը: Դժուար պատասխաններու իրականութիւնը միաք կը բերէ չահարկումի վախը: Չկա՞ն, չե՞ն կրնար ըլլալ քաղաքական պատեհապաշտներ որոնք տասնամեակներու դժգոհութեան ու ներկայի անկատելիութեան, անտարբերութեան մէջ նոր կինճիռի մը արմատները վորձեն դեռեղել. առով ալ լարուած յարաբերութիւններու ճահիճ մը թանալով Հայաստանի ու Վրաստանի միջեւ երբ երկուքն ալ ամէն տեսակ հարցերով լայնօրէն յագեցած ներկայի մը մէջ կանգուն մնալու կը ճգնին:

Հայաստանէն առաջին ակնկալուածը հետաքրքրութիւնն է, մինչեւ իսկ պարզ բարեւի տասիճանին. տակա առաջին նըշմարուածն ու մատնանշուածն է լրագրողական Անոյշ Թրուանցի կողմէ. ան «Հայաստանի Հանրապետութեան» Յուլիս 25–ի եւ 27–ի թիւերուն մէջ նիւթ ըրած է շրջանին առօրեան, Երեւանի քաղաքապետին գլխաւորութեամբ պատուիրակութեան մը ընկերանալէ ետք, դէպի այդ շրջանը:

«Թէկուզ եկէք, ասէ՝ ո՞նց էք, ի՞նչ էք ուտում, բան մի քերէք» կը կրկնեն իրենց հոն, ամէնապարզ այդ արտայայտութեան մէջ խտացնելով հետաքրքրութեան մեծ ծարաւը: Ատոր կը յաջորդէ դպրոցներու տխուր իրականութիւնը: Ջաւախքի սէս գօտիի մը մէջ այդ հաստատութիւնը աւելի՛ ռազմավարական արժէք ունի, քան՝ բանակը: «Գիւղական բազմաթիւ դպրոցներու մէջ չկան մասնագէտներ: Մեր մասնագէտները այդ գիւղերը չեն գնում ու չեն գնում... բացի մասնագէտներից, դպրոցական շէնքերն էլ մի կարգին վիճակում չեն. նրանց մի մասը վթարային, անհրապոյր շէնքերում է» կը գրէ լրագրողուհին: Երեւանը տեղեակ է կացութեան, երկու դպրոց նորոգել կու տայ, ուրիշ մըն ալ կու նորոգուի Երեւանի քաղաքապետին եւ թաղապետներուն օժանդակութեամբ:

Ջաւախքէն երիտասարդները կը մեկնին. այցելուներու խումբը Սաղամօ դիւղին մէջ ոչ մէկ երիտասարդի կը հանդիպի: «Հողի ծանր, յամառ աշխատանքի տակ կքած մարդիկ այդ ճակատագրին մասնակից են դարձնում երեխաներին»: Եւ կարդալ որ հողի այդ աշխատանքն ալ ակնկալուած նեցուկը չի տար. «գալիս – ստիպում են՝ էժան – ձրի, առնում, գնում» կ'ըսեն տեղացիները: Ախալքաքաքի երեսփոխան Մելիք Ռախտեան խոստովանելով որ լաւ բօզարկուած լարուած վիճակ կայ, Հայաստանի ու Վրաստանի յուրջ երկխօսութիւնը միակ ճար կը նկատէ կացութեան բարւոքումին: Նիջնծմինդա հայաբնակ շրջանին վարչութեան նախագահ Ռաֆիկ Արդումանեան ալ կ'առաջարկէ. «Այդ աթոռները, ւպատօնները, կուսակցութիւնները՝ գրողի ծոցը, եկէք միասին լինենք, էլի»: Նոյն կոչը կ'ընէ Վրաստանի նախագահին Ջաւախքի ներկայացուցիչ Վ. Ալելիչվիլին ալ որուն մեծ մայրն ու մայրը հայ են. ինքը հայախօս. «Հայլուր» կը դիտէ, հայկական ռուսալեզու մամուլ կը կարդայ: «Եկէք ամէն օր, այստեղ ձեզ ամէն օր սպասում եմ» ըսող մըն է Ախալքալաքի Շրջանային վարչութեան նախագահ Ա. Համբարձումեան եւս:

Եղած հրաւէրներուն ու անոնց ընդառաջելու տրամադրութեան միջեւ ինկած է ճամբաներու անբարեկարգ վիճակը, որպէս լուրջ խոչընդոտ: Այն տպաւորութիւնը կայ որ երկու կառավարութիւններն ալ ուշադիր են այդ մարզին, բայց առանց աճապարելու: Գրութեան առաջին էջը, կ'աւարտի Սաղամօ դիւղի բնակիչ Անդրանիկ Կոթելեանի արարքով. ան տարատիաճ՝ Սաղամոյի լիճին մէջ կարմրախայտին անհետացման վտանգէն, այդ ձկնատեսակէն կը բուծանէ եւ կը տանի, կը ձգէ լիճին մէջ:

Ճամբաներու անբարեկարգ կացութիւնը գրոյցի առաջին կէտերէն կ'ըլլայ լրագրողուհիին ու Հայաստանի Սահմանադրական դատարանի աշխատակազմի դեկավար Ա. Յակոբեանի միջեւ: Ան լաւատեղեակ մէկն է շրջանին անցեալի ու ներկայի խնդիրներուն: Կը զարմանայ որ անուշադրութեան մատնուած են մանաւանդ Ջաւախքի ճամբաները երբ Հայաստան անոնցմով կրնայ Սեւ ծով, Բաթում եւ այլ վայրեր հասնիլ: Կ'ըսէ թէ զոնէ կարելի է Աչոյք – Գիւմրի հատուածը նորոգել, որպէսզի վաղը վրացական իշխանութեան հետ հանդիպումի ընթացքին անոնք հարց չտան թէ լա՛ւ, բայց դո՛ւք ինչ կ'ընէք: Իրաւացի է ըսուածը թէ Հայաստանի ճամբաներուն չինութեան նպատակով կարեւոր դումարներ կը ստացուին եւ անոնց մէկ մասը կարելի է Ջաւախքին յատկացնել: Թէեւ, ինչպէս քանի՛ փորձեր ցոյց տուած են, դումարները միակ երաշխիքը չեն այդ շրջանին մէջ. քանի մը տարի առաջ մօտ կէս միլիոն տոլարի ծախք եղած է ճամբուն հայկական հատուածը երթեւեկելի դարձնելու համար, սակայն ձմեռ մը իսկ չէ դիմացած ան, գտնուած է. «ասորակ էր կառուցուած»:

Ա. Յակոբեան կը ծանրանայ Ջաւախքի ռազմավարական կարեւորութեան վրայ. Թուրքիա մինչեւ Եւրոպայի խորհուրդ տարած է Մեսխեթցի Թուրքերու հոն վերադարձի խնդիրը: Եթէ, այդ կարգի հետանկարի մը հետ նկատի առնուի Թիֆլիսի հարաւի շրջանին բնակիչ Ազրբեջանցիներուն պարագան, դժուար չէ նշմարել Թուրքիա – Ազրբեջան – ու Միջին Ասիա յարաբերութիւններու շրջթայ մը. նաեւ Թուրքիա չանք չի խնայեր որ կազատարին հիմնական թեւն ու մարտավարական նշանակութեան տէր կառոյցները այդ շրջային վրայ պետերին: Հետեւութիւնը յստակ է. «ժամանակն է որ դէմոով շուռ գաՆք դէպի հայութեաՆ այդ հատուածն ու ամրապընդեՆք կապը մեր ու նրանց միջեւ»:

Անկախութեան շրջանին մեծ չանքեր եղած են Հայաստանէն յիշեալ շրջանին ելեկտրական հոսանք տալու համար: Նիճոծմինդան արդէն կը ստանայ, պէտք է նոյն հարցը լուծել նաեւ Ախալքալաքի համար: Երկու տարիէ ի վեր կաթսորուած է հայերէն դասագիրքերու հարցն ալ, կը մնայ մասնագէտներ ճարել:

Ուրիշ հետաքրքրական մարզ մըն է հողագործական արտադրութիւնը Հայաստան ներածելու աշխատանքը: Մանաւանդ որ Նիճոծմինդայի ու Ախալքալաքի մէջ արդասաբեր հողեր կան: Եթէ Հայաստան հարկային, մաքսային եւ այլ արտօնութիւններ ստեղծէ, հոն հանդող բերքը կարելի կ'ըլլայ Հայաստանի շուկան հասցընել: Բաներ տրոնք, ինչպէս կ'ըսէ Ա. Յակոբեան, չեն կրնար առանց դժուարութեան լուծուիլ, բայց եթէ այսօր չըլլան, վաղը չատ ուշ պիտի ըլլայ եւ պիտի հատուցուին չատ աւելի բարձր գինով:

Հասկնալի է որ առաջնային խնդիրը կը վերաբերի ժողովուրդը իր հողին, դիւղին ու դպրոցին կապելուն. մինչդեռ այսօր շրջանը փոքր պատակտումներ ունի հայկական եւ տեղական իշխանութիւններու հետ: Կան նաեւ հակասութիւններ անոնց ու գաւառական իշխանութիւններու մէջեւ: Ա. Թրուանցի խոսակիցը կ'եզրակացնէ որ երկու երկիր – ներու մտաւորականներուն հանդիպումին անպայման հարկ է նիւթ ըլլան խնդիրները, քանի որ «ուժեղ Ջաւախքն անհրաժեշտ է եւ՛ Հայաստանին, եւ՛ Վրաստանին»:

ԱՐՓԻ ԹՈՓՈՑԵԱՆ

ՌԱՎԷՆԱՑԻ ՓԱՌԱՏՕՆԻ
«ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ»
ԾՐԱԳԻՐԸ

ՍՓԱԼԱՑԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ ԵՐԵՒԱՆ ԵՒ ՊՈԼԻՍ ԵՐ ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԻ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Յուլիս 23–ին, Երեւանի մէջ, Մխլանդի Սքալայի նուագախումբն ու երգչախումբը համերգ մը տուած են Ռավէննայէն յետոյ եւ Պոլսէն առաջ: Իտալացի հիւրերուն հետ Երեւան ժամանած են Մորով Յարութիւնեան, Ռազմիկ Դաւոյեան, Նկարիչներու Մութեան նախագահ Կարէն Ազամեան, Յովհան Ալք., որոնք մասնակցած էին Ռավէննայի Պիէննալէի բացման հանդիսութեան: Մ. Յարութիւնեան իր դրական տպաւորութիւնները փոխանցած է Ռավէննայի հանդիսութիւններէն: Ան ճշդած է նաեւ թէ Սքալայի կազմը իր համերգին համար պատուագին պիտի չստանայ: Տոմսերու վաճառքէն գոյացած դումարը կը մտնէ հիմնադրամի անուռկը, քանի որ հիմնադրամը հոգացած է հայկական կողմի վրայ դրուած ծախքերը:

*
**

«Հաչտութեան համերգին գաղտնիքը» խորագրին ներքեւ «Ժամհուրիյէթ»ի աշխատակից Նիլվիւն Ճէրրահօղլու կ'անդրադառնայ Սքալա Օփէրայի նուագախումբի ու երգչախումբի կողմէ նախընթաց գիշեր Խթանպուլի մէջ տրուած համերգին, որ կը յաջորդէր Երեւանի մէջ մէկ գիշեր առաջ սարքուած ուրիշ համերգի մը: Յօդուածագիրը կը նշէ որ իտալական մամուլը չատ լայն տեղ տուաւ այս երկու համերգներուն: Ցայտնի կը դառնայ որ Երեւանն ու Խթանպուլը նմանօրինակ համերգով մը իրարու կապելու գաղափարը եկած է Բիւքրատ Մութիի կնոջ՝ Քրիսթինա Մացավիլինի Մութիի կողմէ: Այս համերգը պիտի տարբերէր անցեալ տարի, բայց յետաձգուած յաճախորդներու հարցին հետեւանքով: Բարեկամութեան ու հաչտութեան կամուրջ կոչուած այս համերգներու չարքը սկսաւ 1997–ին Պոսնիոյ մէջ: 1998–ին կրկնուեցաւ Պէյրութի, 1999–ին Երուսաղէմի, անցեալ տարի ալ Մոսկուայի մէջ: Բոլոր համերգներուն նպատակն է հաչտութեան ու եղբայրութեան զգացումներ պատգամել ժողովուրդներուն, երաժշտութեան միջնորդութեամբ:

Իտալական «Ունիթա» թերթի աշխատակիցը, որ մասնակցեր է երկու համերգներուն, կը գրէ որ Սքալայի նուագախումբի Երեւանեան ու Խթանպուլեան համերգներուն նպատակն է երկու թշնամի քաղաքներուն փոխանցել հաչտութեան ազդանչաններ: Իտալական թերթը կը նշէ որ 1700–ամեակին նուիրուած Երեւանեան համերգին, 8500 հանդիսականներու կարգին, ներկայ գտնուեցան բարձրաստիճան անձնաւորութիւններ Հանրապետութեան նախագահէն եւ Հայոց Կաթողիկոսէն մինչեւ բոլոր բարձրաստիճան քաղաքապետները: Թերթը այնուհետեւ կ'ընէ հետաքրքրական խորհրդածութիւններ.

«Ինչո՞ւ այս տարի այս երկու երկիրներն ու երկու քաղաքները ընտրուեցան: Պատասխանը դիւրին է, բայց դժուար է գտնել բառերը: Մարիա Քրիսթինա Մութիի եւ բոլոր միւսները որոնք այս նախաձեռնութեան հեղինակներն են, կը նախընտրեն չարտասանել բառերը: Բարեգործական դիւանագիտութիւնը կը գործադրուի լռութեամբ ու սակաւ բառերով»:

Բայց իտալական թերթը այս համերգի կապակցութեամբ լայնօրէն կը խօսի «ցեղասպանութեան» եւ Արարատ լերան հայերու համար ներկայացուցած իմաստին մասին: Նուագախումբին հետ Երեւան եկած էր նաեւ Վենետիկի համալսարանի դասախօս Հայր Պօղոս Լեւոն Զէքիեան, որ կ'ըսէր թէ պարտաւոր ենք հայկական եկեղեցականութիւնը տեղաւորել պատմութեան համապատկերին մէջ: Ան սպէս կը չարունակէ իր մտածումները.

«2001 թուականի բարեկամութեան համերգը Երեւանի ու Խթանպուլի մէջ կը սարքուի պաշտօնականութենէ եւ բաւերէ ալ անդին բարեկամութեան կամուրջ մը հաստատելու նպատակով: Աւելի կամուրջ մըն է որ կը նետուի երաժշտութեան համաչխարհային լեզուով: Բիւքրատ Մութի կ'ըսէ որ մեր նպատակը հարցերը լուծել չէ, այլ այդ մասին ազդանչան մը տալ է: Մենք կ'երթանք ո՛չ թէ հրդեհը մարելու համար, այլ քանի մը կաթիլ ջուր տանելու նպատակով: Մենք եղբայրութեան համար է որ գոյութիւն ունինք: Այս պատճառաւ ալ թէ՛ Երեւանի, թէ՛ Խթանպուլի մէջ պիտի հնչեցնենք նոյն ձայնանիչերը»:

«Հայկական հարցը» համերգին ընդգրկած առաքելութեան չրջագծին մէջ երկար բանավէճի մը նիւթ դարձաւ նախընթաց պիչեր Իտալիոյ պետական հեռատեսիլին մօտ: Իտալացի մեկնաբաններ զարմանալի գտան որ Խթանպուլի մէջ 5000 հոգիի յարմար համերգասրահ մը չկայ:

*
**

ԻՏԱԼԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«Ժամհուրիյէթ»ի աշխատակից Նիլվիւն Ճէրրահօղլու Յուլիս 29 թիւին մէջ կը հակադրէր Սքալայի անունով Բիւքրատ Մութիի ղեկավարութեամբ Երեւանի ու Խթանպուլի մէջ սարքուած համերգներուն վերջ «ՐԱՅ» իտալական հեռատեսիլի կայանի կողմէ այս համերգներուն մասին կազմակերպուած յայտագրին դէմ (Յուլիս 27–ին): «Ազգադրութեան համերգ, թէ ոչ քարոզչութիւն» խորագրին ներքեւ յօդուածագիրը կ'ը յայտնէր թէ այդ յայտագիրը պարզապէս կու տար հետեւեալ պատգամը.

«Թուրքերը ատենօք Հայերը ջարդեցին, բայց Թուրքիա այսօր անգնդաստելի չուկայ մըն է»:

Ցայտագրի ընթացքին նշանաւոր հանդիսավար Պրունօ Վէսփա հարցազրոյցներ ալ ունեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, վարիչ Բիւքրատ Մութիի, «ՐԱՅ»ի տնօրէն Ռոպէրթօ Զաքարիայի ու փիրէլլի հաստատութեան նախագահ Մարքօ Թրանչէթթիի հետ: Միայն այս էր որ Թուրքիոյ մասին նպաստաւոր բաներ մը լսուած:

Փիրէլլի հաստատութիւններու նախագահ Թրանչէթթի ըսաւ որ իր հաստատութիւնը տասը տարիէ ի վեր Թուրքիոյ մէջ կ'աշխատի, Թուրքիոյ մէջ միւս իտալական հաստատութիւններուն հետ ալ ուժեղ կապեր ունինք, Հայաստան փոքրիկ երկիր մըն է որ կարճ ժամանակ առաջ իր անկախութիւնը վերագտաւ, տակաւին չատ ճամբայ պէտք է կտրէ որպէսզի բարօրութիւն ստեղծէ երկրին մէջ, երկու երկիրներու միջեւ մեծ տարբերութիւն կայ:

Թրանչէթթիի այս խօսքերը տա կը նշանակէին. «Թուրքիա մեզի համար չատ յաստանի հետ անբաղդատելիօրէն մեծ ու արդիւնաւէտ չուկայ մըն է»: Միայն այս նախազգաստութիւնն էր որ Թուրքիոյ ի նպաստ էր: Ակռէ դուրս միլիոնաւոր իտալացիներու համար այս յայտագիրը հետեւեալ պատգամը տուաւ որպէս «անվիճելի իրողութիւն». «1915–ին Թուրքերը ջարդեցին Հայերը»:

Ցայտագրի ընթացքին կը յուզադրուէին նաեւ տեսարաններ՝ Խթանպուլի

ԳՈՂՈՒԹԻՆ ԳՈՂՈՒԹ

ՊԼՑՐՈՒԹԻ Նշան Փալանճեան Ճեմարանի Վասպուրական սրահին մէջ, կազմակերպութեամբ Համազգայինի Լիբանանի Շրջ. վարչութեան եւ Ճեմարանի Շրջանաւարտիկ Միութեան, Յուլիս 26ին, տեղի ունեցած է Լեւոն Շանթի նուիրուած դասախօսական երեկոյթ մը: Բացման խօսքը արտասանած է Սեդա Խաչեան, որ ներկայացուցած է օրուան դասախօսը՝ Մարկ Նշանեան: Ան ծնած է Փարիզ 1946-ին, ուսած է փիլիսոփայութիւն Սորպոնի եւ Սթրազպուրկի համալսարաններու: Դասախօսը վերլուծելով Լեւոն Շանթի գործերը ներկայացուցած է անոնց մէջ գտնուող պեղպիտական ապացոյնականութիւնը: Ներածական բաժինով մը, ան ցոյց է որ 1914-ին «Մեհեան»ի մէջ կազմաւորուած Դանիէլ Վարուժան, Յակոբ Օշական եւ Կոստան Զարեան երբեակը փորձած է գրականութիւնը ազգայնականացնել՝ զայն զատորոշել եւ ինքնուրոյն դարձնել: Դասախօսութեան վերջաւորութեան Մ. Նշանեան երեք գլխաւոր երեւոյթներու ներկայութիւնը մատնանշած է Շանթի գործերուն մէջ՝ իշխանութիւնը, Մեսիականութիւնը եւ պատմականութիւնը:

*
**

ՊԻՐՖԱՑԱՑԻ Զարեհեան դպրեվանքին մէջ, Յուլիս 23-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը Մեսրոպ Մաշտոց չքանչանով պարգեւատարած է դեղանկարիչ Յարութիւն Թորոսեանը: 87-ամեայ արուեստագէտը վերջերս Արամ Ա.-ին նուիրած էր Գարեգին Ա. Յովսէփեանց երջանկայիշատակ Կաթողիկոսին դիմանկարը, զոր գծած է 1960-ին: Ասոնք առած են կաթողիկոսը որ վեր առած է նկարիչին վաստակը, ինչպէս նաեւ դեղանկարիչին որդին եւ արուեստագէտը:

*
**

ՀԷՑՊԷԼԻ կղզիի Հալթի Փալաս պանդոկի պարտէզին մէջ, Յուլիս 28-ին, ճաշատար մը կազմակերպուած է ի նպաստ Ֆէրիդիւղի Մէրամէթճեան վարժարանին: Ձեռնարկին կազմակերպիչը եղած է Արա Էլակէօզ, որ խօսք առնելով յայտնած է թէ հաւաքուած են 90-ամեայ Մէրամէթճեան վարժարանի ի նպաստ սարքուած «Ամառնային դիշեր» մկրտուած ճաշատարին զօրավիդ ըլլալու համար վարժարանին:

ՄԵՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ

Բոլոր անոնք որոնք պատեհութիւնը ունեցան ներկայ գտնուելու Յուլիս 17-ի երեկոյեան Ալֆորվիլի Ս. Մեսրոպ Կըրթարանի սրահի մէջ կայացած դասախոսութեան, կրնան անվարան իրենք զիրենք բախտաւոր նկատել: Արդարեւ յաճախ չէ որ առանձնաշնորհումը կ'ունենանք վայելելու այնպիսի պրոյց – դասախոսութիւններ, որպիսին մեզի հրամցուեցաւ վերջերս Ս. Էջմիածինէն ժամանած Տիրայր Քահանայ Գըլըճեանի կողմէ: Այս դասախոսութիւնը, ձեւով մը, բացատրեր կարելի է համարիլ «Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօն հռչակման հազար եօթհարիւրամեակ»ի ծիրէն ներս կազմակերպուած եւ Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութեան հովանաւորութիւնը վայելելով հանդիսութիւններու շարքին, նիւթ ունենալով «Ս. Գրիգոր Լուսաւորիչ – կեանքը եւ գործը»:

Տիրայր Քահանայ առաջին վայրկեանէն իսկ կարողացաւ իր տիպար հայ հոգեւորականի համբերքին տակ պահել սրահը լեցուցած ներկաները, զանոնք ոգեւորելով իրեն համար յատնապէս ներչնչումի աղբիւր հանդիսացող Ս. Գրիգոր Լուսաւորչի վառ կերպարով: Ան գրեթէ վերացումի վիճակին մէջ էր, երբ կը խօսէր մեր Եկեղեցւոյ Առաջին Սուրբին եւ Հիմնադրին կեանքի անցած ուղիին յատկանշական դրուագներուն մասին:

Վատիկանի մօտիկ մէկն է, ասիկա օգտագործեց Պապին մասին քարոզչութիւն մը ընելու համար: Հայերը իրենց 1700-ամեակին համար այսպիսի վիճելի հարցերդով մը վարձատրուեցան:

Բարեկամութեան ճամբայ, խաղաղութեան կամուրջ, հաշտութեան համերպ, այս բառերը գեղեցիկ բառեր են, որոնց մենք ալ կրնանք նեցուկ կանգնիլ, բայց որպէսզի արուեստի ճամբով խաղաղութիւն հաստատուի, ամէն բանէ առաջ պէտք է որ փլցուին այն պատերը, որոնք առկայ են միտքերու մէջ»:

*
**

Ինչպէս կը տեսնուի, «Ճումհուրիյէթ»ի աշխատակիցը չատ դժգոհ է իտալական հեռատեսիլի հաղորդումէն, քանի ան նպաստաւոր չէ եղած Թուրքիոյ, այլ իսկ պատճառով, վերոյիշեալ երկրորդ յօդուածը խորագրուած էր «Հաշտութեան համե՞րդ, թէ ոչ քարոզչութիւն»:

Տիրայր քահանայի բերնէն արձակուած իւրաքանչիւր բառ կարծես մէկմէկ պըլպլզուն խճաքարեր ըլլային որոնք վերջ ի վերջոյ ներկաներու մտապաստարանին վրայ պիտի վերակազմէին Ս. Գրիգոր Լուսաւորիչի երփներանգ խճանկարը: Ան իսկական հռետորի մը նման, ակներեւութին ներչնչուած, կարողացաւ համառօտ դիծերով ներկայացնել Ս. Գրիգոր Լուսաւորիչի օրինակելի կեանքը, եւ այդ ընթացքին անոր կրած անասելի տառապանքները եւ փորձութիւնները զոր ան կրեց սիրով եւ անսահման համբերատարութեամբ, չնորհիւ իր անբեկանելի հաւատքին եւ ապագայ Լուսաւորիչի ապեչնչող պայծառ տեսիլքին: Այդ տառապանքներ եւ փորձութիւններ առաւել բիւրեղացուցին անոր Աստուածահաճոյ հոգին զինք վերջ ի վերջոյ արժանացնելով մեր ժողովուրդին առաջին Լուսաւորիչի պատիւին, որբազան առաքելներէն եւ եօթ: Շնորհիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի, քրիստոնէութեան լոյսը սկսաւ ուղղակի Հայաստան աշխարհով մէկ, յաւերժօրէն լուսաւորելու համար նաեւ մեր ժողովուրդի կեանքի ուղին: Այդ լոյսին չնորհիւ, Հայաստան պահպանեց իր ինքնութիւնը եւ իր պատուաւոր տեղը դինք չընդապատող եւ անոր կործանումը տենչացող ահեղ պետութիւններու շարքին:

Ներկաներէն չատեր այս երեկոյին ընթացքին հաճելի զարմանքով իմացան որ Ս. Գրիգոր Լուսաւորիչի համբաւը վաղուց դուրս եկած է Հայաստանի սահմաններէն եւ այժմ ան կը գտնուի եւ գրեթէ մաս կը կազմէ միւս քրիստոնեայ սուրբերու չարքին: Այժմ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի անունով բազմաթիւ եկեղեցիներ պոյութիւն ունին Հայաստանի սահմաններէն դուրս որոնցմէ ոմանց մօտ կը պահուին անոր սրբազան նշխարները:

Տիրայր Քահանայ իր յատուկ չնորհակալական խօսքը ուղղեց Հ. Ժիրայր Ծ. վարդապետին, որ Փարիզի «Գէորգ Երեւանեան» դրադարանի պատասխանատուի հանգամանքով ակնկալած էր իրեն, իր տրամադրութեան տակ դնելով համապատասխան գրականութիւն:

Երեկոյի ողջ տեւողութեան, Տիրայր Քահանայ կարողացաւ վարպետօրէն համեմել իր դասախօսութիւնը նիւթին առընչուող յարակից փաստարկումներով եւ այս բոլորը կատարեց իրազարձութիւններու պատմական հենքի վրայ, յաճախ տպաւորելով ներկաները Աստուածարանականի կողքին՝ իր պատմա – բանասիրական դիտելիքներով:

Այս դասախօսութիւնը վստահաբար օգնեց ներկաներէն ոմանց աւելի զօրանալու իրենց հաւատքին մէջ:

ԴՊԻՐ

ԹԻՒ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ժ.

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Գրիգոր Զօհրապ հարկ համարեց մի-քանի տող:

– Իրաւ է, որ Շահրիկեանն ալ կրնար գալ, – ըսաւ, – այսուհանդերձ առանց իրեն ներկայութեան ալ այս գումարումը իր արժէքէն բան մը չկորսնցներ... եւ թերեւս իր ներկայութիւնը չատ ալ օգտակար չըլլար, – աւելցուց ժպտելով:

– Ինչո՞ւ համար...

– Այս գումարումը, եթէ չեմ սխալիր, կարծեմ նպատակ ունի ելից ճամբայ մը գտնել կնճռոտ հարցերու մասին... Արդ, Շահրիկեանը, անշուշտ, ամէնքս ալ կը յարգենք ու կը սիրենք, բայց միանգամայն գիտենք իրեն քիչ մը չափազանց անհաշտ նկարագիրը եւ թէօրիսիէնի յաժառութիւնը, մինչդեռ մենք կը փափաքինք գործնական հող մը գտնել, բրաթիք գործ մը տեսնել: Այս տեսակէտով իր բացակայութիւնը միտս մը չէ, եւ կարծեմ այդ մտածումէն առաջնորդուած Հալաճեան էֆէնտին ալ հրաւէր չէ ուղղած անոր:

– Այո՛, մոն չէռ, ես ալ ճիշդ այդ մըտածումը ունեցայ, չատ լաւ բացատրեցիք, – ըսաւ Հալաճեան:

Այս բացատրութենէն ետքը խորհրդակցութիւնը սկսաւ:

Ինդիրը, ինչպէս ըսինք, հայկական գաւառներու բարենորոգումներու մասին էր: Գումարումի հրաւէր ուղղողները կը փափաքէին դիտնալ, թէ Հայերու հետեւած քաղաքականութիւնը ճիշդ եւ յաւապո՞ւն էր, թէ՞ կարելի էր տարբեր ձեւով մը խնդիրը կարգադրել մեր չահերուն համար աւելի նպատակաւոր կերպով:

Մէկ քանի կարծիքներ յայտնելէ ետքը խօսք առաւ Գրիգոր Զօհրապ:

– Ես, – ըսաւ, – ճշմարտութիւնը խօսելու համար, կացութիւնը լաւ չեմ տեսնար: Կը վախնամ որ, ինչպէս նշանակեցինք յոյց կու տան, Ֆրանսա եւ Անգլիա պիտի չկրնան իրենց խօսքը քալեցնել, Ռուսիա արդէն խնդիրը թոյլ կերպով բռնած է, գալով Գերմանիոյ եւ Աւստրիոյ, անոնք եթէ ո՛չ յայտնապէս, գոնէ ներքնապէս հակառակ են այդ բարենորոգումներուն եւ աւելի կը նախընտրեն բարեկամ մնալ Թուրքերուն: Այս պայմաններուն մէջ լաւ է, որ մեր բոլոր յոյսը Եւրոպացիներու կողմէ անուանումը: Այդ ալ, – ըսաւ Հալաճեան:

Այս բացատրութենէն ետքը խորհրդակցութիւնը սկսաւ:

Ինդիրը, ինչպէս ըսինք, հայկական գաւառներու բարենորոգումներու մասին էր: Գումարումի հրաւէր ուղղողները կը փափաքէին դիտնալ, թէ Հայերու հետեւած քաղաքականութիւնը ճիշդ եւ յաւապո՞ւն էր, թէ՞ կարելի էր տարբեր ձեւով մը խնդիրը կարգադրել մեր չահերուն համար աւելի նպատակաւոր կերպով:

Մէկ քանի կարծիքներ յայտնելէ ետքը խօսք առաւ Գրիգոր Զօհրապ:

– Ես, – ըսաւ, – ճշմարտութիւնը խօսելու համար, կացութիւնը լաւ չեմ տեսնար: Կը վախնամ որ, ինչպէս նշանակեցինք յոյց կու տան, Ֆրանսա եւ Անգլիա պիտի չկրնան իրենց խօսքը քալեցնել, Ռուսիա արդէն խնդիրը թոյլ կերպով բռնած է, գալով Գերմանիոյ եւ Աւստրիոյ, անոնք եթէ ո՛չ յայտնապէս, գոնէ ներքնապէս հակառակ են այդ բարենորոգումներուն եւ աւելի կը նախընտրեն բարեկամ մնալ Թուրքերուն: Այս պայմաններուն մէջ լաւ է, որ մեր բոլոր յոյսը Եւրոպացիներու կողմէ անուանումը: Այդ պարագային ալ, ինչպէս ըսինք, մենք չենք կրնար պիտի ըլլայ, որ Թուրքերը իրենց անուանեն եւ Թուրք կառավարութեան պաշտօնեայ համարուի: Այդ դիտողութիւնը կարծեմ թէ կրնանք ընել առանց անպատեհութեան, գոնէ իմ անձնական կարծիքս այդ է:

– Բայց այն ատեն եւրոպական քօնթրօլը ջնջուած պիտի ըլլայ, – դիտել տուաւ ներկաներէն մին, – ինչպէ՞ս կրնանք ընդունիլ այդպիսի բան մը, մենք որ մեր բոլոր յոյսը դրած ենք այդ տեսակ քօնթրօլի մը վրայ:

– Քօնթրօլը միշտ քօնթրօլ է, – պատասխանեց Զօհրապ, – ըլլալիքը պարզ ձեւակերպութիւն է եւ ո՛չ ուրիշ բան, միայն երեւոյթները փրկելու եւ Թուրք կառավարութեան արժանապատուութիւնը չվիրաւորելու համար:

– Ես բանաւոր կը գտնեմ Զօհրապ էֆէնտիի առաջարկութիւնը, – միջամտեց Հալաճեան:

– Մենք առանձին որոշում չենք կրնար տալ այդ մասին, խնդիրը չատ ծանրակշիռ է, – դիտել տուաւ Վարդիկ:

– Արդէն հոս ուրիշ որոշում պիտի չտրուի, պարզ կարծիքի փոխանակութիւն մըն է, որ կ'ընենք գիրար լուսաբանելու համար, – պատասխանեց Զօհրապ, – երբոր իրար հասկացողութեան մը գանք, այն ատեն մեր տեսակէտը կը պարզենք Վարչութեան:

Ստեփան Գարայեան մէկ քանի վերապահումներով օգտակար գտաւ Զօհրապի առաջարկը:

– Միշտ չըլլայ հայկական

(Շար. Ա. էջէն)

նեբէն 59–ը։ Պաշտպանութեան նախարարութեան կեդրոնատեղին կը գտնուէին Օգոստոս 10–ին։ Առնդհմէ 10–ը 5–էն 40 օր բանտարկութեան դատապարտուած են։

ՓՈՒԹՊՈԼ

Հ.Մ.Ը.Մ. – ՖՐԱՆՍ ՊԷՅՐՈՒԹ ՄԵԿՆԵՑԱՒ

Հ. Մ. Ը. Մ. – Ֆրանսի Փութպոլի ներկայացուցչական խումբը այսօր, Ուրբաթ, Օգոստոս 10–ին, 23 հոգինոց պատուիրակութեամբ մը մեկնեցաւ Պէյրութ, մասնակցելու համար Հ.Մ.Ը.Մ.–ի կեդրոնական վարչութեան կազմակերպած Փութպոլի համաՀՄԸՄ–ական 3–րդ մրցաշարքին։

12 տարբեր երկիրներէ եկած Հ. Մ. Ը. Մ.–ի խումբերը պիտի բաժնուին չորս խմբակներու, որոնցմէ առաջին տեղը զբաղեցնողը իրարու դէմ պիտի մրցին կէս – աւարտականի, ապա չաղթողները աւարտականի համար։

Կը սպասուի լիբանանահայութեան խուռներամ մասնակցութիւնը։

Շ. Ո.

***

«ԱՐԱՐԱՏ» ՊԱՐՏՈՒԱԾ

Օգոստոս 9–ին, Երեւանի իր դաշտին վրայ, «Արարատ» 0 – 2 պարտուած է Թել – Ավիվի խումբին։

ՇԱՐՈՒՆԱԿԱԼԻՔ

Ֆրանսահայ կապոյտ Մաչէ Ալֆորվիլի «Իլէն» Բիւզանդ» մասնաճիւղի վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած է փոխան ծաղկեպսակի Արքօ Գուլումճեանի մահուան առթիւ հետեւեալ նուիրատուութիւնները։

Տոքթոր Գափօ եւ տոքթոր Մխիթէ 1600 Ֆր., Տիկին Մայտա Փափազեան 200 Ֆր., Տէր եւ Տիկին Մարսէլ Փափազեան, Տէր եւ Տիկին Յարութիւն Սարգիսեան 300–ական Ֆրանք։

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՖՐԱՆՍԱՀԱՅՑ ԿԱՊՈՑՏ ՄԱՉԻ ՓԱՐԻԶԻ ԱՐՇԱԼՈՑՍ ԹՈՒՐՔՈՍԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալօրէա կը դասաւանդուին. – հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք։

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին։

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

—ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ—

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՋ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8·45ին։
Պատարագ ժամը 10·30–ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԱՇԵԱՆ
կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի Առաջնորդ Հայոց Փարիզի
Պատարագի աւարտին՝ խաղող կ'օրհնուի։
ՄԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13, Բ. օր
Վերափոխման։ Յիշատակ Մեռելոց։
Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի։
Կը պատարագէ՝
ՏԻՐԱՑՐ ՔՀՆՑ. ԳԼՂԸՃԵԱՆ
Պատարագի աւարտին՝ Հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Վերափոխումն Ս. Աստուածածնի։
Ժամերգութիւն ժամը 9·30–ին։
Պատարագ ժամը 10·30–ին։
Յատուկ պատարագի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւն։
ՄԱՆՕԹ.– Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Օգոստոս 13
Յիշատակ Մեռելոց։
Ժամը 10–ին պատարագ ապա հոգեհանգստեան պաշտօն «վասն համօրէն ննջեցելոց»։

De passage en France, au cours
d'un grand tour d'Europe
organisé dans le cadre des festivités
du 1700ème anniversaire
de la christianisation de l'Arménie
nous accueilerons
pour un **SPECTACLE UNIQUE**

**L'ENSEMBLE
FOLKLORIQUE**

DATEV

(danseurs âgés de 10 à 14 ans)

en l'ESPACE GARBIS MANOUKIAN
40, rue d'Arménie, 69003 LYON

VENDREDI 17 AOUT à 20 heures 30

Venez nombreux les applaudir
également...
—— P.A.F. 50 F ——

Renseignements:
☎ M.C.A.V. **04.78.26.28.71**
(les après-midi)
**Maison de la Culture Arménienne
de Villeurbanne**
Croix Bleue des Arméniens de France
Section de Lyon-Villeurbanne

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻՒ

Պատարագ ժամը 10·30–ին։
Պատարագի աւարտին Խաղողօրհնէք։

ՎԱՐԱԳԱՑ Ս. ԽԱՉ ԱՐՆՈՒՎԻԻ


ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի։
Ժամերգութիւն ժամը 9·45–ին։
Պատարագ ժամը 10·45–ին։
Կը պատարագէ Հոգեւոր հովիւ՝
ՄԵՍՐՈՊ Ա. ՔՀՆՑ. ԺԱՄԿՈՉԵԱՆ
Յատուկ պատարագի կը կատարուի խաղողի աւանդական օրհնութիւն։

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Տօն Է Ս. Աստուածածնի
Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի։
Օրուան պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՉԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայից
Յատուկ պատարագի կը կատարուի «Օրհնութիւն Խաղողոյ» աւանդական արարողութիւնը։
ՄԱՆՕԹ. – Անոնք որոնք կը փափաքին այս առիթով խաղող նուիրել, թող հաճին տեղեակ պահել Մայր եկեղեցւոյ Գրասենեակը։
Հեռաձայն. –
04 91 77 84 70

ՍԷՆ–ԼՈՒ — Ս. ԳԵՈՐԳ

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 12
Պատարագ ժամը 10–ին։
Խաղողօրհնէք ժամը 11·45–ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՑ. ՏԷՏԷՒԵԱՆ
ՄԱՆՕԹ. – Խաղողի կամ փոխան խաղողի նուէրները կը ստացուին Թաղականութեան մօտ։



le domaine de chamerolles

45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 héctares avec étang,
hébergement en châlets tout confort
pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends
et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F
(selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.
Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris

du jeudi 4 au lundi 8 octobre

à l'occasion de la Béatification de

Mgr. IGNACE MALOYAN

Archevêque de Mardine, martyr en 1915.

le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.



ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 17
VENDREDI
17 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում) 1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·231 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20·231

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 10 / 16)

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ ՀԱՅԵԽԹՈՒՐՔ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Օգոստոս 9-ին, Ազգային ժողովի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Ց· Ցովհաննիսեան ընդունած է ԱՄՆ-ու Գոնկրէսի մէջազգային յարաբերութիւններու յանձնաժողովին պատուիրակութիւնը: Անոնք պայած են քննելու շրջանի խնդիրները եւ ԱՄՆ-ու հայաստանեան ծրագիրներուն ընթացքը: Յանձնաժողովին բանբերը Ս· Սթրալման հետաքրքրուած է հայեւթուրք ու հայեւադրբեջանական յարաբերութիւններու նկատմամբ Հայաստանի Հորհրդարանին կեցուածքով: Ց· Ցովհաննիսեան ըսած է թէ Թուրքիա կը փորձէ կեղծել ցեղասպանութեան իրողութիւնը. իսկ այն հարցադրումին թէ Թուրքիոյ կառավարութիւնը ինչքինք պատասխանատու չի նկատեր Օսմանեան անցեալին, Ց· Ցովհաննիսեան պատասխանած է· «Նոտան լինելով բռնազաւթուած տարածքների վրայ, նրանց թուում է որ մէր յաղորդ քայլը կը լինի տարածքների պահանջը, փոխհատուցումը: Դրա յօդուածն էլ կարելի է պահել, եթէ երկխօսութիւն սկսուի»:

*
**

ՀԱՆՐԱԿԱՒՔԻ ԱՐԿԱԾԻՆ 10–ՐԴ ԶՈՀԸ

Օգոստոս 9-ին Սպիտակէն 8 քիլոմեթր հեռաւորութեան վրայ պատահած հանրակաւքի արկածին զոհերուն թիւը յաղորդ օրը 10-ի բարձրացած է, վիրաւոր ճամբորդ կնոջ մը մահով: Հանրակաւքին վարորդն ալ ծանր վիրաւորներու շարքին է:

*
**

Ս· ՍԱՐԳՍԵԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ Վ· ՆԻԿՈԼԱՑԵՆԿՈՑԻ ՀԵՏ

Պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան Օգոստոս 13-ին ընդունած է ՀԱՊ-ի Ապահովութեան Հորհուրդի ընդհանուր քարտուղար՝ Վալերի Նիկոլայենկօն: Ան նախապարին ներկայացուցած է երեւանեան վեհաժողովին ընթացքին ընդունուած որոշումներու գործադրութեան ընթացքը, ինչպէս նաեւ յաղորդ հանդիպումին քննարկուելիք նիւթերը: Ապա, Ս· Սարգսեան տեղեկութիւններ տուած է վերջերս կատարուած ռուս· հայկական ռազմափոխանակներուն մասին: Արծարծուած են նաեւ Ռուսաստանի Պաշտպանութեան նախարար Ս· Իվանովի Սեպտեմբերին Հայաստան կատարելիք այցելութիւնը եւ աւոր առընչուող կազմակերպչական հարցեր:

*
**

ՀԱՄԱՑՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԱՌԱԿՏՈՒՄԻ ԵԶՐԻՆ

Հայաստանի Համայնավար Կուսակցութենէն վերջերս արտածորած տարաձայնութիւններու ճայներուն կապակցութեամբ Երեւանի Կինոյի տան մէջ, Օգոստոս 11–ին, ուսակցութեան չարքերէն հեռացուած Քաղխորհուրդի նախկին քարտուղար Եուրի Մանուկեան եւ կուսակցական իր համախոհները ժողով մը կազմակերպած են: Անոնք պատակաուած թելի ներկայացուցիչներէն պահանջած են ներողութիւն խնդրել իրենց վարքագիծին համար: Հակառակ պարապային, ժողովին նախաձեռնարկները ապառնացած են արտակարգ համագումար հրաւիրել, ինչ որ կուսակցութիւնը կը տանի դէպի իսկական պառակտում: Ժողովին խօսք առնողները կ'նդհանրապէս ընդգծած են իրենց հեռացումի ապօրինի պայմանները:

*
**

ՍԵԻԱՆԱՑ ԼԻՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԻՋՆԵԼ

Ըստ Հայաստանի Զբեւօդերեւութաբանութեան վարչութեան տուեալներուն, Օգս· 6–12-ի շաբաթը 13 մմ· եւս նուազած է լիճին ջուրերուն մակարդակը, անցեալ տարուան բաղդատմամբ:

Միւս կողմէ Բնապահպանութեան նախարար Վարդան Ազատեանի այցերու ընթացքին պարզուած է որ լիճի շրջակայքը կ'օգտագործուի բնապահական եւ այլ պայմաններու խախտումներով: Այս պատճառով իսկ առժամաբար կասեցուած է սոյն տարածքներու վարձակալութեան տրամադրումը, մինչեւ այս առթիւ ստեղծուած ակադեմական յատուկ յանձնաժողովին ծրագիրը մշակելը:

*
**

ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐՈՒ ԱՊՕՐԻՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Տաւուշի մարզպետարանը դիմած է կառավարութեան եւ Բնապահպանութեան նախարարութեան, միջամտելու եւ դադրեցնելու համար գործունէութիւնը մարզի այն ձեռնարկութիւններուն, որոնք ապօրինի կերպով կը շահագործեն հանքավայրեր: Ընդերքի օգտագործման համար կատարեալ փաստաթուղթի տէր է միայն Զօրականի տուֆի հանքը· միւս հինգ ձեռնարկութիւնները որոնք կը գործեն, կա՛մ թերի արտօնագրեր ունին կա՛մ ալ բոլորովին կ'անտեսեն օրէնսդրութիւնը:

*
**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Այս տարուան առաջին վեցամսեայի Հայաստանի մէջ կատարուած արտադրութիւնը կը ներկայացնէր 139 միլիառ 105 միլիոն դրամ: Արտադրութեան զբաղեալ բաժինը կ'իյնայ էլեկտրականութեան՝ 43 միլիառ 269 միլիոն դրամ համարժէքով: Նոյն ժամանակահատուածին, ՀԱՊ–ի երկիրներ արտածուած է 16 միլիառ 829 միլիոն դրամի, իսկ այլ երկիրներ՝ 19 միլիառ 644 միլիոն դրամի ապրանք:

*
**

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՕՏ

Օգոստոս 15-ին, Ռ· Քոչարեան հանդիպում մը ունեցած է Ամենայն Հայոց Գարեգին Բ· Կաթողիկոսին հետ: Անդրադարձած են պետութիւն – եկեղեցի յարաբերութիւններուն եւ 1700-ամեակի տօնակատարութիւններուն:

*
**

ԱՄՆ–ՈՒ ԴԵՍՊԱՆԸ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՕՏ

Նախագահ Ռ· Քոչարեան Օգոստոս 14–ին ընդունած է ԱՄՆ-ու դեսպան Մ· Լեմքինը: Արծարծուած են հայ - ամերիկեան յարաբերութիւնները, Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ընթացքը, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներուն վերջերս Սոչի կայացած հանդիպումը:

*
**

ՆՈՐ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԱՄՆ ԿԵՑՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

ԱՄՆ–ու Երեւանի դեսպանատունը հաղորդած է, թէ Միացեալ – Նահանգներ դաղթի վիզայի համար տարեկան վիճակահանութիւն կը կազմակերպուի: Մշտական բնակութեան 55·000 վիզաներ կը յատկացուին ամբողջ աշխարհի մէջ, իսկ դիմողներու միջեւ ընտրութիւնը կը կատարուի համակարգիչի միջոցով:

*
**

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Նախագահ Ռ· Քոչարեան, Օգոստոս 14–ին ստորագրած հրամանագրով Ալիկ Միրզաբէկեանը նշանակած է Պաշտպանութեան նախարարի տեղակալ, Գեղամ Ղարիբջանեանը՝ Քաթարի լիազօր դեսպան (որ կը պահէ նաեւ Թեհրանի դեսպանի պաշտօնը):

*
**

Ռ· ԱՄՈՅԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

Տաչքենթի մէջ Օգոստոս 14-ին ստորագրուած են ընդհանրական երիտասարդական համաշխարհային ախոյենութեան խաղե-

(Շար·ը Գ· էջ)

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐՈՒՆ ՀԵՏ

ՔԱՐԵՐՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Գագաթի շրջանին մէջ վերջերս ցուցարարներու եւ պաղեստինեան ապահովութեան ուժերու բախումները Պաղեստինի իշխանութեան մէջ խառնաչփոթ վիճակ մը կը մատնեն· ատիկա հետեւանք է ԱՄՆ-ու եւ Իսրայէլի պատճառած նուաստացումներուն, քարերու պատերազմին վերջ դնելու պահանջներուն: Եթէ չփոթը չարունակուի, վտանգը կայ ներպաղեստինեան բախումներու որոնք կրնան քաղաքացիական պատերազմի մը յանգիլ· իսկ նման պայմաններու մէջ Ա· Շարոն կրնայ յաջողիլ այն ինչ որ չկրցաւ մինչեւ այսօր իրագործել:

Քննադատելի կը նկատուին պաղեստինեան ապահովութեան ուժերու կրակոցները զինեալ շարքայիններու վրայ որոնք կը պատրաստուէին դիմադրական արարքի մը· յատկապէս անոնցմէ երեքին վիրաւորումը յայտարար նշան կը նկատուի ծրագրի մը որուն նպատակն է խորտակել Պաղեստինցիներու ազգային միութիւնը որ մինչեւ այսօր անոնց գլխաւոր խաղաքարտն էր:

Ուժի դիմելով քարերու պատերազմին արգելք ըլլալու փորձը ԱՄՆ-ու գոհացում տալու ձեւ մը կը համարուի, ինչ որ ժողովուրդին մօտ կը վարկաբեկէ իր իշխանութիւնը· ան կը դիտուի որպէս դրաւող ուժերու ենթակայ ճնշումի գործիք մը:

Ատոր զուգահեռ, Իսրայէլ ոչ միայն չի յարգեր հրադադարը, այլ նաեւ կանոնաւոր կերպով կը չարունակէ քարերու պատերազմին իսկական պարագլուխները մաքրագործել: Զոհերը կ'ընտրուին Արաֆաթի Ֆաթահ չարժումէն ու իսլամական Համասէն: Արաբական թերթեր հարց կու տան թէ այդ պայմաններուն մէջ ինչո՛ւ Պաղեստինցիները, իրենք, պէտք է յարգեն հրադադարը:

Որոշ յուսախաբութեան մը պատճառ է տեսնել որ պաղեստինեան այլատարբը կառավարութիւն մը կազմելու ձեռնարկուած չէ որով օրինակելի համախոհութեան մը պատկերը տրուէր: Անոր տեղ մարդիկ ականատես եղած են Համասի դէմ իշխանութեան բիրտ յարձակումին:

Դէտերու կարծիքը այն է որ պաղեստինեան իշխանութիւնները պէտք է ընտրութիւն մը կատարեն· կա՛մ հետեւին պաղեստինցի ժողովուրդին նախընտրութեան, անոր հետ յարաբերութեան նոր ձեւ ստեղծելով, կա՛մ ենթարկուին իսրայէլեամերիկեան ճնշումներուն, իրենց ժողովուրդին դէմ դիրք բռնեն եւ խոչընդոտեն քարերու պատերազմը:

ՎՐԻՊԱԿ·

Ինչպէս մեր ընթերցողները պէտք է գուշակած ըլլան «Յառաջ»ի Օգոստոս 11/12 թիւին, Ա· էջի «Գառգու անմահը» յօդուածին հեղինակն էր Գրիգոր Քէօսէեան: Նոյն գրութեան գլուխը՝ պէտք է ըլլայ «մահուան տարելիցին առթիւ»:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

1990–ին Շամպէզիի մէջ (Զուիցերիա) համաձայնագիր մը կը ստորագրուէր Ուղղափառ Բիւզանդական եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներուն (հայ, ասորի, պարի եւ եթովպական) միջեւ, վերջ տալու համար 15 դարերէ ի վեր տեւող աստուածաբանական անվերջանալի վէճերուն: Այս վէճերուն գլխաւոր պատճառն էր քրիստոնէացման խնդիրը. այսինքն, Քրիստոսի բնութեան հետ կապուած բոլոր հարցերը: Այս համաձայնագրով ուղղափառ բոլոր եկեղեցիները կը հաստատէին որ իրականութեան մէջ, տարբեր բառերով, անոնք միշտ նոյն աստուածային ճշմարտութիւնները դաւանած էին: Համաձայնագրին աւարտին, երկխօսութեան մասնակցած բոլոր բարձրաստիճան հոգեւորականները կոչ կ'ուղղէին մասնակից եկեղեցիներուն հոգեւորականութեան եւ հաւատացեալներուն որ փոխադարձաբար վերականգնացնէին իրենց հաւատքը, գործնական քայլերու դիմէին իրենց համայնքային առօրեայ կեանքին մէջ, որպէսզի կատարուած յառաջդիմութիւնը մեռեալ տառ չմնար:

Իրականութեան մէջ այս կոչը քիչ արձագանգ գտաւ բոլոր եկեղեցիներէ եւ սկսուած երկխօսութիւնը մենաշնորհը մնաց բարձրաստիճան հոգեւորականներուն: Պատճառներուն գլխաւորն է անտարակոյս, երկկողմանի, պատմութենէն ժառանգուած անվստահութիւնն ու անդիտութիւնը եւ մանաւանդ իւրաքանչիւր եկեղեցւոյ կղզիացումը: Այս կղզիացումին վերջ տալու համար է որ ուղղափառ տարբեր եկեղեցիներու պատկանող մօտ 50 հոգեւորականներ եւ աշխարհականներ ի մի եկան Գերմանիոյ Վարպուրկ քաղաքին մօտ (Վեսթֆալիոյ նահանգ), Յուլիս 27–էն 30, եռօրեայ համագումարի մը համար:

Համագումարը բացուեցաւ Ուրբաթ, Յուլիս 27–ին, Վարպուրկի Սուրբ Յակոբ ասորական վանքին մէջ: Այս առթիւ, վանահայր Հայր Անանա Այտին, բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն եւ առիթէն օգտուելով ընդհանուր տեղեկութիւններ տուաւ Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ պատմութեան եւ յետոյ ալ Գերմանիոյ համայնքներուն մասին: Զարմանքով լսեցինք թէ 1981–էն ի վեր 60 հազարէ աւելի Ասորիներ հաստատուած են Գերմանիա, չատերը Թուրքիայէն (Մարտինի շրջանէն): Այսօր իր պաղութը 44 համայնքներ կը հաշուէ եւ ամէն մէկը հոգեւոր հովիւով օժտուած է: Թեմին կեդրոնն է Սուրբ Յակոբի վանքը որ նախապէս Դոմինիկեան ազդեցիկ միաբանութեան պատկանած է: Վանքին մէջ գոյութիւն ունի դպրանոց – ընծայարան մը եւ հարուստ գրադարան մը:

Յաջորդ օրը, համագումարը տեղափոխուեցաւ քանի մը մղոն անդին գտնուող Պօրկենթրայխի «պետական գիւղը», հիւրընկալուելով Ղպտի ուղղափառ եկեղեցւոյ կողմէ: Թեմին առաջնորդ Տամիան Եպիսկոպոս նոյնպէս ներկայացուց իր համայնքը որ ասորականէն չատ աւելի փոքր ըլլալով հանդերձ, անկէ նուազ պործօն չէ. 6 հազար հաւատացեալ հաշուող իր համայնքը 8 ծուխեր ունի, երկու վանք եւ Մշակութային կեդրոն մը, որ իսկական գիւղ մը կը կազմէ տասնեակ չէնքերով եւ ընդարձակ հողատարածքներով (անցեալին այս ընդարձակ հատուածը գերմանական զօրանոց մըն էր):

Այստեղ պաշտօնապէս Շարաթ առաւօտ կը սկսէին աշխատանքային նիստերը: Միասնաբար կը նախագահէին Մետրոպոլիտ Սերաֆիմ (Ռումանական եկեղեցի), Արքեպիսկոպոս Մար Ցուլիոս Զիչկ (Ասորական ուղղափառ եկեղեցի) եւ Տամիան Եպիսկոպոս (Ղպտի ուղղափառ): Ներկայ էին Եւրոպայի տասնեւերկու երկիրներէ եկած Ֆրանսացի, անգլիացի, Ֆինլանտացի, հայ, լեհ, չեխ, արաբ, ղպտի, եթովպացի աշխարհականներ եւ հոգեւորականներ:

Այս ձեռնարկին իր օրհնութիւնը տուած էր նաեւ Գերմանահայ Թեմի առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Պեքճեան: Երկրէն բացակայ ըլլալուն համար, որպէս հայ եկեղեցւոյ ներկայացուցիչ ան վիազօրած էր Սերովբէ Վրդ. Իսախանեանը (Պէրլին) որ ցաւօք, առողջական պատճառներու բերմամբ բացակայ էր: Ժողովի կը մասնակցէր նաեւ Սահակ Սրկ. Սուքիասեան, Լիոնէն (Ֆրանսա):

Համագումարին օրակարգին մաս կը կազմէին երկու կարեւոր նիւթեր. –

Ա. – Գործնական համագործակցութիւն մը ստեղծել Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն միջեւ, ընկերային հարցերուն շուրջ:

Բ. – Երիտասարդութեան առընչուող խնդիրները:

Առաջին կէտին շուրջ առաջարկուեցաւ «Հասարակական ծառայութեան» համար կարգ մը ստեղծել բոլոր այն քաղաքներուն մէջ ուր գոյութիւն ունին ուղղափառ համայնքներ: Մասնակցողները յատկապէս չեչոը դրին պաղթականներուն, անզամալոյծներուն, հիւանդներուն եւ քանտարկեալներուն օգնելու անհրաժեշտութեան վրայ: Ասոք եղաւ նաեւ ուղղափառ որոշ երկիրներէ (Ռուսաստան – Ուկրանիա – Հայաստան) հետզհետէ աճող պոռնկական ենթակառոյցներուն մասին որոնք բարոյական յուսալքութեան կը հասցնեն տասնեակ հազարաւոր հայ, ռուս կամ ուկրանացի երիտասարդուհիներ: Այս բոլոր հարցերուն պատասխանելու համար, ժողովականները անհրաժեշտ գտան որ իւրաքանչիւր համայնք զինուորակոչուի եւ գործի լծուի: Կ'առաջարկուի որ իւրաքանչիւր քաղաքի մէջ, ուղղափառ հոգեւորականները զբաղին ոչ միայն իրենց Ծուխին բանտարկեալներով կամ հիւանդներով, այլեւ հոգ տանին քոյր համայնքներուն անդամներուն մանաւանդ երբ ենթականերուն հարազատ եկեղեցին հոգեւորականն չունի տուեալ քաղաքին կամ չրջանին մէջ: Փոխադարձ ծառայութեան այս գործողութիւնները պիտի կատարուին առանց յետին միտքերու կամ նպատակներու, թելով քրիստոնէավայել ղազացումներէ եւ մեզմէ հեռու վանելով մարդորսորդութեան կասկածները:

Քրակայէն ժամանած երիտասարդ կիսասարկաւագ մը՝ Ռուսուլֆ Սթրանգէլ, Չեխոսլովաքիոյ ուղղափառ եկեղեցւոյ անդամ (Չեխիոյ եւ Սլովաքիոյ քաղաքական բաժանումին ժամանակ այս եկեղեցին որոշեց երկուքի չբաժնուիլ եւ մնալ մէկ առաջնորդի հովանաւորութեան տակ) տպաւորիչ վկայութիւն մը բերաւ ներկայացնելով իր տարած աշխատանքները Չեխիոյ Հանրապետութեան մէջ: Ան վճռականօրէն հաստատեց թէ իր նպատակը ոչ թէ դաւանք «քաղկեդոնական» ուղղափառութեան բերել է, այլ աշխատիլ իրենց հետ, որպէսզի իրենց հոգեւոր ու մշակութային ժառանգն ու դիմագիծը պահպանեն: Երիտասարդ Չեխը յայտնեց որ քանի մը տարիներով բարձրաստիճան հայ հոգեւորականներու դիմած է, սակայն յաճախ օգնութեան իր խնդրանքները (հոգեւոր հայերէն գրականութիւն ղրկելու) ապարդիւն մնացած են:

Մաս Ցուլիոս Արք. Զիչկ հաստատեց որ նման եղբայրական ծառայութիւն կատարած է նաեւ ասորական ուղղափառ եկեղեցին, մանաւանդ 40–ական թուականներուն երբ ոչ մէկ հայ հոգեւորական կրնար արեւելեան Անատոլու այցելել: Այդ տարիներուն իսլամացած, կամ երեւութապէս իսլամացած Հայերը կը մկըրտուէին ասորի հոգեւորականներու կողմէ. այդ չէր նշանակեր որ անոնք ասորի դարձած էին:

Ֆինլանտացիէն եկած զոյգ մը՝ Լէա եւ Շեմելա Թէնաօ, նկարագրեցին Հելսինքիի եկեղեցական կեանքը, զայն ներկայացնելով որպէս համագործակցութեան դրական եւ բացառիկ օրինակ մը. Ֆինլանտական մայրաքաղաքին ուղղափառ համայնքը կը հիւրընկալէ Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ՝ հայ, ասորի, ղպտի, եթովպացի, բոլոր հոգեւորականներն ու աշխարհականները, անխտիր: Այս համայնքին մէջ կազմակերպուած են բազմաթիւ հոգեւոր ու մշակութային ձեռնարկներ, այս բոլոր եկեղեցիները ծանօթացնելու համար: Օրինակելի եղբայրական մթնոլորտ մը կը տիրէ այս «ինքնատիպ» համայնքին մէջ:

Մեկնելով Ֆինլանտական օրինակէն, ժողովականները կողմէ բազմաթիւ առաջարկներ եղան ծխական եւ մշակութային մարզերուն մէջ կիրարկելու համար աշխատելու նոյն մեթոտները. այսինքն ստեղծել բարեկապատ պայմաններ որպէսզի քոյր եկեղեցիներու անդամները զիրար ճանչնան, փոխադարձ այցելութիւններ, միացեալ ուխտագնացութիւններ, դասախօսութիւններ եւ ցուցահանդէսներ կազմակերպելով:

Համագումարին աշխատանքային Բ. նիստը ամբողջութեամբ նուիրուած էր երիտասարդութեան: Ներկաներէն չատերը դաղթականներու առաջին կամ երկրորդ սերունդին պատկանելով, հարցադրումը մխաձայնութեամբ հետեւեալն էր. ինչպէ՞ս պահպանել եւ զարգացնել Սփիւռքի մէջ ծնած երիտասարդութեան հոգեւոր եւ մշակութային ինքնութիւնը: Ինչպէ՞ս փոխանցել մեր եկեղեցիներուն բարոյական, ծիսական եւ մշակութային արժէքները, անհատատութեամբ տառապող եւ ազգային արժէքները լուծող, ճոլող, Եւրոպայի մը մէջ: Այս մասին ալ եղան անձնական կամ հաւաքական փորձառութիւններու վկայութիւններ: Երիտասարդ Ղպտիները – ի մասնաւորի հետաքրքրուած էին հոգեւոր եւ մշակութային ինքնութեան պահպանման հարցով: Այս մարզին մէջ եւս փորձառութիւնները, ուժերը եւ կարողականութիւնները միացնելու անհրաժեշտութիւնը չէչտուեցաւ բոլորին կողմէ: Շօշափելի եւ գործնական առաջարկներ ներկայացուեցան, ինչպէս՝ «կրօնադիտական միացեալ դասագիրքի» մը պատրաստութիւն: Փոխադարձ չիումները դիւրացնելու համար, առաջարկուեցաւ պրետեան Եւրոպայի բոլոր երկիրներուն մէջ հաստատուած եկեղեցիներուն եւ իրենց հովանաւորած հաստատութիւններուն (վանք, դպրոց, մշակութային եւ երիտասարդական միութիւններ) ուղեցոյցը կազմել եւ կայքէջ մը ստեղծել մեր համայնքները ծանօթացնելու համար:

Աչխատանքները իրենց ատարին հասան, Շաբաթ իրիկուն, յունական ծխով կատարուած «Երեկոյեան ժամերգութեան» եւ «Կիրակնամուտ»ի արարողութեամբ: Յաջորդ օրը, առաւօտեան ժամը 10–ին, համագումարին բոլոր մասնակցողները ներկայ գտնուեցան ղպտի եկեղեցւոյ առաջնորդ Ամպա Տամիան Եպիսկոպոսին մատուցած պատարագին: Սուրբ Սեղանին հրաւիրուած էին եթովպացի, հայ, ասորի սարկաւագներն ու քահանաները: Պատարագին ընթացքին Սուրբ գրային ընթերցումները եւ երեցողութիւնները կատարուեցան տասնեակ մը լեզուներով որոնց չարքին՝ հայերէն:

Պատարագէն անմիջապէս յետոյ, վանքին սեղանատունը տեղի ունեցաւ սիրոյ սեղան մը որուն յաջորդեց եզրափակիչ նիստը: Այս առթիւ խօսք առին Մար Ցուլիոս Զիչկ Արքեպիսկոպոս, (Ասորի Ուղղափառ), Մետրոպոլիտ Սերաֆիմ (Ռումանական Ուղղափառ եկեղեցի), Տամիան Եպիսկոպոս (Ղպտի Ուղղափառ) եւ Փարիզէն Քրիստին Շայօ (Տիեզերական Պատրիարքութիւն) որ այս հատուածը կը թարգմանէ:

Ներկաները հոգեպէս բաւարարուած եւ օրհնեալ այս հանդիպումէն, չնորհակալութիւն յայտնելէ յետոյ ասորական ուղղափառ եկեղեցիներուն իրենց հիւրասիրութեան համար, իրենց երկիրներ վերադարձան:

ՍԱՀԱԿ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Օգոստոս 8, 2001

ՄԱՐՄԱՐԱ

ԲՈՒՇԱՏԵՏՐ

ՄԻ՛ ՄՈՌՆԱՐ ՈՐ ՊԻՏԻ ՄՈՌՆԱՍ

Մխիթարեան Միաբանութեան ամէնէն նշանաւոր հայրերէն մէկը Հայոց աշխարհի լայնատարած աշխարհագրութեան մասին կոթողային ուսումնասիրութիւններ ըրած եւ հրատարակած է: Բայց օր մը կարդացի որ ինք այդ բոլորը գրած էր առանց իր ծննդավայրը գաւառէն ուրիշ տեղ գացած ըլլալու: Ամբողջ իր կեանքը անցուցած էր իր փոքրիկ շրջանակին մէջ, բայց ընդարձակ աշխարհի մը մասին անդին տեղեկութիւնները եւ պատմութիւն ձգած էր: Աչխարհի մը՝ զոր բնաւ չէր տեսած, այլ ճանչցած էր միայն ուսումնասիրութեան ճամբով:

Իսկ երկրագունտին վրայ կ'ապրին անհամար մարդիկ, որոնք աչխարհի ամէնէն դեղեցիկ հետաքրքրական վայրերը իրենց աչքերով կը տեսնեն, ուրիչ երկիրներ իրենց ափին պէս կը ճանչնան: Ատոր փոխարէն ոչինչ կը գրեն իրենց տեսածնեուն մասին, որեւէ վկայութիւն չեն բերեր: Անոնք աչխարհը կը ճանչնան միայն իրենց սեփական հաճոյքին համար:

Ես վստահաբար, կը պատկանիմ երրորդ տեսակի մը: Այդ երրորդ տեսակի ուրիչ մարդոց նման, կեանքիս մէջ չատ չրջած եմ, անթիւ երկիրներ եւ հորիզոններ տեսած եմ, բայց պատահած չէ որ վերադարձիս տեսածներուս մասին չվկայեմ, տեսածներուս մասին տեղեկութիւններ չյանձնեմ թուղթին: Եւ ասիկա՝ ո՛չ թէ անոր համար միայն որ գրող եմ: Այլ անոր համար՝ որ ես չեմ կրնար դեղեցկութիւնը չբաժնել ուրիչներու հետ: Զկայ դեղեցիկ տեսարան մը, դեղեցիկ պարտէմ մը, դեղեցիկ ձեռնարկ մը, որուն դիմաց հիանամ առանց զայն ուրիչներու հետ բաժնելու պահանջը զգալու: Ասիկա հոգեբանական ճնչում մըն է: Իսկական ճնչում մը: Գեղեցկութիւնը չատ ճնչիչ է լինելի համար, կարծես հպարտ թօն ծանրութեամբ կը նստի սրտիս եւ հոգիիս վրայ եւ զիս կը խեղդէ եթէ զայն միայն լինելի վերապահեմ: Իսկ եթէ զայն բաժնեմ ուրիչներու հետ, այն ատեն ճնչումը կը թեթեւնայ, հաճոյք կը դառնայ:

Ուրիչ կէտ մըն ալ կայ: Երբ ուրիչի հետ կը բաժնեմ այն դեղեցկութիւնը զոր տեսած եմ, երկրորդ անգամ մըն ալ կ'ապրիմ զայն: Հաճոյքը կը կրկնապատկուի եւ կ'երկարաձգուի: Նաեւ յիչողութեան մէջ կ'ամրապնդուի: Տեսնուած եւ ուրիչներու պատմուած տեսարանը աւելի լաւ կը քանդակուի յիչողութեան մէջ, քան թէ այն տեսարանը զոր անգամ մը կը տեսնենք եւ որուն մասին մէկ մըն ալ չենք խօսիր:

Երբեմն դաչտապատյաններու ընթացքին կը տեսնենք նկարիչ մը, որ անկիւն մը ընտրած է նստելու ու նկարելու համար: Բացած է իր եռոտանին, վրան դրած է կտաւ մը ու կտաւին վրայ կը նկարէ նայելով դիմացի տեսարանին: Ասիկա մարդ մըն է ահաւասիկ, որ դեղեցիկ տեսարան մը տեսած է եւ չէ ուզած այդ տեսարանը միայն իրեն սեփականացնել: Ուզած է զայն փոխանցել կտաւին, յետոյ այդ կտաւին չնորհիւ զայն բաժնել հարիւրաւոր ուրիչ մարդոց հետ: Բնաւ հանդիպա՞ծ էք այդպիսի նկարիչի մը: Եթէ հանդիպած էք, բնաւ քանի մը վայրկեան կանդ առա՞ծ էք անոր քով, դիտա՞ծ էք թէ ան ինչպէս վրձինի քանի մը հարուածներով հետզհետէ կ'ստեղծէ դիմացի տեսարանը եւ ի վերջոյ զայն ամբողջութեամբ կը յաւերժացնէ իր կտաւին վրայ: Եթէ այդ կտաւը յուցադրէ ցուցահանդէսի մը մէջ, հարիւրաւոր մարդիկ, որոնք այս տեսարանը չէին կրցած տեսնել հոս իրենց աչքով, պիտի տեսնեն կտաւին վրայ: Եւ նոյնիսկ եթէ օր մը այս տեսարանին դեղեցկութիւնը անհետանայ այստեղ, եթէ խանդարուի, բանով մը լդրճուի, անդին կտաւին վրայ պիտի գոյատեւէ երբեմնի ամբողջ դեղեցկութեամբ:

Ես որ չատ կը սիրեմ գրել այն դեղեցկութիւններուն մասին որոնց վրայ հիացած եմ, գրել այն տեղերուն մասին զորս տեսած եմ ճամբորդութեան մը ընթացքին, երբեմն կը մտածեմ որ ես ալ, իմ դասակարգիս պատկանողներուն նման, նկարիչ մըն եմ, որ իր մտքին մէջ ամէն վայրկեան իրեն հետ կը պատգնի իր անտեսանելի եռոտանին, ներկերը, վրձինը եւ կտաւի կտոր մը: Կը չրջի՛մ, եւ երբ դէմ յանդիման կու գամ դեղեցիկ բնանկարի մը հետ, անմիջապէս կը բանամ եռոտանին եւ կտաւին վրայ կ'սկսիմ ցոյցնել տեսածներուս ձեւն ու դոյները: Երեւակայական նկարչութիւն է ասիկա: Կը նայիմ ու միտքէդ կը նկարեմ: Շուրջդ հետաքրքրիներ չեն հաւաքուիր, ինչպէս կը հաւաքուին երբ իրական նկարիչ մը բնանկար մը կը գծէ դաչտին

ՔՆՆԿԻԹԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ

Յուլիս 20-էն ի վեր Ռուսաստան կասպից ծովու հիւսիսային մասէն առեւտրական նպատակով կատարուած թռուածի որոը արդիւնած է: Արդեւքը այդ յարձի ձկնատեսակը պահպանելու մտահոգութեան արդիւնք է, քանի որ ան ոչ թէ օրէ օր, այլ ժամէ ժամ կը սպառի:

Մինչեւ 80-ական թուականներուն վերջաւորութիւնը Սորվրդային Միութիւնը թռուածի ամբողջ աշխարհի թիւին 90%-ին տէր էր: Անոր ձկնկիթը քաւիարէն եռք երկրորդ սեւ ոսկին էր: Այսօր այդ մենաշնորհը վերջ գտած է: Ռուսաստան ձկնկիթի համաշխարհային պաշարին միայն 40%-ին տէր է: Վերջին տասնամեակին կատպից ծովէն հանուած թռուածի քանակութիւնը եօթը անգամ, Ազովի ծովէն հանուածը գրեթէ նոյնքան պակաս է: Մասնագէտներու կարծիքով, թռուածը ռուսական ջուրերէն կրնայ ամբողջովին անհետանալ, յայտնի տասնամեակին:

Այս տեղեկութիւնները պատասխանատուներուն համար զգալնիք չըլլալով հանդերձ, չահու հեռանկարները աւելի ծանր կը կշռեն: Արդէն դրուած արգելքներն ալ միայն «օրինաւոր» ձկնորսներուն կը վերաբերին. ապօրինի որսագործները իրենց գործունէութիւնը ոչինչով պակեցուցած են, դատելով՝ միջպատին չուկայէն:

Թուրքիան, օրինակ, իր ջուրերուն մէջ մէկ հատ թռուածի իսկ չունենալով հանդերձ, մեծ քանակութեամբ սեւ ձկնկիթ կը վաճառէ, 30%-ով գերազանցելով ռուսական արտադրութիւնը եւ առանց նոյնիսկ ուրանալու որ վաճառածը ռուսական ապրանք է: Այդ ձկնկիթը Ռուսաստանէն Տաղստանի, Ազրբէջանի ճամբով Թուրքիա կը հասնի եւ հոն տուփերու մէջ կը դրուի, կը ծրարուի, անկէ միջազգային չուկայ արտածուելու համար:

Բնապահպանութեան ռուս պատասխանատուները խստօրէն կը քննադատեն թռուածի օրինաւոր որսը արգիլող օրէնքները. կ'ըսեն թէ ապօրինի կերպով որսացողները անհամեմատ աւելի քանակութեամբ թռուածի եւ հետեւաբար ձկնկիթ կը հանեն չուկայ. միայն Մոսկուայի մէջ աւելի թռուածի կը ծախուի, քան արտօնուած տարեկան քանակութիւնը: Մինչդեռ, իշխանութիւնները որպէս ճար, կ'արգիլեն օրինաւոր որսը:

Եթէ օրինաւոր առեւտուրը վերջ դնեն, այդ ձուկին տասնեակ բուծարանները որոնք արտածումին եկամուտով կը պահուին, պիտի անհետանան: Ասիկա կը նշանակէ հազարաւոր անձերու գործազրկութիւն: Պիտի անհետանայ թռածանն ալ որ 90% համեմատութեամբ այդ բեծարաններէն կախում ունի:

Բնապահպանները զարմանք ու զայրոյթ կը յայտնեն որ իշխանութիւնները յուրջ պայքար չեն մղեր ապօրինի ձկնորսութիւն դադրեցնելու դէմ: Ամէն մարդ գիտէ թէ Տաղստանի անտեսութեան կարեւոր ոտկոյտ ձկնկիթի ու թռածանի մաքսանենգութեամբ կ'ապահովուի: Քարմուքիոյ մէջ կազմակերպուած չարաշահութիւնը երկար տեւելէ ի վեր կը կիրարկէ թռածանի որսի ու ձկնկիթի արտադրութեան դրութիւն մը, որուն իշխանութիւնը տեղեակ է: Այդ մաքսանենգութիւնը տարեկան միլիոնաւոր տոլարներու եկամուտ կը նշանակէ: Հսկող ոստիկաններէն մինչեւ իշխանութեան չքոնանկները, ամէն աստիճան տակէ իր բաժինը կ'ունենայ:

Բնապահները կ'ուզեն որ խիստ միջոցներու ձեռնարկուի. նախ պետութիւնը իր մենաշնորհը հաստատէ թռածանի որսին, ձկնկիթի արտադրութեան վրայ: Ապա արգիլուի, - գոնէ առժամապէս - ձկնկիթի վերարտածումը որով ապօրինի արտադրութիւնը օրինականացում կը գտնէ: Կ'ուզեն նաեւ որ արգիլուի ձկնկիթի ու թռածանի ազատ վաճառքը ռուսական ներքին չուկային վրայ:

Այս վերջին միջոցառումը շատ իրատեսական չի թուիր ու զայն կը նմանցնեն սիտայի դէմ պայքարելու համար երկու տարի սեռային յարաբերութիւն չունենալու Քէնիայի նախագահին կոչին:

ՔԱՂՀԱՆ

ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

ԱՄՐԱՆ ԽՄԻՉՔՆԵՐԸ ԿԸ ԳԻՐՑՆԵ՞Ն

Ամրան տաքը շատ կը չեշտէ մեր ծարաւը: Զայն յագեցնելու բայց առանց ջերմուժ կուտակելու համար ի՞նչ պէտք է խմել:

Ծարաւը յագեցնելու լաւագոյն խմիչքը սովորական ջուրն է: Բայց մեր օրերուն գովացնող խմիչքները այնքան այլազան են, որ դիւրութեամբ մեզ փորձութեան կը տանին, եւ դժբախտաբար անոնցմէ շատեր շատ չաքար կը պարունակեն եւ, հետեւաբար կը զիրցնեն:

ՊԱՂ ԹԷՑ

Վերջին տարիներուն մեծ ընդունելութիւն գտած է պաղ թէյը, բայց պէտք է պայն չափաւոր խմել (մէկ – երկու գաւաթ), քանի որ շատ չաքար կը պարունակէ, երկրորդ՝ թէին կոչուած նիւթը ֆափէինին նման գրգռիչ է:

ԳԱՐԵՋՈՒՐ

Գարեջուրը գիրցնելու համբաւ կը վայելէ. ասիկա իրաւացի է, եթէ չափազանցնենք, քանի որ թէ՛ չաքար եւ թէ ալքոլ կը պարունակէ:

Սննդագէտներու կարծիքով ճաշէն դուրս խմուած գարեջուրը աւելի կը դիրցնէ, մինչդեռ, երբ զայն կը խմենք ճաշին հետ, սովորականէն 20 առ հարիւր նուազ կ'ուտենք:

«ԼԱՅԹ» ԶՈՎԱՑՈՒԻՉՆԵՐԸ

Ներկայիս զովացուցիչներուն մեծամասնութիւնը ունի «լայթ» (թեթեւ) տեսակը, որուն մէջ չաքարը փոխարինուած է արուեստական նիւթով մը, որուն առաւելութիւնը քիչ ջերմուժ պարունակելն է: Այսպէս, խոշոր բաժակ մը «լայթ» քոլան հազիւ 3 ջերմուժ կը պարունակէ...

Այսուհանդերձ, բժիշկներն ու սննդագէտները տարակարծիք են արուեստական չաքարին գործածութեան չուրջ եւ կը թելադրեն կարելի եղածին չափ սահմանափակել այսպիսի խմիչքներուն սպառումը:

ՊՏՈՒՂԻ ՀԻՒԹԵՐԸ

Շուկան ծախուող պտուղի պատրաստ հիւթերը չատ չաքար կը պարունակեն եւ, հետեւաբար կը գիրցնեն:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ՎԱԽՈՒՏ ՇՆԻԿԸ

Աւստրալիոյ մէջ ձէթի լապրատոր չունը նոր տարուան պայթուցիկներուն ձայնը չէ հանդուրժած եւ փախուստ տուած է: Ոստիկանները դժգոհած են, որովհետեւ անոնք ձէթը մարզած էին ականներ յայտնաբերելու համար...:

Մարզումի իրենց աշխատանքներուն համար ոստիկանները ծախսած էին աւելի քան 70 հազար տոլար:

ԱԽՈՑԵԱՆ ՆԱՄԱԿԱԲԱՇԽԸ

Միացեալ – Նահանգներու մէջ կին մը ստացած է օտար երկրէ ղրկուած նամակ մը, որուն վրայ յիշատակուած է ո՛չ իր քաղաքին անունը, ո՛չ ալ երկրին անունը: Նամակը ղրկող անձը պարզապէս արձանագրած է կնոջ մականունը եւ վոզոցին անունը, սակայն մոռցած է մնացեալը: Անհաւատալին այն է, որ նամակաբաշխը մէկ չաթաթէն ճանչցած է նամակին տէրը եւ նամակը հասցուցած է անոր:

ԽԱՂԱՂՈՒԹԻԻՆ՝ ՇՈՒՐԵԿԱՒՈՒԻՆ ՄԷՋ

Ջծխողներու յատուկ վակոններէն հաք, մէջտեղ ելած են առանց բջիջային հեռաձայններու վակոնները: Շոպենհաուքի ամերիկեան ընկերութիւն մը ստեղծած է հանդարտ վակոններու բաժիններ, յատկացուած՝ այն ճամբորդներուն, որոնք չեն ուզեր լսել բջիջային հեռաձայններու «կանչերը»:

հիւթերը չատ չաքար կը պարունակեն եւ բնականաբար հակամէտ են գիրցնելու: Եթէ չէք կրնար հրաժարիլ անոնցմէ, առնուազն գնեցէք այն տեսակները, որոնց վրայ նշուած է, թէ յաւելեալ չաքար աւելցուած չէ:

«ՌՈԶԷ» ԳԻՆԻՆ

Ամրան եղանակի հաճելի խմիչքներէն մէկն ալ «Ռոզէ» գինին է (վարդագոյն գինին), որ սառնարանը կը պահուի եւ պաղ կը խմուի:

Պէտք չէ մոռնալ սակայն, որ այս գինին ալ 9 – 15 առ հարիւր ալքոլ կը պարունակէ եւ երկու գաւաթէն աւելի կարելի չէ խմել:

ԹԻՒ 17 ԹԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ժ.

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Ցետոյ հազար անգամ յեղեղուած բանաձեւերը կրկնեց, ըսաւ, թէ հայ եւ թուրք հինգ հարիւր տարիէ ի վեր իրարու հետ քով քովի, եղբօր պէս ապրած են, թէ հայը կրցած է այս պետութեան մէջ «հաւատարիմ հպատակ» տիտղոսին արժանանալ, թէ բոլոր լուսամիտ թուրքերը խորին վայրկեանին կը ըսպասէին, թէ Իթթիհատի կուսակցութիւնը, առաջին օրէն, ուզած է այդ երկարաժամկէտ հաշտանքներուն արժանի փոխարինութիւնը ընել Հայաստանի մէջ արմատական բարենորոգութիւններ ընելով, բայց դժբախտաբար հինգ – վեց տարիներէ ի վեր իրարու յաջորդող դժբախտ դէպքերը պէտք եղած ժամանակը եւ միջոցը չեն տուած իրեն եւ այլն:

Ցետոյ, պատահական ծայրայեղ դաշափարներ յայտնեց, կրօնական նախապաշարումները ճաղկեց, փաթթոցաւորները դատապարտեց իբրեւ ժողովուրդը կրօնամոլութեան մղող, Թուրքերու թերութիւնները մատնանշեց եւ Հայերուն յատկութիւններուն վրայ ծանրացաւ եւ վերջապէս եկաւ բուն խնդրին:

– Հայաստանի բարենորոգութիւնները, – ըսաւ, – մենք որոշած էինք գործադրել ինքնաբերաբար, այս մասին ծրագիրներ ալ մշակած էինք, միայն թէ գործադրութեան յարմար վայրկեանին կը սպասէինք: Եթէ սա Պալքանեան անիծեալ պատերազմը տեղի չունենար, մինչեւ հիմա ամէն բան եղած – լմնցած էր: Ձեր սխալը այն եղաւ, որ համբերութիւն չունեցաք, առանց մեր նեղ կացութիւնը նկատի առնելու պահանջեցիք, որ իսկոյն բարենորոգութիւններու ձեռնարկուի եւ ասոր համար դիմում ըրիք Եւրոպական պետութիւններու:

– Թերեւս իրաւունք ունիք, - չարունակեց, – այսպէս վարուելու, քանի որ մինչեւ հիմա Թուրքերը բարենորոգութիւններ խոստացած են միշտ ու չեն գործադրած: Բայց այս անգամ այնպէս չէ. հիմա ա՛լ մենք համոզուած ենք, որ առանց արմատական բարենորոգութիւններու այս երկիրը չի կրնար ապրիլ: Արդարութեան, հաւասարութեան, ապահովութեան հիման վրայ պէտք է, որ արմատական բարենորոգութիւններ ըլլան: Եւ այս բանը կարելի է միայն այն ատեն, երբ Օսմանեան հայրենիքի բոլոր գաւակները, առանց ազգի կամ կրօնքի խտրութեան, ձեռք ձեռքի տան, մէկ սիրտ մէկ հոգի գործեն:

– Շատ ճիշդ կը խօսիք - ընդմիջեց Զօհրապ:

– Բայց ահա՛ դուք հիմա մենէ կասկածելու ձեւ մը ունիք:

– Դուք տեղի տուած էք այս կասկածին, - նկատեց Վարդգէս:

– Այսինքն հին Թուրքերը, նախկին բէժիմը, - պատասխանեց Թուրքը, – բայց հիմա ընդունեցէ՛ք, որ մեծ փոփոխութիւն մը կատարուած է մեր մէջ: Բարենորոգումները մենք մեր ձեռքով պէտք է որ ընենք, առանց օտարին միջամտութեան:

– Ե՞րբ, - հարցուց ներկաներէն մէկը:

– Հիմա, որ Պալքանեան խնդիրը կարգադրուեցաւ, ալ ժամանակը հասած է, որ լրջօրէն ձեռք առնենք խնդիրը: Թերեւս մինչեւ հիմա գործադրութիւնը լսկրատ ըլլայինք, եթէ օտար միջամտութիւն չըլլար: Եւրոպական միջամտութիւնը փոխանակ օգտակար ըլլալու, վնասակար եղաւ ձեզի, որովհետեւ այդ միջամտութիւնը մեր արժանապատուութիւնը վիրաւորեց, եւ մենք ամէն չանք ըրինք, որպէսզի գործը ձգձգենք: Վստահ եղէք, որ եթէ ուղղակի մեզ դիմած ըլլայիք բարենորոգութիւններու համար, մենք տրամադիր էինք չա՛տ աւելի լայն սահմաններու մէջ կատարել այդ բարենորոգութիւնները, քան ինչ որ ձեզի խոստացած են Եւրոպական պետութիւնները: Այս ըսածս կրնամ փաստաթուղթերով ապացուցանել, որովհետեւ ծրագիրները դեռ պահուան են Ներքին գործերու նախարարութեան դիւաններուն մէջ, եւ ես, որ ձեզի կը խօսիմ, բաւական մեծ-կակ բաժին մը ունեցած եմ անոնց պատրաստութեան մէջ:

– Կարծեմ Բ. Դրան մէջ կազմուած Բարենորոգումներու յանձնաժողովին անդամ էիք, – ըսաւ Հալաճեան:

– Եւ ամէնէն գործօն անդամներէն մէկը, - պատասխանեց Թուրքը, - ծրագիրներուն մեծ մասը ես առանձին պատրաստած եմ: Վստահ եղէք, որ նախարարութեան մէջ ամէնէն ալ կողմնակից են բարենորոգութիւններու, ո՛չ թէ միայն հայկական դաւառներու համար, այլ ընդհանուր Թուրքիոյ համար, որովհետեւ որչափ Հայերը, նոյնչափ եւ թերեւս աւելի, կը տառապին միւս ազգերն ալ, քիւրտ, արաբ, սուրիացի, Թուրք եւ այլն: Ասոր համար ընդհանուր բարենորոգութիւններ անհրաժեշտ են, եւ արդէն իսկ ընդարձակ ծրագիրներ պատրաստած ենք այդ մասին: Միայն թէ, կը կրկնեմ, միակ պահանջում մը ունինք. կ'ուզենք, որ այդ բարենորոգութիւնները կատարուին մեր ձեռքով եւ ո՛չ թէ արտաքին ճնշումի տակ: Գիտենք, որ մենք մեր սեփական ուժերով չենք կրնար բան մը ընել, որովհետեւ կարող մարդիկ կը պակսին մեր մէջ, եւ այս պատճառով սկզբնապէս ընդունած ենք վարչական եւ ոստիկանական նոր կազմակերպութեան համար հրաւիրել Եւրոպացի մասնագէտ անձեր, միայն թէ անոնք պէտք է ըլլան մեր պաշտօնեաները եւ ո՛չ թէ օտար պետութիւններու կողմէ մեր վրայ դրուած քննիչներ...

Թուրքը պահ մը լռեց եւ չուրջը ակնարկ մը պտըտցուց իր խօսքերուն ազդեցութիւնը հասկնալու համար:

– Ի՞նչ ապահովութիւն կրնաք տալ, թէ առանց արտաքին ճնշումի պիտի կատարէք բարենորոգութիւնները, – հարցուց Զօհրապ:

– Բայց ըսի արդէն, որ մենք ինքնին որոշած ենք այդ բարենորոգութիւնը ընել ո՛չ թէ մեր հպատակ ազգերուն գոհացում տալու համար ,այլ մեր հայրենիքը կորուստէ փրկելու համար:

– Որոշում տալ եւ գործադրել իրարմէ բաւական տարբեր են, - դիտել տուաւ Զօհրապ, որ պնդիմաբանի դերը ստանձնած կը թուէր, – այս երկրին մէջ, չատ անպարներ, չատ գեղեցիկ որոշումներ տրուած են, որոնք, ափսո՛ս, անգործադրելի մնացած են:

(Շար. 40)

(Շար. Ա. էջէն)

րը: Յունահռոմէական ոճին մէջ Երեւանցի Ռոման Ամոյեան (50 քկ.) զարճած է աշխարհի ախոյեան: Էջմիածնէն Ռոպէրը Պետրոսեան ալ (97 քկ.) արժանացած է արծաթէ մետալի, նուաճելով իր դասակարգին բ. տեղը: Հայաստանի հաւաքականը 46-ի վրայ գրաւած է վեցերորդ դիրքը:

*
**

ՖՈՒԹՊՈԼ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՉԻ ՍՊԱՍՈՒԻՐ ՀԱՒԱՔԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԻՆ ՄԷՋ

Ֆութպոլի Հայաստանի հաւաքականը մօտ օրէն կը սկսի մարզումներու, նախապատրաստուելու համար Համաշխարհային Բաժակի (2002) զոնան երկու վերջին մրցումներուն, որոնք տեղի կ'ունենան Սեպտեմբերին, դուրսը: Ըստ գլխաւոր մարզիչ Վարուժան Սուքիասեանի, պէտք չէ նորութիւնները ակնկալել հաւաքականէն նեղս, քանի որ լայն լրատուութեան հնարաւորութիւն չունի ինք: Յատակ չէ թէ թերզապահ Ռոման Բեզեվսկի մաս կը կազմէ՞ հաւաքականին. յատակ չէ նաեւ թէ պատրաստութեան մրցումներ տեղի կ'ունենա՞ն թէ ոչ:

*
**

Զոհան վերոնշեալ երկու մրցումներէն մէկը Ուկրանիոյ դէմ է: Ֆութպոլի ուկրանական Դաշնակցութիւնը որոշած է տաեւել խաղը Կիեւէն փոխադրել Լվով. որոշումը մեծ խանդավառութիւն պատճառած է Լվովի հոծ հայ համայնքին որ սկսած է նախապատրաստուիլ մրցումին:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏԱՂՈՎ

ԳԱԹԼԻԿԱՆՏՈԼՃՈՑԻ իր ամպրանցին մէջ է, որ Պապը Աստուածածնայ պատարագը մատոյց Օգոստոս 15-ին եւ այդ առթիւ հաստատեց Սեպտեմբերին Ղազախստան եւ Հայաստան կատարելիք իր այցելութիւնը: Այդ այցելութիւնը որակեց որպէս «իմ ծառայութեան մէկ նոր հանգրուանը ի սպաս Եկեղեցւոյ եւ աշխարհի»: «Ֆիկարօ» կը յիշէ այս առթիւ (Օգոստոս 16) որ Յովհ. Պօղոս Բ. պիտի մասնակցի Հայաստանի 1700-ամեակի հանդիսութեանց:

ԻՍՐԱՑԷԼԻ առաջին պատասխանը պաղեստինեան անձնասպանական արարքին քաղաքական բնոյթ ուեցաւ: Արդարեւ, Օգոստոս 11-ին, իսրայէլեան ուժերը գրաւեցին «Արեւելքի Տունը» որ կեդրոնն էր պաղեստինեան իշխանութեան: Այդ թուականէն իսրայէլեան դրօշակն է որ կը ծածանի չէնքին վրայ: Այս արարքը, որ կը խախտէ Օսլոյի համաձայնագիրը, դատապարտուեցաւ արեւմտեան երկիրներուն կողմէ, առաջին առթիւ՝ Ֆրանսայի: Օգոստոս 12-ին, անձնասպանական նոր ռմբահարձ մըն ալ գործուեցաւ Հայֆայի մէջ 15 հոգիներ վիրաւորելով: Այսուհանդերձ Շարոն հաւանեցաւ որ երկխօսութիւն հաստատուի Պաղեստինցիներուն հետ, ինչպէս կը պահանջէր Շ. Փերէս: Իսրայէլեան ուժերը պաշարած են նաեւ պաղեստինեան հինգ քաղաքներ: Օգոստոս 15-ին, իսրայէլեան զօրագունդ մը պաղեստինեան զգեստաւորումով մուտք գործեց Պէյթ Ժալա, Բեթղեհէմի մօտ եւ իր տան դրան առջեւ սպաննեց Ֆաթահի (Արաֆաթի չարժում) գործօն անդամ մը: Իսրայէլ, սակայն, վերջ տուաւ Պէյթ Ժալայի պաշարման ԱՄՆ-ու ճնշումին տեղի տալով:

ՍԿԻՊԻ (Մակեդոնիա) մէջ, Օգոստոս 13-ին կարելի եղաւ, մեծ դժուարութեամբ, համաձայնագիր մը ստորագրել տալ Մակեդոնացիներուն եւ ալպանախօս փոքրամասնութեան միջեւ, 6 ամիսներու բուռն բախումներէ ետք: Այս համաձայնագրով որոշ իրաւունքներ կը շնորհուին Ալպանացիներուն: Ատոնց մէջ ուշագրաւն պաշտօնական կը դառնայ այն չորրորդականները, ուր իրենք բնակչութեան առնուազն 20%-ը կը կազմեն: Մորհրրդարանին մէջ, ալպաներէնը արտօնուած է եւ օրէնքները պիտի չորսդրուին թէ՛ մակեդոներէն, թէ՛ ալպաներէն: Մինչեւ 2003, 23% համեմատութեամբ պիտի աւելնայ ծագումով ալպանացի ոստիկաններու թիւը: Իրաւական բարդ համաձայնութիւն մըն ալ պտնուած է, որպէսզի ալպանացի երեսփոխանները միջոցներ ունենան ընդդիմանալու զիրենք չհադրդռող օրէնքներուն, իրենց կամքին հակառակ: ՈՒ. Ջէ. ՔԱ.-ն ալ համաձայնեցաւ ապաղինուելու: ՕԹԱՆ 400 զինուոր պիտի ղրկէ հսկելու համար անոր ապաղինման:

ԹՈՒՐՔԻՈՑ իսլամապաշտ Ֆազիլէթ (Առաքինութիւն) կուսակցութեան չափաւոր թեւը (կուսակցութիւնը արգիլուեցաւ) նոր կուսակցութեան մը հիմը դրած է: Ղեկավարը պիտի ըլլայ Պոլսոյ նախկին քաղաքապետը՝ Ռեճէփ-Թայիփ Էրտողան: Նոր կուսակցութեան անունն է «Արդարութեան եւ զարգացման կուսակցութիւն» (Ա. Ք. Փարթի) եւ մէկ ամիսով կը յաջորդէ Ֆազիլէթի պահպանողական թեւին հիմնած կուսակցութեան որ կը կոչուի Երջանկութեան (Սաատէթ) կուսակցութիւն:

ՌՈՒՍԱՄԷՏ երկու չէչէն պատասխանատուներ՝ Շալիի վարչական կեդրոնը եւ Պորեդինսկոյէի քաղաքապետը սպաննուած են Գրոզնիի մօտ: Միւս կողմէ, Օգոստոս 13-ին ալ չէչէն 13 ապստամբներ եւ մէկ քաղաքացի սպաննուած են, երեք ռուս զինուորականներ ալ զոհ գացած են իրենց թռռանին արկածին:

ԻՐԱՆի հիւսիս-արեւելեան չրջանի ողողումները պատճառ եղած են 200 հոգիի մահուան: 35 հոգի ալ անհետացած են:

ԱԼԺԵՐԻՈՑ մէջ ջարդները կը չարունակուին: Օգոստոս 12-էն 13 լուսնալիք պիչերը 17 հողագործական բանուորներ սպաննուած են Ռելիզան, Ալժէէն 300 քմ. հարաւ-արեւմուտք:

ՎՐԱՑԻ մը, կատղած որ ութ ամիս է չէ ստացած իր աշխատավարձը, ելեկտրաթել մը կտրած է, ելեկտրական հոսանքէ զրկելով Զուգդիդիի 300 հազար բնակիչները:

ԻՏԱԼԱՑԻ բժիշկը՝ Անթինորի, որ Ամերիկացիներուն ներկայացուցած էր մարզկային համասերտումի իր ծրագիրը, յայտարարեց թէ դատական հետապնդումի պիտի ձեռնարկէ Պերլոսկոնիի դէմ եւ 25 միլիոն տոլար վնասուց հատուցում պահանջէ: Գումարը պիտի յատկացնէ ամուլ զոյգերու հետազօտութեանց: Կ'ըսէ թէ Բուշնէլը յարմակում գործած է իր վրայ եւ միջամուխ եղած բարոյապիտական սկզբունքներու:

ՅԱՌԱՋԻ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՆԷՕՑԻ. - Տիկին Սիլվա Գուլումճեան 500 Ֆր.:

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՄՆԱՁԻՒՂԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30-ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակութի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալորէա կը դասաւանդուին. - հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք:

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառսեեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 - 45 - 79 - 78 - 97 թիւին:

— • —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux

Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

50ème Anniversaire du Pèlerinage à SAINT-GREGOIRE de TALLARD

ԹԱԼԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Sous l'égide de
l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France
et avec le concours de
l'Association Cultuelle des Arméniens de GAP et des Hautes Alpes

Dimanche 9 septembre

à 10h30 — La Sainte Messe sera célebrée par
Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens de Rhône-Alpes

l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens du Sud de la France

Avec la participation de la Chorale
SAHAK - MESROP
sous la direction de
Khatchig YILMAZIAN

à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre
Renseignements & Réservations :
— **Cathédrale Arménienne de Marseille, tél. : 04 91 77 84 70**
— **Association Cultuelle des Arméniens de GAP, tél.: 04 92 51 71 80 / 04 92 51 00 87**

—— Participation aux frais ——
Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

CHENE

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

10e Grande Braderie de Noël
Շաբաթ, Կիրակի, Դեկտեմբեր 1 եւ 2
ՀԸՆ ՓՐԱՆՍԱ

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre SPITAK
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le Bel

Programme : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris
du jeudi 4 au lundi 8 octobre
à l'occasion de la Béatification de
Mgr. IGNACE MALOYAN
Archevêque de Mardine, martyr en 1915.
le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 18-19
SAMEDI - DIMANCHE
18-19 AOUT
2001

LE NUMERO : 6.00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·232 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20·232

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԱՐԱՒԱՅԻՆ – ԴՈՐՍԻՔԱՅԻ ՄԷՋ, Օգոստոս 16-ի գիշերը սպաննուած է զորավարական ազգայնական չարժումին պատմական մէկ դէմքը՝ Ֆրանսուա Սանթոնի։ Տարի մը առաջ էր, որ կը սպաննէր իր բաւեկամը՝ Ժան – Միշէլ Ռոսի որու հետ հեղինակած էր հատոր մը՝ «Pour solde de tout compte» եւ հիմնած Ազաթթա Գորսան։ Հատորին մէջ կը դատապարտէին ազգայնականներուն «մաֆիական չեղումը»։ 41 տարեկան, Սանթոնի փամփուշտներ առացած է գլխուն եւ իր երկու թիկնապահներն ալ կրցած օգնութեան հասնիլ։ Ինք գիտէր թէ կեանքը վտանգուած է, քանի սպառնալիքներ առացած էր։ Բարեկամի մը հարցնիքին դուրս ելած պահուն է, երբ կը պատրաստուէր իր Պէ · Էմ · Տուպլըվէյն մոնել որ յարձակումը գործուած է։ Տարի մըն է, իր բարեկամին՝ Ժ. – Մ. Ռոսիի սպաննութեան համար արդարութիւն կը պահանջէր եւ կ'ամբաստանէր քննիչները որ հարկ եղածը չեն ըներ յանցանքերը համար մարդասպանները։ Մայիս 29-ին չորս տարի բանտարկութեան դատապարտուած էր Սիէբրոնէի մէջ ոսքէթի փորձի մը համար եւ բեկանիչ Ատեանին պիտի էր։

ՄԱԿԵԴՈՆԻՈՑ ՄԷՋ խաղաղութիւնը չատ խախուտ է եւ արդէն իսկ մակեդոնացի ոստիկան մը սպաննուած է ՈՒՃՋ – ՔԱ–ի արձակազէնի մը կողմէ։ ՕԹԱՆ–ի բազմազգեան ուժերու առաջին խումբ մը հասած է (400 բրիտանացի զինուոր) հակելու համար ալպանացի ապստամբներու ապազինման։

ՄԻԱՑԵԱԼ – ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ներկայացուցին աշխարհի ամէնէն զօրաւոր հանդարիչը։ Շինողն է ԻՊՄ եւ ան կը նայ կեղծել հիւլէական ռումբի մը պայթումը՝ փոխարինելու համար փորձերը։ 17 փիղի ծանրութիւնն ունի։

ՏՐՐՊԱՆԻ ՄԷՋ է (Հարաւի Ափրիկէ), որ Օգոստոս 31–էն Սեպտեմբեր 7 տեղի պիտի ունենայ համաշխարհային ժողովը գեղային խտրականութեան, օտարատեացութեան եւ անհանդուրժողութեան դէմ։ Իր տեսակին մէջ երրորդն է, զոր ՄԱԿ–ը կը կազմակերպէ։ Առաջին երկուքը տեղի ունեցած են 1978-ին եւ 1983-ին Ժընեւ եւ առիթ տուած են բուռն բախումներու սիոնականութեան եւ ափրրթհէյտի հարցերու չուրջ։ Տրրպան ներկայ պիտի ըլլան պետական 30 դեկավարներ եւ աւելի քան 100 նախարարներ։ 12·000 պատուիրակներ պիտի ներկայացնեն 94 երկիրներ եւ 3000 ոչ կառավարական կազմակերպութիւններ։

ԹԻԱՐՒԹԻ ՄԷՋ (340 քիլոմեթր Ափրէի հարաւ – արեւելքը) խառնուածքներ ծագած են երիտասարդի մը թաղումէն ետք։ Ան սպաննուած էր ոստիկանի մը կողմէ եւ ցուցարարները՝ «Պետութեան մարդասպան» բացականչելով ուղղացած են եւ քարկոծած քաղաքապետարանը։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ նախագահը՝ Սթեֆանոփուլոս արդարացուց Ալպանացիներու արտաքսումը Լեզպոս կղզիէն։ Լուծրայի ընակիչները վռնտած էին 150 ալպանացի աշխատաւորներ, իբրեւ հետեւանք կոփի մը որ ծագած էր դիչերթոյնի մը մէջ, չորս Ալպանացիներու եւ երիտասարդ Յոյներու միջեւ։ Նախագահը ճշդած է որ իր հակակրեցութիւնը ցեղասպան զգացումներէ չի բխիր, այլ բարեութեան արդիւնք է։

ԻՐԱՆԵԱՆ իշխանութիւնները 48 ժամուան մէջ 10 հոգի կախաղան բարձրացուցած են։ Դատապարտուած էին զինեալ կողոպուտի համար։

ՄՈՒՆ ԱՂԱՆԴԸ կը սպառնայ յոյց մը ընել Վատիկանի դէմ։ Ամէն ինչ ծագած է, երբ զամպիայի Էմմանուէլ Միլինկօ արքեպիսկոպոսը, ամուսնացուալ եռք, որոշած էր լքել իր կինը եւ մնալ հաւատարիմ կաթոլիկ սկզբունքներու։ Լքուած կինը կ'ամբաստանէ Վատիկանը որ ծանր ճնշում բանեցուցած է ամուսնոյն վրայ։ Եպիսկոպոսը Մայիս 27-ին ամուսնացած էր գործակցի այդ կնոջ հետ, արարողութեան մը ընթացքին, որու նախագահած էր Մուն աղանդի պետը։ Պապին ուղղուած նամակով մը, Արքեպիսկոպոսը կ'ըսէ թէ իր կեանքը կը նուիրէ եկեղեցւոյ, կը հրաժարի ամուսնական կեանքէն եւ Մուն աղանդէն։ Կնոջն ալ գրած է որ դէշ բան մը կրած է հետը ամուսնանալով, դաւաճանելով կուսակրօնութեան իր երդումին։ Կինը չի հաւատար եւ կ'ըսէ թէ Վատիկան արգելափակած է ամուսինը գաղտնի վայր մը։

ՀԱՑԿԱԿԱՆ ՔԱԿԱՑ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 16 / 17)

ՔՈՉԱՐԵԱՆ – ՂՈՒԿԱՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Օգոստոս 16–ին, Ռ. Քոչարեան հանդիպում մը ունեցած է Արցախի նախագահ՝ Ա. Ղուկասեանի հետ։ Քննած են զանազան հարցեր, ի շարս որոնց Արցախի տակաւ տնտեսական վիճակը եւ անոր բարելաւման հետ կապուած հարցեր։

*
**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ

Ելմտական եւ Տնտեսական նախարարութեան տուեալներու համաձայն 2001–ի առաջին կիսամեակին, Հայաստանի արտաքին պարտքը 2 միլիոն 565 հազար տոլար նուազած է։

Հայաստանի պետական ընդհանուր պարտքը, առաջին վեց ամիսներուն 507 միլիառ 583,3 միլիոն դրամ էր, ներքին պարտքը կազմած է 32 միլիառ 741,3 միլիոն դրամ, իսկ արտաքինը՝ 474 միլիառ 842 միլիոն դրամ։

*
**

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ՕԳՈՍՏՈՍ 18–ԻՆ

Երեւանի քաղաքապետը՝ Ռոպէր Նազարեան մամուլի ասուլիս մը տուած է Օգոստոս 16-ին եւ յայտնած որ Երեւանը պատրաստ է ընդունելու համահայկական Բ. խաղերը, որոնց կը մասնակցին 94 քաղաքներէ մարզիկներ։

Խաղերը կը սկսին Օգոստոս 18–ին։

*
**

ԱՐՑԱԽԻ ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ ԹԻՒԸ Կ'ԱՒԵԼՆԱՑ

Անցեալ տարի 2200 երախայ ծնած է, որոնց 645–ը բազմազաւակ ընտանիքներու մէջ։ 2001-ի առաջին վեցամսեայ երկու անգամ աւելցած է 3–րդ զաւկի մը ծնունդը, բաղդատմամբ նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանին։ Ըստ ընկերային ապահովութեան նախարար Լ. Ղուլեանի, երբ ընտանիքի մը մէջ, երրորդ երախայ մը կը ծնի, անոր անունով դրամատուն հաշիւ կը բացուի եւ 700 տոլար կը փոխանցուի, որ մանուկին կը տրուի, երբ չափահաս ըլլայ։ Զորրորդ երախայի պարագային գումարը 1000 տոլար է, 5-րդ եւ 6-րդի՝ 1500 տոլար։ Եօթը զաւկի ակռ ընտանիքի բնակարան կը յատկացուի։

ՓՈՒՇԱՆ ՏԱՓՕՐ

ՓՈԽԱՆ ԳԻՆԵԶՕՆԻ

Ոչ թէ գրասեղանիս առջեւ կ'անցնիմ տողերս գրելու համար, այլ թուղթ ու մատիտս կը չարեմ ճաչասեղանին վրայ, ուր ազամանեաչքարամանը, հաւկիթակալը եւ թէյի պարպուած գաւաթը թուղթերուս նայելով կ'ըսեն։

– Ի՞նչ գործ ունիք հոս։

Ես չեմ մասնակցիր իրենց զրոյցին, այլ կը կարդամ ոսկեառ դրութիւնը ճերմակ երիզի մը վրայ։

Նիւրմուէ Հայաստանում էրիստոնէութեան ընդունման 1700 ամեակին։

Երիզը օձիքի պէս կը գրկէ գինեի չիչին վիզը։

– Ի՞նչ գործ ունիս գինեի չիչին վրայ, ո՛վ հազար եօթհարիւրամեակ, – կը հարցընեմ։

– Վաճառանիշ եմ, – լրջօրէն կը պատասխանէ «ամեակը», սակայն ձայնին մէջ յղնութիւնը կը լսուի։

– Հիւանդ չե՞ս, «ամեակ»...

– Ոչ, պարզապէս քունս կէս մնացած է։

– Ի՞նչպէս, – կը զարմանամ։

– Եօթանասուն տարի աւելի կանուխ արթնցուցին զիս եւ գործի լծեցին։ Իմ տեղս ըլլայիր՝ ի՞նչ պիտի զգայիր։

– Կեցի՛ր տեսնենք։ Սխալ հաշիւ մը կայ, կ'ըսես... Կարծեմ 301 թուականէն մինչեւ հիմա ճիշդ 1700 տարի կ'ընէ։

– Իսկ եօթանասուն տարի տեւած անհաւատներուն իշխանութիւնը կը մոռնա՞ս։ 1700 թիւէն պէտք է բառնաս այդ 70–ը։ Սակայն հիմա թող տուր որ մրափեմ պահիկ մը՝ տօնախմբութիւնը չվերսկսած։

Կամացուկ մը չիչը կը զարձնեմ եւ կը պնեմ կռնակը։ Հոն ալ պիտակ մը կայ. անդլերէն, ֆրանսերէն եւ... նոյնիսկ հայերէն։

– Ինչպէ՞ս կ'ըլլայ որ ռուսերէնը չկայ։ Դաշնակիցները մոռնալու չէ, – կը դժգոհի չաքարամանս։ Քաղաքականութենէն չատ չի հասկնար, սակայն կը ջանայ ամէն տեսակ խնդիր անոյշի կապել՝ վճռաբանութիւնը ծայր չառած։

Սովորութիւն չունենալով ամանեղէնին հետ վիճաբանելու՝ կը չարունակեմ զբաղիլ պիտակը, որու վրայ յանկարծ կը կարդամ։

ՇՇԱԼՑՄԱՆ ՕՐ, ...

Որչափ ալ ընտելացած ըլլաս լեզուական ամէն տեսակ դիւտերու, միեւնոյն է. երբեմն կը չմորխս, կ'ապշիս, կը փչաքաղուիս եւ նոյնիսկ չզալցուած կը դադաս։

Քանի՞ տարեկան է մեր լեզուն. մօտ ապագային տօնուելիք «ամեակ» մը չըկա՞յ արդեօք։ Սակայն ինչ ալ ըլլայ Հայ լեզուին տարիքը՝ նոյն եօթանասուն տարին բառնալու ենք...

ԵՆՈՎՔ ԼԱԶԵԱՆ

ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ԱԿԱՆ Զ. ԽԱՂԵՐԸ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

ՓՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻՆ ՏԻՐԱՑԱԻ ՍՈՒՐԻԱ.

Սփիւռքի զանազան անկիւններէն հասած բազմահարիւր մարզիկ–մարզուհիներու, մարզիչներու, վարչականներու եւ տեղւոյն գաղութէն հոծ բազմութեան մը ներկայութեան Աստուածածնի օրը, Կիրակի, Օգոստոս 12–ին, Պուրճ Համուտի քաղաքապետական մարզադաշտին մէջ բացումը կատարուած է համա – ՀՄԸՄ–ական Զ. մարզախաղերուն։ Մասնակցողները մարզախաղերուն չահը վառած են Անթիլիասի Կաթողիկոսարանի Յեղասպանութեան զոհերու Ս. Սեւիանոս մատուռի անչէջ կրակէն։ Իր օրհնութիւնը տուած է Արամ Ա. Կաթողիկոս։

Մարզախաղերուն առանցքը կը կազմէ փութպոլը, բայց նաեւ կային սեղանի թէնիսի եւ աթլեթիզմի մրցումներ։ Վիճակահանութեամբ փութպոլի հետեւեալ խմբակները ձեւաւորուած էին –

Ա. խմբակ· – Արեւելեան ԱՄՆ, Անգլիա, Սուրիա,

Բ. խմբակ· – Արեւմտեան ԱՄՆ, Քուէյթ, Կիպրոս,

Գ. խմբակ· – Լիբանան, Գանատա, Արժանթին եւ Ֆրանսա։

Կիրակի, Երկուշաբթի եւ Երեքշաբթի տեղի ունեցած զաման մրցումներէն ետք կէս աւարտականներուն համար որակուած են Արժանթին, Սուրիա, Արեւելեան ԱՄՆ եւ Լիբանան։ Հանդիպումները տրուած են հետեւեալ արդիւնքները։ –

Սուրիա – Արժանթին	3 – 0
Լիբանան – Արեւելեան ԱՄՆ	7 – 1

Ուրեմն, Օգոստոս 16–ի աւարտականին դէմ դիմաց եկած են Սուրիա եւ Լիբանան։ Նախքան այդ մրցումը Գ. եւ Դ. տեղերուն համար մրցած են Արեւելեան ԱՄՆ եւ Արժանթին. խաղը վերջ գտած է

(Շար.ը Դ· էջ)

ԱՐՑԱԽԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ Կ'ԱՊԱՔԻՆԻ

Ինչպէս հաղորդած էինք Օգս· 11/12–ի մեր թիւով, Արցախի առաջնորդը՝ Պարգեւ Սրբ· Մարտիրոսեան, սրտի անակնկալ անհանգստութենէ մը եռք Բիւրականի մէջ, կամրջումի մը ենթարկուած էր Օգոստոս 9-ին։ «Նորք – Մարաշ» բժշկական կեդրոնի սրտի վիրահատութեան բաժնի վարիչը՝ տոքթոր Վիլէն Մանուկեան յայտնած է որ գործողութիւնը տեւած էր չորս ժամ եւ թէ Պարգեւ Սրբ· սրտի տափնակը հետեւանք էր զերյողնութեան եւ Ղարաբաղի տօթին։ Առաջնորդն իսկ խոստովանած է թէ «Քունս միայն հիւանդանոցին մէջ առի»։ Բայց եւ այնպէս երկար հանդստանալու միտք չունի, քանի կ'ուզէ մասնակցիլ 1700–ամեակի ձեռնարկներու պատրաստութեան։

ՏՒՐՈՒՆԻ

ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆ

Ցաւով իմացանք, որ Օգոստոս 15–ին, Զորեքշաբթի առաւօտ Լոս – Անճըլըսի իր բնակարանին մէջ, իր մահկանացուն կնքած է Ծանօթ հրապարակագիր՝ Յակոբ Պօղոսեան, 65 տարեկանին։

Ծնած էր Պէյրութ, երկրորդական ուսումը ստացած էր տեղւոյն Հ. Բ. Ը. Միութեան Յովակիմեան – Մանուկեան վարժարանին մէջ, ապա, վկայուած տեղւոյն ամերիկեան համալսարանէն։

Նախքան Միացեալ – Նահանգներ հաստատուիլը 1989-ին, Լիբանանի մէջ, աշխատակցած է «Զարթօնք» եւ «Արարատ» օրաթերթերուն։ Հիմնադիր անդամներէն եղած է «Վարդան Ա.ՃՄեան» թատերախումբին։

Լոս – Անճըլըսի մէջ, 1990 – 1996 թուականներուն խմբագրապետը եղած է Ռամկավար Ազատական Կուսակցութեան պաշտօնաթերթ՝ «Նոր Օր»։ Վերջին տարիներուն քաղաքական գլխաւոր մեկնաբանն էր Լոս – Անճըլըսի հեռատեսիլի «Հայաստան» յայտագրին, միաժամանակ կը վարէր Հ. Բ. Ը. Միութեան քարտուղարի պաշտօնը։ 1997–ին, արժանացած էր մամուլի «Վարդգէս եւ Ռիթա Պալեան» մրցանակին։ Գործօն անդամ էր ՌԱՒ–ի եւ Հ. Բ. Ը. Միութեան։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՒԱՔՈՒԹԻՒՆ

Գրեց՝ ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

Մի Կիրակի օր, առաւօտեան, մայրիկը յայտնեց, որ այդ օրը մենք ճաշի հնչ հրաւիրուած հօրաքրոջ՝ Սաթենիկ տատենց մօտ, որոնք Երեւանից փոխադրուել էին Թիֆլիս: Սաթենն տատի մօտ ապրում էին այրի հարսը՝ զեղեցիկ Հռիփսիմէն, Աճէմ – Յակոբեանենց աղջիկը եւ այրի աղջիկը՝ Նոյեմիկը: Ես նրանց չճանաչեցի: Նրանք ածել էին, զեղեցկացել: Ես յիշեցի նրանց Վանում, երբ նրանք գըզըզուած մազերով աղի արցունք էին թափում իրենց ամուսինների դագաղների վրայ: Այս ժպտուն, լաւ հագնուած կանայք ամենեւին նման չէին նրանց: Նրանք եւս իրենց հերթին գտան, որ ես իսկական տղամարդ եմ դարձել: Սաթեն տատի միւս որդին՝ պարոն Միհրդատը, պարոն Աբրահամի փոքր եղբայրը, չմոռանալով հանդերձ, որ նա հնչակեան չէֆի կրտսեր եղբայրն է, ռամկավար Յակոբ էֆէնտի Տէր – Զաքարեանի հետ առեւտրով էր զբաղւում: Ճանապարհին մայրիկը յայտնեց ինձ, որ ամենայն հաւանականութեամբ Նոյեմիկը Յակոբ էֆէնտու հետ պիտի ամուսնանայ, եթէ արդէն չեն ամուսնացել... Մեզ դիմաւորեց Սաթեն տատի միւս աղջիկը՝ Վերոնիկը, որի համար նոյնպէս նախատեսւած էր փեսացու, Տ֊Յակոբ Արմենակը, որ դարձել էր Բժիշկեան Արմենակ...

Ներս մտան Յակոբ էֆէնտին եւ պարոն Միհրդատը: Յակոբ էֆէնտին յաղթանդամ մի մարդ էր, լայն ուսերով ու կրծքով, հայկական խոշոր ու ազդեցիկ դիմագծերով եւ հատ, ոլորուն սեւ բեղերով: Նա պատկառանքով համբուրեց Սաթեն տատի ձեռքը եւ ասաց.

– Ես եկայ, մարէ՛:

– Հազար բարի, Յակոբ էֆէնտի:

– Ինձի էֆէնտի մի ըսեր, մարէ, պիտի ուզեց Յակոբ էֆէնտին, ես քու դաւակն եմ... ինչո՞ւ Միհրդատին Միհրդատ փաչա չես ըսեր:

Բոլորը ծիծաղեցին, ծիծաղեց եւ Յակոբ էֆէնտին՝ նայելով Միհրդատին: Իսկապէս որ ծիծաղելի էր նրան անուանել «Միհրդատ փաչա»: Ի ծնէ ծուռ էր նրա վիզը, տղեղ էր նա եւ անդուռ: Միակ գրաւիչ մասը նրա դէմքի, աչքերն էին, բարութեամբ լեցուն եւ կարծես միշտ արտասուելու պատրաստ:

– Շնորհաւորանքներս, տիկին Անոյշ, շարունակեց Յակոբ էֆէնտին, սեղմելով մայրիկիս ձեռքը, որդիդ հրաշքներ կը գործէ, չնայած որ դեռ ածելին չի դիպեր երեսներուն. այդ տարիքին մէջ մենք վէգ կը խաղայինք եւ աղաւնի կը թռցնէինք... Գուրգէն, կորիւնս, բարե՛ւ:

Թէ որքան ես նման էի կորիւնի, յայտնի չէ, բայց որ Յակոբ էֆէնտի Տէր – Զաքարեանի մէջ կար ինչ – որ առիւծային բան, դա կասկածից դուրս էր:

– Միհրդա՛տ, դարձաւ նա, մի հատ պապիրոս վառելով եւ կորչելով ծխի քուլաներում, փարթի մը նարդի չխաղա՞նք մինչեւ սեղան նատիլը:

Մինչդեռ պարոն Միհրդատը դրազուած էր նարդու քարերը դասաւորելով, Յակոբ էֆէնտին մօտեցաւ վառուող աչքերով ու փարթամ կազմուածքով Նոյեմիկին ու հարցրեց.

– Ինչպէ՞ս ես, ջանս:

– Շնորհակալ եմ, Յակոբ էֆէնտի:

– Նորէ՞ն էֆէնտի. կ'ուզես որ ականջներդ կտրե՞մ:

Նոյեմիկը ժպտաց եւ չընկաց, հազիւ լսելի ձայնով.

– Յակոբի՛կ:

– Օ՛հ, աւոր դէմ չեմ... Տիւ – չէչ, նետեց Յակոբ էֆէնտին եւ խաղն սկսեցին:

Դուռը բացուեց ու ներս մտան հօրեղբայրն ու Հռեփ քոյրիկը:

– Ա՛ա՛... հազա՛ր բարի, հազա՛ր բարի, լսուեցին երկաեռ բացագանչութիւններ:

– Հազար բարին իր հերթին, ձայնեց հօրեղբայր Մանուկ աղան, բայց որ սեղանը պատրաստ չէ, դրա համար տուգանք Սաթենիկ տատին... ի պատիժ՝ վեց կաց, պարի՛...

Եւ նա մօտեցաւ, իր ուժեղ ձեռներով բարձրացրեց փոքրիկ պառաւին՝ Սաթենիկ տատին ու սկսեց վեր – վեր թռցնել:

– Թո՛ղ, Մանուկ Աստուած սիրես՝ թո՛ղ, անհամութիւն մի անի, բոզոքում է Սաթենիկ տատան եւ աչխատում է ապտտուել Մանուկ աղի գրկից:

Բոլորը ծիծաղում են, ծիծաղում է անգամ Միհրդատը՝ իր խոնաւ աչքերով:

Մինչ այս, մինչ այն, սեղանը սկսում են պատրաստել, գնդում են պնակներ, բաժակներ, դանակներ եւ պատառաքաղներ:

– Փէնջ ու սէ՛... հաւաքում է վերջին քարերը Յակոբ էֆէնտին:

– Օյի՛ն, ասում է պարոն Միհրդատը:

Բոլորը նստում են սեղանի: Այդ միջոցին դուռը բացւում է ու ներս է մտնում վարդագոյն, ճչացող փողկապով եւ օսլայած օձիքով մի... Արմենակ Բժիշկեան, փոքրիկ մօրուքով, փոքրիկ բեխերով, մազերը խնամքով սանրած ճակատից ետ... Նա ամէն ջանք է թափել արդարացնելու համար իր անուան բարեփոխութիւնը, – էր Տ֊Յակոբ Արմենակ եւ դարձաւ Արմենակ Բժիշկեան...

– Պոնժուր ,միւսիւ, նեղաց նա իր ընդհանուր բարեւը, անտես առնելով մատամներին ու մատմազէլներին եւ բարեւոյթին կարծելով, որ այդ նշանակում է «բարեւ ձեզ»:

Մօտեցաւ նրա հարսնացուն՝ Վերոնիկը եւ ցած ձայնով կշտամբեց.

– Մարդավարի բարեւ տալ չգիտե՞ս...

– Ինչո՞ւ, ես...

– Էլ չլսեմ քո «պոնժուր – մոնժուր»ը:

– Փառտո՞ն...

– Փառտոնն էլ հետը, նստի՛ր:

– Պարոն Արմենակ, որտե՞ղ էք սովորեր ֆրանսերէնը, լսուեց Յակոբ էֆէնտու հարցումը, թեթեւ քմծիծաղով համեմուած. աղ տոնով հարց կարելի է տալ միայն երեխային – Լեւոնիկ ,այդ աչուկներդ ո՞րտեղէն ես ճարել:

Սակայն պարոն Արմենակը չհասկացաւ այդ. նա լուրջ կերպարանք ստացաւ եւ պատասխանեց.

– 1913 թուին փարիզէն Վան եկաւ...

– Լա՛ւ, պարոն Արմենակ. մի ուրիշ անգամ, մի ուրի՛շ անգամ, ընդհատեց հօրեղբայրը պարոն Արմենակի ելոյթը, որից չատ գոհ մնաց Վերոնիկը, – խընդրեմ, ընտրել թամամատ:

– Յակոբ էֆէնտին, առաջարկեց Միհրդատը:

– Յակոբ էֆէնտի՛ն, Յակոբ էֆէնտի՛ն, ծափահարեցին բոլորը,

– Բաժակները լեցնել, հրամայեց Յակոբ էֆէնտին ու ուրի կանդնեց:

Տիրեց լռութիւն: Յակոբ էֆէնտին, հատատ մատներով բարձրացրեց իր բաժակը եւ ուշադրութեամբ նայելով սեղանակիցների դէմքերին, այլեւ մեծ խնամքով ընտրելով բառերը, հետեւեալ ճառն արտասանեց.

– Սեղանակիցնե՛ր, այս սեղանի չուրջ նստած են մնացորդներն այն մեծ ժողովրդի, որ գոհ գնաց Թուրքական արիւնոտ եաթաղանին եւ որու ոսկորները մրնացին եօթը վիլայէթներու հողերուն վրայ ցան ու ցրիւ...

Սաթեն դուդուն արտասուեց. նրա օրինակին հետեւից մայրիկը: Աբրահամ Բրուտեանի այրին՝ Հռիփսիմէն, երպուն ու տխուր աչքերով հայեացքը յառել էր պատուհանից դուրս, որտեղից երեւում էր Թիֆլիսի պանորաման, Վերոնիկը կսմրթեց թեւը իր փեսացուի՝ Արմենակի, որն ուշադրութեամբ լսելու փոխարէն, չարունակ ուղղում էր օսլայած օձիքը, վրի անյարմար դրութիւնը մեղմացնելու համար:

– Պոլսէն մինչեւ Վան, չարունակեց թամադան, Կիլիկիայէն մինչեւ Տրապիզոն տարածուեց պատմութեան ահեղ ահաղանգը, ահաղանգ՝ մօտաւոր ազգային ոչնչացման վերահաս վտանգի, ահաղանգ՝ չափաւորութեան, զգօնութեան, զգուշաւորութեան...

Հօրեղբայրը բռունցքը խփեց սեղանին: Դժուար էր ասել, – դա ցասման ու ցաւակցութեան նշա՞ն էր միլիոն ու կէս զոհերի հաշոյէին, թէ՞ անհամբերութեան արտայայտութիւն հետեւեալ նշանակութեամբ. – ա՛լ երկար ըրիր, Յակոբ էֆէնտի, թող որ խմենք...

– Սեղանակիցնե՛ր, աւելի ցած, բայց աւելի խոր, թաւ ձայնով եղրափակեց Յակոբ էֆէնտին. յոտնկայս յարգենք միլիոն ու կէս զոհերի անմահ յիշատակը, բաժակները պարպելով ցմրուր...

Բոլորը ոտքի կանգնեցին: Տղամարդիկ խմեցին իրենց բաժակները «ցմրուր»: Սերկեւիլի կերակուրի բուրմունքով լեցուեց սենեակը:

– Այնոյչ արէք, խնդրեմ, խնդրում էր Սաթեն դուդուն, Վանի սերկեւիլով կերակուրն է...

– Այս կենացի առթիւ մի ե՛րգ, հրամայում է թամադան:

Բոլորը նայում են իրար: Հօրեղբայրը ժպտում է պեխերի մէջ եւ նայում է Հռեփ քոյրիկին:

– Երգիր, քա՛ն...

Հռեփ քոյրիկի ռեպերտուարում, ինչպէս յետագայում պարզուեց, մի երգ կար միայն: Այդ երգը զուրկ չէր որոշ հետաքրքրութիւնից: Միրանը ծառը երդում է ինքն իր մասին:

Ես հիմա մոռացել եմ այդ երգի խօսքերը. յիշում եմ, որ երգի տողերը վերաբերում են այն մասին, որ եղել են ինչ – որ թշնամիներ (եւ կան), որոնք բազում անգամ սղոցել են (եւ սղոցում են) իմ ճիւղերը, բայց ես աճել եմ եւ աճում եմ եւ իմ անունն է «Մայր Հայաստան»: Ընդհանրապէս երգի ֆինալը ունկընդիրներին վրայ մեծ ապտւորութիւն թողեց:

Յակոբ էֆէնտու մոայլ բաժակառից յետոյ այս երգը յուսոյ չողերով լուսաւորում է հայ ժողովուրդի ճակատագրի մոայլ երկնակամարը եւ ունկնդիրները ժպտում են կարծես տխրութեան սեւ ամպերից: Իր հիացմունքը չի կարող զսպել անգամ Արմենակ Բժիշկեանը եւ բացագանչում է.

– Պրա՛ւօ, պրա՛ւօ...

– Բաժակները լեցնե՛լ, հրամայում է թամադան ու ոտքի կանգնում:

– Սեղանակիցնե՛ր, ասում է նա, Ադամ եւ Եւան դժբախտ էին ոչ թէ նրանով, որ մեռաքսէ զգեստներու փոխարէն թզենու տերեւով ծածկեցին իրենց մերկութիւնը, ո՛չ: Մեծ դժբախտութիւն չէր եւ այն, որ Եհովան նրանց դուրս վռնտեց դրախտից: Ո՞րն էր նրանց մեծագոյն դժբախտութիւնը: Յանձին Եհովայի նրանք տեսան եւ ճանաչեցին իրենց երկնային հօրը, նրանք ամուսնացան եւ ունեցան զաւակներ: Բայց նրանք չունէին մայր, նրանք զրկուեցին մօր սէրն ու գուրգուրանքը, նրանք անմայր էին եւ սա էր նոցանց ահաւոր դժբախտութիւնը: Մայր՝ դա յաւիտենական արբուիթիւն է, նա իր արգանդին մէջ կրեր է եւ կրէ այն, ինչ – որ կը կոչուի մարդկութիւն: Այս սեղանի չուրջ ես կը տեսնեմ երկու բազմաչարչար մայրերի՝ Սաթենի մարէին, տիկին Անոյշին: Ես կ'առաջարկեմ խմել երկու մայրերի քաղցր կենացը, մաղթելով, որ փափուկ սեռին պատկանող եւ այս սեղանի զարդարող մնացած ներկայացուցիչները արժանանան մայր կոչուելու փառք ու պատիւն... մայրերի՛ կենացը...

Բաժակները զնդացին: Հօրեղբօր դէմքը մոայլուեց. երրորդ տարին է որ նա ամուսնացած է ու երեխայ չունի: Հռեփ քոյրիկը ժպտում է մեղաւոր ժպիտով եւ խփում է իր բաժակը միւս սեղանակիցների բաժակներին:

– Պրա՛ւօ, լսւում է Արմենակ Բժիշկեանի բացագանչութիւնը:

Բոլորը խմում են: Սեղանը՝ աչխուժանում է: Երեւում են նոր խորտիկներ:

– Անոյշ արէք, Աստուա՛ծ սիրէք, խնդրում է Սաթենիկ դուդուն, Վանի թաւա քեաբաբն է...

Վերոնիկը երգում է Վանում իր ժամանակին տարածուած «Մեպուհի մօր» երգը, որն աւելի նման է լացի, հեկեկանքի, քան երգի:

Եարալու սիրտս, եարաբ, ե՞րբ ժրի,
Իմ ազիզ բալից խաբար ո՞վ բերի...

Բոլոր կանայք ձայնակցեցին Վերոնիկին եւ երգը վերածուեց ողբի: Յակոբ էֆէնտին ճկոյթով աջ աչքի խորքից դուրս հանեց մի կաթիլ արցունք ու բըթամատի օգնութեամբ թափ տուեց անձեռոցիկի վրայ: Նրա ճկոյթի վրայ փայլում էր թանկարժէք մատանին: Հօրեղբայրը նորից բռունցքը խփեց սեղանին եւ անհասկանալի էր, թէ ինչո՞ւ համար, – արդեօք այն առթիւ, որ երրորդ տարին է որ ամուսնացած է եւ երեխայ չունի՞, թէ՞ Յակոբ էֆէնտու մի կաթիլ արցունքը:

Երգը վերջացաւ: Կանայք սրբեցին իրենց աչքերը, տղամարդիկ խոժոռեցին իրենց դէմքերը, միայն Արմենակ Բժիշկեանն էր նստել անտարբեր, պայտ կուլ տուածի պէս, ոչինչ չարտայայտող դէմքով:

– Դու անզգա՞յ ես, կամքելով Արմենակի ծունկը՝ չընջաց Վերոնիկը:

– Ինչո՞ւ, ջա՛նս, բողոքեց Արմենակը նոյնպէս ցած ձայնով:

– Բոլորը տխրեցին, դու ինչո՞ւ չես տխրեր...

Պարոն Արմենակը Վերոնիկի ականջին լսելի ձայնով յայտարարեց.

– Ես չէզոքների կուսակցութեան կը պատկանիմ, ջա՛նս...

– Բաժակները լեցնե՛լ, բոլորի համար անսպասելի կերպով ժպտաց թամադան: Նա մտածեց, որ սեղանը բաւականաչափ կամ դուրչ պէտք եղածից աւելի տոդոմեց ազգային – սոցիալական վշտով ու մորմոքով եւ որ հարկաւոր է անցնել որեւէ դուարթ ու թեթեւ թեմայի: Նա թաչ հայեացքով նայեց Նոյեմիկին, Հռեփ քոյրիկին, Հռիփսիմէին եւ Վերոնիկին, վերցրեց բաժակը եւ ոտքի կանգնեց:

– Սեղանակիցնե՛ր, սկսեց նա իր հերթական բաժակաճառը, նայէք երկնքին, որքան տխուր տեսք կ'ունենար երկինքը, եթէ ցերեկը արեւը չշողար եւ գիշերը չծածկուէր աստղերով: Ի՞նչ է ծովի պերեզկութիւնը, երբ նա փոռուած է իր միօրինակ մեռեալ կապոյտո՞վ. ո՛չ, ծովը զեղեցիկ է ալեկոծութեան պահին: Ինչ է ծովն առանց ալեկոծութեան: Ոչինչ է ծովն առանց ալեկոծութեան... Սմէն, ամէն ասեմ ձեզ, ծառն առանց տերեւների նոյնքան տգեղ է ու ծիծաղելի, որքան մարդկային կմախքը, իսկ կանայք մարդեաինների զեղեցկութիւնը նրանց զարդարող ծաղիկներն են...

– Ծօ՛, Աւետարանի պէս կը խօսի, չընջաց Արմենակ Բժիշկեանը Վերոնիկի ականջին:

– Սո՛ւս, լռեցրեց նրան Վերոնիկը, չկարողանալով կտրուել Յակոբ էֆէնտու դէմքից:

– Կ'ապրէր Ադամ դրախտի մէջ, լիութեան մէջ, չարունակեց Յակոբ էֆէնտին. հրեշտակներուն հետ կ'ապրէր ու կը տխրէր: Տխուր էր Ադամը. նա երկինք էր առանց արեւի ու աստղերի, ծո՛վ էր նա առանց ալեկոծութեան, Նա՛ էր նա առանց տերեւների եւ է՛ր մարդը առանց ծաղիկներու... Ի հարկէ, ժպտաց նա, եթէ ես լինէի Ադամի տեղը, չէի յուսահատուի եւ քիթս չէի կախի, ես կը սկսէի սանկ մանը – մունը սիրաբանութիւններ արբունքի հասած իգական սեռին պատկանող հրեշտակների հետ...

Բարձրացաւ հոմերական ծիծաղ:

– Վա՛յ, Յակոբ էֆէնտի, վա՛յ, ձեռքը ծունկին խփելով բացագանչեց Միհրդատը:

– Աւա՛նկ խօսեն, կ'ուզէ կը լացնէ, կ'ուզէ կը խնդացնէ, չկարողանալով իր չէզոքութիւնը չխախտել, յայտարարեց պարոն Բժիշկեանը:

– Մեղա՛յ Աստծու, մեղա՛յ Աստծու, երեսը խաչակնքեց Սաթենիկ դուդուն, այնուամենայնիւ չկարողանալով զսպել իր ծիծաղը: Չէր ծիծաղում միայն ինքը՝ Յակոբ էֆէնտին եւ նրա լրջութիւնը աւելի եւ աւելի հրահրում էր ծիծաղը: Վերջապէս բոլորը հանդարտուեցին եւ Յակոբ էֆէնտի չարունակեց.

– Եթէ մենք, հասարակ մահկանացուներս, նայէինք Ադամի վրայ, երեւի պիտի մտածէինք, որ տխուր է նա, որովհետեւ զուրկ է միջնակարգ կրթութիւնից կամ ազգային վշտերով կը տառապի... Բայց Եհովան հասկացաւ նրա տխրութեան բուն պատճառը եւ իրեն միայն յայտնի միջոցներով ստեղծեց Եւային: Եւ Ադամը առաջին անգամ լինելով ժպտաց՝ նայելով Եւայի վրայ: Ադամ, արեւի լոյսով ողողուած եւ աստղերով զարդարուած երկինքը զարմաւ, զարմաւ ալեկոծ ծո՛վ, տերեւներով զարդարուած ծա՛ռ եւ ծաղիկների մէջ ժպտացող մարդա՛ն... Ինչ է մարդկային կեանքը առանց կնոջ, դատարկութի՛ւն. կինն է իսկատը մարդկային կեանքի: Ուստի թոյլ տուէք առաջարկել այս բաժակը մեր սեղանի չուրջ նստած փափուկ սեռի ներկայացուցիչների կենացը: Խմել ցմրո՛ւր...

– Ցմրու՛ր, ցմրու՛ր, բացագանչեցին տղամարդիկ եւ ոտքի կանգնեցին, խփելով իրենց բաժակները փափուկ սեռի ներկայացուցիչների փոքրիկ բաժակնե-

«ԱԿՆ» ԿԱՄ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ ՌԱՀՎԻՐԱՆԵՐԸ

— • —

Տասնեակ մը տարիներէ ի վեր, առանց աղմուկի, Փարիզի մէջ հայկական հոգեւոր երաժշտութեան քանի մը նուիրեալներ կ'աշխատին Արամ Քերովբեանի ղեկավարութեան տակ: 1998–ին, այս տաղանդաւոր երաժիշտը կ'որոշէր իր աշխատանքները աւելի տեսանելի դարձնել հիմնելով «Ակն հոգեւոր երաժշտութեան ուսմանց կեդրոն»ը: Ի տարբերութիւն ուրիշ հետազօտական հաստատութիւններու, «Ակն» միայն տեսութեամբ չի զբաղիր, ան իսկական դպրոց մըն է, աւելի ճիշդ՝ դպրանոց մը, ուր հաստատութիւն մը ուր դպիրներ կը պատրաստուին Համաճայն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ աւանդութեանց: Այս պատճառով ալ այս դպրոցը եզակի է ոչ միայն արեւմտեան Եւրոպայի, այլեւ ամբողջ հայկական աշխարհին մէջ, ներառեալ Հայաստանը:

Շնորհիւ Արամ Քերովբեանի երաժշտական հմտութեան (ան Պոլիս ծնած է եւ տեւական պարապմունքներու «ձեռքին տակ» մեծցած), զանազան երկիրներու մէջ ծնած, եւ երբեմն ալ այլ մշակոյթներու պատկանող (չորսը Ֆրանսացի են) տասնեւերկու երաժիշտներ աստիճանաբար ուրացած են տասնեակ տարիներով անտեսուած հայկական հոգեւոր երաժշտութեան բուն աւանդութեան:

Այդ աշխատանքին արդիւնքը մեզի կը հրամցուի ահա ձայնապնակի մը միջոցաւ (*): Այս առաջին ձայնապնակը կը ներկայացնէ «Գիշերային ժամերգութեան» սաղմոսերգութիւնը, Սուրբ Ներսէս Շնորհալիի յօրինած «Ցիշեսցուք» շատ նշանաւոր երգը, «Արեւագալի» երգերը եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի վերապրուած «Ապաշխարհութեան» չարականներու շարք մը: Ձայնապնակը կը պարունակէ նաեւ «Ծաղկազարդի» («Ուրախ լեր Սուրբ եկեղեցի»), Զատկուան («Այսօր յարեաւ») չարականները եւ կը վերջանայ «Իւղաբերից աւետարանին» յաջորդող՝ «Փառք յարութեան fn տէր»ով:

«Ակն»ի եզակի եւ անթերի մեկնաբանութիւնը կրնայ որոշ չափով ստեղծել շատերուն մօտ, յատկապէս երաժշտասէր զանգուածներուն որոնք աւելի վարժ են այլ պատարագներու ուր լայնօրէն, եւ յաճախ չափազանցուած ձեւով, կը տիրապետեն իտալական օփերայի վայել ձայներն ու երգն:: Արամ Քերովբեանի եւ «Ակն»ի այս ձեռնարկը կու գան մեզի յիշեցնել որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, արեւելեան ուղղափառ միւս եկեղեցիներուն պէս, «միաձայնութեան» վրայ հիմնուած հարուստ աւանդ մը ունի: Էջմիածնի, Երուսաղէմի, Թիֆլիսի, Սպահանի եւ մանաւանդ Կոստանդնուպոլսոյ դպրապետները տեղին վանքերէ եկած այս հայկական աւանդութեան պահապաններն էին, սակայն Մեծ Եղեռնն ու խորհրդայնացումը գրեթէ ոչնչացուցին այս հարուստ ժառանգութիւնը: Այս ձայնապնակը եւ անկէ անդին կատարուած աշխատանքը ցոյց կու տան որ այդ ժառանգութիւնը անմատչելի չէ նորահաս սերունդներուն: Ցանկալի պիտի ըլլար որ ամէնուրեք, հետեւելով այս օրինակին, վերականգնուէր մեր եկեղեցւոյ հնագոյն եւ կանոնական հոգեւոր երաժշտութիւնը: 1700–ամեակի յոբելեանական այս տարին այդ ուղղութեամբ մեզի հիանալի հնարաւորութիւն մը կ'ընծայէ: Մաղթելի պիտի ըլլար որ մեր եկեղեցական ու մշակութային կեանքին պատիւ բերող այս ձայնապնակը տարածուէր հայ աշխարհի չորս ծագերուն մէջ, դառնալով օրինակ այլոց:

Շնորհակալութիւն Արամ Քերովբեանին եւ իր գործիներուն:

ԿՈՐԻՒՆ

(*) AKN chants liturgiques arméniens
sous la direction d'Aram Kérovpyan
«PENITENCE et RESURRECTION»
c°/. ALSUR. CDAL 274 / MD 852
Akn@online.fr / http : // akn.online.fr

Հասցէ՝ –
129, rue du Faubourg du Temple
75010 Paris

ՆԵՐԳԱՂԹԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔԸ

Գերմանիոյ վարչապետը Կ. Շրէօտէր վճռած է իր ըրջանը աւարտելէ առաջ կարեւոր փոփոխութիւններ կատարել ներգաղթի վերաբերող օրէնքներուն մէջ: Այդ նպատակով, Ներքին գործերու նախարարը Օ. Շիլի Օգոստոս 3–ին օրէնքի բանաձեւ մը ներկայացուցած է, ամփոփելով մայր գիծերը: Հիմնականը ներգաղթը պատշաճեցնել է գերմանական տնտեսութեան պահանջներուն:

Նոր օրէնքը Եւրոպական Միութենէն դուրս մնացած երկիրներէն գաղթողներու համար «ճկուն դրութիւն» մը սիւտ հաստատէ: Բարձրորակ մասնագէտները, յատկօրէն ճշդուած պայմանները լրացնելու պարագային, բնակութեան եւ աշխատանքի տեւական արտօնութիւն պիտի ունենան. իսկ այդ պայմանները կը վերաբերին իրենց տարիքին, վկայականներուն, տարիքին, Գերմանիոյ եւ գերմաներէնի ծանօթութեան: Նախապատիւ պիտի համարուին ճարտարագէտները, պիտանականները, համակարգիչի մասնագէտները որոնց մեծ պահանջ կայ երկրին մէջ: Այդ խումբէն ալ առաջին ընդունուողները պիտի ըլլան Եւրոպական Միութեան երկիրներու քաղաքացիները: Ներքին գործերու նախարարը կ'ըսէ թէ նպատակը ճիշդ հունի մէջ դնել է գաղթականութիւնը, համաձայն՝ երկրին տնտեսական չահերուն:

Ներկայիս Գերմանիա աւելի քան 7 միլիոն օտարական ունի որոնց երեք չորրորդը Եւրոպական Միութեան քաղաքացի չէ. օտարականները կը կազմեն երկրին բնակչութեան 9%–ը:

Ինչ կը վերաբերի քաղաքական ապաստանի իրաւունքին, անոր պայմանները աւելի կը խստանան. 1993–ի փոփոխութենէն ետք որուն նպատակն էր ապաստանելու թեկնածուներուն թիւը պակեցնել, այդ թուականի 322 հազարը 2000ին իջած է 80 հազարի:

Անոնց որոնք որպէս ապաստանեալ պիտի ապրին Գերմանիա, երեք տարի ետք թղթածրարը պիտի վերաքննուի: Պիտի դադրին ապաստանեալ նկատուելէ եթէ մինչ այդ իրենց երկրին քաղաքական կացութիւնը բարելաւուած ըլլայ: Իսկ անոնք որոնց դիմումը մերժուած է, անյապաղ ետ պիտի դրկուին: Ներքին գործերու նախարարը կը խոստանայ աւելի ազդեցիկ պայքար մղել զաղտնի ներգաղթին դէմ որ կ'ըսէն մէկ միլիոն հոգինոց զանգուածի մը կը վերաբերի: Նոր կարգադրութեամբ ընտանեկան համախմբումները նպատակ պիտի առնեն միայն 12 տարեկանէն վար զաւակները, հակառակ որ բնապահները կ'ուզեն բարձրացնել տարիքի սահմանը:

Այս արդիականացումը արդիւնք է մասնագիտական երկարատեւ աշխատանքի մը որ տարուած է բարմահուակցական յանձնաժողովի մը կողմէ: Ցուլիսի սկիզբը նոյն յանձնաժողովը թելադրած էր որ ամէն տարի 50 հազար օտարական ընդունուի, որպէսզի Գերմանիոյ բնակչութեան թիւին անկումին առաջքը առնուի: Հաշուարկներու նախատեսումը այն է որ ներկայի 82 միլիոնը 2040–ին 63 միլիոնի իջած պիտի ըլլայ: Սակայն, նախարարը այդ առաջարկը նկատի չէ առած: Իսկ բարեփոխումի տնօր ծրագիրը ընդհանուր առմամբ դրական ընդունելութիւն գտած է քաղաքական դասուն կողմէ:

ՔԱՂՀԱՆ

ՀԱՑԱՏՏԱՆԱՆ ՃՈՊԻՏ

Գործարարը հանդերձեալ կեանքում թակում է դրախտի դուռը, հրեշտակներից մէկը հարցնում է նրան.

– Իսկ դու ի՞նչ բարի գործ ես արել, որ քեզ դրախտ թողնենք:

– Մի անգամ հարիւր դրամ եմ տուել մի մուրացկանի:

– Ուրի՞շ:

– Մի անգամ էլ 50 դրամ մեր եկեղեցի:

Հրեշտակները սկսում են քննարկել.

– Հիմա ի՞նչ անենք սրան:

– Հէյ, իր 150 դրամը տանք թող ոտը քաշի՝ գնայ:

*
**

Բժշկական ինստիտուտում քննութեան ժամանակ դասախօսը հարցնում է ուսանողին.

– Այս դեղից որքա՞ն է պէտք տալ հիւանդին:

– Մի ճաշի գդալ:

– Լաւ, կարող էք գնալ:

Ուսանողը գնում է, բայց, յանկարծ յիշում է, որ սխալուել է ու վազելով վերադառնում է դասախօսի մօտ:

– Ներեցէք, ես յիշեցի, պէտք է տալ մի քանի կաթիլ:

– Ուշ է, ձեր հիւանդն արդէն այն աշխարհում է:

*
**

Հանդիպում են երկու ընկերը:

– Լսե՞լ ես, կառավարութիւնն ասում է որ հինգ տարի յետոյ Հայաստանում չի լինի ոչ մի գործազուրկ:

– Ճիշդ է: Այդ ո՞ր գործազուրկը ես հինգ տարի կ'ապրի:

ԹԻ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ժ.

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

– Որովհետեւ պետութիւնը բռնակալ բժիշկի մը ներքեւ կ'ապրէր, – պատասխանեց Թուրքը, – որովհետեւ սուլթանները միշտ ամէն բարենորոգութիւն, ամէն քայլ դէպի առաջ վնասակար նկատած են իրենց սուլթանական ցեղին չափերուն: Բայց հիմա, վա՛ռք Աստուծոյ, ահմանադրական բէժիմի մը տակ կ'ապրինք: Սուլթանին իշխանութիւնը սահմանափակուած է, եւ Խորհրդարանն է, որ կը վարէ երկրին ճակատագիրը: Դուք որ կը վարէ երկրին ճակատագիրը: Դուք որ Թօսեկէք մեզի, բանակցեցէք մեզի հետ եւ պիտի տեսնէք, որ մենք կարող պիտի ըլլանք ամէն ապահովութիւն տալու:

– Ձեր բաժնները լրջօրէն նկատողութեան առնուելիք խնդիրներ են, – պատասխանեց Գարայեան, – եւ, ինչպէս նախապէս ըսինք, այս գումարումը որեւէ պաշտօնական հանդամանք չունի...

– Գիտեմ, գիտեմ, – ընդմիջեց Թուրքը, – արդէն ես ալ ձենէ վճռական պատասխան մը չեմ ապասեր: Ո՛չ դուք կըրնաք այդպիսի պատասխան մը տալ, եւ ո՛չ ալ ես իրաւունք ունիմ ձենէ պահանջելու: Արդէն ես պարզ այցելութեան մը եկած էի Հալաճեան էֆէնտիի եւ դիպուածով է, որ ձեզ հանդիպեցայ այստեղ: Միայն թէ, կարծեմ ամէնդէ ալ, ձեր ազգային գործերուն մէջ բաւական կարեւոր դեր մը ունիք եւ ձեր ազդեցութիւն, հեղինակութիւն վրայ մեծ ազդեցութիւն, հեռւեւաբար օգտակար ծառայութիւն մը կրնաք մատուցանել թէ՛ ձեր ազգին եւ թէ՛ պետութեան, եթէ իմ ցոյց տուած ուղղութեամբ գործէք:

– Ձենէ առաջ արդէն նոյն գաղափարը յայտնեց Զօհրապ էֆէնտի, – յարեց Բասմաճեան, – եւ մենք այդ մասին կը վիճաբանէինք, երբ դուք եկաք:

– Զօհրապ էֆէնտի ձեր ազգին եւ մեր պետութեան պատիւ բերող անձնաւորութիւն մըն է, – պատասխանեց Թուրքը, – իր խելքը, իր համբաւութիւնը եւ իր փորձառութիւնը պէտք է որ ձեզի ուղեցոյց ըլլան: Շատ գոհ եւ հպարտ եմ, որ այս խնդրոյն մէջ Զօհրապ էֆէնտիի պէս անձնաւորութեան մը հետ համագործիք կը պտնուիմ:

– Կ'աղաչեմ, ատիկա ինծի համար պատիւ մըն է:

– Սթաֆուըլահ...

Եւ այսպէս ա լա Թուրքա իրարու կարդ մը քաղաքավարական խօսքեր չռայլելէ ետքը Թուրքը ոտքի ելաւ եւ կարեւոր ժամադրութիւն մը պատրուակելով՝ ներկաները բարեւեց եւ մեկնեցաւ:

Խօսակցութիւնը բաւական երկարեցաւ, առանց ոեւէ դրական արդիւնքի: Միայն սա տեսնուեցաւ, որ մեծամասնութիւնը համաձայն չէր Զօհրապի դաղափարներուն:

Հետեւեալ օրը Հարստահարելոց յանձնաժողովը նիստ ունէր, եւ հո՛ն դիչերային դումարումին ներկայ գտնուողդամ մը պատմեց ինչ որ ըսած էր Զօհրապ:

Դիւրագրգիռ Շահրիկեան յանկարծ բորբոքեցաւ:

– Բայց դա չիմար բան է, – գոչեց զայրացած, – ինչպէ՞ս կարելի է երթալ համաձայնուիլ Թուրք կառավարութեան հետ, երբ մենք ամիսներէ ի վեր նրա հակառակ ենք գործում... դա պարզապէս դասալքութիւն, անձնասպանութիւն կը նշանակի:

Ընկերները զինքը հանդարտեցնելու համար դիտել տուին, որ ատիկա պարզապէս Զօհրապի մէկ անձնական կարծիքն էր եւ որեւէ կերպով չէր կրնար ազդել յանձնաժողովին բռնելիք ընթացքին վրայ:

– Մի՞թէ ամէն մարդ ազատ չէ իր կարծիքը յայտնելու...

– Ի հարկէ, – պատասխանեց Շահրիկեան, – բայց խնդիրը այն է, որ Զօհրապ առանձին չէ, ուրիշներ ալ կան, որ նոյն կարծիքը սկսած են յայտնել: Դա մի նոր հոսանք է, որ առաջ է գալիս, չեմ դիտեր՝ ո՞ր կողմից: Թուրք կառավարութիւնը կ'ուզէ մեզ խարխլել, նա պարզապէս ցանկանում է վիժեցնել բարենորոգումների դործը եւ այդպէս էնթրիկներ է սարքում:

– Ո՞վ կը հաւատայ իր խօսքերուն...

– Բայց արդէն ահա՛ սկսել է հաւատալ:

– Հաւատացող չի կայ, Շահրիկեան էֆէնտի, – գոչեց Ներսէս Օհանեան, – դուն հոգ մի՛ ըներ, մենք պիտենք ինչ կ'անցնի – կը դառնայ կոր, չօճուխ չենք, օլտուղմա խիղճ ունինք՝ կը մտածենք, ականջ ունինք՝ կը լսենք, աչք ունինք՝ կը տեսնանք...

– Ես քեզի չեմ ակնարկում, – պատասխանեց Շահրիկեան, – ես քեզ ճանաչում եմ:

– Գիտեմ, որ խօսքդ լինձի համար չէ, բայց նորէն կ'ըսեմ, իրար անցնելու բան չի կայ, քանի մը հոգի բաներ մը դարձընել կ'ուզեն կոր, եղածը սա է... ցաւալին այն է, որ այդ դիչերային ժողովին դուն ներկայ չես գտնուած:

– Ինչպէ՞ս կարող էի ներկայ գտնուիլ, երբ ինձ չեն հրաւիրել:

– Բայց ինչպէ՞ս կ'ըլայ, որ ձեր միւս ընկերները կը հրաւիրեն ու ձեզ չեն կանչեր:

– Այդ Հալաճեան էֆէնտիի հարցրիր, – պատասխանեց Շահրիկեան իր մեֆիսթոֆէլեան ժպիտովը:

– Ձեր ժողովի չհրաւիրուիլը մեծ նշանակութիւն ունի, – վճռեց Օհանեան:

– Ունենայ թէ ոչ՝ իրողութիւնը այն է, որ ես ներկայ չեմ եղել եւ ասոր համար շատ էլ դժգոհ չեմ:

– Ինչո՞ւ համաձ...

– Որովհետեւ կարելի էր, որ համբերութիւն չունենայի, եւ մի սքանտալ առաջ գար, – պատասխանեց Շահրիկեան:

Հարստահարելոց յանձնաժողովը ցըրուելէ ետքը Շահրիկեան եւ Ներսէս Օհանեան միասին հեռացան ժողովասրահէն:

(Շար. 41)

Ի ՅԻՇԱՏԱԿ

Սիմոն Պայրամեան 1000 ֆրանք կը նուիրէ «Յառաջ»ին ի յիշատակ իր ծնողքին Հայկ եւ Վեհանոյշ Պայրամեանի :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼ

Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան վարչութեան անդամները իրենց սրտագին ցաւակցութիւնները կը յայտնեն Տիկին Ազնիւ Հոթոթեանին, Տէր եւ Տիկին Լապանին եւ զաւակներուն, Տէր եւ Տիկին Կրասեանին եւ զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն իրենց ամուսնոյն, հօր, մեծ – հօր եւ ազգականին՝

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈԹԵԱՆԻ

մահուան առիթով :

(Շար· Ա· էջէն)

ԱՄՆ–ու 2 – 1 յաղթանակով : Իսկ աւարտական խաղը եղած է չատ բուռն ու մրցումին սովորական ժամանակը վերջ գտած է 1 – 1 արդիւնքով· երկարաձգումն ալ արդիւնք տուած չըլլալով ձեռնարկուած է վէնալթիներու չարքին որ սուրհանդ մարդիկներուն բախտաբեր եղած է 5 - 4 արդիւնքով : Այսպէսով Սուրիա խլած է նաեւ Ֆուէթպոլի բաժակը :

Ինչ կը վերաբերի ՀՄԸՄ–Ֆրանսի, ոտաքը պատուաբեր Ֆուէթպոլ մը ցուցադրելով հանդերձ դուրս մնացած էին մրցաշարքէն : Իրենց առաջին խաղին 2 – 1 յաղթելէ ետք Աբժանթինի, կրկնակ երկու պարտութիւնները նախ Գանատայի (0 – 1) եւ ապա Լիբանանի (1 – 3) դէմ պատճառ եղած էին որ Հեռանան այս մրցաշարքէն զոումներու հանդրուանէն ետք :

Օգոստոս 16–ի իրիկունը Սամըրլէնա պանդոկին մէջ տեղի ունեցած «Ֆաղթականներու պարահանդէս»ին ալ տեղի ունեցած է բաժաններու եւ մրցանակներու բաշխումը :

Շ· Ո·

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

–Վ ԵՐԱՄՈՒՏ–

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԹԱՂԻ ՓԱՐԻԶԻ ՍՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալօրէա կը դասաւանդուին. – հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք :

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին :

— ● —

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի թուականն է Շաբաթ Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին :

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին :

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16 :

Աշակերտները կրնան օգտուիլ Շաբաթ կէսօրուան ճաշէն :

Յատկապէս մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝

04 . 78 - 60 . 47 - 18

թիւին :

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— ● —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux

Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53



le domaine de chamerolles

45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 héctares avec étang, hébergement en châlets tout confort pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F
(selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.

Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

TISSUS DES URSULES
Tout le décor de la maison
Siège Social 9, rue J. Duclos
42400 St-Chamond
SAINT-ETIENNE
SAINT-CHAMOND
CANNES LA BOCCA
VILLENEUVE-LOUBET

SABERATOURS


SEVANVOYAGES

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇՔԱՐ

ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱՓԵԱՆ
ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 ՖՐ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆԱԶԱՐ
ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 ՖՐ.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 ՖՐ.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 ՖՐ.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ 75 ՖՐ.
ԵՒ
«ՅԱՌԱՋ - 50»
(Ծագկափառ 50-ամեայ հաւատաժողով) 120 ՖՐ.

Դիմել «ՅԱՌԱՋ»ին։
Թղթատարի ծախքը՝ 30 Ֆր·, Հատոր պլուխ։

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre
GRANDE FETE CHAMPETRE
Animée par l'Orchestre SPITAK
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

Programme : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 21
MARDI
21 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·233 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 77e ANNEE — N° 20·233

ՀԱՑԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԹԱՅՈՒՄ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Բ. ԽԱՂԵՐՈՒ

Վարչէն Սարգսեան մարզադաշտին մէջ, Շաբաթ, Օգոստոս 18–ին, պաշտօնական բացումը կատարուած է համահայկական Բ. խաղերուն, 20 հազար հանդիսականներու ներկայութեան:

Խաղերու չահ՝ լրացած են 40 մարզիկներ Գառնիէն, անցնելով Ջրվէժէն, Եբեանի Գայլ արձանի մօտէն, համնելով մարզադաշտ:

Աշխարհի 93 քաղաքներէ հասած մարզիկներուն օրհնութեան իր խօսքը ուղղած է Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը եւ հոն չեչտած է մէջ այլոց.– «Մեզ համար առանձնակի ուրախութեան առիթ է Հայոց Մեծ Դարձի 1700–ամեակի խորհրդով պատկաղարդ այս տարում՝ Միածնէջ Մայր Աթոռի չնորհարաչխ հովանու ներքոյ, ազատն Մասեաց հայոցքի առջեւ, Հայոց ազատ ու անկախ հայրենիքում օրհնել եւ հայրապետական մեր պատգամը յղել աշխարհի տարբեր անկիւններէն Հայոց մարզիկներին: ... Համահայկական երկրորդ խաղերի բացման առիթով մեր պատգամն է՝ մշտապէս միասնական ու միակամ լինել, արմատաւորել գեղեցիկ այս աւանդոյթը հայրենական մեր կեանքիս ներս՝ այն զարգնելով հայրենաշինութեան, եղբայրասիրութեան եւ հոգենորոգումի բերկրալի հրաւէր»:

***

Խաղերուն կը մասնակցին 3000 մարզիկներ եւ կան ինչ մարզաձեւեր՝ Ֆութպոլ, մինի Ֆութպոլ, պասքէթպոլ, վոլէյպոլ, թէնիս, սեղանի թէնիս, մարմնամարզ. ճատրակ, լող:

***

Օգոստոս 18–ին նախագահ Քոչարեան բացած յայտարարեց համահայկական Բ. Խաղերը: Մարզական մասը սկսաւ Օգոստոս 19–ին եւ կը տեւէ մինչեւ Օգոստոս 26, Հայաստանի 4 քաղաքներու մարզադաշտերուն մէջ:

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 17 / 20)

ՆԱԽԱԳԱՀԸ ԿԱՐԳ ՄԸ ՕՐԻՆՔՆԵՐ ՎԱԽԵՐԱՑՈՒՑԱԾ Է

Օգոստոս 16–ին, նախագահ Ռ. Քոչարեան ստորագրած է Ազգային ժողովի ընդունած «Երեւանի էլեկտրացանց», «Հիւսիսային էլեկտրացանց», «Հարաւային էլեկտրացանց» եւ «Կեդրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերութիւններու սեփականաշնորհման մասին օրէնքը:

Նոյն օրը, նախագահը ստորագրած է նաեւ օրէնքներ դիմնադրամներու եւ անոնց ընտանիքներուն վերաբերեալ, քաղաքացիական օրինագիրքին մէջ փոփոխութիւններ կատարելու, գոյքի նը – փոխանցումներ իրաւունքներու պետական գրանցադրութեան, կրթութեան մասին:

Միշտ Օգոստոս 16–ին, Ռ. Քոչարեան հրամանագիր ալ ստորագրած է Հայաստանի եւ Սուրիոյ միջեւ զբօսաշրջութեան համագործակցութեան մասին:

***

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԱՃՕՅ ԶՈՐԻ ՄԷՋ

Հայաստանի արտակարգ իրավիճակներու վարչութեան տուեալներու համաձայն, Օգոստոս 16–ին ժամը 21–ին վայոց Ձորի Ագատենք բնակավայրը 50–ամեայ բնակիչ մը կայծակնահար եղած է: Նոյն աղբիւրին համաձայն մարզի Շատին գիւղը, որ ծանօթ է քարաթմաք տեղանքով, հողմահարուած եւ արեւահարուած ժայռերէն երկու մեծ քարաբեկորներ ինկած են բնակավայրերու վրայ:

***

ՀԱՄԱՆԵՐՈՒՄԷՆ ՕԳՏՈՒԱԾ ԵՆ 580 ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ

Բրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700–ամեակի առթիւ Ազգային ժողովի ընդունած համաներումով (Յունիս 12–ին) ընթացքի մէջ է: Գլխաւոր դատախազութեան պատիժներու եւ հարկադրանքի այլ միջոցներու կիրառման նկատմամբ հսկողութիւն իրականացնող վարչութեան ւրէս՝ վաղարշակ Վարդանեան յայտնած է որ արդէն ապատարձակուած են 580 դատապարտեալներ: Կրճատուած են 100 դատապարտեալներու պատիժները: Ապատարձակուածներու մէջ կան 14 կիներ եւ 12 անչափահասներ:

***

ՔՈՉԱՐԵԱՆ – ՅՈՎՆԱՆԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Օգոստոս 17–ին, նախագահ Ռ. Քոչարեան ընդունած է Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարը՝ Սեպուհ Յովհաննեան, որ կը դիմաւորէր Համահայկական Բ. Խաղերու համար Եբեան ժամանած լիբանանեան պատուիրակութիւնը:

***

ՅՈՒՇԱՏԱԽՏԱԿ՝ ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երեւանի Մաշտոց փողոցի այն տան ճակատին, ուր ապրելի քանի կէս դար ապրած է հայ երգի վաստակաւոր մշակ, ազգագրագէտ Հայրիկ Մուրատեան, զետեղուած է յուշատախտակ մը, Վասպուրականի Հայրենակցական Միութեան նախաձեռնութեամբ: Յուշատախտակի բացման արարողութեան, որուն ներկայ եղած են մայրաքաղաքի բազմաթիւ բնակիչներ, պետական ներկայացուցիչներ, դիւանագիտական եւ արուեստի գործիչներ, ինչպէս նաեւ Հայրիկին հարազատները, ելոյթ ունեցողները վեր առած են Հայրիկին եւ իր վաստակեցի աղջկան՝ Մարոյի վաստակը՝ ազգային երգարուեստի բազմաթիւ նմոյշներ պատմութեան մոռացումէն փրկելու գործին մէջ: Ապատախտակին բացումը կատարած է Հայրիկին թոռը երաժիշտ Լ. Մուրատեան: Հեղինակն է քանդակագործ Լ. Խաչատրեան:

***

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ԿՐ ԳՆԱՀԱՏԷ ՋՕՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Քոչարեանէ Պաշտպանութեան նախարար՝ Ս. Սարգսեանի եւ զինուորական հրամանատարութեան մասնակցութեամբ Յ. Բաղրամեան զինուորական վարժարանին մէջ, Օգոստոս 18–ին տեղի ունեցած են բանակի 5–րդ զօրամասի ռազմափորձերը: Առաջին փուլը սկսած էր Օգոստոս 14–ին Նուպարաչէն, այս մեկը եղրափակիչ փուլն էր: Աչնակ – Արաքս – Արմաւիր հատուածին մէջ, զինեալ ուժերը նկատած են թշնամիին եւ հրամանի համաձայն պէտք է կասեցնէին անոր յառաջխաղացումը: Զինեալ ուժերը պատուով կատարած են առաջադրանքը եւ նախագահ Քոչարեան իր գնահատականը արտայայտած է ու նշած թէ վերջնական արդիւնքներու ամփոփումին համար ժամանակ հարկաւոր է:

Ռազմափորձերուն ներկայ եղած են Ռուսաստանի, Յունաստանի, Չինաստանի, ԱՄՆ–ու եւ Պարսկաստանի դիւանագիտական ներկայացուցիչներ:

Այս առթիւ տեղի ունեցած է նաեւ մասնակցութեամբ Յ. Բաղրամեանի կիսանդրիին բացումը:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԴՈՐՍԻՔԱՅԻ ԱՋԳԱՅՆԱՊԱՇՏ Ֆըրանսուա Սանթոնիի թաղումը կատարուեցաւ Օգոստոս 19–ին, իր պիւղին մէջ, հարարատաներու եւ բարեկամներու ներկայութեան (400 – 500 հոգի): Ընտանիքը մերժած էր մեհեաններու ներկայութիւնը եւ լրատուող ու նկարահան հեռուստայած էին: Զինուորական պատիւներ տրուեցան: Արարողութենէն առ, վերադարձի ճամբուն վրայ, ոստիկանութիւնը խուզարկեց բոլոր կառքերը առանց որեւէ պէնք գտնելու: Այս ապահովիւնը կրկին ինդրոյ առարկայ կ'ընէ Մաթիւոնի համաձայնագիրը, զոր կառավարութիւնը միտք չունի ակահելու: Անոր ակահման կողմնակից են ալը եւ Ժ.–Փ. Շեվէնըման, բայց Ա. Մատլէն, այլն, կը գտնէ որ պէտք է պահպանուի: Ժ.–Փ. Շեվէնըման որ Ներքին նախարարի իր պաշտօնէն հրաժարեցաւ ճիշդ այս համաձայնագրին պատճառով, չատ խօսած կ'արտայայտուի եւ այս ապահովութեան մէջ իսկ, որոշ պատասխանատուութիւն կը վերագրէ կառավարութեան: Ան հարց կու տայ.– «Քանի՞ ապահովութենէ առ, նկատի պիտի առնուի որ Գորսիքայի մէջ մնայուն խաղաղութեան մը հեռանկարը ցնորք մըն է» եւ կը պահանջէ որ Գորսիքայի վերաբերող օրէնքը քաշուի: Ժոսփէն, որ իր արձակուրդը կ'անցընէ Ռէ կղզիին մէջ, չարտայայտուեցաւ եւ թողուց որ կառավարութեան անդամները իր բանբերներն ըլլան:

ԼԻՄՆԸՍԹի ԻՆԹԻՐՆԷՇՆԱԼԻ գլուխը, առաջին անգամ ըլլալով, կ'անցնի կին մը, յանձին ասլացի Իրէն Զուպայտա Յանի: Պէնկլատէշի, 44 տարեկան, կը յաջորդէ սենեկալցի Փիէր Սանէի: Նշանակուեցաւ Տաքար դումարուած ժողովին ընթացքին:

ՉԷՉԻՆԻԱ կատարած քննական այցելութեան մը ընթացքին, Ռուսաստանի ընդհանուր դատախազը՝ Վլադիմիր Ուստինով ընդունած է որ դաշնակցային ուժերը ոճիրներ եւ թալանններ կը գործէին:

ՎՐԱՍՏԱՆԻ եւմսական նախկին նախագահ՝ Կ. Ապասանձէ 17 տարուան արգելափակման դատապարտուած է, Շեվարնածէի դէմ մահափորձի մը քերած իր մասնակցութեան համար 1998–ին: Ամբաստանուած էր որ այդ մահափորձը պատրաստած էր եւ նիւթականն ալ ապահոված:

ՊՈԼՍՈՑ ՄԷՋ, Օգոստոս 17–ին բացուած է «Բնական աղէտներու պատրաստութեան ժողովաճաղը»: Հոն ցուցադրուած են երկրաչարժներու դէմ պայքարելու ամէնէն արդիական միջոցները: Այս ցուցահանդէսը կը զուգադիպի 1999 Օգոստոսի երկրաչարժի բ. տարեդարձին, որ 20 հազար զոհ խլեց: Տօնակատարի նախագահը՝ Օ. Էրէմ կը բացատրէ որ վերջին փորձառութիւնը պիրենք մըցած է այս հանդիպումը կազմակերպելու պատրաստութեան համար բնակչութիւնը բնական աղէտներու վտանգներուն եւ հետեւանքներուն: Վոսփորի համալսարանի երկրաչարժային հետազօտութեան տնօրէնը՝ Ահմեթ Մէհմէ Ըլըքարա կ'ըսէ թէ 1999–ի զոհերուն 30%–ը մեռած է պատրաստուած չըլլալով:

ԳՈՓԸՆՀԱԿԸՆ ապաստանած եօթը պատճինգի պաղեստինցի պաղթականներ բողոք բարձրացուցած են դանիական ոստիկանութեան մօտ, Իսրայէլի նոր դեսպանին նշանակման դէմ: Ան՝ Քարմէլ Ժիլոն, նախկին պատասխանատու նեղքին ապահովութեան սպասարկութեանց կ'ամբաստանուի չարչարանքի կիրարկման համար: Այնցեալին, յայտարարած էր նոյնիսկ թէ կողմնակից է «Փիլիքական չափաւոր ճնշումի» պաղեստինցի կասկածելիներու վրայ, հարցաքննութեանց ատեն:

ԴՈՆԵՑԿԻ (Ուկրանիա) մէջ ածխահանքի արկած մը պատահած է, որու հետեւանքով 36 մեռեալ կայ եւ 14 հոգի ալ անհետացած են:

ՓԻԼԻՊՊԵԱՆՆԵՐՈՒ Բեզոն սեթիի (Մանիլայի մօտ) մէկ պանդոկը հրոյ ճարակ դարձած է, Օգոստոս 18–ի վաղ առաւօտեան: 78 մեռեալ կայ, մեծ մասը կը պատկանէր «Աստուծոյ Հաստատիմ»–ներու աղանդին:

ԹԵՀՐԱՆ-ԲԱՔՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԵԿՄԱՑՈՒՄ

Իրանեւադրբեջանական յարաբերութիւնները որոնք բաւական լարուած էին Կասպից ծովուն օրինաւիճակին առընչուած հարցերու պատճառով, մեղմացման նշաններ կոյց կու տան: Անոնց գլխաւորը կը նկատուի Ադրբեջանի նախագահ Հ. Ալիեւի Թեհրան այցելութիւնը որ չաս հաւանաբար տեղի կ'ունենայ Սեպտեմբերի ընթացքին:

Ադրբեջանի նախագահութեան միջազգային յարաբերութիւններու բաժնի պետ Ն. Մամեդով յայտարարած է թէ այդ այցը Հ. Ալիեւի առիթ պիտի տայ երկու երկիրներու լարուած յարաբերութիւնները մեղմացնելու: Նաեւ կը նախատեսուի կարգ մը համաձայնագրերու ստորագրութիւնը: Այսուհանդերձ, գլխաւոր նիւթը պիտի ըլլայ Կասպից ծովու օրինաւիճակը:

Այդ մասին հեռաձայնի զրոյց մը ունեցած են երկու երկիրներու Արտաքին գործերու նախարարներն ալ: Իրանի նոյն նախարարութենէն յայտարարուած է որ ադրբեջանցի նախարարը զոհ մնացած է չարք մը անհասկացողութիւններու հարթուած ըլլալէն եւ առաջարկած է երկխօսութեան ճամբով լուծել հարցերը: Թեհրան Բաքու պիտի զրկէ ներկայացուցիչ մը որպէսզի հոն ադրբեջանցի պատասխանատուներու հետ խորհրդակցելով միասնական լուծում մը գտնէ Կասպից ծովու օրինաւիճակին կարգադրութեան:

Ծանօթ է որ Կասպից ծովուն ընդերքի հարստութեան վէճերու տեղի տուած էին Խորհրդային Միութեան քայքայումէն ետք: Ադրբեջան կ'ուզէ որ Կասպիցը միջազգային ծով մը նկատուի, իսկ գտնուող միւս չորս երկիրները, Իրանի գլխաւորութեամբ, կը պահանջեն որ նոր օրինաւիճակով մը սահմանուին անոր գործածութեան սկզբունքները: Վէճը պատճառ եղած էր նաեւ Ադրբեջանի ու Թիւրքմէնիստանի միջեւ լարուած կացութեան մը:

ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԲԱՑԱԿԱՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԼՐԱՏԻՒԱՆԵՐԸ ՀԱՂՈՐԴԵՑԻՆ ԹԷ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Օ–ԳՈՍՏՈՍ 8–Ի ՆԻՍՏԻՆ ՀԱՍՏԱՏԱԾ Է ԱՅԴ ՀԱՆԴՐՈՒԱՆԻՆ ՆՇՈՒՄԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐԸ: ԲՆԱԿԱՆ Է ՈՐ ՆՐՄԱՆ ՏԱՐԵԳԱՐՁ ԿԱՐԵՒՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՈՐԵՒԷ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ, ԻՆՉՊԷՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՐ ԱՅԴ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԳԼԽԱՒՈՐ ԱՐԱՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ ԿՐ ԳՏՆԷ ՆՐՉՈՒՄԻ ԴՐԾԻՆ ԼԾուած ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԵՐԿՐԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՅԱՆՁՆուած ՆԱԽԱԴԱՀՈՒԹԵԱՄԲ:

ՏԱՍԸ ՏԱՐԻՆ ՄԵԾ ԲԱՆ ՉԷ ԵՐԿՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ. ԲԱՅՑ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ «ՊԵՏՈՒԹԻՒՆ» ԿՈՉուած ՍՈԱՑուածքին ԱՅՆՔԱՆ ԽուսափուկՆԵՐԿԱՅուԹիւնը 6 – 7 ԴԱՐ Է Ի ՎԵՐ, ՄԱՆաւանդ 1918 – 1920–ԻՆ ԱՅՆՔԱՆ ԿԱՐՃԱՏԵՒ ԿԵԱՆՔը, ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱԼ ՅԱՐԳԵԼԻ, ԴուրգուրԱԼԻ ԿԸ ԴԱՐՁՆԷ: ՀԱԿԱՌԱԿ ԱՄԷՆ ԲԱՆԻ, ՅԱՋողուԹեան ԻՄԱՍՏ ՄԸ ԿՐ ՀԱՂուի ԱՆ, ՀԱՐՏՆԱԿուԹեան ԱԼ ԱՊԱՀովուԹիւն ՆԵրՀՆՉԷլով: ՈրքԱՆ ԱԼ ՀԱՏ ԸՂՁԱՅ ԱՆԿատարներու ԹիւԸ, ՈրքԱՆ ԱԼ Հեռու Թուի Յանկալի կացուԹիւնը, Պատերազմի Մը ՀետեւԱԾ Այս ԱռաջԻՆ ՀՐՇԱՆը ԱռՆուԱԳՆ ՆախընԹացի Արժէքով Կը ՆերկայԱՆայ, ԻՆչ Որ ՂիւրԻՆ ԱրհԱմարհելի ՏուէԱՅ ՀՀ ԱշխարհԻ Մը ՄԷՋ Ուր ԱՆկախուԹիւՆը ՆոյՆիսկ ՀԱՏ ԱւԷլի ՄԵԾ Ու ՀզօրՆերու ՀԱՄԱՐ օրՀ օր ԱւԷլի ՅարաբԵրական ԻՄԱՍտ Մը կ'ՎտԱՆՀ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԱՂբիւրով ՏրուԱԾ ԼուրԸ կ'ըսՀ Թէ ՄինչԵւ ՏարեվԵրՋ ԾրԱԳրուԱԾ ԵՆ ԱւԷլի ՔԱՆ Երկու ՏԱՍՆեԱԿ ՄիՋոցառուՄՆեր: Կ'ընՀ ԹուՄՆ Ալ. ՅուՀԱՏախտԱԿ, Երգի Ու ԵրԱԺՀուԹեԱՆ ՀԱՄերգՆեր, Պարի վիՏԱՏՈՆ, ՅուՑԱՀԱՆդԷսՆեր, ԺապԱւէՆՆերու ՅուՑադրուԹիւն, դիՏԱԿԱՆ ՆուՏաՀրՋՆԱՆեր, ՄարզԱԿԱՆ ՀԱՆդիպուՄՆեր, ՆԱեւ՝ ալպոմ, դրուՀԱԹուղԹ, ԹղԹԱՏարԱԿԱՆ պԱՀԱրԱՆ, ՅուՀադրամ, Եւ ԱյԼՆ: ՄոռցուԱԾ Հէ ՀԷՀՏել Թէ Այդ ԲԱՆերուՆ ՄԱՆԱԿՑուԹիւՆ Կը ԲերԵՆ ՏեղացիՆերուՆ ՀԵՏ ՍփիւռքԷՆ ԱրուԵՍՏագԷՏՆեր, ԽուՄԲեր Ալ: ՄոռցուԱԾ ՀԷՆ ԲԱՆԱկի Հարքերը, ՄԱՆկաՏուՆեր, ԾերԱՆՏոցՆերը ՈրՆց ՀԱՄԱր Եւս ՄիլիոցաուՄՆեր Կը կազՄԱկերպուԻՆ:

Այդ ԲոլորԸ ուրԱխԱՆալու ՏրամադրուԹիւՆ Մը ՍտեղԾելով ՀԱՆդԵրձ, զարՄԱՑՆող ԵՆ: ԱՆով Որ ՔիՀ Մը ՀԱՏ «կ'ըՏՆԱԿը ՏԱՔ, փորը կուՀԱՏ»ի Ախալ ՏպԱւորուԹիւՆը Կը ձգԵՆ: ԱՆՀո'ւՀԱ ԱրդԱր Է ՀրՃուիլ ԾանՀօԹ պԱյմԱՆՆերու ՄԷՋ ԲոլորուԱԾ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ՏաՒԹիւ. ՍԱԿԱՅՆ, Այդ ՀրՃուԱՆքԻՆ ՄԷՋ ԱւԷլի ՄԵԾ Է յԵՏաԴԱյ ԵրԹիՆ ԵրԱՀԻՆքի բԱԺինը, քԱՆ՝ ԱՆցԱԾԻՆ ԱՆդրադԱրձը: Իսկ ՈրպԷս յաՋորդ ՏԱՍՆԱՄԵԱԿՆԵրուՆ ԵրԱՀԻՆքԸ, 2001 ՍԵպՏԵՄԲեր 21–Ի ՆՇուՄՆերուՆ ԾրԱԳիրը Կարեւոր ԲացԱԿԱՆեր ուՆի, քԱՆի Որ ՀԱյաՍՏԱՆ Չէ ՏԱկաւԻՆ ԱյՆ Երկիրը Զոր Կ'ուզԷՆՔ, Կ'ուզԵՆՔ Որ ՊԼայ: ՆերկայԻՆ ու ՅանկուԹիւՆՆերուՆ ՀԱյաՍՏԱՆԻՆ ՄիՋԵւ ԻՆԱԱԾ ՏարբերուԹիւՆը ԱՆՀրաԺԵՇՏաբար ՊէՏՔ ուՆի ԵրգիՆ, ՊարիՆ, ՅուՑԱՀԱՆդԷսիՆ ՀԵՏ ՏԱՍՆԱՄԵԱՅ ՀաՇուԵյարդարի Մըն Ալ: Այդ ՄԿԿԻՆ Է Որ Կ ԲացԱԿԱյի ՏաՍՆԱՄԵԱԿԻՆ ՆՇուՄՆԵԱՍուԱԾ ԾրԱԳիրԸ:

ԱշխարհԻ ՀզօրԱգՈՆՆերուՆ ՉԱՀԱպԶրդուԹեԱՆ ԹիրԱԼ ԳօՄիՆերԸՆ ԿովկԱսի ՄԷՋ, ԱյՆՔԱՆ ռԱզՄԱՎԱրԱԿԱՆ դիրքի ՏԷՐ Երկիրը ՏԱկաւԻՆ ՉփԱկուԱԾ ՂԱրԱԲԱղի ՀարՍԻՆ ու ԱրտԱգաղԹի վերքԻՆ ՄիՋԵւ, Չէ կրՑԱԾ ԿԱՅուն ՀաւԱՏԱՍԱրԱկՉուԹիւն Մը ՀաՍՏատել. ու Խոտոր ՀաՄԵՄատականը օրՀ օր Կը ՉԵՀՏուի: ՏընՏեսական ԱՆԱպԱՀով վիճԱկը, ԱՆՀաւԱՏարուԹիւՆՆերը ՉԵՆ ԱյՆՔԱՆ Այդ ՀաՄԵՄատականին պատճԱՌՆերը, ՈրքԱՆ՝ ՄեԾԱՄԱսՆուԹեԱՆ ԲաԺին ՃգուԱԾ ԱՆտարբերուԹիւՆՆ ու ԱրհԱմարհԱՆքը ԱյՆ փոքրԱմԱսՆուԹեԱՆ ԿողմԷ ՈրուՆ ՄիԱԿ ԱրԺԱՆիքը ԵղԱԾ Է ստեղԾուԱԾ չփոԹիՆ ՄԷՋ ՀոՐ քարերու վրԱյ ոՃք ԴՆելու ՃարպԻկուԹիւՆը: Այդ ԿարողուԹեԱՄԲ ԱՆ ՄԵԾ ՄԱսով իրԵՆ վերԱպԱհԱԾ Է խԱկԱՆ ԱռԱՆձՆԱՀՆորհԱւԼի ԿարգԱվիճԱկ Մը, ի ՀաՀիւ ընդՀԱՆուրԻՆ պատկԱՆելու կոչուԱԾ բարիքՆերու: ՄԻԱցողՆերու եւ ՄեկՆԱԾՆերու կողմԷ յոդՆեցՆելու չԱփ ԿրկՆուԱԾ Է Թէ ԱրտԱգաղԹիՆ ԲուՆ

ՋԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ՓՈՐԹՈՒԿԱԼ

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

ՓորԹուկալ 91·600 քառակուսի քիլոմեթր տարածուԹեամբ ոչ չատ ՄԵԾ պետուԹիւն Մըն Է Որ Կը գրաւէ Իպերական Թերակղզիին ԱրեւմտեԱՆ ՄԱՍը, մօտ 11 միլիոն ԲնակչուԹեամբ: Յամաքային ՄԻԱԿ սահմանակիցն Է Սպանիան: ԵրկրիՆ աշխարհագրական դիրքը պատճառ եղած Է Որ ԱՆ՛ ողջ պատմուԹեան ընԹացքին կռնակ դարձնէ Եւրոպային եւ իր հայեացքը ուղղէ ծովերուն եւ ովկիանոսներուն: Երկիրը դաշտային Է մեծամասնուԹեամբ, դէպի սպանական սահմանը բարձրաւանդակներով, եւ հիւսիսը՝ ոչ բարձր լեռներով: ԿլիմԱՆ տաք եւ ցամաքային Է ներսերը եւ հարաւը միջերկրականեան, իսկ ԱւԷլի Մեղմ եւ խոնաւ են ատլանտեան ափի շրջանները: ԵրկրիՆ հին ԱՆուՆն Է ԼուզիթԱՆիա Որ Ս. դարուն դարձած Է հռոմէական նահանգ, ապա տեւած վանտալներու եւ վիզիկոթներու ասպատակուԹիւՆները եւ հոսկ արաբական Իրաւումը (Է. – ԺԱ. դար): 1094–ԻՆ ՊուրկոՆյի Հենրիկ իշխանը, երկրիՆ ՄԵԾ ՄԱսը ազատագրած ըլլալով ԱրաբներԷՆ, կը դառնայ առաջին Թագաւորը ՓորԹուկալի Որ իր ԱՆուՆը կ'ՎտԱՆՀ լատիՆներէՆ ՓորԹո ԳալլԷՆն, երկրին հիւսիսը գտնուող քաղաքին ԱՆուՆէՆ: ԺԵ. դարու վերջաւորուԹեան արդէՆ փորԹուկալցի ԱՆվեհեր նաւաստիՆները կը սկսին տիրել ծովերուն եւ ովկիանոսներուն: Այսպէս՝ առաջին պարԹօլոմէոս ԴիաԺ 1487–ին կ'ԱՆցՆի հարաւային ԱփրիկԷի Բարեյուսոյ հրուանդանը, Ալվարօ Քապրալ կը յայտնաբերէ Պրազիլի ծովերքը եւ կը տիրէ երկրին. իսկ ՎազքօԱ ՏԱ ԳԱՄԱ հաստատելէ ետք ավրիկեան տիրոյԹները Անկոլա եւ Մոզամպիք, կ'ուղղուի ՄինչԵւ ՀնդկաստաՆ եւ ՃաւոՆ: ՓորԹուկալցի ՄԱկԷլլա (ՄաժելԼան) առաջին նաւարքն Է որ կը կատարէ աշխարհի շրջանը 1520–ին, յայտնաբերելով իր ԱՆուՆը կրող նեղուց, հարաւային Ամերիկայի հարաւային ծայրը:

ԺՋ. դարուն երբ դեռ ոչ Անգլիա եւ ոչ Հոլանտա կը հետաքրքրուէին ծովերով, ՓորԹուկալ Սպանիոյ հետ կը կիսէր ծովերու տիրոյԹը եւ կը դառնար Եւրոպայի երկու ԱՆդրծովեան կայսրուԹիւՆներէՆ Մին: Շուտով, ծովերէՆ կատարուԱԾ առեւտուրը, ԱփրիկԷի սեւամորԹներուն գերեվաճառուԹիւՆը, բայց ՄԱՆաւԱ՛ՆդՊրազիլի ոսկին երկիրը կը հարստացնէն: Այդ ԹուականներէՆ Մինչեւ ԺԲ. դարու վերջաւորուԹեան, ԹագաւորՆեր եւ իշխաՆՆեր կը կառուցանէն ԱՆհԱՄԱր եկեղեցիներ եւ վանքեր, պալատներ եւ դղեակՆեր որոՆք Մինչեւ այսօր կը կազմեն երկրին ճարտարապետական հարստուԹիւՆը: ԱՆոՆցմէ ՈՄԱՆք քարաշէՆ գոհարներ ԵՆ իսկապէս: ՍաԿայՆ այդ դուրսէՆ եկած ոսկին զարկ Չէ տուած երկրին ՆերքինՏնտեսուԹեան: Իր կարգին ծովերուՆ եւ ԱՆդրծովեան հողերու տիրանալու ելած ԱՆգլիան, 1703ին ՄեԹուէՆի դաշնագրով իր ձեռքը առած Է երկրին առեւտուրը, ՄԱՆաւԱՆդ ՓորԹոյի եւ ՄատէռԱի հռչակաւոր անոյշ գինիներու արտադրուԹիւՆն ու վաճառքը: 1755 Նոյեմբեր 1–ին, արտակարգօրէՆ ահեղ երկրաշարժ Մը քար ու քանդ ըրած Է ԼիզբոՆն ու երկրին հարաւային ՄԱսը: ԱւԷլի քան քանի տարի վարչապետ ՄնացԱծ Փոմփալի Ջանքերը հաղիւ հասած ԵՆ երկիրը վերաշինելու:

ԺԹ. դարը ճակատագրական պիտի ըլլար ՓորԹուկալի ՀԱՄԱր: Հակառակ որ ՓորԹուկալ չէզոք Մնաց ՆափոլէոՆեան պատերազմներուՆ, 1807–ին ֆրանսական զօրքերը երկիրը գրաւեցին: Թագաւորը ՅովՀաննէս Զ. Պրազիլ փախաւ եւ վերադարձաւ ՄիայՆ ՆափոլէոՆի անկումէՆ ետք: Այդ տարիներուՆ ԱՆգլիացիները սկսան ԱւԷլի ՄիջԱՄուխ ըլլալ երկրին ՆերքինՆ գործերուՆ: ԳահաԺառանդ Պեդրոս իշխանը որ Պրազիլը չատ սիրած էր, 1822–ին ինքզինք հռչակեց այդ երկրին կայսր եւ հրաժարեցաւ ՓորԹուկալի ԹագԷՆ: Այդպէսով ՓորԹուկալ կորսնցուց իր ՄեԾագոյն եւ չատ հարուստ պաղուԹը:

Երկիրը զուրկ ըլլալով հանքային չատ ՄԸ հարստուԹիւՆներէ, ինչպէս՝ ածուխ եւ երկաԹ, ՄասնաԿից չհրցաւ ըլլալ եւրոպական չատ ՄԸ երկիրներու ճարտարարուեստական յեղաշրջման: Մնաց երկրագործական երկիր Մը, ՄԵԾ – ՄԵԾ կալուածներով եւ աղքատ գիւղացի բնակչուԹեամբ որուն բաւագոյն ապագայի Մը հեռանկարը արտագաղԹի էր ՄիայՆ, դէպի գաղուԹները, ՄԱՆաւԱՆդ դէպի Պրազիլ: 1834–ին Մարիա ԹագուհիՆ ձեռնարկեց չարք Մը բարեկարգուԹիւՆներուՆ. արտաքսեց ՅիսուսեաՆները եւ եկեղեցական ուրիշ կարգեր: ՍահմանադրականՓակուեցան կաԹողիկէ եկեղեցւոյ իրաւասուԹիւՆները, պարպուեցան վանքերը եւ անոնց հողերը բաժնուեցան գիւղացիներուՆ: Սակայն, այս քայլերը բաւական չեղան եւ իր ղրացի Սպանիոյ պէս ամբողջ ԺԹ. դարուՆ ՓորԹուկալ վերիվայրումներ ապրեցաւ: Ի վերջոյ, 1908–ին, ընդդիմադիրները սպաննեցին Գարլոս Ա. Թագաւորը եւ դահաժառանգ իշխանը: Անոր յաջորդեց իր երկրորդ զաւակը ՄաՆուէլ Բ. որ դահակալեց հազիւ երկու տարի: 1910–ին ՀանրապետուԹիւն հրուչակուեցաւ: ԱՆգլիոյ ճնշումին տակ, ՓորԹուկալ Մասնակցեցաւ Ա. աշխարհամարտիկ համաձայնականներու կողքին: Տիրող ընկերային թէ քաղաքական խլրտումները ի վերջոյ 1928ին յանգեցան Սալազարի բռնապետական վարչակարգին, նախ իր պՎհաւորուԹեամբ Մինչեւ 1968, իսկ իր մահէՆ յետոյ ալ Մինչեւ 1974 զօրավար ԿարմոՆայի պեկավարուԹեամբ: Աֆրիկէի ֆրանսական եւ անգլիական բոլոր գաղԹավայրերը տիրացած էին անկախուԹեան. վորԹուկալեանները վաԹսունական ԹուականներուՆ կեՀիլայի սկսան իրենց ազատուԹեան տիրանալու համար. մղուած ձըլճղական մարտերը արիւնաքամ ըրին արդէՆ իսկ աղքատ երկիրը, եւ պինուտրականները եղան 1974 Ապրիլ 25–ի հարուածով բռնապետուԹիւՆը տապալողները: Ռազմական ելք կարելի չէր եղած. միակ ելքը գաղուԹներու անկախուԹիւն չնորհելն էր: ՓորԹուկալ կծկուեցաւ նախ ինքզինք իր վրայ: ԺողովրդավարուԹեան առաջին քայլերը դժուար եղան: ՇնորՀիւ Մարիո Սոարէսի – նախ վարչապետ, ապա նախագահ – երկիրը ի վերջոյ յաղԹահարեց այդ դժուարուԹիւՆները եւ 1986–ին անդամակցեցաւ Եւրոպական ՄիուԹեան:

*
**

ՏակաւԻՆ ասկէ երեք տասնամեակ առաջ, ՓորԹուկալ ճանչցուած էր որպէս ԱրեւմտեԱՆ Եւրոպայի ամէնէն ազատ ու յետամնաց երկիրը: ԲռնապետուԹեան աւելի քան չորս տասնամեակները տնտեսական ոչ մէկ նշանակալից յառաջդիմուԹիւն չէին բերած: ՄասնաւանդՎաԹսունական ԹուականներէՆ սկսեալ տեղի ունեցած էր բնակչուԹեան զանգուածային արտագաղԹ դէպի Եւրոպայի ճարտարարուեստականացած երկիրները, ինչպէս ԳերմանիԱ, ՊելժիԱ, ՋուիցերիԱ եւ մասնաւանդ ֆրանսա, ուր ՓորԹուկալցիներու ԹիւԸ կը հաշուի մէկ միլիոն: ՓորԹուկալցին իր հաստատուած երկիրներուն մէջ ճանչցուած Է որպէս ոչ – աղմկարար կամ խռովարար, այլ՝ խաղաղ, բարի եւ մասնաւ՛նդ աշխատասէր տարր: ԱՆոնց մեծամասնուԹիւՆը իր խնայողուԹիւններով գեղեցիկ առանձնատուներ եւ յարկաբաժիններ չինել տուած Է իր երկրին մէջ, եւ կը վերադառնայ հոն, վայելելու համար դուրսը վաստակած հանգստեան թոշակը: Եւրոպական ՄիուԹեան անդամակցուԹիւՆը մեծ բարիք բերաւ ՓորԹուկալի: ԱՆկէ ասդացուած վարկերը եւ յատկացումներըՆպաստեցին երկրին լիարդիականացումին: Այսօր ամէնուրեք կարելի Է հանդիպիլ հսկայական չինուԹիւՆներուՆ. ճամբաներ, մայրուղիներ, կամուրջներ, հիւԼէսակայաններ, եւ այլն: ՋրօսաշրջուԹիւՆը մեծ թափ ստացած է. խմբականին քով անհատականն ալ, եւ կարելի Է հանդիպիլ ամէն երկրէ եկած կառքերու, ՄինչեւԼիսաստանի ու ԼիԹուանիոյ համարանիշ կրողներու: Մեծ եւ արդիական պանդոկներու ցանց Մը պատած Է ամբողջ երկիրը: Ճիշդ Է որ երկրին պատմա – մշակուԹային հարստուԹիւՆները մէկ կողմէ, ծովը եւ կլիմայական յատկուԹիւՆները միւս կողմէ, ամէնէն տուեալ ունին մարդ քաշելու համար, եւ զբօսաշրջուԹիւնը դարձած է երկրին եկամուտի կարեւոր աղբիւրներէն մին: Այցելուին ուշադրուԹիւՆը կը գրաւէ համատարած մաքրուԹիւՆը: ՓողոցներուՆ պուրակները անգամ ունին իրենց պարտէզպուրակը, տուներուՆ ծաղկապարտէզները ընդհանրապէս: ՈւշադրուԹիւն գրաւող այլ կէտ մըն ալ ինքնաշարժներու քանակուԹիւնը, նորուԹիւնը եւ միջին կամ ՄԵԾ չափերու ըլլալն Է: Թէեւ տեղացին կը գանգատի կեանքի սղուԹենէն, նուազագոյն կենսականը ֆրանսայինի կէսը ըլլալով: Վերջի երկու տասնամեակներուՆ, անդրադարձուԹիւՆը գրեթէ վերացած Է, կեանքի մակարդակը բաւական մօտեցած եւրոպական միջինին: ՉկայՆ, կամ գոնէ տեսանելի չեՆ աղքատուԹեան նշաններ, մեր ըրջապտոյտի ընԹացքին տեսանք միմիայՆ երկու փոքրիկ հիւղանաններ, այն ալ բնակուած ՄարոքկոերէՆ կամ խափչիկներէ:

ՓորԹուկալի դրեթէ ամէն քաղաքի կամ աւանի մէջ, դրացարաններու, դպրոցներու, մարզարաններու, հիւանդանոցներու ճարու Թէ այլ հաստատուԹիւՆներու ճատներուՆ, կարելի Է հանդիպիլ մարմարէ տախտակներու վրայ գրուած Է «Այս հաստատուԹիւՆը նուէրն Է կամ նորոգուած ու բարեկարգուած Է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկուԹեան կողմէ»: Այսպէս ուրեմՆ, պատմուԹեան մէկ քամահաճոյքով, երկրին զարգացումին նպաստած են ոչ միայՆ Եւրոպական ՄիուԹեան յատկացումները, այլ նաեւ ՀայուՆ հանճարին ու վաստակին արդիականացումին:

ՍՏԵՓԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ԳՆԱԼԸի Եկեղեցւոյ դարաւանդն ու մերձակայ դաշտերը լեցուցած են չուրջ 700 ուխնդիրներ, Օգոստոս 4–ին, լսելու համար Լուսաւորիչ երգչախումբին համերգը: Երգչախումբը, իր մասնակից 35 անդամներով ելոյթ ունեցած է Յակոբ Մամիկոնեանի մականին ներքեւ: Ներկայ եղած է հիւրարար քաղաքս պոնուղ երուսաղէմի Հայոց պատրիարքը՝ Թորգոմ Արք.: Բացման խօսքը արտասանած է Գնալըի ամրան ձեռնարկներու կազմակերպիչը՝ Մաքրուհի Պ. Յակոբեան: Ան յայտնած է որ այս համերգը օրուան երկրորդ ձեռնարկն էր, առաջինը բլլալով Արամեան – Ունճեան վարժարանի աշակերտներու նկարչական ցուցահանդէսը: Երգչախումբին յայտագիրը սկսած է Մ. Եկմալեանի «Ոյուրը Մուրք»ով ու յայտագրին ամբողջ երկայնքին ներկաները խրախուս տպաւորուած են: Համերգի ատարին փակման խօսքը արտասանած է Թորգոմ պատրիարք: Նոյն օրը, բացումը կատարուած էր Արամեան – Ունճեան վարժարանի աշակերտներու նկարչական ցուցահանդէսին, որ իր ներշնչումը առած է 1700–ամեակի պատպարէն: Ձեռնարկին բացումը կատարելու հրաւիրուած է Թորգոմ պատրիարք, իսկ բացման խօսքը արտասանած է Մաքրուհի Պ. Յակոբեան: Ան յայտնած է, որ 1995-էն ի վեր, Արամեան Սանուց Միութեան երդիքին տակ հիմնուած է «Միրանի Գօտի» անուան տակ նկարչական դասընթացք մը:

*
**

ՄՈՆՐԻԱԼի Ռիթըմոնի Ցոյն օրթոտոքս Մայր Տաճարին մէջ, Յուլիս 22–ին, Հոգեհանգստեան պաշտօն կատարուած է Կիպրոսի վրայ Թրքական արշաւանքին 27-րդ տարելիցին առթիւ: Յատուկ պատարագի հաւաքոյթ մը տեղի ունեցած է նոյն կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ հիպրոցի եւ օտար 250 հոգիի: Ներկաներու կարգին էին տեղւոյն Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներ եւ Մոնրէալի քաղաքապետարանի անդամ Տիկին Մէրի Զաուշեան – Տէրոս: Յանուն Հայ Դատի յանձնախումբին խօսք առած է Մանուէլ Քէօսէեան, որ կարճ ուղերձով հրաւիրած է Ցոյները հաստատ մնալու իրենց արդար դատին ու պայքարին վրայ ու թուած է այն պայմանները զոր Թուրքիա պէտք է լրացնէ անդամակցելու համար Եւրոպական Միութեան, ի չարս որոնց Թրքական բանակին կիպրոսէն քաշուիլը եւ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը: Յաջորդաբար արտայայտուած են կիպրական զաղութի նախագահը՝ Մայքըլ Քիփրիանու, Կիպրոսի Գանատայի պատուոյ հիւպատոսը, Յունաստանի հիւպատոսը, կիպրական դատի նախագահը, Գանատայի յունական Գոնկրէսի նախագահը, հուսկ՝ յունական Եկեղեցւոյ Գանատայի հոգեւոր պետը՝ Սոթիրիոս Արք.: Հաւաքոյթի աւարտին բանաձեւ մը կարդացուած է, ուր կը պահանջուի ՄԱԿ–էն ճնշում բանեցնել Թուրքիոյ վրայ, որպէսզի գործադրութեան դնէ ցարդ տրուած որոշումները:

*
**

ԱԹԻՆՔի պատական եւ բայօթեայ հին Թատրոնին մէջ, Յուլիս 22–ին ներկայացուած է Վ.Եւթիի «Ռեքուիէմ»ը: Համերգին մասնակցած են Աթէնքի պետական նուագախումբը (100 նուագող) եւ Հայաստանի պետական ակադեմական երգչախումբ (84 երգող) դեկավարութեամբ վրացի երաժիշտ եւ խմբավար Ճանսուիք Քահիձէի: Մեծ տպաւորութիւն գործած է Հայաստանի երգչախումբը որակով եւ կեցուածքով: Բեմ հրաւիրուած է դեկավար Ցուիճ. Չէքիճեան եւ արժանացած բուռն ծափահարութիւններու:

*
**

ՊԻՑՒՕԶի (Վոսփորի արեւելեան կողմը) Ս. Նիկողայոս եկեղեցւոյ հիմնադրութեան 225–րդ տարեդարձին առիթով, ըստ աւանդութեան տեղի ունեցած է արարողութիւն մը, Օգոստոս 5–ին որու նախագահած է, ապա նաեւ քարոզած է Շհան Արքեպիսկոպոս:

ՊԱՀՔԱՆՆԵՐՈՒ ՄԱՐԳԱՐԷՈՒՀԻՆ

Թիրանայի մէկ բլուրին վրայ մեծ չէնք մը կայ որուն չուրջը զետեղուած ցուցատախտակներ մարզասիրական արձանագրութիւններ կը կրեն: Շէնքին մէջ կը գործէ «Ատուաձային կապի օրրան» միաբանութիւնը: Ան որպէս կրօնական եւ բարեսիրական կազմակերպութիւն արձանագրուած է 1994–ին, ստանալով իր դեկավարութեան համար հոգեբանական եւ բժշկական ձիրքերը կիրարկութեան դնելու արտօնութիւնը: Այդ դեկավարութեան կը կոչուի Էլէանորա: Այդպէս ընդունուած է, թէեւ ոչ ոք տակաւին լրատուներու մէջ վկայած է առողջապահական անոր արտակարգ ձիրքին: Նոյն ձեւով, ոչ ոք պանգատ յայտնած կամ քննադատած է տարօրինակ այդ կնոջ ընթացքը:

Այդ կինը, ինչպէս 1996-ին ցրուած կենսագրութիւնը կ'ըսէ, 37 տարեկան է. վաչկի ուսումէն ետք հիւսուածեղէնի գործատան մը մէջ աշխատած է որպէս որակի քննիչ: Միեւնոյն ատեն բանաստեղծութիւններ կը գրէ: Բարձր ջերմութեամբ հիւանդութենէ մը ետք կը պնդէ թէ արտերկրացի ծերուկ մը տեսած է որ իրեն սորվեցուցած է առողջանալ եւ ուրիշներ ալ առողջացնել:

1987 – 1989-ին ժողովները կը կազմակերպէ իր տունը, որոնց ընթացքին ինք կ'երկարի սենեակին մէջտեղը, հաղորդակցութեան մէջ մտնելով պէքթաշի հայրիկի մը հետ որպէսզի լուծում գտնէ մարդոց հարցերուն: Իր հետեւորդները օրէ օր կը բազմանան եւ անկարելի կ'ըլլայ այլեւս պիրենք լնդունիլ երկու սենեակնոց իր տան մէջ: Ան ատեն չմնայ կու տայ նոր տուն մը եւ պաշտամունքի չէնք մը: Կ'ըսուի թէ Ալպանիոյ երեք միլիոն բնակչութեան մէջ աւելի քան միլիոն մը հետեւորդ ունի ան: Ոչ միայն կը բուժէ, նաեւ մարգարէութիւններ կ'ընէ, շաբաթը օրինակի համար թէ այլ մոլորակներու վրայ կեանք կայ, թէ մօտ օրէն սիտայի զարմանը պիտի պտնուի, եւ այլն:

Մարդկային միամտութի՞ւն, թէ չհասկցած ուանդուածի:

ՔԱՂՀԱՆ

ՍՏԱՅԱՆՔ

ԱՆԳՈՑՆ ՏԵՐԵՒՆԵՐ
(Արձակ էջեր)

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Լոս – Անճըլըս, 2001

Ա Ս Կ Է Ա Ն Կ Է

ՔԱՄԻՔԱՁՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Անճնասպանական արարքներու հեղինակներու պատրաստութիւնը յատուկ ծէսի մը կը հետեւի: Նախքան ռճրափորձը, կամաւորին մարմինը կ'օծուի եւ կը թուրմնաւէտուի: Նոր զգեստներ կը կրեն, յաճախ նոյն օրն իսկ գնուած: Տեսակ մը «հարանիք» է մահուան հետ, ուր սեռն ալ իր դերն ունի: Անոնք որոնք պոհաբերութեան կը պատրաստեն երիտասարդ շոհատանները (նահատակ) անոնց կը խոստանան որ երբ դրախտ հասնին, ամէն մէկը 70 կոյսեր պիտի ունենայ իր սպասաւորութեան տակ: Այսպէս, մէկը որ մխայն վիրաւորուած էր, երբ արթնցած է հիւանդանոցը, հարցուցած է հիւանդապահուհիին թէ դրա՞խտ հասած է:

Կամաւորները միայն աղքատ ընտանիքներու զաւակ չեն: Ուսանողներ կան, նոյնիսկ ամուսնացած այրեր:

Իսրայէլացիք, սկիզբը, կարծած են, որ անճնասպանական գործողութիւնները միայն լիբանանեան չիի Հեզպոլլային կը վերաբերին եւ սիւննի Պաղեստինցիները դէմ են: Մինչդեռ, պարզուած է որ լիբանանեան ճիւղը կրցած է խորապէս ազդել Համասի եւ Իսլամական ճիհատին վրայ: Ան ասոր ճանի որ կիներն ալ թեկնածու են:

ԿԻՏԻԿԵԱՆԻ ՆՈՐ ՖԻԼՄԸ

Ռոպէր Կէտիկեան, որ հեղինակն է «Մարիւս եւ Ժանէթ» եւ «Քաղաքը հանդարտ է» ֆիլմերուն, ներկայիս կը պատրաստէ «Մարիժօ եւ իր երկու սէրերը» ֆիլմը, իր սովորական գործընկերներով: Դերակատարներն են իր կինը՝ Արիան Ասքարիտ, ինչպէս նաեւ Ժերար Մէյլան եւ Ժան – Փիէր Տարուսէն: Պատմութեան հեղինակն ալ Կէտիկեանն է, կին մըն է որ միաժամանակ երկու սէր կ'ապրի:

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՆ ԾՈՒՏ

Մայրը յանդիմանում է որդուն.

– Ինչպէ՞ս չես ամաչում. դու դեռ հինգերորդ դասարանում ես, բայց արդէն ծխում ես:

– Ցետոյ ի՞նչ նախարար հայրիկն էլ էր հինգերորդ դասարանում արդէն ծխում:

– Ճիշդ է, բայց, մի մոռացիր, որ նա այդ ժամանակ արդէն 25 տարեկան էր:

ԹԻ 17 ԽԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԱՐԱԳՈՑԸ ԿԸ ՊԱՏՌԻ

Շաբաթ մը ետքը տարօրինակ իրողութիւն մը պատահեցաւ, որ չատ մեկնութիւններու տեղի տուաւ եւ կասկածանքներու ծնունդ տուաւ:

Բայց նախքան այդ եղելութիւնը պատմելը, պէտք կը զգանք ուրիշ դէպք մը պատմել մեր ընթերցողներուն. դէպք մը, որ թերեւս անուշադրակի կերպով կապ ունի մեր քիչ մը վերը ակնարկած իրողութեան հետ:

Զօրեքշաբթի իրիկուն մը, Պապը Ալի Տատէսի, ձըղալ օղլու եօքուչու Հայկ Կօշկարեանի գրաւճառանոցը նստած էին խանութին տէրը եւ Աչոտ Քէչէեան, երբ ներսհասակ, խիստ վայելչօրէն հագուած, գեղանի ու երիտասարդ կին մը ներկայացաւ եւ հարցուց.

– Արդեօք պարոն Գրիգոր Թորոսեանը հո՞ս է:

– Ոչ, դեռ չեկաւ, – փութաց պատասխանել Կօշկարեան, – բայց կու գայ...

– Ե՞րբ...

– Յայտնի չէ, թերեւս հիմա, թերեւս մէկ ժամէն:

Գեղանի կինը վարանոտ չարժում մը ըրաւ:

– Հրամմեցէ՛ք, նստեցէ՛ք, – ըսաւ Կօշկարեան, որ հրապուրուած էր կնոջ գեղեցկութենէն, – չեմ կարծեր, որ ուշանայ, որովհետեւ «Կիկօ»ի համար ձեւապիր պիտի բերէր:

– Հոգ չէ, կէս ժամէն կրկին կը հանդիպիմ, – պատասխանեց դեղուհին, – հոս մօտերը գործ մը ունիմ... մէկը պիտի տեսնեմ, կրկին կու գամ... մխայն թէ կը խնդրեմ, եթէ պարոն Թորոսեանը գայ, ըսէք իրեն, որ սպասէ:

– Շատ լաւ, կը հաճի՞ք ձեր անունը ըսել, որպէսզի հաղորդեմ իրեն:

– Պէտք չի կայ, – պատասխանեց կինը ժպտելով, – որովհետեւ եթէ անունս ալ տաք՝ օգուտ մը չունի, քանի որ պիտ չի ճանչնայ... ըսէք միայն, որ կինն մը կ'ուզէ հետը տեսնուիլ:

– Շատ աղէկ, տիկի՛ն.. բայց կրնայիք հոս սպասել:

– Չէ՛, չնորհակալ եմ, ինչպէս ըսի, ուրիշ մարդ ալ պիտի տեսնեմ:

– Ինչպէս որ կ'ուզէք ուրեմն:

Գեղուհին հագիւ մեկնած էր՝ Հայկ Կօշկարեան գոչեց.

– Վա՛յ չունչդ տորդի, ի՛նչ ազուր կնիկ էր, ո՞վ է արդեօք:

– Ես կարծեմ այս կինը կը ճանչնամ, բայց չեմ յիշեր կոր, – ըսաւ Աչոտ Քէչէեան, – ինծի ալ այնպէս կու գայ, որ Շիտակ Համբան հանդիպած եմ իրեն:

– Բայց ի՞նչ գործ ունի Կիկոյին հետ:

– Ո՞վ գիտէ, քիչ մը ետքը կը հասկնանք:

– Պատուաւոր կին մը կ'երեւայ կոր:

– Հիմա պատուաւոր կինը անպատուէն դանդազնելը չատ դժուար է:

– Ինչ որ ալ ըլլայ, վտանգ չի կայ, չատ դեղեցիկ կին մըն էր...

– Հիմա միտքս ինկաւ, - գոչեց Աչոտ Քէչէեան, – յիշեցի, թէ ո՞ւր տեսած եմ դինքը... կանաչ հովանոցով կինն է:

– Կանանչ հովանոցով կինը ո՞վ է – հարցուց Կօշկարեան:

– Կին մը, որ քանի մը ամիս առաջ Ազգային ժողովին եկած էր եւ ամէնուս հետաքրքրութիւնը չարժեց... այսօր տարբեր արդուզարդ ըրած էր, ու մէկէն ի մէկ չկրցայ ճանչնալ դինքը:

– Կանանչ հովանոցով կի՞նը, այդ ի՞նչ խորհրդաւոր բան է:

– Իրաւցնէ քիչ մը խորհրդաւոր է, – պատասխանեց Աչոտ, – երբէք այդպիսի կին մը չէր տեսնուած Ազգային ժողովի ունկնդիրներուն մէջ.. եւ ի՞նչ նիւտի եկած էր, գիտե՞ս...

– Ի՞նչ նիւտի, – հարցուց Կօշկարեան:

– Թիւ 17 խաֆիէի մասին վիճաբանութիւն պիտի ըլլար այդ օրը... միայն թէ նիւտը դռնփակ տեղի ունեցաւ, եւ ինքն ալ ստիպուեցաւ դուրս ելլել սրահէն: Ցետոյ տեսանք դինքը բակին մէջ, նոյնիսկ կը յիշեմ, որ Սեպուհ Ակունիին հետ խօսքի բռնուեցաւ:

– Այդ բոլոր մանրամասնութիւնները որեւէ որոշ տեղեկութիւն մը չեն ի տար իր վրայ:

– Հիմա որ Կիկոյին հետ գործ ունի, դիւրաւ կրնանք հասկնալ իրեն ո՛վ կամ ի՛նչ ըլլալը:

– Արդեօք «Կիկօ»ին մէջ բա՞ն մը պիտի գրել տայ, – հարցուց Կօշկարեան:

– Հաւանական է, – պատասխանեց Աչոտ Քէչէեան:

– Այն ատեն տեսնուինք, – ըսաւ Հայկ Կօշարեան խնդալով, – պարապ տեղը բան մըն ալ չեմ գրել տար:

– Թերեւս կը վճարէ...

– Դրամը ի՞նչ պիտի ընեմ, ուրիշ կերպով կը համաձայնինք հետը:

Այս երեւակայական սակարկութեամբ զբաղած էր Կօշկարեան, երբ Գրիգոր Թորոսեան ներս մտաւ:

– Քեզի մխիթէ մը ունիմ, ի՞նչ կու տաս, եթէ ըսեմ, – հարցուց Կօշկարեան:

– Նախ հասկնամ, թէ ի՞նչ տեսակ բան է, ըսաւ Կիկօ:

– Ո՛չ, չեմ կրնար ըսել... միայն ըսէ՛, թէ ի՞նչ պիտի տաս:

– Եթէ իրաւցնէ մխիթէ մըն է, քեզի իրիկուն Պալապանին քանի մը գարեջուր կը խմցնեմ:

– Գարեջուրով լմննալիք բան չէ...

– Ուրեմն մխիթէդ քեզի պահէ:

– Հաւատա, որ կ'արժէ ինչ որ տաս, – միջամտեց Աչոտ:

– Ուրեմն դո՞ւն ալ գիտես կոր, – ըսաւ Կիկօ:

– Ա՛յո՛, անիկա ալ գիտէ, – ըսաւ Կօշկարեան:

– Երկար մի՛ ընէք, ըսէք, տեսնեմ ի՛նչ է խնդիրը, ով գիտէ՝ ինչ պարապ բան է:

– Խնդիրը այն է, որ չատ դեղեցիկ, չատ չիք հագուած կին մը եկաւ քեզ փնտռեց, քիչ մը ետքը դարձեալ պիտի գայ...

(Շար. 42)

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱԶԻ
ՓԱՐԻԶԻ
ԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ
ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալորէա կը դասաւանդուին. – հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք:

Նոր արձանագրութիւններու համար գիմել Պրիժիթ Պառսեեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին:

— ● —

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի թուականն է Յորեքշաբթի Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին:

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Յորեքշաբթի, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16:

Աշակերտները կրնան օգտուիլ Յորեքշաբթի կէսօրուան ճաշէն:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝

04 . 78 - 60 . 47 - 18

թիւին:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— ● —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux

Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53

Date à retenir

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une **SOIREE DANSANTE**
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre «G a ï d z a g' s»**

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

50ème Anniversaire du Pèlerinage à SAINT-GREGOIRE de TALLARD

ԹԱԼԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ՏԱՐԵԿԱՆ
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Sous l'égide de
l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France
et avec le concours de
l'**Association Cultuelle des Arméniens de GAP et des Hautes Alpes**

Dimanche 9 septembre
à 10h30 — La Sainte Messe sera célébrée par
Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens de Rhône-Alpes
l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens du Sud de la France
Avec la participation de la Chorale SAHAK - MESROP
sous la direction de
Khatchig YILMAZIAN
à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre
Renseignements & Réservations :
— **Cathédrale Arménienne de Marseille, tél. : 04 91 77 84 70**
— **Association Cultuelle des Arméniens de GAP, tél.: 04 92 51 71 80 / 04 92 51 00 87**

—— Participation aux frais ——
Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

«ՅԱՌԱՋ»Ի ընթացիկ ազդերու սակագինը

Մահազդ	800	(956,80)
Հոգեհանգիստ	700	(837,20)
Շնորհակալիք	700	(837,20)
Հարսնիք–Նշանտուք	700	(837,20)
Ծննդ.	700	(837,20)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թ·Վ·Ա· (տե՛ս· փակագծի մէջ ընդհ· գումարը):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, մինչեւ մէկ քառորդ սիւնակ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8–րդ (12–13 տող) մնացեալին:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան:



le domaine de chamerolles

45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 héctares avec étang, hébergement en châlets tout confort pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F
(selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.

Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

les Coupons d'Alsace

21, av. d'Helvétie
25203 MONTBÉLIARD
Tél. 03 81 94 38 10

Z.I. Les Arbletiers
25400 AUDINCOURT
Tél. 03 81 35 51 93

65, avenue Jean Jaures
90000 BELFORT
Tél. 03 84 21 62 66

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 ֆր.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 ֆր.
ԲԱՑՏՈՒՄԸ 75 ֆր.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 ֆր.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ 75 ֆր.

եւ

«ՅԱՌԱՋ - 50»

(Ծաղկափաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 120 ֆր.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի:

Թղթատարի ծախք՝ 30 ֆր., հատոր գլուխ:

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre S P I T A K
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

P r o g r a m m e : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 22
MERCREDI
22 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՀԱՅԿԱԿԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում) 1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ _ ԹԻՒ 20·234 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.234

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

Օգոստոս 20 / 21)

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Հոկտեմբեր 27-ի դատավարութեան Օգոստոս 20-ի նիստին ղեկավար ամբաստանեալ Ն. Յունանեան պատասխանած է ղեկերու ընտանիքներուն փաստաբան Ե. Ալաջանեանի հարցումներուն, առընչուած՝ Ազգային Ժողովի փոխ – նախագահ Ե. Բախչեանին եւ նախարար Լ. Պետրոսեանին: Առաջինին մասին ըսած է թէ իր վերաբերումով փոխած է երբ տեղեկացած է որ ան մեռած է Լ. Տէր – Պետրոսեանի իշխանութեան: Զինքը վերջին անգամ տեսած է Սեպտեմբեր 11 կամ 13-ին (1999) երբ զացած է Ազգային Ժողովի տարածքը ուսումնասիրելու: Ահաբեկչութենէն եաք տեղեկացած է որ Ե. Բախչեան ալ սպաննուած է. ինք կրակած ընթացքին չէ տեսած թէ որո՛ւ վրայ կը կրակէ: Ոճրագործը ըսած է որ Ե. Բախչեանի սպանութիւնը իր ծրագրին մէջ տեղ չունէր:

Ն. Յունանեան Լ. Պետրոսեանի մասին ալ կրկնած է նոյն բաները. զայն ճանչցած է 1988-էն եւ երեք – չորս անգամ հանդիպած: Չէ դիտցած որ ոճիրին օրը ան եւս զահլիճը կը գտնուէր. զայն ըսպաննելու մտադրութիւն չէ ունեցած:

*
**

ՊԱՊԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԻՆ ՄԱՍԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատու կեդրոնը յայտարարութեամբ մը հերքած է «Ձէնիթ» միջազգային լրատու գործակալութեան լուրը թէ Մոսկուայի Ալէքսի Բ. պատրիարքը կրնայ ըլլալ որ ներկայ գտնուի Երեւանի նոր տաճարին օծումին, այդ պատճառով Ցուվհ. Պօղոս Բ-ի այցը տեղի կ'ունենայ աւելի ուշ, քանի որ Ալեքսի Բ. չի փափաքիր պապին հանդիպիլ: Էջմիածնի տեղեկատու կեդրոնը անհիմն կը կոչէ լրատուածը, անոր մէջ սադրանք ալ նշմարելով: Կը չեշտուի թէ Պապին Հայաստան այցին թուականը որոշուած է Սեպտեմբեր 25 – 27 եւ ոչ մէկ փոփոխութիւն հնդրոյ առարկայ է:

*
**

ԱՐԿԱԾԵԱԼ ՀԱՆՐԱԿԱՌՔԻՆ ՎԱՐՈՐԴԸ Կ'ԱՌՈՂՋԱՆԱՅ

Օգոստոս 9-ին Երեւան – Սեւեփնաւան ճամբուն վրայ արկածեալ հանրակառքին վարորդը Սէյրան Վարդանեան կ'ապաքինի: Սեւեփնաւանի հիւանդանոցէն յայտնած են թէ անոր ողնայարը վնասուած ըլլալով հանդերձ, անդամալուծութեան պատանիշ չունի եւ վիճակը բաւարար կ'նկատուի: Արկածին առընչութեամբ բացուած հետաքննութեան շրջանակին մէջ ան երկու անգամ հարցաքննուած է:

*
**

ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԱԾ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Ռ. Քոչարեան Օգոստոս 20-ին ընդունած է Հայ աւետարանական համաշխարհային խորհուրդին պատուիրակութիւնը: Ողջունելով նոյն խորհուրդին տարեկան ժողովին Հայաստան գումարումը, նախագահը գոհունակութիւն յայտնած է որ Սփիւռքի կազմակերպութիւններուն համար Հայաստան կը դառնայ հաւաքատեղի, գործունէութեան կեդրոն: Պատուիրակութեան անդամները չեչտելով որ իրենց նպատակը Հայաստանին օգնելն է, կոչած են թէ քրիստոնէական աւանդութիւններու պահպանման ուղղութեամբ գործունէութիւն կը տանին, կ'գործակցին Հայ Առաքելական եւ Կաթոլիկ եկեղեցիներուն հետ եւ գործօն մասնակցութիւն կը բերեն 1700-ամեակի նշումներուն:

*
**

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՓԱՐԻԶԵԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

ՍԵՂԱՆԻ ԹԷՆԻՍ – Կիներու մրցաշարք

Գիւմրի – Փարիզ՝	3 – 0
Պէյրութ – Փարիզ՝	3 – 0

ՍԵՂԱՆԻ ԹԷՆԻՍ – Այրերու մրցաշարք

Գիւմրի – Փարիզ՝	3 – 0
Վանաձոր – Փարիզ՝	3 – 0
Փարիզ – Լոնտոն՝	2 – 3

ՎՈԼԷՅԲՈԼ – Կիներու մրցաշարք

Ստեփանակերտ – Փարիզ՝	3 – 0

ՎՈԼԷՅԲՈԼ – Այրերու մրցաշարք

Փարիզ – Ախալքալաք՝	3 – 0

ՖՈՒԹՊՈԼ

Լոնտոն – Փարիզ խաղը տեղի չէ ունեցած:

*
**

ԲՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԷՆ

Հայաստանի բնութեան թանգարանը որ կը գտնուէր Մաշտոց պողոտային վրայի պարսկական երկնագոյն մզկիթին մէջ, փոխադրուած է թիւ 73 դպրոցին շէնքը: Փոխադրութեան պատճառը այն է որ մզկիթը նորոգութեան մէջ է: Թանգարանին տնօրէն Իրեն Փրանգեանի համաձայն, տարիներ շարունակ չէնքէ չէնք տեղափոխուելու հետեւանքով թանգարանը մշտական ցուցադրութիւն չունի եւ եթէ չէնքի խնդիրը արմատապէս չլուծուի, թանգարանին վերատին զործելը լուրջ հարցեր կը ստեղծէ: Բնութեան թանգարանը հիմնուած է 1960-ին. հոն ներկայացուած են Հայաստանի բուսական ու կենդանական աշխարհները:

*
**

ՅԻՍՆԱՄԵԱԿ ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի

Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին յիսնամեակը Օգոստոս 20-ին ուղերձներով չնորհաւորած են նախագահ Ռ. Քոչարեան, Ազգային Ժողովի նախագահ Ա. Խաչատրեան եւ վարչապետ Ա. Մարգարեան: Ռ. Քոչարեան թեղմնաւոր գործունէութիւն մաղթած է Կաթողիկոսին, համոզում յայտնելով որ Մայր Աթոռը անոր հովուապետութեան նորոգուած չունչով կ'իրականացնէ իր հոգեւոր ծառայութիւնը, յանուն հայ ժողովուրդին: Ա. Խաչատրեան Գարեգին Բ-ի անձին մէջ ողջունած է Հայոց 131 կաթողիկոսներուն արժանի հետեւորդը եւ անոնց ազգապահպան գործունէութեան ճշմարիտ չարունակողը, «յիշարժան հայրապետութիւն» մաղթելով: Իսկ վարչապետ Ա. Մարգարեան չեշտած է կաթողիկոսին կատարած մեծ դերը անկախութեան հռչակումէն եաք եկեղեցի – պետութիւն յարաբերութիւններու սերտացման, ժողովուրդը յուզող խնդիրներու լուծումին մէջ:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԳԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ, 75 հակատուբիացի քրիստոնեաներ ազատ արձակուեցան Օգոստոս 20-ին, 3 միլիոն ւլբանանեան ոսկի փրկագինի փոխարէն: 17 ուրիշներ միշտ արգելափակուած են, անոնք կը պատկանին զինուորական Լիբանանեան ուժերու չարժումին (լուծուած 1994-ին): Քրիստոնեաներու դէմ, Օգոստոս 7-ին ծայր տուած ձերբակալութեանց արշաւը զատապարտուած էր արտասահմանի մէջ: Եւրոպական Միութիւնը իր զարմանքը յայտնած էր իւ տես մարդկային իրաւանց չարգանքի խախտումին, Պապն իսկ, Օգոստոս 19-ին, ըսած էր որ ժողովրդավարութեան եւ ազգային ինքնիշխանութեան արժէքները պէտք չէ գոհուին քաղաքական անցողակի չահերու: Լիբանանեան կառավարութիւնն ալ, թէեւ չապաղումով, զատապարտած էր չարդարացուող ղեղծարարութիւնները: Օգոստոս 20-ին, Ազահովութեան տնօրէնութենէն 300 մեթր անդին ռճրափորձ մը կը գործուէր, առանց զոհ պատճառելու, բանակը կ'արդարացնէր տեղեկատուութեանց իր ազատարկութեանց կատարած ձերբակալութիւնները, ոգեկոչելով «սիոնական մեծ գաւի մը» առաջքն առնելու նախզգուշական միջոցները: Ամէն պարագայի մէջ, կացութիւնը լարուած կը մնայ: Պէյրութի չուրջ Սուրիա իր զօրքերը կը ծաւալէ եւ 15 հրթռայիլեր ալ ուղղուած են դէպի Պէքաայի դաշտավայրը: Ձերբակալուած են երկու քրիստոնեայ լրագրողներ, որոնք կասկածելի անձեր, որ կապ կը պահեն Իսրայէլի հետ:

ՍԱՆ – ՍԵՊԱՍԹԻԷՆԻ մէջ, արտասովոր ոճրափորձի մը հետեւանքով 62 տարեկան կին մը մեռած է եւ իր երկու թոռնիկներն ալ ծանրօրէն վիրաւորուած: Թակարդուած էր երախայի խաղալիք կառք մը եւ երբ մանուկը ձեռք առած է, պայթումը տեղի ունեցած է, 16 ամսու մանուկը հաւանաբար կորսընցնելով իր երկու աչքերը: Այս ոճրափորձը անպատման ԷԹԱ-ի չի վերագրուիր, ո-

(Շար·ը Դ· էջ)

ՄԱՀ ԵՐԳԻՉ ՅՈՎՀ. ԲԱԴԱԼԵԱՆԻ

Օգոստոս 20-ին, Երեւան մէջ իր մահկանացուն կնքած է հանրածանօթ երգիչ Յովհ. Բաղալեան:

Արուեստագէտը, որ իր տպաւորիչ ձայնով համբաւ չահած էր Հայաստան եւ արտասահման, ծնած էր 1924-ին Շաւարին (Պարսկաստան): 1946 _ 1949 տարիներուն չաճախած էր Երեւանի Ռոմանոս Մելիքեան երաժշտանոցը: Ճոխ երգացանկ մը ունէր եւ բացառիկ տաղանդով կը մեկնաբանէր հայկական ժողովրդական եւ գուսանական երգեր, ինչպէս նաեւ դասականներու գործեր (Մ. Եկմալեան, Կոմիտաս, Մելիքեան):

Դեռ անցեալ տարի չրջապտոյտ մը կը կատարէր Միացեալ – Նահանգներ իր արուեստագէտ զաւկին հետ:

Պետական յանձնախումբ կազմուած է իր թաղումին կարգադրութիւններուն համար:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐՈՒՆ ՀԵՏ

ՏԱՍՆԱՄԵԱԿ ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՔԱՅՔԱՅՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ - 1991

ՕԳՈՍՏՈՍ 19·– Թաս պտըծակալութիւնը կը հաղորդէ որ Միխայէլ Գորբաչով փոխարինուած է փոխ – նախագահ Կենատի Եանայեւի կողմէ: Փուչիստները պաշարման վիճակ կը հռչակեն վեց ամսուան համար, դրամնտութիւն կը հաստատեն եւ հրթռայիլեր Մոսկուա կը մըտնեն: Խորհրդարանը ապաստանած, Բ. Ելչին կոչ կ'ընէ քաղաքացիական անհնազանդութեան եւ ընդհ. գործադուլի: Ռուսաստանի, Ուկրանիոյ եւ Բելառուսիոյ հանքագործները աչխատանքը կը դադրեցնեն:

ՕԳՈՍՏՈՍ 20·– 100 հազար հոգի ցոյց մը կ'ընեն Լենինգրատ, մինչ 180 զրահապատ կառքեր դէպի քաղաք կ'ուղղուին: Մոսկուայի մէջ, 50 հազար ցուցարարներ խորհրդարանին չուրջ ընթացք չեն տար իրիկուան յայտարարուած լուսարգելքին:

ՕԳՈՍՏՈՍ 21·– Մոսկուայի մէջ ցուցարարներ կը փորձեն կեցնել հրթռայլերը քարկոծելով եւ քոքթէյլ մոլոտովներ նետելով: Երեք երիտասարդ ցուցարարներ կը ճզմուին հրթռայլերու տակ: Խատոնիա եւ Լատվիա իրենց անկախութիւնը կը հռչակեն: Պաշտպանութեան նախարարը՝ Դ. Եազով կը հրահանգէ զինուորներուն զօրանոց վերադառնալ: Գիչերը, Մ. Գորբաչով ոը Ղրիմի իր ապարանքին մէջ մեկուսացած էր փուչիստներուն կողմէ, Մոսկուա կը ժամանէ եւ կը յայտարարէ որ ամբողջովին ան է կացութեան:

ՕԳՈՍՏՈՍ 22·– Փուչիստները ձերբակալուած են:

ՕԳՈՍՏՈՍ 24·– Գորբաչով կը հրաժարի Համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղարի իր պաշտօնէն եւ կը հրաւիրէ կեդրոնական կոմիտէն որ ինքզինք լուծէ: Առաժամեայ կառավարութիւն մը կը կազմուի: Օգոստոս 24-ի եւ 31-ի միջեւ, Ուկրանիա, Բելառուսիա, Մոլտաւիա, Ադրբեջան, Ուզբեկիստան եւ Կրղզիստան իրենց անկախութիւնը կը հռչակեն:

ՕԳՈՍՏՈՍ 29·– Խորհրդային Խորհրդարանը կը դադրեցնէ կուսակցութեան գործունէութիւնը եւ կը համակերպի ինքզինք լուծարքի ենթարկելու:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 21· – Խորհրդային 11 Հանրապետութիւններ Ալմա – Աթայի մէջ համաձայնագիր մը կը ստորագրեն վերջ տալով Խորհրդային Միութեան եւ հիմնելով «Անկախ պետութեանց հասարակապետութիւնը» (ՀԱՊ):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 25·– Նախագահ Գորբաչով կը հրաժարի:

*
**

Գորբաչով, այսօր, գրեթէ մոռցուած դէմք մըն է Ռուսաստանի մէջ, բայց, այս միջոցին մանաւանդ թափանցիկ են իր յայտարարութիւնները արտասահման: Լոս – Անճըլըս Թայմզ-ի տուած մէկ հարցազրոյցին մէջ, ան կ'ըսէ թէ պետական հարուածին դրդիչներն էին ԿՈ – կէ – Պէ-ի պետը՝ Վլադիմիր Կրիուչկով եւ Պաշտպանութեան նախարար Եազով: Իտալական «Սթամփա» թերթին ալ կը խոստովանի թէ կը ցաւի որ «Բ. Ելչինը դեռսպան չէ նչանակած անկարեւոր երկրի մը մէջ, երբ ան, 1987-ին հեռացուած էր Մոսկուայի Ա. քարտուղարի պաշտօնէն:

ՀԲԸՄ-Ի ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ (1923 - 1937) ԿԱՊԵՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Այս կամ այն կազմակերպութեան թէ գաղութի պատմական ակնարկները գըրուած են, բայց Սփիւռքի պատմութեան համապարփակ ու ճշգրիտ ներկայացումը դառնալու տարմանուած աշխատանքը տակաւին դոյութիւն չունի: Կարելի է առարկել, որ վերջին կէս դարը «պատմութեան» դատական սահմանումէն դուրս կը մնայ՝ ժամանակային առումով: Սակայն, ո՛չ իսկ առաջին կէս դարը գիտակցօրէն լուսաբանուած է:

Օրինակ, ամէնէն կարեւոր կազմակերպութիւններէն մէկը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (Հ. Բ. Ը. Մ.), մինչեւ հիմա պատմութիւն չունի: Նկատի ունինք, ի հարկէ, ակզբնաղբիւրներու գիտական օգտագործումով, արհեստավարժ մօտեցումով գըրուած անաչառ պատմութիւն մը, ո՛չ թէ փառաբանական չարաղրութիւն մը:

Այդ բացը զոցուելու ուղղուած է հայրենի պատմաբան Էդուարդ Մելքոնեանի ձեռնարկած աշխատութիւնը, որմէ անջատուած բաժին մը, գրեթէ անկոխ շրջանի մը մասին, վերջերս լոյս տեսած է «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը Խորհրդային Հայաստանում 1923 – 1937 թթ.» (ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ – Նոյեան Տապան», Երեւան, 1999, 202 էջ) խորագիրով: Հրատարակութիւնը հովանաւորուած է մասնաւոր գործարար Արկադի Վարդանեանի կողմէ, որ 1999 – 2000-ին գործօն անուն մըն էր Հայաստանի քաղաքական բեմին վրայ:

Գիրքը կառուցուած է դիւանային հաւաքածոներու, ինչպէս եւ մամուլի հիմամբ: Հոմ նիւթի հսկայ առատ մը շրջանառութեան մէջ դրուած է համօրէն չարաղրուած ու վերլուծուած ձեւով:

Կնճռոտ ու մութ ժամանակաշրջան մըն է, երկու «տարօրինակ» դերակատարներով. սփիւռքահայ «բուրժուական» կազմակերպութիւն մը եւ «պրոլետարական» հանրապետութիւն մը: Ինչպէ՞ս կրնային դոյակցիլ ու գործակցիլ, իւ՞նչ պայմաններու տակ:

Ներածական գլուխը համառօտ կերպով կը ներկայացնէ Հ. Բ. Ը. Մ.-ի հիմնադրութիւնը եւ առաջին տարիներու պատմութիւնը: Կենսագրական տուեալներու եւ վերլուծական դիտողութիւններու ընդմէջէն, հեղինակը կը յիշէ, որ հեղինակները բարձրակարգ մասնագէտներ էին, եւրոպական քաղաքակրթութեան ծանօթ ու անոր ծիրէն ներս աշխատող – ինչ որ «յատակագրել, աւելի իրապաշտ էին դարձրել իրենց գաղափարները հայ ժողովրդի զարգացման ուղիների վերաբերեալ» (էջ 20) – եւ մինչեւ 1906 կուսակցական չէին (անոնցմէ երեքը՝ աւելի ուշ, Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան անդամ դարձան), ինչ որ ապահոված է անաչառ գործունէութիւն մը ի նպաստ ամբողջ հայութեան: Գլուխը կը փակուի Հ. Բ. Ը. Մ.-ի 1914 – 1922 թուականներու աշխատանքին թռուցիկ ակնարկով:

Խորհրդայնացումէն ետք, նոր իրավիճակ մը ստեղծուած է: Հ. Բ. Ը. Մ.-ը Հայաստանի Հանրապետութեան եւ Հ. Ց. Դաշնակցութեան հետ չէր գործակցած, ու ֆինանսական լայն միջոցներ ունեցող կազմակերպութիւնն էր: Այս զոյգ պատճառներով, խորհրդահայ վարչակարգին համար քիչ թէ շատ ընդունելի գործակից մը կրնար ըլլալ: Ու թէեւ Պօղոս Նուպարին եւ իր գործընկերներուն համար «խորթ էին Հայաստանում հաստատուած նոր կարգերը» (էջ 24), բայց, քանի որ այդ գոյութիւն ունեցող միակ Հայաստանն էր, գաղափարական նկատումները երկրորդ կարգի կ'անցնէին՝ իրենց համոզումով, մինչ միւս կողմը Հ. Բ. Ը. Մ.-ը կ'ենթարկէր գաղափարախօսական բացայայտ չարժակումներու:

1921 Հոկտեմբերին, Հ. Բ. Ը. Մ.-ը կոչ մը կը հրապարակէ Հայաստանի մէջ աշխատանք սկսելու մասին: Ճիշդ երկու տարի ետք, 1923 Հոկտեմբերին, պաշտօնական արտօնութիւն կը ստանայ: Առաջին ձեռնարկը որբերու տեղափոխումն էր: 1924 Հոկտեմբերին, Եափայէն (Պաղեստին) 15 – 20 տարեկան 250 որբերու առաջին եւ վերջին խումբը կը մեկնի: Անկախութեան շրջանէն (ուր արդէն 50 հազար էին), որբերուն վիճակը «աննախանձելի» (էջ 33 – 34) կը մնար, ինչ որ որեւէ բարելաւումի յոյս չէր ներշնչեր արտասահմանէն ժամանելիք խումբերուն համար. 1925-ին, որբերը Հայաստանի բնակչութեան 6 առ հարիւրը կը կազմէին:

1925 Յունիսին, Հ. Բ. Ը. Մ.-ը պայմանագիրստորագրած է՝ որքանոց (չէ իրագործուած), ասան (Նոր Եդեսիա, անյարմար վայր մը կառուցուած. 1929 – 1934-ին վերաչինուած է էջմիածնի մօտերը) եւ մայրանոց («Դարոյհի Յակոբեան», աւարտած է 1929-ին. 1937-ին՝ անուանափոխուած) հիմնելու համար: 1929-ին «Մարի Նուպար» ակնարուժարանը բացուած է, որուն անունն ալ 1937-ին փոխուած է: 1930-ին կառաղարուժարան մը կառուցուած է: 1931-ին կնքուած պայմանագրին համաձայն, 1936-ին Բարեգործականի Տունը չինուած է Աբովեան փողոցին վրայ, ուր բնակարան ստացած են օրուան անուանի քանի մը մտաւորականներ: Մասնագէտներ Եւրոպա հրաւիրուած են ու համալսարանական կեդրոնի աշխոյժ մը եղած է: 1930 – 1936-ին, Մելքոնեան Ֆոնտը 30 հայագիտական մեծարժէք երկերու հրատարակիչը եղած է (Ա. Ճառեան, Մանանդեան, Աբեղեան, Թորամանեան, եւ այլն), Հանրային Գրադարանի (Ազգային Գրադարան) եւ տպարանի չինութեան նախաձեռնողը:

Միութիւնը այս ամբողջ աշխատանքը իրագործած է առանց մասնաճիւղ հիմնելու, միայն գործավարի մը՝ Հայկակ Գարակէօզեանի (1928 - 1937) ներկայութեամբ: Պատճառը հասկնալի էր. անդամները պիտի չկարենային իրենց անդամատուրքը վճարել, եւ, աւելին, ո՛չ Հայաստանի քաղաքացիները պիտի կրնային անդամագրուիլ արտասահմանեան «բուրժուական» կազմակերպութեան մը եւ ոչ ալ այդ մասնաճիւղերը պիտի համաձայնէին դառնալու բոլշեւիկեան գործիքներ:

Հ. Բ. Ը. Մ.-ի գործունէութիւնը, ի հարկէ, առանց քննադատութեան չէ անցած: Խորհրդահայ վարչակարգին հետ իր ունեցած պարբերական վերիվայրումներէն զատ, արտասահմանի մէջ ենթարկուած է Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ որոշ ազդեցիկ անհատներու, ինչպէս Եսայի Կարիկեանի, յարձակումներուն (էջ 54 - 57): Անկէ կը պահանջուէր, որ իր բոլոր միջոցները Հայաստանի տրամադրէր եւ իր ունեցած մայր գումարնեբու անձեռնմխելիութեան պայմանը վերացնէր:

1926-ին կը սկսի 250·000 տոլարի հանդանակութիւն մը՝ ասան մը կառուցելու համար: Տնտեսական վերահաս ճգնաժամը պատճառ եղած է, որ 1929-ին հաւաքուած գումարը 153·000 տոլարի հասնէր միայն: Ամէն պարագայի մէջ, 1930-ին, մեծ ձգձգումներէ ետք, համաձայնագիր կը կնքուի ու կը սկսի Նուպարաշէնի կառուցումը, որ չափազանց դանդաղ ընթացած է՝ մեծ չինութիւններ ըլլալու, աշխատուժի եւ չինանիւթի տեւական պակասի եւ այլ պատճառներով:

1920 – 1930-ական թուականներուն, Հ. Բ. Ը. Մ.-ը մեծապէս աջակցած է ներգաղթի գործին, գլխաւորաբար՝ ճամբորդութեան ծախքերու վճարումով: Մելքոնեան հարցին լայնօրէն անդրադարձած է, քննելով նաեւ կազմակերպութեան եւ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի (ՀՕԿ) ոչ միշտ բարեացակամ յարաբերութիւնները (էջ 65 – 88):

Հեղինակին աչքէն չէ վրիպած չատ ազմկալից պարագայ մը. Պօղոս Նուպարի յաջորդին՝ Գալուստ Կիւլպէնկեանի կարճատեւ նախագահութիւնը (1930 – 1932), որ վերջացած է իր հրաժարականով: Անոր պատճառը 1931 Հոկտեմբերին Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Ա. քարտուղար Աղասի Խանջեանի ճառն էր, որ Գ. Կիւլպէնկեանը կը մեղադրէր Սուրիոյ մէջ «Ֆրանսիական իմպերիալիզմ»ի եւ Հ. Ց. Դաշնակցութեան հետ միասին «Ազգային օճախ»ի մը ծրագրումով, որ իբրեւ թէ հակախորհրդային նպատակներ ունէր: Պատմաբանը քննած է այս անհիմն մեղադրանքին ծալքերը, որոնց թելերը մէկ կողմէ Մոսկուա կը տանին եւ միւս կողմէ՝ Երեւանի ներկուսակցական պայքարին (էջ 89 – 105): Ան դիտել տուած է, որ ճառը պատճառ աւելի, կիւլպէնկեանի համար հրաժարականի առիթ էր. իր որոշումին մէջ դեր խաղացած են նաեւ իր գործունէութեան որոշ անյաջող կէտեր (բոլոր հիմնադրամներուն միացումը, Հ. Բ. Ը. Մ.-ի չուրջ Դաշնակցութիւնը բոլորելու ծրագիրը, տնտեսական ճգնաժամէն բխած անորոշութիւնը (էջ 106 – 108): Աւելի ուշ (1936 – 1937-ին եւ 1948-ին) Գ. Կիւլպէնկեան փորձած է նոյնիսկ տուժութիւններ կատարել Երեւանի Պետական Համալսարանին եւ Մայր Աթոռին, որոնք քաղաքական պատճառներով անիրագործելի մնացած են:

Վերջին եւ ամէնէն երկար գլուխը (էջ 120 - 186) կ'անդրադառնայ Հ. Բ. Ը. Մ.-ի եւ Հայաստանի ներքաղաքական պայքարին կապին (1935 – 1937): Այս բաժինը կը բացայայտէ նախ Բերիայի դրածոյ Արսէն Եսայեանի քաղաքական ճապկումները՝ Խանջեանի եւ օրուան դեկավարութեան քննադատութեամբ, որոնց հետեւանքով ան նշանակուած է Ներգաղթի Կոմիտէի եւ ՀՕԿ-ի նախագահ: Այդ պաշտօններուն գլուխն է, որ Եսայեան ընդարձակ գաղտնի զեկուցագիր մը հասցէագրած է Կոմկուսի քարտուղար Ա. Ամատունիին (Յունուար 1936), ուրկէ բացայայտ կը դառնայ խորհրդահայ դիւանակալութեան անճարակութիւնը՝ ըստ փիւռքէն ստացուած դումարները ըստ պատշաճի տնօրինելու: Առաջին անգամն է, որ սեւով ճերմակի վրայ գրուած է ինչ որ արդէն ամէն մարդու յայտնի էր: Այս բոլորին հետեւանքով, կարգ մը ծրագիրներ մնացած էին թերատրտ (օրինակ Նուպարաշէնը), դժգոհութիւն յայտնելով Սփիւռքահայոց, առաջին հերթին՝ Հ. Բ. Ը. Մ.-ի զեկավարութեան մօտ: Շատ ընորոշ է զեկուցագրին հետեւեալ հատուածը. –

«Այժմ Բարեգործական Միութիւնը իրեն տուած խոստումների եւ նախագծերի համաձայն, պահանջում է կառուցուղ օբյեկտների լուսանկարները, ինչը, հասկնալի պատճառներով, ես չեմ կարող կատարել: Բարեգործական Միութիւնը նոյնիսկ իր օբյեկտների նկարահանման համար երեւան էր ուղարկել 3000 մ. կինոժապաւէն, որը ստացուել եւ օգտագործուել է այլ նպատակով» (էջ 130· ընդգծումը մերն է):

Ա. Եսայեան չատ յանդուգն քայլ մը առած է՝ ներգաղթողներուն հետ կապուած ծրագիրները յառաջ տանելու համար: Տեսնելով, որ Բերիայէն յոյս չկար, որոշած է անոր վրայէն անցնիլ եւ Յունիս 8-ին դիմած է Ստալինին: 1936 Յունիս 21-ին Ստալին եւ Մոլոտով նամակ գրած են Հայաստանի ղեկավարութեան (Ա. Խանջեան արդէն «անձնասպան» եղած էր), մէկ տարուան պայմանաժամ տալով, որպէսզի անաւարտ ծրագիրները ամբողջանային: Տարի մը ետք, ծրագիրներէն գրեթէ վերջացած էին...:

Այդ միջոցին, սկսած էր մաքրագործումը, որ իր գագաթնակէտին հասած է Սահակ Տէր-Գաբրիէլեանի սպանութեան պատրուակով (Օգոստոս 1937): «Աղտրոցկիստ» չգոյ եւ առասպելական խմբի մը ստեղծումը պիտի ծառայէր, որ Ստալինի բոլոր իրական թէ հնարաւոր հակառակորդները ձերբակալուէին ու ըպանուէին կամ Սիբերիա ղրկուէին: Եսայեան Նոյեմբեր 1936-ին ձերբակալուած է եւ Յունուար 1937-ին՝ գնդակահարուած. Յուլիսին նոյն բախտին արժանացած է Գարակէօզեանը, որ ձերբակալուած էր Յունիս 1937-ին: Այս թուականէն, Հ. Բ. Ը. Մ.-ի գործունէութիւնը դադրած էր:

Մելքոնեան վերջաբանին կը բացատրէ այս երկու տարիներուն գլխապտոյտ պատճառող դէպքերը եւ ստալինեան բռնութեան դժոխային մեքենային գործունէութիւնը: Գլուխը կը փակուի իր ծիծաղելիութեան մէջ խորհրդանշական դէպքով մը (էջ 184 – 185). – Յուլիս 1955-ին Գարակէօզեանի յետմահու արդարացումի ընթացքին, Ներքին Գործոց նախարարութեան հարցում կատարուած է ՊԱԿ-ի (Պետական Անվտանգութեան Կոմիտէ) կողմէ՝ Հ. Բ. Ը. Մ.-ի գործունէութեան մասին: Պատասխանը յիշած է... Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը (1881 – 1924), եւ որ «...մութեան անձնակազմում Հ. Գարակէօզեան չի յայտնաբերուել»: Ահա երկրորդ դիմումին պատասխանը. –

«ՀՅԴՀ ՆԳՄ արխիւային բաժինը տեղեկացնում է, որ Հայաստանում խորհրդային իշխանութեան տարիներին "Հայկական Բարեգործական Միութիւն" "Բարեգործական" դոյութիւն չի ունեցել: Նրա մասին վերջին տեղեկութիւնները վերաբերում են 1921 Թուականի Փետրուար – Մարտ ամիսներին, այսինքն դաշնակցական աւանտիւրայի շրջանին»:

Շուրջ 15-ամեայ համագործակցութենէ եւ դրամական ու քարոյական մեծապուճար ներդրումներէ ետք, միութեան պատասխանքը հաւասարեցուած էր զերոյի: Իր աւարտին հասած Նուպարաշէնը վերակոչուած էր... Սովետաշէն, որ միայն 1990-ին իր նախկին անունը պիտի վերստանար: Վերջաբանին մէջ, Մելքոնեան կ'անդրադառնայ 1989-էն ետք Հ. Բ. Ը. Մ.-ի վերընձիւղումին Հայաստանի մէջ:

Այս հատորը, Հ. Բ. Ը. Մ.-ի պատմութեան մէկ էջին վերականգնումէն անդին, ցոյց կու տայ թէ ինչպէ՞ս անոր ղեկավարութիւնը փորձած է ամէն միջոցով իր կարելի օժանդակութիւնը բերել Հայաստանին եւ ինչպէ՞ս Հայաստանի ղեկավարութիւնը առաւելագոյն չափով օգտագործած է այդ օժանդակութեան փափաքը՝ յաճախ չհասկնալու աստիճանին: Երկու «տարօրինակ մահճակիցներ» (strange bedfellows) մէջեւ գոյակցութիւնը միայն կրնար վերջանալ ըստ փիւռքի յուսախաբութեամբ եւ իր ներդրումին լման «մոռացումով»:

Հիմա ակնատես ենք Սփիւռք – Հայաստան գոյակցութեան նոր հանգրուանի մը: Պայմանները փոխուած են, բայց եւ այնպէս, անցեալի դասերը միշտ կրնան ուսանելի ըլլալ:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Նիւ Ճըրզի

ՍՊԱՌԱԾ «ԱՄՕԹՐ ԽԼՍԷ»...

ԿԱՐՊԻՍ ՋՐԲԱՇԵԱՆ

Պատկանում եմ այն «բերքին» որի ծննդեան թուականը թաւալանի հեռացել է...: Կարճատեւ աշունից, արդէն ձըմբան չեմին հասանք: Տարօրինակն այն է, որ մեր մանկութեան, պատանեկութեան շրջանի ղէպքերը ու դէմքերը վերածնւում են մեր մտքում, ինչպէս ջրի մակերես են յայտնւում խղի կաթիլները:

«Մեր մանկութեան զաւակներն ենք» ասել է Ֆրանսացի անուանի գրողը...

Այնպէս որ կեանքիս զարնան օրերին կառչած է մնում մեծ-մայրս: Միտքս մինչ չոյում են նրա խօսքերը, պատգամները, սաստերը, Վասպուրականի հոտաւէտ լեզուով: Մանաւանդ նրա կըրքոտ վկայութիւնները Կլոր Տարի կռուի եւ 1915-ի Վանի ապրիլեան ճակատամարտի մասին: Յոստովանեմ՝ միշտ չէր որ հասկանում էի իր խրատների իմաստը: Աւելի ուշ լինճ տպաւորեցին: Վաղուց ընդունել ենք, որ Հայաստանից դուրս, Հայի ապրած երկիրը օտար երկիր է: Սակայն անցնող տարիները, հետզհետէ, անհարազատը դարձնում են հարազատ:

Իւրացրել ենք մեր «երկրորդ հայրենիք»ի սովորութիւնները, մտայնութիւնը եւ բնականաբար տեղական լեզուն, իսկ մեր արեան լեզուին՝ զայն վերածելով «աղքատ ազգականի»: Հայաստանցին մի դուցէ համարի՝ «Դա՛ բնական պրոցէս ա»: Իսկ Ֆրանսացի Տիւփոնն, ժպիտը չուրթին, պիտի հատատի՝ «C'est la vie»:

Մինչդեռ, իրականում, Սփիւռքում ապրող Արեւմտահայի ինքնութիւնը, նրա ազգային ժառանգութիւնը չեն թոյլատրում ձուլուել, հալուել, ոչնչանալ: Ինչպէ՞ս կարելի է ապրել երկու հայրենիքների միջեւ, երկու մշակոյթների միջեւ, երկու լեզուների միջեւ, երկու հոգեբանութիւնների միջեւ, երկու կեանքերի միջեւ, երկու աշխարհների միջեւ, երկու ժամանակների միջեւ, երկու տարիքների միջեւ, երկու սերունդների միջեւ, երկու ապրումների միջեւ, երկու հոգիների միջեւ, երկու մարմինների միջեւ, երկու արիւնների միջեւ, երկու սրտերի միջեւ, երկու ուղեղների միջեւ, երկու աչքերի միջեւ, երկու ականջների միջեւ, երկու ձեռքերի միջեւ, երկու ոտքերի միջեւ, երկու թոքերի միջեւ, երկու երիկամների միջեւ, երկու լեարդերի միջեւ, երկու ստամոքսների միջեւ, երկու ենթաստամոքսային գեղձերի միջեւ, երկու ...

Ինչպէ՞ս կարելի է ապրել երկու հայրենիքների միջեւ, երկու մշակոյթների միջեւ, երկու լեզուների միջեւ, երկու հոգեբանութիւնների միջեւ, երկու կեանքերի միջեւ, երկու աշխարհների միջեւ, երկու ժամանակների միջեւ, երկու տարիքների միջեւ, երկու սերունդների միջեւ, երկու ապրումների միջեւ, երկու հոգիների միջեւ, երկու մարմինների միջեւ, երկու արիւնների միջեւ, երկու սրտերի միջեւ, երկու ուղեղների միջեւ, երկու աչքերի միջեւ, երկու ականջների միջեւ, երկու ձեռքերի միջեւ, երկու ոտքերի միջեւ, երկու թոքերի միջեւ, երկու երիկամների միջեւ, երկու լեարդերի միջեւ, երկու ստամոքսների միջեւ, երկու ենթաստամոքսային գեղձերի միջեւ, երկու ...

Ինչպէ՞ս կարելի է ապրել երկու հայրենիքների միջեւ, երկու մշակոյթների միջեւ, երկու լեզուների միջեւ, երկու հոգեբանութիւնների միջեւ, երկու կեանքերի միջեւ, երկու աշխարհների միջեւ, երկու ժամանակների միջեւ, երկու տարիքների միջեւ, երկու սերունդների միջեւ, երկու ապրումների միջեւ, երկու հոգիների միջեւ, երկու մարմինների միջեւ, երկու արիւնների միջեւ, երկու սրտերի միջեւ, երկու ուղեղների միջեւ, երկու աչքերի միջեւ, երկու ականջների միջեւ, երկու ձեռքերի միջեւ, երկու ոտքերի միջեւ, երկու թոքերի միջեւ, երկու երիկամների միջեւ, երկու լեարդերի միջեւ, երկու ստամոքսների միջեւ, երկու ենթաստամոքսային գեղձերի միջեւ, երկու ...

րում որ նա լքի – հրաժարուի իր ար-
մաններէ վայել առաքինութիւններէն՝
դառնայ amnésique ֆրանսահպատակ
հայ…:

Ի վերջոյ իմանալու համար թէ ո՞ւր
ենք գնում, հարկաւոր է որ չմոռանանք
ո՞րտեղից ենք եկել: Մանաւանդ երբ
Աբեմատհայը զիտակցի թէ ինչո՞ւ է
դառել ոչ թէ դաղթական, այլ՝ արմա-
տախիլ մի տարագիր:

Վերջերս մեր մամուլը եւ ձայնասփիւ-
ռը չռնդալից կերպով արձագանգեցին որ
ՄԱԿ-ը երկար ու մանրամասն պրպտում-
ներէ ընորհիւ, հաստատել է որ Հայաս-
տանում գոյութիւն ունի «մարմնավա-
ճառութիւն» եւ որի արտածումը չատ
հասութաբեր է…: Այլ խօսքով, այդ
«ամենահին արհեստ»ն է որ թոյլ է տա-
լիս սեռի դիցուհիներին բազմաթիւ ան-
գամներ ամուսնանալ, առանց «Զախս»ում
(ֆաղաքապետարան) գրանցուելու բայց
անպայման օժիտը ապահովելով:

Պարզ է որ մենք Հայերս pasteurisé
ժողովուրդ չենք: Մեզ մօտ եղել են ու
կան ստախօսներ, գողեր, ոճրագործներ
եւ .. այրերին 7-րդ երկինք առաջնորդող
պարիկներ…: Հեչտ արհեստ չէ: Բայց
թւական եղաւ որ ՄԱԿ-ը այսպիսի
սխուփ մեզ հրամցնէ, խակոյն մեր մամու-
լը զայն տարածեց Լոս-Անճըլըսից փա-
րիզ, Երեւան եւ այլ քաղաքներում այս
ազգային չարիքը, մեծ զոհունակութիւն
պատճառելով Թրքական մամուլին:

Սակայն հարց է թէ ինչպէ՞ս այդ
մարդասիրակա՞ն ՄԱԿ-ը յաջողել է ձեռք
ձգել այդ վիճակագրութիւնները: Որով-
հետեւ Երեւանում, որքան դիտենք, չկայ
սեռի դիցուհիների զօրահաւաքող մի
հիմնարկ, ուր ամէն անձին գրանցում են
ինչպէս գործազրկութեան կենտրոննե-
րում: Ոչ էլ նրանց ճակատին «փեչատ-
ած» է (կնքուած) որ մէկ «արհեստի» են
նուիրուած…:

Այլեւս աչխարհին յայտնի է որ ՄԱԿ-ը
քաղաքական կոչում ունեցող միջազգա-
յին կազմակերպութիւն է ուր բարոյա-
կան սկզբունքը ուժասպառ վիճակում
է, ինչպէս իր նախորդը՝ S.D.N. (Société
des Nations) որ ներկայ եղաւ Լոզանի
դաշնագրի օծման: Ուստի մի անգամ եւս
իրաւունք տանք Զօր. տը Կօլին որ ար-
համարհող որակումով ՄԱԿ-ը մկրտեց՝
le machin: Այդ նոյն machin-ն էր որ
լուռ մնալով մեղսակից եղաւ Սումգա-
յիթի ջարդերին…:

ՄԱԿ-ը ստախօս է:

Վաղուց է որ մեծ-մայրս հեռացել է
մեզանից, բայց մեր միջեւ ինչ որ մի
լուռ զրոյց է չարունակւում: Ցաճախ
միտքս չոյում են իր պատկերալից ու դի-
պուկ խրատները՝

– Աբեւուդ մեռնեմ բալաս, քիչախ –
քիչախ ականջ տուր ասածներիս: Դէ՛հ,
մի քանի տարուց պիտի էլնես պայծառ
երիտասարդ: Հարկաւ պիտի ամուսնա-
նաս, ընտանիք կազմես: Բայց իմացիր,
որ էսա կեանքը էնպէս ի որ տարիները
իրար նման չեն: Ուրախ տարիներ կ'ու-
նենաս, բայց կ'ելնի նաեւ դժուար ու
ծանր տարիներ: Նոյնիսկ երեւի որ ան-
ցած էլնես: Ուրեմն պիկ յիշիր եւ մի
մոռնայ տանդ մի պուճախում (անկիւն)
մի կտոր կարագ կամ եղ պահես:

– Իսկ ինչո՞ւ համար մեծ-մամա:

– Դէ՛հ, եթէ դիւս էլնես վոխ-ք-ներիդ
անպայման չմոռնաս քսես, որ դիմացիդ
եկողը չիմանայ սոված ես: Աբեւուդ
մեռնեմ, ասածս լաւ յիշիր:

Ցիշեցի: Երբ իմացայ ՄԱԿ-ի «ազնի՛ւ»
յայտարարութիւնը, որի բաները եղաւ
մեր մամուլը: Ցիշողութեանս մի «պու-
ճախում» թաքնուած էր մեծ-մօրս պատ-
գամը. «մարմնավաճառութեան» թմբու-
կահարումը ապտակի պէս ինձ «չխչպեց»
(ցնցեց):

Ժան-Փօլ Սարթր ֆրանսական դրա-
կանութեան, փիլիսոփայութեան աստղե-
րից մէկն էր: Հետաքրքրութեամբ կար-
դացել եմ անցեալում նրա մի քանի դոր-
ծերը, որոնցից մէկն է՝ «Réflexion sur
la question juive»: Այդ դրքում Սարթր
ինչ-ինչ ապրումների բերումով յայտ-
նում է՝ «պոռնիկութեան ասպարէզում
պիտի ընդունել որ մեր իդեական սեռը
գերազանց համբաւ է վայելում աչխար-
հիս վրայ», երբ ֆրանսացի դրողը իրեն
թոյլ է տալիս այսպիսի լիրբ խօսքերով
արտայայտուել, ի՞նչ ասել եթէ ոչ Ժան-
Փօլ Սարթրը անբարոյական մի մարդ է,
թէկուզ անուանի մտաւորական համար-
ւի:

Իրր ֆրանսածնունդ քաղաքացի, եր-
բեք պահանջ չեմ զգում Ժ.-Փ. Սարթրի
յառաջադէմ ազատամտութիւնը որդե-
դրել: Ուրիչ աղբիւրի ջուր եմ խմել:
Չեմ պատկանում նոյն juridiction-ին:

Ժամանակները փոխուել են, յեղաչըր-
ջուել: Մամուլի ազատութեան հետեւան-
քով տիրում է զարմացնելու մարմաջը:
Ազգային արժանապատուութիւնը, ա-
մօթխածութիւնը այլեւս անհետացող հի-
ւանդութիւններ են: Չարիքը կարելի է
տանիքների վրայ ճչալ…:

Մեծ-մայրս չօգտուեց Ժ.-Փ. Սարթրի
իմաստութիւնից: Չհամարենք դա ցա-
ւալի մի զրկանք: Բայց մի պահ երեւա-
կայում եմ եթէ տեսած լինէր հեռատես-
սիլում ժամանակակից գլուխ-գործոց՝
Loft-Story-ն, լսում եմ իր զարմանքի
խօսքերը՝ «Աւա՛ղ, էս ի՛նչ անտակ-ան-
ծեր բան է, էս ի՛նչ երկիր գմբացինք:
Ափսո՛ս, հազար ափսոս մեր քչնաղ է-
գեստար (Այգեստան)»:

Իսկ որ նա իմանար «մարմնավաճա-
ռութեան» չուրջ ստեղծուած զզուելի աղ-
մուկը, պիտի «տապաժռէր (paniquer):
Ցուցամատը չուրթին, մի պահ պիտի մը-
նար չչմած ու յանկարծ պոռթկար՝
«Թի՛ւ ձեր իրիսին, Թի՛ւ. ամօթը ձեր
մէջ խլսէ…»:

Կ. Ջ.

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԼՈՍ-ԱՆՃԸԼԸՍԻ ՄԷՋ

«ՄԱՇՏՈՑ» ԳՈԼԷՋԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՍԸ

Կլէնտէյլի «Վէրտուկօ Հիլզ» սրահին մէջ, Ցուլիս 18-ին, տեղի ունեցած է «Մաշտոց» գոլէճի շրջանաւարտներու հանդէսը: Բացումը կատարած է տնօրէն տոքթոր Կարպիս Տէր – Եղիայեան: Ողջոյնի եւ ընորհաւորական խօսքերով հանդէս եկած են հոգաբարձութեան ատենապետ տոքթոր Տանիէլ Քլէյկ, դասախօսներ եւ տարբեր ճիւղերու շրջանաւարտներու ներկայացուցիչներ: Այս տարի գոլէճը տուած է 242 շրջանաւարտ՝ հայագիտութեան, մանկավարժութեան, հայերէն լեզուի, օտար լեզուներու, թարգմանական արուեստի եւ համակարգիչներու ճիւղերէն:

***

«ՍԱՀԱԿ – ՄԵՍՐՈՊ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ

Փասատինայի «Սահակ – Մեսրոպ» հայ քրիստոնեայ վարժարանի շրջափակին մէջ, Ցունիս 22-ին, տեղի ունեցած է դպրոցին տարեվերջի հանդէսը: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը, բաղկացած ազօթքներէ, երգերէ եւ արտասանութիւններէ: Տնօրէնը՝ Լեւոն Ֆիլեան, մրցանակներու եւ վկայականներու բաչխումէն եւք խօսք առնելով նչած է. «Ժամանակը եկած է որ վարժարանը ընդարձակուի, Աստուծոյ հրամանով դառնայ լրիւ երկրորդական ուսումնարան մը»: Այս տարի նախակրթարանը տուած է 18 շրջանաւարտ, իսկ միջնակարգ բաժինը՝ 20:

***

Հ. Մ. Ը. Մ.-Ի ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Սանթա Պարպարայի «Գաչուման» լիճին մօտ գտնուող բանակավայրին մէջ, Ցուլիս 19 – 26, տեղի ունեցած է Հ. Մ. Ը. Մ.-ի Լոս – Անճըլըսի մասնաճիւղի սկաուտական 33-րդ ընդհանուր բանակումը, մասնակցութեամբ 85 հոգիի եւ 11 հոգինոց խմբապետական կազմի: Եօթը օրերէն իւրաքանչիւրը նուիրուած է նիւթի մը՝ մշակոյթ, խմբային, աչխատանք, սկաուտական գիտելիքներ, ազգային եւ այլն: Ցուլիս 22-ին բանակավայր այցելած են ծնողքներ, Շրջ. վարչութեան անդամներ, սկաուտական խորհուրդէն եւ Լոս – Անճըլըսի վարչութենէն ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հոլիվուտի եկեղեցւոյ հովիւ Վիգէն քահանայ Վասիլեան: Գնահատանքի խօսքերով հանդէս եկած են Շրջ. վարչութեան անդամ Կարպիս Շերտրմեանը եւ Վիգէն քահանայ:

***

ԺԱՆ ԳՈՍԱԳԵԱՆ «ՑԵՐԱՀԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ

Աբեմատեան Ամերիկայի ազգային վարժարաններու խնամակալ մարմնի որոշումով Ժան Գոսագեան տնօրէն նչանակուած է Էնսինոյի Սրբոց Նահատակաց «Ցերահեան» ազգային վարժարանին: Նախկին տնօրէնն էր մարզպետ Մարկոսեան: Ժան Գոսագեան 1986 – 1990 վարած է «Ասպարէզ» օրաթերթի վարչական տնօրէնի պաչտօնը, իսկ 1990-էն ի վեր վարիչ խմբագիրն էր թերթին: 1996-էն ի վեր նաեւ ատենաբան էր «Հորիզոն» հեռատեսիլի պատասխանատուութիւնը:

***

«ԼԱՐՔ»Ի ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Կլէնտէյլի «Մեթոտիսթ» եկեղեցւոյ մէջ, Ցուլիս 22-ին, տեղի ունեցած է «Լարք» երաժչտական ընկերակցութեան կազմակերպած 2001-ի 7-րդ նուագահանդէսը, նուիրուած սեռակային երաժչտութեան: Մեկնաբանուած են Եդուարդ Միրզոյեանի լարային քառեակը, Առնօ Բաբաջանեանի երրեակը եւ Ալեքսանդր Սպենդիարեանի գործերը: Ցայտագրին մասնակցած է նաեւ Արտաչէս Սինանեան, դաչնակի ընկերակցութեամբ Ժաննա Սինանեանի մեկնաբանելով Բաթջանեանի՝ հարուածային նուագարաններու համար մչակած վեց պատկերները:

***

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐՈՒ ՀԱՄԵՐԳ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԷՋ

Սան Ֆրանսիսկոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Օգոստոս 4-ին, տեղի ունեցած է հոգեւոր երգերու համերգ մը: Բացումը կատարած է հոգաբարձութեան ատենապետ Ռոստոմ Ալեքսանեան, նչելով որ համերգը նուիրուած է 1700-ամեակին: Ցայտագրի առաջին բաժնին հանդէս եկած են մեներգիչներ մեկնաբանելով չարականներ, տաղեր եւ մեղեդիներ: Ցուցադրուած են Տէր Զօր ուխտադնացութեան եւ Միւռոն-օրհնէքի տեսերիզները: Երկրորդ բաժնին հանդէս եկած է եկեղեցւոյ նոր կազմուած քառաձայն երգչախումբը մեկնաբանելով պատարագէն հատուածներ: Ողջ առնելով Բաթգէն Ծ. Վրդ. Զարեան երգչախումբը մկրտած է «Շողակաթ» անունով: Ցայտագրի աւարտին, «Վասպուրական» սրահին մէջ տրուած է ընդունելութիւն մը:

ԼՐԱՏՈՒ

ԹԻ 17 ԽԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԱՐԱԳՈՑԸՐԸ ԿԸ ՊԱՏՌԻ

– Ձճանչցա՞ք զինքը:

– Չէ՛…

– Անունը թող հարցնէիք:

– Հարցուցի, բայց չըսաւ. «արդէն ա-
նունս չգիտեր» պատասխանեց:

– Բայց ես ճանչցայ ով ըլլալը, – մի-
ամտեց Աչոտ, – անցածներու Ազգային
Ժողովին եկող կինն էր… կը յիչե՞ս,
կանանչ հովանոց մը ունէր ձեռքը…

– Այո՛, այո՛, մէտքս եկաւ, կարծեմ
հետն ալ քանի մը խօսք ըրի, – պատաս-
խանեց Կիկօ, – ծօ՛, իրա՛ւ խըչխաչ կտոր
մըն էր… բայց ինծի հետ ի՞նչ գործ
կրնայ ունենալ:

– Կեցիր, տեսնենք, հիմա կը հասկը-
նանք, – ըսաւ Կօչկարեան:

Արդարեւ բաւական տարօրինակ կը թը-
ւէր կիկոյի այս կնոջ այցելութիւնը: Չէր
կրնար գուչակել, թէ ինչ գործ կրնար
ունենալ իրեն հետ: Բաւական մտածելէ
ետք հասաւ այն եզրակացութեան, ուր
իր երկու ընկերներուն հասած էին:

«Կ'երեւայ, որ «կիկօ»ի մէջ բան մը
գրել պիտի տայ», – խորհեցաւ.

Բարեբախտաբար քիչ մը ետքը գեղանի
անծանօթուհին ներեցաւ եւ հարցուց, թէ
արդեօք Գրիգոր Թորոսեանը եկա՞ծ է:

– Ահաւասիկ, – ըսաւ Կօչկարեան՝ ցոյց
տալով «կիկօ»ի խմբագիրը:

Թորոսեան փութաց վրնդտառաչ երթալ
գեղանի տիկնոջ:

– Զի՞ս կ'ուզէք տեսնել, – հարցուց:

– Գրիգոր էֆէնտի Թորոսեանը դո՞ւք
էք:

– Այո՛, տիկի՛ն:

– Ուրեմն ձեզի հետ կ'ուզէի տեսակ-
ցութիւն մը ունենալ… բայց կը փափա-
քէի, որ առանձին ըլլայինք, ես կը կար-
ծէի, որ դուք ձեզի համար առանձին գլ-
խաւորեակ մը ունիք:

– Դժբախտաբար ո՛չ տակաւին, – պա-
տասխանեց Թորոսեան ժպտելով, – բայց
եթէ կ'ուզէք՝ հոս մօտերը տեղ մը կրնանք
գտնել, ուր կարող ըլլանք ազատօրէն
տեսակցիլ:

– Շատ գոհ պիտի ըլլամ, կը ներէք, որ
ձեզ անհանգիստ ըրի, թերեւս զբաղած
էիք:

– Ո՛չ, տիկի՛ն, բնաւ անհանգիստ չէ-
րիք:

Եւ Գրիգոր Թորոսեան անծանօթուհիին
ընկերակցութեամբ ուղղուեցաւ Պապը
Ալի ճաւտէսիէն վար:

– Ո՞ւր պիտի երթանք, – հարցուց կինը:

– Ամէնէն յարմարը, – պատասխանեց
Թորոսեան, – Սիրքեճիին կայարանին
դէմը գտնուող գարեջրատունն է. հո՛ն
պարտէզը կրնանք նստիլ ու տեսակցիլ:

– Շատ աղէկ, հոն երթանք:

Քանի մը վայրկեան ետքը հասան գա-
րեջրատան պարտէզը:

– Ամէնէն առաջ, – ըսաւ տիկինը, –
պէտք կ'զգամ ինքզինքս ներկայացնել:

– Ինչպէս որ կ'ուզէք:

– Էլիզ Մալեան…

– Շատ չնորհակալ եմ, տիկի՛ն, եւ չատ
ալ գոհ ձեզ հետ ծանօթանալուս:

– Շատ ազնիւ էք, պարո՛ն, հիմա զանք
բուն խնդրին, – ըսաւ տիկինը քիչ մը
նեղուած կերպարանք մը առնելով, –
խնդիրը այնչափ փափուկ է, որ չէտակը,
չեմ համարձակիր կոր ըսել:

– Մի քաչուիք, տիկի՛ն, – պատասխա-
նեց ժպտելով, – խմբագիրները քահանա-
ներու պէս են, ամէն բան կրնան իմանալ
իբր խոստովանահայր…

– Ես բաւական ժամանակէ ի վեր ա-
մուսինէս բաժնուած եմ, – չարունակեց
կինը, – որովհետեւ անհատապահիմ բն-
թացք մը ունեցած է ինծի հանդէպ:

– Ձեզի նման կին մը ունենալ եւ հատա-
տարիմ չըլլա՛լ, ճշմարիտը անհատապալի
է ատիկա:

– Եւ տակաւին ճշմարտութիւնը այս է…
հիմա կ'ուզեմ, որ օրինաւոր կերպով
բաժնուիմ իմ ամուսինէս, որովհետեւ
այլեւս հաչտութեան որեւէ յոյս չէ մնա-
ցած:

– Շատ իրաւունք ունիք ամուսնալու-
ծութիւն պահանջելու, դեռ չատ երիտա-
սարդ էք, կրնաք կրկին ամուսնանալ:

– Չէ՛, այդպիսի դիտաւորութիւն մը
չունիմ, – ըսաւ կինը, – իմ նպատակս է
ազատութիւնս ձեռք բերել:

– Եւ սպասել լաւագոյն առիթի մը, –
ըսաւ Թորոսեան խնդալով:

– Այս տեսակ գործերու համար ըսին
ինծի, թէ Ներսէս Փափազեան անուն անձ
մը մասնաւոր գործակալութիւն մը հաս-
տատած է:

– Շատ ճիշդ է:

– Եւ թէ այդ մարդը ձեր բարեկամն է
եղեր:

– Այդ ալ ճիշդ է:

– Ձենէ պիտի խնդրէի, որ դիս իրեն
յանձնարարէք, որպէսզի իմ գործս աւելի
ուշադրութեամբ նայի:

– Ամենայն սիրով, – պատասխանեց
Թորոսեան, – բայց նեղեցէք, որ դիտա-
ւորութիւն մը ընեմ. ինչո՞ւ ուղղակի իրեն
չդիմեցիք, քանի որ ես ալ իրեն չափ ան-
ծանօթ էի ձեզի:

Գեղուհին նեղը լնկած մէկու մը պէս
չարժում մը ըրաւ, յետոյ պատասխա-
նեց.

– Վերջապէս խմբագիրի մը կռմիկ եթէ
յանձնարարագիր մը ունենամ, բնական է,
որ աւելի ուշադիր կ'ըլլայ գործիս…
ասկէ զատ ասիկա առիթ մըն էր ձեզի
հետ ծանօթանալու, ինչպէս նաեւ ձեր
չնորհիւ ուրիչներու հետ ալ…

– Դեռ ուրիչներու համար ա՞լ յանձ-
նարարականներ կ'ուզէք, – հարցուց Թո-
րոսեան:

– Ոչ թէ յանձնարարական, բայց թե-
րեւս պէտք ըլլայ զիս անձամբ ներկայա-
ցընելու:

– Որո՞նց, – հարցուց «կիկօ»ի խմբա-
գիրը:

Այնպիսի անձերու, որոնք իրենց դիր-
քովը կրնան նպաստել, որպէսզի այս ա-
մուսնալուծութեան գործը չուտով կար-
գադրուի ի նպաստ ինծի:

– Բայց քանի որ իրաւունքը ձերն է,
քանի որ անհատապահիմը ձեր ամուսինն
է, ալ ի՞նչ պէտք ունիք պաչտպանու-
թիւններու:

(Շար. 43)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Սօնա Պուտաքեան, Մանէ եւ Սեպաստիէն Պլանչար – Պուտաքեան եւ զաւակը՝ Թէօ եւ ընտանեկան բոլոր պատասխանելով կը ծանուցանեն որ հոգեհանդիսաւոր պաշտօն կը կատարուի, կիրակի, Օգոստոս 26, Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր եկեղեցւոյ մէջ, իրենց ամուսնոյն, հօր, մեծ – հօր եւ ազգականին՝

ԱՐՄԷՆ ՊՈՒՏԱՔԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ։

Ի դիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

(Շար. Ա. էջէն)

բովհետեւ իր մեթոտները չեն, ոչ ալ իր գործածած պայթուցիկները։

ԳԵՐՄԱՆԻՈՑ Արտաքին նախարարը՝ Եոչքա Ֆիշէր եռօրեայ չրջապտոյտ մը կը կատարէ Մերձաւոր – Արեւելք։ Գահիրէէն ետք անցաւ Երուսաղէմ, ապա՝ պաղեստինեան չրջանը։ Ան յոյս ունի որ պիտի կարենայ համոզել կողմերը որ վերջ տան փոխադարձ բախումներուն, ինչպէս յաջողած էր ընել անցեալ Յունիսին։ Միւս կողմէ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու հրապարակային առաջին նիստը կը բանար Իսրայէլ – Պաղեստին հակամարտութեան մասին։ Մեծ ակնկալութիւններ չկան այս նիստէն, քանի Իսրայէլ, որ կը վայելէ ԱՄՆ-ու զօրակցութիւնը, բացարձակապէս կը մերժէ հակամարտութեան «միջազգայնացումը»։ Տեղւոյն վրայ ճակատամարտ մը չի մեղմանար, վեց Պաղեստինցիներ եւս սպանուած են Օգոստոս 19–ին, որոնց մէջ երկու մանուկներ։ Որպէս լուծում, կը խօսուի կրկին սահման մը յատեղծելու մասին։

ԱՍՏՐԱԽԱՆԻ (Հարաւային Ռուսաստան) մէկ չուկային մէջ, ռճրային պայթում մը տեղի ունեցած է Օգոստոս 19–ի առաւօտը։ Առաջին տեղեկութեանց համաձայն 6 մեռեալ կար եւ աւելի քան 50 վիրաւորներ։ Ջննութիւն բացուած է, ահաբեկչական արարք մը կրնայ ըլլալ եւ չէչէնեան ահաբեկչութիւն մըն ալ չի բացառուիր։ Մեռեալներու մէջ 28 տարեկան կին մը կայ, 17–ամեայ երկու պարմանուհիներ եւ 11 տարեկան եւ 2 տարեկան մանուկներ։

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՖՐԱՆՍԱՀԱՅԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ԱՐՇԱԼՈՅՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՄՈՒԱՃԻԿԻ ՄԻՕՐԵԱՅ ԴԻՐՈՅԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալորեա կը դասաւանդուին. – Հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք։

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին։

— ● —

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի թուականն է Շաբաթ Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին։

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16։

Աշակերտները կրնան օգտուիլ Շաբաթ–շաբթի կէսօրուան ճաշէն։

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝

04 . 78 - 60 . 47 - 18

թիւին։

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— ● —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu le samedi 22 septembre à 15 heures à l'Ecole Henri Wallon **2, avenue de Stalingrad à Bagneux**

Pour tous renseignements téléphoner

— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11

— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris

du jeudi 4 au lundi 8 octobre

à l'occasion de la Béatification de

Mgr. IGNACE MALOYAN

Archevêque de Mardine, martyr en 1915.

le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :

Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

***

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section d'Asnières
Au profit de la Colonie de Bellefontaine
Réservez votre soirée
du Samedi 20 octobre
GALA ARTISTIQUE ARMENIEN
avec l'**Ensemble folklorique arménien NAVASART**
Danseurs, musiciens, chanteurs **traditionnels**
au Grand Théâtre d'Asnières.

La Section «TER-DAVTIAN» de Chaville de la Croix Bleue des Arméniens de France
organise
le Samedi 27 octobre
UNE SOIREE DANSANTE
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

***

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une **SOIREE DANSANTE**
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre «Gaidzag's»**

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 ՖՐ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 ՖՐ.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 ՖՐ.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՆ 75 ՖՐ.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՕՓԻՒՐՔԻ ՄԷՋ 75 ՖՐ.

ԵՒ

«ՅԱՌԱՋ - 50»
(Տաղկախաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 120 ՖՐ.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի։

Թղթատարի ծախքը՝ 30 Ֆր., հատոր ղլուխ։

ՓՆՆԴԵԱՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԵՐԿԼԵԶՈՒ ՁԵՐ ՀՐԱՒԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԾԷ՛Ք «ՅԱՌԱՋ»Ի ՏՊԱՐԱՆԸ

ԽՆԱՄՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՐԱՓ ՅԱՆՁՆՈՒՄ

Տեղւոյն վրայ ճոխ խաթաղոկ

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 23
JEUDI
23 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·235 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.235

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՇԱՐԺԷՆՓՐԷՍ,

Օգոստոս 21 / 22)

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

(ՕԳՈՍՏՈՍ 21)

ՖՈՒԹՊՈԼ
փարիզ – Լոս Անճելըս 3 – 5
Մարսէյլ – Քէօլն 1 – 2

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼ
փարիզ – Գահիրէ 3 – 0

ԱՄԲՌՒԹՊՈԼ Այրերու մրցաշարք
Նիս – Վեյլի 72 – 100

ԱՄԲՌՒԹՊՈԼ Կիներու մրցաշարք
Նիս – Լոս–Անճելըս 13 – 130

ՎՈԼԻԿՊՈԼ Այրերու մրցաշարք
Թեհրաք – փարիզ 3 – 0

ՎՈԼԻԿՊՈԼ Կիներու մրցաշարք
Սիսիան – փարիզ 3 – 0

*
**

ՆՈՐ ՆԻՒԹԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Ցեղասպանութեան թանգարան – հիմնարկը Հարվըրտի համալսարանէն 200 հազար էջ արխիւային նիւթ ստացած է. անոնք կը կազմեն ամերիկացի մխիթարներու յուշագրութիւնները ցեղասպանութեան վերաբերեալ: Տնօրէն Լ. Քարսեղեանի տեղեկատուութեամբ՝ հաստատութիւնը ներկայիս 7000 միաւոր գրականութեան տէր է:

*
**

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՍՈՒՐԻՈՒ ՄԵԿՆԱԾ

Պաշտպանութեան նախարար Ս. Սարգսեան Օգոստոս 20–ին պատուիրակութեամբ մը, պաշտօնական այցով մեկնած է Սուրիա. նոյն օրը ան հանդիպում մը ունեցած է Սուրիոյ իր պաշտօնակիցին հետ, ապա տեղի ունեցած են ընդլայնուած բանակցութիւններ:

*
**

ՍՈՒՐԲ ՎԱՀՈՒՆԻԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ԳՈՂՑՈՒԱԾ

Սովետահայ գերեզմանատունէն գողցուած է զրադէտ Ս. Վահունիի (1910 – 1983) կիսանդրին: Անոր հարազատները տեղեկացուցած են թէ նոյն գերեզմանատան պանթէոնին մէջ պղծուած են այլ գործիչներու շիրիմներ: Ս. Վահունի առաւելապէս ծանօթ էր որպէս թարգմանիչը Գոգոլիւոյի, Ա. Տիւմայի, Եաչէքի, եւ այլն:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՈՐՍԻՔԱՆ չի հանդարտիր եւ Սանթոնիի սպանութենէն չորս օր ետք, Օգոստոս 21–ին, երկու աղջնապաշտներ եւս սպանուեցան: Մարխանիի ծովափին մօտ հրոյ ճարակ դարձած Ֆոլքսվակէնի մը մէջ գտնուած են երկու այրած մարմիններ: Զոհերէն մէկն է Տոմինիք Մարչելլի, 25 տարեկան, որու համար կասկած կար թէ մասնակցած է Արմաթա Գորսայի մամուլի գաղտնի ասուլիսին: Ներկայ եղած էր Սանթոնիի յուղարկաւորութեան: Ըստ երեւոյթին, քաղաքական թէ այլ հաշուեյարդարները կը շարունակուին:

ՍԳԱՆԻՈՑ ՄԷՋ, սուր բանավէճ մը ծագած է թակարդ լարողներուն պատճառով: Ծանօթ է, որ մեծ – մայրիկ մը մեռած էր, մինչ 16 ամսեայ թոռնիկը, որու գանկը ճեղքուած է եւ երկու աչքերն ալ փորուած, կը պայքարի մահուան դէմ, ուժ ժամուան գործողութենէ մը ետք: Սկիզբը, այն տպաւորութիւնը կար որ Էթա–ի գործելակերպին չի նմանիր, բայց, Սպանիոյ Ներքին նախարարը կը խորհի որ Քալէ Պորոքայի գործն է, այսինքն Էթայի համակիր քաղաքային կեդրոնէն:

ԱՐԱՖԱԹ ՀԻ Շ. ՓԷՐԻՍ հանդիպում մը պիտի ունենան, հատանաբար դալ շաբթու, Պէյրութ: Կը թուի որ Գերմանիոյ Արտաքին նախարարը յաջողած է համոզել կողմերը, որ նստին խօսին: Հանդիպումին ճշդրիտ թուականը չէ ճշդուած: Մինչ այդ չորս պաղեստինցի եւս սպանուած են, Օգոստ· 21–ին, Նապլուսի մօտ:

ՄԻԱՑԵԱԼ – ՆԱՀԱՆԳՆԵՐԸ տեղեակ եղած են 1994–ի Ռուանտայի ցեղասպանութենէն եւ ոչինչ լրած են: Այս յայտնութիւնը երեւան եկած է 15 փաստաթուղթերու քննութենէն ետք: Հետազօտող Ուիլիըմ Ֆէրոճխարօ հինգ տարի պայքարած է արխիւները կարենալ ուսումնասիրելու համար, հիմնուելով ամերիկեան օրէնքին վրայ, ինչ կը վերաբերի լրատուութեան ազատութեան: Միացեալ – Նահանգներու Պաշտպանութեան նախարարութեան մէկ փաստաթուղթը, որու թուականը Ապրիլ 11 է, այսինքն չարդերու սկիզբէն չորս օր ետք, կ'արտայայտուի արդէն «քանի հարիւր – հազարաւոր անձերու համար արեան լոգանքի մը վտանգ»ին մասին: 100 օրուան մէջ, մեռելներու թիւը 800 հազար էր: Նման, աւելի խօսուն փաստաթուղթեր կը վկայեն որ Ուաշինկթըն գիտէր եւ բան մը չէ ըրած: Ֆէրոճխարօ կը բացատրէ.– «Իշխանութիւնները նախընտրեցին տեղեակ չըլլալ, որովհետեւ կ'ուզէին ամէն գնով զինուորական միջամտութեան մը առաջքն առնել»:

ԻՐԱՆի արդարադատութիւնը 22 ամսուան բանտարկութեան դատապարտած է Մորհրզարանի բարենորոգիչ մեծամասնութեան մէկ երեսփոխանուհին «իսլամական վարչակարգին դէմ քարոզչութեան» ամբաստանութեամբ:

ՓԱՐԻԶԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ՝ Պէրթրան Տելանոյէ յարդելով ընտրապայքարի չրջանի իր խոստումները, կարգադրութիւններու ձեռնարկեց Փարիզի մէջ: Փոքրիկ պատեր պիտի անջատեն հանրախառնաքերու անցքերուն վերապահուած նրբանցքները կառքերէն: 70 սանթիմէթը լայնք ունեցող փոքրիկ պատեր 4,5 մեթրնոց նրբանցքներ կը ստեղծեն հանրակառքերուն համար: Առաջին փորձը սկսաւ Օգոստոս 21–ին, Ռիւ տը Ռիվոլի, որու զոհ գնայ քաղաքապետին կանաչ կողմնակիցը՝ Իվ Գոնթասօ, երբ մոթոսիքլիստ մը քախեցաւ իր հեծանիւին: Գոնթասօ վիրաւորուած է եւ Գոչէն հիւանդանոց փոխադրուած, ինչպէս նաեւ արկածին հեղինակը: Լաւագոյնը թշնամին ըլլալով լաւին, ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիք, կը թուի որ այս կարգադրութիւնը բոլորին օհմնութիւնը պիտի չգըտնէ: Քանի մը օրէն, Ռիւ տը Ռիվոլիի օրինակին կը հետեւին Սեպաստոպոլ եւ Սէրազուրի պողոտաները:

ՏԱՃԻԿՍԱՆԻ երաշխին պատճառով մէկ միլիոն հոգի սովի սպառնալիքին տակ են եւ անուղղի օժանդակութիւնը ստիպողական բնոյթ ունի: Կարմիր Խաչի եւ Կարմիր Մահիկի միջազգային Դաշնակցութիւնը ժիրնեւի մէջ, Օգոստոս 22–ին 6,7 զուիցերական ֆրանք հատաքելու կոչ մը ըրած է:

ԿՈՂՈՊՈՒՏԻ դինեալ յարձակումները կը բարմանան Ֆրանսայի եւ մասնաւորաբար փարիզեան չրջանին մէջ: Օգոստոս 21–ին Ռուասի – Շառլ տը Կօլ օդակայանի թղթատարի դրասենեակն է որ յարձակման ենթարկուած է, նոյն օրն ալ Սոսիէթէ Ժենէրալի մէկ դրասենեակը կողոպտուած է: Ցանցագործութիւնը չատ մեծ համեմատութիւններու հասած է եւ ճարը չի գտնուիր:

ԱՆԳԱՐԱՑԷՆ ԲԱԿՈՒԻ ԵՒ ԹԵՀՐԱՆԻ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դիւանագիտական մարզին մէջ Ազրբեջան – Իրան յարաբերութիւններու մեղմացում մը խնդրոյ առարկայ ըլլալով հանդերձ, երկու կողմէն լուրջ քննադատութիւններ, ամբաստանութիւններ արձագանգ կը գտնեն լրատուութիւններու մէջ: Վերջին օրերուն այս առումով ուշադրութիւն դրաւած են Ազրբեջանի նախագահի նախկին խորհրդական Վ. Գուլիզատէի «Նոր մուսաւաթ» թերթին տուած հարցազրոյցին ընթացքին Իրանի ուղղուած ծանր քննադատութիւնները:

Երկու երկիրներուն հակազդութեան դիմաւոր նիւթը Կասպից ծովու չահագործումը ըլլալով, ազրբեջանցի խորհրդականը կ'ըսէ թէ այդ գօտիին մէջ ներկայի Ազրբեջան – Թուրքիա միաբանութիւնը մեծ հաւանականութեամբ մօտ տեսնէն պիտի վերածուի Թուրքիա – Ազրբեջան – Իսրայէլ – Վրաստան քաղաքական գործակցութեան մը: Ինչ կը վերաբերի Իրանի, Գուլիզատէի կարծիքով եթէ արեւմուտքը միջոցներու չճեռնարկէ Թեհրանի սպառնական կեցուածքին դէմ, պիտի կորսնցնէ թէ՛ Ազրբեջանը, թէ՛ Կասպից ծովը, ինչ որ չրջանին համար կը նշանակէ 30 տարուան յետքայլ մը: Հարցը այն է որ Ազրբեջանի մէջ կան քաղաքական բաղմաթիւ կրօնամէտ խմբաւորումներ որոնք յարաբերութեան մէջ են Իրանի հետ ու կը ձգտին անոր գերիշխանութեան, ինչպէս ռուսամէտ խմբակներ կը նախընտրեն Մոսկուայի գերիշխանութիւնը: Ան աւելցուցած է թէ այդ երկու հոսանքներն ալ չեն ներկայացներ ժողովուրդին կամքը եւ ո՛չ Ռուսաստան, ո՛չ Իրան գօրավիգ կ'ըլլան Ազրբեջանի ազգային չահերուն հետամուտ գարգացումներու:

Վ. Գուլիզատէ նիւթ ըրած է Հայաստանի ու Իրանի անտեսական գործակցութիւնն ալ: Ցայտնի դժգոհութեամբ արտայայտուած է գլխաւորաբար քարիւղով կառքերուն համար: Առաջին փորձը սկսաւ Օգոստոս 21–ին, Ռիւ տը Ռիվոլի, որու զոհ գնայ քաղաքապետին կանաչ կողմնակիցը՝ Իվ Գոնթասօ, երբ մոթոսիքլիստ մը քախեցաւ իր հեծանիւին: Գոնթասօ վիրաւորուած է եւ Գոչէն հիւանդանոց փոխադրուած, ինչպէս նաեւ արկածին հեղինակը: Լաւագոյնը թշնամին ըլլալով լաւին, ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիք, կը թուի որ այս կարգադրութիւնը բոլորին օհմնութիւնը պիտի չգըտնէ: Քանի մը օրէն, Ռիւ տը Ռիվոլիի օրինակին կը հետեւին Սեպաստոպոլ եւ Սէրազուրի պողոտաները:

ՏԱՃԻԿՍԱՆԻ երաշխին պատճառով մէկ միլիոն հոգի սովի սպառնալիքին տակ են եւ անուղղի օժանդակութիւնը ստիպողական բնոյթ ունի: Կարմիր Խաչի եւ Կարմիր Մահիկի միջազգային Դաշնակցութիւնը ժիրնեւի մէջ, Օգոստոս 22–ին 6,7 զուիցերական ֆրանք հատաքելու կոչ մը ըրած է:

ԿՈՂՈՊՈՒՏԻ դինեալ յարձակումները կը բարմանան Ֆրանսայի եւ մասնաւորաբար փարիզեան չրջանին մէջ: Օգոստոս 21–ին Ռուասի – Շառլ տը Կօլ օդակայանի թղթատարի դրասենեակն է որ յարձակման ենթարկուած է, նոյն օրն ալ Սոսիէթէ Ժենէրալի մէկ դրասենեակը կողոպտուած է: Ցանցագործութիւնը չատ մեծ համեմատութիւններու հասած է եւ ճարը չի գտնուիր:

ու կազով Հայաստանի տրուած զօրակցութեան, չեչելով. «Եթէ Իրանի նեցուկը չըլլար, Հայաստան երկար տեւենէ ի վեր կործանած կ'ըլլար: Թեհրան, ուրանալով հանդերձ, այդ նախայարձակ երկրին հետ ա՛լ աւելի կը սերտացնէ իր կապերը»: Ան Թեհրանի վարած քաղաքականութեան հաւանական հետեւանքը նկատած է Բաքուի ու Թուրքիոյ եւ Իսրայէլի մէջեւ առաւել մերձեցում մը:

Խօսելով իր երկրին ու Թուրքիոյ առանձնաչնորհեալ կապերուն մասին, ան տրտնջաց ամէն վտանգի դէմ երաչխաւոր նկատած է Թրքական բանակը, յարմար դատելով որ Ազրբեջանի ու Թուրքիոյ բանակները միաւորուին: «Թուրքիոյ զօրակցութեամբ հիմնուելիք ազրբեջանական բանակը պէտք է ժողովրդավար կարգերու պահապանը ըլլայ: ԱՄՆ եւ Արեւմուտքն ալ Ազրբեջանի մէջ Թուրքիոյ ներկայութիւնը դրական կը գտնեն» ըսած է Գուլիզատէ:

*
**

Կասպից ծովու իրաւութեան հարցին առընչութեամբ Թեհրանէն Անգարայի ուղղուած քննադատութիւններու տեղ տուած է Իրանեան մամուլը, որպէս անուղղակի հակազդեցութիւն Գուլիզատէի յաճախնեըուն:

Իրանեան Խորհրդարանին արտաքին յարաբերութիւններու եւ Ազգային ապահովութեան յանձնաժողովներու երկու անդամ Թեհրան – Բաքու յարաբերութիւններուն Անգարայի միջամտութիւնը վերլուծելով ըսած են թէ ան միջազգային կանոններու դէմ է. Իրան չրջանին մէջ բարի դրացիական կապերու հետամուտ ըլլալով հանդերձ, ոչ մէկ պիջում պիտի ընէ իր ազգային չահերէն, պերիչխանութենէն, անկախութենէն եւ հողային ամբողջականութենէն: Անոնք չեչտած են որ Կասպից ծովու հարցը քաղաքականէն առաջ իրաւագիտական բնոյթ ունի եւ հարկ է լուծումի մը յանգի միմիայն գայն եզերող երկիրներուն համաձայնութեամբ:

Ինչ կը վերաբերի Թուրքիոյ միջամտութեան փորձերուն, ան հարկ է նախապատուութիւն տայ ներքին ցեղային խնդիրներուն եւ երկու տարիէ ի վեր երկիրը ցնցող տնտեսական տագնապին լուծումին: Անկարելի չէ որ արեւմտեան երկիրներու դրդումով ձգտի կասպից ծովու հարստութենէն քաժին մը ունենալու, սակայն փորձառութիւնը կը թելադրէ միայն տնտեսական չահով չառաջնորդուիլ չրջանային հարցերու կարգաւորումին մէջ, անտեսելով իրականութիւնները:

*
**

Թեհրան կացութիւնը հրահրող արարք կը նկատէ Թուրքիոյ Սպայակոյտի նախագահ զօրավար Հ. Գրվրոքօղլուի Օգոստոս 23–ին Բաքու այցը. մանաւանդ որ զօրավարին կ'ընկերանան Թրքական օդուժէն տասը օդանաւեր: Իրանի Արտաքին գործերու նախարարը Խարազի կոչած է թէ Կասպից ծովու հարցը քաղաքականէն առաջ իրաւագիտական բնոյթ ունի եւ հարկ է լուծումի մը յանգի միմիայն գայն եզերող երկիրներուն համաձայնութեամբ:

Լարուած կացութեան վրայ աւելցած է լրտեսական հարց մըն ալ: Օգոստոս 20–ին ադրբեջանական ապահովութեան ուժեր ձերբակալած քաղաքին մէջ Իրանի ի նպաստ լրտեսութեան ամբաստանութեամբ վեց հոգի ձերբակալած են: Անոնց մաս կը կազմէ Ազրբեջանի Արտաքին գործերու նախկին փոխ – նախարար Ռ. Ճէվատովի մէկ մտերիմը Մ. Հասանով:

ՎՐԻՊԱԿ.– Մեր նախորդ թիւին (Օգոստոս 22) թուականի հայերէնը պէտք է ըլլար՝ Զորեքշաբթի եւ ոչ Հինգշաբթի, ինչպէս մեր ընթերցողները պէտք է ամդրադարձած ըլլան, բանի փրաւսերէնը նիշդ էր:

ՓՈԽԱՆ ՏՈՄՈՒ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՀՐԱՁԱԴԵՂ ՄԸ

ՖԻԼԻՓՄՈՐԻԶՄ

Լուրը նոր չէ. ամսուան մը «հնութիւնը» կրնար արգելք ըլլալ անոր անդրադարձումին, եթէ նոր տարրեր չգային զայն այժմէականացնելու:

Նախ միջուկը, որ անտեսական նոր այգաբացի մը վաղդապետութիւնը կրնայ դառնալ ու նաեւ ապրուս միջոցը՝ աշխարհի բնակչութեան հակակշռումին: 19 - 20-րդ դարուն ստեղծուեցաւ եւ գործադրութեան դրուեցաւ մարքսիզմը, իր ծանօթ ելքով եւ անելով, յաջողութիւններով եւ գլխիվայր անկումով: Նոր վարդապետութիւնը կրնայ կոչուիլ, ամերիկեան ծխախոտի համբաւաւոր ընկերութեան՝ Ֆիլիփ Մորիսի անունով, Ֆիլիփ Մորիսականութիւն, կամ բառով մը՝ ՖիլիփՄորիզմ:

Ամերիկեան ծխախոտի վերոնշեալ ընկերութիւնը, որ այսօր տէրն է Չեխական Հանրապետութեան ազգային ծխախոտի ընկերութեան, չնորհիւ սեփականաշնորհման աշխարհատարած եւ համաչափակուռ նոր օրէնքներուն, յանձնախոմբի մը պաշտօն տուած է այդ երկրին մէջ ուսումնասիրելու ծխախոտի հետեւանքները: Տեղեկագիրէն երեւան եկած է որ ծխախոտը, միա՛յն բարենպաստ արդիւնք կրնայ ունենալ:

Այդ եզրակացութիւնը կանխած էր երկրին վարչապետը, որ յայտարարած էր, ծխախոտի գլանիկը չրթունքին. «Ծըխելով, կ'աջակցիմ պետական պիւտճէին կայունացման: Սիկարէթ գնելով, կ'աւելցնեմ պետական եկամուտը, եւ պիտի մեռնիմ թոքերու քաղցկեղով: Այս ձեւով, պետութիւնը ինծի պարտաւոր չէ վճարելու հանգստեան թոշակս...: Ահաւասիկ մերօրեայ երկրի ղեկավար մը, որուն տեսակռօրէն աւազ պարտականութիւնը պէտք է ըլլար բնակչութեան առողջութիւնը եւ երկարակեցութիւնը:

Ամերիկեան ընկերութիւնը անշուշտ ամբողջովին համաձայն է չեխ վարչապետին – եթէ երբեք ինք չէ այդ յայտարարութեան բուն հեղինակը – եւ պիտի աներ նոր նամանեռուն իր գնահատանքը եւ երախտագիտութիւնը յայտնել հնչուն ձեւով:

Ծխախոտի վնասներէն այս տարի աշխարհին մէջ պիտի մեռնին չորս միլիոն մարդիկ, իսկ չորս տարի ետք 10 միլիոն, որոնց 70 առ հարիւրը՝ թերաճ կամ երրորդ աշխարհի երկիրներէն: Ֆիլիփ Մորիս կ'առաջարկէ երկրագունտի աղքատ երկիրներուն բնակչութիւնը նուազեցնելու դարման մը՝ առանց արիւնահեղութեան: Այդ զուգահեռ պաշտօնը ուրիշներուն կը պատկանի: Ընկերութեան ձեռնոցները մաքուր են: Չէ՞ որ ինք միլիառներ կը ծախսէ նոր դիմակ մը անցընելու իր երեսին, որպէս օդոլորտի պաշտպան եւ ՍԻՏՍ. հիւանդութեան դէմ պայքարող կողմ: Իր արի մտածումը, ուրեմն, պէտք է բացատրել միայն տկար պետութիւններու պիւտճէն հաւասարակշռելու դիտաւորութեամբ, որուն համար բարձր պին մը չի թուիր ըլլալ մարդոց եւ ժողովուրդներու բնաջնջումը:

Ամերիկեան այս ընկերութիւնը, ինչպէս ծխախոտի միւս ընկերութիւնները, որոնք մինչեւ վերջերս դատարաններու մէջ դրժելով կ'ուրանային ծխախոտի վնասները, այս ձեւով ո՛չ միայն ծխախոտն ընդունած կ'ըլլան որպէս առողջութիւն քայքայող ապրանք, այլ նաեւ – գործածողը բառը – անպատասխանատուութիւնը կ'ուզենան զայն ներկայացնել որպէս աղքատ երկիրներու տնտեսական հաւասարակշռութիւնը ապահովող դեղատոմս: Մարպլօրօն ծանուցանող Քաու – Պոյը – որ Ֆիլիփ Մորիսը կը ներկայացնէ – այս ձեւով ցոյց տուած կ'ըլլայ իր զգրելի դէմքը, այնքան աւելի վանողական՝ որքան որ ան կը պարակէ խորունկ ճշմարտութիւն մը. – այս ընկերութիւնը չըսեր թէ իր եկամուտը, իր աշխարհատոր կայսրութիւնը հիմնած է մարդկային էակին առողջական եւ տնտեսական զժբախտութեան վրայ, պարզելով անոր նիհար գրպանը եւ կրճատելով անոր կեանքը:

Ծխեցէ՛ք, ծխեցէ՛ք, ձեր երկրին սիրոյն, անոր փրկութեան սիրոյն, Ֆիլիփ Մորիսի սիրոյն:

Ամէն պարագայի մէջ, Հայոց հայրենիքին՝ Հայաստանի բնակչութիւնը երկար տարիներէ ի վեր չոգեպինդ կը գործադրէ ՖիլիփՄորիզմը, եւ չզոհանանալով այդ մէկ միջոցով, հայրենասիրաբար կը հեռանայ նաեւ Հայաստանէն՝ հաւասարակշռելու համար կառավարական անհակակշռելի պիւտճէն:

ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

Պոսթըն

Յ.Գ. – Երկարատեւ քանակցութիւններէ ետք, 1988-ին ծխախոտի ընկերութիւնները համաձայն դտնուած էին Միացեալ – Նահանգները կազմող յիսուն նահանգներուն վճարելու 246 միլիառ տոլար, որպէս վնասուց հատուցում՝ բնակչութեան մէջ գործած աւերներուն: Գումարը պիտի յատկացուէր պայքարելու համար ծխախոտի գործածութեան դէմ, մանաւորաբար անչափահասներու մօտ: Միայն երեք նահանգ իրենց ստացած տրեկան գումարները ամբողջութեամբ յատկացուցած են իր նպատակին: Ուրիշներ ծախսած են միայն անոնց հինգ տոկոսը այդ աշխատանքին համար: Մնացեալ գումարին մաս մը գործածած են առողջապահական նպատակներով, իսկ երեսուն տոկոսն ալ յատկացուցած են... հաւասարակշռելու համար նահանգին պիւտճէն: Միւս կողմէ ծխախոտի ընկերութիւնները – ու դեռ միայն Միացեալ – Նահանգներու մէջ – անցեալ տարի ծախսած են 8 միլիառ տոլար գովազդներու համար: Ֆիլիփ Մորիս յայտարարած է թէ վերջին եռամսեային իր չահը բարձրացած է 1·4 միլիառ տոլարի: Հարցը այն է թէ Ամերիկայի նահանգներուն մեծամասնութիւնն իսկ իրենց տարեկան պիւտճէն հաւասարակշռելու համար մասամբ պէտք ունին ծխախոտի ընկերութիւններու ողորմութեան – զերազգային ընկերութիւններուն՝ որոնք փակական ձիավարները կը թուին ըլլալ երկիր – երիվարին:

Գ. Ք.

ՓՐՈՖ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆԻ ԵԼՈՒԹՆԵՐԸ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

Զօրեան հիմնարկի ցեղասպանագիտութեան պրպտումներու տնօրէն՝ փրոֆ. Վահագն Տատրեան Յուլիս ամսուան մէջ բազմաթիւ ելոյթներ եւ հանդիպումներ ունեցաւ կառավարական եւ ակադեմական չրջանակներու հետ Պուէնոս – Այրէսի իր տասը օրուան կայքի ընթացքին: Այս այցելութեան առիթը այն հրաւէրն էր զոր ան ստացաւ իր մէկ կարեւոր գործին ապաներէն լեզուով հրատարակութեան առթիւ: Արդարեւ, տեղւոյն հրէական Ողջակիզման Ուսումնասիրութեան Կեդրոնը, գնահատելով այդ գործին բացառիկ կարեւորութիւնը, ստանձնած էր զայն թարգմանելու եւ հրատարակելու բոլոր գործառնութիւնները: Այնպէս գործով տոքթոր Տատրեան հրէական եւ հայկական ցեղասպանութիւններու բազդատական գուգակշիռը կ'ընէ, մխրճուելով հարցին պատմական ակունքներուն մէջ, եւ որ 76 տպագրեալ էջեր կ'ընդգրկէ ապաներէն իր տարբերակով:

Այս առընչութեամբ Պուէնոս – Այրէսի պետական համալսարանի մէջ ան տուաւ դասախօսութիւն մը այս նիւթին մասին ի ներկայութեան բազմահարիւր արժանթինցի ուսանողներու եւ դասախօսներու: Այս հանդիսութիւնը, տեսակ մը չնորհահանդէս, հովանաւորուած էր Ողջակիզումի Կեդրոնին կողմէ, որուն վարիչ պատմաբանները իրենց ներկայութեամբ յատուկ չեշտ մը դրին այս երկասիրութեան արժէքին վրայ: Այս կէտը վեր առաւ իր ներածական խօսքերով Կեդրոնի նախագահ՝ Տոքթոր Հօզէ Հէրքման: Շնորհահանդէսին ներկայ էր Հայաստանի դեսպան Արա Այվազեան իր օգնականներով, ինչպէս եւ Արժանթինեան Ասպահովութեան Ուժերու արժանթինցի հրամանատարը:

Յաջորդ օրը փրոֆ. Տատրեան հրաւիրուած էր առեւնախօսելու Արժանթինեան Ծերակոյտին առջեւ ուր գինքը ներկայացուց այդ Ծերակոյտի նախագահ եւ Արժանթինի Հանրապետութեան փոխնախագահ՝ Ալֆրէտօ Պրամօն: 45 վայրկեան տեւող այս առեւնախօսութեամբ փրոֆ. Տատրեան հայկական ցեղասպանութեան քրէական տարրերը զատորոշելով զանոնք առընչեց մարդկային իրաւունքներու չարաչար ոտնակոխումի հարցին եւ հարցը զետեղեց միջազգային օրէնսգիտութեան առաջնահերթ հունին մէջ: Այս ելոյթին հիւրաբար ներկայ կը գտնուէին հրէական եւ արժանթինեան կարգ մը կազմակերպութիւններու ներկայացուցիչները, որոնք մարդկային իրաւունքներու հարցին հետապնդման ջատագովները կը հանդիսանան: Ներկայ էին նաեւ Հայաստանի դեսպանը եւ հայ գաղութի ղեկավար տարրերու խումբ մը: Թէ համալսարանի դասախօսութեան եւ թէ Ծերակոյտի առեւնախօսութեան համար իրրեւ թարգման պաշտօնի կոչուած էր վկայեալ արժանթինցի երիտասարդ մանագիտուհի մը:

Իր կայքի երրորդ օրը տոքթ. Տատրեան մօտաւորապէս մէկ ժամ տեւողութեամբ հանդիպում մը ունեցաւ Արժանթինի Արտաքին Գործոց նախարարութեան մէջ պաշտօնակալ՝ Մարդկային Իրաւունքներու բաժնի պատասխանատու դեսպան՝ տոքթոր Լէանտրօ Տէսթուլի հետ, ի ներկայութեան Հայաստանի դեսպան՝ Արա Այվազեանի եւ իր օգնական եւ թարգման՝ Ռուբէն Մօզեանի: Կրկին արծարծուեցան Արժանթինի կառավարութեան՝ հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչնալու հարցը եւ զայն, յատ դեսպանին, առ այժմ խոչընդոտող կարգ մը ազդակները: Ինչպէս ծանօթ է, Տէսթուլ ասկէ չուրջ 15 տարի առաջ Մխայեալ Ազգերու Մարդկային Ճանճնախումբի բաղկացուցիչ ենթայանձնախումբին մէջ, Ժընեւ, Զուիցերիա, որոշաղրիչ դեր մը խաղաց որպէսզի անդլիացի մասնագէտ Պէնժամին Ուիթիքէր-ի տեղեկագիրը ի վերջոյ ճանաչուի զանկ (14 – 1 քուէարկութեան արդիւնքով) ի հեճուկս հոն ներկայ թուրք դեսպանի բազմատեսակ ճնշումներուն: Այդ տեղեկագրով, հայկական ցեղասպանութիւնը տեսակ մը վաւերականութիւն ստացաւ: Դէպքերու՝ Հայերու համար բարեյոյս հոլովոյթով մը Տէսթուլ այս տարի այդ ենթայանձնախումբին նախագահ ընտրուած է եւ ունի կարգ մը ծրագիրներ, որոնք դրական ներգործութիւն մը կրնան ունենալ Հայերը այդքան տագնապեցնող ցեղասպանական հարցի ճանաչման խնդրին մէջ: Տեսակցութիւնը մեծ մասամբ տեղի ունեցաւ ֆրանսերէն լեզուով, իսկ Մօզեան Հայաստանի դեսպանին համար թարգմանութիւն ըրաւ:

Յաջորդ օրը փրոֆ. Տատրեան հրաւիրուած էր Արժանթինի Արդարութեան նախարարութիւնը, ուր Մարդկային Իրաւունքներու բաժնի վարիչ՝ տոքթոր Տիանա Քօնթի, իրեն հետ պիտի տեսակցէր: Վերջին վայրկեանին հիւանդանալով, իր օգնականը՝ դրեթէ մէկուկէս ժամ տեսակցեցաւ Տատրեանի հետ, յատկապէս այն թրքական պատերազմական Առեւտրի մասին, որ 1919 – 1921 ժամանակաշրջանին վաւերական թրքական փաստաթուղթերու հիման վրայ դատավճիռներ արձակած էր: փրոֆ. Տատրեան իր ուշադրութեան յանձնեց այն ստոյգ պարագաները ուր Թուրք օբէնտիրներ, դատախազներ, դատաւորներ, եւ նոյնիսկ Սուլթան Վահտէտտինը, դատավարութեան որոշ հանգրուաններուն չեչտած էին հայկական ջարդերուն եւ տեղահանութեան ոճիրին մարդկային իրաւունքներու դէմ ոճիրներ ըլլալու հանգամանքը: Տեսակցութեան կրկին ներկայ էր դեսպան Այվազեան եւ իր օգնականը՝ Մօզեան:

Կայքի հինգերորդ օրը տոքթոր Տատրեան մէկ ժամ տեւողութեամբ տուաւ երկրորդ համալսարանական դասախօսութիւն մը փիլիսոփայական կաճառի հովանաւորութեամբ՝ Արժանթինի Պետական համալսարանին մէջ, թարգմանութեան մօտաւորապէս մէկ ժամ տեւողութեամբ հանդիպում մը ունեցաւ Արժանթինի Արտաքին Գործոց նախարարութեան մէջ պաշտօնակալ՝ Մարդկային Իրաւունքներու բաժնի պատասխանատու դեսպան՝ տոքթոր Լէանտրօ Տէսթուլի հետ, ի ներկայութեան Հայաստանի դեսպան՝ Արա Այվազեանի եւ իր օգնական եւ թարգման՝ Ռուբէն Մօզեանի: Կրկին արծարծուեցան Արժանթինի կառավարութեան՝ հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչնալու հարցը եւ զայն, յատ դեսպանին, առ այժմ խոչընդոտող կարգ մը ազդակները: Ինչպէս ծանօթ է, Տէսթուլ ասկէ չուրջ 15 տարի առաջ Մխայեալ Ազգերու Մարդկային Ճանճնախումբի բաղկացուցիչ ենթայանձնախումբին մէջ, Ժընեւ, Զուիցերիա, որոշաղրիչ դեր մը խաղաց որպէսզի անդլիացի մասնագէտ Պէնժամին Ուիթիքէր-ի տեղեկագիրը ի վերջոյ ճանաչուի զանկ (14 – 1 քուէարկութեան արդիւնքով) ի հեճուկս հոն ներկայ թուրք դեսպանի բազմատեսակ ճնշումներուն: Այդ տեղեկագրով, հայկական ցեղասպանութիւնը տեսակ մը վաւերականութիւն ստացաւ: Դէպքերու՝ Հայերու համար բարեյոյս հոլովոյթով մը Տէսթուլ այս տարի այդ ենթայանձնախումբին նախագահ ընտրուած է եւ ունի կարգ մը ծրագիրներ, որոնք դրական ներգործութիւն մը կրնան ունենալ Հայերը այդքան տագնապեցնող ցեղասպանական հարցի ճանաչման խնդրին մէջ: Տեսակցութիւնը մեծ մասամբ տեղի ունեցաւ ֆրանսերէն լեզուով, իսկ Մօզեան Հայաստանի դեսպանին համար թարգմանութիւն ըրաւ:

Յաջորդ օրը փրոֆ. Տատրեան հրաւիրուած էր Արժանթինի Արդարութեան նախարարութիւնը, ուր Մարդկային Իրաւունքներու բաժնի վարիչ՝ տոքթոր Տիանա Քօնթի, իրեն հետ պիտի տեսակցէր: Վերջին վայրկեանին հիւանդանալով, իր օգնականը՝ դրեթէ մէկուկէս ժամ տեսակցեցաւ Տատրեանի հետ, յատկապէս այն թրքական պատերազմական Առեւտրի մասին, որ 1919 – 1921 ժամանակաշրջանին վաւերական թրքական փաստաթուղթերու հիման վրայ դատավճիռներ արձակած էր: փրոֆ. Տատրեան իր ուշադրութեան յանձնեց այն ստոյգ պարագաները ուր Թուրք օբէնտիրներ, դատախազներ, դատաւորներ, եւ նոյնիսկ Սուլթան Վահտէտտինը, դատավարութեան որոշ հանգրուաններուն չեչտած էին հայկական ջարդերուն եւ տեղահանութեան ոճիրին մարդկային իրաւունքներու դէմ ոճիրներ ըլլալու հանգամանքը: Տեսակցութեան կրկին ներկայ էր դեսպան Այվազեան եւ իր օգնականը՝ Մօզեան:

Կայքի հինգերորդ օրը տոքթոր Տատրեան մէկ ժամ տեւողութեամբ տուաւ երկրորդ համալսարանական դասախօսութիւն մը փիլիսոփայական կաճառի հովանաւորութեամբ՝ Արժանթինի Պետական համալսարանին մէջ, թարգմանութեան

ԱԿՆԱՐԿ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ՝ ԱՍՏ ՀԱՆԳՋԻ՝ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

– Լա՞ծ ես հայկական խօսքը, որ կ'ըսէ. – ««Գնա՛ մեռիր, եկուր սիրեմ»»:

– Այո, բայց կարելի է նաեւ նոր մը աւելցնել անոր, ըսելով՝. – «Գնա՛ մեռիր, դնա՛ չեմ սիրեր»:

– Ինչո՞ւ նման ժխտականութիւն:

– Քանի որ, ոչ ոք յիշեց Հոգելոյս Գարեգին Ա. Կաթողիկոսի վախճանման բ. տարելիցը:

***

– Ո՞վ պրած է «Եւ յիշատակս ալ քառամի, Ահի ա՛յն ատեն ես կը մեռնիմ»:

– Անշուշտ Պետրոս Դուրեան:

– Այո, բայց նաեւ, ըստ երեւոյթին, Դարեգին Ա. Կաթողիկոս, երբ նկատի առնենք անոր հանդէպ տա մոռացութիւնը:

***

Ըստ երեւոյթին, 1999 Յուլիսի սկիզբին, Գարեգին Ա. Կաթողիկոսի գալստեան չուրջ բոլորուած եկեղեցականները, քաղաքական թէ պետական գործիչները, նաեւ անոր վախճանման չուրջ անդրադարձած մամուլն ու գրողները, պարզապէս ճեւական տխրութիւն մը կը ցուցաբերէին, կամ պաշտօնական արարողութիւն կը կատարէին, քանի անոր բացակայութենէն ահա երկու տարիներ եւս, համարեա ոչ ոք անդրադարձաւ անոր յիշատակին:

Հակառակ մամուլին ջանադիր հետեւելուս եւ բոլոր ջանքերուս, որ գտնեմ Գարեգին Ա. Կաթողիկոսի վախճանման բ. տարելիցին նուիրուած որեւէ յոդուած, անոր փրկութեան սիրոյն, Ֆիլիփ Մորիսի սիրոյն:

Ամէն պարագայի մէջ, Հայոց հայրենիքին՝ Հայաստանի բնակչութիւնը երկար տարիներէ ի վեր չոգեպինդ կը գործադրէ ՖիլիփՄորիզմը, եւ չզոհանանալով այդ մէկ միջոցով, հայրենասիրաբար կը հեռանայ նաեւ Հայաստանէն՝ հաւասարակշռելու համար կառավարական անհակակշռելի պիւտճէն:

ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

Պոսթըն

Յ.Գ. – Երկարատեւ քանակցութիւններէ ետք, 1988-ին ծխախոտի ընկերութիւնները համաձայն դտնուած էին Միացեալ – Նահանգները կազմող յիսուն նահանգներուն վճարելու 246 միլիառ տոլար, որպէս վնասուց հատուցում՝ բնակչութեան մէջ գործած աւերներուն: Գումարը պիտի յատկացուէր պայքարելու համար ծխախոտի գործածութեան դէմ, մանաւորաբար անչափահասներու մօտ: Միայն երեք նահանգ իրենց ստացած տրեկան գումարները ամբողջութեամբ յատկացուցած են իր նպատակին: Ուրիշներ ծախսած են միայն անոնց հինգ տոկոսը այդ աշխատանքին համար: Մնացեալ գումարին մաս մը գործածած են առողջապահական նպատակներով, իսկ երեսուն տոկոսն ալ յատկացուցած են... հաւասարակշռելու համար նահանգին պիւտճէն: Միւս կողմէ ծխախոտի ընկերութիւնները – ու դեռ միայն Միացեալ – Նահանգներու մէջ – անցեալ տարի ծախսած են 8 միլիառ տոլար գովազդներու համար: Ֆիլիփ Մորիս յայտարարած է թէ վերջին եռամսեային իր չահը բարձրացած է 1·4 միլիառ տոլարի: Հարցը այն է թէ Ամերիկայի նահանգներուն մեծամասնութիւնն իսկ իրենց տարեկան պիւտճէն հաւասարակշռելու համար մասամբ պէտք ունին ծխախոտի ընկերութիւններու ողորմութեան – զերազգային ընկերութիւններուն՝ որոնք փակական ձիավարները կը թուին ըլլալ երկիր – երիվարին:

Գ. Ք.

Նուիրեամբը Հայ դեսպանին օգնական՝ Ռուբէն Մօզեանին: Նիւթն էր՝ Հայկական եւ հրէական ցեղասպանութիւններուն մէջ համանմանն եւ այլանմանը տարբերու զուգորդութիւնը: Մէկ ժամ տեւող այս դասախօսութիւնը ձայներիզի վրայ արձանագրուած ըլլալով, յառաջիկային պիտի հրատարակուի, սպանիերէն լեզուով համալսարանի մատենաշարին մէջ:

Ասոնցմէ դուրս, փրոֆ. Տատրեան այցելեց Պուէնոս – Այրէսի չորս տարբեր հայկական վարժարանները (Հայ Կեդրոն, Բարեգործական, Մխիթարեան եւ Մրմեան) եւ անոնցմէ ամէն մէկի աւարտականն երեք դասարանցիներուն աշակերտներուն հետ զրուցեց հայկական ցեղասպանութեան իր ուսումնասիրութեան ուղղութեամբ տարած աշխատանքներու մասին:

Ամէն անգամ ան չեչտեց որ մեր դժբախտ հայ ազգը, որ միշտ լքուած մը նացած է մեծ ազգերու կողմէ, նուիրեալներու փաղանդի մը պէտք ունի, որուն համար զոհողութեան ոգին կենսական պայման մըն է: «Միայն մենք, այո՛ մի՛այն մենք, մեր ուժերուն ներած չափով եւ նոյնիսկ աւելիով, պէտք է տէր կանգնինք մեր դատին, այլապէս այդ սրբազան դատը յաւէտ մոռացութեան ենթարկուելու վտանգին ենթակայ է», ըսաւ ան:

Այս կապակցութեամբ ան վեր առաւ այն իրողութիւնը, որ ապանիերէնը յարաճուն վերելքի մէջ է եւ անդլերէնէ յետոյ ուրիշ լեզու մը ըլլալու հեռանկարը ունի: Որով, կոչ ըրաւ հայ աշակերտներուն, որ պիտակցին այս հեռանկարին, եւ ինծայելիք առաւելութիւններուն եւ լրջօրէն մտածեն հարթպիտական ասպարէզի մէջ նեռուելու վրկ որոշումի մը մասին: Նկատելի էր, որ այդ դպրոցները յաճախող արժանթինցի աշակերտներն ալ (բացի Հայ Կեդրոնի դպրոցէն, ուր աշակերտները բոլորն ալ, առանց բացառութեան, հայ են) լարուած կերպով կը կրնդրեցին Տատրեանի խօսքերը:

Իր կայքի նախավերջին օրը փրոֆ. Տատրեան Հայ Կեդրոնին մէջ հայ գաղութին համար տուաւ դասախօսութիւն մը հայերէն լեզուով: Իրեն ի պատիւ տրուեցան երկու ճաշեր, մին Հայ Կեդրոնի կողմէ, միւսը Հայաստանի դեսպանին կողմէ:

ԻՐԱՔԻԿ

ած, կամ թէկուզ եկեղեցական հոգեհանգստեան պաշտօն, ափսո՛ս որ չկրցայ հասնիլ նպատակիս (*): Իրողութիւնը պարզ է. մոռացութիւն եւ անկէ եզրակացուող երախտամոռութիւն: 1977-էն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռին բարձրացած եւ ապա 1995-էն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան գահին բազմած փայլուն եկեղեցականին նկատմամբ ցուցաբերուած աներախտապիտութիւնը, անշուշտ, միայն ուղղուած չէ ինքզինք առարկայ եկեղեցականին, այլ ընդհանրապէս կ'ապացուցէ այս համատարած վերեւոյթը, որուն կ'արժանանայ հայ եկեղեցւոյ թէ մամուլին, հայ զրոյցին թէ տիպ ու տարին ծառայած նուիրեալներըը: Եւ մենք, յաճախ հարց կու տանք, թէ ինչո՞ւ երիտասարդներ չեն ընտրեր ազգային ասպարէզներ, ինչո՞ւ կը խուսափին մեր ազգային կառոյցներէն եւ ինչո՞ւ անտարբեր են իրենց ազգային արժէքներուն նկատմամբ: Սակայն, պատասխանը պարզ է՞, որ նորահաս սերունդը տեսնելով նախկիններուն ցուցաբերուած երախտամոռութիւնը, իրենց առջեւ տեսնելով հայ գիրին ծառաներուն թշուառ ու անտէր վիճակը, բնականաբար կը հեռանայ լիշեալ ապերախտ ու անհրապոյր մարդերէն: Ինչ կարելի է ապասել իր հոգեւոր պահին դեռ թարմ յիշատակը արհամարհողժողովուրդէն, ինչ ակնկալել իր միաբանակիցն ու երէկի հոգեւոր մեծը անդոնող եկեղեցիէն: Սա, մեռմահու հեգնանք չէ՞ անոր, որ տակաւին մի քանի տարիներ առաջ կ'առաջնորդէր իր եկեղեցին, իր հօտը, կը կազմակերպէր անմոռանալի հայ գիրքերու ցուցահանդէսներ եւ քաջալերը կը հանդիսանար հայ մամուլին եւ վարժարանին:

Հասկնանք, հետեւողական ծրագիր կայ հոկտեմբեր 27-ի նահատակներուն դասը ժողնել տալու՝ քանի այդ քաղաքական ծալքեր ունեցող ոճիրի մը բացայայտումը պիտի ըլլայ. չմոռնանք, որ մարդիկ հետամուտ են եղբայրասպան եւ քաղաքական նպատակներով ինկած նահատակներու յիշատակը անթեղելու՝ նոր կիրքեր չրոդրոքելու համար. հազիւ հազուիչ է հին դատերն ու սպանութիւնները կոծկելու ոմանց յամառութիւնը՝ նոր վէրքեր չհրահրելու նպատակով. բայց, ինչո՞ւ բան մ'իսկ չարտասանել հոգեւոր մեծի մը մասին կամ տող մ'իսկ չգրել եկեղեցական գործիչի մը մասին, որուն դպաղին չուզը նախապահին վառարանը հանդուցեալին ուղղուած՝ թէ վախճանեալը գիտնական էր ու մըտաւորական պայծառ եկեղեցական, կը վայէն անոր հեղինակութեանը. կամ, հակառակ լիբանանահայ օրաթերթի մը մեծ յաւելուածի հրատարակումին վախճանեալին նուիրուած, երկու տարիներ ետք փոքր անդրադարձով մ'իսկ զլացումը մլոքեր պղտորող փաստ չէ՞ մթէ:

Այսօրուան «Աստ Հանդէսի»ին մտահոգիչ կէտը կը կայանայ երախտամոռութեան վարակին չուզը, որ սկսած է դըրսեւորուիլ ե'ւ համեստ նուիրեալներու ե'ւ վաստակաշատ գործիչներու, ե'ւ չնչոդ տարրերու եւ անկենդան երախտաւորներու նկատմամբ, որոնց բացակայութեան, վստահաբար մեր ազգային կեանքը կը դառնայ ժլատն եւ անկենսունակ, միապաղաղ եւ վանողական: Արդարեւ, եթէ մենք վառ պիտի չպահենք յիշատակը մեր մօտիկ անցեալի գործիչներուն, եթէ մեն'ք մե'ր իսկ ձեռքով երկրորդ անգամ պիտի թաղենք մեր երախտաւորները, ապա, ո՞ր մնաց մեր ազգային ու բարոյական արժէքները, որոնց չքեղութենէն կապուած է մեր լինելութիւնն ու յարատեւութիւնը այս համաշխարհում մշակոյթներու սպառնացող համաչխարհանյացման օրերուն, ազգային մշակոյթներու սպառնացող համաչխարհանյացման ճիրաններուն դիմաց: Ուստի, անթոյլատրելի է բարոյական ու ազգային որեւէ ընկրկում երախտամոռութեան ճամբով, քանզի նման երեւոյթ առաւե՛լ պիտի արագացնէ մեր ազգային դիմադիմին ձեւախեղումն ու ազգային ինքնութեան ուծացումը:

Ցամենայնդէպս, Գարեգին Ա. Վեհափառ երկրորդ տնազամ ըլլալով «ճաշակեց» «Աստ Հանդէսի» մը, նաեւ ահազանգելով, որ իր ճամբով մեր կեանքին մէջ սկսած է արձանագրուիլ «Աստ Հանդէսի» նորին երախտագիտութիւնը... մոռացումի եւ ուրացումի այս օրերուն:

ԱՒԵՏԻՍ ՌԱՋՄԻԿ

«Կանչ», Յուլիս 28

(*) ԽՄԲ.– «ՅԱՌԱՋ»ի.– Գարեգին Ա. Կաթողիկոսի վախճանման Բ. տարելիցին ի յիշատակ, «Յառաջ»ի Յուլիս 29-ի եւ 30-ի թիւերուն մէջ, լոյս տեսաւ Լեւոն Շաուղեանի յօդուածը՝ «Գարեգին Ա. Կաթողիկոսի "զրոյց"ները Ճովաննի կուայթայի հետ»:

ՍՏԱՑԱՆՔ

ՄԱՐՋԱԿԱՆ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԷՆ ԵՒ ԱՐԴԻ ՄԱՐՋԱԽԱՂԵՐ

*
**

ՀՆԱԴԱՐԵԱՆ ԵՒ ԱՐԴԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Պատրաստեց՝ ԿԱՐՊԻՍ ԳՈՒՑՈՒՄՃԵԱՆ

Աթէնք, 2000

ԿԱՐԵԼԻ՞ Է ՄԵՂՄԵԼ ԹԱԼԻՊԱՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

Աֆղանիստանի թալիպանները, Յունիսին, իրենց մէկ արարքին պատճառով ընդդիմութեան բաւական լուրջ արտայայտութիւններու թիրախ եղած են: Անոնցմէ խումբ մը խուժած է հիւանդանոցէ մը ներս, ուզելով խուզել զլուխները այն բժիշկներուն եւ հիւանդապահներուն որոնք հարկաւոր երկարութեամբ մօրուքներ չունէին: Նոյնիսկ գործողութեան սրահէն դուրս քաշած են վիրաբոյժ մը, պատճառ ըլլալով անոր հիւանդին մահուան:

Բժշկական կազմ փորձած է ընդդիմանալ, նախատելով թալիպանները: Ապարդիւնք անցած, պարտած են դանդաղելու նահանջապետին: Այս վերջինը չատ լարուած հանդիպում մը ունեցած է կրօնական այդ ոստիկաններուն հետ: Պատահաբար թալիպաններու դէմ տարուան առաջին ցոյցը նկատուեցաւ եւ կը կարծուի որ ուրիշներ կը յաջորդեն, քանի որ թալիպաններու մեծամեծերը որոնք պերաղոյն պետին՝ մոլլա Օմարի խորհրդականներն են, կը չարունակեն դէմ վարուիլ ՄԱԿ-ի եւ մարդասիրական օտար կազմակերպութիւններու հետ:

Ոչ կառավարական չատ մը կազմակերպութիւններ կը խորհին թէ թալիպաններուն նպատակն է զիրենք մեկնումի մղել, մինչ մէկ միլիոն Աֆղաններ անապաստան են երկրին մէջ, իսկ երաշտին պատճառած սովին սպառնալիքին ենթակայ են աւելի մեծաթիւ բազմութիւններ: Եթէ այդ կազմակերպութիւնները երկրէն մեկնին, թալիպանները միջազգային չրջանակներէ աւելի պիտի մեկուսանան եւ կորուստի մատնեն միլիոնաւոր բնակիչներ:

Պուտուտայի երկու հսկայական արձաններուն քանդումէն ետք, կրօնական չարք մը հրովարտակներ եւ կրօնական ոստիկանութեան գործողութիւնները աւելի զժուարացուցած են մարդասիրական կազմակերպութիւններու աշխատանքը որ կը միտի մարդկային աղէտի մը արգելք ըլլալու: Աֆղան ցեղախումբի մը պետ լսած է թէ թալիպաններուն չափաւորները կորսնցուցած են պայքարը եւ խօսք չունին ներկայի ղեկավարութեան մէջ: Անոնք կ'ուզեն որ արեւմուտքցիները ի վերջոյ մեկնին, իրենք ալ դուռ իսլամական պետութիւն մը ստեղծեն: Աֆղանական աղբիւրներու համաձայն, ծանօթ ահաբեկիչ Ուսամա պէն Լատէն, արաբ ուրիշ ծայրայեղականներ, նաեւ փաքիստանցի կրօնական ղեկավարներ մոլլա Օմարի խորհրդականներն են:

Մայիսէն ի վեր թալիպանները հիւանդանոցներ փակած, ՄԱԿ-ի տեղացի պաշտօնեաներ ձերբակալած են. անոնք ըսպառնալիքներ ալ ըրած են օտար աշխատողներու:

Իսկ Մայիսի վերջաւորութեան վերջ դրած են ՄԱԿ-ի անդեղէնի Համաչխարհային ծրագրին հետ տարուած բանակցութիւններուն: Այդ ծրագրին կիրարկողները ուզած են իրաւունք ունենալ իրենց պահած 116 հացադրմնարանները քննելու, հակառակ պարագային զանոնք փակելու սպառնալիքով:

Մայիս 31-ին թալիպանները Աֆղանիստանի մէջ պաշտօնավարող օտարականներէն պահանջած են նոր հարցարաններ ստորագրել, յանձն առնելով ենթարկուիլ իսլամական օրէնքներուն եւ կրօնական ոստիկանութեան: Մարդասիրական կազմակերպութիւններու անդամները պարտին հրաժարիլ երաժշտութիւն ունկընդրելէ, «անբարոյական» դիպուածներ կրնդունէ, ալքոլէն, Աֆղաններ հարցապնդելէ եւ ապրող արարածներ լուսանկարելէ: Զանազան պարագային անոնց պիտի սպառնայ արտաքսումէն մինչեւ քարկոծումի պատիժը:

Միւս կողմէն, Քապուլի ղեկավարութիւնը ամառնային յարձակումի մը անցած է հակաթալիպանեան ճակատին դէմ որուն ղեկավարը Ահմատ Շահ Մասուտն է: Անոնք իրենց ձեռքը կը պահեն երկրին հիւսիս – արեւելեան նահանգը: Կը կարծուի որ տաճն մը կրնան տոկալ, չնորհիւ Ռուսաստանէն, Իրանէն եւ Հնդկաստանէն առնուած զինամթերքին:

Մինչ մէկ կողմէն թալիպանները արտաքին աշխարհէն կը խզուին, արեւմտեան տէրութիւնները ճնշում կը բանեցնեն Փաքիստանի վրայ որպէսզի զադրի անոնց զօրակցելէ: Երկրին նախագահը պատասխանելով այդ ճնշումներուն, ըսած է թէ իսլամական չարքայինները կը մնասեն Փաքիստանի պատկերին եւ պատճառ կ'ըլլան որ ներդրումի տրամադրը օտարները հեռանան: Ան հրահանգած է նաեւ որ աֆղան ապաստանեալներու բանակավայրերուն մէջ պաղտնի գէնքերու վճռատուք մը կատարուի:

Այնպէս կը թուի որ միջազգային խզուածութիւնն ու պատիժները աւելի կը զօրացնեն թալիպանները. եւրոպացի դէտեր համոզուած են որ երկար ժամանակի վերականգնումի յատկացումներ աւելի օգտակար կ'ըլլան չափաւոր տարրերու իշխանութիւնը աւելցնելու եւ Աֆղաններուն խաղաղութեան պահանջին մղելու:

ՔԱՂՀԱՆ

ԹԻ՞Ւ 17 ԹԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԱՐԱԳՈՑՐԸ ԿԸ ՊԱՏՌԻ

– Այնպէս է, սակայն ամուսինս չա՛տ հարպիկ, չա՛տ ազդեցիկ մարդ է, կրնայ հաղար տեսակ խաղեր խաղալ ինծի, նոյնիսկ անանկ մը զնել, որ ես յանցաւոր ըլլամ եւ ինք արդար... Չխոսակը՝ ես այդ մարդին կը վախնամ եւ կ'ուզեմ, որ պլուխս փորձանք չի գայ...

– Որո՞նց հետ կը փափաքիք խօսիլ այդ գործին մասին:

– Օրինակի համար, եթէ կարելի ըլլար Զօհրապ էֆէնտիի հետ անգամ մը տեսնուիլ:

– Անկարելի բան մը չէ:

– Դուք կը ճանչնաք զինքը, պրն՞ Կիկո:

– Բնականաբար, – պատասխանեց Կիկո:

– Կրնաք զիս դիրով մը ներկայացնել իրեն:

– Դիրով կարելի չէ, բայց եթէ կ'ուզէք՝ օր մը իր գրասենեակը կ'երթանք, եւ անձամբ կը ներկայացնեմ... Ես չեմ կրնար Զօհրապի պէս մէկու մը յանձնարարական դրել:

– Իրաւունք ունիք, – պատասխանեց զեղանի էլիզ, – աւելի աղէկ է, որ անձամբ երթանք, ներկայանանք իրեն:

– Ուրեմն երբոր կ'ուզէք, իմաց տուէք:

– Միայն թէ դուք պէտք է, որ զիս ներկայացնէք իբրեւ հին ծանօթ մը, որպէսզի ազդեցութիւն մը ընէ: Եթէ ըսէք, որ այսօր զիս ճանչցաք, այն տեսն ներկայացումը իր կարեւորութիւնը կը կորսընցնէ:

– Շատ աղէկ, իբրեւ հին ծանօթ կը ներկայացնեմ, – հաւանեցաւ Թորոսեան:

– Ուրեմն, եթէ կ'ուզէք, ճամբայ ելլենք...

– Ո՞ւր, – հարցուց Թորոսեան:

– Զօհրապ էֆէնտիի գրասենեակը:

– Հիմա՞, անմիջապէ՞ս, – զուչեց Թորոսեան զարմացած:

– Ինչո՞ւ չէ... չեմ ուզեր, որ գործը ձգձգեմ, հիմա ամէնէն յարմար է, քանի որ դուք ալ լսիք, որ գործ մը չունէիք:

– Այո՛, բայց քիչ մը եռքը գործ ունիմ...

– Կ'աղաչեմ, այն փոքրիկ զոողութիւնը ըրէք ինծի... արդէն դուք հոն մնալու պէտք չունիք, զիս կը ներկայացնէք ու կը մեկնիք... տեղը հեռո՞ւ է:

– Լաճիվէրտ խան, Ղալաթիա, Թիւնէլի մօտերը:

– Տասը վայրկեան չի տեւեր: Կէս ժամէն կրնաք դարձեալ հոս ըլլալ, եթէ կ'ուզէք, կառք մը կը բռնենք ու այնպէս կ'երթանք:

Անծանօթուհին այնքա՜ն թախանձեց, իր աղուոր աչքերուն հմայքը՝ այնքա՜ն գործածեց, որ Գրիգոր Թորոսեան հաւանեցաւ ճամբայ ելլելու:

– Ինծի կը թուի որ տեսնենք թէ Զօհրապ էֆէնտին իր գրասենեակը պիտի դտնե՞նք, – ըսաւ, երբ կամուրջէն անցան:

– Այն ալ մեր բախտին կը թողունք, – պատասխանեց զեղուհին:

Բախտը կը ժպտէր իրենց. արդարեւ Զօհրապ իր գրասենեակն էր:

Թորոսեան զեղուհիին ընկերակցութեամբ ուղղակի մտաւ մեծանուն վաստակաւորին սենեակը: Եթէ առանձին ըլլար, բնականաբար պիտի չհամարձակէր, այսպէս, յանկարծակի անհանդիստ ընել անձ մը, որ ո՛վ գիտէ, գատական ի՛նչ կարեւոր խնդիրներով զբաղած էր: Բայց իր հետը ունէր չիք ու զեղեցիկ կին մը, եւ Թորոսեան լաւ գիտէր, թէ այդպիսի ընկերակցութեամբ մը կրնար առանց անպատեհութեան եւ առանց իր վրայ դիտողութիւն հրաւիրելու մտնել Զօհրապի սենեակը:

Երբ ներս մտան, արդարեւ փաստաբանը այնչա՛փ խորասուզուած կը թուէր թուղթերու դէզի մը մէջ, որ ո՛չ անոնց ոտնաձայնը լսեց եւ ո՛չ ալ զիրենք նըշմարեց:

Թորոսեան ստիպուեցաւ թեթեւ մը հազալ:

Այն տեսն Զօհրապ գլուխը վեր առաւ եւ նչմարեց երկու այցելուները, իր ակնարկը պահ մը սեւեռած մնաց զեղուհիին վրայ:

«Կիկո»ի խմբագիրը վայրկեանը չարմար սեպեց իր ընկերուհին ներկայացնելու:

– Զօհրա՛պ էֆէնտի, – ըսաւ, – կը նեղէք, որ ձեզ անհանդիստ ըրինք... տիկինը կը փափաքէր անձնական գործի մը համար ձեզի հետ խորհրդակցիլ, խնդրեց ինձ, որ իրեն ընկերանամ, որպէսզի ձեզի ներկայացնեմ, տիկին Էլիզ...

– Շատ չնորհակալ եմ, – պատասխանեց Զօհրապ, – հրամմեցէ՛ք, նստեցէ՛ք:

Եւ գրասեղանին մօտ աթոռ մը ցոյց տուաւ կնոջ:

Թորոսեան մնաց ոտքի վրայ:

– Առանձին պիտի գար, բայց չհամարձակեցաւ:

– Ի՞նչ է ձեր խնդիրը, – հարցուց Զօհրապ:

Գեղուհին առանց պատասխանելու՝ ամչկոտ կերպարանք մը առաւ:

– Ամուսնալուծութեան գործ մը ունի, – միջամտեց Թորոսեան:

– Երբ առանձին մնանք, կը բացատրեմ ձեզի, – ըսաւ կինը:

Այս խօսքը պարզապէս Թորոսեանը ճամբու դնելու ձեւ մըն էր:

– Ինչպէս որ կ'ուզէք, տիկի՛ն, – ըսաւ Զօհրապ:

– Միայն թէ կը վախնամ, որ ձեզ անհանգիստ ըրի, որովհետեւ ներս մտած ատենս տեսայ, որ չափազանց զբաղած էիք:

– Այո՛, քանի մը կարեւոր գործեր կ'ուսումնասիրէի, բայց վնաս չունի: Թող քիչ մը եռքը ըլլայ...

Թորոսեան տեսնելով, որ իր հոն կեցողը այլեւս աւելորդ է՝

– Մնաք բարով, – ըսաւ եւ դուրս ելաւ:

Պահ մը մտածեց իր ընելիքին վրայ:

«Չգիտեմ հեռանա՞մ, թէ՞ սպասեմ, – ըսաւ ինքնիրեն, – աս կինը կարծեմ պարզապէս իմ քթիս խնդաց եւ զիս գործիք սրաւ մինչեւ Զօհրապին զալու համար եւ յետոյ պարզապէս զիս վռնտեց դրեթէ: Ատանկ բան կ'ըլլայ... մանաւանդ ինծի: Ես հոս կը սպասեմ եւ օձիքէն կը բռնեմ... ատանկ կին մը զիւրաւ ձեռք չանցուիր ու անցուելէ ետքն ալ ձեռքէ չվախցուիր... խորհրդակցութիւնը չատ երկար չի կրնար տեւել, հազիւ կէս ժամ... արդէն Զօհրապ չափազանց զբաղած էր, անշուշտ անոյշ տեղը պիտի կապէ եւ ուրիշ օրուան համար ժամադիր պիտի ըլլայ հետը...»:

Այսպէս մտածելով՝ Թորոսեան լաճիվէրտ խանի դէմը գտնուած ուրիշ խան մը մտաւ, խահուէճխին սուրճ մը պատրեց եւ աթոռ մը առնելով՝ բակը նըստաւ:

(Շար. 44)

Տէր եւ Տիկին Տիգրան Տէվէճեան եւ զաւակները

եւ ընտանեկաց բոլոր պարագաները յաւով կը ծանուցանեն իրենց մօրաքրոջ, մեծ մօրաքրոջ եւ տզզականին՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ
ՅԱՒԼԻԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

(Ծնեալ՝ Թագուհի Սագըզեան)

մահը ոչ պատահեցաւ Օգոստոս 13–ին, 95 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Օգոստոս 17–ին ընտանեկան մտերիմ շրջանակին մէջ։

«ՅԱՌԱՋ». – Մեր ցաւակցութիւնները Տէր եւ Տիկին Տիգրաց Տէվէճեանի եւ ընտանիքին։

50ème Anniversaire
du Pèlerinage
à SAINT-GREGOIRE
de TALLARD

ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ՏԱՐԵԿԱՆ
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Sous l'égide de
l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France
et avec le concours de
l'**Association Cultuelle des Arméniens de GAP et des Hautes Alpes**

Dimanche 9 septembre
à 10h30 — La Sainte Messe sera célébrée par
Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens de Rhône-Alpes
l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens du Sud de la France
Avec la participation de la Chorale SAHAK - MESROP
sous la direction de
Khatchig YILMAZIAN
à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre
Renseignements & Réservations :
— **Cathédrale Arménienne de Marseille, tél. : 04 91 77 84 70**
— **Association Cultuelle des Arméniens de GAP, tél.: 04 92 51 71 80 / 04 92 51 00 87**

—— Participation aux frais ——
Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Festival des arts slaves

Երեւանէն կը հաղորդեն որ «Նոր Ա-նուններ» ծրագրին տարածուած երախա-ները Օգոստոս 24–ին փարիզ կը ժամանեն մասնակցելու համար Վալ տ'Ուազի Սլա-ւական Արուեստներու փառատօնին։

Անոնք ելոյթ կ'ունենան Օգոստոս 26, կիրակի, ժամը 20·30–ին Անկէնի թատ-րոնը, (կեդրոնի պատասխանատուն է Ժան – Փիէր Փոյոթթի, հեռաձայն. – 01 – 30 – 75 – 91 – 90)։

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՏՐԱՆՍԱՀԱՅԱՑ ԿԱԹՈՂԻԿՍ ԽԱԶԻ ՓԱՐԻԶԻ ԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՄՆԱՒԻՒՂԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պա-քալօրէա կը դասաւանդուին. – հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք։

Նոր արձանագրութիւններու համար դի-մել Պրիժիթ Պառսեղանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին։

— ● —

ՀԱՑԿԱՋԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(ԼԻՈՆ)

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի թուականն է Յունիքչաբթի Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին։

Արձանագրութիւնները սկսած են տար-ղէն եւ կը շարունակուին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Յունիքչաբթի, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16։

Աշակերտները կրնան օգտուիլ Յունիք-չաբթի կէսօրուան ճաշէն։

Յաւելեալ մանրամասնութիւններու հա-մար կարելի է հեռաձայնել՝

04 . 78 - 60 . 47 - 18

Թիւին։

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— ● —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu le samedi 22 septembre à 15 heures à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux

Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossiklan : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53



le domaine de chamerolles

45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 héctares avec étang, hébergement en châlets tout confort pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F (selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.
Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille.
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre SPITAK
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

Programme : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 ՖՐ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 ՖՐ.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 ՖՐ.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 ՖՐ.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ 75 ՖՐ.

ԵՒ

«ՅԱՌԱՋ - 50»
(Տաղկախաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 120 ՖՐ.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի։

Թղթատարի ծախքը՝ 30 Ֆր., հատոր ղլուխ։

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris

du jeudi 4 au lundi 8 octobre

à l'occasion de la Béatification de

Mgr. IGNACE MALOYAN

Archevêque de Mardine, martyr en 1915.

le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 24
VENDREDI
24 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·236 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 77e ANNEE — N° 20.236

ՀԱՑԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ՇԲՄՊԷՆՓՐԷՍ՝

(Օգոստոս 22 / 23)

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

(ՕԳՈՍՏՈՍ 22)

ՖՈՒԹՊՈԼ
Վելլի – Մարսէյլ 3 – 0

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼ
Երեւան – Փարիզ 16 – 0

ՊԱՍՔԷԹՊՈԼ. Կիներու մրցաշարք
Նիս – Փասատինա 0 – 20

ՎՈԼԷՅՊՈԼ. Այրերու մրցաշարք
Փարիզ – Պոլիս 0 – 3

ՎՈԼԷՅՊՈԼ. Կիներու մրցաշարք
Սիսիան – Փարիզ 0 – 3

***

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ –
Մեղանի Թէնիս

Մեղանի Թէնիսի մրցաշարքը աւարտած է Երեւանի կիներու եւ Պուքրէյլի այրերու խումբերուն ախոյենութեամբ: Կիներու մրցաշարքին Բ. եւ Գ. տեղերը դրաւած են Վանաձորի եւ Սեւեանակերտի, իսկ այրերու մրցաշարքին՝ Երեւանի եւ Գիւմրիի խումբերը:

***

ԱՄՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՐԻՒՂԸ, ԿԱԶՆ ՈՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ

ԱՄՆ–ու Արտաքին գործերու նախարարին Եւրոպայի ու Եւրասիոյ հարցերով օգնականը Էլիզապէթ Ճոնս Օգոստոս 23–ին մեկնած է Ուկրանիա, ուրկէ Վրաստանի Կովկաս, հանդիպում ունենալու Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի նախագահներուն հետ. այդ հանդիպումներուն կը քննարկուին Կասպից ծովու ընդերքն ու վազի արտահանման հարցերը, Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հեռանկարները:

Իր մեկնումին նախօրեակին ան պատասխանելով լրագրողներու, ըսած է թէ Կովկասեան երեք հանրապետութիւններուն վառնգ կը սպառնայ մինչազգային ահաբեկչութենէն եւ թմրեցուցիչներու ապօրէն առեւտուրէն: Ամերիկացի դիւանագիտուհին աւելցուցած է թէ իր երկիրը պատրաստ է Երեւանին, Թիֆլիսին ու Պաքուին օգնելու այդ հարցերու լուծումին համար:

Ինչ կը վերաբերի Ղարաբաղի հարցին կարգաւորման, ան ցաւ յայտնած է որ Ուկրաինի մէջ վերջնական համաձայնութիւն չէ գոյացած, սակայն գոհ է որ մեծաւաւել աշխատանք կը տարուի եւ երկու նախագահները նոր հանդիպում կ'ունենան:

***

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27–Ի ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբեր 27–ի դատավարութեան Օգոստոս 22–ի նիստին առեանը ունկնդրած է ռուս հոգեբան Նատեժտա Տարաբրինան որ Յուլիս 9–ին երկար զրոյց ունեցած է դատաւոր ամբաստանեալ Ն. Յունանեանի հետ: Հոգեբանին համոզումով այս վերջինին մօտ մեծ է գերիշխելու ձգտումը եւ կրնայ աւելի հեղինակաւոր անձերու ազդեցութեան ենթարկուիլ. կրնայ նաեւ ինք ազդել իրմէ մտաւոր աւելի յետ մակարդակի տէր անձերու վրայ: Տարաբրինա այն կարծիքը յայտնած է որ ամբաստանեալը գործած է ծրագրուած ձեւով:

Նոյն նիստին դատաւոր Ս. Ուզունեան յայտնած է թէ դատարանը մտահոգուած է Ս. Սարգսեանի փաստարան Տիգրան Զանոյեանի վրայ կատարուած ճնշումներու լրատուութեամբ ու անոր եւ ընտանիքին ապահովութեան համար միջոցներու կը ձեռնարկէ: Փաստարանը նախորդ օրը լրատուներու ներկայացուցիչներուն յայտնած է թէ ճնշումի ենթակայ է եւ Յուլիսին հեռաձայնի երկու զանգ զինքը մտահոգած է:

ԻԹԹԻՀԱԹԻ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Պոլսոյ «Ակօս» շաբաթաթերթը Օգոստոս 17–ի թիւին մէջ Նոր հրատարակութիւններու անկիւնը տրամադրած է հետաքրքրական հատորի մը ծանօթացումին: Անոր խորագիրն է «Իթթիհատ վէ Թէրաքքիի մահմետականներու բնակեցման քաղաքականութիւնը». ան աւարտած է երիտասարդ պրպտող Ֆուաթ Տիւնտարի որ ուսումնասիրած է օսմանականներէն Թրքական ինքնութեան անցքի պատմաբանութեան մէջ բնակութիւնը միատարրելու նպատակով Իթթիհատ վէ Թէրաքքիի կիրարկած գաղթի ու բնակեցման քաղաքականութիւնը:

Հեղինակը իր վերջաբանը ներկայացնող տողերով կ'ըսէ. «Ջանացած եմ պետութեան դաղտնի փաստաթուղթերը օգտագործելով պարզել Իթթիհատ վէ Թէրաքքիի կառավարութեան քաղաքականութիւնը որ կը կայանար արաբ, ալպանացի, պոսնիացի, չէրքէզ, դնչու, քիւրտ, լազ ու այլ մահմետական տարրերը իրենց ցեղապետներէն անջատելով Անատոլուի տարածքին կոդմերը բնակեցնելու մէջ որպէսզի անոնք Թրքութեան ձուլարանին մէջ լուծուին, կորսնցնելով իրենց բուն ինքնութիւնը»: Ֆ. Տիւնտար առաջին անգամ ըլլալով օգտագործած ու ընթերցող լայն շրջանակներու ուշադրութեան յանձնած է դաղտնագիր հեռագրեր:

Հայկական տեսանկիւնէն ամէնէն հետաքրքրականն է անոր հետեւեալ մասնանչումը. «Ուսումնասիրութեանս առաջկայ ժամանակաշրջանը հանրութեան առաւել ծանօթ է որպէս Հայերու տարագրութեան եւ կոտորածի շրջան: Թերեւս այս պատճառով կը կարծուի թէ ան ամէնէն աւելի նիւթ եղած շրջանն է խօսակցութիւններու, վիճարկումներու. նաեւ ամէնէն ծանօթը: Ձիշդ է, իրականութիւն է որ Թուրքիոյ պատմութեան ուսումնասիրութիւններուն մէջ ամենամեծ թիւով աշխատանքները Իթթիհատ վէ Թէրաքքիի ու Հայերու հետ անոր առնչութիւնները նիւթ առածներն են: Այսուհանդերձ, այս հատորը ամբողջ մերկութեամբ պիտի չեշտէ հետեւեալ իրականութիւնը. Իթթիհատ վէ Թէրաքքիի օսմանցին իր մէջ կը կրէ չատ մը դաղտնիքներ ու անծանօթ մնացած կէտեր: Այս աշխատանքը ցոյց պիտի տայ որ տարագրութիւնը միակ ինքնութեան մը ուղղուած դաւ չէր, այլ ընդհանուր քաղաքականութեան մը մէկ մասը»:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Շիրաք եւ Ժոսփէն վերադարձան իրենց արձակուրդէն եւ Օգոստոս 23–ին, Էլիզէի պալատը տեղի ունեցաւ Նախարարաց Խորհուրդի վերամուտի առաջին նիստը: Օրակարգը ծանրաբեռնուած չէր, բայց, աւելի ուշ Ժոսփէն կառավարական նիստ կը գումարէր քննելու համար հրատապ հարցերը, ի մասնաւորի Գորսիքայի պարագան: Ընդդիմութիւնը խստօրէն կը քննադատէ կառավարութիւնը, նախընտրելով մոռնալ, որ Ներքին նախարարներ՝ Շ. Փասքուայի եւ Ժ.–Լ. Տըպրէյի օրով կացութիւնը ոչ միայն աւելի վատ չէր, այլ Տըպրէյի օրով է որ ապրանսպաշա պինուորեալներ, ծըպտուած մամուլի «զաղտնի» ասուլիս մը կրցաչ տալ: Գալով կառավարութեան, Գորսիքայէն զատ, այլ կնճռոտ հարցեր ունի, ինչպէս 35 ժամերը, աճը, Եւրօն եւ այլն, եւ այլն:

ՊԷՅՐՈՒԹի պինուորական հարցաքննիչ դատաւոր մը ստիպուեցաւ ընդհատել հարցաքննութիւնը լիբանանեան ուժերու (արդիլուած) քրիստոնեայ կուսակցութեան խորհրդական՝ Թուֆիլը Հինտիի, առողջական պատճառներով: Այս վերջինն փաստաբանը յայտարարած է որ Հինտի չատ տկար է եւ դժուար կը քալէ: Չի կրնար կեդրոնանալ: Միւս կողմէ, «Առանց սահմանի Թղթակիցներ»ու կազմակերպութիւնը նամակով մը դիմած է նախագահ Լահուտի բողոքելու համար լիբանանցի երկու լրագրողներու «ապօրինի» ձերբակալութեան դէմ: Կը դատապարտէ «տեղեկատուութեան ազատութեան բացայայտ կամքը լռեցնելու մեթոտները»: Ծանօթ է որ վերջերս քաղաքացիական երկու քրիստոնեաներ ձերբակալուեցան (մէկ մը ազատ արձակուեցաւ) այն համապատասխանութեամբ թէ չփումներ ունին Իսրայէլի հետ:

ՎԵՑ ՌՈՒՍ ՉԻՆՈՒՈՐՆԵՐ եւ 15 չէչէն անջատողականներ ազատնուած են Օգոստոս 21 – 22–ի ժամանակաշրջանին, ըստ ռուսական աղբիւրներու, որոնք յայտնարարած են նաեւ որ վիրաւորած են պատերազմիկ պետը՝ Շամիլ Բասայեւ, ինչ որ Չէչէնները կը հերքեն:

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ, 2002–ին, հեռատեսիլ – ձայնասփիւռի տուրքը 1,7% յաւելում պիտի կրէ: Երբ ծանուցումի դրութիւն ստեղծուեցաւ հանրային կայաններու համար – եւ չատ փոքր համեմատութեամբ սկիզբը – պատճառաբանութիւնն այն էր որ ծանուցումը թոյլ պիտի տայ անփոփոխ պահել տուրքը: Պարզ է որ ոչ ծանուցումի փոքր համեմատութիւնը, ոչ ալ տուրքերու ամփոփոխ մնալը յարդուեցան:

ԻՐԱՆի Խորհրդարանի երեսփոխանները չորս օրերու վիճարկումներէ ետք, Օգոստոս 22–ին իրենց վստահութիւնը տուին Խաթամիի, լայն մեծամասնութեամբ:

ՈՒԿՐԱՆԻՈՑ հանքին արկածին մեռելներուն թիւը 48–ի բարձրացաւ եւ 37 վիրաւորներուն ալ 16–ը մահամերձ են:

ԺԱՆ – ՓՕԼ ՊԵԼՄՈՆՏՕ, Օգս· 22–ին, եւս Սէն – Ժոզէֆ հիւանդանոցին, ուր փոխադրուած էր Օգոստոս 8–ին, Գորսիքա ունեցած ուղեղային տապնապէն ետք: Ֆրանսայի ամէնէն ժողովրդական դերասանը իր ապաքինումը պիտի չարունակէ փարիզեան իր բնակարանին մէջ:

ՍՊԱՆԻՈՑ կառավարութիւնը դրամական մեծ զոյթակղութեան մը չեմին կը դանուի, ինչ որ բաւական ծանր է վարչապետ Խոսէ Մարիա Ասնարի համար, որ ծանօթ է իր խստակեաց կեանքով եւ պարկեշտութեամբ: Ամէն ինչ սկսած է Յուլիսին, երբ տակարանը ներդրումներ ընող ընկերութիւն մը՝ ժեսքարթերա արդարադատութեան ուշադրութիւնը դարձուցած է: Հաշիւներուն մէջ 18 միլիառ (108 միլիոն եւրօ) Փեսեթասի «ծակ» մը յայտնաբերուած է եւ տնօրէնն ալ բանտարկուած: Հարցը քարդացած է, երբ երեւան եկած է որ տնտեսութեան ենթանախարարն ալ մաս ունի գործին մէջ, քանի ընկերութեան նախագահուհին իր հարազատ քոյրն է: Ենթանախարարը իր հրաժարականը տուած է, խորհրդարանական քննիչ յանձնախումբ մը հաստատուած է, բայց, հարցը չի փակուիր եւ մամուլը ամէն օր կը չարունակէ իր յայտնաբերումները, որոնք Թերթօնի բնոյթ ստացած են:

ԳՈՆԿՐԷՍՄԷՆԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՑԵԽՈՒՐՔ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍԻՆ

Հարաւային Գալիֆորնիայի դեմոկրատ պոնկրէսմէն Է· Շիֆ Օգոստոս 22–ին Եռեւանի մէջ հանդիպումներ ունեցած է պետական դեկավարներու հետ, նիւթ ընելով նաեւ ցեղասպանութեան ԱՄՆ–ու կողմէ ճանաչման խնդիրը եւ վերջերս հրապարակուած Հայելմուրք հաշտութեան վիճայարոյց յանձնախումբը: Երեւան մեկնումէ նախօրեակին իրեն հետ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին ան ըսած է թէ ԱՄՆ–ու Պոնկրէսը այս տարի եւս, ինչպէս անցեալին, պիտի ընդդիմանայ ցեղասպանութեան ճանաչումին: Ան կասկածի տակ առած է Հայելմուրք հաշտութեան Յանձնախումբին կազմաւորման եղանակը, յայտնելով, թէ հայկական կողմի պատասխանատուները հազիւ թէ լայն շերտերու տեսակէտները ներկայացնեն, այդ պատճառով ալ յանձնախումբը չի կրնար վայելել հանրութեան վստահութիւնը եւ հայ ժողովուրդը վերապահութեամբ կ'ընդունի յանձնախումբի գործունէութիւնը:

Շիֆ մտահոգուած է այն իրողութեամբ, որ ցեղասպանութեան հարցը ընդդրկուած չէ յանձնախումբի գործունէութեան օրակարգին մէջ, ինչ որ, իր խօսքերով, «անհասկնալի կը դարձնէ, թէ ինչպէս կարելի է յաջողութեան հասնիլ, անտեսելով ամենակարեւոր հարցը»:

Բացի այդ, դեմոկրատ դունկրէսմէնին կարծիքով, յանձնախումբի օրակարգին վրայ ցեղասպանութեան հարցին բացակայութիւնը կրնայ խոչընդոտ ըլլալ Գոնկրէսի մէջ ցեղասպանութեան հարցը քննարկման առարկայ դարձնելու աշխատանքին: Եթէ հայ եւ թուրք ժողովուրդները քննարկումներ կ'ընեն առանց օրակարգի վրայ ունենալու այդ հարցը, ապա աւելի եւս կը դժուարանայ զայն Գոնկրէսի քննարկման նիւթ դարձնելը:

Միւս կողմէ, Շիֆ չեզոքացնելով հանդերձ մասնաւոր անձերու մակարդակով հայելմուրք երկխօսութեան նշանակութիւնը, խիստ կարեւոր նկատած է, որ այդ երկխօսութիւնը կատարուի պետական մակարդակով:

Աւագ Շիֆ ընդունուած է նաեւ նախագահ Քոչարեանի կողմէ: Այս առիթով, չատ նախագահական մամլոյ քարտուղարութեան, նախագահը պաշտպանելով հանդերձ հայելմուրք երկխօսութեան գաղափարը, ըսած է· «Հաշուի առնելով, որ սա չատ նուրբ եւ զգայուն խնդիր է, ցանկալի է, որ հայելմուրքական յարաբերութիւններուն առընչուող հարցերը քննարկուին պետական մակարդակով, որից Հայաստանը երբեւէ չի խուսափել, կա՛մ քաղաքական ուժերի հնարաւորինս լայն ընդդրկմամբ եւ համաձայնեցուած քայլերով»:

ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ՊԱՐՈՆ ՀԻՆԳ ԱՌ ՀԱՐԻՒՐ ԵՒ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՊՈՂՈՏԱԾ

ՍՏԵՓԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Անցիր օրէնք է կարծէք· Հայը ուր որ ալ երթայ որպէս զբօսաշրջիկ, պէտք է անպայման այցելէ այնտեղի հայկական հաստատութիւնները· եկեղեցի, դպրոց, ակումբ, նոյնիսկ գերեզմանատուն: Արեան կանչն է սա վստահաբար· ուրիշ բան չի կրնար ըլլալ: Ես ալ թափառումներուս ընթացքին, մէյ մը անսացեր եմ այդ կանչին, գացած տեղերս ուր որ հայութիւն գտեր եմ:

Կինս եւ ես, տասնօրեայ շրջապտոյտով Փորթուկալ ենք· իմացած ենք թէ հոն, Լիզպոնի մէջ հայութիւն (չատ) չկայ: Միակ «հայկական» հաստատութիւնը, չատ աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել՝ հայանուն հաստատութիւնը, Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնն է, եւ արուեստի համանուն թանգարանը: Մեր ձեռքի ֆրանսերէն ուղեցոյցը երեք էջերու վրայ մասնաւոր կարեւորութեամբ կը նշէ այդ թանգարանը, որպէս աշխարհի անհատական մեծագոյն հաւաքածոներէն մին, արուեստի եւ հնութիւններու: Որոշած ենք մեր «սուղ» ժամանակէն 2 – 3 ժամ անոր այցելութեան տրամադրել:

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը, որու կողքին է թանգարանը, կը գտնուի Լիզպոնի հին կեդրոնէն չուրջ 2,5 քիլոմեթր հեռու, բարձունքի վրայ: Մեթրոյէն դուրս կու գանք Սպանիոյ անունը կրող ընդարձակ հրապարակին վրայ: Հոն հատուցող չորս շատ լայն պողոտաներուն վրայ, ուր չարքով ինքնաշարժները կը սուրան մեծ արագութեամբ: Հրապարակին եւ Գ. Կիւլպէնկեան պողոտային անկիւնը ԺԲ. դարէն մնացած դեղեցիկ պալատ մը մէջ Սպանիոյ դեսպանատունն է: Հանդիպակաց ափին, մեծանուն բարերարին նուիած դիրքով պրոնզաձոյլ արձանը, յենած՝ քարէ հայկական արձիւնի, մեզի կը վստահեցնէ որ ճիշդ հասցէին եկած ենք· հարկ չկայ կարդալու արձանին քովի մարմարէ տախտակը: Արձանին եռին կը բացուի 7 հեկտար տարածութեամբ պեղեցիկ հանրապարտէզ մը: Ան առաջին իսկ հայեացքէն մեր ուշադրութիւնը կը դրաւէ իր վայելուած քացախի խնամքով· լաւ խուզուած եւ ջրուած մարդեր, միաձեւ յօտուած ծառեր ու ծառուղիներ, ամէն տեսակի գոյնզգոյն ծաղիկներ, որոնց վրայ յեմիլօօրէին անգամ մաքուր պըլուդներ հազած պարտիզպաններ կը շրջունակեն իրենց խնամքը: Պարտէզին մէջտեղը 25·000 քառակուսի մեթր տարածութեամբ հիմնարկութեան եռայարկ արդիական չէնքն է, որուն շինութիւնը աւարտած է 1969–ին: Ապագ քայլերով կ'ուղղուինք դէպի թանգարան. աւա՛ղ մեր չար բախտէն փակ է ան մինչեւ յաջորիկ Հոկտեմբեր, հիմնական վերանորոգութեան եւ ընդարձակման պատճառաւ, որպէսզի կարելի ըլլայ ցուցադրել պահեստանոցներու մէջ մնացած արուեստի ամբողջ գանձերը: Մեզի տրըւած թերթիկը բաւարար է գաղափար մը տալու թէ տասնամեակներու ընթացքին ի՛նչեր է հաւաքած այդ եզակի Հայը: Ուստի կը գոհանանք հիմնարկութեան չէնքին այցելութեամբ, պարտէզով արդիական արուեստի նկարչական ցուցադրութիւնը, համերգասրահները, ընդարձակ լսարանը եւ այլն...:

*
**

Առաջին աշխարհամարտին յաջորդող տարիներէն մինչեւ իր մահը (1955) եւ անկէ վերջ ալ Գալուստ Կիւլպէնկեան միջազգային հանրութեաց չատ աւելի ծանօթ էր «Պարոն հինգ առ հարիւր» ծածկանունով, քան իր բուն ինքնութեամբ: Ինիկ կեսարացի քաղքենի ընտանիքի մը՝ Սարգիս եւ Տիրուհի Կիւլպէնկեանի անդրանիկ զաւակը ծնած է 1869ին Պոլսոյ ասիական ափին Սկիւտար: Իր ուսումը ստացած է նախ՝ Գատըգիւղի Արամեան վարժարանը, յետոյ Պոլսոյ Ֆրանսական Սէն Ժոզէֆ լիսէին մէջ: Իսկ բարձրագոյն ուսումը Լոնտոնի Քինկ'ս քոլէճը, ուրկէ չատ երիտասարդ վկայուած է որպէս ճարտարագէտ: Ժամանակչրջան մըն էր, երբ չատ քիչ բացառութեամբ, ունեւոր ընտանիքներու զաւակները վիճակած էր Եւրոպայի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն մէջ ուսանիլ: Շուտով, ճարպիկ և աչքարաց երիտասարդը կը համարկուի եւրոպական տնտեսական միջավայրին: Իր սուր հոտառութիւնը արդէն կը զգայ քարիւղին առնելիք կարեւորութիւնը, եւ իր միւս գործունէութիւններուն զուգահեռ, աւելի կարեւորութիւն կու տայ այդ ճիւղին: Հազիւ 22 տարեկան, աչ կ'այցելէ Բաքուի նաւթահանքերը ուր ձեռնարկատէրերէն չատերը Հայ էին: Իրրեւ արդիւնք իր հետաքրքրութիւններուն, երկու յօդուած կը գրէ «Ռըվիւ տէ մէօ Մոնտ»ի մէջ, եւ գրքոյկ մը· «Անդրկովկասը եւ Ափշերոնի Թերակղզին» ֆրանսերէն: Եւրոպացի գործիչ մարդոցմէ զատ, այդ գրութիւնները կը գրաւեն նաեւ ուշադրութիւնը օսմանեան կառավարութեան, որ իրմէ կը խնդրէ կայսրութեան նաւթի հնարաւոր պաշարներուն մասին տեղեկագիր մը պատրաստել (այն ատեն Միջագետքը եւ ամբողջ Արաբական Թերակղզին օսմանեան հող էին դեռ): Գ. Կիւլպէնկեան որ արդէն Օսմանեան դրամատան խորհրդականն էր, եւ միւս կողմէ 1902–ին Անգլիոյ քաղաքացի դարձած, չուտով կը գտնուի միջազգային տակարկութիւններու խաչմերուկին: Ինք է որ կը կատարէ բանագնացի դերը անգլիական, ռուսական, Ֆրանսական, գերմանական ընկերութիւններուն եւ օսմանեան կառավարութեան միջեւ: Իրեն կը վերապրուի «կարմիր դիծը», որ կը պարփակէ բացի Պարսկաստանէն եւ Քուէյթէն, Միջին – Արեւելքի քարիւղի բոլոր պաշարները: Առաջին աշխարհամարտը իր բոլոր հետեւանքներով կու գայ, անշուշտ, ի դերեւ հանելու այդ «նուրբ» սակարկութիւնները: Զկային այլեւս գերմանական, ռուսականն եւ օսմանեան կայսրութիւնները: Բայց միւսներուն ախորժակները աւելի սրուած էին· պէտք էր նաեւ «իսայել» քեմալական Թուրքիան, Մուսուլի հսկայ պահեստներուն պատճառաւ: Եւ դարձեալ այդ «չատ նուրբ» սակարկութիւնները կը վստահուին Գ. Կիւլպէնկեանին որ իրրեւ միջնորդ չէք իրեն համար կ'ապահովէ եկամուտներուն 5%–ը: Եւ տակէ իր ծածկանունը՝ «Պարոն հինգ առ հարիւր»: Միջպատերազմեան շրջանին, Կիւլպէնկեանի կեանքը կ'անցնէր մերթ Անգլիա, մերթ Ֆրանսա: Ժողովրդական ասոյթով՝ իր մէկ ոտքը Փարիզ էր, միւսը Լոնտոն, ուր իր հօր անունով կառուցանել տուաւ փոքրաչափ Ս. Սարգիս Եկեղեցին: Փարիզի մէջ կը բնակէր Ավընիւ տ'Իէնայի իր գեղեցիկ առանձնատան մէջ: Այդ տարիներուն ան Պօղոս Նուպար փաչային հետ ամենահարուստ Հայն էր, եւ արդէն մեծ բարերարի հռչակ կը վայելէր: Փաչային մահէն վերջ, 1930–ին Գ. Կիւլպէնկեան հրաւիրուեցաւ տնտեսելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նախագահութիւնը, որուն կեդրոնատեղին այն ատեն Փարիզ կը գտնուէր: Կարճ եղաւ իր այդ պաշտօնավարութեան շրջանը: Հազիւ երկու տարի: «Զանազան քաղաքական ճնշումներէ իր գործունէութիւնը տանձուած տեսնելով» կու տայ իր հրաժարականը· (լսած եմ, որքա՛ն ճիշդ է չեմ գիտեր, թէ զգուեր էր ան այն ատենուան վարչականներուն քմահաճ եւ աղայական վարմունքէն· ծանօթ չեմ, ո՛չ իր լրիւ կենսագրութեան, ոչ ալ իր այդ պաշտօնավարութեան մանրամասնութիւններուն· վերեւ չակերտուած նախադասութիւնը կը մէջբերեմ իր ծննդեան 130–ամեակին առթիւ հրատարակուած դրքոյկէն, Ս. Պ.): Ինչ ալ եղած ըլլան իր հրաժարման պարագաները, թերեւս հոս տեղին է յիշել թէ մեզ Հայերուս «յատկութիւններուն» մաս կը կազմեն սիրտեր կոտրելը, արժէքներ չգնահատելն ու փախցնելը: Հաւանաբար այդ եղաւ պատճառը որ Գ. Կիւլպէնկեան այլեւս չմասնակցի հայկական հաստատական կեանքին, այլ ճամբով չարունակելով իր բարերարութիւնները, քանի մինչեւ վերջ Հայու հոգին չմեռաւ իր մէջ: Իր տնտեսական աստարէգին զուգահեռ, Գ. Կիւլպէնկեան պատերազմի տարին կը վարէր Պարսկաստանի դիւանագիտական ներկայացուցիչի պաշտօնը Ֆրանսայի մէջ:

(Մնացեալը յաջորդով)

ՄԱՐՄԱՐԱ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԱՂՕՒՈՐՆ ԱՁՆ Է ՈՐ...

Կեանքիս մէջ երեք կամ չորս անգամ Եւրոպան ինքնաշարժով շրջելու առիթը ունեցած եմ: Օդանաւով երեսուն, քառասուն ճամբորդութիւն կրնամ ըրած ըլլալ, ինքնաշարժով կատարուած ճամբորդութիւնները մասնաւոր տեղ մը ունին սըրտիս ու յիշողութեանս մէջ: Օդանաւով ճամբորդութեան մը ընթացքին կրնաս տեսնել միայն այն երկիրը կամ քաղաքը ուր կ'երթաս: Բայց ինքնաշարժով ճամբորդութեան մը ընթացքին անհամար տեղեր կրնաս տեսնել մինչեւ որ հասնիս հոն ուր հասնելու համար ճամբայ ելած ես: Մէկու մը համար որ կը սիրէ տեղ տեսնել, բնանկար տեսնել, մարդ տեսնել, ինքնաշարժով ճամբորդութիւնը հրաշալի բան մըն է: Պայմանաւ որ դուն չըլլաս չարժավարը:

Ես կառք չեմ գործածեր, ուստի ինքնաշարժով ճամբորդութիւններուս ընթացքին երբեք չկրցայ ստանձնել չարժավարի պարտականութիւն եւ մնացի դիտողի դիրքի մէջ: Թերեւս չարժավարին քիչ մը կ'օգնէի ուղղութիւն ճշդելու, ճիշդ ճամբան ընտրելու համար, բայց այդքան: Շարժավարը, կամ չարժավարները, որոնք ճամբու ընկերներս էին, այնքան չատ բան չէին տեսներ որքան ես կը տեսնէի: Անոնք ինքնաշարժով ճամբորդելու ու տեսարան տեսնելու ուրախութիւնը կը վայելէին այն ատեն միայն երբ կը յոգնէին եւ կառքը կը կեցնէին, կամ քշելու պարտականութիւնը ուրիշ բարեկամի մը կը փոխանցէին: Ես այդպիսի պարտականութիւն մը չունէի: Թէեւ քիչ մը ամօթով կը մնայի, ընկերներուս անիրաւութիւն ըրած ըլլալու տպաւորութիւնը կ'ունենայի, բայց ատիկա արդեօք չէր ըլլար որ ես ամէն վայրկեան հիացումով չուրջս դիտէի, զարմանայի թէ բնութիւնը ինչպիսի հրաշքներ կրնար յանկարծ մեզի հրամցնել սա կամ նա անկիւնադարձին ետին եւ խանդավառուէի մտածելով որ ես այս բոլորին մասին ո՛չ մէկ դաղափար կրնայի ունենալ եթէ ինքնաշարժով չճամբորդէի:

Երջանիկ էի: Բայց դան մը կար որ քիչ մը կը խանգարէր երջանկութիւնս: Ատիկա՝ ամբողջ ճամբու ընթացքին չարժավարին կամքէն կախեալ ըլլալու ճակատագիրն էր: Արդարեւ, ես կարելիութիւնը ունէի չուրջբոլորս կուշտ ու կուռ դիտելու, բայց չարժավարն էր որ կը դործադրէր յայտագիրը: Ես, չարժավարին քով, կամ երբեմն եռեւի կարգին վրայ նստած, տասը վայրկեանը անգամ մը, քանի վայրկեանը անգամ մը տեղէս կը ցատքէի ու կ'ուզէի աղաղակել· «Ա՛խ, հոս վայրկեան մը կանգ առնենք»: Տեսարանը այնքան գեղեցիկ էր, կամ այնքան ինքնատիպ չէնքի մը առջեւէն կ'անցնէինք, կամ այնքան սիրուն սրճարանի մը կը հանդիպէինք, կամ այնքան հետաքրքրական խանութ մը կը տեսնէինք, որ կը մտածէի որ պէտք է կեցնենք: Աւելի լաւ նայինք, լուսանկարենք, տեսարանը լաւ մը քանդակենք մեր մտքին մէջ: «Ա՛խ, նայէ որքան գեղեցիկ է, հոս վայրկեան մը չե՞նք կրնար կենալ»: Կը մտածէի, բայց ըսելու քաջութիւնը չէի ունենար: կամ տասը քսան անգամ այդ վախքը ունենալէ վերջ հազիւ թէ անգամ մը կրնայի բարձրաձայն արտայայտել այդ փափաքս: Եւ կը պատահէր որ նոյն պատասխանը ստանայի·

– Հոս հիմա կարելի չէ կանգ առնել:

– Այստեղ արտօնուած չենք կառքը եղերք քաշելու:

– Եթէ կառքը կեցնեմ, արկած մը կրնայ պատահիլ:

– Եթէ ամէն տեղ կանգ առնենք, տեղ չենք կրնար հասնիլ:

*Ես ոճիր մը կը նկատէի այդքան արագօրէն անցնիլ այդ տեսարանին առջեւէն: Լուսանկարի գործիքը ձեռքս էր միշտ եւ սրտիս մէջէն բան մը կը փրթէր ամէն անգամ որ կ'անցնէինք, օրինակ, դեղեցիկ կամարի մը տակէն, ինքնատիպ կամուրջի մը քովէն, դեղջկական սիրուն եկեղեցիի մը հրապարակէն, ճարտարապետական ինքնատիպ կառոյցի մը, կամ դեղեցիկ աւազանի մը կամ յուշարձանի մը առջեւէն: Կը տեսնէի որ անոնք լուսանկարչական հիանալի նիւթեր էին: Ինչ լաւ պատկեր կը ստացուէր անոնցմէ: Կը բաւէր որ վայրկեան մը, միայն վայրկեան մը կանգ առնէինք եւ ես դուրս ելլելով լուսանկարէի, կամ պարզապէս նայէի: Նոյնիսկ կը զարմանայի որ ինչո՞ւ չարժավար ընկերս ինքնաբերաբար կառքը չէր կեցներ, ան ալ ինծի նման չէի մտածեր որ կ'արժէր հոն վայրկեան մը կանգ առնել: Բայց ես աներես էի: իմ փափաքս անգործադրելի էր: Շարժավար մը համար կարելի չէր կառքը երբեք մէկ կեցնել հոս կամ հոն: Ամէն չարժավար դիտէր արդէն թէ եթէ կառքը մէկ վայրկեանի համար կեցնէ, որ մէկ վայրկեանը անպայման պիտի վերածուի տասը վայրկեանի, քանի վայրկեանի: Ուստի ես ալ ճարտնս չէի հաներ, «հոս վայրկեան մը կենանք» չէի ըսեր: Միայն թէ ամէն անգամ որ պէնզինի հետաքրքրական կայան մը կը տեսնէի հոն, կը յուսադրուէի, կը մտածէի որ մեր ընկերը պոնէ հոն վայրկեան մը կրնար նայ կեցնել կառքը: Բայց մեր չարժավար ընկերը չէր կենար: Ճամբան կը չարունակէր: Եւ բաւական երկար ճամբայ կտրելէ վերջ է միայն որ չարժավար տեսնէի ու ան վերջապէս կառքը եղերքը կը քշէր ու մեզի կ'ըսէր որ հոս կրնանք հինգ վայրկեան հանդչիլ: Դուրս կ'ելլէի, չուրջս կը նայէի: Ափսոս, հոն հետաքրքրական ոչինչ կար: Լերան գլուխ մը էր այդ: Այն ատեն կը յիշէի թէքէկեանի անմահ տողը·

«Աղուորն այն է յաւիտեան որ անցաւ
օր մը բովէդ»:

Ռ. Չ.

մերդներով եւ բանաստեղծութեան մաուզումներով, Ակրոպոլիսի տակ, ուր հնադարեան բանաստեղծը կը ճեմէր իր աշակերտներուն հետ:

«Ցունական պատմական եւ մշակութային ժառանգութիւնը մեզի կը պարզեւէ այն ըզգայումը կամ խարկանքը, թէ աշխարհի մէջ միայն մենք առանձնաշնորհումը ունինք Սոկրատի տարի մը նշելու», կ'ըսէ Ցունաստանի Մշակոյթի նախարարը:

Հանդիսութիւնները տեղի կ'ունենան հոմէական Աթէնքի աւերակներուն՝ Ակրոպոլիսի մարմարէ սիւներուն տակ, որոնք կը դանուին հնադարեան չուկային մօտ, ուր հեթանոս հաւատացեալները զոհեր կը մատուցանէին ոգիմպիական աստուածներուն, մարդիկ գնում կ'ընէին, եւ փիլիսոփաները կը վիճէին:

Դասական ժամանակներու Ակորայի մէջ այցելուներ տակաւին կրնան տեսնել այն առեանը, ուր Սոկրատ ամբաստանուած է յոյն երիտասարդութիւնը մոլորեցնելու յանցանքով: Ան բանտարկութեան դատապարտուած եւ մահացած է Ն. Ք. 399–ին:

Որմնադիրի մը եւ գայեակի մը զաւակը՝ Սոկրատ ծնած է Ն. Ք. 469–ին: Ան հարցը, որ յղացած է «առաքինութիւնը միութիւն է», միտքը իրականութեան մէջ ուշինչ զրած է: Սոկրատի գաղափարները զրի առած են անոր աշակերտներէն Պլատոնը եւ պատմաբան Քսենոփոն:

Սոկրատ հետեւակ զինուոր էր աթէնացի բանակին մէջ եւ քաջաբար մասնակցած է երեք ճակատամարտերու: Սակայն ապացոյցներ չկան, թէ արդեօք ան երբեւիցէ լիաժամ զործ մը ունեցա՞ծ է: Կը թուի, թէ Սոկրատ իր ժամանակին մեծ մասը անցուցած է Ակորայի մէջ վիճելով՝ իրեն հաւատարիմ աշակերտներով չրջապատուած:

Դատական Աթէնքի մէջ Սոկրատի հետ վիճողներուն չարքին էին Պլատոնի եւ երկրաչափութեան հայր Եւկղիդէսի նմանլուսաւոր դէմքեր, ինչպէս նաեւ՝ քաղաքագէտ Ալքիպիատէս եւ վատահամբաւ բռնատէրեր, որոնք Ն. Ք. 404–ին կարճ ժամանակուան մը համար տապալած են Աթէնքի ժողովրդավարութիւնը:

Իրօք, Սոկրատ կարգ մը բռնատէրերու հետ իր կապերուն պատճառով դատական հետապնդումի ենթարկուած եւ ամբաստանուած է երիտասարդութեան միտքը պղտորելու եւ նոր աստուածներու մասին խօսելու յանցանքով:

Սոկրատ իր պաշտպանողական ճառին մէջ, զոր գրի առած է Պլատոն, զինք ամբաստանողներուն մարտահրաւէր ուղղած է իրեն յատուկ ոճով, որ յետագային պիտի ճանչցուէր իբրեւ «սոկրատեան հեղնանք». այսինքն՝ չգիտնալ ձեւացնել:

Սոկրատ իրեն դէմ ուղղուած ամբաստանութիւններուն պատասխանած է իրեն յատուկ Սոկրատեան մեթոտով, զինք հարցաքննողներուն մտածումները ճարպիկօրէն առաջնորդելով այնպիսի ուղղութեամբ, որ անոնք իրեն համար ցանկալի հակադրելիութիւն յուցաբերեն: Ան այնպիսի դիւանագիտութեամբ պաշտպանած է ինքզինք, որ նոյնիսկ Աթէնքի զաղաքապետութենէն պահանջած է իր մատուցանած ծառայութիւններուն համար ձրի ճաշ ստանալ· պատիւ մը, որ կը չնորհուէր միայն Ողիմպիական խաղերու մրցանակակիրներուն եւ Աթէնքի պետութեան սպասարկող անուանի դէմքերու:

Սոկրատը դատողները մահուան դատապարտեցին զայն եւ անոր մահապատիժը, գործադրեցին թոյնով, զոր ան կամաւոր կերպով խմեց՝ իր արտատուղ աշակերտներով չրջապատուած:

«Պլատոնական սիրոյ» զաղափարը յետագային ծնած է Պլատոնի փիլիսոփայական ուսուցումներուն ընթացքին, երբ Ալքիպիատէս առիթով մը նկարագրած է Սոկրատի հետ իր կապին մաքրամաքուր բնոյթը:

Խոշոր քիթով եւ ահաւոր կերպով տգեղ Սոկրատ ամուսնացած էր Քսանթիփէի հետ, որ յետագային նշանաւոր պիտի դառնար իր չղային պոռթկումներով, ենթադրաբար որովհետեւ Սոկրատ նիւթական նեղութեան մատնած էր ընտանիքը՝ մերժելով վարձատրութիւն պահանջել իր ուսուցումներուն համար:

Սոկրատ կը հաւատար, որ իր կեանքին նպատակն էր ուսուցանել եւ հարցականի տակ առնել մարդոց համոզումները: Ան այս նպատակը կ'իրագործէր Աթէնքի Ոսկեզարուն, ժամանակ մը, որ յատկանշուած էր փիլիսոփայական, քաղաքական, զեղարուեստական ազատութեամբ եւ իրագործումներով:

«Սոկրատը ոչեկոչելով նաեւ վ'ոչեկոչենք այն Աթէնքը, ուր կին մը կրնար ծեծել իր ամուսինը, որ սակայն ինքզինք ստորնացած պիտի չզգար», կ'ըսէ Սոկրատի մահուան 2400–ամեակի հանդիսութիւնները կազմակերպող Եւրոպական Մշակութային Կեդրոնին պատասխանատուն:

Տելֆիի մէջ հաստատուած այս կեդրոնը կազմակերպած է Սոկրատի նուիրուած ակադեմական փիտաժողովներ, դասախարակչական ծրագիրներ, թատերական եւ երաժշտական ձեռնարկներ: Անիկա նաեւ կը հովանաւորէ Սոկրատի կեանքին նուիրուած ժապաւէններու պատրաստութիւնը:

Սոկրատ կը չարունակէ մաս կազմել Ցունաստանի առօրեայ կեանքին: «Սոկրատը կը նկատենք մեր չարունակուղ ուանդութիւններուն կենդանի տարրերէն մէկը», կ'ըսէ Ցունաստանի Մշակոյթի նախարարը:

Թէեւ քրիստոնէութիւնը ծնունդ առած է Սոկրատի մահէն հարիւրաւոր տարիներ ետք, սակայն անոր պատկերը կը չնորհաւորէ յունական բազմաթիւ եկեղեցիները: Արուեստի պատմաբաններու համաձայն, ուղղափառ եկեղեցին անոր կը վերապրէ ճշմարիտ միակ Ատտուծոյ զաղափարը, որ կը հակադրուէր Ողիմպոսի աստուածներու պանթէոնին:

Ցոյներու տարօրինակ ներչնչումով մը զարեր չարունակ Սոկրատը պատկերած են իրրեւ սրբապատ կուռք մը եւ անոր սրբանկարները կախած են եկեղեցիներու պատերուն վրայ, քրիստոնեայ սուրբերու չարքին:

Պատրաստեց՝

Լ. ԿԻԼԻՑԵԱՆ – ՍՐԱՊԵԱՆ

«Ազդակ»

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ԳՆԱԼԸի բարձունքին վրայ, Օգոստոս 8–ին հաւաքոյթ մը կազմակերպուած է Թաղային Թորհուրդին կողմէ ի պատիւ Երուսաղէմի Հայոց Թորգոմ պատրիարքի: Հաւաքոյթին հիւրը եղած է արուեստագործ Տիկին Սիլվա Կոմիկեան: Բացուելով, Մաքրուհի Պ. Յակոբեան, յայտարարած է թէ հարկ չի զգար ծանօթացնելու արուեստագէտը զոր ամէն ոք կը ճանչնայ: Սիլվա Կոմիկեան արուեստանած է Պարոյր Սեւակի, Միսաք Մեծարենցի, Դանիէլ Վարուժանի, Վահան Թէքէեանի, Սիլվա Կապուտիկեանի, Յովհաննէս Թումանեանի գործերէն, ապա նաեւ ժամանակակից բանաստեղծներէ, ինչպէս՝ Վարդ Շիկահեր, Զահրատ, Զարեհ Մրահունի, Անդան Էօզէր, Իզնա Սարգսեան, Օննիկ Ֆէլճեան, Իրմա Ա-ճէմեան, Մկրտիչ Մարկոսեան: Հուսկ՝ Ռ. Հատտէճեանի «Պատյտ մը մեր բանաստեղծութեան պարտէզին մէջ» հատուածներ կարդացած է: Փակման խօսքը արտասանած է Թորգոմ պատրիարք, որ իր հիացումը արտայայտած է Սիլվա Կոմիկեանի տաղանդին հանդէպ: Վերջաւորութեան հիւրասիրութիւն մը տեղի ունեցած է:

*
**

ԳՆԱԼԸի պատրիարքական ամարանոցին մէջ, Օգոստոս 9–ին, հրաժեշտի թէյասեղան մը տեղի ունեցած է ի պատիւ Երուսաղէմի Հայոց Թորգոմ պատրիարքի: Այդ առթիւ, Մեսրոպ պատրիարք հրաւիրած էր մտաւորականներ եւ արուեստագէտներ: Ողջ առնելով, իր ուրախութիւնը յայտնած է որ իր կարճ այցելութեան ընթացքին, Պոլսոյ հայութիւնը առիթ ունեցաւ վայելելու երուսաղէմի պատրիարքին ներկայութիւնը եւ չեշտած թէ այլեւս կարգ եկած է Թորգոմ պատրիարքի պաշտօնական այցելութեան: Պատասխանելով ներկաներու հարցումներուն, Թորգոմ Աբք. լաւ բացատրութիւններ տուած է Երուսաղէմի վիճակին եւ մատուցուելիք ծառայութիւններուն մասին: Հիմա, ըսած է, հայութիւնը գործ ունի երեք պետութիւններու հետ Յորդանան, Իսրայէլ եւ Պաղեստին, ուստի պարտի զգոյշ եւ խոհեմ քաղաքականութիւն վարել, ապահովի որ ժամ առաջ հաչտութիւն գոյանայ:

*
**

ՋՄՄԱՌՈՒ (Լիբանան) Տիրամօր վանքին մէջ, Շաբաթ, Օգոստոս 4–ին տեղի ունեցած է Մխիթարեան արարողութիւն կաթողիկէ Հայոց Ներսէս – Պետրոս Ժ. պատրիարքի ձեռամբ, Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700–ամեակին առիթով: Ներկայ եղած են երեսփոխաններ Ժան Օզասապեան, Սերժ Թուրպարպիեան, Յակոբ Գասարճեան, Հայաստանի դեսպան Ա-ման Նաւասարդեան, Պուրճ – Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարըլեան եւ թաղամասի այլ անձնաւորութիւններ: Իր հոգեւոր ճառին մէջ, Ներսէս – Պետրոս Ժ. բացատրած է միւռոնի արժէքը եւ խմաստը եկեղեցւոյ կեանքէն ներս: Ապա Տիրամօր վանքի զօդանջներուն զնկերակցութեամբ եւ եպիսկոպոսներու ձեռամբ օրհնուած է Սուրբ Միւռոնը: Արարողութեան աւարտին տեղի ունեցած է աջհամբոյր:

*
**

ԹԵՀՐԱՆի Հայոց առաջնորդը՝ Սեպուհ Եպիսկոպոս Սարգիսեան, իր չնորհակալութիւնէն ի վեր, ձեռնարկած է հովուական այցելութիւններու մօտակայ գանազան չրջաններ: Ընկերակցութեամբ կրօնականեւ թեմական խորհուրդներու ներկայացուցիչներուն, Օգոստոս 10–ին, պաշտօնական այցելութիւն մը տուած է Ղարաղանի չրջանը: Սրաք նահանգի այդ չրջանը հայաբնակ պիւղեր ունեցած է անցեալին, թէեւ հայութիւնը պղթած է այժմ, սակայն կանգուն կը մնայ Սուրբ Սարգիս Եկեղեցին, իսկ Հայեր դեռ տուներ կը պահեն, ամրան չրջանին բարձրանալու համար: Առաջնորդին այցելութեան առթիւ կազմակերպուած է միօրեայ ուխտագնացութիւն, որուն մասնակցած են բազմաթիւ նախկին Ղարաղանցիներ: Սեպուհ Եպիսկոպոս մուտքին դիմաւորուած է տեղւոյն պետական եւ կրօնական պատասխանատուներուն կողմէ: Ներկայ գտնուած է եկեղեցւոյ պատասրակին եւ կառարած խաղողօրհնէք: Յաջորդ օրը, Մեռելոցի առթիւ, այցելած է պիւղին գերեզմանատունը, ուր հոգեհանգստեան պաշտօն կատարուած է: Այցելած է նաեւ տեղւոյն մզկիթը:

ԹԻՒ 17

ԹԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԱՐԱԳՈՑԸ ԿԸ ՊԱՏՌԻ

Հաւսկան սպասելէ եառքը, Թերեւս կէս ժամէն ուելի, Թորոսեան նչմարեց Զօհրապի պաշտօնեաներէն մէկը, որ չտապով դուրս ելաւ եւ քիչ եառքը վերադառձաւ կառքով մը:

«Կ'երեւայ, որ Զօհրապ պիտի մեկնի,– նկատեց Թորոսեան, – ուրեմն կինը հիմա դուրս պիտի ելլէ, պատրաստուինք զինքը ներկայելու»:

Քիչ եառքը, արդարեւ, տիկին Էլիզ Մալեան երեւցաւ. միայն թէ առանձին չէր, այլ Զօհրապի ընկերակցութեամբ: Երբ կառքին մօտեցան, Զօհրապ զեղուխին թեւէն բռնելով՝ զինքը վեր հանեց, եւ երկուքը միասին բազմեցան:

– Առապաճը Շիշլիէ սիւը··· – լսուեցաւ Զօհրապի ձայնը:

Կառքը ճամբայ ելաւ:

«Թա՛ւ···», – մտածեց Թորոսեան՝ մելամաղձոտ ակնարկ մը նետելով կառքին ետեւէն:

Եւ ինքն ալ ճամբայ ելաւ դէպի կայուրի՝ Պոլիս վերադառնալու համար:

«Այդ ամէնուն մէջ ի՞նչ եղաւ իմ դերս» – կը մտածէր զառնութեամբ՝ առանց համարձակելու զայն որակել:

Գրավաճառատան մէջ Կօչկարեան եւ Աչոտ Քէչեան կը սպասէին իրեն. անոնց միացեր էր նաեւ Արամ Անտոնեան:

– Ի՞նչ ըրիր կնիկը, – հարցուց Կօչկարեան, երբ ներս մտաւ:

– Զդէ՛ պէ՛, – ըսաւ Թորոսեան սրտնեղութեամբ:

– Փախցուցի՞ր···

– Ախո՛ւ, այնպէս եղաւ, – պատասխանեց Թորոսեան:

– Պատմէ՛, տեսնենք, գլխուդ եկածը,– առաջարկեց Արամ Անտոնեան:

Թորոսեան մանրամասնօրէն պատմեց ինչ որ տեղի ունեցած էր:

– Կը չնորհաւորենք, ուրեմն, նոր պաշտօնդ, – ըսաւ Աչոտ:

– Եւ այդ գործը տեսար առանց փոխրինութե՞ան, – աւելցուց Կօչկարեան:

– Ես Զօհրապին կ'ըսեմ, քեզի նուէր մը կու տայ, – ըսաւ Անտոնեան:

– Կատակը ձգեցէք, – գոչեց Թորոսեան, – արդէն սիրտս նեղ է, ձեզ մտիկ չեմ կրնար ընել:

– Տղա՛ք, առենը ուշ է, խանութը գոցենք ու երթանք, – ըսաւ Կօչկարեան:

Քիչ եառքը չորսը միասին կ'ուղղուէին դէպի կամուրջ, Բերա երթալու համար:

Իսկ զեղանի Էլիզ ո՞ւր զացած էր Զօհրապի հետ:

Լաւ է, որ այս մասին հետաքրքիր չըլլանք եւ թողունք, որ դէպքերը խօսին:

Այս մեր պատմած իրողութիւններէն քանի մը օր եառքը Վարչութիւնը ժողով դումարած էր Ղալաթիոյ Թորհրդարանը, երբ բարապան մը ներս մտնելով՝ պատրիարքին ականջն ի վար բաներ մը փսփսաց:

– Ռուսական դեսպանատունէն թարգման մը եկեր է եւ կ'ուզէ անմիջապէս տեսակցութիւն մը ունենալ ինծի հետ, – ըսաւ պատրիարքը՝ խօսքը ժողովականներուն ուղղելով:

– Անշուշտ կարեւոր խնդրի մը համար է, – պատասխանեց ժողովականներէն մէկը, – պէտք է, որ Ձեր սրբազնութիւնը անմիջապէս ընդունի զինքը:

– Լաւ կ'ըլլայ, որ Վարչութեան ատենապետն ալ ընկերանայ, – դիտել տուաւ ուրիշ մը:

– Բնականաբար:

Պատրիարքը եւ Վարչութեան ատենապետը պատրաստուեցան թարգմանը ընդունելու, մինչ ժողովականները, պահ մը իրենց աշխատութիւնը ընդհատած, զանազան ենթադրութիւններ կ'ընէին այս այցելութեան առթիւ:

Կէս ժամ յետոյ պատրիարքը վերադարձաւ ատենապետին հետ: Երկուքին դէմքն ալ մռայլ էր:

– Արդեօք ծանրակչիռ տեղեկութի՞ւն մը հաղորդեց թարգմանը, – հարցուց ժողովականներէն մը՝ խօսքը ատենապետին ուղղելով:

– Ծանրակչիռ՝ ո՛չ, բայց բաւական տարօրինակ··· արդէն հաղորդածը տեղեկութիւն մը չէր, այլ եկած էր դեսպանին կողմէ թելադրութիւն մը ընել մեզի:

– Եթէ օգտակար թելադրութիւն մըն է, չնորհակալ ենք:

– Այդ թելադրութիւնը ռուս դեսպանէն առաջ արդէն մեզի ըրած էր Զօհրապ էֆէնտի, երբ գիշերային գումարում մը ունեցանք Պետրոս էֆէնտի Հալաճեանի տունը, – պատասխանեց Վարչութեան ատենապետը:

– Այսինքն բարենորոգումներու խընդրին կարգադրութեան համար ուղղակի համաձայնութիւն մը գոյացնել Թուրք կառավարութեա՞ն հետ:

– Այո՛:

– Եւ ասոր համար ի՞նչ պատճառներ առաջ կը բերէ:

– Ձիչդ այն պատճառները, զորս Զօհրապ էֆէնտի առաջ բերաւ իր տեսութիւնը պաշտպանելու համար:

– Ուրեմն Զօհրապ էֆէնտի ռուսական գեսպանատունէն ներչնչուա՞ծ այդ կարծիքը յայտնեց մեզի:

Վարչութեան ատենապետը չպատասխանեց եւ գլխու անորոչ չարժում մը ըրաւ յետոյ զանգակը հնչեցուց, եւ երբ բարապանը ներս եկաւ, ըսաւ.

– Հարստահարելոց յանձնաժողովը այսօր գումարում ունի՞:

– Այո՛, – պատասխանեց բարապանը, – այս միջոցիս արդէն ժողովը կ'ըլլան կոր:

– Ըսէ իրենց, որ երբ ժողովը լմննայ՝ բարեհաճին հոս գալ:

– Ինչո՞ւ համար, – հարցուց ժողովական մը:

– Որպէսզի իրենց ալ հաղորդենք դեսպանական զեկոյցը, առանց անոնց կարծիքը առնելու բան մը չենք կրնար ընել:

Հարստահարելոցի անդամները քիչ յետոյ եկան, եւ Վարչութեան ատենապետը հաղորդեց անոնց ռուսական դեսպանատան թարգմանին այցելութիւնը եւ անոր հաղորդածները: Այս յայտարարութիւնը մեծ յուզում պատճառեց ամէնուն:

(Շար. 45)

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տիկին Մատլէն Փափազեան եւ զաւակը՝ Ժոսլէին 1500 ֆրանք կը նուիրեն «Ճառաջ»ին իրենց ամուսնոյն եւ հօր՝ Գէորգ Փափազեանի մահուան 13–րդ տարելիցին առթիւ։

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալօրէա կը դասաւանդուին. – հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք։

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին։

— • —

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(ԼԻՈՆ)

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի Թուականն է Յորեքշաբթի Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին։

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Յորեքշաբթի, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16։

Աշակերտները կրնան օգտուիլ Յորեքշաբթի կէսօրուան ճաշէն։

Ցաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝

04 . 78 - 60 . 47 - 18

թիւին։

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— • —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux

Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Festival des arts slaves

Երեւանէն կը հաղորդեն որ «Նոր Ա–նուններ» ծրագրին տաղանդաւոր երախաները Օգոստոս 24–ին Փարիզ կը ժամանեն մասնակցելու համար Վալ տ'Ուազի Սլաւական Արուեստներու փառատօնին։

Անոնք ելոյթ կ'ունենան Օգոստոս 26, կիրակի, ժամը 20·30–ին Անկէնի թատրոնը, (Կեդրոնի պատասխանատուն է Ժան – Փիէր Փոյաթթի, հեռաձայն. – 01 – 30 – 75 – 91 – 90)։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

⁂

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section d'Asnières
Au profit de la Colonie de Bellefontaine
Réservez votre soirée
du Samedi 20 octobre
GALA ARTISTIQUE ARMENIEN
avec l'**Ensemble folklorique arménien**
N A V A S A R T
Danseurs, musiciens,
chanteurs traditionnels
au Grand Théâtre d'Asnières.

CHENE

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

10e Grande Braderie de Noël
Շաբաթ, կիրակի, Դեկտեմբեր 1 եւ 2
ՀԷՆ ՓՐԱՆՍԱ



PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris
du jeudi 4 au lundi 8 octobre
à l'occasion de la Béatification de
Mgr. IGNACE MALOYAN
Archevêque de Mardine, martyr en 1915.
le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre S P I T A K
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

P r o g r a m m e : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

ՓՆՏԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԵՐԿԼԵԶՈՒ ՁԵՐ ՀՐԱՒԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԾԷ՛Ք «ՅԱՌԱՋ»Ի ՏՊԱՐԱՆԸ

ԽՆԱՄՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՐԱՓ ՅԱՆՁՆՈՒՄ

Տեղւոյն վրայ հոխ խաթպոկ

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 25-26
SAMEDI - DIMANCHE
25-26 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթաթերթ առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻԻ 20·237 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.237

ՀԱՑԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ՀԻՐՈՊԱՑԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԷՄ Է ՂԱՐԱԲԱՂԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Օգոստոս 24–ին, Եւրոպայի Խորհուրդը դիմած է Ղարաբաղի իշխանութիւններուն, որ հրաժարին միակողմանի կերպով մակերեսէ «տեղական ընտրութիւնները» (չակերտը Ա.Ֆ.Փ. գործակալութեան կը պատկանի) նախատեսուած՝ Սեպտեմբեր 5–ի համար: «Այդ իրրեւ թէ ընտրութիւնները չեն կրնար օրինաւոր նկատուիլ» չեշտած են Եւրոպայի Խորհուրդի նախարարներու կոմիտէի նախագահը, որ նաեւ Լիխթենչթայնի Արտաքին Նախարարն է, Խորհրդարանական Ժողովի նախագահը եւ կազմակերպութեան քարտուղարը, ղեկոյցի մը մէջ: Տրուած պատճառաբանութիւնները կը վերաբերին Հայաստանի եւ Ադրբեջանի հակամարտութեան եւ Լրջանի բնակիչներու դէմ:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՀԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԺՈՍՓԻՆ, Օգոստոս 23–ին, Մաթինեոն վերադառնալով յայտարարեց թէ Գորպիչեայի զործընթացը պիտի չարունակուի, պատճառ չի տեսներ ընդհատելու, դատապարտելով հանդերձ սպանութիւնները: Ի դէպ, յուսակ չէ թէ ասոնք քաղաքակո՞ն հաշուեյարդարներ են, թէ ոչ մաֆիոզական:

ԳԱԶԱ մանելով, խարայէլացի պինուրականները կրակ բացած են Տէյր ալ Պալահի պաղեստինացիին վրայ, ուրկէ պատանիները կը քարկոծէին պիրենք: 11 տարու պաղեստինցի մանչուկ մը մեռած է, ութ ուրիշներ ալ վիրաւորուած են: Շարոն վճռած է չարունակել «թիրախ ունեցող սպանութիւններու» իր քաղաքականութիւնը, զոր լաւատոյնը կը նկատէ:

ԱՄՆ–ՈՒ ԱԼԱՊԱՄԱ նահանգին դեկավարը Տոն Սիգլման Օգոստոս 30–ը հռչակած է «Փրկութեան, ղերիչխանութեան եւ անկախութեան ճամբուն վրայ Թուրքերու ապրած ողբերգութեան ոգեկոչումի օր»: Նշուած թուականը որպէս ապստամբութեան պատերազմին (1918) յաղթանակի օրը կը տօնուի Թուրքիոյ մէջ: Նահատած յայտարարութեան մէջ Ալապամայի նահանդապետը ըսած է թէ Ա. աշխարհամարտին եւ Օսմանեան կայսրութեան քայքայումի օրերուն ցեղային եւ կրօնական տարբեր պատկանելութեամբ միլիոնաւոր օսմանեան քաղաքացիներ իրենց կեանքը կորնցուցած են, հետեւակաչ բախումներու, աքսորներու եւ համաճարակներու պատճառով: Ըսած է նաեւ թէ Թուրքերը պատմութեան ընթացքին համերաշխութեամբ ու բարեկամաբար ապրած են ցեղային պանպան իմբաւորումներու հետ եւ թէ Թուրքիա իսլամական աշխարհին միակ աշխարհական ժողովրդավարութիւնն է եւ կարեւոր ներդրումի տէր ԱՄՆ–ու արտաքին քաղաքականութեան մէջ: Ալապամա 4 միլիոն բնակչութեան տէր նահանգ մըն է որուն բնակիչներուն մէկ քառորդը սեւամորթ է:

ԱԼԺԵՐԱՑի զօրավար մը՝ Խալէտ Նեգրար, Պաշտպանութեան նախկին նախարար, այժմ հանգստեան կոչուած, Օգոստոս 23–ին, մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարած է թէ մտադիր է դատ բանալու, Ֆրանսայի մէջ, Հայկիպ Սուլթանեանի դէմ: Այս վերջինը, Ֆրանսա ապաստանած հեղինակն է «Աղտոտ պատերազմը» հատորի մը, ուր կ'այպանէ ալժերական բանակի կարգ մը յատուկ միաւորներու պատասխանատուութիւնը խլամապաշտներու վերագրուած քաղաքացիներու ջարդերուն մէջ: Այս նախկին վարչապետը, հեռատեսիլի յայտագրի մը ընթացքին (5–րդ, Մայիս 27), կ'ամբաստանէր զօրավար Նեզարը որ պատասխանատու է «Հաղարաւորներու սպանութեան»: Օգոստոս 23–ին, 9 ճամբորդներ սպաննուած են եւ 3 ուրիշներ ալ վիրաւորուած ծուղակ մը իյնալով Ալժէյէն 350 քիլոմեթր հարաւ – արեւմուտք ճամբուն վրայ:

ՓԱՐԻԶի Մէջ մթնոլորտի ապակայունութիւնը կրկին վտանգաւոր մակարդակի հասած էր Օգոստոս 23–ին եւ 24–ին, տօթին (31 աստիճան) հետեւանքով: Այդ պատճառով կառքերուն հրահանգուած էր արագութիւնը 20 քիլոմեթր նուազեցնել Օգոստոս 24–ին: Այն անձերը որոնք տկար են պէտք է խուսափին ֆիզիքական մարզանքներէ եւ ծխելէ:

ԳՈԼԵՄԹԵՐՈՒԻ դէմ երկու վտանգաւոր դեղերու հրապարակէն քաշուելէն ետք (Սթալթոր եւ Գոլսթա) կարգը եկած է յօդացաւի վերաբերող հակա – բորբոքում (անթի – էնֆլամաթուար) երկու դեղերու (Ռոֆէքոքսիպ եւ Սելեքոքսիպ) որ սրտի տագնապի պատճառ կրնան ըլլալ, ամերիկեան ուսումնասիրութեան մը համաձայն: Ինչ կը վերաբերի գոլեսթերոլի դէմ պայքր հաստատութեան դեղահաներուն, հաստատուեցաւ որ մեհեալներու թիւը աւելի քան 1000 է եւ կան բազմաթիւ անձեր, որոնք մկաններու հարցեր ունին, տեսողութեան նուազում եւ այլն, եւ այլն: Ֆրանսայի մէջ, երկու դատ բացուած է պայքրի դէմ եւ Գոլծածողներու պաշտպանութեան ընկերակցութիւն մը հիմնուած է:

ՋԻՆԱՍՏԱՆի Առողջապահութեան փոխնախարար խոստովանած է որ SIDA–ն լուրջ աւեր սկսած է գործել երկրին մէջ: Արիւն հաւաքելու ալ չատ վտանգաւոր մեթոտներ կը գործածուին եւ հոն ալ յայտնաբերուած է վարակուած արեան մեծ դայթակղութիւն մը: Միայն Հենան գաւառին մէջ, 700 հազար է արդէն ախտակիրներու թիւը: Ատոնք վարակուած են ծախելէ ետք իրենց արիւնը: Մեթոտը կը կայանայ զանազան արիւնները իրար խառնելու մէջ, ծախելու համար կենսաթեքնոլոժիք ճարտարարուեստին, ապա այդ խառնուած արիւնը վերադարձնելու առողներուն, որոնք կ'ենթարկուին ամէն տեսակ վարակումի:

ՌՈՒՍԱՍՏԱՆի պատրիարքը՝ Ալեքսիս Բ. դէմ արտայայտուեցաւ փորթուկալեան դոմիտայի մը կազմակերպութեան որ տեղի պիտի ունենայ Մոսկուայի մէջ, Սեպտեմբեր 8–ին եւ 9–ին: «Համոզուած եմ, կ'ըսէ պատրիարքը, որ նման ներկայացում մը չատ դէշ քարոզչութիւն մըն է բրուտեթեան համար: Նոյն որակի է պռոնկապրութեան հետ: Երկուքն ալ մարդուն ամէն նախնական բնազդներուն կոչ կ'ընեն»:

ՆՈՐՎԵԿԻՈՑ ժողովուրդը եւ մամուլը խոտօրէն կը քննադատեն ան՝ Մեթէ – Մարիթ Թիէսէմ Հօյեպի, որ պահաժամանդ իշխանին հետ պիտի ամուսնանայ Օգոստոս 25–ին եւ յետագային դառնայ երկրին թագուհին: Իր անցեալը բաւական խառնաշփոթ է, ամուրի մայր է 4 տարու մանչուկի մը, թմրեցուցիչ զործածած է եւ անառակ անցեալ մը ունեցած: Ինչ որ առաւելաբար կը գայթակղեցնէ Նորվեկիացիները այդ անցեալին մէջ, անոր մասնակցութիւնն է Ռէվ – վարթիներու որոնք բաւական վատահամբաւ են, իրենց կապերուն համար ոճրային միջավայրին հետ:

77–ԱՄԵԱՅ ԹԱՅԼԱՆՏԻ մը՝ Հու Սաթէով որ աշխարհի ամէնէն երկար մազերը կը կրէր – 5,15 մեթր – մեռած է առջի օր: Միշտ մերժած էր կտրել տալ եւ տարին միայն մէկ անգամ կը լուար, այն վախով որ կը հիւանդանայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ ՅուՇԱՏԱԽՏԱԿ ՄԸ ՊԵՏԵՂԱԾ Է

Հայաստանի անկախութեան տասնամեակին առթիւ յուշատախտակ մը պետեղած է Խորհրդարանի նախկին չէնքին պատին վրայ. հոն արձանագրուած է. «Այստեղ 1990 թ· Օգոստոսի 23–ին Հնոչ Գերագոյն Խորհուրդը ընդունել է Հայաստանի անկախութեան մասին հրովակագիրը»: Արարողութեան ներկայ գտնուած են կառավարութեան անդամներ, ներկայի ու նախկին խորհրդարանականներ: Յուշատախտակին բացումէն առաջ ելոյթ ունեցած է վարչապետը, նդգծելով հռչակագրին հայկական պետութեան կայացման, զարգացման եւ զօրացման գործին մէջ անկիւնաքարի նշանակութիւնը: Ան երախտագիտութիւն յայտնած է հռչակագիրը ընդունած Գերագոյն Խորհուրդի երեսփոխաններուն. իրմէ ետք ելոյթ ունեցած է Արամ Մանուկեան որ 1990 Օգոստոս 23–ին Խորհրդարանին մէջ հռչակագիրը կարդացող երեսփոխանը եղած էր: Տասնամեայ Գէորգ Յովհաննիսեանի կողմէ հռչակագրին ընթերցումէն ետք, Հայաստանի փաստերին հնչիւններուն տակ վարչապետը բացած է յուշատախտակը:

***

Յ· ԲԱԴԱԼԵԱՆի ԹԱՂՈՒՄԸ

Դանօթ ու սիրուած երգիչ Յ· Բաղալեանին վերջին հրաժեշտի արարողութիւնը տեղի ունեցած է Օգոստոս 23–ին: Օֆփերայի ճեմասրահին մէջ զետեղուած ապակի դագաղին չուրջ պահակներ զետեղուած են, ղեկուած՝ նախագահ Ռ. Քոչարեան, Մշակոյթի նախարարութեան, Կոմիտասս երաժշտանոցին եւ չատ այլ կազմակերպութիւններու, անհատներու կողմէ: Իրեն վերջին հրաժեշտ տալու գացած է նախագահ Ռ. Քոչարեան եւս, ինչպէս՝ արուեստագէտներ, Երեւանի իշխանութիւններուն ներկայացուցիչներ, ուսանողներ, եւ այլն: Արուեստագէտներ ոգեկոչած են հադալեանին արուեստը, բարութիւնը, ազնուութիւնը, ժողովուրդին հետ պահած մշտական կապը: Երգիչը թաղուած է Երեւանի պանթէոնին մէջ ուր սուգի հատաք մը տեղի ունեցած է:

***

ՆԱԽԱԳԱՀԸ ՀՈԿՏԵՄԲԵՐ 27–Ի ՄԱՍԻՆ ԿԱՐԾԻՔ ՉԻ ՅԱՅՏՆԵՐ

Նախագահ Ռ. Քոչարեան Օգոստոս 23–ին լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսած է թէ հետեւելով հանդերձ Հոկտեմբեր 27–ի դատավարութեան, մինչեւ այսօր ոչ մէկ կարծիք յայտնած է եւ պիտի չարունակէ չյայտնել: Ան աւելցուցած է որ կառավարութիւնը կը պատրաստուի պատշաճ կերպով նչելու Հայաստանի անկախութեան տասնամեակը. ողջունած է նաեւ համահայկական խաղերով ու 1700–ամեակով արձնուած աշխուժացումը:

***

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՍՈՒՐԻԱ ԱՅՑԸ

Շարունակելով Սուրիա կատարած այցը, Պաշտպանութեան նախարար Ս. Սարգսեանի ղէմաւորած պատուիրակութիւնը Օգոստոս 23–ին այցելած է հարաւի Քունէյթրա քաղաքը եւ հանդիպում ունեցած նահանգին իշխանութիւններուն հետ: Նոյն օրը նախարարը հանդիպում ունեցած է Սուրիոյ Ժողովրդական Ժողովի նախագահին եւ վարչապետին հետ:

***

Է· ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՆԱԵԻ ՎԱՏԻԿԱՆի ԴԵՍՊԱՆ

Նախագահ Ռ. Քոչարեանի Օգոստոս 22–ի մէկ հրամանագրով Հայաստանի Փարիզի դեսպանը Է. Նալպանտեան նշանակուած է նաեւ Վատիկանի դեսպան: Աշխատավայրը կը մնայ Փարիզը:

***

ՎԱՆԱՁՈՐԸ ԿԸ ՄԱՔՐՈՒԻ ՏՆԱԿՆԵՐԷՆ

Վանաձորի մէջ կը չարունակուի տրնտկինները քաղաքէն հանելու գործունէութիւնը: Մինչեւ այսօր դուրս բերուած են 1600 տնակներ, իսկ ասկէ ետք քաղաքապետին հրահանգով ամիսը 250 տնակ պիտի հանուի: Քաղաքը ապօրինի կառոյցներու հարց ալ ունի. քաղաքապետարանին տուեալներով՝ 7000 ապօրինի կառոյց կայ որոնցմէ քաղաքաշինութեան եւ շրջնարարական չափանիշերու չհամապատասխանները կ'օրինականացուին:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

(ՕԳՈՍՏՈՍ 23)

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼ

Պուէնոս Այրէս – Փարիզ	6 – 4

ՎՈԼԷՅՊՈԼ

Այրերու մրցաշարք

Վանաձոր – Փարիզ	3 – 0

ՀԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ՊԱՐՈՆ ՀԻՆԳ ԱՌ ՀԱՐԻՒՐ ԵՒ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՊՈՂՈՏԱՑԱ

ՍՏԵՓԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

1940–ի պարտութենէն եւ գինադադարէն ետք, երբ Մառեշալ Փեթէնի գլխաւորած կառավարութիւնը գնաց Վիշի հաստատուիլ, ինք ալ ի պաշտօնի հոն հաստատեցաւ եւ հոն մտերմացաւ Փորթուկալի ներկայացուցիչին հետ: Այս վերջինը 1942–ին գինք կը հրաւիրէ երկու չաբաթ Փորթուկալ հանգստանալու: Ճանապարհորդական պիտի ըլլար այդ հրաւէրը Գալուստին համար, որ սիրելով Եւրոպայի ծայրամասին գտնուող այդ արեւոտ երկիրը, այն տարիներուն հանգարտ եւ խաղաղ (Փորթուկալ չէզոք մնացած էր երկրորդ աշխարհամարտին), կ'որոշէ վերջնականապէս հոն հաստատուիլ եւ հոն անցընել իր կեանքին վերջին տարիները:

Կար իր հսկայական հարստութեան հարցը: Ութսունամեայ ծերունիին մըտքին մէջ հիմնարկութեան մը գաղափարը կամաց կամաց կը հասունցայ: Եւ իր վերջնական ձեւը կ'առնէ 1953–ին ստորագրուած կտակով: Կը հիմնուի աշխարհի ամենակարեւոր 12 հիմնարկութիւններէն մին, փորթուկալեան իրաւակարգով ոչ պետական հաստատութիւն մը, որուն Գ. Կիւլպէնկեան կը թողու իր ունեցածը, բացի ընտանիքին անդամներուն տուածէն:

Այն ժամանակ հիմնարկութիւնը կը սահմանէր 10 միլիոն անգլիական փաունտի տարեկան պատկառելի եկամուտ մը, որուն առիւծի բաժինը պիտի դործածուէր Փորթուկալի կրթական, մշակութային, գիտական եւ առողջապահական ու ընկերային պէտքերուն:

Երախտապարտ Փորթուկալը իր այդ «երկինքէն ինկած» բարերարին անունով պիտի կոչէր իր մայրաքաղաքին ամենագեղեցիկ պողոտաներէն մին...:

Գալուստ Կիւլպէնկեան չմոռցաւ նաեւ Հայերը: Հիմնարկութեան «հոգածութեան» առարկան եղ նաեւ անոնք: Հիմնարկութեան մէջ փոքր ծառայութիւն մը կը մատակարարէ հայութեան տրուելիք յատկացումները, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Անոր վարիչը ցարդ եղած է միշտ Կիւլպէնկեան գերդաստանէն մէկ անդամը, իսկ վարչական անօրէնը միշտ հայ: Ցիշենք անոնցմէ վաղամեռիկ դրող Վահրամ Մալէեանը, որուն համով – հոտով գրուածքները չատերու կողմէ այնքան սիրով կը կարդացուէին:

*
**

Ժամանակ ունինք դեռ, եւ կը փափաքինք այցելել «Հայկական բաժինը»: Կը մօտենանք ընդունելութեան դրասեղանին, կը յայտնենք մեր ինքնութիւնն ու ուրտեղէն գալը: Պաշտօնեան որ մեզ կ'ընդունի, Ֆրանսերէն կը պատասխանէ: Նախ կը հեռաձայնէ ծառայութեան, եւ դրական պատասխան առնելով, ընկալուչը ինծի կ'երկարէ: Կանացի անոյշ ձայն մը նախ Ֆրանսերէն, յետոյ հայերէն մեզ վեր կը հրաւիրէ· փոխ – տնօրէնուհի Աստղիկ Զամբերթէնին ձայնն է: Պաշտօնեան կը կանգնի, փողկապը կը սեղմէ, բաճկոնը կը կոճկէ եւ մեզ կ'առաջնորդէ դէպի վերելակ: Հոն ուրիշ պաշտօնեայ մը մեր անցագրերը «կը դրաւէ» փոխարէնը տալով մէկ – մէկ պաճ: Կը մտնենք վերելակ ուր մեզի ընկերացող անձը... իր մատերը սանտրէ: Վստահաբար, նախարարութեան մը չէնքը մտնել ասկէ դիւրին պիտի ըլլար: Երրորդ յարկի երկար միջանցքն ենք· դուռ մը կը բացուի եւ յայն ժպիտով մը Օրիորդ Աստղիկը մեզ կը դիմաւորէ – հրամմեցէք: Արեւելեան բոլոր լեզուները ունին անոր թարգմանութիւնը· «օրիսթէ, փաստոլու, պուրուն»: Բայց ուրիշ է, տարբեր անուշութիւն ունի հայերէն «հրամմեցէք»ը· ան դռներու հետ միատեղ սրտերն ալ կը բանայ: Կը մտնենք տնօրէն Զաւէնի եկեւեանին ընդարձակ դրասենեակը: Անոր եւ օրիորդին հետ հին ծանօթներու պէս, մէկ ժամ ամբողջ կը խօսինք սրտաբաց: Ինչի մասին կրնան խօսիլ երկու Հայեր որոնք իրարու կը հանդիպին այս հեռաւոր ափերուն վրայ: Հայրենեաց ցաւերուն, երազներուն, յոյսախարխութիւններուն մասին, անշուշտ: Երբեմն Սփիւռքին եւ անկախացած Հայաստանի ոչ մխիթարական ներկային եւ անորոշ ապագային մասին: Աստեն – ատեն կարծէք ամպ մը կու գայ, պարոն Զաւէնին պայծառ դէմքը կը չղարչէ ու կ'անցնի: Կը խօսինք նաեւ մեծանուն բարերարին եւ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան մասին: Բնականաբար կը թաղուիմ անվերջ եւ անյատակ «ինչո՛ւ»ներու եւ «եթէ»ներու մէջ: Եթէ Բարեգործականը Կիւլպէնկեանին սիրտը չցաւցնէր, եթէ այն ատեն Հայաստան խորհրդային ըլլալուն անկախ եղած ըլլար, արդեօք բարերարը այս հիմնարկութիւնը Հայաստանի մէջ կը հիմնէր: Ինչ մեծ նիւթական ու բարոյական չահ բերած կ'ըլլար Մայր – Երկրին, ինչքան երեւան կ'արժեւոր – ւէր ու կը պայծառանար նման չէնքերով ու թանգարանով մը...: Պարոն Զաւէնին պատասխանը սպառիչ է միանգամայն «պիտի կարենայի՞նք այս ամէն ինչին տէր ըլլալ եւ մատակարարել ինչպէս առնք կ'ընեն...»: Ո՛վ կրնայ նոյնքան ըսպառիչ կերպով պատասխանել, մանաւանդ սա վերջին տարիներու պարզուած պատկերներուն առջեւ...:

Հայկական կոնեակով պատուրուելէ վերջ, չնորհակալութեամբ հրաժեշտ կ'առնենք մեր հիւրընկալներէն: Պր. Զաւէնէն իմացանք որ Լիզպոնի մէջ 10 հայ ընտանիք կը բնակի (օրինաւորապէս) միայն, վեցը հայաստանցի, չորսը «աղբարիկ», իր իսկ բառերով:

Ամէն օր ակամայ կը մտածեմ որ դարերու ընթացքին, Հայուն հանճարն ու վաստակը օտարին է ծառայեր, պատմութեան քմահաճոյքով: Տրդատ ճարտարապետը վերականգներ է Բիւզանդիոնի Այա Սոֆիա տաճարին գմբէթը, Պալեան ճարտարապետը Վոսփորի գոյգ ափերը զարդարեր է հիանալի պալատներով: Հայ խոճաները Հնդկաստանի հեռաւոր անկիւնները չիներ են անմոռան ապարանքներ: Զո՞րն ասեմք: Այսօր ալ կիւլպէնկեան հիմնարկութիւնը՝ Լիզպոն: Ա՛լ չհոսինք այն հարիւր հազարաւոր քաջարի հայորդիներուն արեան մասին, թափուած Թրակիայէն մինչեւ հեռաւոր Հիւսիսային Ափրիկէի անապատները, բիւզանդական կայսրութեան չահերուն համար, եւ վերջապէս մեր 200·000 հերոսները վասն յաղթանակին Սովետական Միութեան «հայրենական» պատերազմին:

Ինչպէս կ'ըսէ Պ. Սեւակ, «պարզապէս մեր բախտն ուրիշ է եղել· պարզապէս մենք չատ ենք արիւն հեղել»...

ՍՏԱՑԱՆՔ

ԲԱԶՄԱՎԷՊ

Հայագիտական – բանասիրական – գրական հանդէս
Թիւ 1 – 4, 2000

Ս. Ղազար, Վենետիկ

«ԱՓՍՈՍ, ՈՐ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԱՐ Է, ԿԵԱՆՔԸ՝ ԿԱՐՃ»

ՀՈՒՐՈՎ ՀԼՂԱԹԵԱՆ

Աբգէն բոլորում է եօթ տարին, ինչ հայ – իտալական միացեալ արշաւախումբը հնագիտական պեղումներ եւ ուսումնասիրութիւններ է իրականացնում Սեւանայ լճի աւազանում: Այն ձեւաւորուել է 1994 թուականին Հայաստանի Ազգային ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի եւ Հռոմի կրեատ–միկէնէեան ու անատոլիական ուսումնասիրութիւնների հիմնարկի միջեւ կնքուած պայմանագրի համաձայն: Հռոմի վերոնշեալ հիմնարկը գլխաւորում է մեր օրերի ամենայայտնի ուրարտագէտներից մէկը՝ Միրիօ Սալվինին, որը բազմաթիւ մենագրութիւններ է նուիրել Հայաստանին: Հայ – իտալական համագործակցութիւնը կայացաւ հէնց Սալվինիի խրախուսմամբ, ինչէ նպատակ կը հիմնականում Սեւանի աւազանում բուն ուրարտական յուշարձանների ուսումնասիրութիւնն է: Սակայն պեղումների սկզբից իսկ պարզ դարձաւ որ մեզ ուրարտական յուշարձաններ դրեթէ չկան, եւ հնագէտները մեծ մասամբ աւերակուում են բազմաշերտ յուշարձանների, որոնք արտացոլում են նախաուրարտական, բուն հայկական, վազ եւ ուշ միջնադարեան ժամանակաշրջանները: Այդ պատճառով էլ ոչ միայն արշաւախումբը ընդլայնուեց այլ նաեւ յետագայ հետազօտութիւնների շրջանակը եւ հրատարակութեան նախապատրաստուող գիտական ժողովածուների ծաւալը:

Ա. – ԻՆՉ ԵՆ ՅՈՒՑ ՏԱԼԻՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արշաւախումբը որը գլխաւորում են հնագէտ – ուրարտագէտներ Սիմոն Համբարեանը եւ Ռաֆայէլէ Պիչիոնէն, ստորագրել է ուսումնասիրութիւնները Մարտունու եւ Վարդենիսի նախկին շրջաններում: Եօթ տարիների ընթացքում հետազօտուել, քարտէսագրուել եւ տեղագրուել է աւելի քան 100 յուշարձան, որոնցից վեցն առհասարակ յայտնի չէին եղել հնագիտութեանը: Վերդեմոնեայ դըժածոններ, որոնք գինուածքներ կուել Մոսկուայի եւ Հռոմի գիտական աշխատանոցներում, փաստում են որ Գեղարքունիքի մարզի հնավայրերը դոյութիւն են ունեցել հազարամեակներ շարունակ եւ բնակեցուած են եղել անյիշելի, հեռաւոր ժամանակներից սկսած: Պետական կազմաւորումների մասին ապացոյցներ կան՝ սկսած Ք. ա. 4–րդ հազարամեակի վերջերից: Արշաւախումբը գիտութեան մէջ մտցնում է ճշգրտումներ, որոնք նորովի լոյս են սփռում հայագիտութեան եւ հնագիտութեան մինչ այժմ եղած պատկերացումների վրայ: Այսպէս, Թազագիւղի տարածքում քարտէսագրուած, վաղուց յայտնի բնակատեղին միշտ նշուած է եղել որպէս միջնադարեան չէն, մինչդեռ պեղուած նիւթերն ապացուցում են որ այն սկիզբ է առնում Ք. ա. 4–րդ հազարամեակի վերջերից, իսկ Ք. ա. 13 – 12–րդ դարերում դարձել է ամրացած բնակավայր: Ստեփանոս Օրբելեանի մօտ յիշատակուած Վանեվան վանական համալիրը կառուցուել է 903 թուականին, Հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու եւ Սիւնեաց տիկին Մարիամի հովանաւորութեամբ, սակայն արշաւախումբը նոյն համալիրում գտել է նախաքրիստոնէութեանը վերաբերող նիւթեր: Բնակավայրերը գտնուել են ոռոմաւարական խոշոր ճանապարհների վրայ, իսկ մայրուղին ձգուել է լճի հարաւային եւ հիւսիսային ափերով՝ հատելով Սոթքի, Սելիմի եւ Սեմյոնովկայի լեռնանցքներում: Արշաւախումբին յաջողուել է ապացուցել նաեւ որ Սոթքի ոսկու հանքերը չահագործուել են վաղ երկաթէ դարից սկսած: Մարտունու եւ Վարդենիսի շրջաններում յայտնաբերուել են բնակատեղիները եւ ռազմական բերդերը անուղղակի կերպով ցոյց տալով Գեղարքունիքի տարածքով անցնող ջրաշինարարական բարդ կառոյցների հետքեր:

Դրանցից ամենանշանաւորը Մարտունի քաղաքէն սկիզբ առնող, լերան ուղղահայեաց փէշով 18 քիլոմեթր ձգուող «Հեսրի առուն»ն է որը գործում է մինչ այժմ ոռոգման ջուր մատակարարելով Մարտունի քաղաքին, Վարդաչէն եւ Գեղհովիտ գիւղերին:

Բ – ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՋԻՆԻ ԱՐԱՄԷՆԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Այս ամրանը արշաւախումբը «բանակեց» Գաւառ քաղաքում եւ առաջին ուսումնասիրութիւնները սկսեց Գաւառի նախկին շրջանի հնավայրերում՝ Լճափի, Աբծուաքարի, Լանջաղբիւրի, Սարուխանի, Կարմիրվուզի վարչական տարածքներում: Այդ կարեւորագոյն գտածոների կողքին առաւել արժեւորուեց Սարուխանի տարածքում յայտնաբերուած Արտաշէս Ա.–ի արամէներէն արձանագրութիւնը սահմանաքարի վրայ, որը ծանուցում է. «Արտաշէս արքան՝ Զարեհի որդին երուանդական բաժանեց հողը մասերի»: Հարկ է աւելացնել որ Հայաստանի տարածքում յայտնաբերուած արդէն 11 Արտաշէսեան սահմանաքարերից վեցը գտնուել են Մարտունու ու Գաւառի տարածաշրջաններում: Դրանք ոչ միայն գաղափար են տալիս չորրդ 22 դար առաջ մեզ մօտ հաստատուած հողային ու անտեսական յարաբերութիւնների, այլ նաեւ հին Հայաստանի պատմութեան ու վարչական բաժանումների մասին: Արշաւախմբի գիտակավարների փոխադարձ համաձայնութեամբ սահմանաքարը համալրեց Գաւառի երկրագիտական թանգարանի ցուցասրահը:

Գ – «ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ԵՒ ԱՇԽԱՏՈՒՄ»

Գեղամայ աշխարհի գարակուտակ գաղտիքների բացայայտման վերջին հասնելու համար դեռ երկար տարիներ են պէտք: Թէ՛ Ռ. Պիչոնէն, թէ՛ Ս. Համբարեանը գտնում են որ առնուազն եւս տասը տարի է հարկաւոր, որպէսզի աւարտուեն ուսումնասիրութիւնները Գաւառի, Սեւանի եւ Ճամբարակի տարածաշրջանների հնավայրերում, որոնք առանց կասկածի, նոր հորիզոններ կը բացեն Հայագիտութեան եւ հնագիտութեան ոլորտներում:

Պեղումների աւարտի օրը՝ Յուլիսի 26–ին, Ռաֆայէլէն յուզմունքով չէր թաքցնում. «Ահաւասիկ ապրում ենք եւ աշխատում: Ձեր մարզում կ'աշխատեմ դեռ էլի երկար տարիներ, երեւի թէ մինչեւ թոշակի անցնել: Ձեր հողի տակ հսկայական ու արժէքաւոր գաղտնիքներ կան թաղուած: Ափսոս միայն որ գիտութիւնը երկար կեանք կարճ»:

Արշաւախումբը, բացի հայ եւ իտալացի ղեկավարներից, համալրում են հնագէտ – ծրագրաւորող Նեոա Փարմիճիանին, հնագէտ Հայկ Յակոբեանը, մարտագէտ – վերականգնող Հովիկ Սահակեանը, երկրաբան, Նիւ – Եորքի Սահակադեմիայի իսկական անդամ Եուրի Սայադեանը, նկարիչ – չափագրող Թագուհի Համբարեանը, վերականգնող Տիգրան Իսահակեանը, երիտասարդ հնագէտ Արտեմ Յարութիւնեանը եւ Սարատովից դործուղուած ուսանող, հնագէտ Ալեք Սանդր Ժեմկովը, որի համար սա առաջին դաշտային աշխատանքի վարժանքն էր: Արշաւախմբին անփոխարինելի օգնութիւն է ցուցաբերում Գեղարքունիքի մարզի պատմական մշակոյթի պահպանութեան ծառայութեան պետ Նորիկ Հազէեանը:

Հայ եւ իտալացի հնագէտները, որոնք արդէն համատեղ աշխատանքում դարձել են մէկ ընտանիք, եկող տարուայ ամրան նոր նորից կը ժամանեն Գաւառ: Իսկ մինչ այդ կ'ամփոփուեն եւ անգլերէնով հրատարակման կը նախապատրաստեն նախորդ ուսումնասիրութիւնների արդիւնքները:

«Հայաստանի հանրապետութիւն»

ԱԼԵՒԻՆԵՐԸ ԵՒ ՀԱՃԻՈՂԷՐԹԱՇԻ ՓԱՌԱՏՕՆԸ

«Ֆիկարո»յի թղթակիցը էրիք Պիչկալա յղուածով մը կ'անդրադառնայ Ալեւինեռու կրած ճնշումներուն Թուրքիոյ մէջ, ուր, կ'ըսուի թէ բնակչութեան մէկ երրորդը կը կազմեն, այսինքն 20 միլիոն են:

Թղթակցութեան սկիզբը, խօսքը կու տայ 25 տարեկան Եաղմուր Աթաճի, որ կ՝բացատրէ. – «Հաճիպէքթաշ եկայ, որովհետեւ տարւոյն միակ պահն է, երբ, մենք Ալեւիներս կրնանք հրապարակաւ հաւաքուիլ առանց վախի»:

Հինգէն տասը հազար են, անոնք որոնք կ՝հաւաքուին անատոլեան այս փոքրիկ դիւղակը, Հաճիպէքթաշի փառատօնը քիչ մը թթուած է իրենց համար: Տարեկան այս համախմբումը կ՝ոգեկոչէ Հաճի Պէքթաշ Վէլիի յիշատակը, ԺԳ. դարու սուֆի պետը, բայց, նաեւ առիթ մըն է պահանջատիրական ցոյցի մը Ալեւիներուն համար:

Պաշտօնապէս չճանչցուած այս փոքրամասնութիւնը չէներու այլադաւան ձիւղն է, որու յատկանիշն է շատ ազատական մթնոլորտ մը, հեռու աւանդական իսլամէն: Փոքրամասնութեաց ճանաչման հարցը կը բախի սիւննի գերագահութեան: Ալեւիներուն համար կիներ ու այրեր հաւասար են, ոպելից ըմպելին արգիլուած չէ, նոյնիսկ կը գործածուի կարգ մը ծէսերու առեն: Ռամազանի ծոմը, որ իսլամի հինգ յենարաններէն մէկն է, պարտադիր չէ եւ ալեւի դիւղերը մզկիթ չունին: Ծէսերուն եւ աղօթքներուն յատուկ պարեր եւ մխիթիք երաժշտութիւն կ՝ներկայանան, անհանդուրժելի տարբերութիւններ պահպանողական սիւննիներուն համար: Եաղմուր Աթաճ դեռ կ՝ըսէ. «առեւտուրի մէջ, պէտք չէ ըսել որ ալեւի ենք: Եթէ գիտնան, յաճախորդները չեն գար»: Ինք ճամբորդական գրասենեակ մը ունի Կեսարիա, բերդը սիւննի արմատականներու եւ թրքական ծայրայեղ աջին: Պարմանուհի մը կը պատմէ.– «երբ ամուսնական առաջարկ մը կ՝ունենամ, կը բաւէ որ յայտնեմ թէ ալեւի եմ, որպէսզի թեկնածուն հրաժարի իր դիմումէն»:

1993–ին, 37 մտաւորականներ եւ երաժիշտներ, որոնք հաւաքուած էին տօնելու համար ալեւիութեան խորհրդանշական դէմքը՝ Փիր Սուլթան Ապտալը, ողջ – ողջ այրեցան Սվազի իրենց պանդոկին մէջ: Շէնքը չրջապատուած էր եւ կրակի տրուած սիւննի ծայրայեղ տարբերու կողմէ: 1995–ին, ոստիկանական պիտի ներկայացնէ հազարաւոր դիակներ: Լրագրողը այն կարծիքը ունի որ «Արարատ»ը պիտի հասնի Թուրքիոյ պախարակող «Կէս պիշերուան ճեպընթաց»ին հնչեղութեան:

«Օրթատուդու» թերթը (Օգոստոս 14) նոյն լուրը կը հաղորդէ Ա. Եղոյեանի յայն կենսագրութիւնը տալով. ժապաւէնը կը սահմանէ որպէս «Շինդլէրեան երկրորդ ցանկ» մը: Նշելէ ետք թէ անոր մէջ դեր ստանձնած են Շառլ Ազնաւուր եւ գանատացի դերասանները՝ Ք. Փլամըր եւ Պ. Կրինվուտ, կ՝ըսուի թէ հայկական լոպիին նպատակն է ժապաւէնը Գանի վաստաւոնին տանիլ ու մրցանակ ապահովել. նաեւ անով Օսքարի արժանանալ: Ցուսամիչ արդէն յանձնառու եղած է ԱՄՆ–ու մեծագոյն ընկերութիւնը: Ժապաւէնը տակաւին աւարտած չըլլալով հանդերձ, չատ մը երկիրներ գնելու թեկնածու են. գայն արդէն գնած են Ֆրանսական, յունական, ռուսական, իտալական, իսրայէլեան ընկերութիւնները: Ցոյց տրուած մեծ հետաքրքրութեան մէջ ամէնէն կարեւոր դերը կը վերապրուի արուեստագէտին վաչելած վաստահութեան եւ ժապաւէնին որակին:

Գրութիւնը կ՝ըսէ թէ «Արարատ»ով դիւաւոր հետապնդուածը հակաթուրք թշնամական քարոզչութիւնն է եւ Թուրքիոյ վրայ քաղաքական ճնշում բանեցնելու նպատակը:

Ափսոսանք կը յայտնուի որ մինչեւ այսօր ոչ մէկ թուրք դիւանագէտ կամ պատասխանատու, լինչպէս նաեւ Մշակոյթի նախարարութիւնը, գործի ձեռնարկած է այդ ժապաւէնին համար որ ուղղուած է թուրք աղբ անպամ մը եւս դատապարտելու համաչխարհային հանրութեան առջեւ, արմատէն ցնցելու Թուրքի եւ Թուրքիոյ պատկերը, նաեւ Թուրքիոյ վրայ քաղաքական ճնշումի միջավայր ստեղծելու:

«Ակօս» չարքը կ՝աւարտէ նախկին դեսպանի մը արժեւորումով. ան ալ քարոզչութեան լուրջ ձեռնարկ կը նկատէ «Արարատ»ը. կ՝ըսէ թէ ցեղասպանութեան նիւթով բազմաթիւ ժապաւէններ կան ու նոյնց մէկ մասը դիտողներու մեծաթիւ զանգուածի մը հրացած է. անոնց օրինակ կու տայ «Մայրիկ»ը, անոր յաջորդ նկարահանով Եղոյեանի պատրաստածը:

Ա. ԵՂՈՑԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ»Ը ԹՒՐԱԽ ԹՐՔԱԿԱՆ ԼՐԱՍՓԻՒՌՆԵՐՈՒ

Գանատահայ ծանօթ արուեստագէտ Ատոմ Եղոյեանի «Արարատ» ժապաւէնը որուն տեսագրութիւնը սկսաւ Մայիսին, արդէն Թրքական լրատուական մամլոյն մեծ մասը թիւրախին վերածուած է, քանի որ նիւթ կ՝ընէ ցեղասպանութիւնը: Քրոնիկագիրներ, յօդուածագիրներ, հրապարակագիրներ անդրադառնալով այդ տեսագրութեան, կը պահանջեն որ Թուրք քաղաքական դէմքերը հակազդեն, մինչդեռ նոյներու ձեռնարկեն, որպէսզի ժապաւէնին պատրաստութիւնը կասեցնել կարելի ըլլայ:

«Ակօս» չաբաթաթերթը (Օգոստոս 17) Թրքական մամուլի այդ կարգի արձագանգներէն ամփոփում մը ներկայացուցած է. «Փոսթա» թերթին մէջ (Օգոստոս 12) Ճ. Պաշլամըչ նախ կը նկարագրէ նկարահանումի դրուագները. կ՝ըսէ թէ հին Վանի հսկայական մէկ մանրակերտը պատրաստուած է, փողոցներով, մզկիթներով, պետական չէնքերով: Փայտաչէն Արարատի մը սուներին մէջ դիակներով լեցուած փողոցները կը թափուին մերկ ու անօթի երախաներ: Եղոյեան դիակները մարմնաւորելու համար 150 Ֆիկիւրան դրած է. անոնցմով կատարուելիք նկարահանումը յետոյ արդիական թէքնոլոժիներու չնորհիւ հալածանքը 17 Ագեւիներու մահուան պատճառ կը դառնայ Պոլսոյ մէկ թաղամասին մէջ: Կալաթաթարայի համալսարանին մէկ փրոֆէսօրը՝ Իզզէթթին Տոզան կ՝ըսէ.– «Ալեւիութեան մէջ, բաժնելու գաղափար մը կայ, զոր կրնանք գտնել Թուրք ձախ քաղաքականութեան մէջ: Եւ ձախ կուսակցութիւնները միշտ չատ խոստումներ ըրած են Ալեւիներուն, բայց, երբեք տէր չեն եղած իրենց խոստումներուն»: Ագեւիներու գլխաւոր պահանջներն են. – տեղ մը տրուի իրենց, կրօնական հարցերու դեկավարութեան մէջ, իսլամի պարտադիր ուսուցումը դպրոցներու մէջ միայն սիւննի դաւանանքին վրայ հիմնուած չըլլայ, համայնքը նիւթական օժանդակութիւն ստանայ ինչպէս սիւննիները կամ դիւրութիւններ ընծայուին իրենց ձեմ Լվիներու (հաւաքոյթի տուն) համար:

Թ. Ա. Թ.

ԱՍԿԷ ԱՆԿԷ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՊԱՀԱՏԱՒԻ ՄԸ ՓՈԽԱՐԷՆ

Նիւ – Եորքի Ճիուիշ Մուզէումէն, Յունիս 7–ի պիշերը գողցուած է Մարք Շակալի մէկ պատառը՝ «Էթիւտ օ մը սիւ մը Վիթըպէսք», խորհրդաւոր պայմաններու մէջ: Գողութիւնը յայտնաբերուած է չքեղ ընդունելութեան մը վարպետին եւ ոչ ոք ոչինչ նշմարած է: Քննիչները ալ աւելի զարմացած են, երբ թանգարանը նամակ մը ստացած է, ուր պատառին փոխարէն կը պահանջուէր Հրեաներու եւ Պաղեստինցիներու միջեւ խաղաղութիւնը: Կատակ չէ եւ էֆ – Պի – Այ–ը լուրջ քննութիւն բացած է: Նամակը խիստ ճշդրիտ տեղեկութիւններ կու տայ 1914–ին գծուած այդ պատառին մասին: Այս չաբթու է միայն, որ թանգարանը որոշած է հրապարակել: Պատառը, ոչ իսկ թանգարանին կը պատկանի այլ ռուս հաւաքորդի մը, որ փոխ տուած էր Շակալի առաջին գործերուն նուիրուած ցուցահանդէսի մը համար:

Թանգարանին բանբերը կ՝ուզէ որ իր խօսքը հասնի վերագրինը պահանջող «արուեստ եւ խաղաղութեան միջազգային կոմիտէ»ին: Ան կ՝ըսէր. – «Մերճաւոր – Արեւելքի խաղաղութիւնը ձեռք ձգել մեր կարողութենէն վեր է: Հաւատացէք, որ կը ցաւինք եւ պատառի մը գողութիւնը չէ որ բան մը պիտի փոխէ»:

Քաղաքական նպատակներով պատառի մը գողութիւնը աննախընթաց չէ: 1974ին, անգլիական անհատական հաւաքածոյէ մը գողցուած են Վէրմէրի եւ Կոյայի պատառները եւ ԻՐԱ–ն (Իրլանտայի Հանրապետական Բանակ) մեծ գումարներ պահանջած էր եւ բանտարկեալներու ազատ արձակումը, պատառներուն փոխարէն: Փրկագինը չէր վճարուած, գողերը ձերբակալուած էին եւ պատառներն ալ գտնուած:

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՆ ԹՈՒՏ

ԱՅՕ՛, ՄԱԿԱՐԴԱ՛Կ

Ատում են Բնապահպանութեան նախարարութեան դիտարկումներով՝ Օգոստոսին Սեւանի մակարդակը անչեզօքէն մօտենում է իշխանաւորների մակարդակին:

ՎԵՐԱԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՑԱՆՁՆԵՑԻՆ

Վերյուծելով «27»ի դատաքննութեան ընթացքը դիտորդները եկել են եզրակացութեան Նայիրի Ցունանեանի դատում է ոչ թէ առաջին ատեանի դատարանը, այլ քննչական դատարանը:

ԹԻ 17 ԹԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԱՐԱԳՈՑԸ ԿԸ ՊԱՏՄԻ

Մանաւանդ Շահրիկեան չափազանց յուզուած կը թուէր:

– Սրա մէջ ես պարզապէս դաւաճանութիւն եմ տեսնում, – ըսաւ:

Այս խօսքերը փոթորիկ մը առաջ բերին ժողովին մէջ:

– Ի՞նչ ըսել կ՝ուզէք...

– Բացատրեցէք ձեր միտքը:

– Ո՞վ է դաւաճանը...

– Այդ խօսքը չենք ընդունիր:

– Ապացոյց կը պահանջենք:

Այսպէս կը պոռային ամէն կողմէ:

Շահրիկեան պաղարիւնով կը դիտէր այդ իրարանցումը. երբ ժողովը հանդարտեցաւ, ըսաւ.

– Մի չտապէք, սպասէք, հիմա կը բացատրեմ իմ միտքը:

– Խօսեցէ՛ք, ուրեմն:

Եւ Շահրիկեան իր ցուցամատը օդին մէջ ճօճելով՝ սկսաւ պարզել իր տեսութիւնը:

Ըսաւ, թէ ինչ որ այժմ ըսած էր ռուսական դեսպանատան թարգմանը, նոյնը արդէն կրկնած էր Զօհրապ չաբաթ մը առաջ. ինչպէ՞ս կ՝ըլլայ, որ Զօհրապ եւ ռուսական դեսպանատունը միեւնոյն տեսակէտը կը պաշտպանէին: Պարզ զուգադիպութի՞ւն մըն էր այս, թէ՞ ուրիչ բան պատճառ մը կար... Շահրիկեան ըսաւ, թէ իր կարծիքով պարզ զուգադիպութիւն մը չէր այս, այլ Զօհրապի եւ ռուսական դեսպանատան միջեւ եղած կարգադրութիւն մը կամ համաձայնութիւն մը: Ինդիրը այն է, թէ Զօհրա՞պ ներշնչուած է ռուսական դեսպանատունէն, թէ՞ ինք ազդած է անոր վրայ: Ահա այս մասին ալ Շահրիկեան այն կարծիքը յայտնեց, թէ Զօհրապի դիմումներուն վրայ ռուսական դեսպանատունը իր թարգմանը ղրկած է Պատրիարքին մօտ:

Շահրիկեանի այս յայտարարութիւնը խոր տպաւորութիւն յառաջ բերաւ ժողովականներուն վրայ:

Արդարեւ տարօրինակ զուգադիպութիւն մը կար Զօհրապի եւ ռուսական դեսպանատան առաջարկներուն միջեւ:

– Ձեր ամբաստանութիւնը պատրա՞ստ էք կրկնելու Զօհրապ էֆէնտիի երեսին, – հարցուց ժողովական մը՝ խօսքը Շահրիկեանին ուղղելով:

– Բնականաբար, – դոչեց այս վերջինը:

Նոյն միջոցին դուռը բացուեցաւ, եւ ներս մտաւ Զօհրապ:

– Ձախաղանց զբաղուած էի, չկրցայ ժամանակին գալ այսօրուան նիստին, – ըսաւ, – այսուհանդերձ ուզեցի վայրկեան մը հանդիպիլ՝ խորհելով, որ թերեւս պէտք կ՝ունենաք ինծի:

– Շատ ուշկ ըրիք գալով, – ըսաւ Գարայեան, – խիստ կարեւոր խնդրի մը վրայ կը խորհրդակցէինք այս միջոցիս:

– Ի՞նչ խնդիր, – հարցուց Զօհրապ հետաքրքիր:

– Հիմա կը բացատրենք...

Եւ Ստեփան Գարայեան մանրամասնօրէն պատմեց ռուսական դեսպանատան թարգմանին այցելութիւնը:

– Ես արդէն առաջուընէ ձեզի նոյն խորհուրդը տուի, – ըսաւ Զօհրապ:

– Ձիշդ այդ իրողութիւնն է մեզ զարմացնում, – պատասխանեց Շահրիկեան:

– Ի՞նչ ըսել կ՝ուզէք, – դոչեց Զօհրապ:

– Ասել կ՝ուզեմ, թէ զարմանալի է, որ դուք եւ ռուս դեսպանատան ներկայացուցիչը միեւնոյն ժամանակ միեւնոյն հայեցակէտը ունենաք այս խնդրի մասին:

– Եւ ի՞նչ կը հետեւցնէք ասկէ:

– Ասկէ կարելի է հետեւցնել, թէ կա՛մ դուք ռուս դեսպանատան ազդեցութիւնը կը կրէք եւ կա՛մ ռուս դեսպանատունը ձեր ազդեցութիւնը կը կրէ:

Զօհրապ ուսերը թօթուեց արհամարհոտ ձեւով մը:

– Եղածը պարզ զուգադիպութիւն մըն է պարզապէս, – ըսաւ, – ես այդ խորհուրդը տուի առանց արտաքին որեւէ ազդեցութեան, միմիայն իմ տեսածներէս ու լսածներէս ազդուած... կարծեմ իմ անկեղծութեանս մասին ո՛չ ոք կրնայ կասկածիլ... ինչո՞ւ կ՝ուզէք, որ իմ եւ ռուս դեսպանատան միջեւ որեւէ թաքուն համաձայնութիւն մը ըլլայ, ասանկ բան մը մտածել պարզապէս ապուռ է...

– Զօհրա՛պ էֆէնտի, մի յուզուիք, – ըսաւ Ստեփան Գարայեան, – կարծեմ ձեր անձին դէմ որեւէ վիրաւորիչ ակնարկութիւն մը չեղաւ:

– Ասկէ զատ, – չարունակեց Զօհրապ, – իմ յայտնած կարծիքիս կողմնակից պանդուեցան նաեւ Պետրոս Հալաճեան եւ նոյնիսկ դուք՝ Գարայեան էֆէնտի...

– Ախէնքն լուրջ առաջարկ մըն է, որ կ՝արժէր նկատողութեան առնել:

– Դա անկարելի է, – դոչեց Շահրիկեան, դա երբեք կարելի չէ նկատել իրեւ լուրջ առաջարկ, դա պարզապէս մի մեքենայութիւն է, որ կ՝ուզեն լարել ամբողջ գործը վիժեցնելու համար...

Այս խօսքերը կրկին միտքերը յուզեցին:

Զօհրապ մանաւանդ չափազանց բարկացած կը թուէր:

– Եւ ե՞ս եմ, որ այդ մեքենայութիւնները կ՝ընեմ, – դոչեց:

– Ես այդպէս բան չասացի, – պատասխանեց Շահրիկեան:

– Ըսի՛ր, թայց լռելեայն այնպէս հասկցնել ուզեցիր:

– Ես երբեք ծածուկ ակնարկութիւններ չեմ անի, ես կ՝ասեմ՝ ինչ որ ունեմ ասելիք, դուք պարզապէս գործիք էք եղել էնոնց ձեռք...

– Գործի՞ք... թայց այդ աւելի ծանր է...

– Թերեւս անդիտակից, թերեւս միամիտ գործիք, բայց վերջապէս դուք կը կրէք նրանց ազդեցութիւնը:

Երկու ժողովականներու միջեւ կռիւը բաւական բուռն եղաւ եւ աւելի ծանր հանդամանք մը պիտի ստանար, եթէ միւս պաշտօնակիցները չմիջամտէին եւ չհաշտեցնէին խնդիրը անոյշ տեղը կապելու:

(Շար. 46)

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՖՐԱՆՍԱՀԱՅՑ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ
ՓԱՐԻԶԻ
ԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ
ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալորէա կը դասաւանդուին. – հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք:

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին:

— • —

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ
(ԼԻՈՆ)

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի թուականն է Շորեքշաբթի Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին:

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շորեքշաբթի, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16:

Աշակերտները կրնան օգտուիլ Շորեքշաբթի կէսօրուան ճաշէն:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝

04 . 78 - 60 . 47 - 18

թիւին:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— • —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux

Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

*
**

CROIX BLEUE DES ARMENIENS
DE FRANCE
Section d'Asnières
Au profit de la Colonie de **Bellefontaine**
Réservez votre soirée
du Samedi 20 octobre
GALA ARTISTIQUE ARMENIEN
avec l'**Ensemble folklorique arménien**
NAVASART
Danseurs, musiciens,
chanteurs **traditionnels**
au Grand Théâtre d'Asnières.

*
**

La Section «TER-DAVTIAN»
de Chaville
de la Croix Bleue des Arméniens de France
organise
le Samedi 27 octobre
UNE SOIREE DANSANTE
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

*
**

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une **SOIREE DANSANTE**
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre «Gaïdzag's»**



le domaine de chamerolles
45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 hectares avec étang, hébergement en châlets tout confort pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F
(selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.

Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.



les Coupons d'Alsace
21, av. d'Helvétie
25203 MONTBÉLIARD
Tél. 03 81 94 38 10

Z.I. Les Arbletiers
25400 AUDINCOURT
Tél. 03 81 35 51 93

65, avenue Jean Jaures
90000 BELFORT
Tél. 03 84 21 62 66

PELERINAGE A ROME
organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris
du jeudi 4 au lundi 8 octobre
à l'occasion de la Béatification de
Mgr. IGNACE MALOYAN
Archevêque de Mardine, martyr en 1915.
le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre
GRANDE FETE CHAMPETRE
Animée par l'Orchestre SPITAK
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel
Programme : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola
Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 28
MARDI
28 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՀԱՅԿԱԿԱՆ

ՕՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·238 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 77e ANNEE — N° 20.238

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒՀԻՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Եւրոպայի Խորհուրդը Օգոստոս 24–ին պիտի էր Ղարաբաղի իշխանութիւններուն, ըսելու համար որ հրաժարին ընտրութիւն կատարելէ, քանի որ այդ ընտրութիւնը «մխակողմանի», ուստի ապօրինի կը նկատուի, Ղարաբաղէն ազերբէյճանցի բնակիչներուն դաղթին պատճառով: ԼՂՀ Արտաքին գործերու նախարար Նայիրա Մելքումեան հակադրած է խորհուրդին դիմումին, ըսելով որ Ղարաբաղի մէջ կը բանի կառավարական պետական մեքենան որ կազմակերպիչն է ընտրութեան եւ որ ոչ օրէք հրահանգ կը ստանայ եւ որոշուած թուականին (Սեպտեմբեր 5) ընտրութիւնը տեղի կ'ունենայ: Ան աւելցուցած է թէ սխալ է Եւրոպայի Խորհուրդին պնդումը թէ ընտրութիւնը խոչնդոտ կ'ըլլայ հարցին խաղաղ կարգաւորումին: Քիչ եղուցած ալ է որ Ազերբէյճանցի գաղթականներուն քով կան հայ գաղթականներն ալ եւ նոյն տրամադրութեամբ օրինաւոր չեն կրնար նկատուիլ Ազերբէյճանի ընտրութիւններն ալ, քանի որ մեծաթիւ Հայեր գաղթած են հոնկէ:

«ՔՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 24 / 27)

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԵԼԿՐԱՏԻ ՄԷՋ

Արտաքին գործերու նախարար Վ. Օհանեան Օգոստոս 24–ին Պելկրատ մէջ հանդիպում ունեցած է եուկոսլաւ իր պաշտօնակիցին հետ: Առաջին անգամն էր որ Հայաստանի Արտաքին գործերու նախարար մը Պելկրատ կը գտնուէր: Երկու նախարարները համաձայնագիր մը ստորագրած են մշակութային, կրթական, մարզական մարզերու յետագայ գործակցութեան մասին:

*
**

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՊ–Ի ՉՕՐԱՎԱՐԱԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Օգոստոս 29 – 30–ին Ռուսաստան, Բելառուսիա, Ղազախստան, Տաջիկիստան ու Հայաստան կը մասնակցին ՀԱՊ–ի ռազմօդային ուժերու զօրավարժութիւններուն, որոնք տեղի կ'ունենան Աստրախանի մարզին մէջ: Զօրավարժութիւնները կը ղեկավարէ ՀԱՊ–ի երկիրներու պաշտպանութեան խորհուրդին կից հաւօդային նախարարներու պաշտպանութեան հարցերու կոմիտէի նախագահ, Ռուսաստանի ռազմօդային ուժերու գլխաւոր հրամանատար զօրավար Ա. Կոռնուկով:

*
**

ԿԱՐԿՈՒՏԸ ՎՆԱՍԱԾ Է ԼՈՌիի ՄԱՐԶԻՆ

Լոռիի մարզին լուրջ վնաս պատճառած են յորդառատ անձրեւները ու կարկուտը: Աւերուած են 1000–էն աւելի տուժած են Օճունի եւ Ձոճկանի համայնքները. աւերուած են ծրպաստաններ, բանջարանոցներ, գարիի, եղիպտացորենի ցանցեր, նաեւ պիւղական ճամբաներ, էլեկտրականութեան լարեր:

Անձրեւէն ու կարկուտէն վնաս կրած են նաեւ Սպիտակի Սարոմէջ, Ջրաշէն եւ Լեռնանոյք գիւղերը:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՍՈՖԻԱՅԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԳԱՅԹԱԿՊՈՒԹԻՒՆԸ

ՎԻԶԱՆԵՐՈՒ ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՆԱԵԻ ԻՐԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՆՈՒԶ, ՊԵՆԵՆ

Մեծ գայթակղութիւն մըն է, որ ծագած է Սոֆիայի Ֆրանսական դեսպանատան մէջ, աւելի ճիշդ հիւպատոսական ճիւղը, երբ յայտնաբերուած է թէ վիզաներու ճիւղին պատասխանատուն՝ Ռիւտի Տլմանճ չայլութեամբ վիզաներ կը ծնորհէր կիներու որոնք Ֆրանսա կու գան մարմնավաճառութեան համար: Քննութիւնը դոյց կու տայ որ ան վիզաները կը ծնորհէր իր հոմանուհիին, որ ճամբորդական գործակալութիւն մը կը վարէր եւ ան, իր կարգին վիզաները կը ծախէր 1000–էն 3000 Ֆրանքի: Պուլկարիոյ դեսպանն ալ եւս կանչուած է, թէեւ ինք կը ճշդէ որ իր ժամանակաշրջանը լրացած էր եւ այդ պատճառով կը փոխարինուի: Ռիւտի Տլմանճ եւ պուլկար երեք քաղաքացիներ քննութեան տակ առնուած են: Կասկածները ծայր տուած էին, 1999–ի վերջերը, երբ ոստիկանութիւնը ձերբակալած էր պուլկար պոռնիկներ եւ նկատած որ զբօսաշրջութեան վիզաներով չեն եկած այլ՝ գործի: Մտուգած է որ այդպիսի բան չկայ, ոչ մէկ հաստատութիւն դիրենք հրաւիրած է: Այս երկու տարիներու ընթացքին, այլ յայտնաբերումներ ալ եղած են: Հայաստանի եւ Իրանի պարտիզպէն խնդրոյ առարկայ պաշտօնատարներ եւս կանչուած են եւ պաշտօնազրկուած:

Ինչ կը վերաբերի Պուլկարիոյ, հարցը ինքնաբերաբար փակուած է, Պուլկարներուն համար Ֆրանսա մուտքի վիզան վերցուած է այլեւս:

ՓԱՆԻ ՄԸ ՏԱՊՈՎ

ՖՐԱՆՍ – ՍՈՒԱՐ Օգոստոս 24–ին հրատարակեց լայն հատուածներ Պասթիայի ընդհանուր դատախազին տեղեկագրէն, որ, սկզբունքով պէտք է գաղտնի մնար: Այդ տեղեկագիրը Արդարութեան նախարարութեան յանձնուած է 2000 Յուլիսին եւ կը վերաբերի Գորսիքայի ապստամբապաշտներու եւ մաֆիայի կապերուն, եւ գործակցութեան, ինչպէս նաեւ անտրական գեղծարարութեանց: Արդարութեան նախկին նախարարուհին յայտարարած է որ այդ տեղեկագիրը աչխատանքի փաստաթուղթ մըն է, որ հրապարակուելու սահմանուած չէր, ինչ որ չի համոզեր եւ «Ֆրանս – Սուար»ի խորագիրն էր արդէն՝ «Գորսիքայի տեղեկագիրը զոր Մաթիւնեոն պահեց»: Դատախազը կ'ըսէ թէ մաֆիայի ազդեցութիւնը տկար է, բայց, բաւական յայտնութիւններ կ'ընէ եւ անունները ալ կու տայ ընտրեալներու գործունէութեան մասին: Կան նաեւ անունները ոմանց որոնք գործակցեցան Մաթիւնեոնի հետ համաձայնագրին առթիւ:

ՀԱՄԱՑՆԱՎԱՐ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ «Ամրան համալսարան»ին, որ կը կայանար Օպաներ, Ռոպէր Հիւ «գաղջ» որակեց ժոսփէնը, որու քաղաքականութիւնն ալ ժժգոյն է եւ նոր տարազ մըն ալ կը տաւ բացատրելու համար իր քննադատութիւնները եւ կառավարութեան մասնակցութիւնը: Այդ նոր հարուածն է «դրական հեռատեսութեամբ»:

ՍՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ քանի հաղթեցութիւն մը ունեցած են նախագահ Պուշի յայտարարութեանց: Այս վերջինը ամբաստանած էր Արաֆաթը որ հարկ եղածը չընէր նուազեցնելու համար բռնութիւնը: «Սովոր ենք ըսելու որ քաղաքական ամերիկեան պարապ մը կայ. ըսած է Արաբական Լիկայի քանբերը, որ պաղեստինցի երեսփոխանուհի է, բայց, այլեւս յստակ է քացատական քաղաքականութիւն մը կայ պաղեստինցի ժողովուրդին հանդէպ, որ ամէն քանի պատասխանատու է եւ Իսրայէլը կը գեռեղէ օրէնքներէ վեր»: Տեղւոյն վրայ, բախումները չեն դադրիր: Գազայի հարաւը երեք իսրայէլացի պինուորներու սպանութենէն ետք, իսրայէլեան բանակը զանգուածային յարձակումներու դիմած է, որոնց հետեւանքով պաղեստինցի մէկ մեռեալ կայ եւ աւելի քան 10 վիրաւորներ:

ՋԻՋԷՆԻՈՑ Գուղերմէս քաղաքի չուկային մէջ ռումբ մը պայթած է Օգոստոս 25–ին: Երեք մեռեալներէն մէկը տասը տարու մանչուկ մըն է եւ կան 11 վիրաւորներ: Երկու ուրիշ ռումբեր ալ պայթած էին Օգոստոս 24–ին, Տաղտան առանց զոհ պատճառելու:

ԵՐԵՔ ՖՐԱՆՍԱՑԻ ուսանողներ որոնք ապօրինի կերպով անցած էին Վրաստանը Ռուսաստանէն բժժնող սահմանապլուխը ձերբակալուած են ռուսական ոստիկանութեան կողմէ: Յայտարարած են որ կ'ուզէին էլպրուզ լեռը քարձրանալ (5633 մեթր):

ՓԱՐԻԶի ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՄԻՋԻՒՐԷՂԼԸ՝ Օլիմփիան կը գնուի Վիվէնտի – Ունիվերսալ կողմէ, ինչ որ բաւական գրգռած է երգարուեսատի աչխարհը: Պրիւնօ Քոգաթրիքքի այս սրահէն է որ իրենց համբաւին սկսած են տիրանալ Էտիթ Փիաֆ, Ժիլպէր Պէքօ, Իվ Մոնթան, Լեօ Ֆրանսուա: Պրիւնօ Քոգաթրիքքի մահէն ետք, կիներ ու աղջիկը կը չարունակէին վարել Օլիմփիան, բայց, կ'ըսուի թէ վաճառքը որոշուած է իրրեւ հետեւանք երկուքին տարակարծութեանց, թէեւ յայտարարուած է որ «միացեալ համաձայնութեամբ» որոշուած է ծախել: Յայտնի չէր թէ Մէսիէ (Վիվէնտիի տնօրէն – նախագահը) պիտի գոհանայ միա՞յն Օլիմփիայով թէ ոչ տրամադիր է դնելու նաեւ պատերը, որոնք Սոսիէթէ Ժենեթալին կը պատկանին:

ՖԻԼԻՓ ԼԷՈԹԱՐ, նախկին նախարարին եղբայրը, մեռաւ առջի օր 61 տարեկանի սեմին: Ծանօթ դերասան, ծանօթ էր նաեւ ալքոլի եւ թմրեցուցիչի չափազանց դործածութեան համար, ինչ որ գինք բանտ ալ առաջնորդած է: Դերասան, երգիչ, բանաստեղծ Ֆիլիփ Լէոթար համբաւ չինած էր մանաւանդ Լա Պալանս ֆիլմով:

L'Evénement Pelechian

Այս խորագրին տակ, «Ժուռնալ տիւ Տիմանչ» (Օգոստոս 26) կը հաղորդէ որ Արտաւազդ Փելեչեանի «Եղանակները» (Լէ Սէզոն, 1975) կը ներկայացուի այս միջոցին Ֆոնտասիոն Գաութիէ (*): Լրատուութեան սկիզբը կը չեչտուի որ «ամրան կարեւորագոյն ֆիլմերէն մէկն է»: Վիմալտիի երաժչտութեան ընկերակցութեամբ, 35 վայրկեան տեւող սեւ – սպիտակ պատկերներ կը ներկայացնեն արչալոյսներ եւ վերջալոյսներ, հեղեղներ եւ սառնակոյտեր, ջրհեղեղներ եւ տօթեր, որոտում եւ հովուերգութիւն:

Այս ֆիլմը, հատանաբար այս հայ բեմադրիչին դլուխ գործոցն է, կ'աւելցնէ թերթը, քիչ ծանօթ արեւմուտքի մէջ եւ դոր կոտար յայտնաբերեց Ֆրանսայի մէջ:

(*) 261, boulevard Raspail, Paris
☎ 01 42 18 56 50

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Հայաստանի անկախութեան տասնամեակին երկրորդ անգամ ըլլալով կազմակերպուած էին ու տեղի ունեցան համահայկական մարզական խաղերը: Տըրուած ընդհանուր տեղեկութիւններէն կ՚նշուի թէ աշխարհի մօտ 90 քաղաքներէն իգական ու արական խումբեր մասնակցեցան անոնց, մարմնաւորելով չուրջ 3500 հոգինոց պատկառելի ամբողջութիւն մը: Թիւեր որոնք ուրախացնող իրենց յատկանիշին հետ, անկարելի է որ մոռնալ չտան հայկական ցրուման սահմաններուն ու կեդրոնաճիգ տրամադրութեան մասին: Ճիշդ է որ ցրուման մեր աշխարհագրութեան մէջ համահայկական խաղեր կազմակերպուած են հայաչատ գաղութական անկիւններու մէջ, բայց հայաստանեանները կ՚առանձնանան հասարակաց կեդրոնացումի իրենց հանդիսանքով:

«Համահայկական» որակումը բառին ամենալայն առումով կ՚արդարանայ հայաստանեան խաղերու պարագային որով կը նշուի դէպի աղբիւր երթ մը: Մանաւանդ երբ երիտասարդ սերունդն է գլխաւոր դերակատարը: Հայութեան այն դասն է ան, որուն համար հանրօրէն մարզական ոգին աւելի առաջնային տեղ ունի քան, քան՝ ազգայինը: Ու մեկնումները, կեդրոնացումները, խաղերն ալ կը հետեւին նոյն նախընտրութեան: Իսկ երբ այդ բոլորը առիթ կ՚ըլլան այլ բնոյթի հանդիպումի մըն ալ որուն մասնակիցներէն չատեր ինքնաբերաբար թերեւս չձեռնարկէին, խաղերու կազմակերպումը կրկնակի խմաստ կը ստանայ: Պոլսեցի, ախալքալաքցի, սեւրհանակերտցի, փարիզցի, զորտոզացի, գահիրէցի ու այլ տեղերու հայ երիտասարդներ կրնային իրարու հանդիպիլ աշխարհի որեւէ հայաչատ մէկ ոստանին մէջ կազմակերպուած խաղերու առիթով ալ: սակայն, որեւէ ոստան պիտի ըլլար համախմբումի պարզ վայր, չատ – չատ տեսարժան, հետաքրքրաշարժ չրջանակ, առանց կեդրոնաճիգ կապը ստեղծող ազգակ ըլլալու: Համահայկական առաջին խաղերէն ետք մասնակիցներու արտայայտութիւններ չատ յաճախ այս պարագան ընդգծող յատակ բնոյթ ունեցան: Երիտասարդներ, երիտասարդուհիներ խօսելով այդ օրերուն մասին, կը յայտնուէին մարզիկէն առաջ երբեմն նոյնիսկ անգիտացուած կարօտ մը յագեցնողի դիրքէն: Մրցումներու յաղթանակներ, անոնց հրճուանքը, կամ պարտութիւններու դառնութիւններ երկրորդական, երրորդական կը մնային անոնց տպաւորութիւններուն մէջ ուր իշխողը կազմակերպումի զոհացնող մակարդակն էր, տիրող եղբայրական ոգին. տպաւորութիւններ որոնք կ՚արտահէին «ամէն բան չատ, չատ լաւ էր. հիանալի» ի նման վերջաբաններով: Անոնց չեզոտուած զոհունակութիւնը իր մէջ անհետ լուծած էր ամէն ժխտական անցք. օրական հարցեր, վէճեր, փոքր կամ միջակ հակադրութիւններ, բարկութիւններ ամբողջովին յանձնուած էին մոռացութեան: Պատճառ չկայ որ 2001–ի մասնակիցներն ալ նոյն ապրումներով չվերադառնան:

Համահայկական խաղերու դրական այս նախադրանքն ետք էականը ստեղծուած առաջին կապին չարունակութիւնն է կոչ–մերուն մէջեւ: Երկու տարուան միջոցով կազմակերպուած այս խաղերուն մասնակիցները քան տարեկանի չուրջ մանչեր եւ աղջիկներ են, ինչ որ կը նշանակէ միշտ նորոգուող դրամագլուխ մը: Ամբողջ Սփիւռքի տարածքէն Հայաստանի ու հայութեան հետ եզակի այդ հանդիպումին գացողներուն երկարելիք ամուր կամուրջներ կրնան չատ կարեւոր դեր կատարել ազգային հեռանկարներու տեսակէտէն:

Այդ կամուրջները աւելի դիւրին կը հաստատուին, պիտի հաստատուին անհատական մակարդակի վրայ, քան՝ հասարակական: Ի՞նչ կրնայ ըլլալ աւելի բնական, քան՝ օրինակ՝ Սան Ֆրանսիսքոյէն ու Վանաձորէն, կամ Պոլիսէն ու Սահփանակերտէն երկու երիտասարդներու միջեւ այդ խաղերուն օրերուն ծագած բարեկամութիւնը, մտերմութիւնը որ ամէն հաւանականութիւն ունի չարունակելու յետագայ կապով, ինչո՞ւ չէ այլերով ալ: Աւտր համար բաւարար պայման է երկու անհատներու միջեւ գաղափարական, համակրական փոխանակում մը: Իսկ աւելի լայն շրջանակի մէջ, խաղերու ընթացքին ապրուածը մնայուն ազդակի վերածել, ո՛չ միայն պիտի օգնէ իրար ճանչնալու, հասկնալու եւ աւտր՝ տասնամեակներու պատկէշները վերցնելու, այլ նաեւ՝ Հայաստանի ու Սփիւռքի, աւտր քով Սփիւռքի զանազան գաղութներուն միջեւ յաճախ հոգեկան հեռաւորութեան հետեւանք գոյացած այլամերժութեան հակումները, չատ անգամ սըխալ հասկացողութիւնները վերնելու:

Այս հեռանկարին մէջ խնդրոյ առարկան լոզունգներու իրագործումն ալ չէ. արդէն հաւանաբար ոչ ոք լրջօրէն, կամ մտերմօրէն հաւատալով կ՚արտասանէ մէկուքեան առանցքին չուրջ չինուած այդ կազմակերպները որոնք «ժողովուրդ», «մշակոյթ», «հայրենիք», «եկեղեցի» եզրերը կը չահագործեն ըստ պարագայի: Նոյնիսկ յայտնի չէ թէ անոնց մէջ խզուածքը նպատակ է, թէ ներկայի վիճակի ներկայացում: Ինչ որ ալ ըլլայ պատասխանը, հանրահաւաքներու ամպիոններուն, կամ ցոյցի պաստառներու միայն յարիր այդ տարազներով մեր ընթացքին մէջ դրական քայլ պիտի չարձանագրուի, այնքան աւտն որ իրար ճանչնալու նախաքայլը առնելու ձանձրոյթը ոչ ոք կը ստանձնէ: Եւ ըսել որ այդ առաջին հանդրուանէն ետք որուն համար իսկապէս հրաշալի առիթ են համահայկական խաղերը, ահագին գործ կը մնայ ընելիք: Այս անգամ հաւաքականին պետին վրայ:

Կրնա՞յ խաղերուն ընթացքին միջավայրին նկատմամբ ծնած համակրանքը աւելի մնայուն կապերով չարունակուիլ Սփիւռքի երիտասարդութեան համար: Օրինակ, եթէ ան ստացած զգացականը գործի, մասնագիտական, տնտեսական ու այլ աւելի իրատեսական ու մնայուն առընչութեամբ չարունակել ուզէ, պիտի գտնէ՞ յուսախաբութեան դէմ նուազադոյն պատնէշ մը: Մեր իրականութեան բազմազոյն, բազմաձայն, բազմախորք աշխարհներուն տարբերութիւնը կարելի պիտի ըլա՞յ անզօրացնել որպէս վանդակ, ապրակ: Զգացականով բոլոր բացերուն կարկատան ձգելու չուտիկութեան տեղ քաղաքական մտածումի մակարդակին բերուա՞ծ են նման մտահոգութիւնները:

Հարցականները որոնք առաւել հնչեղութեամբ կը ներկայանան, յատկապէս հայաստանեան կողմին, համահայկական խաղերու առթած խանդավառութեան այս չրջանին: Անոնց առջեւ զգացականին բարի կուտակումը չի կրնար կարեւոր դեր մը կատարել. միակ լուրջ նկատառելին կը մնայ պատասխաններուն ժխտական – դրականի կչիռը: Իսկ զոն փափաքելի սահմանին մէջ պահելու անկարողութեան պարագային, խնդրոյ առարկայ համահայկական խաղերով առնուած առաջին փոքր, բայց այնքա՞ն կենսական քայլին:

ԱՐՓԻ ԹՈԹՈՑԵԱՆ

ՍՏԱՑԱՆՔ

ամսագիր կրօնական – գրական – բանասիրական

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱղԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

Թիւ 4–5–6, Ապրիլ – Մայիս – Յունիս 2001

ԵՐՈՒՍԱղԷՄ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵՐՈՒՍԱղԷՄԻ

Միջազգային վայելած իր դիրքով ու հանգամանքով, Երուսաղէմի Հայ պատրիարքութիւնը նշանակալից տեղ կը գրաւէ Հայաստանեայց Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներուն մէջ:

Համաքրիստոնէական սրբավայրին մէջ հաստատուած սրբոց Յակոբեանց Աթոռը չնորհիւ հայ թագաւորներու եւ իշխաններու նուիրատուութեան, հայ ժողովուրդի բարեպաշտ հոգատարութեան ու պինդ հաւատարիմ միաբանութեան, Յոյներուն եւ Լատիններուն հետ, տէր է համարժէք իրաւունքներու, պատճառ դառնալով ազգային հպարտութեան:

Ցիսուսի Համբարձումէն յետոյ, Երուսաղէմի քրիստոնեաներ Յակոբոս Տեառնեղբօր Աթոռը, ստիպելով Յոյներուն այլ վայրի մէջ հաստատել իրենց Աթոռը: Այս դէպքը ցոյց կու տայ, որ քրիստոնէական առաջին դարերուն զօրաւոր համայնք մը ունեցած ենք Երուսաղէմի մէջ:

Գործ Առաքելոցի մէջ (Գլխ. Բ. 8–11) Հոգեգալուստի նկարագրականը գրած ատեն Ղուկաս Աւետարանիչ յիշատակած ու դասաւորած է կարգը այն ժողովուրդներուն որոնք ականատես եղան հրաշալի միջադէպին. – «Պարթեւք, եւ Մարք եւ Իլամացիք, եւ որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաստան եւ ի Գամիրս, ի Պոնտոս եւ Ասիա, ի Փռիւգիա եւ ի Պամփիւլիա, եւ այլն»:

Ափրիկեան եկեղեցւոյ նշանաւոր հայրերէն Տերտուղիանոս (155 – 222) Հոգեգալստեան դէպքը յիշատակած ատեն, Հրէաստանի անունը սրբագրած եւ տեղը Հայաստանը գրած է. Ղեւոնդ Ալիշանի թարգմանութեամբ. –

«Որո՞ւ (բայց եթէ Քրիստոսի) հաւատային այլեւայլք ազգք, Պարթեւք, Մարք, Ելամացիք եւ ի Միջագետս եւ ի Հայաստան, ի Փռիւգիա» եւ այլն (Աշխարհագրութեան Հայոց էջ՝ 10–11):

Արդարեւ, Հայաստանի Հրեաները, որոնք Մեծն Տիգրանի ձեռքով բերուած էին, ամէն տարի ուխտագնացութեան կ՚երթային Երուսաղէմ իրենց պաշտամունքը կատարելու Սողոմոնի տաճարին մէջ: Իսկ Հայեր առեւտրական կապեր ունենալով հրեայ վաճառականներու հետ յաճախ ճամբորդած են Պաղեստին եւ դարերու ընթացքին որոչ իրաւունքներու տիրացած են սուրբ քաղաքին տնօրինական վայրերուն մէջ:

Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի իր «Հայկական Հին Վանքեր, Եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ» մենագրութեամբ, հարուստ տեղեկութիւն կու տայ Հայոց սեփականութիւնը եղած վանքերու եւ եկեղեցիներու մասին, հիմնուելով հայկական մողայիք արձանագրութիւններու, Մովսէս Կաղանկատուացիի (1004 – ...), Անաստաս Հայ Վանականի եւ օտար ճամբորդներու վկայութեանց վրայ: կարեւոր է յիշատակութիւնը Անաստաս Հայ Վանականին, որ ըստ Սէն – Մարթէնի Բիւզանդական արեւելեան բանակին մեծ հրամանատարը Վահան Մամիկոնեանն է: Շուրջ 634 թուին, անսալով Համատասպ Կամսարական Պահլաւունիի խնդրանքին, յուցակագրած է Հայերու սեփականութիւնը եղող 70 վանքերը:

«Այդ փոքրիկ եւ հնամենի գրուածքն կ՚ըսէ Ադաւնունի, կը ցոլացնէ հայ երուսաղէմի անցեալ փառքը ու հայ իշխանատուներու հաստատը զոր ցոյց տուին բիւզանդական տիրապետութեան ժամանակ, երբ Ս. Քաղաքը կը պանծար հայկական եկեղեցիներով ու վանքերով ու աչխին նչոյլներ կը ճառագայթէին պարտավայրերու կաթողիկէներուն վրայ: Անաստաս վանական միակն է որ կը հաղորդէ հայ Երուսաղէմի փառքը թէ՛ մեզի եւ թէ՛ գալիք սերունդներուն, որոնք պիտի կարենան պահել իրենց մէջ այդ փառքը զգալու ուժը ու պիտի սիրեն համակուիլ անով որ ուժը եւ զօրութիւնն է Հայաստանեայց Եկեղեցիին եւ Հայ Պրիմին» (էջ ԺԹ.): Բիւզանդական տիրապետութեան չրջանին, մանաւանդ Յուստինիանոսի օրով կ՚աչխուժանան կրօնական խլրտումները: Հոռոմներ կը բռնադատէին հայ վանականներ որպէս զի անոնց ընդունիլ տան յոյն դաւանանք, Հայեր իրենց կրած նեղութիւններէն կը ձերբազատուին, երբ Երուսաղէմի Հայոց Աբրահամ Պատրիարքի (638 – 669) օրով, Պաղեստինը կը գրաւուի Արաբներու կողմէ: Իմաստուն Պատրիարքը չքախտմբով մը կը ճամբորդէ Մէքքէ, կը ներկայանայ Մուհամմէտի ու իր հպատակութիւնը կը յայտնէ խնդրելով պաչտպանութիւնը սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ ստացուածքներուն:

Վահրամ Կէօքճեան արաբ պատմագիր Զէքիէտտինի պատմութենէն քաղելով յիչեալ հանդիպումը կը նկարագրէ. –

«Հայոց Պատրիարքը, աչքի առջեւ ունենալով նորահաստատ կրօնքի՝ Մուհամմէտի հետեւորդներուն արիւնոտ յաղթանակները, եւ առաջքն առնելու համար հաւանական աւարներու եւ աւերներու, 40 հոգինոց չքախտմբով մը կերթայ Մէքքէ ... կը դիմէ Մուհամմէտին եւ հպատակութիւն ու հաւատարմութիւն խոստանալով՝ կը խնդրէ ապահովութեան դիր մը՝ իրենց անձերուն եւ իրենց ստացուածքներուն համար ... Ան սիրով կ՚ընդունի Հայոց Պատրիարքը եւ անոր կը չնորհէ պատչաճ հաւատարմադիր մը:

Կ՚արտագրենք սոյն վաւերագրին հնկան ու յատկանչական ինչ ինչ կէտերը, նկատելով որ այդ վաւերագրերը ո՛չ միայն կը հաստատեն Հայոց սեփականատիրութիւնը կարգ մը տնօրինական սրբավայրերու վրայ, այլ որովհետեւ անվիճ, իրր անհերքելի վկայութիւն, ճանչցուած է Պաղեստինի իրերայաջորդ տէրերուն կողմէ եւ այսօր իսկ հիմը կը կազմէ մեր դարաւոր իրաւունքներուն, որոնք կը մնան ի զօրու, հակառակ իրաւակից յոյն եւ լատին պատրիարքութեանց եւ անոնց պաչտպան հզօր պետութեանց յայտնի եւ անյայտ դաւերուն...

Ես Մուհամմէտ, որդի Ապտալլահի, մարգարէ եւ առաքեալ Աստուծոյ, Աբրահամ Պատրիարքին եւ Երուսաղէմ ու Դամասկոս ու Աբաբիոյ միւս սահմաններուն գտնուող Հայոց եպիսկոպոսներուն եւ վարդապետներուն եւ իրենց հպատակ ժողովուրդներուն, այսինքն՝ Եթովպիացիներուն, Ղպտիներուն եւ Աւորիներուն չնորհեցի բոլոր իրենց վանքերը, եկեղեցիները, դպրոցները, կալուածներն ու արտերը: Ես՝ Աստուծոյ առաքեալ, վկայութեամբն Աստուծոյ, ինչպէս նաեւ մօտս եղող բոլոր այր եւ կին մարդոց խղճին վկայութեամբ, խոստացայ եւ տուի Երուսաղէմ գտնուող եկեղեցիները, Ս. Յարութեաց Տաճարը եւ Ս. Յակոբ կոչուած մեծ եկեղեցին, որ Ս. Քաղաքին հարաւակողմին դիմացն է եւ Սիոն վանքին զով, տուի նաեւ Զիթենիի վանքը, եւ Քրիստոսի Բանտին վանքը եկեղեցին, եւ Ս. Յովհաննէսի ու Սամբիայի մատուռները, եւ Ս. Յարութեան Տաճարի եռեւի աղօթարանները ու ամ-

րողջ դողդոջան...» (Վ. Կէօքճեան, էջ 18 – 20):

Տիգրան Սաւալանեանց իր «Պատմութիւն Երուսաղէմի» երկասիրութեան մէջ կը նկարագրէ Աբրահամ Պատրիարքին երկրորդ այցը Մէքքէ, ուր ներկայանալով Մուհամմէտի յաջորդ՝ Ալիի, ապահովագիր մը կը ստանայ հայկական Երուսաղէմի սեփականութիւնները ու իրաւունքները ճշդող:

Ցիշեալ վաւերաթուղթերը ի պահ դէպրած են Սրբոց Յակոբեանց Գանձատան մէջ (էջ 270):

Դարերու ընթացքին Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը սպրանքներու թիրախ դարձած է: Բայց ան պահած է իր գոյութիւնը ու պաշտպանած իր իրաւունքները՝ ենթարկուելով զրկանքներու եւ զոհողութեանց: Հայաստանեայց Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներուն մէջ մինակն է իրրեւ զուտ կրօնական կեդրոն:

Բազդէն Կիւլէսէրեան ուսումնասիրելով Սիսի եւ Երուսաղէմի յարաբերութիւնները, որեւէ պատմական յիշատակագրութեան չէ հանդիպած ճշդելու համար թէ Երուսաղէմ ե՞րբ դարձած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթակայութենէ: Այս հարցով հաւանութիւն տուած է Սաւալանեանցի մեկնաբանութեան թէ՝ «Երուսաղէմ անկախ հռչակուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն Սարգիս Աբգեսիկոսպոսի (1281 – 1313) կողմէն այն ատեն երբ Կաթողիկէութեան պատճառաւ նոր տաղնապ մը անցուց Կիլիկիոյ Աթոռը, եւ Սիմէոն Երեւանցի (1763 – 1780) եւ Ղուկաս Կարնեցի (1780 – 1799) կաթողիկոսաց ժամանակ ալ՝ Կիլիկիոյ թեմերէն Հալէպի Արեւելցի Հայերը չարժում մը յառաջ բերին մանելու համար էջմիածնի իրաւասութեաց տակ, երբ պահ մը, կաթողիկէները յաջողեցան զրաւել Ս. Աստուածածին եկեղեցին: Բայց չատ երկար չտեւեց այդ չարժումը, որովհետեւ Աջապահեան կաթողիկոսներ կասեցուցին զայն եւ վերստին տիրացան զրաւուած եկեղեցիին, 1741–ին, քառամեայ զրաւումէ յետոյ:

Երուսաղէմի Առաջնորդները Պատրիարք տիտղոսը առնելէն եւ Կիլիկիոյ Աթոռէն անջատ հռչակուելէն յետոյ ալ, Կիլիկիոյ Կաթողիկոսները չհրաժարեցան իրենց պատմական իրաւասութենէն Սուրբ Յակոբի Աթոռին վրայ» (Պատ. Կղթ. Կիլիկիոյ, էջ 1263 – 1264):

***

Հայաստանեայց Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռները վարչականօրէն անկախ են իրարմէ. սակայն անոնցմէ Սուրբ Էջմիածինը նախամեծար է ու կը վայելէ պերակայ դիրք:

Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ վարդապետներ. Ամենայն Հայոց Հայրապետէն կը ստանան իրենց եպիսկոպոսական ձեռնադրութիւնը:

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

«Սիոն»

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 7ՐԴ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ ԱԻԱՐՏԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Աշխարհի զանազան գաղութներէն, ինչպէս նաեւ հայրենիքէն Լիբանան ժամանած ուսանողները յաջողութեամբ աւարտեցին տասնհինգօրեայ համախմբումը եւ վերադարձան իրենց տուները: Համազգային Ուսանողական 7–րդ համախմբումը (ֆորում) տեղի ունեցաւ 2001 Յուլիս 15–էն Յուլիս 28, Պէյրութի Նշան Փալանճեան ձեմարանին մէջ: Համախմբումին յայտագիրը բաղկացած էր դասախօսութիւններէ, աշխատանքային հանդիպումներէ, այցելութիւններէ, պըտոյտներէ եւ ժամանցէ:

Մասնակիցները, Գանատայէն, Իտալիայէն, Ֆրանսայէն, Յունաստանէն, Կիպրոսէն, Իրանէն, Լիբանանէն, Սուրիայէն, Հայաստանէն եւ Արցախէն ժամանած հայ ուսանողները իրարու մօտեցնելու, փորձառութիւններ փոխանակելու, ինչպէս նաեւ հայկական հարցերու մասին իրենց տեսակէտները յայտնելու նպատակներով կազմակերպուած էր ֆորումը: Ֆորումի դասախօսութիւնները կը վերաբերէին Հայկական հարցին, Ցեղասպանութեան ճանաչման, Հայ դատի, Սփիւռքի եւ Հայաստանի ներկայ վիճակին:

Ֆորումի դասախօսութիւններուն համար Մասնակիցները հրաւիրուած էին Նիւ – Եորքի «Գոլոմպիա» համալսարանի Հայագիտական ամպիոնի վարիչ փրոֆ. Մարկ Նշանեան, Գալիֆորնիոյ «Կլենտէյլ Քոմիունիթի Գոլէճ»ի պատմութեան դասախօս փրոֆ. Լեւոն Մարաշլեան, եւ ֆորումի դասախարակչական թաժինի ընդհանուր վարիչ տոքթոր Հրանդ Մարգարեան, որ դասախօսութիւններու կողքին նաեւ ղեկավարեց աշխատանքի հանդիպումները: Ցաջորդաբար երրորդ տարին ըլլալով Լիբանանէն հրաւիրուած էին վեր. Ներսէս Պարսամեան, Գերճ Ֆազլեան եւ Արմէն Պալեան:

Ֆորումի մասնակիցները այցելեցին Մեծն Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարան, «Կիլիկիա» թանգարան եւ մատենադարան, Ապրիլեան Նահատակաց մատուռ, Լիբանանի Մորհրդարան, Պիքֆայայի զբօսավանք, ուր ստացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի օրհնութիւնը: Կաթողիկոսը արտասանեց ողջոյնի եւ գնահատանքի իր խօսքը եւ յաջողութիւն մաղթեց մասնակցողներուն: Ուսանողները ծաղկեպսակ դետեղեցին Ապրիլեան Նահատակաց Յուշարձանին առջեւ: Անոնք նաեւ այցելեցին կաթողիկէ Հայերու Զմմառու վանքը, Պուրճ – Համուտի քաղաքապետարան, ինչպէս նաեւ Լիբանանի տեսարժան վայրերը՝ Պաալպէք, Ժէյթա, Ժիպէյլ, Հարիսա եւ Այնճար հայաբնակը, ուր ջերմօրէն դիմաւորուեցան տեղւոյն Համազգայինի վարչութեան եւ անդամներուն կողմէ:

Համախմբումի ընթացքին աշխատանքի հանդիպումներու միջոցով ուսանողները ծանօթացան իրարու տեսակէտներուն եւ Սփիւռքի թէ հայրենիքի տարբեր մտահոգութիւններուն:

Անոնցմէ իւրաքանչիւրը, իր բնական միջավայրի ազդեցութեամբ հարցերը կը դիտէր տարբեր դիտանկիւնէ մեկնած: Դասախօսները անոնց հակադիր ու այլազան կարծիքները համադրելով՝ կ'եզրակացնէին ընդհանրական մտահոգութիւններ ու մարտահրաւէրներ եւ կը լսէին համապատասխան լուծումներու առաջարկներ:

Ֆորումը իր մասնակցութիւնը բերաւ Լիպանի հինգ անձնազոհ մարտիկներու 18–րդ տարելիցին առիթով հակումի արարողութեան: Համախմբումի մասնակցողներէն Մհեր Աւետիսեան (Արցախէն) փոխանցեց յաւուր պատշաճի իր սրտի խօսքը՝ վեր առնելով հինգ մարտիկներուն սխրագործութիւնը, եւ վեհ գաղափարին համար անոնց անձնազոհութիւնը:

Նախորդ տարիներուն նման, այս տարի եւս Համախմբումը ունեցաւ իր օրաթերթը՝ «Բարի լոյս ձեմարան» անունով: Թերթը կը տպուէր հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Ուսանողները կը գրէին իրենց տպաւորութիւնները, յուշերը, կարծիքները, ինչպէս նաեւ հակիրճ տեղեկութիւններ տուին իրենց գաղութին հայկական կեանքին մասին:

«ԱԶԴԱԿ»

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

ԻՐԱՆ ՔԱՐԻԽՂԱՑԻՆ ԻՐ ՀՕԳԵՐՈՎ

Լոնտոնի Իքոնոմիսթը կ'անդրադառնայ քարիւղային այն հոգերուն, զորս ունի Իրանի քարիւղի նախարարը՝ Պիժան Զանկանեհ ելք մը գտնելու համար արտադրութեան յաւելման կառավարական պահանջին եւ ամերիկեան ընկերութեան հետ գործ ընելու արտելքին միջեւ:

Արդարեւ, կառավարութիւնը կ'ուզէ որ արտադրութիւնը աւելնայ, բայց, չի կրնար դիմել ամերիկեան ընկերութիւններուն: Զորս տարի է, կը դիմէ Եւրոպայի եւ Ծայրագոյն – Արեւելքի եւ վերջերս յաջողած էր պայմանագրութիւններ ձեռք ձգել եւ կրնար օրական 700 հազար

Լիբանանի տեսարժան վայրերը՝ Պաալպէք, Ժէյթա, Ժիպէյլ, Հարիսա եւ Այնճար հայաբնակը, ուր ջերմօրէն դիմաւորուեցան տեղւոյն Համազգայինի վարչութեան եւ անդամներուն կողմէ:

Համախմբումի ընթացքին աշխատանքի հանդիպումներու միջոցով ուսանողները ծանօթացան իրարու տեսակէտներուն եւ Սփիւռքի թէ հայրենիքի տարբեր մտահոգութիւններուն:

Անոնցմէ իւրաքանչիւրը, իր բնական միջավայրի ազդեցութեամբ հարցերը կը դիտէր տարբեր դիտանկիւնէ մեկնած: Դասախօսները անոնց հակադիր ու այլազան կարծիքները համադրելով՝ կ'եզրակացնէին ընդհանրական մտահոգութիւններ ու մարտահրաւէրներ եւ կը լսէին համապատասխան լուծումներու առաջարկներ:

Ֆորումը իր մասնակցութիւնը բերաւ Լիպանի հինգ անձնազոհ մարտիկներու 18–րդ տարելիցին առիթով հակումի արարողութեան: Համախմբումի մասնակցողներէն Մհեր Աւետիսեան (Արցախէն) փոխանցեց յաւուր պատշաճի իր սրտի խօսքը՝ վեր առնելով հինգ մարտիկներուն սխրագործութիւնը, եւ վեհ գաղափարին համար անոնց անձնազոհութիւնը:

Նախորդ տարիներուն նման, այս տարի եւս Համախմբումը ունեցաւ իր օրաթերթը՝ «Բարի լոյս ձեմարան» անունով: Թերթը կը տպուէր հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Ուսանողները կը գրէին իրենց տպաւորութիւնները, յուշերը, կարծիքները, ինչպէս նաեւ հակիրճ տեղեկութիւններ տուին իրենց գաղութին հայկական կեանքին մասին:

«ԱԶԴԱԿ»

տակառով աւելցնել արտադրութիւնը: Միւս կողմէ, իտալական եւ ճապոնական ընկերութիւններու հետ համաձայնագրերու ստորագրութիւնը ցոյց տուաւ ամերիկեան յատակնութիւններու ունայնութիւնը տարհամոզելու ամերիկեան ընկերութիւնները որ ներդրում չընեն Իրան:

Հակառակ իր յաջողութիւններուն, քարիւղի նախարարը չատ չէ գնահատուած Իրանի մէջ: Իր հայրենակիցները կը մեղադրեն զինք որ կենսական հարստութիւն մը կու տայ անվստահելի օտարականներու: Դեռ աւելին, կրօնապետ մը երդում ըրած է որ երեւան պիտի հանէ այդ պայմանագրերու չուրջ գոյութիւն ունեցող կաշառակերութիւնը:

Նախարարը գոհն է իր երկրին գերբնդայնութեան օտար ներդրումներու նկատմամբ ուժանիւթի մարզին մէջ: Միացեալ Նահանգներն ու Մեծ Բրիտանիա մխանարար ստպալած էին պարսիկ վարչապետ մը, որ համարձակած էր ազդայնացնել անգլերէնական քարիւղի ընկերութիւնը (Մոսատեղ, 1953): Քառորդ դար ետք, 1979–ի իսլամական յեղափոխութիւնը փորձած էր ամէն ինչ կարգի դնել: Արդիւնքով հանքային չնորհներ ընել օտարներու, նոր վարչակարգը չեզոտ դրած էր ազգային հպարտութեան վրայ, ի վնաս վարուելակերպի, թեքնոլոժիի եւ տարադրամներու: Հետեւանքը եղած էր արտադրութեան անկումը:

1997–ին, երբ Զանկանեհ նշանակուեցաւ Նաֆթամիի կառավարութեան մէջ, օրակարգի նիւթ էր արդէն խստակեցութեան միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտութիւնը: Նախարարը, քարիւղային համաձայնութեան ոչ ընդունելի կարգադրութիւն մը հաստատեց. – Պայ – պէքը (վերապնում): Տարադր յարմար չէ, ոչինչ կը դնուի, ոչինչ կը ծախուի, բայց, քարիւղային օտար ընկերութիւնները նիւթական հաւասգում մը կը ստանան հանքերու հետազօտութեան եւ չահագործման համար: Սահմանադրութիւնը կ'արգիլէ որ մասնակցին արտադրութեան:

Պայքարը սուր է, Պարսիկները եւ քարիւղային ընկերութիւնները փոխադարձ առաջարկներէն կը կասկածին: Եւ որովհետեւ, Գլինթըն, երկու տարի առաջ, արգիլած էր որեւէ առեւտուր Իրանի հետ, ոչ – ամերիկեան քարիւղային ընկերութիւնները կասկածամտութեամբ կը մօտենային համաձայնութեան մը, որ առաւելութիւններ կու տար մնայուն ներդրումներու եւ Նէյընկլ Իրանիըն Օյլ Քրմփէնիին կը վերապահէր արտադրութիւնը: Աւելին, ընկերութիւնները կը վախնային, որ Գլինթըն օգտագործէ վիճելի իրաւունք մը, չնորհուած Գոնկրէսին կողմէ եւ որ թոյլ կու տար իրեն պատժելու ոչ ամերիկեան այն ընկերութիւնները, որոնք ներդրում կ'ընեն ուժանիւթի իրանեան գօտիին մէջ: Ցետագային, երբ հաստատուեցաւ, որ այդ իրաւունքը պիտի չօգտագործէ եւ պայմանագրեր ստորագրուեցան, Պարսիկներու մեծ մասը դատ որ քարիւղային ընկերութիւնները չատ նպաստաւորուած են:

Արտասահմանի հետ ստորագրուած պայմանագրերու արժէքը չուրջ 15 միլիառ տոլարի կը հասնի: Ցունիս 30–ին, Նախարարը եւ իտալական Էնի ընկերութիւնը 920 միլիոն տոլարի պայմանագիր մը ստորագրեցին Տարխովինի հանքին չահագործման համար: Ութ օր ետք, նախարարը նախնական համաձայնագիր մը կը ստորագրէր ճափոնական Ֆոնսորսիմի մը հետ Ազատեկանի կարեւոր հանքին հետազօտութեան համար:

Էնի–ի հետ պայմանագիրը մեծ յաջողութիւն մըն է Պիժան Զանկանեհի համար, որ դէմ առ դէմ գտնուած էր սուր գնդիմութեան մը հետ: Կը պատկերացնէ թէ ինչպէս Պայ – Պէքի ըմբռնումը պէտք է յառաջանար: Իտալացի ճարտարապետներուն «հակակշռի» դեր մը տալով հանքին աղբիւրին մեկնելով, Էնի համաձայնագիրը իրաւունք մը կու տայ օտարներուն հսկելու արտադրութեան վրայ: Նաեւ, կապ մը կը հաստատէ վարձատրութեան եւ արդիւնքի միջեւ: Զուգադիպութիւն չէ, եթէ պահպանողական Այաթոլահ Ահմէտ Ժանաթի Ցուլիս 1–ի թուականը ընտրած էր, այնինքն Էնի–ի հետ համաձայնագրին յաջորդ օրը, յայտարարելու համար որ ծանօթ էր անուններուն. «անոնց, որոնք քարիւղային կայսրութեան ծոցը, միլիոններ եւ միլիոններ կը թալանեն եւ կը պետեղեն արտասահմանի իրենց դրամատան հաշիւներուն»:

Թ. Ա. Թ.

ԹԻ 17 ԹԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԱՐԱԳՈՑԸ ԿԸ ՊԱՏՌԻ

– Ջանի որ այսպիսի կասկածանքներու տեղի կու տայ կոր իմ գործունէութիւնս, – յայտարարեց Զօհրապ, – ես կը հրաժարիմ ու ա՛լ չեմ խառնուիր այս գործերուն:

– Երբեք չենք կրնար ընդունիլ քու հրաժարականդ, – ըսաւ Ներսէս Օհանեան, – դուն պիտի մնաս հոս ու մեզի նոր աշխատիս, եթէ քաչուիս՝ այն ատեն ինքզինքդ դատապարտած կ'ըլլաս:

– Բայց չեմ կրնար հանդուրժել, որ դեսպանատուներու մօտ իմ կատարած դիմումներս այսպէս խծբծանքներու տեղի տան:

– Ատոր ալ ճար մը կրնանք խորհիլ:

– Ինչպէ՞ս...

–Ամէն եառքը փոխանակ առանձին երթալու դեսպանատուն միչտ մեր ընկերներէն մէկը միւսին կ'ընկերանայ...

– Ինչո՞ւ չէ... ես անպատճառ առանձին գործելու փափաք չունիմ:

– Մանաւանդ, որ եթէ երկու հոգի ըլլաք՝ պատասխանատուութենէ բոլորովին զերծ կը մնաս...

– Անշուշտ...

– Եւ զուր տեղը քննադատութիւններու չես ենթարկուիր:

– Շատ ճիշդ է:

– Դուք ի՞նչ կ'ուսէք այս կարգադրութեան, – հարցուց Օհանեան՝ միւս ժողովականներուն դառնալով:

– Այդպէս չատ լաւ կ'ըլլայ, –ըսին մէկ քանիներ:

Ու այս կերպով վերջացաւ խնդիրը:

Արդարեւ այդ օրէն սկսեալ Զօհրապ միչտ ընկերակիցով մը կ'այցելէր դեսպանատունները, երբ հարկ ըլլար որեւէ խնդրի առթիւ բանակցութիւն կատարել:

Իսկ գալով Պետրոս Հալաճեանի քնակարանին մէջ տեղի ունեցած գիշերային հաւաքումին՝ անիկա որեւէ արդիւնք չէր ունեցած:

Եւ սակայն իթթիհատականները կը չարունակէին մուխին մէջ գործել:

ԳԼՈՒԽ ԺԲ.
ՆՈՒՐԻ ՕՍՄԱՆԻԷԻ ՓԼԻՊԸ

Ցունիսի տաք ու հեղձուցիչ իրիկուն մըն էր: Պաշտօնատուները կը սկսէին պարպուիլ, ու ամէն ոք կը փութար դէպի թռամվայներ, կայարանը կամ կառքերուն՝ իր բնակարանը երթալու համար:

Թուրք պաշտօնեաները զուարթ տրամադրութեան ներքեւ էին, որովհետեւ հետեւեալ օր Ուրբաթ էր եւ ամբողջ օր մը անձնդիւր պիտի հանդիսէին իրենց բնակարաններուն մէջ՝ ուտելով, խմելով եւ ծխելով. Թողո՛ւնք ուրիչ հեշտութիւններն ալ:

Եւ սակայն եթէ պաշտօնէութեան մեծամասնութիւնը կը փութար ժամ առաջ երթալ իր տունը, կար նաեւ փոքրամասնութիւն մը, որ տարբեր մտահոգութեամբ մը տոգորուած կը թուէր: Այդ փոքրամասնութիւնը տենդայոյզ քայլերով կը դիմէր դէպի Նուրի Օսմանիէի կողմը, ուր կը գտնուէր իթթիհատական կեդրոնատեղին:

Ժամը 5–ին միջոցները Պալը Ալիի Սէտարէթի դրան կողմը եկաւ կեցաւ բայ կառք մը, եւ քիչ յետոյ տեսնուեցաւ գիրուկ, յաղթանդամ, թաւ սեւ պեխերով մարդ մը, որ հռնկէ դուրս կ'ելլէր եւ դէպի կառքը կու գար, իր քովէն կը քալէր իրմէ քիչ մը նուազ գէր եւ քիչ մը աւելի վայելչակազմ մէկը:

Այս երկու անձերը երբ կառքին մօտեցան՝ պահ մը կանգ առին:

– Ուրեմն, Պէարի՛, չե՞ս ուզեր միասին գալ, – հարցուց թաւ սեւ պեխերով անձը իր ընկերոջ:

– Ո՛չ, պէ՛յ, չատ կարեւոր գործեր ունիմ, – պատասխանեց միւսը:

– Բայց այս իրիկուան մեր գումարումն ալ չատ կարեւոր է:

– Եթէ անպատճառ պէտք ունենաք ինծի, կրնաք անմիջապէս թէլէֆօն ընել... երկու ձեռքս կրակին ալ ըլլան նէ՝ կը ձլեմ, կուգամ:

– Աղէկ, ուրեմն երթաս բարով:

(Շար. 47)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԼԻՈՆ

Մարդարեան Փափազեան Ամէնօրեայ վարժարանի խնամակալութիւնը չնորհակալութեամբ առացած է հետեւեալ նուէրները դպրոցի բարգաւաճման համար. – Վարսենիկ Զէֆիեանի *թաղման առթիւ՝ Զէքեան ընտանիք* 10·000 *Ֆր.*:

Տիկին Գեղանոյշ Գայթանճեան 200 *Ֆրանք Հայկազեան Մխոբեայ դպրոցին*:

Սարգիս Խմիրզիեանի *թաղման առթիւ*, (*Փարիզէն*) *Տէր եւ Տիկին Խաչիկեան* 2500 *Ֆր.*:

Էլիզ Տօրումեանի *թաղման առթիւ՝ Տիկին Ռոզ Տօրումեանի հին ընկերուհիները* 2000 *Ֆր.*, *ԻՄՄԱՖ–ի բժիշկները* 400 *Ֆրանք*:

Էլիզ Տօրումեանի *մահուան առթիւ՝ Եկեղեցւոյ.* – *Տօրումեան ընտանիք* 1500 *Ֆրանք*, *Տէր եւ Տիկին Արարատ Մելոռեան* 600 *Ֆր.*, *Պր. Ռոպէն Բաժ* 500 *Ֆրանք*, *Տիկին Արփինէ Սերոբեան* 300 *Ֆրանք*:

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին *Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալօրէա կը դասաւանդուին.* – *Հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք*:

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30-*էն վերջ՝* 01 – 45 – 79 – 78 – 97 *թիւին*:

— ● —

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(ԼԻՈՆ)

Վարժարանիս 2001 – 2002 *տարեշրջանի վերամուտի Թուականն է Յորեքշաբթի Սեպտեմբեր* 19, *առաւօտեան ժամը* 9–*ին*:

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Յորեքշաբթի, առաւօտեան ժամը 9–*էն* 12 *եւ կէսօրէ վերջ* 14–*էն* 16:

Աշակերտները կրնան օգտուիլ Յորեքշաբթի կէսօրուան ճաշէն:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝

04 . 78 - 60 . 47 - 18

թիւին:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— ● —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux

Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53

50ème Anniversaire du Pèlerinage à SAINT-GREGOIRE de TALLARD

ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Sous l'égide de
l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France
et avec le concours de
l'Association Cultuelle des Arméniens de GAP et des Hautes Alpes

Dimanche 9 septembre

à 10h30 — La Sainte Messe sera célébrée par

Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens de Rhône-Alpes

l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens du Sud de la France

Avec la participation de la Chorale
SAHAK - MESROP
sous la direction de
Khatchig YILMAZIAN

à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre
Renseignements & Réservations :
— **Cathédrale Arménienne de Marseille, tél. : 04 91 77 84 70**
— **Association Cultuelle des Arméniens de GAP, tél.: 04 92 51 71 80 / 04 92 51 00 87**

—— Participation aux frais ——
Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

CHENE

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

10e **Grande Braderie de Noël**

Շաբաթ, Կիրակի, Դեկտեմբեր 1 *եւ* 2

ՀԷՆ ՓՐԱՆՍԱ

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre SPITAK
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

Programme : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F

Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE

organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

***

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section d'Asnières
Au profit de la Colonie de Bellefontaine
Réservez votre soirée

du Samedi 20 octobre
GALA ARTISTIQUE ARMENIEN

avec l'**Ensemble folklorique arménien**
N A V A S A R T
Danseurs, musiciens,
chanteurs traditionnels
au Grand Théâtre d'Asnières

***

La Section «TER-DAVTIAN» de Chaville de la Croix Bleue des Arméniens de France
organise

le Samedi 27 octobre
UNE SOIREE DANSANTE

A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise

le SAMEDI 20 OCTOBRE
une SOIREE DANSANTE

à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre «Gaïdzag's»**

«ՅԱՌԱՋ»Ի ԸՆԹԱՑԻԿ ԱԳՈՒՐԱ ՍԱԿԱԳԻՆԸ

Մահազդ	800	(956,80)
Հոգեհանգիստ	700	(837,20)
Շնորհակալիք	700	(837,20)
Հարսնիք–Նշանուխ	700	(837,20)
Ծնունդ	700	(837,20)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% *Թ.Վ.Ա.* (*տե՛ս. փակագծի մէջ ընդհ. գումարը*):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, մինչեւ Մէկ Քառորդ Սիւնակ (25 *տող*) *մահազդներու պարագային եւ* 1/8–*րդ* (12–13 *տող*) *մնացեալին*:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել Թերթին Վարչութեան:

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 Ֆր.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 Ֆր.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 Ֆր.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 Ֆր.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ 75 Ֆր.

եւ

«ՅԱՌԱՋ - 50»
(Ծաղկախաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 120 Ֆր.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի:

Թղթատարի ծախք՝ 30 *Ֆր.*, *հատոր գլուխ*:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՑԵ՝ 83, Rue d'Hauteville, 75010 Paris

Հեռ. 01 47 70 86 60 — Fax 01 48 00 06 70

E-Mail : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆ

Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.

Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամէնօրեայ սահմամբ) 1.500 Ֆ. (Շաբաթաթերթի սահմամբ) — Հատը : 6,00 Ֆ.

C.C.P. Paris 15069-82 E

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 29
MERCREDI
29 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS

TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70

E-MAIL : jharatch@aol.com

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20.239

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

77e ANNEE — N° 20.239

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ԵՐԵՒԱՆԻ ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՔԻՆ ՀԱՐՑԸ

Հարաւտանի Ռուսաստանին ունեցած ունի քան 100 միլիոն տոլարի պարտքը, յանձնարէն, լրջութեամբ կը զբաղեցնի քաղաքական դասը: Նախագահ Ռ. Քոչարեան Օգոստոս 23–ին Երեւանի ուսանողական Ա. Դրիւքովը ընդունելէ ետք, յայտնի ասուլիսի մը ատեայայտուած է իրենց տեսակցութեան, անոր ընթացքին չօշափուած նիւթին եւ պարտքին խնդրին մասին: Ան ըսած է թէ հիմ չունին այն լուրերը որոնց համաձայն նախագահ Քոչարեան Երեւան պաշտօնական առաջին այցը որ նախատեսուած է Սեպտեմբերին, կրնայ յետաձգուիլ խնդրոյ առարկայ պարտքին պատճառով: Ռ. Քոչարեան աւելցուցած է թէ այդ խնդիրը կարդադրութեան ընթացքին մէջ է, Ռուսաստանի պարտքին փոխարէն առաջարկած ըլլալով տեխնիկանշորհրդային հետագայ հայ-ռուսական կարեւոր ձեռնարկութիւններու վաճառքը ռուսական ընկերութիւններու: Ռուսական հետաքրքրութիւնը յատկապէս կը կեդրոնանայ Քաղարանի պղինձի ու մոլիպտէնի հանքերուն նման ռազմավարական ձեռնարկութիւններու վրայ: Հայաստանի կառավարութիւնը այս կարգադրութեան մէջ կը նախատեսէ ռուսական գործի չրջանակներուն Հայաստանի մէջ ներդրումներ ընելու հաւանականութիւնը ու հայկական ապրանքներու մուտքը ռուսական շուկաներ: Այսուհանդերձ, ընդհանուր համաձայնութիւն չէր վարելեր պարտքը երկրին կարեւորագոյն ձեռնարկութիւններով փակելու լուծումը եւ Երեւանի մէջ ընդդիմադրողներ կը պնդեն որ պարտի ու պահանջի անհատաստար կչիռ մէն է ներկայացուածը, ի վնաս Հայաստանի:

Թուրք մամուլը եւս անդրադարձած էր հարցին, տալով այն մեկնաբանութիւնը թէ Հայաստան ռազմական իր ձեռնարկութիւնները Ռուսաստանի փոխանցելով, այդ մարդին մէջ կ'ենթարկուի Մոսկուայի արամադրութեան, ինչ որ մտահոգութեան որդ պատճառ է Ադրբեջանի ու Թուրքիոյ համար:

*
**

Հ. ԱԼԻԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՐԱՍՏ ԸԼԼԱԼ ԿԸ ՀՐԱՀԱՆԳԷ

Ադրբեջանի նախագահը Օգոստոս 25–ին երեսասարդ սպաներու չրջանաւարտութեան հանդէսին ընթացքին խօսք առնելով պահանջած է որ անոնք պատրաստ ըլլան Հայաստանի հետ պատերազմին, ետ առնելու համար Ղարաբաղը: «Ադրբեջանի բանակը պէտք է գիտնայ որ հոգին ամբողջականութիւնը հարկ է վերահաստատել բոլոր միջոցներով, ինչ որ իր պարտականութիւնն է: Ամէն պահու պէտք է յիշէք թէ առոր պատրաստ պէտք է ըլլանուք» ըսած է ան:

Հետաքրքրական է նշել թէ Հ. Ալիեւի վերոնշեալ ելոյթը կը զուգադիպի Թուրքիոյ ապայակոյտի նախագահին Բաքու կատարած օրակարգութեան այցին, 2003–ին նախագահութեան Գ. չրջանի մը քննարկումներ կայանալու որոշումէն հազիւ չաբաթ մը եառ:

Բաքուի մէջ Թուրքիոյ ապայակոյտի նախագահին հետ ունեցած հանդիպումէն ետք, Ադրբեջանի Պաշտպանութեան նախարարն ալ խօսած է պատերազմի վրայ, ըսելով որ Հայաստանի ու Ղարաբաղի մէջ զէնքի մեծ կուտակում կայ: Եւ Հակամարտութեան անլոյծ վիճակը լարումը աւելցնող ապրակներ են որոնք ռազմական գործողութիւններու վերսկսելու վտանգ կը ներկայացնեն:

*
**

ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՈՒՐԻԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ

Պաշտպանութեան նախարար Ս. Սարգսեան Սուրիա այցին ընթացքին, Օգոստոս 27–ին, սուրիացի իր պաշտօնակիցին հետ միասին Մ. Տլատի հետ զինուորական գործակցութեան համաձայնագիրը մը ստորագրած է: Ընդունելով Լիբանանի Պաշտպանութեան նախարար Խ. Հրաուիի հրաւէրը, Ս. Սարգսեան յայտնած է թէ անցած է Լիբանան ուր հանդիպումներ ծրագրուած էին բանակի հրամանատարին, նախագահին, վարչապետին, Մարտիրոսեանի նախագահին, Արամ Ա. կաթողիկոսին, կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիներու առաջնորդներուն հետ:

«ԵՐՄԻՆՓՐԷՍ»

(Օգոստոս 27 / 28)

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Բ. ԽԱՂԵՐԸ ԱԻԱՐՏԱԾ

Օգոստոս 26–ի երեկոյեան Երեւանի մարզահամերգային համալիրին մեծ սրահին մէջ սարքուած հանդիսութեամբ մը փակուած եղ Համահայկական Բ. խաղերը: Ներկայ եղած են հազարաւոր հանդիսականներ: Փակման պաշտօնական մասին մէջ ներկաներուն խօսք ուղղած է նախագահ Ռ. Քոչարեան, ըսելով որ մեծապէս հաճելի ու հետաքրքրական եղած է խաղերու ընթացքը եւ թէ Հայաստանի ու Սփիւռքի քանի մը հազար մարզիկներուն համախմբումը վերածուած մարզական գեղեցիկ տօնի մը: Ան չնորհակալութիւն յայտնած է մասնակցութեան հրաւէրին ընդառաջող բոլոր երիտասարդներուն եւ կազմակերպութիւններուն, խաղերու կազմակերպիչներուն:

Երեկոյթին պաշտօնական մասէն ետք երգի ու պարի խրախճանքին մասնակցած են ծանօթ երգիչներ, պարողներ, ապա խաղերու ջահը մարելէ ետք տեղի ունեցած է հրաւառութիւն:

*
**

ՄԵԹՐՈՑԻ ԱՐԿԱԾ

Օգոստոս 26–ին Երեւանի մեթրոյին «Զօրավար Անդրանիկ» – «Հանրապետութեան հրապարակ» կայարաններուն միջեւ փապուղիին մէջ պատահած արկածին զոհ գարձած է 57 տարեկան մեքենավար Վիգէն Սիմոնեանը: Կը հաղորդուի որ պատահարը մեքենավարին կողմէ մեթրոյին առնչուած հրահանգներու անտեսումին հետեւանք է:

*
**

ԾԱՆՐԱԲԱՐՁ ԳԱՌՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԵՒ ԱՐԻՆ ՅԱԿՈԲԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՀՈՑԵԱՆ

Աստրխոյ Գլակէնֆուրթ քաղաքին մէջ տեղի ունեցած պատանիներու աշխարհի առաջնութեան 165 քիլոկրամով ախոյեան հռչակուած է Գառնիկ Աբրահամեան (45 քիլոկրամ): Նոյն դասակարգէն Ա. Դլըմոյեան գրաւած է 6–րդ տեղը: Իսկ Արէն Ճակոբեան (85 քիլոկրամէն վեր) երկամարտի 305 քիլոկրամ արդիւնքով իր դասակարգին ախոյեան հռչակուած է: Վահագնորդի Արման Աթոյեան (69 քիլոկրամ) եւ Արկադի Պօղոսեան (77 քիլոկրամ) նոյն (265 քիլոկրամ) արդիւնքով գրաւած են Բ. եւ Գ. տեղերը:

Այսպիսով Հայաստանի 9 պատանիները չհած են 3 մետալ, որմնցմէ երկուքը ոսկի:

*
**

Ա. ՀԱՃԻԲԵԿՈՎ ՆՇԱՆԱԲՈՒԹԵԱՆ ԱՀՈՑԵԱՆ

Մոսկուաբնակ հայ նշանառու Արաեմ Հաճիբեկով Ռուսաստանի կազմէն մասնակցելով Միւնիխ տեղի ունեցած աշխարհի բաժակի մրցաշարքին, առաջին տեղը գրաւած է: Նոյն մարզաճեմին մէջ Ուկրանիայէն Արթիւր Ասլազեան Գ. հանդիսացած է:

*
**

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

(ՕԳՈՍՏՈՍ 24)

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼ

Գիւմրի – Փարիզ	11 – 5

ՎՈԼԷՅՊՈԼ այրերու մրցաշարք

Փարիզ – Վայք	3 – 0

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՄՆ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ մխանական նոր նախաձեռնութեամբ մը պիտի չանան որ Միջին Եւրոպայի երկիրները փոխանակ Եւրոպական արտադրութեան ռազմական օդանաւերու, ամերիկեան Էֆ – 16–եր գնեն: Նկատի առնուած գլխաւոր երկիրներն են Լեհաստանը, Աւստրիան եւ Հունգարիան:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ապահովեց պատնէշի կարեւոր դիրքավար մը Օգոստոս 27–ին, կատարելագործուած եւ ճըշդրիտ հրթիռներու միջոցաւ, արձակուած՝ Ապու Ալի Մուսթաֆայի զրահեռակին պատուհանին: Մուսթաֆա պետն էր Պաղեստինի Ազատագրութեան ժողովրդական Ճակատին, մկկը Արաֆաթի ՊԱԿ–ի երեք բաղկացուցիչներէն: Միջազգային հաւաքականութիւնը դատապարտած է Իսրայէլի այս արարքը, բայց, Շարոն կ'արդարացնէ, ամբաստանելով Մուսթաֆան որպէս դրդիչը 3 – 7 ոճրափորձերու, թակարդ կատքերով: Պաղեստինցիք երեք օրուան սուգ յայտարարած են եւ վճռած են վրէժ լուծել: Ամէն պարագայի մէջ, կը թուի որ Իսրայէլ որոշած է բնաջնջել, եթէ ոչ չանցաւորները, գոնէ պատասխանատուները:

ՖՐԱՆՍԱՑԻ ԴԵՍՊԱՆՆԵՐՈՒ լիներորդ համագումարին խօսք առնելով, Նախագահ Շիրաք կրկին անդրադարձաւ եւրոպական Սահմանադրութեան մը, որու ջատագովն է եւ կը յուսայ որ գոյութիւն ունենայ 2004–ին, ամրապնդելու համար եւրոպական ինքնութեան զգացումը:

ԱՆՏՐԻ ՄԱԶՄԱՆԵԱՆ ցաւալի թիւրիմացութեան մը զոհ գացած է, Օգոստոս 27–ի իրիկունը, երբ դրացիները կարծելով որ դողեր են, կրակ բացած են եւ Անտրէ Մազմանեան տեղն ու տեղը մեռած է: Ամէն ինչ սկսած է, երբ 60–ամեայ դրա-

(Շար.ը Դ. էջ)

ԱՄՆ ԲԱՔՈՒԻ ԿՈՂՔԻՆ ԹԵՀՐԱՆԻ ԴԷՄ

Օգոստոս 27–ին, Մխայել – Նահանդները տեղեկացուցած են թէ Ադրբեջանի կողքին են, այս վերջնոյն ունեցած սահմանային հարցին մէջ Թեհրանի հետ Կասպից ծովու կապակցութեամբ: Կը հաղեն սակայն որ չօշափելի օժանդակութիւն չեն բերեր:

Եւրոպական հարցերու Արտաքին նախարարին կցորդը՝ Էլիզապէթ Ձոնս հաստատած է Բաքու կատարած իր երկօրեայ այցելութեան ընթացքին այս զօրակցութիւնը: Հանդիպումի ունեցած է Ալիեւի հետ, ապա մամուլի ասուլիսի մը ընթացքին, յայտնած է թէ այդ հանդիպման ԱՄՆ–ու մտահոգութիւնը արտայայտած էր պարսկական գործողութիւններու առթիւ Կասպից ծովու մէջ: Բայց, ինչ կը վերաբերի ամերիկեան զօրակցութեան բնոյթին, ճշդած է որ ան մխայն քաղաքական է:

Ամերիկեան բազմաթիւ քարիւղային ընկերութիւններ միլիառաւոր տոլարներու ներդրում կատարած են Ադրբեջան, կասպից ծովու քարիւղի եւ կապի չահագործման համար եւ Ուաչինկթըն չուզեր որ չրջանը անկայուն դառնայ:

Իրան եւ Ադրբեջան երկար տարիներ տարակարծիք են կասպից ծովու բաժանման չուրջ եւ տագնապը սուր բնոյթ առաւ Յուլիսին, երբ պարսկական ծովային ուժը եւ մղեց բրիտանական հետազօտական երկու նաւեր (Պրիթիչ Փեթրոլիում), որոնք Ադրբեջանի հաչւոյն կը գործէին, կասպից ծովու խնդրոյ առարկայ չրջանին մէջ:

ԱՄՆ-ՈՒ ՇԵՇՏՈՒԱԾ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԱՄՆ–ու ղեկավարութիւնը նոր նչանակումներ կ'ընէ Ղարաբաղի հարցին կարգաւորման առընչուած պաշտօնատարներու դասին մէջ. Մինսկի խումբին համանախագահ նոր նախագահը այսուհետեւ կը կոչուի Ռուսուլֆ Բերինա որ կը յաջորդէ Գ. Գաւանոյի: Ան Մոլտովայի մէջ ԱՄՆ–ու դեսպան եղած է: Մասնագէտ է Ռուսաստանի, Արեւելեան Եւրոպայի ու ՕԹԱՆ–ի հարցերու: Արդէն կովկասեան այցերու ձեռնարկած է ԱՄՆ–ու Արտաքին գործերու նախարարի օգնական Էլիզապէթ Ձոնս որ նոյնպէս կը զբաղի Ղարաբաղի հարցին զարգացումներով: Ան Օգոստոս 26–ին Բաքուի մէջ հանդիպում ունեցած է նախագահ Հ. Ալիեւի հետ որ իրեն ըսած է թէ կ'ընդունէին միայն այնպիսի լուծում որ կ'ապահովէ Ադրբեջանի տարածքային ամբողջականութիւնը: Յաջորդ օրը Ձոնս անցած է Վրաստան, իսկ Օգոստոս 28–ին կը սպասուէր որ ժամանէ Երեւան:

ԱՄՆ–ու նախագահը ամերիկեան խառն սպայակոյտին պետ նչանակած է զօրավար Ռ. Մայերսը որ քանածանօթ մէկն է Ղարաբաղեան հարցին, այցելած Երեւան ու Բաքու: Քաղաքական դէտեր այս փոփոխութիւններուն մէջ կը նկատեն կովկասեան չրջանին աւելի մեծ ուշադրութիւն դարձնելու տրամադրութիւն մը, Ուաչինկթընի կողմէ:

ԻՆՉԵ՛Ր ՉԵՆՔ ԸՆԵՐ 1700-ԱՄԵԱԿԻՆ ՍԻՐՈՅՆ...

Ոչ ոք կրնայ տարակոյս ունենալ թէ ընդունուած թուականով՝ 301-ին, Հայաստանի քրիստոնէացումը կարեւորագոյն հանդրուաններէն է մեր պատմութեան: Այս նշումին մէջ իրենց յարգարժան տեղը ունենալով հանդերձ բան չենք կրնար փոխել այն վէճերը թէ այդ քրիստոնէացումը պէտք է տեղմանել որպէս դա՞րձ, թէ պարտադրուած արարք· կամ՝ թէ իսկապէ՞ս 301-ն էր թուականը, թէ ոչ: Նման կէտերու մէջ տարակարծութիւնները եղած են ու շատ հաւանաբար տակէ ետք ալ պիտի ըլլան, մինչ քանի մը ամիսէն Հայաստան պիտի թեւակոխէ աշխարհի առաջին քրիստոնեայ պետութեան 18-րդ դարը:

1700-ամեակի մը նշումը, փափաքելի էր որ առաւելաբար առիթ ըլլար քիչ – շատ լուրջ միջուկով նախաձեռնութիւններու, իսկապէս պիտական մտահոգութեամբ պատրաստուած հանդիպումներու, հրատարակութիւններու եւ մանաւանդ անաստուածութեան եօթը տասնամեակէն անցած ժողովուրդը իր կրօնքին վերադարձնելու դժուար, այլ՝ անհրաժեշտ գործին: Այս վերջին պարագան 1700-ամեայ այս անցեալին անկեղծ տիրութեան ամէնէն լուրջ փաստը կ'ըլլար· չատ ալ տեղ չէր ձգեր աղմուկ – աղաղակի եւ փողոցի թափառիկ քանի մը մանուկի մկրտութեամբ քրիստոնէավայել բարեհնչիւն ճգտող ցուցադրականութեան: Ոչ ալ անչուշտ, կաթողիկոս ու նախագահ կը միացնէր ճաշակով, ոգիով ու անհրաժեշտութեամբ չատ թէական տարի մը սիրոյն Անիի նման ոստանի մը նոր վէրքեր արդիլելու անզօրութեան մէջ...:

Սակայն, ի՞նչ կարելի է ընել երբ յանկարծ, 1700-ամեակէն ալ, անով խորհրդանշուած հաւատքէն ալ զօրաւոր ազդակներ կը վարեն մեր ներկան: Եւ անոնք ամէն օր, սա կամ նա ձեւով, աստիպարիզ կը կարդան լրջութեան ամէն ակընկալութեան: Հասած ենք հոն ուր ընթացիկ հրատարակութիւններ, կազմակերպուած համերգներ, նուագահանդէսներ, զանազան քնարքի ձեռնարկներ ու երեւակայելի, աներեւակայելի ամէն բան կը գեհեղուին 1700-ամեակի անհունօրէն լայն չրջածիրին մէջ: Զարմանալի պիտի չըլլայ միջոց մը եւս տեսնել թէ հայկական ինչոյգներու թեմադանները իսկ իրենց բաժակաճառերը, կենացնելու կը ձօնեն նոյն 1700-ամեակին: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ թէ 1500-ամեակին, 1600-ամեակին ալ նոյն մակարդա՞կը ունեցած էին նշումները:

Օրինակ, այդ հանդրուաններուն ալ եղա՞ծ էր հազարամեայ անցեալին սիրոյն ազգային «նամուս» պահպանելու նախանձախնդրութիւն մը, կամ ամէն գործունէութիւն անոր ձօնելու արշաւ մը: Նշուած նախաձեռնութեան արձագանգած էր «Հայկական Ժամանակ»ը (Օգոստոս 15), «Օրուայ սկանտալը» խորագրուած սիւնակի մը մէջ, «Նամուս եւ պատիւ» խորագրուած եւ Նայիրա Զօհրապեանի կողմէ ստորագրուած էջով: Նախարանի քանի մը տողերը կը յիշեցնեն խորհրդային տարիներու սովորութիւն մը· արուեստահմանեան պատուիրակութեան ամէն այցի հոդեբուժարաններու եւ թմրամոլներու յատուկ աւազանները գուցատախտակները կը փոխանակուէին «Հանդստեան տուն» արձանագրութեամբ: Այդ անդրադարձին պատճառ եղած է նախորդ շաբաթ Երեւանի խառը մը մարմնավաճառներուն կողմէ մարդու իրաւունքներու Սախարով հիմնարկին յղուած դիմում – նամակ մը· իրենց արհեստավարժի իրաւունքներուն պաշտպանութեան կանքով գրուած այդ նամակին մէջ կ'ըսուած է թէ ներքին գործերու պաշտօնեաները կ'ենթադրեն թէ իրենց արդելք կ'ըլլայ «Երեւանի փողոցներում հանդիստ իրենց մի կտոր հացը վաստակել»ու: Պատճառը այն է որ այդ պաշտօնեաները մարմնավաճառ կիները կը բռնեն, կը տանին ներքին գործերու բաժինը ու անոնց գլուխը կը խուզեն: Այդ արարքը կը հետեւի յատուկ տրամադրութեամբ մը, ինչպէս ըսած է Սախարովի հիմնարկին նախագահը· «Ներանց խուզել են, որպէսզի քրիստոնէութեան 1700-ամեակի տօնակատարութեան այս ամիսներին քիչ երեւան փողոցներում եւ ազդին խայտառակ չանեն»: Հաւաքականութեան մը ընկերային ու տնտեսական անկումին դինը անոր ամէնէն անպաշտպան դրուերուն վճարել տալու այս չա՛տ քրիստոնէավայել ու ազգասիրական արարքը ունի չարունակութիւն մըն ալ· նոյն պատասխանատուն կ'աւելցնէ· «Այդ կանայք արդէն եկել ու իրենց դիմումը եւ են վերցրել, որովհետեւ նրանց հասատատ վախեցրել են»:

Տողերու հեղինակ լրագրողուհին կ'ըսէ թէ Բագրամեան պողոտային վրայ գրուած է «նամուսով մի ոստիկանի հետ»: Ան չատ տեղին համարած է կատարուածը «այս օրերին, երբ ամէն տեսակի օտարազգի գալիս է Հայաստան»: Աղազակող չէ՞ նամուսութիւնը՝ հոդեբուժարաններու «Հանդստեան տուն» պիտակող մտայնութեան հետ:

Բարեբախտաբար, կայ անհեթեթութիւններու, կեղծաւորութեան, վատամոլութեան անդրադարձողներու զանգուած մը· ճիշդ է որ անոր խօսք չի տրուիր, կարծիք չի հարցուիր, այուհանդերձ, կա՛յ ան: Նոյնիսկ չորուած ափիթը կը ստեղծէ ճայնիկ մը լսելի ընելու համար: Այս խումբէն է, օրինակ՝ այն երիտասարդը որ Երեւանի թիւ 197 դպրոցի չրջանաւարտ Արշակ Սեմիրջեանն է: Ան պատանեկան չաբաթաթերթ «Կանչ»ի Օգոստոս 8-ի թիւին Ա. էջէն կը ճայնէ, նախ մատնանչում մը ընելու, ապա հարցում մը ուղղելու համար: Իրեն ալ ուշադրութենէն չէ վրիպած որ «Հիմա ում խելքին ինչ փչում է, նուիրում է քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակին»: Այդ կացութենէն թեթեւորուած վախով հարց կու տայ· «Թող կոպիտ չհնչէ, բայց ի՞նչպէս ձեզ կը զգաք, եթէ յանկարծ կառավարութիւնն ուրիշ բան չունենալով՝ պիւտճէի ճեղքուածքը նուիրի 1700-ամեակին»...:

Ինչպէս մեզ կը զգա՞նք· 1700-ամեակի պիւտճէի ճեղքուածքին օրհնեալ կարկատան փնտռելու ազգային պարտքը կրողի դերով որ ի զուր կը փնտռէ «Հանդստեան տուն» արձանագրութեամբ յուցատախտակ մը...:

ԱՐՓԻ ԹՈՒԹՈՑԵԱՆ

ՍՈՒՐԻԱՀԱՅ ՆԱՄԱԿԱՆԻ

ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ՔԱՇԽՈՒՄ՝ «ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ»Ի ԱՆԴՐԱՆԻԿ ԵՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐՈՒՆ

ՀԱԼԷՊ («Յառաջ»). –

Կրթական եւ մշակութային չրջանակներու, համայնքային ու թեմական պաշտօնական ներկայացուցիչներու, նաեւ ծնողներու եւ թարեկամներու հոծ բազմութեան մը ներկայութեան է որ Օգոստոս 4-ի երեկոյեան, Հալէպի Արամ Մանուկեան Ժողովրդական Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ բաչխուեցան վկայագիրները այն 13 չրջանաւարտներուն, որոնք աւարտեր էին Համազգայինի «Հայագիտական Դաստիարակութիւն»ի քառամեայ ընթացքը:

Պիտի յիշուի թերեւս, որ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ է որ 1996-ին կեանքի կոչուած էր դպրոցին համար այնքան անհրաժեշտ դարձած «Հայագիտական Դաստիարակութիւն»ի համապարփակ այս ծրագիրը, «նպատակ ունենալով վերապատրաստել մեր դպրոցներուն համար հայերէնասէր ուսուցիչներու որակեալ ջոկ մը, կամ առհասարակ փորձելով յարմար դեմին պատրաստել գրչի սպասարկուներու եւ մշակութային գնագաւառի գործօն տարրերու ճաշակին», ինչպէս կ'ըսուէր արդէն այս առթիւ ներկաներուն բաժնուած ծանուցագիր – թղթիկներուն մէջ:

Շուրջ տարի մը առաջ, հրապարակային հանդիսութեան մը ընթացքին, «Դաստիարակութիւն»ի անդրանիկ հունձքը կազմող 13 չրջանաւարտուհիները ներկայացուցած էին իրենց տարբնոյթ աւարտաճառերը եւ արժանացած՝ համապատասխան դնահատանքի: Հիմա ալ կը ստանային իրենց պաշտօնական վկայագիրները ու խանդավառութիւնը ակնյայտ էր բոլորին դէմքին վրայ:

Հանդէսին յայտարերը, զոր կը վարէր, չրջանաւարտուհիներէն Ֆլորենճա Գէորգեան, դեղարուեստական կարճ բաժնէ մը դուրս, դրեթէ ամբողջովին կը բաղկանար ողջոյնի ու դրուատանքի կարճաչունչ ելոյթներէ: Այսպէս, առաջինը խօսքն առնող եղաւ Օր. Ֆիմի Տէր – Յակոբեան, Ազգային Հայկազեան վարժարանի երկրամեայ վաստակաւոր տնօրէնուհին, որ ի զարմանս չատերու՝ մաս կը կազմէր չրջանաւարտներու այս անդրանիկ հունձքին, եւ որ արտայայտուեցաւ իր դասընկերուհիներուն անունով: Շեչտեց հայերէն լեզուին վերապահուած անփոխարինելի դերը՝ Սփիւռքի գոյապայքարին մէջ, վեր առաւ Համազգայինի մշակութանուէր առաքելութիւնը ու մաղթեց որ Հայագիտական Լսարանը կրթական նոր մշակներ հասցնող քուրայի մը վերածուի:

«Հայագիտական Դասընթացք»ներու աւագ ուսուցիչը՝ բանասէր եւ կրթական երախտաւորի դործիչ Յակոբ Զոլաքեան ունեցաւ չատ հետաքրքրական ու սրտբաց ելոյթ մը, մատնելով սփիւռքը կրծող բոլո՛ր այն երեւոյթներուն վրայ, որոնք անմիջականօրէն կը սպառնան մեր ինքնութեան ու տոհմիկ դիմագծութեան ակունքներուն: Զոլաքեան նախ յիչեցուց, որ մինչեւ 50-ական թուականներ սփիւռքի վարժարանները կանգուն պահուեցան վերապրող դաստիարակներու ճիգերով: (արմաչականները, Պոլսոյ Կեդրոնականն ու Պէրպէրեանէն չրջանաւարտներ, Վենետիկէն կամ Վիէննայէն վկայեալներ եւ այլն»: Անոնց յաջորդեց ուսուցիչներու որակեալ ա՛յլ սերունդ մը, որ այս անդամ կու գար Միջին – Արեւելքի մեր կրթական երբեմնի փայլուն օճախներէն՝ Կիպրոսի «Մելգոնեան»էն, Անթիլիասի ու Երուսաղէմի դպրոցներէն, Պէյրութի «Փալանճեան» ու Հալէպի «Քարէն Եփփէ» ճեմարաններէն: Յետոյ հասաւ երեւանէն վկայեալներու փաղանգը· ասոնք ոչ մայն բաւարարեցին տեղական պահանջները, այլեւ լայնօրէն օժանդակեցին սրբեմտեան սփիւռքի բազմադիմի կարիքներուն ալ: Այսօր սակայն, ընդգծեց Յ. Զոլաքեան, մարդոցմէ սուր տպնսպցցած է դարձեալ իր գլուխը ու սփիւռքեան մեր կառոյցները թողած՝ տխուր հեռանկարի մը առջեւ: Հայագիտական նիւթերու բնագաւառին մէջ նահանջը ակներեւ դարձած է մանաւանդ վերջին 10 տարիներուն, ու այսօր աւելի քան երբեք՝ ազդովին կը դնունինք մտահոգիչ դասիթափի մը վրայ...: Զոլաքեան նկատել տուաւ, թէ գաղութային մեր դպրոցները մեծաւ մասամբ կը տառապին որակեալ ուսուցիչներու պակասէն. նոյնն է պարագան հայատառ մամուլին, որ տարապայմանօրէն աղքատացած է այսօր ու օրէ օր կը կորսնցնէ նաեւ իր ընթերցողները: Համայնակուլ այս չարիքին դիմաց՝ «Հայագիտական Դասընթացք»ը դարման մը կրնայ ըլլալ ու վերածուիլ բարիքի աղբիւրի մը, եթէ դնունի նիւթական ու բարոյական հարկաւոր զօրակցութիւնը:

Այնուհետեւ, Յակոբ Զոլաքեան դիպուկ թելադրութիւններ ըրաւ չրջանաւարտներուն: Ընդգծեց, որ ամէն բանէ առաջ պէտք է ունենան «չատ քիչ բան գիտցած ըլլալու գիտակցութիւնը»: Ինքնազարգացումն ու հետեւողական պրպտումն է որ պիտի հասցնէ ցանկալի մակարդակի: Ապա նաեւ պէտք է ունենան գիտակցութիւնը՝ թէ որքան չատ աչխատանք կը սպասէ դիրենք: Եւ այդ աչխատանքը իրե՛նք է որ պէտք է ստեղծեն յաճախ, աճեցնելով իրենց մէջ հաւատքը՝ ազգաչէն բան մը կատարելու ճգտումին:

Խանդավառ ծափերու տարափի մը տակ է որ բեմ բարձրացաւ հանդէսին պատուոյ նախագահը՝ Լիպանի Գալուստ Կիւլպէնկեան Հասատատութեան հայկական բաժնի տնօրէն Զաւէն Եկաւեան: Պր. Եկաւեան, որ իր գլխաւորած հիմնարկին նիւթական լայն ու անսակարկ օժանդակութիւնը կը բերէ «Հայագիտական Դասընթացք»ին՝ անոր հիմնադրութեան օրերէն սկսեալ, չատագովեց հալէպահայ դաստիարակութեան տոհմիկ աւանդապահ դիմագիծը ու նկատել տուաւ որ Եւրոպայի, դրկ. Ամերիկաներու ու հեռաւոր այլ գոտիներու հայկական ամէնօրեայ թէ չաբաթօրեայ վարժարաններու հայերէնասէր ուսուցիչներուն չափազանց տարբերութիւն չկայ Հալէպէն: Ի մեծ ուրախութիւն ներկաներուն՝ ան յայտարարեց որ յատկացեալ ուսումնական տարեչրջանէն սկսեալ Գ. Կիւլպէնկեան Հասատատութիւնն ամէնամեայ մասնաւոր մրցանակ մըն ալ պիտի չնորհէ «Դասընթացք»ի աւարտական յաջողագոյն ուսանողին:

Սուրբհայր Օգնութեան Խաչի (Ս.Օ.Խ.) Շրջ. վարչութեան անունով ողջոյնի կարճ ուղերձ մը կարդաց Տիկին Արփինէ Սապունճեան: Ան Հ.Օ.Մ.ի Կեդր. Վարչութեան կողմէ լիազօրուած էր փոխանցելու իր դրուատիքը «Հայագիտական Դասընթացք»ի կազմակերպիչներուն, չէ՛նեւելով որ Հ.Օ.Մ.-ը, ինչպէս անցեալին, յատաջիկայիս եւս պիտի չարունակէր նիւթապէս սատար կանգնիլ այս ձեռնարկին:

Պր. Սատուր Պօղոսեան, որ ներկայիս կը վարէ Քուէյթի Ազգային Ճեմարանի տնօրէնի պաչտօնը, արտայայտուեցաւ յանուն Համազգային Կեդր. Վարչութեան: Թուուցիկ ակնարկ մը նետելով «Դասընթացք»ի հիմնադրութեան պրտզանքներուն վրայ, դիտել տուաւ որ Համազգայինը կանգ չառաւ ու չխարխափեցաւ երբեք նիւթական եւ այլ պատուարներու առջեւ ու գործը պահեց յաղողութեամբ: Արտայայտեց իր բաղձանքը՝ չրջանաւարտները տեսնելու մեր մշակութային չրջանակներու եւ կրթական հաստատութիւններու երդիքին տակ: Իր կարգին, Տիկին Հռիփ Կանանեան (առնիպետուհի Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան), չնորհաւորեց ուսուցչական կազմն ու չրջանաւարտները եւ ողջունելով Հայաստանի Հանրապետութեան Լուսաւորութեան երբեմնի նախարար Նիկոլ Աղբալեանը, յայտնեց թէ որոշած էին չրջանաւարտներու այս անդրանիկ հունձքը մկրտել «Աղբալեան» անունով: Յետոյ յայտարարեց, որ Մնացեալ – Նահանջներէն նախկին հալէպահայ մը՝ Զարեհ Մըսըրլեան (Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի 1955-ի չրջանաւարտներէն) հաստատած էր տարեկան կոկիկ գումարով մը (1500 տոլար) մշտապէս սատարել «Դասընթացք»ին:

Երեկոյթին «Հուսկ Բանք»ը արտասանեց Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Սուրէն Արք. Գաթաթրոյեան, որ իր կարգին չեշտ դրաւ Հալէպի իւրայատուկ յատկանիչներուն վրայ՝ որպէս մայր գաղութ նիչներուն վրայ՝ որպէս մայր գաղութ եւ ստնտու սփիւռքի մօտ ու հեռու միս գաղթօճախներուն: Սուրէն Արք., իրաւամբ, Հալէպը նմանցուց Աւետարանի «Պրոպատիկէի աւազան»ին, որուն չուրը միշտ առողջ ու կենարար կը մնայ հակառակ զգալի երաչտին ու հակառակ այն բոլոր անբաւարարութեանց, որոնց մասին խօսուեցաւ արդէն:

Աչնուհետեւ, 13 ընթացաւարտները՝ Մարիա Փանոսեան, Սիւզի Զապունեան, Աչտա Քէօչկէրեան, Անի Բրդոյեան, Լիա Թիմուրեան, Աշնիւ Սաճպանեան, Թամար Նազարեան, Մարալ Գարակէօզեան, Ֆիմի Տէր – Յակոբեան, Ֆլորենճա Գէորգեան, Թամար Սիմսարլեան, Յունէ Ղարիպեան եւ Մարիա Գաբրիէլեան կարգաւ ստացան իրենց վկայագրերը՝ ձեռամբ Առաջնորդ Սուրէն Արք.ի եւ Պր. Զաւէն Եկաւեանի:

Հանդէսը վերջ գտաւ հիւրասիրութեամբ, ջերմ մթնոլորտի մը մէջ:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՑԵԱՆ

ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒ «ՀԱՑՐ ՍԲՍ»Ն

Այս խորագիրը կը կրէ Լոնտոնի «Տէյլի Թելեկրաֆ»ի յօդուածը նուիրուած Թիւրքմենիստանի Նախագահ՝ Սապարմուրատ Նիազովի:

Ծանօթ է որ Ալֆրէտ Ժառի (1873 – 1907) իրպիս մկրտած էր իր ստեղծած տիպարը, որ ծաղրանկարն է քաղքենիական յիմարապատումին եւ մարդկային վայրագութեան: Ժառի հայրն է նաեւ փաթաֆիզիքի (երեւակայական լուծումներու գիտութիւն) եւ առաջին հիմնադիրներէն կը նկատուի գերիրապաշտութեան:

Տափաստաններու այս Իպիւն, ինքզինք մկրտած է Թիւրմէնպաշի, այսինքն՝ Թիւրքմէններու Հայրը: 21–րդ դարը հռչակած է կեդրոնական Ասիոյ իր արտասովոր երկրին «Ոսկեդարը», եւ ինչպէս միշտ, իր վախաքները օրէնքի ուժ ունին: Թանկագին ոսկին լայնօրէն կը գործածուի, օրինակ մեծ մարդուն պատկառելի արձանին վրայ մայրաքաղաքին գլխաւոր հրապարակը, կամ նախագահին գիրուկ ձեռքերուն վրայ կրած մատանիներուն: Բայց, ասիկա միայն մէկ երեսն է այն պաշտամունքին որ կատարայարուի իր «տիտանական իրագործումներուն» հանդէպ: Հանրային շէնքերուն վրայ տարածուած են Թիւրքմենպաշիի հսկայ նկարները, մինչ աւելի փոքրեր կը զարդարեն պանդոկներու եւ ռեսթորանները: Գալով նախարարներուն, իր նկարը կը կրեն իրենց բաճկոնին լամբակին վրայ: Հուսկ, Աշխապատ, գաւառական մայրաքաղաքը, Քիչի (զանգուածներուն սահմանուած անձնակութեան յարդարանք) տաճարի վերածուած է, պալատով, գմբէթով եւ հսկայական աղբիւրներով: Անշէ նման պաշտամունք մը կարելի է գտնել միայն Հիւսիսային Գորէա կամ Իրաք:

Այն ամէն ինչին, որ կարելի էր տալ նախագահին անունը, ներառեալ տեղական վոտկա, վերամկրտուած է տարինէրչ ի վեր: Իր հպատակները չատոնց վարժուած են իր անկապ մենախօսութիւններուն, զրկա հեռատեսիլը կը սիրէ:

Ամէնէն առաջ, տեղւոյն Համայնավար կուսակցութեան պատասխանատու, ապա երկրին առաջին պետական ղեկավարը Սորվրդային Միութեան քայքայումէն ետք, Նիազով Թիւրքմէնիստանի վրայ կ'իշխէ 15 տարիէ ի վեր:

Մեռաքսի հին ճամբու հանդրուան, Իրանի եւ Աֆղանիստանի հիւսիսը, Թիւրքմէնիստան նաեւ կարեւոր գրաւուկ մը եղած է աղէեցութեան այն պայքարին մէջ, որ դէմ առ դէմ հանած էր Ռուսաստանը եւ Մեծն–Բրիտանիան, կեդրոնական Ասիոյ տիրապետութեան համար:

Նիազովի իշխանութեան ծարաւը տակաւութեան ոչ մէկ նշան ցոյց կու տայ: Յկեանս նախագահ, իւրացուցած է երկրին արտածումներուն կէսը, այսինքն չուրջ 10 միլիառ ֆրանք եւ դեռ աւելի մեծ երազներ կը սնուցանէ:

Բարձրաստիճան դիւանագէտի մը կարծիքով, այդ դիրքը, մեծզի այդ տենչանքները ջլախտային են եւ անորոշութեան մթնոլորտ մը ստեղծած են: Անկատած կացութիւնը երթալով աւելի խելագար դարձած է: Վարչակարգի սակաւաթիւ բանբերներու համաձայն, այդ խելագարութիւնը կը միտի զօրելու բնակչութիւնը,, որ այսօր 4,5 միլիոն է: Ժողովրդավարութիւնը վաղուան համար է, ըստ իրենց, եթէ նոյնիսկ ընդդիմադիրը անձնասպանութիւններ ձերբակալուած են, դատապարտուած աքսորի կամ լռութեան մատնուած:

Նիազովի վարուելակերպը օրէ օր կը նմանի արքայի մը վարուելակերպին եւ պաշտամունքի պահանջները երթալով աւելի ծիծաղելի կ'ըլլան:

Կարգ մը ղպրոցներու մէջ, աշակերտները պէտք է, մէկ առ մէկ ոտքի կենան իր նկարին առջեւ եւ իրենց սէրը արտայտեն «Թիւրքմէն ժողովուրդի փառաւոր պահին», «Հոյակապ քաղաքագէտին» հանդէպ: Նախատեսուած է 120 մեթր բարձրութեամբ արձան մը, նուիրուած անկախութեան և յաւելեալ աղբիւրներ մայրաքաղաքին մէջ, ուր ջուրով եւ էլեկտրականութեամբ պարենաւորումը ձրի է, բայց, քահաճ եւ ուր ջերմութիւնը կրնայ 40 աստիճանէն ալ վեր երթալ ամրան: Նախագահին վերջին արտառոցութիւնը կը վերաբերի արուեստական մեծ լիճի մը ծրագրին կարակումի անապատ: Մասնագէտները կը վախնան որ այս ծրագիրը վտանգէ շրջանի բնապահութիւնը:

Մեծամասնութենէն զատ, երկրին կազի անսահման պաշարները արդիւնաբերելու անկարողութեան օրէ օր մեծցող դառնութիւնը այդ հսկայական ծրագիրներուն մէկ այլ խթանիչ ուժն է: «Ճուսահատութիւնը իրեն հասած է, կ'ըսէ դիւանագէտ մը: Նիազով վարժ չէ դէմ առ դէմ գտնուելու իրականութեան հետ եւ չուզեր տեղի տալ»: Վերջին դէպքերը այն տպաւորութիւնը կը թողուն, որ դեռ առեն մը պիտի մերժէ իրականութիւնը տեսնել: Իր խեղկատակութիւնը թունաւորած է Վլադիմիր Պուտինի առաջին այցելութիւնը Աշխապատ: Վկայ մը կը պատմէ. Նիազով կը հրմշտկէր Պուտինը, դիւանագիտական մարմինը ապշած կը դիտէր այս հանդիպումը, որու ընթացքին Նիազով արհամարհանքով կը վարուէր իր հիւրին հետ, ծաղրելով անոր փորձառութեան չգոյութիւնը: Թիւրքմէնպաշին երկարաձգեց կոչունքը 42 բաժակաճառեր արտասանելով:

Թ. Ա. Թ.

ՏԱՔԻՆ ԴԻՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐ

Ամրան տաքը կ'անհանգստացնէ չատերը: Այսպէս, սրտի հարց ունեցողները դժուար կը տոկան անոր, նուազագոյն ճիգը կ'արագացնէ անոնց սրտի զարկերը: Նոյնպէս իոցելի են նորածիններ եւ տարեցները: Ամրան տաքը դիմագրաւելու եւ չանհանգստանալու համար եկէք ծանօթանանք հետեւեալ գործնական հնարներուն:

***

Ամրան յարմարագոյն ըմպելի հեղուկը ջուրն է: Թելադրելի է ջուր խմել ամբողջ օրուան ընթացքին ոսկի – ոսկի: Ամրան ելանակին թելադրելի է օրական մէկ ու կէս լիթր ջուր խմել:

***

Ալքոլը եւ քաֆէինը կը նպաստեն, որ մեր մարմնին ջուրը պակսի, որվհետեւ անոնք բնականէն աւելի կը քրտնեցնեն: Ամրան պէտք է սահմանափակել անոնց սպառումը, մանաւանդ՝ կէսօրուան չատ տաք ժամերուն: Օրական 1–2 բաժակ գինին եւ գաւաթ մը սուրճը բաւարար են:

***

Գլուխն ու ծոծրակն են, որոնք ամէնէն առաջ կ'ազդուին տաքէն եւ արեւէն: Այս երկուքին պարագային երակները չատ մակերեսային են՝ բաղդատած մարմնի այլ մասերուն: Հետեւաբար թելադրելի է լայնեզր գլխարկներ կամ հակառակ ուղղութեամբ դրուած fասfէքներ կրել՝ գլուխն ու ծոծրակը պաշտպանելու համար:

***

Բամպակեայ կամ բնական այլ թելերէ պատրաստուած հագուստեղէն հագուելը նախընտրելի է, քանի որ անոնք քրտինքը ծծելու առաւելութիւնը ունին:

Մասնագէտներու կարծիքով, լաւագոյն fոթոն – փոլիեսթըրիի խառնուրդով պատրաստուած հագուստներն են, որովհետեւ անոնք աւելի դով կը պահեն մարմինը:

***

Թելադրելի է բաց գոյնի հագուստներ հագուիլ, որովհետեւ բաց գոյնը լոյսը եւ, հետեւաբար, տաքը վանելու յատկութիւնը ունի, մինչդեռ մութ գոյնէն դիւրութեամբ կը թափանցէ տաքութիւնը: Հետեւաբար ամրան ելանակին թելադրելի է հրաժարիլ սեւ եւ բաղուարդ գոյներէն:

***

Օրուան տաք ժամերուն հետեւեցէք Սպանացիներու օրինակին եւ հովահարով մը յաճախակի հովուեցէք, ասիկա ձեզի որոշ զովութիւն եւ հանգստութիւն կը չնորհէ...

***

Օրուան չատ տաք ժամերուն ձեր դէմքը զովացուցէք ջուրով լեցուն սփրէյով մը:

***

Պատուղները ոչ միայն կենսանիւթով հարուստ ուտելիքներ են, այլեւ առատ ջուր կը պարունակեն: Օրինակ՝ ձմերուկ մը 95 առ հարիւր ջուր կը պարունակէ: Հետեւաբար պտուղները կ'օգնեն, որ մեր մարմինն ջուրը չպակսի եւ չանհանգստանանք:

***

Ամէն անգամ որ քրտնիք, փոխուեցէք, քանի որ քրտինքին աղը կը տեղատորուի հագուստին կտորին վրայ եւ կ'արգիլէ, որ օդ բանի մէջէն: Գիտենք նաեւ, որ քրտինքը կը նստի եւ բնականաբար յաճախ փոխուելով կը խուսափինք անկէ:

***

Շատ բաց հագուստներ հագուիլը չի զովացներ, ընդհակառակն՝ որքան մեր մարմինը արեւուն պարզուի, այնքան կը տաքնայ ու կ'ազդուի:

Թելադրելի է կրել լայն, կէս թեւ շապիկներ, որպէսզի թէ՛ արեւէն պաշտպանուիք եւ թէ օդը ազատօրէն շրջի անոր մէջէն:

***

Լոգանքը զովութիւն, մաքրութիւն եւ հանգստութիւն կը ցնորհէ: Օրուան ընթացքին գաղջ ջուրով լողցէք եւ տեսէք, թէ դուք ձեզ որքան թեթեւցած պիտի զգաք:

ԳԱՂՈՒԹՔ ԳԱՂՈՒԹ

ՊԻՑՐՈՒԹի Հայկազեան համալսարանին մէջ, Օգոստոս 2–ին, վերոփ. Ռեմոն Գէորգեան դասախօսութիւն մը տուած է նիւթ ունենալով. – «Հայկական ցեղասպանութեան 2–րդ հանդրուանը (1915 – 1916)»: Բացումը կատարած է Հայկազեան համալսարանի հայագիտական ամպիոնի վարիչ՝ տոքթոր Արա Սանճեան, որ նշած է թէ տոքթոր Գէորգեանի դասախօսութիւնը վերջինն է համալսարանին հայագիտական ամպիոնին կազմակերպած դասախօսութիւններուն եւ բեմ հրաւիրած է դասախօսը: Ան անդրադարձած է հայկական ցեղասպանութեան Բ. հանդրուանին ուսումնասիրութեան ընթացքին իր օգտագործած աղբիւրներուն, որոնց կարգին նշած վերապրողներու յուշերը՝ Հալէպէն, Մուսուլէն, Դամասկոսէն եւ Երուսաղէմէն, գերմանական, աւստրիական եւ ամերիկեան հիւպատոսական տեղեկագրերը, ինչպէս նաեւ օսմանեան վարչապետութեան հրատարակած կարգ մը փաստաթուղթերը: Դասախօսութեան աւարտին Ռ. Գէորգեան պատասխանած է ներկաներուն հարցումներուն:

ԹՒ 17 ԹԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՆՈՒՐԻ ՕՍՄԱՆԻԷԻ ՔԼԻՒՊԸ

Եւ գէր մարդը բազմեցաւ կառքին մէջ ու սիկառէթ մը հանելով վառեց, մինչ կառքը վայրկեան մը եառը կանգ կ'առնէր Իթթիհատի կեդրոնատեղիին դրան առջեւ:

Բակը գտնուողները տեսնելով նորեկը, ոմն կառքէն վար կ'իջնար, յարգալից բանի կեցան:

Բայց ինք մտերմական ձեւով մը բարեւեց ամէնքը, նոյնիսկ պահ մը կանգ առաւ եւ մէկմէկ խօսք ուղղեց ամէնուն.

– Շէրի՛ֆ պէյ, ինչպէ՞ս էք, ձեր եղբօրմէն լուր առի՞ք:

– Արի՛ֆ պէյմ, կը յուսամ, որ ձեր առողջութիւնը լաւ է...

Ու այսպէս ամէնուն մէկմէկ սիրալիր խօսք ուղղելով՝ անդունդէն վեր ելաւ:

Վերի ընդարձակ սրահները լեցուած էին ծանօթ եւ անծանօթ իթթիհատականներով, որոնք ցած կամ բարձր ձայնով կը վիճէին իրարու հետ:

Ցանկարծ այդ բազմութեան մէջ երեւցաւ հայ փաստաբան մը, ազգային երեսփոխան եւ Վարչութեան անդամ: Իր մուտքը համակրական ողջոյններով ընդունուեցաւ ամէն կողմէ:

– Պուլղուրունուզ, էֆէնտիմ, պուլղուրունուզ:

Փաստաբանը ալ ու ձախ բարեւներ սփռելով՝ անցաւ բազմութեան մէջէն եւ ուղղուեցաւ խորի սրահը՝ աչքը չորս կողմ ժուռ ածելով: Ցայտնի կ'երեւար, որ մէկը կը փնտռէր:

Նոյն միջոցին հայ բժիշկ մըն ալ ներս մտաւ, նոյնպէս ազգային երեսփոխան:

Այս վերջինը սկսաւ խօսակցիլ մէկ քանի թուրք երիտասարդներու հետ չատ մտերմական ձեւով մը:

Երիտասարդ բժիշկը իր նարեկամներուն հետ խօսելով հանդերձ աչքը դէպի սանդուխին կողմ ուղղած էր՝ կարծես մէկու մը դալուստին սպասելով:

Փաստաբանը վերադարձաւ այն սրահը, ուր կը գտնուէր բժիշկը: Այս վերջինը գայն նկատելով՝ զարմանքի եւ միեւնոյն ատեն տհաճութեան չարժում մը ունեցաւ, այսուհանդերձ տեսնելով, որ ան դինքը կը բարեւէ, պէտք զգաց քովը մօտենալու:

– Ի՞նչ է այս, – ըսաւ խնդալով, – դո՞ւն ալ իթթիհատական եղար...

– Եթէ ըլլամ իսկ՝ կարծեմ չանգանք մը չէ, – պատասխանեց փաստաբանը, – բայց եթէ ամէն հոս եկող պէտք է, որ անպատճառ իթթիհատական ըլլայ, այն ատեն լսել է, որ դուն ալ անոնցմէ ես:

– Ես եկայ հիւանդի մասին տեղեկութիւն հարցնելու հիւանդին տէրոջմէն, – պատասխանեց բժիշկը:

– Եա ալ դատական խնդրի մը համար քաճախորդ մը պիտի տեսնէի՝ անոր համար եկայ, – ըսաւ փաստաբանը:

Հազիւ թէ երկուստեք այս բացատրութիւնը տրուած էր, երբ չանկարծ ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր թուրքերէն լեզուով.

– Վա՛յ, մաշալլահ, էֆէնտի, ինչպէ՞ս էք, աղէ՞կ էք, հանդիսա՞ռ էք, այս ի՞նչ բախտ, ի՞նչ երջանկութիւն ձեզ այսպէս հանդիպիլը, իշալլահ ձեր թանկագին առողջութիւնները լա՞ւ են:

Այս խօսքերուն կ'ընկերանային կարգ մը թէմէննահներ:

Երկու խօսակիցները գլուխնին դարձուցին եւ իրենց առջեւ տեսան Ասիկ Մարկոսեանը:

– Աղէկ, չնորհակալ ենք, դուք ինչպէ՞ս էք, – ըսաւ փաստաբանը չոր ձայնով մը:

– Մեր որպիսութիւնը միչտ մխեւնոյնն է, կ'աշխատինք, կը գրենք:

– Հիմա ո՞ր թերթին կ'աշխատակիս:

– Մասնաւոր թերթ մը չունիմ, մէկ քանի թերթերու միանգամայն կ'աշխատիմ... աս աւելի աղէկ է, մէկ թերթի կապուիլը լաւ չէ:

Ցետոյ խօսքը թժիշկին ուղղելով՝

– Է՛յ, տոքթո՛ր էֆէնտի, իշալլահ աղէկ եւ հանգիստ էք. տիկինը, տղաքը, ամէնքն ալ առո՞ղջ են...

– Փառք Աստուծոյ, – պատասխանեց բժիշկը:

– Օր մը, եթէ ձեր գիւղը գամ, այցելութիւն մը կ'ուզեմ տալ ձեզի:

– Հրամմեցէ՛ք, շատ գոհ կ'ըլլանք:

– Շնորհակալ եմ:

Ասիկ չանկարծ խօսքը հայերէնի դարձուց եւ ցած ձայնով ըսաւ.

– Ասոնք նորէն չատ բռնկած են այս օրերս:

– Ինչո՞ւ համար, – հարցուց բժիշկը անտարբեր ձեւով մը:

– Բարենորոգումներու խնդրին համար... Եւրոպացիները չատ ճնշում կը բանեցնեն կոր...

– Կը կարծե՞ս:

– Մօտէն տեղեկութիւն ունիմ... դեսպանատուններէն, եւ այս իրիկուն ալ գլխաւորաբար անոր համար գումարուած են հոս:

– Ընդհակառակն, ես լսեցի, որ Եւրոպական պետութիւնները վերջերս չատ թոյլ ընթացք մը բռնել սկսեր են...

– Չէ՛, էֆէնտի՛մ, չէ՛, բոլորովին սըխալ է, Անգլիոյ դեսպանը նոր նօթա մը տուած է, եւ Հայկական բարենորոգումներու անմիջական գործադրութիւնը կը պահանջէ կոր... լուր չունի՞ք ասկէ:

– Ես բան մը չեմ գիտեր, – պատասխանեց բժիշկը:

– Իսկ դո՞ւք, դուք գիտնալու էք, – ըսաւ Ասիկ՝ խօսքը փաստաբանին ուղղելով:

– Ես ալ այդպիսի բան մը չեմացայ, – պատասխանեց այս վերջինը:

Այն միջոցին ներս մտաւ Պետրոս Հաճեան, որու ընդառաջ գացին քանի մը թուրք պէյեր:

(Շար. 48)

(Շար. Ա. էջէն)

ցին կը կարծէ, որ կառքով անցող չորս երիտասարդներ դղրուճեան նպատակով մտած են իր բացակայ դրացիներու տունը, առանց պիտնալու որ անոնք վերապարճած են: Զաւակին հետ կը հեռաձայնէ եւ ձայներ լսելով (հեռաձայնչէն Գոլոմպոյի ձայնը...) կը հրահանգէ որ վար իջնեն, Մազմանեան եղբայրներն ալ կարծելով որ գողեր եկած են, իրենց կարգին կը պնդուին: Դրացիին գնդակը սակայն չի հասնիր: Այս ամբողջը հետեւանք է փսիխոզի մը որ օրէ օր կը ծաւալի Հալէպի մէջ քաղմաթիւ գողութիւններու պատճառաւ, ինչպէս բացատրած է էքսան – Փրովանսի քաղաքապետը Մարիոյ Ժուասէն: Բնակիչները, կ'ըսէ, զգուած են քրտութիւնէն եւ անապահովութիւնէն, հարկ եղածէն չատ ոստիկանական ուժ չկայ, ե՞րբ Ներքին նախարարը պիտի հակազդէ:

ՊՈԼՍՈՑ մէկ գերեզմանատան մէջ, Օգոստոս 25–ին սպաննուած է, ծագումով հրեայ գործարար մը՝ Իւջէյիր Կարիհ, 72 տարեկան: Դաշոյնով սպաննուած է: Կարիհ համանախագահն էր Ալթմոնի հետ Ալարքօ խումբին, հիմնուած 1954–ին եւ որ մասնագիտացած էր էլեկտրական գործիքներու ճիւղին մէջ:

ԱԼԺԵՐԻՈՑ ՄԷՋ նոր ջարդ մը պատրաստած է եւ եօթը հոգի մեռած են, մէկ հոգի ալ վիրաւորուած է: Աբարքը որ տեղի ունեցած է Մասքարա, 360 քիլոմեթր Ալժէի արեւմուտքը, կը վերագրուի իսլամապաշտ խմբակի մը:

«ԵՒՐՕՆ ՄԵԾ ՍԽԱԼ ՄԸՆ Է» ըսած Միլթըն Ֆրիտմանի, տնտեսութեան Նոպէլեան մրցանակակիր, այսօր 89 տարեկան: Ան, հարցազրոյց մը տուած է Գոռիլէ ռէյլա Սեռայի, ուր կ'ըսէ թէ փոխանակ քաղաքներու քաղաքական միակ դրութեան մը ստեղծումը, Եւրօն տարբերութիւններ պիտի ստեղծէ ու օրինակներ կու տայ, երկաթգիծերու համար որ, մանաւանդ Գերմանիոյ, Ֆրանսայի եւ Սպանիոյ մէջ է որ պիտի ծագին Եւրոյի վերաբերեալ դժնաւոր հարցերը:

ՄԱՐՈՆԻ ՍՓԷյը պատրիարքը, պատմական այցելութիւն մը կատարած է, Օգոստոսի սկիզբը Շուֆի (Պէյրութի հարաւարեւելք) չրջանը, նուիրագործելով տիրոջիններու եւ քրիստոնեաններու հաչտութիւնը, տարիներու հակամարտութիւններէ ետք: Քրիստոնեաններ որոնք 1983–էն արտագաղթած էին իրենց տուներն ու չրջանէն, սկսած են վերադառնալ:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

*
**

CROIX BLEUE DES ARMENIENS
DE FRANCE
Section d'Asnières
Au profit de la Colonie de Bellefontaine
Réservez votre soirée
du Samedi 20 octobre
GALA ARTISTIQUE ARMENIEN
avec l'**Ensemble folklorique arménien**
N A V A S A R T
Danseurs, musiciens,
chanteurs traditionnels
au Grand Théâtre d'Asnières.

*
**

La Section «HELEN PUZANT»
d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS
DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une S O I R E E D A N S A N T E
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre «G a ï d z a g' s»**

Պ. Պարգեւ Զերկանեան,
Տէր եւ Տիկին Գեղամ Թիրեաքեան,
Պ. Ժորժ Գրիգորեան,
Տիկին Մարի Թագւորեան,
Սեզա եւ Տանի Թագւորեան,
Տոքթոր Սեզա Թիրեաքեան
եւ ընտանեկան բոլոր պարագաները

յատուկ կը ծանուցանեն իրենց կնոջ, մօր, զոքանչին, մօրաքրոջ եւ զարմուհիին եւ խնամիին՝

ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԷ ՋԵՐԿԱՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Օգոստոս 25–ին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Ուրբաթ, Օգոստոս 31–ին, ժամը 15–ին Ալֆորվիլի Մ. Պօղոս – Պետրոս եկեղեցին

4, rue Komitas, 94140 Alfortville

ուրկէ մարմինը կը փոխադրուի Մէզոն – Ալֆորի գերեզմանատունը:

Որեւէ մահագդ ղրկուած չըլլալով, կը խնդրուի չերկայս իրրեւ այդ նկատել:

«ՅԱՌԱՋ». – Մեր ցաւակցութիւնները Զերկանեան եւ Թիրեաբեան ընտանիքներուն:

50ème Anniversaire
du Pèlerinage
à SAINT-GREGOIRE
de TALLARD

ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ՏԱՐԵԿԱՆ
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Sous l'égide de
l'Eglise Apostolique Arménienne
du Midi de la France
et avec le concours de
l'**Association Cultuelle des Arméniens**
de GAP et des Hautes Alpes

Dimanche 9 septembre

à 10h30 — La Sainte Messe sera célébrée par
Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens
de Rhône-Alpes

l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens
du Sud de la France

Avec la participation de la Chorale
SAHAK - MESROP
sous la direction de
Khatchig YILMAZIAN

à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre
Renseignements & Réservations :
— **Cathédrale Arménienne**
de Marseille, tél. : 04 91 77 84 70
— **Association Cultuelle des Arméniens**
de GAP, tél.: 04 92 51 71 80 /
04 92 51 00 87

—— Participation aux frais ——
Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre S P I T A K
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

P r o g r a m m e : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)



le domaine de chamerolles

45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 héctares avec étang,
hébergement en châlets tout confort
pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends
et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F
(selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.
Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ Ազգային Մխիթեան Վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները եկեղեցւոյ պայծառութեան համար, Խաղողօրհնէքի առթիւ. –

Տիկին Ալիս Պէլաքճեան, Տէր եւ Տիկին Ազատ Պահատուրեան 200–ական ֆրանք, Տիկին Արփինէ Միքայէլեան եւ Տէր եւ Տիկին Սուքիաս Սուքիասեան 100–ական ֆրանք:

*
**

Սուրբ Աստուածածնի վերափոխման տօնին առթիւ Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս եկեղեցւոյ հոգաբարձութիւնը չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները. –

Տէր եւ Տիկին Լեւոն Մազազաճեան 100 ֆրանք, Տէր եւ Տիկին Վրէժ Նեահէլեան 300 Ֆր., Տիկին Մարի Տիւզեան 200 Ֆր., Տէր եւ Տիկին Ժիրայր Բեհլիվան 1000 Ֆր., Տիկին Բերկրուհի Ալթունեան 200 Ֆր., Տէր եւ Տիկին Գառնիկեան 100 ֆրանք, Տիկին Վիքթորիա Գոճոզեան 200 Ֆր., Տէր եւ Տիկին Կարապետ Շահմիրեան, Տիկին Մարի Տէր – Յակոբեան 100–ական ֆրանք, Տէր եւ Տիկին Նօտարեան, Օր. Ֆիլոր Անդրանիկեան 500–ական ֆրանք, Տէր եւ Տիկին Էտուար Զիլինկիրեան 2000 ֆրանք, Տէր եւ Տիկին Յարութիւնեան 200 Ֆր., Տէր եւ Տիկին Մինաս Ահմեան 300 Ֆր., Տիկին Մարի Թադեոսեան 100 Ֆր., Տէր եւ Տիկին Զաքար Հապաշմազ 500 Ֆր., Տէր եւ Տիկին Գէորգ Տէյիրմէնճեաչ 300 Ֆր.:

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

– Վ Ե Ր Ա Մ Ո Ւ Տ –

ՄԱՐՍԷՅԼԻ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ»

Մխոբեայ Հայ Վարժարանի Դպրոցին դասընթացքները կը վերսկսին Զորեքշաբթի, Հոկտեմբեր 10 առաւօտեան ժամը 10–ին

Սահակ – Մեսրոպ Մշակութային Կեդրոնի Արծրունի Զրբաչեան սրահին մէջ

339, av. du Prado, 13008 Marseille

Անհրաժեշտ տեղեկութիւններու եւ արձանագրութիւններու համար դիմել Մայր Եկեղեցւոյ Դիւանատուն:

Հեռաձայն. –

04 – 91 – 77 – 84 – 70

—— ● ——

ՖՐԱՆՍԱՀԱՅՑ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՍԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալորիա կը դասաւանդուին. – Հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք:

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30–էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին:

—— ● ——

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(ԼԻՈՆ)

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի թուականն է Զորեքշաբթի Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին:

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Զորեքշաբթի, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16:

Աշակերտները կրնան օգտուիլ Զորեքշաբթի կէսօրուան ճաշէն:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝

04 . 78 - 60 . 47 - 18

Թիւին:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— ● —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux
Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian:
01.46.65.81.53

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 30
JEUDI
30 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·240 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.240

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԱՐԱՐԱՏՆ Ի ՎԵՐ

Պոլսոյ «Մարմարա»ն կը տեղեկացնէ (Օգոստոս 28) թէ Թուրքիոյ Լեռնագնացներու դաշնակցութիւնը Օգոստոս 30–ի յաղթանակի տօնին առընչութեամբ կազմակերպած է Արարատ մագլցելու եօրեայ մը որուն 87 մասնակիցներէն երկուքը Հայաստանէն են: Անոնց առաջինը Հայաստանի Լեռնագնացութեան դաշնակցութեան անդամներէն Մարտին Թադեւոսեանն է, երկրորդը մաքսի պաշտօնեայ Հայկ Տօնոյեանը, որոնց մասնակցութեան դիմումը ընդունուած ու արտօնուած է: Միւս լեռնագնացները, Ազրբէջանէն, Մակեդոնիայէն, Թուրսասանէն, Իրանէն, Հունգարիայէն, Սկովտիայէն, Ռումանիայէն, Պուլկարիայէն, Սերպիայէն եւ Աւստրիայէն են: կան 11 կիներ:

Խումբը Տօղու Պէյազիտէն սկսած է մագլցիլ Օգոստոս 27–էն եւ հասած 3·200 մեթր բարձրութեան վրայ հաստատուած առաջին ճամբարին: Մագլցումը կը կատարուի 12 հոգինոց խումբերով: Ներան գագաթը հասնելէ եօք մի քանի պիտի երթայ Թուրքիոյ փառերգը, ապա խումբը կ'իջնէ պիտի անցնի ու Օգոստոս 30–ին հասած ըլլայ Տօղու Պէյազիտ:

ԱՐՄԷՆՓՐԷՍ

(Օգոստոս 28 / 29)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՒԱՆԱԳԷՏԻՆ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

ԱՄՆ–ուն Արտաքին գործերու նախարարին Եւրոպայէ ու Եւրասիոյ հարցերու տեղակալը Էլիզապէթ Ճոնս Օգոստոս 28–ին տեսակցութիւններ ունեցած է նախագահ Ռ. Քոչարեանի, վարչապետ Ա. Մարգարեանի եւ Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեանի հետ, կարեւոր քննարկումներ կատարելով հրկնային հարցերու՝ ինչպէս Ղարաբաղի, տնտեսական բարեփոխումներու եւ ուժանիւթի, պահովութեան խնդիրներու մասին: Ան յատկանշական առանձնայատկութիւն կ'ունենայ որեւէ երկու ժողովուրդի յարաբերութիւններուն զարգացումը:

*
**

Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՑԸ

Սուրբերէն Օգոստոս 28–ին անցնելով Լիբանան, Հայաստանի Պաշտպանութեան նախարար Ս. Սարգսեան մայրաքաղաքի ճամբուն վրայ կանգ առած է Ախմաճըի մէջ ու ծաղկեպսակ զետեղած Մուսա Լեռան հերոսամարտին զոհերուն յուշարձանին: Պէյրութի մէջ ան հանդիպումներ ունեցած է Պաշտպանութեան նախարարին, բանակի հրամանատարին հետ. առաջադրած է ռազմական եւ ռազմատեխնիք գործակցութեան համաձայնագիրը: Նոյն օր Ս. Սարգսեան ընդունուած է նախագահ Է. Լահուտի, Խորհրդարանի նախագահ Ն. Պըրրիի եւ վարչապետ Հարիրիի կողմէ:

*
**

ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Սեպտեմբերի վերջին Հայաստան հիմնադրամը պործածութեան կը յանձնէ հինգ նոր կառոյց որոնց չինարարութիւնը աւարտելու մօտ է: Ղարաբաղի մէջ գործածութեան կը դրուին Հիւսիս–Հարաւ կառուցին 30 քիլոմեթրնոց երկու հատուածները որոնք կառուցուած են Հնորհիւ 1999 եւ 2000–ի Լոս–Անճըլըսի եւ Ֆրանսայի թէլեթոններուն: Երկրորդը Գաւառի մանկատան ննջարանի չէնք է, երրորդը Վանաձորի թիւ 1 միջնակարգն է որ 1988–ի երկրաշարժին աւերուած էր, չորրորդը նոյն քաղաքին Գուգարք թաղամասին նոր չէնքը, հինգերորդը Երեւանի թիւ 1 մանկական հիւանդանոցին տարրալուծարանը:

*
**

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27–Ի ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Հոկտեմբեր 27–ի ոճիրին դատավարութեան Օգոստոս 28–ի նիստին պլխաւոր ամբաստանեալ Ն. Յունանեան նչմարած չըլլալու, չիչելու պարագաներով պատասխանած է փաստաբան Է. Աղաջանեանի հարցումներուն: Ըսած է օրինակ, թէ չի յիշեր իր մեղադիչներէն Դ. Բեջանեանի, ու է. Գրիգորեանի զահլիճ մուտքը: Պնդած է թէ խումբին անդամները նախապէս տեղեակ չեն եղած կատարուելիք սպանութիւններուն: Ինչ կը վերաբերի ոճիրէն եօք յանձնուելու պարագային, կարէն Յունանեանէն զատ միւսները չեն առարկած: Ինք խումբի անդամներուն տուած է այն երաշխիքները որոնց մասին խօսած է Հանրապետութեան նախագահին հետ: Պատասխանելով հարցումի մը Ն. Յունանեան ըսած է թէ Հոկտեմբեր 27–էն եօք բոլոր պայմաններուն մէջ ինք կը տանձնէր վարչապետի պաշտօնը:

*
**

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏ

Սեպտեմբերին դպրոց յաճախել կը սկսին անցեալ տարուան 50 հազարին փոխարէն մօտ 60 հազար երախաներ: Տարբերութեան պատճառը այն է որ Հայաստանի դպրոցական համակարգը այս տարեվերջէն 11 տարուան ուսուցումի կը սկսի եւ ուրեմն դպրոց սկսելու տարիքը վեցուկէսն է: Սեպտեմբերին դպրոցները կը տրուի 37 անուն նոր դասագիրք եւ ուսուցչի ձեռնարկ: Առաջին դասարանի աշակերտութիւնը անվճար կը ստանայ դիրքերը, իսկ 2003–էն սկսեալ ամբողջ նախակրթարանը կ'ունենայ անվճար դասագիրքեր:

*
**

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀԱՄԱՋԱՅՆ ՉԷ ՑԼԱՄԱՐՏԻՆ

Մայր Աթոռի տեղեկատուական կեդրոնը կը հաղորդէ որ ճիշդ չեն այն լուրերը որոնց համաձայն 1700–ամեակին առթիւ Երեւանի մէջ Սեպտեմբեր 7 – 9 ցլամարտ կազմակերպելու ծրագիր մը հաստատութիւն գտած է եկեղեցական իշխանութեան կողմէ: Կը ճշդուի թէ այդ ծրագիրը կապ չունի 1700–ամեակի տօնակատարութեան եկեղեցական ծրագրին հետ: Մանաւանդ որ Հայ Առաքելական Եկեղեցին չի վաւերացներ զուարճանքի նման ձեւեր որոնք կը խաթարեն յատկապէս մանուկներու, պատանիներու, երիտասարդներու հոգեկանը:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԺՈՍՓԷՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ

Նախարարապետը, այս տարի, նախընտրեց քաղաքական իր վերամուտը կատարել հեռատեսիլի Ա. կայանէն, պատասխանելով Փ. Փուալը տ'Արվորի հարցումներուն քան իր ելոյթը վերապահել ընկերվարականներու ամրան համալսարանին:

Սկիզբէն, յայտնեց թէ խօսողը նախարարապետն է եւ մերժեց նախագահականն թեկնածուի որեւէ հանդամանք, դոնէ առայժմ:

Ընդհանուր ձեւով, կարելի էր նախատեսել իր պատասխանները այն հարցերուն մասին, որոնք կը հետաքրքրեն Ֆրանսացիները եւ պէտք է լսել նաեւ որ Փուալը – տ'Արվոր որեւէ ձեւով նեղը չդրաւ վարչապետը: Օրինակ, երբ կը խօսուէր անապահովութեան մասին եւ Ժոսփէն չարքը կը պարզէր այն բոլոր միջոցներուն դոյս կառավարութիւնը ձեռք առած էր 2000–էն ի վեր, լրագրողը կրնար հարց տալ թէ քանի որ այդքան դոհ է ձեռք առնուած միջոցներէն, ի՞նչպէս կը բացատրէ որ յանցագործութիւնը աւելի քան 50% յաւելում կրած ըլլայ, ընդհանուր ձեւով, 2001–ի առաջին վեցամսեային: Այս նիւթին չուրջ, Ժոսփէն չէշտեց թէ ապահովութիւնը իր երկրորդ պլխաւոր հարցն է, առաջինը ըլլալով աշխատանքը: Իրեն համար յանցագործութեան սաստկացումին պատճառն այն է որ «ընկերութիւնը բիրտ է»: Սեպտեմբեր 6–ին, Ներքին եւ Արդարութեան նախարարները, դատախազներ ու նահանգապետերը պիտի խորհրդակցին հասարակաց գործունէութիւն մը ապահովելու համար:

Ժոսփէն հաստատեց թէ տուրքերու նուազումը պիտի գործադրուի, հակառակ անոր որ ան ը դանդազած է (2,3%–ի եւ 2,5%–ի միջեւ): 35 ժամերու կիրարկումը թողլ տուած է որ աշխատանք հայթայթուի եւ գործազուրկերու թիւը պակսի, բայց, հարկ է աւելի ճկուն ըլլալ փոքր եւ միջին ձեռնարկութիւններու պարագային, որոնք, սկզբունքով պէտք է 35 ժամուան դրութիւնը կիրարկեն 2002 Յունուար 1–էն (20–էն վար աշխատաւոր ունեցող):

Ինչ կը վերաբերի Գորսիքայի, Ժոսփէն համոզուած կը մնայ որ Մաթիւնեոնի համաձայնագրին գործընթացը պէտք է շարունակուի, այլ ելք չի տեսներ: Ապահովութիւն կու տայ սակայն որ ներման հարց չկայ եւ չի կրնար ըլլալ: Եթէ երթեւեկութիւնը կը չարունակուի կղզիին մէջ, պատասխանատուները անոնք են, որոնք դէմ են Մաթիւնեոնի համաձայնագրին:

Պատասխանեց նաեւ Շիրաքի Ցուլիս 14–ի քննադատութիւններուն, չծածկելով որ վրդոված է, քանի ան ալ գործադիր իշխանութիւն է եւ չի հասկնար որ դործադիրը քննադատէ գործադիրը:

Ընդհանուր ձեւով Ժոսփէն գոհ է իր վարած քաղաքականութենէն:

ԳԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐԸ, Օգս· 28–ին, պաղեստինեան Պէյթ Ժալա գիւղը մտան եւ հակառակ Ամերիկացիներու դիմումին, միաք չունէին քաշուելու: Իսրայէլի բանակը կը բացատրէ որ «սահմանափակ» գործողութիւն մըն է, որու նպատակն է վերջ տալ պաղեստինեան կրակոցներուն: Իրականին մէջ, իսրայէլեան բանակի ըրածը վերադրաւում մըն է Այոյորդանանի մէկ մասին եւ արաբական երկիրներն ալ մտահոգ են հակամարտութեան միջազգայնացման հաւանականութեան մը պատճառաւ: 20 հազար պաղեստինցիներ, Ռամալլահի մէջ, թաղեցին իրենց պարագլուխներէն մէկը՝ Սալու Ալի Մուսթաֆա: Պաղեստինցի այս զեկավարին սպանութիւնը դատապարտուեցաւ ամէն կողմէ, ներառեալ իսրայէլեան մամուլին. Հաարեցի համար, սպանութիւնները կը ծառայեն միայն Պաղեստինցիները համագործակցութեան մղելու եւ ամբաստղելու

(Շար·ը Դ· էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔ ԺԽՏՈՂԱԿԱՆՆԵՐՈՒ ԴԱՏԸ ՊԷՐՆԻ ՄԷՋ

ԺԸՆԵՒ («Յառաջ»)· –

Մուտք մը Թուրք ժխտողականներու դատավարութիւնը կը բացուի Սէպ· 4–ին Պէրնի դատարանին առջեւ: Ամբաստանեալներու աթոռին վրայ կան Զուիցերիոյ Թրքական միութիւններու 17 դեկավարներ, որոնք 1996–ին, Դաշնակցային Որհուրդին ուղղուած դիմումի մը մէջ դէմ արտայայտուած են 1915–ի հայկական ցեղասպանութեան ճանաչման:

Զուիցերիա – Հայաստան (Ա· Ս· Ա·) ընկերակցութիւնը 1997 Ապրիլ 24–ին, բողոք մը ներկայացուցած էր, հիմնուած պատժական օրէնսդրութեան 261 պիս յօդուածին վրայ, որ կը պատժէ ցեղասպանութեան մը ժխտումը, նուազեցումը կամ արդարացումը: Ուրեմն, չորս տարիներու հարցաքննութիւն եւ դատական դործընթաց հարկ եղան, որպէսզի դատարան մը արտայայտուի:

Առաջին անգամն է, որ 1995–ին կատարուած պատժական դիմում մը կ'ոգեկոչուի Հրեաներու ցեղասպանութենէն դուրս պարունակի մը մէջ եւ այս երեւոյթը մեծ հետաքրքրութիւն առթած է զուիցերական մամուլին:

Դատավարութիւնը պիտի չարունակուի Սեպտեմբեր 6 եւ 7–ին տուժող կողմի ունկնդրութիւններով եւ պաշտպանողականներով: Հարկական կողմը կը ներկայանայ երկու անձերով, որպէս տուժող:

1· – ԱՐԱՄ ՃԱՄՊԱՋԵԱՆ, 85 տարեկան, ականատես իր հօրը սպանութեան եւ հպարտ էպ վերապրողներէն մէկը 1922–ին Պէնինա հիմնուած որբանոցին Հայերու օգնութեան Զուիցերական Միութեան կողմէ:

2· – ՍԱՐԳԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ, ճարտարապետ Ցիւրիխի մէջ եւ Զուիցերիա – Հայաստան Միութեան անդամ, որու մեծ ծնողքը չարդուած է Անատոլու: Կ'արտայայտէ «Երրորդ սերունդի» յիշողութեան պարտականութիւնը եւ արդարութեան ժխտումի իր մերժուկը:

Վճիռը կ'արձակուի Սեպտեմբեր 14–ին:

ԱՐՄԱՆ ԳԱՍՊԱՐ

ՄԱՄՈՒԼ

«LE FIGARO» (29 août)

DAMAS ET ANKARA BROUILLEES PAR LE HATAY

Թերթին Թղթակիցը՝ Էրիք Պիէկալա Իսքէնտէրունէն զրկած է իր յօդուածը, ուր կը խօսուի Ֆրանսական հոգատարութեան տակ եղած Ալէքսանդրէթի Սանճաքին (1918 – 1939) Թրքացման մասին: Հետաքրքրական վկայութիւններ կան նաեւ Հայերու մասին եւ Յակոբ անունով Հայու մը: Կ'անդրադառնանք առանձին:

ՄՐՈՏԵԼՈՒ ՉՀԻՆՑՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Փաստի տակը հայհոյելով չքացնելու ձգտումին կը նմանի մրոտելու արարքը: Մարքին մէջ երկուքն ալ ծնունդ կ'առնեն անզօրութեան ապրակէն ու այդ անզօրութիւնը ընդունելու, դարմանելու անկարողութենէն: Հասկնալի է որ լրբութեան, ազմկարարութեան, զեղծումի վարպետութեան որոշակի պաշար մը անհրաժեշտ է, հայհոյելով կամ մրոտելով կատարուելիք փոխելու միամիտ ձգտումին համար: «Միամիտ» որակումը նիւթին պահանջած բառապաշարին բաւական անյարիր ըլլալով հանգերձ, յարմարագոյնն է ծուռ քանակէն չհետաքրքիր կընկալող մատնութիւնը ահսմանելու համար, ո՛ր չըլլանակիչ ալ պատկան է:

Այս երեւոյթը ամէնէն աւելի կը զարմացնէ երբ կը յայտնուի, գոնէ արտաքնապէս անսպասելի նկատուած պարագաներու մէջ: Ինչո՞ւ, օրինակ, հզօրութեան դիրքերէ յայտնուողներ փոխանակ արհամարհելու իրական կամ ենթադրեալ ամէն ընդդիմութիւն, առարկութիւն, կը դիմեն ուրացումին, հայհոյութեան, կամ մրոտելու կերպին. նոյնը չէ՞ պետութիւններու պարագան: Նմանց հարցականները պատասխանները կը ներշնչեն համոզումը թէ «գող՝ սիրտը գող»ի հոգեվիճակը աւելի խոր արմատներ ունի մարդկային ու պետականց խառնուածքին մէջ, քան՝ հզօրութեան ամէնէն արմատական ներկայութիւնը: Այս եզրակացութենէն եւս, այլեւս պէտք չէ զարմանալ տեսնելով հայհոյութեանց եւ մրոտելու արարքներ, ամէնէն անհաւանական նկատուած մարդերուն մէջ ալ:

«Արմէնփրէս»էն Օգոստոս 22 թուակիր տեղեկատուութեանց էջ մը մղեց այս խորհրդածութիւններուն. այդ էջը խորագրուած է «Թուրքական սադրանք՝ Կուբանի Հայերի նկատմամբ»: Զարմացնող խորագիր մը որ, մտածել կու տայ անմիջապէս թէ Թուրքերը ի՛նչ գործ կրնան ունենալ Ռուսաստանի այդ երկրամասին բնակիչ Հայերուն հետ: Սիրանոյշ Մուրատեանի ստորագրած տեղեկատուութիւնը նախ կը յիշեցնէ Թուրքիոյ մէջ Հայկական հետագօտութիւններու հիմնարկի մը ստեղծումը. կը չեշտէ թէ անոր որպէս նպատակ յայտարարուած էր դիտականօրէն հերքումը ցեղասպանութեան հայկական պնդումներուն որոնք վերջին տարիներուն սպառնական բոյթ ստացած էին Թուրքիոյ համար:

Այդ չըլլանակին մէջ ալ կը գետեղէ այն գործունէութիւնը որ տարուած է Հասան Ճանպոլաթի եւ Նազմի Կիւլի կողմէ եւ կը վերաբերի «վերլուծական տեղեկագիրի մը, Կրասնոդարի ու Ջաւախքի Հայերուն մասին: Կրասնոդարի «Երկրամաս» թերթին գլխաւոր խմբագիր Տիրան Թաւադեան յայտնած է թէ երկու Թուրքերուն «Աչխարհագրագէտներ – Թիւն եւ Ջաւախքի ու Կրասնոդարի մարդի Հայերուն ինքնավարութեան հարցը» վերնագրուած գրութիւնը տպագրիչ յատկանիշերը կը պարունակէ նշուած չըլլանի Հայերուն աւանդութեամբ: Ըսուածը այն է որ Համչէնահայերը որոնք իսլամացած Հայերու խումբ մըն են, Կուբանը կը նկատեն հայկական պատմական տարածք եւ 1995 թուականէն ետք սկսած են կը-րասնոդարի մարզին մէջ քաղաքական եւ մշակութային ինքնավարութեան կարեւորութիւններ փնտռել: Հանրագրէի մը կազմակերպումի ջանքն ալ կը վերագրուի վերոնշեալ հաւաքականութեան որ ըստ լրատուութեան, Սոչիէն դէպի հարաւ, մինչեւ Աբխազիոյ Գադրա քաղաքը տարածուած չըլլանին մէջ բնակչութեան մեծամասնութիւնը կը կազմէ:

Թուրքերու ստորագրած վերլուծումին մէջ ուրուագիծը կայ տեղական հակադրութեան մը, կամ նոյնիսկ, ո՛վ գիտէ, բախումներու: Բաներ որոնք բնականաբար ամէնէն անցանկալի, նեղացնող հեռանկարներ են իշխանութեան մը համար: Հայերու ինքնավարութեան ձգտումներուն մասնաւորապէս ետք, ըսուած է տակաւին թէ անոնց հակադրուող հիմնական ուժ են կազակները. այլ խօսքով՝ տեղարնակ Թուրքերը: Այս բոլորը «Երկրամաս»ի խմբագիր Տ. Թաւադեանի կողմէ հիւանդ երեւակայութեան արդիւնք եւ զեղծարարութիւն կը նկատուին: Ան կ'աւելցնէ արդարօրէն թէ տուեալ չըլլանին մէջ ազդեցիկեան գլխաւոր հարցը մեսխեթցի Թուրքերու պատկանողն է: Անոնց կը պատկանի նաեւ տիրութիւնը հոն ծագած բոլոր խնդիրներուն որոնք Թուրք «վերլուծող»ներու վերագրած են Հայերուն:

Ինչպէս կ'եզրակացնէ «Արմէնփրէս»ի լրատուութեան հեղինակը, դժուար չէ կռահել Ճանպոլաթի եւ Կիւլի վերլուծութեան ձգտումը. ան պէտք է ներքին ու արտաքին ուշադրութիւնը չեղէ մեսխեթցի Թուրքերու պատճառած իրապէս պայթումնալի իրավիճակէն որ ամէն պահու կրնայ արդէն բարմաթիւ խնդիրներու ափը չըլլանը առաւել ծանրաբեռնել նոր հակամարտութեամբ մը: Պարզ է որ ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձնելու նպատակն ալ մաս կը կազմէ նոյն նախաձեռնութեան: Այնուհետ, լաւ կ'ըլլայ որ մեսխեթցի Թուրքերը որպէս խնդրայարոյց մէկդի դրուելէն զատ, հանրային կարծիքին զգաստելու, մտահոգուելու, կամ հակազդելու նոր հասցէ տրուի: Զարմանալի՞ է որ աչխարհագրագէտ Թուրք «մասնագէտ»ներ տեղացի հայութիւնը նկատեն այդ առումով յարմարագոյն հասցէատէրը: Նոյն առթիւ կ'արժէ նշել որ Ճանպոլաթի եւ Կիւլի Հայկական ցեղասպանութեան պատիժ սահմանելու ցանկութիւնը իր թափը կորսնցուցած էր: Մանաւանդ որ քանի մը տասնեակ անգլիացի սպայ եւ զինուորներ Մուսթաֆա Քէմալի «ազատագրական բանակի» կողմէ ձերբակալուած էին: 1920-ի վերջը արդէն Մալթայի աքսորականները սկսան իրենց ազատութիւնը գտնել, ու մերթ մի առ մի, մերթ խումբով Թուրքիա վերադառնալով Մուսթաֆա Քէմալի չարժումին միացան: Ինչպէս գիտել կու տայ Աքչամ, անոնք չէին կրնար պոյս վերադառնալ ուր կրնային ձերբակալուիլ, հետեւաբար Մուսթաֆա Քէմալի միանալով հետապնդումէ զերծ մնային:

Այսօրուան Թուրքիոյ պետական չըլնակներու պատասխանատուները երբ անխտիր կը մերժեն հայկական ցեղասպանութեան գոյութիւնը, չենք զարմանար: Անոնցմէ չատեր հայկական ցեղասպանութեանէ կամ Ցոյներու դէմ գործուած ոճիրներու հեղինակներու չառաւիղներ են:

Փոքր Ասիոյ մէջ աւելի քան երկու հազար տարուան գոյութիւն մը ունեցող հայ ժողովուրդի բռնազաղթէն յետոյ ի՞նչ եղաւ իր գարաւոր աչխատութեանէ արգասիքը եղող ինչքը: Ցեղասպանութիւնը ճանչնալ կը նչանակէ, նախ ոճիրին հետեւինակը կամ ժառանգորդը ըլլալը ընդունել, յետոյ բռնագրուած ինչքերու վերադարձ կամ հատուցում կատարել:

Եթէ այսօր բազմաթիւ տէրութիւններ որոնց կարգին նաեւ Ֆրանսա, հայկական ցեղասպանութիւնը ճանչցած են, ասիկա բացառիկ չնորհ մը չէ: Հայկական ցեղասպանութեան փաստերու կարեւորագոյնները անչուշտ թրքական վաւերագրերն են որոնք 1919-ին, Պոլսոյ Երիտթուրքերու դատավարութեան ընթացքին Օսմանեան դատարանին տրամադրուած էին: Իսկ վկայութիւնները անհամար են որոնց գլխաւորները Օսմանեան կայսրութեան գաչնակից Գերմանիոյ էրզրում, Հալէպի, Տրապիզոնի կամ Սամսոնի հիւպատոսներու տեղեկագրերն են: Անոնցմէ ո՛չ մէկը հայկական ըմբոստութեան խօսքն անգամ չունեն: Նոյնն է պարագան մինչեւ 1917-ի Ապրիլ ամիսը իբր չէզոք տէրութիւն Միացեալ – Նահանգներու Փոքր Ասիոյ դանազան քաղաքներուն մէջ պաչտօնավարող հիւպատոսներու տեղեկագրերուն:

Հակառակ վերոյիչեալ անհերքելի փաստերուն կամ վկայութիւններուն, Թուրքիա կը մերժէ եւ համոզուած ենք որ միչտ ալ պիտի մերժէ հայկական ցեղասպանութիւնը. ո՛չ թէ որովհետեւ ինչպէս Թանէր Աքչամ կը գրէ հայկական ցեղասպանութիւնը ճանչնալ կը նչանակէ Թուրքիոյ «պաչտօնական պատմութեան» կեղծը ըլլալը հաստատել, այլ որովհետեւ Թուրք ժողովուրդին համար դեռ չատ կանուխ է ինքնաքննադատութիւնը ընդունելու:

Թուրքիոյ այսօրուան ղեկավարները տարակոյս չկայ թէ բոլորն ալ իրազեկ են այն մեծ ոճիրին որուն կազմակերպումին ու գործադրութեան մասնակիցն իրենց նախորդները: Այսօրուան Թուրքիան արեւմտեան լեզուներու հմուտ բազմաթիւ դիւանագէտներ, պատմաբաններ եւ լրագրողներ ունի որոնք ամէն կերեւութիւն ունին այն բոլոր արեւմտեան պատմական դիւանները տեսնելու ուր ասոնց այլեւայլ հայկ ցեղասպանութեան իրողութիւնը կը հաստատուի: Եւ վստահ ենք որ արդէն տեսած ալ են: Մինչեւ դեռ Ջայլամի քաղաքականութիւնը նախընտրելով, միշտ կը կրկնեն, «այսպէս կոչուած» (սէօզտէ) հայկական ցեղասպանութիւնը:

Երբ այսօր հայեցողութեան երկխօսութեան մասին փորձեր կը կատարուին, մեր բանագնացները պէտք է գիտնան որ միամտութիւն պիտի ըլլայ ապաւել որ Թուրքիա կրնայ ճանչնալ ցեղասպանութիւնը: «Ազնուական Թուրք ազգը» ինչպէս կը սիրեն գիրենք կոչել, չի կրնար ցեղասպանութիւն կատարած ըլլալ: Ի թաթիւրք չէ՞ ըսած արդէն՝ «երանելի անոր որ Թուրք եմ կ'ըսէ»...:

Ա. ՊԷՅԼԷՐԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

Թանէր Աքչամի կը Մոնթ Տիփլոմաթիի Յուլիսի թիւին մէջ լոյս տեսած «Հայկական ցեղասպանութեան թապուն» խորագրով չահեկան յօդուածը վստահարար թուրք պետական շրջանակներու, պատմաբաններու եւ նամանաւանդ լրագրողներու խոր գինահատանքին (*) արժանացած է: Տասնեակ տարիներէ ի վեր, Թուրքիոյ անխտիր բոլոր պետական դէմքերը, պատմաբանները, լրագրողները երբ ներբողելիք բառերով կամ տողերով կ'արտայայտուին հանրապետութեան հիմնադիր Մուսթաֆա Քէմալ Աթաթիւրքի եւ իր մօտիկ գործակիցներու անչահախնդիր հայրենասիրութեան մասին որոնք արդի Թուրքիան կերտեցին, Թանէր Աքչամի վերոյ նչուած յօդուածը կը չրխկտան առանց վհատելու: Ան ընթերցողին ուչադրութեան կը յանձնէ թէ Թուրքիոյ հանրապետութեան հիմնադիրին մօտիկ շրջապատին մէջ գործող այդ «հերոս» ազգայնականներուն մէջ քիչ չէր թիւր ոճրագործներու, աւազակներու որոնք եռանդով մասնակցեցան հայկական ցեղասպանութեան ու տարագրեալներու ինչքը կողոպտելով մեծ հարստութիւն դիզելուն: Ան այս առթիւ կը յիչէ նաեւ նախ Պլեժլիսի, յետոյ Հալէպի կուսակալ Մուսթաֆա Ապտիւլհալիքը (Ռէնտա) որ հանրապետութեան հռչակումէն յետոյ Անգարայի Ազգային Մեծ Ժողովին նախագահի պաչտօնը վարեց. Տիգրանակերտի ջարդերու պատասխանատուներէն Արիֆ Ճէյդին որ հանրապետութեան առաջին դահլիճին մէջ նախարարի պաշտօնի կոչուեցաւ. Սելանիկցի Թէվֆիք Ռիւչտիւ Արաս որ մահացած տարադրեալները թաղելու համար ստեղծուած առողջապահական յանձնախումբին պատասխանատուն էր: Ցետագային, 1925-1938 տարիներուն միջեւ, Արաս Արտաքին գործերու նախարարի պաչտօնը վարեց: Աքչամ կը յիչէ նաեւ Հալէպի տարագրեալներու կեդրոնացման ճամբար – ներու անօրէն Շիւքրիւ Գայան որ Աթաթիւրքի նախագահութեան տարիներուն երկար ժամանակ Ներքին նախարարի պաչտօնը վարեց:

Վերոյիչեալ անձերէն ոմանք Հայկական ցեղասպանութեան մասնակցութեան ամբաստանութեամբ 1919 – 1920 տարիներուն Անգլիացիներու կողմէ ձերբակալուելով իբր թէ դատուելու համար Մալթա կղզին աքսորուեցան: Մալթա աքսորուող Թուրք պետական դէմքերու, «Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէի» անդամներու, լրագրողներու թիւը 150-ի չափ է: 1920-ի ամառը նախքան Սեւրի դաչնագրին ստորագրութիւնը (Օգոստոս 10), արդէն գաղանիք մը չէր որ Դաչնակիցներու միջեւ տեղի ունեցող քաղաքական մրցակցութեան հետեւանքով, հայկական ցեղասպանութեան պատասխանատուներուն պատիժ սահմանելու ցանկութիւնը իր թափը կորսնցուցած էր: Մանաւանդ որ քանի մը տասնեակ անգլիացի սպայ եւ զինուորներ Մուսթաֆա Քէմալի «ազատագրական բանակի» կողմէ ձերբակալուած էին: 1920-ի վերջը արդէն Մալթայի աքսորականները սկսան իրենց ազատութիւնը գտնել, ու մերթ մի առ մի, մերթ խումբով Թուրքիա վերադառնալով Մուսթաֆա Քէմալի չարժումին միացան: Ինչպէս գիտել կու տայ Աքչամ, անոնք չէին կրնար պոյս վերադառնալ ուր կրնային ձերբակալուիլ, հետեւաբար Մուսթաֆա Քէմալի միանալով հետապնդումէ զերծ մնային:

Այսօրուան Թուրքիոյ պետական չրջանակներու պատասխանատուները երբ անխտիր կը մերժեն հայկական ցեղասպանութեան գոյութիւնը, չենք զարմանար: Անոնցմէ չատեր հայկական ցեղասպանութեանէ կամ Ցոյներու դէմ գործուած ոճիրներու հեղինակներու չառաւիղներ են:

Փոքր Ասիոյ մէջ աւելի քան երկու հազար տարուան գոյութիւն մը ունեցող հայ ժողովուրդի բռնազաղթէն յետոյ ի՞նչ եղաւ իր գարաւոր աչխատութեանէ արգասիքը եղող ինչքը: Ցեղասպանութիւնը ճանչնալ կը նչանակէ, նախ ոճիրին հետեւինակը կամ ժառանգորդը ըլլալը ընդունել, յետոյ բռնագրուած ինչքերու վերադարձ կամ հատուցում կատարել:

Եթէ այսօր բազմաթիւ տէրութիւններ որոնց կարգին նաեւ Ֆրանսա, հայկական ցեղասպանութիւնը ճանչցած են, ասիկա բացառիկ չնորհ մը չէ: Հայկական ցեղասպանութեան փաստերու կարեւորագոյնները անչուշտ թրքական վաւերագրերն են որոնք 1919-ին, Պոլսոյ Երիտթուրքերու դատավարութեան ընթացքին Օսմանեան դատարանին տրամադրուած էին: Իսկ վկայութիւնները անհամար են որոնց գլխաւորները Օսմանեան կայսրութեան գաչնակից Գերմանիոյ էրզրում, Հալէպի, Տրապիզոնի կամ Սամսոնի հիւպատոսներու տեղեկագրերն են: Անոնցմէ ո՛չ մէկը հայկական ըմբոստութեան խօսքն անգամ չունեն: Նոյնն է պարագան մինչեւ 1917-ի Ապրիլ ամիսը իբր չէզոք տէրութիւն Միացեալ – Նահանգներու Փոքր Ասիոյ դանազան քաղաքներուն մէջ պաչտօնավարող հիւպատոսներու տեղեկագրերուն:

Հակառակ վերոյիչեալ անհերքելի փաստերուն կամ վկայութիւններուն, Թուրքիա կը մերժէ եւ համոզուած ենք որ միչտ ալ պիտի մերժէ հայկական ցեղասպանութիւնը. ո՛չ թէ որովհետեւ ինչպէս Թանէր Աքչամ կը գրէ հայկական ցեղասպանութիւնը ճանչնալ կը նչանակէ Թուրքիոյ «պաչտօնական պատմութեան» կեղծը ըլլալը հաստատել, այլ որովհետեւ Թուրք ժողովուրդին համար դեռ չատ կանուխ է ինքնաքննադատութիւնը ընդունելու:

Թուրքիոյ այսօրուան ղեկավարները տարակոյս չկայ թէ բոլորն ալ իրազեկ են այն մեծ ոճիրին որուն կազմակերպումին ու գործադրութեան մասնակիցն իրենց նախորդները: Այսօրուան Թուրքիան արեւմտեան լեզուներու հմուտ բազմաթիւ դիւանագէտներ, պատմաբաններ եւ լրագրողներ ունի որոնք ամէն կերեւութիւն ունին այն բոլոր արեւմտեան պատմական դիւանները տեսնելու ուր ասոնց այլեւայլ հայկ ցեղասպանութեան իրողութիւնը կը հաստատուի: Եւ վստահ ենք որ արդէն տեսած ալ են: Մինչեւ դեռ Ջայլամի քաղաքականութիւնը նախընտրելով, միշտ կը կրկնեն, «այսպէս կոչուած» (սէօզտէ) հայկական ցեղասպանութիւնը:

Երբ այսօր հայեցողութեան երկխօսութեան մասին փորձեր կը կատարուին, մեր բանագնացները պէտք է գիտնան որ միամտութիւն պիտի ըլլայ ապաւել որ Թուրքիա կրնայ ճանչնալ ցեղասպանութիւնը: «Ազնուական Թուրք ազգը» ինչպէս կը սիրեն գիրենք կոչել, չի կրնար ցեղասպանութիւն կատարած ըլլալ: Ի թաթիւրք չէ՞ ըսած արդէն՝ «երանելի անոր որ Թուրք եմ կ'ըսէ»...:

Ա. ՊԷՅԼԷՐԵԱՆ

ՆԻԺԵՐԻԱՅԻ ԲԺԻՇԿԸ ՈՐ ՍԻՏԱՅԻ ՊԱՏՈՒԱՍՏԸԼ ԳՏԱԾ Է...

Օր չանցնիր որ նիժերիական մամուլը չլսօսի իր մասին: Լակոսի փողոցներուն մէջ կը հնչէ իր անունը: Նիժերիայի դաչնակցային մայրաքաղաք՝ Ապիւժայի համալսարանի վերոֆէսէօր, տոքթոր Ժեմիսհ Ապալաքա մեծ յայտերու ծրնունդ տուած է բնակչութեան մը մօտ որ սիտայի խուճապը կ'ապրի:

Ամէն թան սկսած է տարի մը առաջ, երբ Ապալաքա յայտարարած է որ կանխարդելող եւ բուժիչ դեղ մը գտած է որ արգելը կը հանդիսանայ սիտայի յայտնարերումին եւ նուազագոյնին կը բերէ մահերէին քանակութիւնը: Աւելին, չատ է որ պատուաստով կատարուած փորձերը պոհացուցիչ արդիւնքներ տուած են: Ցիշեցէք, վերնուրական իչխանութիւնները փորձած են ապրանքին արգիւնաւորութիւնը. 400 ախտակիր զինուորականներու վրայ:

Երդիչ Ֆելա Քութիի մահէն ի վեր 1997-ին, «Ափրիկէի հսկան», հետզհետէ դիտակցած է համաճարակին ծանրակչիռ բեռնէին, որմէ զերծ կը խորհէր ըլլալ, մինչ իր 120 միլիոն բնակիչներուն 10%-ը արդէն իսկ վարակուա ծեն: Նիժերիացիները այ աւելի տրամադիր են հաւատալ նոյնայելու այս վերոֆէսէօրին, որովհետեւ պատուաստը հազիւ 25·000 նայրա (1000 ֆրանք) կ'արժէ, մինչ արեւմտեան դեղերը անմատչելի են բնակչութեան մեծամասնութեան:

Պատուաստին առթած մնայուն հետաքրքրութիւնը բանավէճի դուռ բացած է, դիւանագիտական բժչկական չրջանակներու մէջ: Նիճերիոն Մետիքալ Էսոսիէյչընի Ապալաքայի յայտարարութիւնները խոթապատիր որակած է: Դաչնակցային կառավարութիւնն ալ դէմ է: Արգիլելով սիտայի դէմ Նիժերիացիներու հնարած բոլոր դեղերն ու պատուաստները, կը խորհի թէ միանգամընդմիչտ փակած է վիճարկումը: Բայց, հանրային կարծիքը համոզուած է որ կառավարութեան կարծիքով, Ափրիկեցի մը չի կրնար սիտայի դարմանումը գտնել:

Ապալաքա նահատակի կերպար առած է, մանաւանդ անոր համար որ բազմաթիւ յարձակումներու ենթարկուած է եւ մանաւանդ սպառնալիքներ ստացած եւ կը պնդէ որ ինք սպառնալիք մըն է զեղադործական արեւմտեան շահերուն համար: Հակառակ իր չափազանցութիւններուն, հանրային կարծիքը աւելի ականջ կու տայ իրեն քան արեւմտեան մասնագէտներուն: Իր դիրքորոշումները չփոթութիւն կը ստեղծեն Նիժերիացիներու մտքերուն մէջ, մանաւանդ ինչ կը վերաբերի մանրէին վոխանցման: Եւ օրէ օր աւելի մեծ թիւով Նիժերիացիներ սերմարդել չեն դործածեր, համոզուած որ «բարի բժիչկը չարչած է հիւանդութեան»:

Թ. Ա. Թ.

ԿԵՂԾ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԵՐՈՒԻ ՈՍԿԻՆԵՐՈՒ ԹԱՆԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԱՄԷՆ ԻՆՉ ՈՐ ԿԸ ՓԱՑԼԻ, ՈՍԿԻ ՉԷ

փերուի հուշակաւոր ոսկիներու թանդարանը, որ զբօսաշրջիկները ներգրաւող գլխաւոր վայրը մըն է, վերջերս կորսընդացած է իր վայելքը: Սպառազրական լուկային մէջ գնորդներու իրաւունքները պաշտպանող վնկերակցութիւն մը յայտարարած է, թէ թանգարանին մէջ ցուցադրուող հնութիւններուն աւելի քան 35 առ հարիւրը կեղծ է:

ինտերպոփի սեփական ընկերակցութիւնն, լիմայի կաթողիկէ համալսարանէն մանագէտներու պատուէրով այժմ քննութեան կ'ենթարկէ թանգարանին հաւաքածոն՝ անոր մաս կազմող իրերուն ծագումը ստուգելու համար:

Միւգօ ՏՀ Օրոյի աւելի քան 20 հազար իրերուն չարքին են զարդարուն եւ ծիսական զարդեր, որոնք այցելուներուն համար գաղափար մը կու տան այն մարդերուն մասին, զորս Սպանացիք զըրկած են 16–րդ դարուն, երբ Փերու նուաճած են: Թանգարանին իրերը ցուցադրուած են աչխարհի տարածքին տարբեր վայրերու մէջ:

Գայթակղութիւնը երեւաչ եղած է, երբ թանգարանին այցելուներէն մէկը նամակ մը ղրած է ինտերպոփի ընկերակցութեան հարցականի տակ առնելով ցուցադրուած կարգ մը իրերուն իրականութիւնը: Թանգարանը այժմ փակուած է եւ ընկերակցութիւնը ձեռնարկած է երեք ամսուան քննութեան:

Լիմա այցելող օտար զբօսաշրջիկներուն 60 առ հարիւրը կ'անցնի այ սթանգարանէն, որ ոչ միայն ոսկի այլ նաեւ արծաթէ եւ պրոնզէ իրերու, խեցեղէնեղէնի, ինքնաներու ժամանակներէն առաջ պահպանուած մոմիաներու, հին գինքերու եւ հիւսուածեղէնի հարուստ հաւաքածոյ մը ունի: Թանգարանը կը հպարտանար, թէ անոնք յայտնաբերուած էին հին դամբարաններէ, պատմական վայրերու պեղումներուն ընթացքին:

Ոսկիներու ւթանգարանը պէտք է լրացնի թանգարանի մը բոլոր պայմանները: Եթէ հոն ցուցադրուող իրերը իրական չեն, անոնք պէտք է բաժնուին երեք մասի, նոր չինուած գործեր, հնամեայ իրերու օրինակով նոր ստեղծագործութիւններ եւ հնագիտական ժառանգութիւններ, կ'ըսէ ինտերպոփի յայտարարութիւնը:

Իրօք, թանգարանը վերջին վեց ամիսներու ընթացքին շուրջ 2300 իրեր, այսինքն հաւաքածոյին 10 առ հարիւրը կեղծ հռչակած է:

ՓՈՔՐ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐ

ՄԱՆՐԱԴԻՏԱՑԻՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԺԱՊԱՒԷՆ ՄԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՀԱՑ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻ ՄԸ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՆԵՐՇՆՉՈՒՄՈՎ

◆

Լոս – Անճըլըսի Միւզիըմ աֆ Ճիւրեսիք Թեքնոլոճին (յուրայեան ժամանակաշրջանի արհեստագիտութեան թանգարան) պիտութեան եւ արուեստի խառնուրդ մը կը պարփակէ: Այս ամառ ծաղիկներու քե. ճառագայթով առնուած նկարներ պիտի ցուցադրուին հոն: Անոր պիտի յաջորդէ թիթեռնիկի թեւերէ եւ մկկ բըջիջով մարմիններէ կազմուած շատ փոքր խճանկարներու ցուցադրութիւն մը. ա–կընդիրներ մանրադիտակով պիտի քննեն ծաղիկներու ճեւով անոնց չարուածքը:

Թանգարանին նպատակներէն մէկն է «աւելի մեծ թիւով ակնդիրներու ցոյց տալ մարդկային հնարամտութեան եւ գեղարուեստական ստեղծագործութեան ապացոյցները՝ մանրադիտակային տարողութեամբ», ինչպէս կ'ըսէ թանգարանին մանրակերտ հրաշալիքներու բաժնին պատասխանատուն՝ Տէյվիտ Ուիլսըն:

Թանգարանը կ'ընդգրկէ նաեւ 16 աթոռէ բազկացած սրահ մը, ուր չարժապատկերի պատառի վրայ պիտի ցուցադրուի մեքենական փոքր անիւներով պարող լուի մը պատմութիւնը:

«Լոս Անճըլըս Թայմզ» թերթին համաձայն, Ուիլսըն մանրադիտակով աչխատող արուեստագէտներ կը փնտռէ 1990էն ի վեր, երբ դիպուածով ներկայ եղած է հայ արուեստագէտ Յակոբ Սանտալճեանի մէկ ցուցահանդէսին: Սանտալճեանի պատկերները սովորական էին (Միքի, Մաուս, պապը...) սակայն անոր կիրարկած թեխնիքը տարբեր էր. ան կ'աչխատէր մանրադիտակի տակ եւ իր գործիքներով չարժման մէջ կը դնէր միայն այն առեն երբ ամուր կապուած էր աթոռին: Նոյնիսկ այդ վիճակին մէջ ան կ'աչխատէր միայն սրտի զարկերու միջեւ: Սանտալճեան նիւթերը կը փորագրէր եւ կը գծէր մարդկային մազի թելի մը վրայ:

Ուիլսըն անմիջապէս Սանտալճեանի համար ցուցահանդէս մը կազմակերպած է Թանդարանին մէջ: Սակայն ցուցահանդէսին բացումէն երեք չաբաթ առաջ մահացած է տարեց արուեստագէտը: Անոր կորուստը պատճառ զարձած է, որ Ուիլսըն տայն մտածէ «պարզ լուին» պատմութիւնը ժապաւէնի վերածելու մասին:

«Մեքենական փոքր անիւներով պարող լուի օրինակը կը խորհրդանչէ մանրադիտակային արուեստին մահը: Անիկա հիմնուած է ռուսական «Լեւչա» ժողովրդային պատմութեան վրայ: Իրօք, ժապաւէնը կը կրէ նոյն վերնագիրը», կը դրէ «Լոս Անճըլըս Թայմզ»:

Ցուցաճադիրը՝ Ալ Ռեսենուր կը պատմէ, թէ անցեալ Օգոստոսին Ուիլսըն եւ չարժապատկերի մասնագէտներու խումբ մը կիեւ գացած եւ այցելած են Նիքոլայ Սայատրիսթրի անունով 70 տարեկան արուեստագէտի մը, որ աչխարհի մէջ մանրադիտակային արուեստ կիրարկող երկու վարպետներէն մէկն է: Ս. Փեթերսպուրկի մէջ ժամանակակից արուեստի Ռուսական պետական թանգարանին եւ Ֆրոյտի երաշներու թանգարանին պատասխանատուներուն օգնութեամբ խումբը ծանօթացած է «Լեւչա»ի պատմութեան մանրամասնութիւններուն:

Ռուսիոյ մէկ ցարը գինագործի մը կը պատուիրէ Ռուսերուն գերակայութիւնը փաստել Անգլիացիներուն վրայ՝ անոնց պատրաստած մեքենական փոքր անիւներով լուին աւելի կատարելագործուած տարբերակը չինելով: «Լեւչա» ժապաւէնին մէջ ռուսական աւանդավէպն պարբերութիւններ կը հիւսուին Սայատրիսթրի արուեստին եւ անոր գործերուն հետ: Ժապաւէնը կ'ընդգրկէ նաեւ ռուսական անկրպետագնացութեան պատկերներ (ռուս ճարտարագէտներ այս մարդին մէջ եւս կը փորձէին մրցիլ Արեւմուտքի հետ):

«Լեւչա սահմանափակ գործիքներով եւ սահմանափակ հարստութեամբ անձ մըն է», կը նկարագրէ Ուիլսըն: «Լոս Անճըլըս Թայմզ» ռուսական այս տիպարը կը նմանցնէ ինքնին Թանգարանին, որ արդի արհեստագիտութիւնն ու նախապատմական յուրայեան (ճիւրեսիք) ժամանակաշրջանը միացնող իր անունով միայն չփոթ կը յառաջացնէ եւ մեծ եկամուտներ չունի:

Պատմութեան հերոսը՝ ծերունի Լեւչա, չի յաջողիր հարթել դժուարութիւնները: Մեքենական աւելի կատարեալ լու մը չինելու անոր փորձերը կը ձախողին: Ան նոյնիսկ չի կրնար վերակազմել անգլիական օրինակը՝ զայն վերադարձնելու համար ցարին: Այսուհանդերձ Լեւչա իր ձախողութեան դիմաց կ'արձանագրէ արուեստավոր յաչողութիւն մը. ան հազիւ տեսանելի լուին անտեսանելի ոտքերուն վրայ կ'աւելցնէ պարի կօշիկներ... Սանդավէպին կատակերգական աւարտը կը վերապահէ անսպասելին. բան մը, որ թանգարանը միշտ պատրաստ է ընձեռելու այցելուին...:

ԳՈՂՈՒԹԻՒ ԳՈՂՈՒԹ

Գնաւէրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ պարտէզին մէջ, Օգոստոս 15–ին, Մեսրոպ պատրիարքի հրաւէրով սարքուած էր «Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնական ճանաչման 1700–ամեակին առթիւ» ընդունելութիւն մը, մասնակցութեամբ համայնքի ներկայացուցիչներուն: Ընդունելութեան նպատակը եղած է նաեւ Թուրքիոյ Հայոց պատրիարքութեան հիմնադրութեան 540–ամեակի նչումը: Ինչ առնելով, պատրիարքը նկատել տուած է որ ամէն տարի այս հաւաքոյթը կը կատարուէր Հոգեպալուստի չաբաթին, բայց, այս տարի տնտեսական դժուարութիւններու պատճառաւ, նախընտրելի նկատուած էր կատարել պարտէզին մէջ, փոխանակ պանդոկի մը մէկ բազմածախք հաւաքոյթ մը կազմակերպելու: Անդրադառնալով պատրիարքութեան 540–րդ տարեդարձին, Մեսրոպ Արք. նկատել տուած է որ Ֆաթիհ Սուլթանի օրով լինչպէս հիմնուած է Պատրիարքարանը, որ չուտով բարգաւաճած էր եւ ունեցած աւելի քան 50 վիճակներ: Պատրիարքարանի չնորհիւ, Պոլիսը չուտով վերածուած էր մչակութային կեդրոնի մը եւ այսօր իսկ կարելի չէ խօսիլ հայ մչակոյթի ու գրականութեան մասին առանց Պոլիսը յիչելու: Ծանրանալէ ետք պատրիարքարանի պատմութեան վրայ, Մեսրոպ Արք. յայտնած է թէ պատրիարքարանի չինութիւնը Ամերիկայի մէջ հաւաքուած 600 հազար տոլարէն եւ Գրիգոր Գրիգորեանի կողմէ յանձնելի երկրորդ 600 հազար տոլարէն ետք, երրորդ 600 հազար տոլարի եւս պէտք պիտի ունենայ մինչեւ որ աւարտի, բայց, եթէ աւարտի փառաւոր պատրիարքարան մը մչտնեղ պիտի ելլէ: Պատրիարքը կը նախատեսէ որ չինութիւնը կ'աւարտի 2003–ին եւ այն առեն պաշտօնապէս կը հրաւիրուին Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Երուսաղէմի Հայոց պատրիարքը: Հաւաքոյթը աւարտած է հիւրասիրութեամբ:

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՑ – ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՐՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

7–րդ միջազգային գիտաժողովի նիւթեր

«20–ՐԴ ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ՀԱՑԵՐԸ»

(Սեպտեմբեր 20–22, 2000)

Երեւան, 2001

ԹԻՒ 17 ԹԱՖԻԷՆ

ԲՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՆՈՒԲԻ ՕՍՄԱՆԻԷԻ ՔԼԻՒՊԸ

Ատիկ եւս պահ մը թողուց իր երկու խօսակիցները եւ գնաց ողջունելու նորեկը:

– Ի՞նչ է կարծիքդ այս մարդուն վրայ, – հարցուց բժիչկը, երբ առանձին մնացին:

– Ատիկ Մարկոսեանի՞ վրայ:

– Այ՛...

– Շիտակը՝ չատ լաւ կարծիք մը չունիմ. բախտախնդիր առուփախաւին մէկն է:

– Ափսո՛ս... աս ամէն մարդ պիտի:

– Ուրիչ ի՞նչ ըլլայ:

– Այսինքն կասկածելի մէկը չէ՞:

– Չեմ կարծեր, – պատասխանեց փաստաբանը, – գոնէ ես մինչեւ հիմա այդպիսի բան մը չեմ լսած իր մասին. թէեւ բաւական մօտէն չարաբերութիւն ունեցած եմ հետը... տօլանաբերճիութիւնները չատ լսած եմ, բայց ուրիչ բան մը չեմ պիտեր:

– Իր ընթացքը քիչ մը տարօրինակ է. ամէն տեղ կը մտնէ, կ'ելլայ, – դիտել տուաւ բժիչկը:

– Ատիկա իր պաչտօնին հետեւանքն է. թուրք թերթերու լրաբեր է, ինչպէս նաեւ օտար թղթակիցներու ալ լուր կը հաղորդէ, հետեւաբար պէտք է, որ ամէն տեղ երթայ:

– Իրաւունք ունիս, – հաւանեցաւ բժիչկը:

Քիչ յետոյ Ատիկ վերադարձաւ կրկին երկու Հայերուն քով:

– Խեղճերը չատ իրար անցեր են, – փափաց խորհրդաւոր կերպով մը:

– Ինչո՞ համար, – հարցուց բժիչկը:

– Կ'երեւայ, որ Անգլիա զօրաւոր ճնշում մը ըրած է եւ պահանջած է, որ մինչեւ տասը օր Հայկական նահանգներու բարենորոգումներու ծրագիրը անփոփոխ ընդունի Թուրք կառավարութիւնը, հակառակ պարագային...

– Ի՞նչ պիտի ըլլայ հակառակ պարագային, – հարցուց փաստաբանը՝ տեսնելով, որ Ատիկ կը վարանէր իր խօսքը առաջ տանելու եւ կամ դիտմամբ այնպէս կ'ընէր իր խօսակիցներուն հետաքրքրութիւնը աւելի գրգռելու համար:

– Հակառակ պարագային տարբեր միջոցներու պիտի դիմեն եղեր:

– Այդ տեսակ խօսքեր չատ լսեցինք, – լաւ բժիչկը սկեպտիկ ժպիտով մը:

– Այս անգամ խնդիրը տարբեր գոյն առած է, – չարունակեց Ատիկ, – խնդիրը միմիայն Թուրքիոյ վրայ չէ, ո՛չ ալ Հայկական բարենորոգումներու վրայ... խնդիրը ազդեցութեան վրայ է. Անգլիա կ'ուզէ իր ուժը ցոյց տալ Գերմանիոյ եւ անոր հասկցնել թէ պիտի չներէ, որ Գերմանիա իր ուզածին պէս վարէ Թուրքիան... հոս է ահա՛ խնդիրը: Յաւելին այն է, որ Ռուսիա վերջին վայրկեանին թոյլ ընթացք մը ցոյց կու տայ... նոյնիսկ կարծես Թուրքիոյ կողմը կը հակի՝ ուժ տալով զերմանական քաղաքականութեան... դուք ալ հարկաւ լուր ունիք ասկէ:

– Ես բան մը չեմ դիտեր, – յայտարարեց բժիչկը:

– Էֆէնտին դիտնալու է, – ըսաւ Ատիկ՝ փաստաբանին դառնալով:

– Շիտակը՝ ես ալ այդ մասին բան մը չեմ լսած:

– Հիմա Ռուսիա կ'աչխատի, որ Հայերուն եւ Թուրքերուն մէջ ուղղակի բանակցութիւն կատարուի եւ համաձայնութիւն մը գոյանայ... լինչ որ չատ ալ դէշ պազարմա մը չէ... կարծեմ այս մասին նոյնիսկ ռուս դեսպանատունէն թելադրութիւններ եղած են Պատրիարքին:

– Զարմանալի բան, Ատի՛կ էֆէնտի, – ըսաւ փաստաբանը, – դուք անանկ տեղեկութիւններ ունիք, որ ես չեմ դիտեր, հակառակ որ Վարչութեան անդամ եմ...

– Կ'երեւայ որ Պատրիարքը չէ ուզած այս այցելութիւնը ձեղի յայտնել:

– Անկարելի է, որ այդպիսի կարեւոր բան մը մենէ ծածուկ պահէ, – ըսաւ փաստաբանը: – Կ'երեւայ, որ ձեր լսած լուրը սխալ է:

– Չէ՛, չատ աղէկ տեղէն դիտեմ, – պատասխանեց Ատիկ նուրբ ժպիտով մը, – բայց խնդիրը այն չէ... ես թէեւ ազգային գործերով չեմ զբաղիր, ո՛չ ալ կը հետաքրքրուիմ, բայց այս խնդրին մէջ կարծեմ թէ գործը գոյդ բռնելը աւելի խելացութիւն է: Միայն Անգլիոյ ու Ֆրանսայի ապաւինիլ եւ Թուրքերու հանդէպ թշնամական ընթացք մը բռնելը ո՛չ խելացութիւն է, ո՛չ ալ խոհեմութիւն... հիմա, որ այս մարդիկը նեղը մնացած են եւ չատ տրամադիր են Հայերուն զոհացում տալու, ճիշդ առեն է իրենց մօտենալու... չատ բան կրնաք ձեռք ձգել:

– Մնա՛ք բարով, ես չոգեկառքին պիտի հասնիմ – ըսաւ բժիչկը ժամացոյցը նայելով, – հազիւ քառորդ մը ժամանակ ունիմ:

Եւ հեռացաւ:

Ատիկ չարունակեց իր տեսութիւնը պարզել, մինչեւ որ փաստաբանն ալ, կարեւոր գործ մը պատրուակելով, հեռացաւ քովէն:

Ատիկ իր հայ խօսակիցները կրնար ըլլալէ ետքը վերադարձաւ Թուրքերուն մօտ, որոնց հետ սկսաւ տեսակցիլ խիստ մտերմօրէն:

Արդարեւ հոն հաւաքուղ էթէիհատականները այդ օրը չատ մտահոգ երեւոյթ մը ունէին, զանազան խումբերու բաժնուած, ցած ձայնով կը վիճէին օրուան քաղաքական կացութեան մասին:

Իրաւամբ, եւրոպական մէկ քանի պետութիւններ զգացած էին, որ եթէ անմիջապէս Հայկական բարենորոգումներու չձեռնարկուէր, կրնար դիմեալ միջամտութիւն մը յառաջ գալ: Ի՞նչ կերպով պիտի ըլլար այդ միջամտութիւնը: Այս բանն էր, որ ամէնէն աւելի կը զբաղեցնէր զիրենք:

(Շար. 49)

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տոքթոր եւ Տիկին Ազա Տանտիկեան եւ զաւակները եւ Ընդ. Մանիչակեան 1000 ֆրանք կը նուիրեն «Յառաջ»ի իրենց մօր եւ մեծ–մօր՝

ԳԼՈՐԱ ՇԻՐԵԱՆԻ

մահուան տարելիցին ի յիշատակ։

Կ'ՈՒԶՈՒԻ


Կը փնտռուի մինչեւ տարեվերջ (50 – 60) հայ կին մը ընկերութիւն ընելու համար տարեց կնոջ մը, Միլանոյի (Իտալիա) մէջ։ Սնունդ եւ բնակութիւն ապահովուած։

Հեռաձայնել՝ Պ. Սթամպուլեան
(39–02) 875 154 (*դրասենեակ*)
(39–02) 215 40 94 (*տունը*)

(Շար. Ա. էջէն)

իրենց միամանականութիւնը։ Պաղեստինցիներն արդէն կ'ըսեն՝ կրնան 100 զեկավար ապաննել, ոչինչ կը փոխուի։ Դէմ կ'արտայայտուին Իսրայէլի, բայց, նաեւ Միացեալ – Նահանգներու։ Պաղեստինի Ազատագրութեան ժողովրդական ճակատի քաղաքական բիւրոյի մէկ անդամը յայտարարած է «Մոնտ»ին. – «Ապու Ալի Մուսթաֆա սպաննուեցաւ Իսրայէլացիներու կողմէ Պուշի հրահանգով»։ Ինչ կը վերաբերի Պէյթ Ժալայի գրաւման, ան բանական ծաւալած է, 5 տուներ պարպուած են եւ գրաւուած է նաեւ լուտերական Եկեղեցւոյ մէկ որթանոցը ուր 50 պատանիներ կան, որոնք պատանդի վերածուած են։

Զէյնինոց Օկտիաբրակոյ գիւղին մէջ (Հարաւ – արեւելք) ռճգրափորձ մը դրծուած է Օգոստոս 26–ին, որու հետեւանքով 12 մեռեալ կայ (6 քաղաքացի եւ 6 Ռուսեր, որոնց 4–ը պինուորական)։ Արարքը գործուած էր թակարդ քեռնատար կառքի մը միջոցաւ։



ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

10e Grande Braderie de Noël

Շաբաթ, Կիրակի, Դեկտեմբեր 1 եւ 2

ՇԷՆ ՓՐԱՆՍԱ

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՐՍԷՅԼ. – Միհրաճ – Միշու Շալճեանի մահուան տարելիցին առթիւ եղած են հետեւեալ նուէրները։

Մարսէյլի Հայ Մշակոյթին Տան՝

Տէր եւ Տիկին Ա. Պօյաճեան, Շալճեան ընտանիք, Տէր եւ Տիկին Ալպէռ Պողոսեան 300–ական Ֆր., Տիկին Վ. Պօյաճեան, Տէր եւ Տիկին Վահրամ Ճառայեան, Տէր եւ Տիկին Սեպուհ Գարակիւլեան, Յովսէփեան ընտանիք 200–ական Ֆրանք, Տիկին Մարի Պէրպէրեան 150 Ֆրանք, Տէր եւ Տիկին Սեպուհ Ճանիկեան, Տէր եւ Տիկին Հրանդ Ճանիկեան 100–ական Ֆր., Տիկին Սէթրանոյ Խաչատուրեան, 200 Ֆր.։

«Յառաջ»ի բարգաւաճման՝

Շալճեան ընտանիք 500 Ֆր., Յովսէփեան ընտանիք 300 Ֆր., Տիկին Վարդուհի Պօյաճեան 200 Ֆր.։

50ème Anniversaire
du Pèlerinage
à SAINT-GREGOIRE
de TALLARD

ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ՏԱՐԵԿԱՆ
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Sous l'égide de
l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France

et avec le concours de
l'Association Cultuelle des Arméniens de GAP et des Hautes Alpes

Dimanche 9 septembre

à 10h30 — La Sainte Messe sera célebrée par
Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens de Rhône-Alpes

l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens du Sud de la France

Avec la participation de la Chorale
SAHAK - MESROP
sous la direction de
Khatchig YILMAZIAN

à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre
Renseignements & Réservations :

— **Cathédrale Arménienne de Marseille, tél. : 04 91 77 84 70**
— **Association Cultuelle des Arméniens de GAP, tél.: 04 92 51 71 80 / 04 92 51 00 87**

—— Participation aux frais ——
Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre S P I T A K
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

P r o g r a m m e : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՄԱՐՍԷՅԼԻ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ»

Մխիթեայ Հայ Վարժարանի
Դպրոցին դասընթացքները կը վերսկսին՝
Զորեքշաբթի, Հոկտեմբեր 10
առաւօտեան ժամը 10–ին
Սահակ – Մեսրոպ Մշակութային Կեդրոնի
Արծրունի Ջրպաշեան սրահին մէջ
339, av. du Prado, 13008 Marseille
Աւելի մանրամասնութիւններու եւ արձանագրութիւններու համար դիմել Մայր Եկեղեցւոյ Դիւանատուն։
Հեռաձայն. –
04 – 91 – 77 – 84 – 70

—— ● ——

ՖՐԱՆՍԱՀԱՅԱՑ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ
ՍՐԲԱԶԱՐՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին
Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալորիա կը դասաւանդուին. – Հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք։

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 *թիւին։*

— ● —

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(ԼԻՈՆ)

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի թուականն է Զորեքշաբթի Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին։

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Զորեքշաբթի, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16։

Աշակերտները կրնան օգտուիլ Զորեքշաբթի կէսօրուան ճաշէն։

Աւելցնել մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝
04 . 78 - 60 . 47 - 18
թիւին։

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— ● —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux
Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth Davidian: 01.46.65.81.53

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷՅԼ. – Գրիգոր Հոթոթեանի մահուան առթիւ Մարսէյլի Հայ Մշակոյթի Տունը չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները։

Տիկին Ազնիւ Հոթոթեան եւ Տէր եւ Տիկին Վանիկ Կրասեան 500–ական Ֆր., Սէն Ժերոմի Կապոյտ Խաչի Ջասւ Շանթ մասնաճիւղը 250 Ֆր.։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

***

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section d'Asnières
Au profit de la Colonie de Bellefontaine
Réservez votre soirée
du Samedi 20 octobre
GALA ARTISTIQUE ARMENIEN
avec l'**Ensemble folklorique arménien**
N A V A S A R T
Danseurs, musiciens, chanteurs **traditionnels**
au Grand Théâtre d'Asnières.

***

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
de la CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
organise
le SAMEDI 20 OCTOBRE
une **S O I R E E D A N S A N T E**
à la Salle des Fêtes,
rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre «G a ï d z a g' s»**

***

La Section «TER-DAVTIAN» de Chaville
de la Croix Bleue des Arméniens de France
organise
le Samedi 27 octobre
U N E S O I R E E D A N S A N T E
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

PELERINAGE A ROME

organisé par l'Eparchie de Sainte-Croix-de-Paris
du jeudi 4 au lundi 8 octobre
à l'occasion de la Béatification de
Mgr. IGNACE MALOYAN
Archevêque de Mardine, martyr en 1915.
le dimanche 7 octobre, sur la Place Saint-Pierre

Prix par personne : 4.200 F

Voyage en avion, hébergement en hôtel *** en pension complète, participation à la cérémonie de béatification, visite de Rome et de ses environs.

Réservations et inscriptions :
Eparchie: Tél.: **01 40 51 11 90.** Paroisse de Paris: Tél.: **01 44 59 23 50.**

Les inscriptions seront définitivement closes le 31 août.

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 31
VENDREDI
31 AOUT
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում) 1·500 Ֆ· (Շաբաթավերջի առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·241 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 77e ANNEE — N° 20.241

ԻՆՉԻ՛ ԿԸ ԾԱՌԱՅԷ ՀԱՅԵՒԹՈՒՐՔ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբի մը կազմութիւնը հակադրեցուցիչներու մնայուն թիրախի վերածուած է հայկական լրատուական շրջանակներու մէջ. այդ հակադրեցութիւնները չափազանց մեծ համբաւութեամբ ժխտական ըլլալով հանդերձ, ամէնդիմամէտ տարրեր ալ կան որոնք ամէն չանք ի գործ կը դնեն դրական երեւոյթի մը նկատելու համար նախաձեռնութիւնը։ Այս վերջիններուն արտայայտութիւններէն, յայտարարու – թիւններէն չափաւ դժուար չէ նշմարել թէ համոզումը չէ պիրենք խօսեցնողը, այլ՝ պարտաւորութիւններէ, կամ հարկէ ծնած կացութիւններ։

Ակնյայտ է իսկ կրկնութիւնը թէ – ինչպէս ամէն դէմ արտայայտուղ ալ կը չեշտէ–, հայութեան, հայկականին ապընդունած որեւէ երկխօսութիւն, այդ կարգին անշուշտ նաեւ հայեւթրքականը, ի յառաջագունէ ընդդիմութեան մը ոչ մէկ տրամաբանական պատճառ կրնայ ունենալ։ Սակայն, ինդրոյ առարկայ յանձնախումբին նման պարագայի մը երբ կազմութեաց չուրին հետ կը տրուի տեղեկութիւնն ալ թէ երկխօսութեան շրջանակէն դուրս ձգուած է ցեղասպանութեան նիւթը, այդ ճապկումէն յառուկ ոչ չունեցող ամէն մարդու բնական հակազդեցութիւնն է հարց տալ թէ ուրեմն, ինչ բանի «հաշտութեան» մասին է խօսը։

Նման հարցականներու բաւական պերճախօս պատասխան մըն է յանձնախումբին թուրք անդամներէն Էօ. Սանպէրքի այրեղջանեանց թերթի մէ ըրած յայտարարութիւնը թէ նախաձեռնութեան հիմնական նպատակը այրելք ըլլալ է ցեղասպանութեան ճանաչումի հարցին ամէն տարի ԱՄՆ–ու Գոնկրէսին ու արեւմտեան խորհրդարաններու օրակարգին վրայ առնելու երեւոյթին։ Այլ խօսքով, ինչպէս քաջատրած ալ է թուրք ուսանողէ մը, ամէնքան առնն որ հայեւթուրք երկխօսութեան մը պատրանքը կը տարունակուի, որեւէ երկրի խորհրդարան պիտի չհամաձեռնէ թուրքիան վարկաբեկելու միտող քննարկումի։ Այդ առումով ալ, բնական է որ թրքական կողմը զարմ ու թմբուկով յայտարարէ ու ա կամ նա պատճառով իր կատքին դուռածներու յայտարարել տայ թէ երկխօսութիւնը աչխոյժ ընթացքի մէջ է։ Որուն հոգ, թէ մեր ինքնակոչ քառասնին ամէն անգամ որ հարկը ներկայացայ, ձգնի լռնդունելի բսելիք մը ճարելու թէ ի՛նչ գործ ունի նման յանձնախումբի մէջ։ Ի վերջոյ, ամերիկեան եւ թրքական միացեալ բեմադրութեան հեղինակները չէ որ պիտի մտածէին հայ մասնակիցներու մասնակցելիք անելին, կամ անտրամաբանական կացութեան մասին. իսկ եթէ այդ մասնակցութեամբ իրենց նպատակին հետ կ'իրագործուի ներկայական պատակտումի վիճակ մըն ալ, ատիկա միայն յաւելեալ բարենիշ մը կընայ ըլլալ բեմադրիչներու ճարպիկութեան։

Այս մասին նորագոյն լուրերը տեղ տըւեր են հայ մասնակիցներէն Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ, ՀՀՇ–ու նախկին դեսպան ու ՀՀՇ–ի ներկայի նախագահ Ա. Արզումանեանի հարցազրոյցի մը ընթացքին կատարած տեղեկատուութեան թէ յանձնախումբին յաջորդող նիստը Սեպտեմբեր 23–ին կը կայանայ Պոլիս ուր այդ նպատակով կը մեկնի ինք։

Ինչ ընկալին մասնակցութիւն, անկախութեան տասնամեակի նշումնեբուն...։

Ա. ԹՈՓՈՃԵԱՆ

ՀԱՑԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

«ՇՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 29 / 30)

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԹԻՒԵՐՈՎ

Ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովուրդին կրած կորուստները արժեւորած է երեւանի ցեղասպանութեան թանգարանին տնօրէնը Լաւրենտի Բարսեղեան փոքր գրքոյկի մը մէջ։ Հոն ներկայացուած են նիւթական կորուստներուն հետ Արեւմտեան Հայաստանի բոլոր նահանգներու հայ բնակչութեան թիւերը, եղեռնէն առաջ եւ յետոյ։ Օրինակ, նըշուած է որ Վանի բնակիչ Հայերուն թիւը 1914–ին եղած է 197 հազար, 1922–ին իջած 500–ի։ Հեղինակը ըսած է թէ նիւթական կորուստներու թուային տուեալները կազմուած են իւրաքանչիւր հայ ընտանիքի կրած վնասին հաշիւով։ Ըստ կատարուած հաշուարկներու, ընդհանուր վնասը մօտաւորապէս կը կազմէ 14,5 միլիառ ֆրանսական ֆրանք միայն Արեւմտահայաստանի, 4 միլիառ 532 միլիոն ֆրանք ալ Հայաստանի ու Կովկասի հայարնակ գաւառներուն մէջ։

*
**

ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Երեւանի Հ. Աճառեան լեզուաբանութեան հիմնարկին մէջ ամփոփուած են արդիւնքները հայ բարբառագիտութեան առաջին միջպետական գիտաժողովին որ տեղի ունեցած է Օգոստոս 11 – 12 Սեփհանակերտի մէջ. ան կազմակերպուած էր Արցախի Մշակոյթի նախարարութեան եւ Փարիզի «Հայկական Ուսմանց Միութեան» կողմէ. մասնակցած են 65 գիտնականներ Հայաստանէն, Հոլանտայէն, ԱՄՆ–էն, Գերմանիայէն, Ֆրանսայէն, Իտալիայէն, եւ այլն։ «Հայկական Ուսմանց Միութեան» նախագահ եւ Փարիզի Հայագիտական ամպիոնի դեկավար Անահիտ Տօնապետեան ըսած է թէ գիտաժողովին գուգահեռ, արտասահմանցի գիտնականներուն համար Արցախի հա – մալսարանին հետ արցախեան բարբառին ուսումնասիրութեան դասընթացքներ կազմակերպուած են։ Անոնք նաեւ զանազան ըլլանններու մէջ տեղական բարբառով ձայնագրութիւններ ըրած, յետագայ ուսումնասիրութիւններու համար նիւթեր հաւաքած են։

*
**

ԼՂՀ

Կ. ԲԱԲԱՑԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Օգոստոս 30–ին Ստեփանակերտի մէջ կը սկսէր մայրաքաղաքին նախկին քաղաքապետ Կարէն Բարսեղեանի դատավարութիւնը։ Ան պաշտօնական դիրքի չարաշահումի եւ ապօրինի զէնք պահելու յանցանքներով ամբաստանուած էր եւ դատաքննութիւնը սկսած 1999 Նոյեմբեր 2–ին, տակաւին 2000 Մարտ 13–ին թղթածրարը դատախազութեան ղրկուած էր, լրացուցիչ նախաքննութեան։ Կ. Բաբայեան արդելափակուած է 1999 Մարտ 23–էն ի վեր։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՈՒԺԵՐԸ, Օգոստոս 30–ի վաղ առաւօտեան քաչուեցան Պէյթ Ժալայէն (Այրբորդանան) համաձայնութեան գալէ ետք Պաղեստինցիներուն հետ։ Նախորդ օրը, Արաֆաթ եւ Փերէս հետաձգնալին երեք խօսակցութիւններ ունեցած էին եւ համաձայնած հրադադարի մը շուրջ։ Միացեալ – Նահանգներու Արտաքին նախարարութիւնն ալ տեղեկացուցած էր Իսրայէլի կառավարութեան որ Ցահալի (իսրայէլեան բանակ) մուտք Պէյթ Ժալա կրնար միայն աւելի ծանրակչիռ դարձնել կացութիւնը եւ պէտք է քաչէր իր զօրքերը։ Ամէն պարագայի մէջ, մթնոլորտը լարուած կը մնայ։

ԻՐԱՆԻ Արտաքին գործերու փոխ – նախարար Ս. Ահանի եւ Ազրբէյճանի նախագահ Հ. Ալիեւ Օգոստոս 29–ին Բաքուի մէջ բանակցելով հանդերձ, չեն կրցած համաձայնութեան եզրի մը յանգիլ, կասպից ծովու քարիւղի պաշարներուն առընչուած վէճին մէջ։ Իրանի փոխ նախարարը յամառած է պնդել որ վիճայարոյց գօտիները պէտք է արգիլուած գլան հետազօտիչ նաւերու նաւարկութիւնէն, մինչ Հ. Ալիեւ կրկնած է թէ կը չարունակեն հետազօտական իրենց աշխատանքը։

ՖՐԱՆՍԱՑԻ ԱՐՏԱԲԻՒ ՆԱԽԱՐԱՐԸ՝ Հ. Վեարին, հարցազրոյցի մը մէջ «Ֆիկարօ»ին (Օգոստոս 30), կ'ըսէ թէ Ֆրանսա չատ մտահոգ է Լիբանանի քրիստոնեաներու գանգուածային ձերբակալութիւններէն, զորս «դէշ մեթոտներ» կ'որակէ։ Նաեւ հրէշային եւ վրդովեցուցիչ կը դտնէ Իսրայէլացիներու եւ Պաղեստինցիներու բախումներու սաստկացումը։ Վեարին Միացեալ – Նահանգները կ'ամբաստանէ իրենց կրաւորական դիրքին համար, աւելցնելով թէ անոնց սպառազականութիւնը ի վերջոյ զիրենք Պաղեստինցիներու կը վերածէ։

ՏՐՊԱՆԻ (Հարաւ Ափրիկէ) մէջ, Օգոստոս 31–ին կը բացուի ցեղասպանութեան դէմ Գ. համագումարը, որ կրնայ բուռն փոթորկալից ըլլալ։ Ափրիկեան բազմաթիւ երկիրներ, ինչպէս Զինաստանն կը պահանջեն որ նախկին գաղութարարները հրապարակաւ ներողութիւն խնդրեն։ Արդէն երկրին մէջ ալ, տեղ տեղ անցքերէն յուզաստախտակի մը վրայ կարելի է կարդալ «Սպիտակամորթերու արգիլուած գօտի»։

ԱԻՍՏՐԱԼԻԱ միշտ կը մերժէր ընդունիլ աֆղան գաղթականներով լեցուած նորվեկիական նաւ մը։ Վարչապետը անգամ մը եւս յայտնեց թէ ապաստան չի տար նաւուն, աւելին Խորհրդարանին առջեւ յայտարարեց թէ դէմած է աւստրալիական դինեալ ուժերուն, որպէսզի միջամտեն եւ նաւը ղրկեն միջազգային ջուրերու մէջ։ Նորվեկիական նաւը 438 պոթի փխրել կը փոխադրէ, զորս հաւաքած էր ինտոնեզիական ջուրերուն մէջ, օգնութեան հասնելով անոնց։ Գաղթականները ստիպած են նաւապետին որ Աւստրալիա երթայ, բայց այս վերջինը բացարձակապէս ընդացք չէ տուած, նոյնիսկ երբ ըսուած է թէ ծանր հիւանդներ կան։ Օգոստոս 30–ին, կացութիւնը անփոփոխ էր եւ լուծում չէր տեսնուեր։

ԱԼԺԻՒ կեդրոնը ռումբ մը պայթած է Օգոստոս 29–ին, չարժուն վաճառորդի մը մօտ, բանուկ փողոցի մը մէջ։ 34 վիրաւոր կար, ոմանք ծանր վիճակի մէջ էին։

ԵՐԿԱԹՈՒղիի գործադուլ մը անչարժութեան դատապարտեց ՓԱՖԱ–ի չըլնդ (Փրոֆանս – Գոթ տ'Ազիւր) Օգոստոս 30–ին։ Տոմսերու ատուգիչ պաշտօնեաներն են որոնք ձեռնարկած էին այդ չարժումին իրբեւ հետեւանք իրենց մէկ կին պաշտօնակիցին դէմ եղած բիրտ յարձակումին Թուլոն – Մարսէյլ ճեպընթացին մէջ, նախորդ օրը։ Երեք պատանիներ, առանց տոմսի, կը խանդարէին միւս ճամբորդները, երբ պաշտօնեայ կինը փորձած է միջամտել։ Երեքն ալ վրան յարձակած են, դուռը թացած եւ փորձած կինը գիծերուն վրայ նետել։ Կինը կատաղած մնացած է եւ երկու ճամբորդներու օգնութեամբ փրկուած, բայց, խորապէս ցնցուած է։ Երեք տղոցմէն մէկը յայտնած է խոյս տալ, միւս երկուքը 15 եւ 18 տարեկան ձերբակալուած են, արդէն դատական անցեալ ալ ունին։

ՕԹԱՆ–ի գինուորները, Օգոստոս 29–ին, յայտնած էին ՈՒՋԻՒՄ–ի դէնքերուն մէկ երրորդը ժողվել։ Ինչպէս որոշուած էր Մակեդոնացիներու հետ համաձայնութեամբ, Ալպանացի կեղծարները պէտք է գինաթափ ըլլային։

ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 22–ԻՆ առանց կատքի օր մը պիտի ըլլայ Փարիզի մէջ եւ բոլորովին ինքնատիպ բնոյթ պիտի առանայ։ Ամբողջ կեդրոնը, (1, 2, 3 եւ 4–րդ թաղամասեր) փակ պիտի ըլլայ երթեւեկին, ինչպէս նաեւ Մոնմարթրը, Վիլլէթ եւ Պուլոնըլի եւ Վէնսէնի անտառները եւ 14–րդ թաղամասի չրջապատը։

ՍՊԱՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՐՈՒԵՑՏԻ ծանօթ դերասանը՝ Ֆրանսիսքօ Ռապալ մեռաւ, 75 տարեկանին։ Ծանօթ էր մասնաւորապէս Պիւնիւէլի Նազարէն Ֆիլմով։

ՋԱՄՊԻԱՅի արքեպիսկոպոսը, որ Մուն ազանդին մէկ արարողութեամբ ամուսնացած էր դորէացի կնոջ մը հետ, ապա դղջում յայտնած եւ վատիկան ապաստանած, կրցաւ տեսնել իր կինը դուրկ կը սիրէ «քրոջ մը պէս»։

ԻՐԱՆԵԱՆ ՇԱՐԺԱՆԿԱՐի բեմադիր՝ Թահմինէհ Միլանի ձերբակալուած է, ապա, բանտ նետուած Օգոստոս 27–ին, այն ամբաստանութեամբ որ Իսլամը նախատած է իր վերջին ֆիլմին մէջ։ Թէհրանի Հիսուն Հալֆ ֆիլմը քաղուած է պարսկական վէպէ մը եւ պատմութիւնն է ամուսնացած կնոջ մը եւ լմփոստի մը միջեւ 80–ական թուականներու սկիզբի քաղաքական խռովութեանց առեն։

ՀԱՆԳԻՍՏ ԳՆԵԼ ԱՐՔ. ՃԷՐԷՃԵԱՆԻ

Կիրակի, Օգոստոս 26–ին, վախճանած է Դամասկոսի թեմին առաջնորդը՝ Գնել Արք· Ճէրէճեան։ Ծնած էր 1915–ին, Աստանա։ Կուսակրօն վարդապետ ձեռնադրուած էր 1937–ին, 1958–ին ալ Հալէպի մէջ եպիսկոպոս կը ձեռնադրուէր ձեռամբ Արտաւազդ Արք· Սիւրմէեանի։ Անթիլիասի մէջ վարած է ուսուցչական պաշտօն (երաժչտութիւն), նաեւ հովուական պաշտօն Հաճընի մէջ։

Թաղման կարգը կը կատարուի Ուրբաթ Օգոստոս 31–ին ձեռամբ Հարաւային Ֆրանսայի կաթողիկոսական Պատուիրակի Փոխանորդ՝ Տարօն Եպիսկոպոս ՃԷրէճեանի։

Անկախ քաղաքացիները Հայաստանեան Մամուլէն

Սփիւռքը մեծարող մեծագոհի ալ կայ…

… (Համահայկական) խաղերի հետ կապուած պրոբլեմները պարզելուց յետոյ Երեւանի քաղաքապետ Ռ. Նազարեանը հաշուի առնելով առաջին խաղերի ժամանակ Հայաստանցիների ու Սփիւռքահայերի մէջ տեղի ունեցած ծեծուկռիւները, որոշեց քրիստոնէական կոչ անել խաղերի պատասխանատուներին. «Ես կը խնդրէի որ բոլորին հրահանգաւորէք. եթէ նոյնիսկ մեր տղաներին սիւռքահայերը մի հատ խփեն, թող պատասխան չտան: Մենք տան տէր ենք եւ պարտաւոր ենք աւելի մեծահոգի լինել: Իսկ եթէ մէկ-մէկ չափերն անցընում են, դա բնական է: Ներանց ցանկացած կապրիզը հարկաւոր է ընդունել որպէս խնդրանք եւ հնարաւորութեան սահմաններում իրագործել»:

«Հայկական ժամանակ» – Օգս. 17

Եւ տակաւին պնդողներ կան որ 1700-ամեակը փառամոլութենէն տարբեր բանի ծառայած չէ…:

*
**

Քաղաքացիութիւն, ծննդավայր եւ աշխարհագրութեան դաս

«Նախագահ Ռ. Քոչարեան հրամանագրի է ստորագրել Բաֆֆի Յովհաննիսեանին Հայաստանի քաղաքացիութիւն շնորհելու մասին: Ջաւեշտական է սակայն որ հրամանագրում նշւում է թէ Ր. Յովհաննիսեանը ծնուել է Գալիֆորնիա քաղաքում, այնինչ, նման քաղաք գոյութիւն չունի: Ի հարկէ, հասկնալի է որ նախագահի հրամանագրի տեքստը պատրաստել են նրա օգնականները: Բայց փաստը մնում է փաստ որ այս տեքստը ըստ էութեան, անցել է ողջ նախագահականի ձեռքի տակով, հասել Բաֆֆի Յովհաննիսեանին, ու վերջինս է մնայն նկատել այդ անհեթեթութիւնը»:

«Հայկական ժամանակ» – Օգս. 18

Հայաստանի անկախութեան Արտաքին գործերու առաջին, «իմպըրտնի հայ» նախարարը որ հայաստանեանին սիրոյն քանի մը տարի առաջ հրաժարած էր իր ամերիկեան քաղաքացիութենէն ու մնացած առանց քաղաքացիութեան, արժանի է արտագին «անցած ըլլա՛յ»ի մը, քանի որ մազապուրծ փրկուած է առանց ծննդավայրի ալ մնալու վտանգէն: Ինչ կը վերաբերի «նախագահական»ին որուն ձեռքին տակէն անցած է «Գալիֆորնիա քաղաք» նշումը, հաւանօրէն չուտով կը յայտարարուի թէ «աշխարհագրութիւն է պատասխալմամ»…:

*
**

Իրատեսութեան աւելորդ կաթիլը

«Ո՞վ է այսօր հրապարակաւ նշում թէ քանի երեխայից է խլուել նրա մանկութիւնը, ոտնահարուել արժանապատուութիւնը: Որքա՞ն է այն ընտանիքների թիւը, որոնցում երեխան է պահում ընտանիքը:

Չեն հրապարակում, որովհետեւ սարսափելի կը լինի նման թիւ հրապարակելը: Բայց ի լուր աշխարհի յայտարարում են, որ երկիրը զարգացում է ունեցել: Ի՞նչ զարգացում, ա՞յն որ օրէցօր աւելանում է աղքատ ընտանիքների երեխաների թիւը:

Ես անասելի ցաւ եմ զգում, չէ՞ որ աղքատ ընտանիքների երեխաները իմ հասակակիցներն են, մանկութիւնից զրկուած»:

Լիլիթ Ալաբեան
Երեւան, Թիւ 27 դպրոց,
Ը. դասարան
«Կանչ» – Օգոստոս 15

«Աւելորդ չիշեցում. կան նաեւ մուրացողները, պանդոկներու մուտքին, ճաշարաններու, սրճարաններու մէջ մինչեւ դիչերուան ուշ ժամերը վարդ մը, կամ մեխակ մը ծախելու համար ոչ միայն մանկութիւն վրայ տուողները…»:

*
**

Այս լեզուն իմ տունս չէ, ոչ իսկ ախոռս

… «Ինչ որ մեզանից էր կախուած, ամիսներ առաջ պատրաստ էր. սցենար, պաշտիտուր, էսքիզներ, եւ այլն: Բայց

ՓՈԽԱՆ ՏՈՄՈՒ

Ինչ գէշ բան է վարժութիւնը…

Անցեալ դիչերուան պատահածը, սկսած է դիս մտահոգել:

Ընթրիքի նստած էի, շատ համակրելի չորս ծանօթներու հետ, երկու վրոփէսէօրներ եւ իրենց կիները:

Խօսակցութիւնը հաճելի էր, կերակուրները նրբաճաշակ եւ համեղ, ընտիր գինի եւ անսայթաք ծառայութիւն:

Պատահեցաւ որ, չորս սեղանակիցներս ալ, տարբեր պահերու, հեռաձայն ստացանք, իրենց բժիչկային գործիքներու վրայ: Իւրաքանչիւրը տարբեր կերպով հակազդեց:

Առաջին երկուքը, արագ ոստումով, հեռացան սեղանէն, անկիւն մը քաշուելով, խորհելով անչուշտ թէ անկրթութիւն է սեղանին վրայ խօսիլը:

Երրորդը, անհոգ, տեղէն գոյղն չարժուն մի հակ չըրաւ, եւ առանց չատ ձայնը բարձրացնելու, ոչ ալ ցած ձայնով անչուշտ, մեզ դիմացը առած, երկարօրէն խօսակցութիւնը առաջ տարաւ:

Զորրորդը, ներզործական դիրքի մէջ էր, քանի մը թացաւ հեռաձայնը, եւ միւս երեքին հետ, երբեմն – երբեմն խորհրդակցելով, կը պատասխանէր իր խօսակիցին, վստահարար գործի վերաբերեալ հարցերով:

Այս էր, անցեալ դիչեր դլխուս եկածը. ոչ մէկ տարօրինակութիւն մինչեւ հոս: Նման բաներ սովորական դարձած են այլեւս, գրեթէ ամէն տեղ:

Այս բոլորին մէջ, միակ տարօրինակութիւնը, իմ հակազդեցութիւնս էր: Առ հասարակ յաւուկ տարադրայնութիւն ունիմ բժիչկային հեռախօսներու հանդէպ, այնքան որ, քարոզի կամ բանախօսութեանս ընթացքին, եթէ անոր զանգը հնչէ, անմիջապէս կանդ կ'առնեմ, չկրնալով խօսակցութիւնս կեդրոնացու – մով չարունակել … եւ սակայն, հակառակ անհանդուրժող նման զգացումներուս, անցեալ դիչերուան չորս բժիչկային խօսակցութիւնները, ընթրիքի պահուն, գիս հիմնովին անտարբեր ձգեցին…:

Սկսած եմ մտահոգուիլ: Բան մը փոխուած է մէջս: Տարիքի՞ հարց է. այդչափ ալ մեծ չեմ. ես կարծեմ պարզապէս վարժութեան հարց է: Մտահոգիչը հոն է:

Կը յիչեմ, երիտասարդ օրերուս, վենետիկի նրբանցքները ման գալով, որքա՜ն կ'երթ, հագուած չքուած զոյգերու կը հանդիպէի, որ ընտիր Ֆրանսերէնով, կամ օքսֆորտեան անգլերէնով, քայլ առ քայլ կը բառաչանային, իւրաքանչիւր հրաչալիքի առջեւ կանդ առնելով եւ արեւառի դեղեցկութիւնը չմթոչնելով:

Այսօր, տարիներ վերջ, նոյն հրաչք քաղաքին մէջ, քալելը դարձած է անտանելի, ամբողջական խումբեր, չըսելու համար ոչխարի հօտեր, թափթփած եւ կխսամերկ, չաճախ աւելի մօտիկ Ամազոնի անտառներու բնակիչներուն՝ քան քաղաքակիրթ ժողովուրդի մը վայել կեցուածքով, մէկ մեթր քառասուն փոքրիկ ձախոնցիներ եւ ձախոնուհիներ, վրձխնահարուած եւ չիկահեր գլուխներով, պորտը բաց զանգուածային հնդիկ մայրեր եւ մեծ մայրեր, ածուխի պէս սեւ Նիժերիացիներ, կերպչնկալէ կեղծ պայուսակները վուած սաւանի մը վրայ, եւ մանչ – աղջիկի նմանող մանր Զինացիներ, հնարամիտ խաղալիքներ չարած նեղ կամուրջներու վրայ, փոխանակ նուրբ եւ դունագեղ Ֆրանսերէնի եւ չէքսփիրեան հարուստ լեզուին, բարձրաձայն, կապկոնման ճիչեր կ'արձակեն, միավանկ, պայթուցիկ, խլացուցիչ արտայայտութիւններով, կամուրջէ կամուրջ, քենիչ ոստիկանութեան մը ոտնաձայնը հաղորդելու իրարու եւ փախուստի ճամբաները միասնաբար որոնելու…:

Ուրեմն կարելի է եղեր ամէն բանի վարժուիլ: Ո՞ւր կրնանք վերջնանալ այս ընթացքով… ճիշդ է. եթէ ամէնն ինչի վարժուինք, ուզենք – չուզենք տեսակ մը խաղաղութիւն կը գտնենք… բայց ի վերնաս որո՞ւ. որակաւոր կեանքին:

Հ. Ց. Պ.

ՊԱՏՄԱԿԱՆ

Պատրիարքութիւն Հայոց Թուրքիոյ

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը ակիզբ կ'առնէ 1461-ին Մուհամմէտ Բ. Ֆաթիհ Սուլթանին հրամանագիրով:

1453 Մայիս 23-ին, երբ Օսմանցիները կը գրաւեն Կ. Պոլիսը, հոն արդէն հայ կրօնական համայնք մը գոյութիւն ունէր 572 թուականէն սկսեալ:

9 – 11-րդ դարերուն, երբ Բիւզանդիոնի պահին վրայ կ'իչխէին ծագումով հայ կայսրեր, օր չատ օրէ կը յաղմանար Կ. Պոլսոյ հայ բնակչութիւնը: Անոնք կուգային ուսում առնելու եւ վաճառականութեան համար եւ հոն հաստատուելով տեղացի կը դառնային:

Միքայէլ Ասորիի (1126 – 1199) պատմագիրքէն կը տեղեկանանք, թէ՝

«Մինչեւ Ալեքսիս կայսեր ժամանակ մեր ազգը եւ Հայոց ազգը մէյ մէկ եկեղեցի ունէին Կ. Պոլսոյ մէջ, եւ իւրաքանչիւր եկեղեցւոյ մէջ կային՝ քահանայ մը, աշխարհական վաճառականներու մարմին մը եւ ուրիշներ»: Ապա, Կիւլխէրեան կ'աւելցնէ թէ Բաղկեդոնական խնդիրներու հետեւանքով Ալեքսիս Ա. Կոմնենոս (1081 – 1111) այրել տուաւ այդ երկու եկեղեցիները եւ անոնց սրբութիւնները փողոց թափելով առաքուր կոխել տուաւ մոլեռանդ ամբոխին:

Գիտենք նաեւ թէ Յուսիկ Եպիսկոպոս Սահինպոլոյ ներկայ էր Սիսի ժողովին, 1307 Մարտ 19-ին:

Դարձեալ գիտենք որ 1360 – 61-ին Ղալաթիոյ մէջ Հայք ունէին եկեղեցի մը՝ նուիրուած Սրբոյն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսի:

Այս բոլորը պատմական ապացոյցներ են եւ կը հաստատեն թէ Հայք չատ հին ժամանակներու մէջ հաստատուած դաղութ մը կը կազմէին Կ. Պոլսոյ մէջ իրենց եկեղեցիներով եւ եպիսկոպոսներով» (Պատ. Կթղ. Կիլիկիոյ էջ 27):

Մուհամմէտ Բ. Կ. Պոլսոյ յոյն բնակչութիւնը սիրաչահելու համար, անոնց պատրիարքին իչխանութիւն տուաւ քրիստոնէական կրօնքին սկզբունքներուն համաձայն ղեկավարել հօտը: «Այս կերպով, կ'ըսէ Օսմանեան, կրօնական պետին իրաւասութեան ներքեւ անցան այն խնդիրներն եւ գործերը, որոնք կը պատկանին քրիստոնեաներուն ընդհանուր կեանքին, ամուսնական խնդիրներուն, ընդհանուր դաստիարակութեան, բարեգործական հաստատութեանց, կրօնական պահանջից, եկեղեցական պաչտօնէից, կրօնապատական գործոց եւ այլն» (Հայոց Եկեղեցին. էջ 69):

Աչխարհակալ կայսրը դիւանագիտի խորամանկութեամբ ու վարչապետի խոհեմութեամբ յոյն քրիստոնեայ տարբեր հակակշռելու մտահոգութեամբ կազմակերպեց իրեն ենթակայ Հայերը եւ Յովակիմ Եպիսկոպոսը, Ճանչցաւ իբրեւ Հայոց պատրիարք, իրեն Աթոռ նշանակելով՝ Սուլտանահասթըրի, Սուրբ Գէորգ Եկեղեցին:

Պատմաբան Ահմէտ Րէֆիք ուսումնասիրելով Օսմանեան պետութեան հին վաւերաթուղթերը, կ'ըսէ.

«Ֆաթիհ Իսթանպուլը գրաւելէն յետոյ Անատոլուէն Թուրքեր եւ Հայեր փոխադրեց Իսթանպուլ՝ Յոյներուն ազդեցութիւնը կտրելու համար: Հայերը տեղաւորեց Գալաթի մէջ, իսկ 1461-ին ալ Պրուսացի Յովակիմ Եպիսկոպոսը պատրիարք նշանակեց ամբողջ Թուրքիոյ Հայերուն: Այս կերպով Հայոց Պատրիարքութիւնն մը հաստատեց յոյն պատրիարքութեան կողքին» (Տե՛ս Սիրունի, Պոլիս եւ իր դերը, Ա. հատ. էջ 204 – 205): Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ նորամուծ է Սուլթանի մը ֆերմանով պատրիարքութիւն հաստատուիլը:

Ըստ Զամչեանի (1738 – 1823) Մուհամմէտ Բ. Ֆաթիհ Պրուսայէն բերել տուած է Յովհաննէս Եպիսկոպոսը եւ նչանակած Կ. Պոլսոյ Պատրիարք: Սակայն, Բարզէն Կաթողիկոս հիմնուելով 1438-ին գրուած գիրքի մը յիչատակարանին վրայ, հաւանական կը նկատէ որ 1438-ին Յովակիմ Արքեպիսկոպոս յիչուած կ. Պոլսոյ աթոռին, 1438-ին առաջ Պրուսայի Եպիսկոպոս եղած ըլլալ է եւ Ֆաթիհի բարեկամ. իր մեկնութեամբ, «1438-ին գրուած Ձեռնարկութեան գիրք մը, Տրապիզոնցի Յակոբ Արեզայի մը ձեռքով, կը հաստատէ որ այդ ատենին արդէն Կ. Պոլսի աթոռին վրայ տարին արդէն Կ. Պոլսի աթոռին վրայ տարին արդէն Կ. Պոլսի աթոռին վրայ տար

նար իր ուրոյն կազմութեան հիմք» (Ագպ. Բ. հար. էջ 2186):

Սիրունին իր պրպտումներու վրայ հիմնուելով կ'եզրակացնէ թէ Հայեր մեծ չորս եկեղեցիներ ունեցած են Ֆաթիհի օրով.

Ա. – Ղալաթիոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին՝ կառուցուած 1391–ին:

Բ. – Սամաթիոյ Սուրբ Գէորգ եկեղեցին, որ Սուլթանը Ջոյներէն գրաւելով Հայերու տուած է:

Գ.– Խերնէքարուի Ս. Նիկողայոս եկեղեցին, որ կը պահպանէր Հայերուն ու Լատիններուն հաւասարապէս: Ան Կ. Պոլսոյ մտաւորական կեդրոններէն եղած է ուր Ամիրտովլաթ Ամասիացին (1416? – 1496) 1471–ին հեղինակած է իր «Բառարան բժշկական անուանց» աշխատութիւնը. իսկ Արզար Դպիր Թոխաթեցի (մահճանած 1572) հոն հիմնած է Կ. Պոլսի առաջին տպարանը ու հրատարակած փոքր քերականութիւն, Պարզատոմար ժամագիրք եւ այլ երկեր:

Դ. – Սուրբ Աստուածածնին, որ ըստ Փիրեաանի Սամաթիոյ Սուլումանաստիլի Սուրբ Գէորգ եկեղեցին է (Տե՛ս նոյն Անդ. էջ 235 – 255):

1643 թուականին Թուրքիոյ Հայոց պատրիարքարանը կը տեղափոխուի Գումգափու:

Մայրաքաղաքին մէջ յաճախակի պատահած հրդեհներու պատճառով սկզբնաղբիւրներ ու վաւերագրերը չեն հասած մեզի առաւել տեղեակ դառնալու Թրքահայոց պատրիարքութեան սկզբնական շրջանի պատմութեան: Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեան (1637 – 1695) որ «Ստամպօլա Պատմութիւն»ը գրած է 62 հրդեհ լրջած է 1615 – 1694 տարիներու ընթացքին:

Հետաքրքրական է նաեւ նկատել որ հայկական յիշատակարաններուն մէջ պատրիարքութեան պաշտօնին տեղ «հայրապետութիւն» անունը յիշատակուած է: Օրինակի համար, 1474–ին Ամիրտովլաթի «Թամկական Գիրք»ի յիշատակարանին մէջ գրուած է «ի Հայրապետութեան Տէր Յովակիմայ Արքեպիսկոպոսին»: Առաջին անգամ Մաղաքիա գործածած է Պատրիարքութիւն բառը, երբ արձանագրելով 1567–ին Կ. Պոլսոյ մէջ տպուած առաջին գիրքը՝ Պօղոս Պարսի «Փոքր Քերականութիւն»ը, գրած է «ի հորդորդ ամի պատրիարքութեան Ցակոբ Բարսեղեան Կոստանդնուպոլսոյ» (Զարբհանալեան, Պատմ. Հայ Տպագրութեան էջ 47):

Թուրքիոյ Հայոց պատրիարքութեան հաստատումով ժամանակի ընթացքին գործայար Կ. Պոլսոյ աթոռին հեղինակութիւնը եւ որու իշխանութիւնը տարածուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ու Երուսաղէմի պատրիարքութեան վրայ, որու ընթացքին գործացան Կ. Պոլսոյ եւ Էջմիածնի յարաբերութիւնները: Օրմանեան Սրբազանի տեսութեամբ:

«Կ. Պոլսոյ հայ պատրիարքները սկսան հետզհետէ իրենց իշխանութիւնը կազմակերպել եւ իրաւասութիւնները կեդրոնացընել, եւ հնարաւորութեան սահմանին մէջ՝ իրենց ձեռքը ամփոփել ազգային ամբողջ վարչութիւնը: Իրենց վարչական գործունէութիւնը հետզհետէ տարածուեցաւ կայսրութեան բոլոր պատառներուն վրայ, նոյնիսկ հոգեւորապէս՝ Սսոյ եւ Աղթամարայ կաթողիկոսութեանց եւ Երուսաղէմի պատրիարքութեան պատկանեալ թեմերուն վրայ: Հայոց պատրիարքութեան առաջին տարիներու պատմութիւնը՝ աթոռներու եւ թեմերու վիճաբարձ խնդիրներու չարք մըն է, չարունակ քաղաքական խռովութիւններու եւ պատերազմական չփոթութիւններու հետ խառնուած» (Հայոց Եկեղ. էջ 70):

Մեծ եղեռնէն յետոյ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը կորնգուցած է իր ազդեցութիւնը, դառնալով Թուրքիոյ Հայութեան հոգեւոր ներկայացուցիչը յաչս կառավարութեան:

ԲԱՔԳԻՆ ԹՕՓՃԵԱՆ

«Սիոն» (4–5–6, 2001)

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՅ ԳՈՒՅՔ

Մէկը հարցնում է ծանօթին.

– Ասում են, թէ դու յայտարարել ես, որ բարձրագոյն կրթութիւն չունես:

– Ճիշդ է:

– Բայց չէ՞ որ երկու համալսարան ես աւարտել: Ինչո՞ւ ես նման բան յայտարարել:

– Ուզում եմ պետական բարձր պաշտօն ստանալ:

ՆՈՊԷԼԵԱՆ ԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ՊԵՐԹԱ ՖՈՆ ՍՈՒՏՆԵՐ

Աւստրիացի խաղաղասէր այս կինը ազգած է Ալֆրէտ Նոպէլի քարտուղարուհին: Անոր «Զէնիթերը վար» վէպը մեծ յաջողութիւն արձանագրած է 1885–ին: 1891–ին հիմնած է Խաղաղութեան աւստրիական յանձնախումբը: Ան շատ հաւանարար մեծ ազդեցութիւն գործած է Ալֆրէտ Նոպէլի վրայ եւ Նոպէլեան մրցանակի առեղծուածէն տասը տարի առաջ, 1905–ին հանդիսացած է Նոպէլեան խաղաղութեան առաջին կին մրցանակակիրը:

ՋԻՅՆ ԱՏԱՄՉ

Ամերիկացի ընկերվարական ձէյն Ատամզ գործած է ի նպաստ ներգաղթողներու եւ պայքարած է մանուկներու աշխատանքին դէմ: 1915–ին ան հիմնած է Խաղաղութեան եւ Ազատութեան Կնոջական Միջազգային Ընկերակցութիւնը:

Ատամզ 1931–ին պարգեւատրուած է Նոպէլեան մրցանակով:

ԷՄԻԼԻ ԿՐԻՆ ՊԱԼՉ

Ամերիկացի տնտեսագիտուհի Էմիլի Կրին Պալչ գրած է բազմաթիւ գիրքեր՝ կիներու ապրած պայմաններուն մասին: Տրուած լլլալով, որ ան հարուստ եղած է, հիմնած է ընկերային կեդրոններ:

1946–ին ան արժանացած է Նոպէլեան մրցանակի:

ՊԻԹԻ ՈՒԻԼԻԱՄՋ

Իրլանտացի կաթողիկէ խաղաղապահ Պիթի Ուիլիամզ կը հիմնէ Ուիմընէի'զ Փիս Մուվմընթը, որ կը պայքարի Հիւսիսային Իրլանտայի ճակատամարտերուն դէմ: Ան կը կազմակերպէ խաղաղութեան ի նպաստ կնոջական քայլարշաւներ՝ հաւաքելով հակամարտ կողմերու հազարաւոր կիներ:

Աւետարանական իր գործակիցին հետ ան կը բաժնէ 1977–ի Նոպէլեան մրցանակը:

ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱ

1979–ին ամբողջ աշխարհը կը յայտնաբերէ արտասովոր անձնաւորութիւն մը՝ Մայր Թերեզան: Այս տարեց կրօնականը 30 տարի նուիրուած է Կալկաթայի աղքատ թաղամասերու թշուառներու հոգեկան եւ բարոյական աջակցութեան՝ անհատմոռ կերպով զոհուելով անոնց համար:

1979–ին ան կը վարձատրուի Նոպէլեան մրցանակով:

ԱԼ ԿԱ ՄԻՐՏԱԼ

Շուէտացի ֆեմինիստ՝ ան կը նպաստէ ընկերային մեծ բարեկարգումներու իրագործման: 1949–ին կը նախագահէ ՄԱԿ–ի ընկերային հարցերու յանձնախումբին: Աւելի ուշ կը դլխաւորէ ապազինման ի նպաստ անոր գործունէութիւնը զոյն արժանացուց 1982–ին Նոպէլեան մրցանակին:

ԱՆԿ ՍԱՆ ՍՈՒ ՉԻ

Պուրմայի ընդդիմադիր ճակատի ղեկավար Անկ Սան Սու Չի կը դատապարտէ թմրեցուցիչի առեւտուրը, որուն մեղսակից կը նկատէ երկրին իշխանութիւնները:

1991–ին կը ստանայ Նոպէլեան խաղաղութեան մրցանակը՝ ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւունքներու ի նպաստ իր նախաձեռնութիւններուն համար: Սակայն տնային կալանքի տակ գտնուելով՝ Շուէտ չի ներկայանար իր մրցանակը ստանալու համար:

ՌԻԿՈՊԵՐԹԱ ՄԵՆՇՈՒ

Կուաթեմալացի կարմրամորթ Ռիկոպերթա Մենչու 1992ին Նոպէլեան խաղաղութեան մրցանակը կը ստանայ ընկերային արդարութեանց ի նպաստ իր տարած գործունէութեան եւ զանազան պինդեալ խմբակներու միջեւ հաշտութիւն գոյացնելուն համար:

ԹԻ 17 ԹԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՆՈՒՐԻ ՕՍՄԱՆԻԷԻ ՔԼԻՒՊԸ

– Ըստ իս, Անգլիոյ ըրածը պարզ պլաֆ մըն է, – կ'ըսէր Ջոջ Լթթիհատական մը իր շուրջը հաւաքուած անձերուն, – Անգլիա կը սպառնայ, բայց բան մըն ալ չընե՞... չէ՞ք յիշեր Ապտիւլ Համիտի ժամանակն ալ, Սասունի դէպքերէն ետքը, այդ տեսակ սպառնալիքներ եղան փարամներու մէջ, իսկ երբ գործելու վայրկեանը հասաւ, ելան յայտարարեցին, թէ իրենց նաւատորմիղը չեն կրնար մինչեւ Արարատ տանիլ...

– Այն ատեն տարբեր էր, – դիտել տուաւ ուրիշ մը, – դեռ Պալքանեան պատերազմէ չէր եղած, Տրիպոլիս, Ռումելի, Պիսիդեզագոս մեր ձեռքն էին, Թուրքիոյ հայ ամէնքը աչք ունէին, ընդդիմամարտ ըլլալու համար կային, եւ դիւրին չէր զինուորագրութեան դործողութիւններու ձեռնարկել առանց ընդհանուր խառնաչփոթութիւն մը առաջ բերելու, մինչդեռ հիմա այնպէս չէ... ձեռքերնիս շատ քիչ բան մնացած է, եւ իրենց մէջ համաձայնութիւնը աւելի դիւրին կը գտնայ... ես համոզուած եմ, որ այս անգամ իրաւունէ ճնշումն մը պիտի դիմեն՝ եթէ չկրնանք այս խնդրին մէջէն ելլելու ճար մը գտնել:

– Ուրեմն հիմա անգլիական նաւատորմիղը մինչեւ Արարատ կրնա՞յ երթալ, – հարցուց մէկը ծաղրական քմծիծաղով մը:

– Արարատ երթալու պէտք չունի:

– Տարատանէ՞լը պիտի բռնաթարէ եւ Պոլի՞ս պիտի մտնէ:

– Աւոր ալ պէտք չի կար:

– Ուրեմն ի՞նչ բանէ կը վախնաս:

– Պարզապէս ծովային պաշարումէ մը ... եթէ այսօր Անգլիա եւ Ֆրանսա համաձայնին եւ Տարատանէլի նեղուցը փակէ ու միւս կողմէ սուրիական ծովեզերքը պաշարեն, ի՞նչ կ'ըլլայ մեր վիճակը... առանց մարդ մը կորնգնելու, առանց թնդանօթ մը նետելու կրնան մեր խեղը անիծել:

– Բայց Գերմանիա՞...

– Ի՞նչ վստահութիւն ունիս, որ Գերմանիա մեզի պիտի պաշտպանէ, դաշնակցութիւն մը ունի՞նք միասին: Մեր չահը կը պահանջէ, որ այս բարենորոգումներու հարցը կարպատրենք անմիջապէս եւ տեղի չի տանք այդ տեսակ ճնշումի մը, որ պարզապէս երեւան պիտի հանէ մեր տկարութիւնը:

– Բայց եթէ բարենորոգումները դադրեցնենք այն կերպով, ինչպէս կը պահանջուի, գիտցի՛ք, որ տասը տարին չանցած այս երկրին թո՛ւն տէրերը Հայերը պիտի ըլլան, եւ մենք անոնց բստրուկները...

– Բայց չգործադրելով դարձեալ փորձանքէն պիտի չազատինք, քանի որ մեր վրայ պիտի հրաւիրենք եւրոպական միջամտութիւն մը:

– Մեր ճարպկութիւնը պիտի ըլլայ ահա՛ ո՛չ Հայկակաղ բարենորոգութիւնները գործադրել եւ ո՛չ ալ եւրոպական միջամտութեան մը տեղի տալ...

– Աւելի լաւ միջոց պէտք է գըտնել:

– Միջոցը պարզապէս խնդիրը ձգձգելն է, մինչեւ որ ուրիշ աւելի կարեւոր խնդիր մը ծագի ու բարենորոգումներու հարցը մէկ կողմ թողուի... այս միջոցը չատ անգամներ յաջողած է եւ կրնայ այս անգամ ալ յաջողիլ... ահա՛ ասոր համար պէտք է, որ մենք նոր բանակցութեան մը սկսինք Հայերուն հետ... եթէ որեւէ օգուտ ալ չունենայ, գոնէ ժամանակ կը շահինք...

Այն, որ այս խօսքերը կ'արտասանէր, երկայնահասակ, չոր, սեւ պեխերով ու կորովի դիմագիծներով թուրք երիտասարդ մըն էր, Իթթիհատի վարիչ ուժերէն մէկը:

Իր տեսութիւնը առաջ տարաւ՝ աւելի մանրամասնութիւններու մէջ մտնելով: Ամէնքը ուշադիր մտիկ կ'ընէին իրեն, եւ չատեր համամտութիւն ցոյց կու տային իր յայտնած դաղափարներուն:

– Բայց, – առարկեց մէկերնէն մէկը, – դժբախտաբար Հայերը կասկածելի վերաբերում մը ցոյց կու տան կոր մեզի հանդէպ եւ քնաւ մեզի մօտենալու փափաք ցոյց չեն տար կոր:

– Դեռ այս մասին մեր կողմէն վճռական քայլ մը չատնինք, անոր համար, – պատասխանեց երիտասարդ Իթթիհատականը, – այսուհանդերձ ես գիտեմ, որ Հայերուն մէջ կան մէկ քանի ծանօթ անձեր, որոնք նպաստաւոր են այսպիսի մերձեցումի մը:

– Թալէաթ պէյին կարծիքը ի՞նչ է այս մասին:

Անիկա բոլորովին համամիտ է ասոր եւ նոյնիսկ ինքն է, որ այս խորհուրդը յղացաւ:

– Դժբախտաբար տեղեկութիւն չունինք Հայերուն ներքին գործունէութեան մասին, չենք գիտեր, թէ ի՛նչ կ'ընեն, ի՛նչ կը խորհին, ի՛նչ է իրենց թաքուն նպատակները:

Այս խօսքերը լսելով՝ երիտասարդ Իթթիհատականը խորհրդաւոր կերպով ժպտեցաւ:

– Ինչո՞ւ խնդացիր, – հարցուց խօսակիցը:

– Ինդացի, որովհետեւ կը տեսնեմ, որ չատ մխամիտ ես, – պատասխանեց երիտասարդը:

– Ինչո՞ւ համար:

– Որովհետեւ Հայերուն մէջ ինչ որ կ'անցնի կը դառնայ, տեղն ի տեղօք եւ ժամը ժամին կ'իմանանք, ասոր վստահ եղիր:

– Իրա՞ւ կ'ըսես, – գոչեց միւսը թերահաւատ դէմքով մը:

– Իրենց բոլոր գաղտնի թղթակցութիւնները թալէաթ պէյի քովն են:

Նոյն միջոցին նոր դէմք մը երեւցաւ սրահին մէջ:

Գամիկ Սիրունեանն էր:

– Ներեցէ՛ք ինծի, – ըսաւ երիտասարդ Իթթիհատականը, – այս նոր եկող էֆէնտիին հետ քիչ մը խօսելիք ունիմ:

Եւ գնաց դիմաւորել նորեկը, որուն հետ անցան միւս սրահը:

Այդ սրահը կը դառնուէր, 8 – 10 հոգիէ չրջապատուած, այն դէր մարդը, որուն Պապը Ալիէն կառքով գալը պատմեցինք այս գլխուն սկիզբը, եւ որ նոյն ինքն՝ Ներքին գործերու նախարար Թալէաթ պէյն էր:

Թալէաթ նչմարելուն պէս Գամիկը՝ նչան ըրաւ, որ մօտենայ:

Գամիկ ակնածանքով յառաջացաւ եւ խոնարհաբար բարեւեց նախարարը:

– Քեզի հետ կ'ուզեմ քիչ մը առանձին տեսնուիլ, – ըսաւ Թալէաթ՝ խօսքը Գամիկի ուղղելով:

– Ձեր վսեմութեան տրամադրութեան ներքեւ եմ, – պատասխանեց այս վերջինը:

– Հետս եկո՛ւր...

Եւ բազմութիւնը ճեղքելով՝ մտաւ վերջին խուց մը, ուր ո՛չ ոք կը գտնէր: Գամիկ խոնարհ կերպարանքով մը հետեւեցաւ իրեն:

(Շար. 50)

ՇՈՒՐՋԱԿԱՒԻՔ

Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով հետեւեալ քարեպաշտները Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս Եկեղեցւոյս նուիրած են խաղող. –

Տէր եւ Տիկին Նուրհան Իփէքճի 12 սընտուկ, Տէր եւ Տիկին Յարութիւն Գապաեան 2 սնտուկ, Օրիորդ Սիրանոյշ Սինանեան 2 սնտուկ, Տէր եւ Տիկին Մովսէս Գուրթուճեան 2 սնտուկ, Տիկին Աննա Կիւլէսէր 1 սնտուկ, Տէր եւ Տիկին Էմիլ Նալլար 1 սնտուկ, Տէր եւ Տիկին Գարինէ Սարայլը 1 սնտուկ, Օրիորդ Բաչխաեան եւ Տիկին Կիւզէլեան 1 սնտուկ, Տիկին Մարիամ Բաչխաղլու 1 սնտուկ, Պր. Միհրան Փօլատեան 2 սնտուկ, Տէր եւ Տիկին Անդրանիկ Թորոսօղլու 1 սնտուկ:

–ՎԵՐԱՄՈՒՏ–

ՄԱՐՍԷՅԼԻ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ»

Մխօրեայ Հայ Վարժարանի Դպրոցին ղասընթացքները կը վերսկսին՝

Չորեքշաբթի, Հոկտեմբեր 10

առաւօտեան ժամը 10–ին
Սահակ – Մեսրոպ Մշակութային Կեդրոնի Արծրունի Ջրթաչեան սրահին մէջ
339, av. du Prado, 13008 Marseille

Անհրաժեշտ տեղեկութիւններու եւ արձանագրութիւններու համար դիմել Մայր Եկեղեցւոյ Դիւանատուն:

Հեռաձայն. –
04 – 91 – 77 – 84 – 70

— ● —

ՖՐԱՆՍԱՀԱՅՑ ԿԱՊՈՑՑ ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ԱՐՇԱԼՈՑՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ ՄԱՄՆԱՁԻԿԻ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Շաբաթ, Սեպտեմբեր 15, ժամը 14·30–ին *Շաբաթ օրերը, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, նախակրթարանէն մինչեւ պաքալօրէա կը դասաւանդուին. – հայերէն լեզու, պատմութիւն, թատրոն, երգ, պար, նաեւ չափահասներու դասընթացք:*

Նոր արձանագրութիւններու համար դիմել Պրիժիթ Պառաւեանին, ժամը 20·30-էն վերջ՝ 01 – 45 – 79 – 78 – 97 թիւին:

— ● —

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(ԼԻՈՆ)

Վարժարանիս 2001 – 2002 տարեշրջանի վերամուտի թուականն է Շաբաթ Սեպտեմբեր 19, առաւօտեան ժամը 9–ին:

Արձանագրութիւնները սկսած են արդէն եւ կը շարունակուին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ, առաւօտեան ժամը 9–էն 12 եւ կէսօրէ վերջ 14–էն 16:

Աշակերտները կրնան օգտուիլ Շաբաթ չաբթի կէսօրուան ճաշէն:

Ցաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել՝
04 . 78 - 60 . 47 - 18
թիւին:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

— ● —

Rentrée des classes

L'Ecole arménienne **SIAMANTO** de Bagneux assure les cours hebdomadaires de langue arménienne, de la maternelle au baccalauréat.

Les inscriptions auront lieu
le samedi 22 septembre à 15 heures
à l'Ecole Henri Wallon
2, avenue de Stalingrad à Bagneux
Pour tous renseignements téléphoner
— Mme Lucie Dossikian : 01.45.46.10.11
— Mme Elisabeth **Davidian:**
01.46.65.81.53

50ème Anniversaire du Pèlerinage à SAINT-GREGOIRE de TALLARD

ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ՏԱՐԵԿԱՆ
ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Sous l'égide de

l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France

et avec le concours de
l'Association Cultuelle des Arméniens de GAP et des Hautes Alpes

Dimanche 9 septembre

à 10h30 — La Sainte Messe sera célébrée par
Mgr NORVAN ZAKARIAN
Vicaire Général des Arméniens de Rhône-Alpes

l'Homélie sera prononcée par
Mgr DARON GEREJIAN
Vicaire Général des Arméniens du Sud de la France

Avec la participation de la Chorale
SAHAK - MESROP
sous la direction de
Khatchig YILMAZIAN

à 13h — Un repas fraternel réunira les pèlerins dans la salle Polyvalente de Tallard.

Inscriptions : avant le 3 septembre
Renseignements & Réservations :

— **Cathédrale Arménienne de Marseille, tél. : 04 91 77 84 70**
— **Association Cultuelle des Arméniens de GAP, tél.: 04 92 51 71 80 / 04 92 51 00 87**

—— Participation aux frais ——
Aller - retour seul : 120 F
Aller - retour avec le repas : 250 F.

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Dimanche 16 Septembre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchestre S P I T A K
qui se déroulera dans les jardins du Dr et Mme Kéghian
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

Programme : **Divine Liturgie à 11h.**
Repas
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage de la tombola

Participation aux frais de la journée : Adultes 120 F
Enfants 80 F
Réservation par tél. : 01.44.59.23.50 (Paroisse de Paris)
01.40.51.11.90 (Centre culturel)



le domaine de chamerolles

45170 Chilleurs-aux-Bois

Pour vos loisirs dans un site boisé de 13 héctares avec étang, hébergement en châlets tout confort pouvant accueillir de 1 à 6 personnes pour vos week-ends et vacances

TARIFS (par châlet) :
Week-end * 2 nuits : 950 F ● Semaine : 2100 F à 3 330 F
(selon période)

Sur place :
diverses activités, location de salles (une salle avec espace traiteur) pour tous types de manifestations.
Tél. : 02 38 32 99 75 — Fax : 02 38 32 99 76
E-mail : DomChamerolles@aol.com
Le lieu idéal pour les réunions de famille
—— **Tél. Paris : 01. 42. 67. 85. 30** ——
Une remise de 10% sera consentie sur présentation du journal.

TISSUS DES URSULES
Tout le décor de la maison
Siège Social 9, rue J. Duclos
42400 St-Chamond
SAINT-ETIENNE
SAINT-CHAMOND
CANNES LA BOCCA
VILLENEUVE-LOUBET

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱՓԵԱՆ
ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 ՖՐ.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ
ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 ՖՐ.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 ՖՐ.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 ՖՐ.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ 75 ՖՐ.
ԵՒ
«ՅԱՌԱՋ - 50»
(Տաղկախող 50-ամեայ հատորածոյէն) 120 ՖՐ.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի:

Թղթատարի ծախք՝ 30 Ֆր., հատոր պլուխ:

Imprimé sur les Presses du **Journal «HARATCH»**
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935